Սողոմոն Ռեհիրոսյան

Վերջիրումներ

ARAM webaram.com

ARAM webaram.com

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՅՈՒՍԱՓԵՐ» Թիւ 57

ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆ

ՎԵՐՑԻՇՈՒՄՆԵՐ

(ԹԱԼԷԱԹԻ ԱՇԱԲԵԿՈՒՄԸ)

Գրի առաւ

ՎԱՀԱՆ ՄԻՆԱԽՈՐԵԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Տպ. «ՅՈՒՍԱՓԵՐ»
Գ ա հ ի ր է
1 9 5 6

ARAM webaram.com

ARAM webaram.com

ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՒ ԴԱՏԱՎՃԻՌԸ

«Դատավարութիւն Թալէաթ փաշայի» գիրքէն առնելով՝ ստորեւ կուտանք կազմութիւնը թէ՛ այն ատեանի, որ դատած է Սողոմոն Թէհլիրեանը, եւ թէ պատճէնը իր արձակած վճիռի:

ԱՏԵԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ա. ՆԱԽԱԳԱՀ

ԴՐ. ԼԵՄԲԵՐԳ, վարիչ նահանգային դատարանի:

ԴԱՏԱՒՈՐՆԵՐ

ԲԱԹԷ, նահանգային դատական խորհրդական:

ԴՐ. ԼԱՔՍ, օգնական դատաւոր:

ԱՏԵՆԱԳՊԻՐ

ՎԱՐՄԲՈՒՐԳ, հետամուտ դատաւորութեան:

Բ. ԴԱՏԱԽԱԶ

ԳՈԼՆԻԿ, դատախազ:

Գ. ԵՐԴՈՒԵԱԼՆԵՐ

ՎԻԼՀԵԼՄ ԳՐԱՈՒ, ռմմնագիր Նաուեն, Բերլինի մօտ:

ՐՈՒՏՈԼՖ ԳՐՈՍԷՐ, վաճառական, Բերնաու (Մարկ):

ԿՈՒՐՏ ԲԱՐԹԷԼ, ակնավաճառ, Բերլին:

ԱԴՈԼՖ ԿԻՒՀՆԷ, ռաճտիէ, Բերլին-Գանկով:

ARAM webaram.com

ՕՏՏՕ ԷՎԱԼԹ, տանտէր, Շարլոտտենբուրգ:

ՕՏՏՕ ՎԱԳՆԷՐ, յարկածածկ, Շարլոտտենբուրգ:

ՕՏՏՕ ԲԻՆՏԷ, երկաթագործ, Շէօնեբլինդէ:

ՕՏՏՕ ՐԱՑՆԵԿԻ, վերին գործավար, Տեգել:

ԷՕԺԷՆ ԴԸ ՊՐԻՍ, ներկարար, Բերլին - Վիրմերսդորֆ:

ԱԼԲԵՐՏ ԲԷԼԼԻՆԳ, դեղարանատէր, Շարլոտտենբուրգ:

ՀԵՐՄԱՆ ԳՈԼԴԷ, երկաթագործ, Շարլոտտենբուրգ:

ՐՈԲԵՐՏ ՀԱՑԶԷ, ադիւսի գործարանի տէր, Շարլոտտենբուրգ:

ՓՈԽԱՆՈՐԴՆԵՐ

ՑՈՒԼԻՈՍ ՖՈՒՐՀ, տանտէր, Շարլոտտենբուրգ:

ԱՈՒԳՈՒՍՏ ԲԼԻԶԵՆԷՐ, մսագործ, Տեգել:

Դ. ՊԱՇՏՊԱՆՆԵՐ

ԴՐ. ԱԴՈԼՖ ՖՈՆ ԳՈՐԴՈՆ, իրաւական գաղտնի խորհրդական, Բերլին:

ԴՐ. ԻՕՀԱՆՆԷՍ ՎԵՐԹԱՈՒԷՐ, իրաւական խորհրդական, Բերլին:

ԴՐ. ՆԻՄԱՑԷՐ, գաղտնի խորհրդական եւ պրոֆէսոր Կիլի համալսարանի իրաւագիտական բաժնին:

Ե. ԹԱՐԳՄԱՆՆԵՐ

ՎԱՀԱՆ ԶԱՔԱՐԵԱՆ, առաջին թարգման:

ԳԷՈՐԳ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, երկրորդ թարգման:

ԱՏԵԱՆԻ ՎՃԻՌԸ

Դատավարութիւնը վերջացած ըլլալով՝ ատեանին նախագահը՝ Դր. Լեմբերգ՝ օրէնքով սահմանուած հարցումները կ'ուղղէ երդուեալներուն: Այս վերջիններըը մեկուսանալով ժամուան մը խորհրդակցութիւն

ARAM webaram.com

կ'ունենան, ապա երդուեալներուն գլխաւորը կը ներկայանայ դատատեանին եւ «պատուով եւ խիղճով կը վկայէ» հետեւեալը, որպէս որոշումը երդուեալներու.

Ցանցաւո՞ր է ամբաստանեալ Սողոմոն Թէհլիրեանը 1921 Մարտ 15ին Շարլոտտենբուրգի մէջ դիտաւորեալ կերպով մարդ մը, Թալէաթ փաշան, սպաննած ըլլալուն համար:

Ո՛Չ

Օտտօ Բայնիկէ, երդուեալներու գլխաւոր (մեծ շարժում սրահին մէջ եւ ծափահարութիւններ):

Նախագահ.— Ես կը ստորագրեմ որոշումը եւ կը խնդրեմ պ. Քարտուղարէն՝ նոյնը ընել եւ կարդալ ի լուր որոշումը:

Քարտուղարը կը կարդայ որոշումը, որ կը թարգմանուի ամբաստանեալին:

Նախագահ.— Ապա ուրեմն կ'ազդարարուի հետեւեալ դատավճիռը.

«Ամբաստանեալը անպարտ կ'արձակուի պետական անտուկին հաշուոյն» (նոր շարժում եւ ծափահարութիւններ):

«Համաձայն երդուեալներու որոշումին՝ ամբաստանեալը յանցաւոր չէ իր վրայ իբր մեղադրանք ծանրացող պատժելի արարքին համար»:

Յետոյ կը ծանուցուի հետեւեալ որոշումը.

«Բանտարկութեան հրամանը ամբաստանեալին նընկատմամբ կը ջնջուի»: (Ամբաստանեալը կը շնորհաւորեն իր պաշտպանները, հայրենակիցները եւ ներկայ գտնուող հասարակութիւնը) (*):

---

*) «ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԹԱԼԷԱԹ ՓԱՇԱՅԻ» (Սղագրական զեկուցում), Վիեննա, Մխիթարեան տպարան, 1921, էջ 1 եւ 210:

ARAM webaram.com

ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ)

Սողոմոն Թէհլիրեան ծնած է 1896 Ապրիլ 2ին (հ. տ.), Դարանաղեաց (Կամախ) գաւառի վարի Բագառիճ գիւղը:

Հայրը՝ Խաչատուր, մայրը՝ Հնազանդ, Գաթրնեան Տէր Յարութիւնի աղջիկը: Ունեցած են հինգ մանչ զաւակներ: Երկրորդ զաւակը 3—4 տարեկանին մեռած է, մնացեալները՝ Միսաք, Սեդրակ, Աւետիս եւ Սողոմոն:

Կամախի շրջանի գիւղացիները իրենց աշխատանքին արդիւնքով չէին կրնար ապրեցնել իրենց ընտանիքները, բաւականաչափ մշակելի հողեր չունէին: Այրերը կ'երթային արտասահման, մասնաւորաբար պալքանեան երկիրներ. քանի մը տարի չարաչար աշխատելով դրամ կը խնայէին եւ կը վերադառնային երկիր:

1898ին Սողոմոնի հայրը, երկրորդ թէ երրորդ անգամ ըլլալով, կը մեկնի գիւղէն, կ'երթայ Սերպիա, ուր իր եղբօր հետ առեւտրական գործ հաստատած էր: Նախ եղբայրը կը վերադառնայ հայրենիք, իսկ 1905ին կարգը կուգայ Սողոմոնի հօրը:

Մեծ դէպք էր գիւղին համար պանդուխտի մը վերադարձը: Հարսանիքէն շատ աւելի կարեւորութիւն կը տրուէր *Սիլաճի* դիմաւորութեան հանդէսին եւ *տէնկերու* պաշտօնական բացման: Պանդխտութենէ վերադարձողը նուէրներ կը բերէր բոլորին:

Զատիկին գիւղ պիտի հասնէր Սողոմոնի հայրը:

ARAM webaram.com

Ամսոյ շաբաթ օր կառապան մը երկու սնտուկներ կը թերէ, բայց *սիլաճի*ն չկար: Շուտով կ'իմացուի, թէ թուրքերը զինք բանտարկած են Տրապիզոն՝ նաւէն դուրս ելլելու ատեն: Ուրախութիւնը կը վերածուի լաց ու կոծի: Վեց ամիս Տրապիզոն բանտարկուած պահելէ ետք՝ խաչատուր աղան կը վերադաձնեն Սերպիա:

Բայց, մեկնելէ առաջ, առիթ կ'ունենայ տեսնուելու իր հայրենակից Միսաք Պոլոյեանի հետ եւ կը խնդրէ անկէ գիւղ երթալ եւ ընտանիքը փոխադրել Երզնկա:

Ցետոյ կ'իմացուի, որ խաչատուր աղան ձերբակալուած էր, որովհետեւ 1898ին Տրապիզոնէն մեկնելու ատեն ռուսական նաւ առած էր. իբրեւ կասկածելի արձանագրած էին զինք:

1905— 1906ի ձմրան, Սողոմոն Երզնկայի բողոքականաց վարժարանը կը յանախէ: Յաջորդ տարեշրջանին կ'անցնի Եզնիկեան վարժարանը, մինչեւ 1911: Վերջին տարին, ուսուցիչներու պակասի հետեւանքով, գրեթէ ամբողջ դասարանով, կը փոխադրուին կեդրոնական վարժարան, ուր եւ կը վերջացնէ ուսման ընթացքը:

Պալքանեան պատերազմին կարգ մը ուսուցիչներ կը ստիպուին զինուոր երթալ: Եւ հոգաբարձութիւնը նախակրթարանի առաջին դասարանը վարելու պաշտօնը կուտայ Սողոմոնին:

1913ին, վերջապէս, Սողոմոն իր 17 տարեկան հասակին կը տեսնէ իր հայրը: 1908ի Սահմանադրութեան ազատօրէն կրնար երկիր երթալ, բայց գործերու բերումով հինգ տարի կ'ուշանայ:

1913ի աշնան Սողոմոն կը հեռանայ Երզնկայէն ու կ'անցնի Սերպիա, ուր մտադիր էր պատրաստուիլ եւ յաջորդ տարին երթալ Գերմանիա ուսանելու: Բայց համաշխարհային առաջին պատերազմը ամէն բան տակն ու վրայ կ'ընէ, բոլոր ծրագիրները ջուրը ձգելով...

ARAM webaram.com

Թէհլիրեան գերդաստանը Երզնկայի մէջ եւ Բագառիճ գիւղը, մինչեւ 1915ի սարսափի օրերը, իր մէջ կը համրէր 85 հոգի, բացի արտասահման, պանդխտութեան մէջ գտնուողներէն:

Այդ 85 հոգիէն *միայն ու միայն* Սողոմոնի մեծ եղբօր՝ Միսաքին մէկ աղջիկը կ'ազատի: Երզնկա ռուսերու կողմէ գրաւուելէ ետք, քիւրտի մը մօտէն կը գըտնեն 12 տարեկան հասակին:

Սողոմոնի մայրը, երկու մեծ եղբայրներուն կիները իրենց զաւակներով, եղբայրը Աւետիս — Պէյրութի ամերիկեան բժշկական համալսարանի ուսանող — զոհուեցան 1915ի կոտորածի օրերուն:

1914ի գարնան, գործի բերումով Սողոմոնի հայրը եւ Սեդրակ եղբայրը կը ձգեն Երզնկան ու կ'անցնին Սերպիա ու այդպիսով կը փրկուին ստոյգ մահէ:

Սողոմոնի հայրը մեռաւ վերջին համաշխարհային պատերազմի ընթացքին, 84 տարեկանին: Եղբայրները՝ Միսաք եւ Սեդրաք՝ իրենց պարագաներով կ'ապրին Եուկոսլաւիոյ մէջ: Վերամուսնացած ու զաւակներու տէր են: Թոռներ իսկ հասցուցած:

Սողոմոն ամուսնացած է Թիֆլիս հաստատուած երզնկացի Նշան Թաքիկեանի աղջկան՝ Անահիտի հետ: Թաքիկեան մօտիկ գործակիցը եղած է երզնկացի Քեռիին (Շիշմանեան): Քաղաքին մէջ իր դիրքը վտանգըւած ըլլալուն՝ խոյս կուտայ Երզնկայէն եւ կ'անցնի Կովկաս 1895ի ատենները եւ կը հաստատուի Թիֆլիս: Հետագային կ'ամուսնանայ Յակոբ Շաւարշի աղջկան հետ:

Յակոբ Շաւարշ *Մխայեալ*ի հիմնադիրներէն մէկը եղած է իր ժամանակին:

Սողոմոն եւ Անահիտ երկու մանչ զաւակ ունին:

ARAM webaram.com

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մի հինաւուրց ժողովուրդի քաղաքական դատ առմիշտ լուծելու համար, Թուրքիա, օգտուելով առաջին մեծ պատերազմից, որոշեց այդ ժողովուրդը ազգովին բնաջնջել:

Ու տեղի ունեցաւ 1915ի Ապրիլեան Մեծ Եղեռնը, որ իր նախընթացը չունի բովանդակ մարդկային պատմութեան մէջ:

Չունի ո՛չ իբրեւ յղացում եւ ոչ էլ իբրեւ գործադրութիւն:

Այդ թուականից վեց տարի յետոյ, 1921 Մարտ 16ին, Մոսկուայի մէջ, ստորագրուեց թուրքեւռուս դաշնագիրը:

Մոսկուայի խորհրդաժողովում Ռուսաստանը ներկայացնում էին «յեղափոխական» բոլշեւիկները, իսկ Թուրքիան՝ «յեղափոխական» քեմալականները:

Մոսկուայի դաշնագրի տակ Ռուսիոյ կողմից կան ստորագրութիւնները՝ Գ. Չիչերինի եւ Զ. Կորկմասովի, իսկ Թուրքիոյ կողմից՝ Իսուֆ Քէմալի, դոկտ. Ռիզա Նուրի եւ Ալի Ֆուադի:

Սակայն պատմականօրէն նշտուած եւ ստուգուած է, որ Մոսկուայում թուրքեւռուս խորհրդաժողովի մէջ, բանակցութեանց փաստական վարիչներն էին — ձեւական բանագնացների միջոցով — Ռուսիոյ կողմից՝ Լենինը եւ Ստալինը, իսկ Թուրքիոյ կողմից՝ Քէմալը:

Այս անձերն էին, որ 1917 Հոկտեմբերեան յեղաշրջումից անմիջապէս յետոյ սերտօրէն բարեկամանալով՝ հետագային այդ բարեկամութիւնը աւելի եւս խորացրին, աւելի ուշ, 1921ի Մարտին, Մոսկուայի խորհրդաժողովում այդ բարեկամութիւնը բոլշեւիկ — քեմալական ուխտով պսակելու համար:

1921 Մարտ 16ին, այն պատմական օրը, երբ Մոսկուայում

ARAM webaram.com

ստորագրում էր ռուսերուրբ դաշնագիրը, Հայաստանը իր ազատությունը տակավին պահում էր. նա անկախ երկիր էր:

Մոսկուայի խորհրդաժողովը դառնում էր գրեթէ բացառաբար Հայաստանի շուրջ. Նախիջեւանի հարցի մէջ է միայն, որ շօշափում էին նաեւ Ազրբէյջանի շահերը: Սակայն այս զոյգ պետութիւնները՝ Հայաստանն ու Ազրբէյջանը՝ Մոսկուայում չկային: Բացակայութեան պատճառը — այս երկրների մէջ իշխող իրաւակարգը չէր. Մոսկուա չհրաւիրուեցին ոչ Հայաստանը՝ որ տակաւին խորհրդայնացած *չէր* եւ ոչ էլ Ազրբէյջանը՝ որ արդէն խորհրդայնացած էր:

Այսքան մեծ էր արհամարհանքը դէպի տկար ու փոքր ժողովուրդները:

Ու չնայած այս զոյգ պետութեանց բացակայութեան, խորհրդաժողովը նրանցից մէկի՝ Հայաստանի հողային ամբողջականութեան մաս կազմող Նախիջեւանի շրջանը զատում էր Հայաստանից եւ դնում միւսի՝ Ազրբէյջանի հոգատարութեան տակ, բնաւ հաշուի չառնելով այն ծանր իրողութիւնը, որ Նախիջեւանը բաժան էր Ազրբէյջանից Հայաստանի մաս կազմող Զանգեզուրով — մի իսկատիպ միջնորմ, որ յիշեցնում էր երկրորդ մեծ պատերազմի կրակների վրայ իւղ լեցնող «դանցիգեան միջանցք»ը Լեհաստանի մէջ:

Աւելին:

Այդ նոյն խորհրդաժողովում որոշած լինելով զինակցաբար վերջ տալ անկախ Հայաստանի գոյութեան, Ռուսաստանը դաշնագրի 15րդ յօդուածով պարտաւորւում էր Թուրքիոյ առջեւ՝ Հայաստանի նկատմամբ իր ստանձնած յանձնառութիւնները հետագային *պարտադրել* Հայաստանի, երբ այս վերջինը խորհրդայնացած կը լինի:

Այս յանձնառութիւնը Ռուսաստանը կատարեց Մոսկուայի դաշնագրի ստորագրումից հօրը ամիս վերջ, Կարսում, իր ներկայացուցչի նախագահութեամբ գումարուած խորհրդաժողովի մէջ, ուր կային նաեւ արդէն խորհրդայնացած Հայաստանի պատ-

ARAM webaram.com

ուիրակները՝ Ասքանազ Մռաւեան (արտաքին գործոց գործավար) եւ Պօղոս Մակինցեան (ներքին գործոց գործավար)։

Անկասկած է, որ 1921ի Մարտին, Մոսկուայում առնուած էր նաեւ այն որոշումը, թէ հետագային խորհրդաժողով պիտի գումարուի Կարսի մէջ, մասնակցութեամբը անդրկովկասեան հանրապետութեանց։ Ճշտուած չէր միայն *թուականը*։ Խորհրդաժողովը պիտի գումարուէր, երբ հանրապետութիւնները — խօսքը գրեթէ բացառաբար *Հայաստանի* մասին էր — խորհրդայնացած կը լինէին։

Ռուսիա եւ Թուրքիա, լուրեան ու խաւարի մէջ, գլուխ գլխի ու սիրտ սրտի, դաւեր էին ծրագրում, հողեր բաժանում ու ազգային դատեր «լուծում», առանց դատատէրերի շահն ու կարծիքը հաշուի առնելու։

1921ի վախճանին անդրկովկասը ոչ միայն ամբողջութեամբ խորհրդայնացած էր արդէն, այլ եւ նրա երեք հանրապետութիւնները՝ Հայաստան, Վրաստան եւ Ազրբէյջան՝ կազմաւորուած եւ օժտուած էին Մոսկուայից նշանակուած եւ նրա կամքին լրիւ ենթակայ կառավարութիւններով։

Պահը հասած համարելով, Կրեմլը, համամտութեամբը Անգարայի, 1921 Հոկտ. 13ին կարսում գումարեց ծանօթ խորհրդաժողովը, նախագահութեանը տակ Լենինի եւ Ստալինի մտերիմներից եակով Գանեցկիի — մթին անցեալով հարուստ մի վատանուն բոլշեւիկ — եւ այդ խորհրդաժողովում անդրկովկասեան հանրապետութեանց պատուիրակների ստորագրութեամբ նուիրագործեց Մոսկուայի 1921 Մարտ 16ի դաշնագիրը, որ գրեթէ *նոյնութեամբ* — եւ *ամբողջութեամբ* — կրկնուում էր Կարսի դաշնագրի մէջ (*)։

(*) *Իսկան փոփոխութիւններից մէկը վերաբերում էր Նախիջեւանի շրջանին, որի հոգատարութիւնը, Մոսկուայի դաշինքով, Ազրբէյջանը չէր կարող ուրիշին փոխանցել, մինչ Կարսի դաշինքով այս արդէլքը լռելեայն, առանց որեւէ բացատրութեան, վեր-*

ARAM webaram.com

Այս վերջին դաշնագրի տակ իր ստորագրությունը դնելով՝ Հայաստանը հանդիսաւորապէս գալիս էր աշխարհին վկայելու, որ ինքն կամովին հրաժարւում է.

1.— *Բովանդակ Թրքահայաստանից՝ այդ երկիրը ամբողջութեամբ նկատելով Թրքական հող։*

2.— *Հրաժարւում է Արդահանի, Օլթիի, Կաղզուանի եւ Կարսի շրջաններից՝ այդ հողերը եւս Թրքական նկատելով։*

3.— *Հրաժարւում է Թուրքին երբեք չպատկանած Սուրմալուի շրջանից՝ այդ հողամասը եւս Թրքական նկատելով. անցողակի յիշատակենք, որ Սուրմալուն չէր իսկ մտնում քէմալական Ազգային Ուխտով գծուած Թուրքիոյ սահմանների մէջ։*

4.— *Հրաժարւում է Նախիջեւանի շրջանից, յօժարելով, որ իր շնչափողը հանդիսացող այդ կարեւորագոյն հողամասը, սահմանակից չլինելով հանդերձ Ազրբէյջանի, պատկանի այս վերջինին եւ գտնուի նրա հոգատարութեան տակ։*

Բոլշեւիկ հրապարակագիրներից Բ. Բորեան — հետագայում գնդակահարուած — իր երկհատոր ծաւալուն աշխատութեան՝ «*Արմենիա*»յի մէջ, որ լոյս տեսաւ Մոսկուա, 1929ին, խօսելով Մոսկուայի եւ Կարսի դաշինքների մասին՝ նկատում էր.

«*Աւելի ծանր եւ աւելի աննպաստ խաղաղութիւն, քան Կարսինն է, պատմութեան էջերի վրայ հազիւ թէ կարելի է գտնել*»։

«*Այդ դաշնագիրը — ամենավատթար եւ ամենախայտառակ դաշնագիրն էր Հայաստանի համար*»։

Առանձնաբար Նախիջեւանի շրջանի մասին խօսելով՝ Բ. Բորեան նկատում էր.

«*Կարսի դաշնագրի այն յօդուածը, որով Նախիջեւանի շրջանը կազմում է մի ինքնավար երկրամաս, Ազրբէյջանի հոգատարութեան տակ, լրացնում էր Հայաստանի անձնատուութիւնը Թուրքիոյ առջեւ*» (*)։

ցուած էր (տե՛ս մեր յօդուածը՝ «Բոլշեւիզմը Նախիջեւանի հարցին մէջ», «Հայրենիք» ամսագիր, 1949 Սեպտ., էջ 13—34)։

(*) *Բորեանը բոլշեւիկների մէջ միակ պայքարողը չէր Մոսկ-*

ARAM webaram.com

Նորից նմ յիշեցնում. Կարսի դաշնագիրը նոր իրաւաթուղթ չէր, նա ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆ էր Մոսկուայի դաշնագրի. ինչ որ Խ. Հայաստանի պատուիրակները զիջում էին Կարսում, այդ ամէնը ամիսներ առաջ ԿՐԵՄԼԸ, Մոսկուայի 1921 Մարտ 16ի դաշնագրով. արդէն զիջած էր Թուրքիոյ:

Բ. Բորեանի ահաեիչը ոչինչ է բաղդատմամբ այն մեծ ոճիրի, որ Մոսկուայի եւ Կարսի զոյգ դաշինքներով գործուեց մեր ժողովուրդի ու մեր հայրենիքի նկատմամբ:

Անվարան կարելի է ասել, որ այդ ոճիրը իր հեռաւորագոյն նմանակը չունի մեր ժողովուրդի արիւնոտ պատմութեանը մէջ:

Մեր Դատի շուրջ երբեւէ այսքան անխիղճ ու անմարդկային առուծախ տեղի ունեցած չէ:

Մոսկուայի եւ Կարսի դաշնագիրները տարբեր բան չէին, քան նուիրագործումը 1915ի Ապրիլեան Մեծ Եղեռնի:

Մեր Մէկ Միլիոնի նահատակութիւնը միայն զազանային անօրինակ սրածում չէր, այլ նաեւ քաղաքական մի մեծիմաստ ակտ:

1915 Ապրիլ 24ին ազգովին մեզ բնաջնջելով՝ Թուրքիա երազում էր տէր դառնալ մեր դարաւոր հողերին՝ բովանդակ Թրքահայաստանին:

Թուրքիոյ այս երազն է, որ եկաւ նուիրագործելու Մոսկուայի դաշնագիրը:

1915 ԱՊՐԻԼ 24 ԵՒ 1921 ՄԱՐՏ 16 — ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌՈՒՄՈՎ ՆՈՑՆԱՐԺԷՔ ԵՒ ՆՈՑՆԱԿՇԻՌ ԱԿՏԵՐ ԵՆ ՍՐԱՆՔ:

Ապրիլ 24ը՝ գործադրութիւնն է Մարտ 16ի, բայց միայն կեանքի մէջ:

Մարտ 16ը՝ նուիրագործումն է Ապրիլ 24ի, բայց միայն դիւանագիտական ակտի միջոցով:

ուայի եւ Կարսի դաշինքների դէմ, նա պայքարողներից մէկն էր: Ի դէպ, խորհրդահայ պատուիրակներից Ասքանազ Մռաւեան, Կարսից երեւան դառնալով, անձնասպանութեամբ վերջ տուաւ իր կեանքին: Ցաւառ լուրեր կային, թէ այս անձնասպանութիւնը կապ ունի Կարսի դաշնագրի հետ:

ARAM webaram.com

Քաղաքական միութիւնը արգանդից աշխարհ եկած երկուորեակներ են սրանք, ոսկրը՝ ոսկրից եւ արիւնը՝ արիւնից:

Զոյգ արարքներով — Ապրիլեան եւ Մարտեան — *ամբողջացաւ* Մեծ Եղեռնը եւ լուծուած յայտարարուեց Հայ Դատը...

Եթէ կարելի չէ մոռանալ 1915 Ապրիլ 24ը, կարելի չէ մոռանալ նաեւ 1921 Մարտ 16ը:

Եթէ առմիշտ, դարեր անընդհատ պիտի յիշուի Ապրիլեան ոճիրը, զուգակցաբար միշտ պիտի յիշուի նաեւ այն միւս ոճիրը, որ մեր ճակատամարտ գործադրուեց 1921 Մարտ 16ին:

Շտապենք յայտնել, որ Ապրիլեան Եղեռնը առաջին անգամ կարմիր կրեմլի կողմից ճուիրագործուեց Բրեստ-Լիտովսկում, 1918 Մարտ 3ի դաշինքով:

Այդտեղ, Բրեստ-Լիտովսկի հորիզոնում, Թուրքիան ներկայացնում էր Թալէաթը:

Այս մարդն էր, որ իր կուսակիցների հետ յղացաւ ու գործադրեց Ապրիլեան Եղեռնը. նոյն մարդը երեք տարի վերջ իր զինակիցներով Բրեստ-Լիտովսկ եկաւ եւ Ռուսիոյ հետ 1918 Մարտ 3ի դաշինքը ստորագրեց՝ բովանդակ Թրքահայաստանը թրքական հող հռչակելով եւ դրանով իսկ Ապրիլեան Եղեռնը ճուիրագործելով:

Ինչ որ աւելի ուշ, 1921 Մարտ 16ին, տեղի ունեցաւ Մոսկուայում, այդ նոյնը կանխապէս արդէն եղած էր Բրեստ-Լիտովսկում:

Սակայն շուտով, Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ստորագրումից հինգ-վեց ամիս վերջ, պատերազմի բովանդակ ընթացքը փոխուեց եւ յաղթական Թուրքիա մէկէն անցաւ պարտուած պետութեանց շարքը:

Պատերազմում շահած իր բոլոր վաստակները Թուրքիան կորցրեց՝ կորցնելով նաեւ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը:

Թալէաթ, որ օժտուած էր քաղաքական սուր հոտառութեամբ եւ արթուն բնազդով, զգաց, որ պարտուած Թուրքիան միայն մէկ բարեկամ ունի — կարմիր Մոսկուան:

Ճիշտ այս համոզումով, հազիւ Թուրքիոյ պարտութեան լուրը աշխարհին հասած, երիտասարդ-Թուրքերը, որոնք նախարարական եւ այլ պատասխանատու պաշտօնների մէջ պատերազմը վարեցին

ARAM webaram.com

եւ Ապրիլեան Եղեռնը նիւթեցին, բողին Թուրքիան եւ գաղտնօրէն ալացան դէպի Գերմանիա՝ այնտեղից Մոսկուա անցնելու համար։ Էնվէր, Ջէմալ փաշա, դոկտ. Նազիմ եւ ուրիշներ յաջողեցին մըտնել Ռուսաստան, մինչ Թալէաթ, դէպի Ռուսիա թռիչք կատարած պահին, օդանաւային անակնկալ արկածի բերումով, անկարող եղաւ ռուսական սահմանը կտրել եւ մնաց Գերմանիա։

Այս պարագան ոչինչ փոխեց սակայն հետագային տեղի ունեցած դէպքերի մէջ։

Եթէ Թալէաթ անմիջօրէն չբերաւ իսկ իր մասնակցութիւնը այն դաշինքին, որ 1921 Մարտ 16ին ստորագրուեց Մոսկուայի մէջ, եղաւ, սակայն, մին ամենաերջանիկ թուրքերից, տեսնելով որ Մոսկուայում վերահաստատւում է այն մեծ գործը, որ ինք առաջին անգամ կատարեց Բրեստ-Լիտովսկում՝ նուիրագործելով Ապրիլեան Եղեռնը եւ բովանդակ Թրքահայաստանը թրքական հոդ հոչակելով։

Անիմանալի են զուգադիպումները։

1921 Մարտ 16ի դաշնագիրը լրիւ պատրաստ էր *Մարտ 15ին*. դաշնագրի *ստորագրման* արարողութիւնն է միայն, որ կատարուեց Մարտ 16ին։

Եւ ահա, Մարտ 15ին, երբ դաշնագիրը լրիւ պատրաստ էր եւ ստորագրման արարողութեան մանրամասներն էին նշտուում յաջորդ օրուան համար.

Երբ Ապրիլեան Մեծ Եղեռնը երկուստեք մարսուած, նուիրագործուած եւ դաշնագրային կերպարանք առած էր.

Երբ Ռուսիա եւ Թուրքիա, երկրորդ անգամը լինելով Բրեստ-Լիտովսկից յետոյ, քով-քովի եկած եւ ուրացած էին հայութեան դարաւոր Դատը.

Այդ պատմական ու խորհրդաւոր ժամին, մէկէն, Սողոմոն Թէելիրեանի ձեռքով, Բերլինի փողոցներից մէկում, պարպւում է հրազէնը եւ Մեծ ոճրագործի անշնչացած դիակը փռւում է գետին;

Կեղծ անցագրով, իբրեւ ծպտեալ օտարական, Թալէաթ ապաս-

ARAM webaram.com

տան գտած էր բարեկամ ու զինակից Գերմանիոյ մէջ, այն յոյսով, որ ինք անյայտ ու անծանօթ պիտի մնայ:

Սխալած էր իր հաշիւների մէջ:

Թալէաթներին պատուհասող բազուկը գտած էր նաեւ Թալէաթի տեղը:

Դժուար է խորաչափել քաղաքական կշիռը այն գնդակի, որ 1921 Մարտ 15ին Բերլինի մէջ Սողոմոն Թէհլիրեանի ձեռքով պարպուեց Թալէաթի վրայ:

Աշխարհի վարիչներից ո՛չ ոք մեր Մէկ Միլիոնի հաշիւը պահանջեց Թալէաթներից:

Ո՛չ ոք նրանց դատի քաշեց ու նրանց խօսքը լսեց այն մասին, թէ ինչո՞ւ արդեօք նրանք Ապրիլեան Եղեռնը գործեցին մի անմեղ ու անպաշտպան ժողովրդի նկատմամբ:

Լուռ մնալով՝ Աշխարհ մեղսակից դարձած էր Թալէաթներին:

Աւելին:

Հզօրներից Ռուսիա, 1921 Մարտ 16ին բարեկամական ուխտ կնքելով Թուրքիոյ հետ եւ բովանդակ Թրքահայաստանը թրքական հող հռչակելով, Ապրիլեան Եղեռնը ոչ թէ դատապարտում, այլ յայտնապէս սրբագործում էր:

Ոճրագործը ոչ թէ պատժում, այլ բարձրաղաղակ վարձատրո՛ւմ էր:

Այս համատարած խաւարի մէջ է ահա, որ պարպւում էր Սողոմոն Թէհլիրեանի գնդակը:

Այդ գնդակը գալիս էր հնչեցնելու Արդարութեան ձայնը ի լուր բոլոր դահիճների:

Գալիս էր վկայելու, որ եթէ մեռած է խիղճը համայն մարդկութեան մէջ, մեռած չէ սակայն ՊԱՏՈՒԻ զգացումը հայ ժողովուրդի մէջ:

Ողջ Բերլինը, Սողոմոն Թէհլիրեանի դատավարութեան օրերին, ապրում եւ շնչում էր այդ դատավարութեամբ:

Շատ քիչ անգամներ գերման մայրաքաղաքը այդքան բուռն հետաքրքրութեամբ եւ հոգեկան այդքան սուր լարումով հետեւած է որեւէ դէպքի:

ARAM webaram.com

Հսկայ մայրաքաղաքը զգում էր կարծես, որ դատասրահում գտնուում էր ոչ թէ մի պարզ հայ, այլ դատուում էր համայն մարդկութիւնը, որ անպատիժ ձգեց մի անմեղ ժողովրդի նկատմամբ գործադրուած Ապրիլեան անօրինակ եղեռնը:

Դատուում էր նաեւ կարմիր Մոսկուան, որ նուիրագործեց Ապրիլեան եղեռնը՝ Թուրքիոյ հետ նախ Բրեստ-Լիտովսկի եւ ապա Մոսկուայի դաշինքները ստորագրելով:

Մեծ դէմքերի աշխարհածանօթ կենսագիրը՝ Էմիլ Լուդվիգ՝ 1944ին Մոնտրէալի մէջ լոյս ընծայած իր մի աշխատութեան մէջ — «David et Goliath» — անդրադառնալով Թալէաթի սպանութեան եւ այդ առթիւ տեղի ունեցած դատավարութեան Բերլինի մէջ — նկատում է.

«Պալէ Բուրբոնի բեմից Դրնի կոշէնը բացագանչել է.— «Ես կարգապահութեան մարդն եմ եւ պատկանում եմ աջակողմին, սակայն ոճիրներ կան, որոնք ինձ դարձնում են յեղափոխականարանցից է անպաշտպան մի ժողովրդի կոտորածը»:

«Այսպէս էր զգում համայն աշխարհը:

«Մի անգամ եւս մարդկային խիղճը պոռթկաց ի նպաստ մի մարդասպանի — Սողոմոն Թէհլիրեան — որ դատարան չէր գտել ամբաստանելու համար իր պատիւը աղարտողներին եւ այդ պատճառով՝ իր անձնական կորովը դարձնելով լուռ թարգմանն ու պերճախօս վրիժառուն իր ժողովուրդի՝ արդարութիւնը վերականգնեց: Զգտնուեց մի մարդ, որ պատիժ պահանջէր սպանիչին համար այն փաշայի, որ երէկ հզօրագոյն անձնաւորութիւնն էր մի ամբողջ կայսրութեան: Արդարութեան մի զգացում եռաց սրտերի մէջ այն ինը գերման երդուեալ-դատաւորների, (*) որոնք վնիռ արձակեցին: Եւ այսպէս բռնակալ մի կառավարութիւն դատապարտուեց եւ անզօր մի ժողովուրդի վրէժը լուծուեց» (էջ 136 — 137):

Այսքան մեծ եղաւ հմայքը այն գործին, որ Սողոմոն Թէհլիրեանի ձեռքով կատարուեց Բերլինում:

(*) *Երդուեալ-դատաւորները 9 հոգի չէին, այլ 12.— Ն.*

ARAM webaram.com

Իր պարպած գնդակի արձագանգը ալիք առ ալիք ծաւալեց դէպի աշխարհի բոլոր անկիւնները:

Խուճապի մատնուած էին Ապրիլեան Եղեռնի ոճրածին հեղինակները:

Նրանք զգում էին, որ մի արդար ու պատուհասու բազուկ հրապարակ իջած է իրենցից հաշիւ պահանջելու համար:

Զգում էին, թէ ո՛ւր էլ որ լինեն, ի՛նչ պաշտպանութիւն էլ որ վայելեն, ի՛նչ անունի տակ էլ որ թագնուած մնան, միեւնոյն է, այդ բազուկը իրենց պիտի գտնի եւ իրենց պիտի տայ արժանի պատիժը:

Թալէաթից քիչ աւելի ուշ, 1921 Դեկտ. 6ին, Հռոմի մէջ պատուհասուած էր Ապրիլեան Եղեռնաշրջանի թուրք վարչապետը՝ Սայիդ Հալիմ փաշա:

Թալէաթի ահաբեկումից 13 ամիս յետոյ, նոյն Բերլինի մէջ, 1922 Ապր. 17ին, միաժամանակ պատուհասուեցին հռչակաւոր Բէհաէդդին Շաքիրն ու Ճէմալ Ազմին:

Քիչ աւելի ուշ, 1922 Յուլիս 25ին, Թիֆլիսի մէջ, Մեծն Պետրոսի անուան փողոցի վրայ, նիշտ Զեկայի շէնքին առջեւ, փոուած էին դիակները Ջէմալ փաշայի եւ իր երկու սուրհանդակների:

Ինչպէս յայտնի է, Ապրիլեան Եղեռնը իր արձագանգն ունեցաւ նաեւ Կովկաս, մասնաւորաբար Շիրակի շրջանին մէջ, ու նաեւ Բագու եւ Շուշի:

Այս Եղեռնի հեղինակներից Ազրբէյջանի վարչապետը՝ Խան Խոյսկիյ՝ 1920ին պատուհասուած էր Թիֆլիս, իսկ իր մերձաւոր գործակիցը՝ Ջիւանշիր՝ պատուհասուեց Պոլիս՝ 1921 Յուլիս 19ին:

Անշուշտ նոյն ճակատագիրը պիտի ունենային նաեւ Էնվէր ու դոկտ. Նազիմ, եթէ երբեմն նրանցից առաջինը իր մահը չգտնէր Թուրքիստանում (*), իսկ երկրորդը՝ Անգորայի մէջ՝ կախաղանի վրայ, 1926ին:

(*) 1922 *Օգոստ. 4ին, Ստալինաբադի շրջանում, Բալջուանի*

ARAM webaram.com

— «Ո՞ւր է Էնվէրը, արդեօք Մոսկուա՞ է»,— այս պարզ հարցումին, ուղղուած — Թալէաթի ապաւնութիւնից յետոյ — մի ականաւոր ու լաւատեղեակ բոլշեւիկի, որ կարեւոր առաքելութեամբ Ռուսիայից Եւրոպա եկած էր, որտեղից կրկին վերադարձաւ Ռուսաստան, այս վերջինը պատասխանում է.

— «Մոսկուա է, ապրում է Կարախանի մօտ: Լենինը վախենալով ձեզանից՝ թէ Էնվէրին կարող էք խփել, նրա կեանքի ապահովութիւնը վստահած է Կարախանի: ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ ՉԸՆԿԷՔ, ԿՓԵՑԷՔ ՄՈՍԿՈՒԱՅԻՑ ԴՈՒՐՍ»:

Դաշնակցութեան ուժին ու հմայքին լաւածանօթ բոլշեւիկը, որ, ի դէպ, Լենինի սիրելիներից էր — հետագային Ստալինի զոհերից — այս բարի խորհուրդով վերջացրեց իրեն ուղղուած պարզ հարցումի պատասխանը...

Ամէնքը կը զգային ու գիտէին, որ Հռոմի, Բերլինի, Պոլսոյ ու Թիֆլիսի մէջ պատուհասող բազուկը, կարող է պատուհասել նաեւ բուն իսկ Մոսկուայի մէջ:

Ինչ որ 1921 Մարտ 15ին Սողոմոն Թէհլիրեանի ձեռքով կատարուեց, պարզ ահաբեկում չէր, այլ մի պատմական արար, որ մշտապէս պիտի ապրի սերունդների արդար յիշողութեան մէջ, ինչպէս որ պիտի ապրի Ապրիլեան Մեծ Եղեռնը:

Կրեմլի բարձրախօսներից Ա. Միլլէր, 1948ին Մոսկուայում հրապարակ հանելով — հրատարակութեամբը Խ. Միութեան Գիտութեանց Կանառի — Թուրքիոյ նորագոյն պատմութեան շուրջ» (*) — այդ գործին կցած է մի գլուխ, հետեւեալ խորագրի տակ՝ «Ժամանակաբանութիւն կարեւորագոյն դէպքերի»:

Այդ գլուխի մէջ, գրքի 257 էջի վրայ, իբրեւ 1 Օգոստ. 1914ից առ 25 Յուլիս 1948 տեղի ունեցած «կարեւորագոյն դէպքերից» մէկը, արձանագրած է հետեւեալը.

տակ տեղի ունեցած կռուի մէջ, ուր Էնվէր ապստամբ բասմաչիների գլուխն անցած՝ կռուում էր կարմիր զօրքերի դէմ:

(*) Նոյն գործի 258րդ էջի վրայ կայ հետեւեալ արձանագրու-

ARAM webaram.com

«16 ՄԱՐՏ 1921.— *Թալէաթ փաշայի սպանութիւնը Բերլինի մէջ, դաշնակ ահաբեկիչների ձեռքով*» (*):

Կրեմլի բարձրախօսը պիտի ուզէր ուրանալ կարեւորութիւնը Բերլինի մէջ տեղի ունեցած արարի:

Պիտի ուզէր մանաւանդ այդ արարի կարեւորութիւնը չխոստովանել ե. Միութեան իր բազմահազար ընթերցողներին:

Սակայն դէպքը շատ էր մեծ ու ցնցող՝ այդքան դիւրութեամբ ուրանալու եւ նրա կարեւորութիւնը չխոստովանելու համար: 1921 Մարտ 15ից յետոյ, ամիսներ շարունակ, էնվէրներին ու Ջէմալներին տուն ու պատսպարան շնորհած բոլշեւիկները, ամէն խօսակցի — դուրսը, արտասահմանի մէջ — մէկ հարցում ունէին,— *ո՞վ սպանեց Թալէաթին...*

Այժմ Միլլէրները գալիս են յայտնելու, որ իրենք իրենց շահագրգռող հարցումի պատասխանը ունեն արդէն, հակառակ այն իրողութեան, որ Թալէաթի սպանութեան շուրջ ցարդ Դաշնակցութեան կողմից որեւէ պաշտօնական յայտարարութիւն եղած չէ:

* * *

Բախտի մի բարի խաղով 1921 Մարտ 15ին ողջ մնաց հայութեան սիրելին՝ Սողոմոն Թէհլիրեան:

Եթէ այս բարի դիպուածը չլինէր, իր յուշամատեանը մենք պիտի չունենայինք այսօր:

Մի լուսաւոր դէմք՝ վահան Մինախորեան՝ որ Ապրիլեան Եղեռնի մէջ ողջակիզուեց հոգիով ու ջախջախուեց մարմնով, պահելով հանդերձ իր մտքի պայծառութիւնը, Թալէաթի ահաբեկչի՞ի սպաս դրաւ իր գրիչը եւ գրի առաւ նրա յուշերը:

Թիւնը.

«21 ՅՈՒԼԻՍ 1922.— Ջէմալ փաշայի սպանութիւնը Թիֆլիսի մէջ, դաշնակ ահաբեկիչների ձեռքով»:

(*) *Թուականները Միլլէրի կողմից սխալ են յիշատակուած. ինչպէս իր տեղում ասացինք, Թալէաթը խփուած է Մարտ 15ին, իսկ Ջէմալը՝ Յուլիս 25ին:*

ARAM webaram.com

Հոգիով նոյնացած էին երկուսն էլ, թէ՛ յուշ պատմողը եւ թէ այն գրի առնողը:

Ապրիլեան Եղեռնի վերապրողներից լինելով՝ Վահան Մինախորեան հեղինակեց այդ Եղեռնին նուիրուած ամենէն ցնցող երկը՝ «1915 ԹՈՒԱԿԱՆԸ»:

Սողոմոն Թէհլիրեանի յուշերը գրի առնելով՝ «Արհաւիրքի օրերը»ի հեղինակը որոշ իմաստով *իւր* յուշերն էր գրի առնում եւ *իւր* կեանքն էր պատմում:

Նշխարի արժէքով մի բան է նաեւ այն յառաջաբանը, որ Վ. Մինախորեան՝ մեր Մէկ Միլիոնի նահատակութեան վկան՝ կցած է Սողոմոն Թէհլիրեանի յուշերին:

Իր յուշերը արդար իրաւունքով կարող էր գրի առնել նաեւ ինքը Սողոմոն Թէհլիրեանը:

Օժտուած արթուն բնազդով, սուր մտքով եւ զուսպ ու հաւասարակշիռ գրչով՝ Սողոմոն Թէհլիրեան բոլոր տուեալներն ունէր իր կեանքի ցնցող վէպը մեզ պատմելու իր սեփական գրչով:

Սակայն, աւելի առարկայական լինելու համար, նա այդ պատիւը վերապահեց Վահան Մինախորեանի, մի մարդու, որ էր հոգին դրաւ Թէհլիրեանի բերանից ելած իւրաքանչիւր բառի մէջ, միշտ յիշելով, որ երկուսով միասին, գլուխ գլխի ու սիրտ սրտի, հանրային դատաստանին ներկայացնելու համար պատրաստում են մի աշխատանք, որ սահմանուած է Մեծ Եղեռնի պատմութեան մնայուն աղբիւրներից մէկը դառնալու:

Սողոմոն Թէհլիրեանի յուշերը — Թալէաթի սպանութեան լրիւ պատմութիւնը չէ:

Տակաւին հասած չէ պահը ահաբեկման ամբողջական պատմութիւնը հանրութեան սեփականութիւնը դարձնելու համար:

Այս երախտաշատ գործը կը մնայ մեզ յաջորդող սերունդին:

Ապրիլեան Մեծ Եղեռնի գալիք պատմիչը Թալէաթի սպանութիւնը իր բոլոր ծալքերով ներկայացնելու համար՝ առատ նիւթ պիտի գտնի նաեւ Հ. Ց. Դ. Դիւանի մէջ:

Սակայն Սողոմոն Թէհլիրեանի ներկայ յուշերը միշտ պիտի կազմեն եիմնական ատաղձը այդ պատմութեանը մէջ:

ARAM webaram.com

Եւ այդ գիտակցութեամբ, իբրեւ մի մեծարժէք ու պատասխանատու աշխատանք, այդ յուշերը զատ հատորով հայ ժողովուրդի սեփականութիւնն են դարձնում:

Համայն հայութեան մէջ գրեթէ ընտանիք չկայ, որ արեան գծով կապուած չլինի Ապրիլեան Մեծ Եղեռնին:

Թալէաթ սուգով պատեց բովանդակ Հայոց Աշխարհը եւ արեան տուրք առաւ իւրաքանչիւր հայ ընտանիքից:

Եւ բնական է, արդար ու հասկանալի, որ Սողոմոն Թէհլիրեանի յուշերը, իբրեւ արձագանգը մեր Աշխարհում թափուած այդ ծով արեան, իրենց տեղը ունենան մեր յարկերից ներս:

Պէտք չէ գտնուի ոչ իսկ մէկ հայ ընտանիք, որ չունենայ մխիթարանքի եւ հպարտութեան այս մատեանը իր տան սեղանին վրայ:

Թշնամին մեզանից խլեց մեր խնկելի հայրենիքը:

Նա խլեց մեզանից մեր Մէկ Միլիոնը՝ զանգուածային տեղահանութեամբ, սովահարութեամբ, ջարդով ու սրածումով:

Ազգովին առմիշտ փոշիացած զանգուած պիտի լինէինք, եթէ թշնամին մեզանից կարողանար խլել նաեւ մեր ՊԱՏԻՒԸ՝ այն վերջին իրաւունքը, արդարացնում է մեր գոյութիւնը աշխարհի եւ պատմութեան առջեւ:

Այս գանձը նա մեզանից չկարողացաւ խլել:

Թէհլիրեանի պաշտպան-փաստաբաններից դր. Նիմայէր—Կիլի համալսարանի իրաւագիտական բաժնի ուսուցչապետ — իր պաշտպանողական ճառում արդարօրէն նկատում էր.

«Սողոմոն Թէհլիրեան ինքը չէր, որ փողոց կ'իջնէր Թալէաթ փաշան սպանելու. իր մէջ կ'իջնէին դարերը, միլիոնաւոր սպանուածները: Ան, կարելի է ասել, կը տանէր իր առջեւ դրօշակը իր ամբողջ ժողովուրդի պատիւին, դրօշակը խոշտանգուածներուն, դրօշակը իր լկուած ընտանիքին» (*):

1921 Մարտ 15ին Սողոմոն Թէհլիրեանի ձեռքով պարպուած

(*) «ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԹԱԼԷԱԹ ՓԱՇԱՅԻ» (*Սղագրական գեկուցում*), *Վիեննա, Մխիթարեան Տպարան*, 1921, էջ 204:

ARAM webaram.com

գնդակը մէկ արձագանգն է մեր մէջ ապրող այս մեծ ու հզօր ըզգացումի:

Ակամայ մեր յիշողութեան է գալիս Պատմահօր խօսքը.

«Զի թէպէտ եւ եմք ածու փոքր եւ թուով յոյժ ընդ փոքու ահիմանեալ, եւ զօրութեամբ տկար, եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս. եւ արժանի գրոյ յիշատակի»:

«Արութեան գործ»ը — Սայիդ Հալիմին, Բէհաէդդին Շաքիրին, Ջէմալ Ազմին, Ջէմալ փաշային ու Թալէաթին պատուհասելը չէր:

«Արութեան գործ»ը — մեծերի պաշտպանութիւնը վայելող այս *ծպտուած* դահիճներին երկրից երկիր որոնել եւ գտնելն էր:

Այս «գործ»երից է այն ակտը, որ Սողոմոն Թէհլիրեանի ձեռքով կատարուեց Բերլինում, 1921 Մարտ 15ին:

Վ. Ն.

ARAM webaram.com

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ս. Թէհլիրեանի վերյիշումների առանցքը կազմում է Թուրքիոյ նախկին մեծ վեզիր Թալէաթ փաշայի սպանութիւնը։ Դէպքը կապուն է հայ ժողովուրդի մեծագոյն ողբերգութեան հետ, որ տեղի ունեցաւ 1915—16 թուերին։ Այդ տարիներին, երբ Թալէաթ փաշան Թուրք կայսրութեան ճշմարիտ տէրն էր, բնաջնջուեց արեւմտահայութեան ստուարագոյն մասը,— նուազագոյն հաշուով շուրջ մէկ միլիոն երկու հարիւր հազար մարդ։ Իսկ բնաջնջումից ճողոպրածները տեղահան եղան՝ ապաստանելով մեծ մասամբ Անդրկովկաս։ Թէեւ Թուրքիոյ մէջ շատ արիւն է հոսել, բայց ազգերի պատմութեան մէջ հայկական սպանդը աննախընթաց է։ Բալկանեան ժողովուրդների ազատագրական շարժումների շրջանից սկսած՝ Թուրք կառավարութիւնը դիմել է ջարդերի քաղաքանութեան բոլոր այն դէպքերում, երբ անկարող է եղել դոհացնելու հպատակ ժողովուրդների ազգային պահանջները եւ զգացել է վտանգուած իր երկրի ամբողջականութիւնը։ Հայկական ջարդերը Համիտի օրով բացառութիւն չէին եւ կազմում էին Թուրք կառավարութեան ազգային քաղաքականութեան մէկ էջը։

Խնդիրը այս ընդհանուր ձեւով զրաղեցրել է շատերին։ Ցաւատանջ երեւոյթի պատճառը ոմանք տեսել են տիրող եւ հպատակ ժողովուրդների կրօնական տարբերութիւնների մէջ, ոմանք ջարդերը համարել են աշխարհակալ պետութիւնների հակամարտութեան եւ դիւանագիտական սադրանքների արդասիք, ուրիշներ իբրեւ պատճառ նկատել են ազգերի ազատագրական, անջատողական շարժումները։ Մեզ թւում է, որ այդ բոլորի հիմքում կայ մի հնագոյն ընկերային պատճառ, որ բաւականաչափ չի պարզուած։

Թուրքերը՝ գալով դրսից եւ ժառանգելով բիւզանդական կայս-

ARAM webaram.com

բութիւնը՝ դարերի ընթացքում անկարող եղան փաստօրէն իրա-
ցնելու այդ ժառանգութիւնը։ Նրանք չկարողացան ո՛չ ենթարկել,
ո՛չ ձուլել տիրուած ժողովուրդներին եւ ոչ էլ իրացնել նրանց
քաղաքակրթութիւնը։ Իրենց հերթին, տիրուած ժողովուրդները,
անցեալ փառքից մղուած, միշտ ծառացած մնացին տիրողների
դէմ։ Տիրողն ու տիրուածները ներքին կեանքում դարձան ան-
հաշտ, որոնց մէջ բացուած անջրպետը հետզհետէ խորացաւ թէ՛
կրօնական, թէ՛ մշակութային, թէ՛ ազգային, թէ՛ տնտեսական
հիմքերով։ Առեւտուր, արհեստ, արդիւնաբերութիւն, դրեթէ
մինչեւ առաջին Մեծ պատերազմը, ինչպէս կար, հիմնականում
մնաց տիրուածների սեփականութիւն։ Իսկ տիրողներին բաժին ե-
կան զէնքն ու զրահը եւ վարչական իշխանութիւնը, որ աւելի
պաշտօն էր, քան փաստական տիրապետութիւն։

Նոր ժամանակներում, ցարական իշխանաւորները, իրենց շա-
հերին հետամուտ, ամէն կերպ հրահրեցին այլազան պատճառնե-
րից ծնունդ առած հակամարտութիւնները։ Եւ այս անյարիր դրու-
թիւնը ծնունդ տուեց Թուրքիոյ կեանքում մի շարք ազգային ոգ-
ևերգութիւնների, որոնցից ամենամեծը եւ ահռելին եղաւ հայկա-
կան ոգևերգութիւնը։

Պատմական իրադարձութիւնների դասաւորութեամբ, հայերի
ազատագրութիւնը այնքան ուշացաւ, որ հայերը այլեւս դիւրու-
թեամբ չէին կարող թօթափել իրենց լուծը։ Օսմանեան հզօր
կայսրութեան շուրջ երկու դարերի անդամահատութիւններից յե-
տոյ, այդ շրջանում «Հիւանդ Մարդու» ժառանգութեան խնդիրը
ծանրացաւ։ Ամէն մի նոր նուաճում, «ազդեցութեան շրջանը», ան-
գամ առանձնաշնորհում այժմ դառնում էր կռուախնձոր։ Դիւա-
նագիտական պայքարների այդ թոհ ու բոհի օրերին, շատ արիւն
տուեց հայ ժողովուրդը եւ եթէ կարողացաւ վերջնական բնաջն-
ջումից ազատուել, այդ էլ պարտական էր իր շրջահայեցութեան։
Բոլորովին սխալ է, թէ նա ձգտում էր անջատման, «ծովից-ծով»
մի Հայաստան կազմելու տենչով։ Իր բովանդակ ազատագրական
շարժման ընթացքին, հայ ժողովուրդը ո՛չ ունեցել է եւ ո՛չ էլ
հետապնդել է այդպիսի մի նպատակ։ Անկախութեան գաղափարը,

ARAM webaram.com

որպէս գործնական խնդիր, ծնունդ է առել պատերազմից յետոյ եւ արծարծուել խաղաղութեան բանակցութիւնների շրջանում, երբ արդէն հայ ժողովուրդը երկրին մէջ բնաջնջուած էր։ Քանի դեռ ժողովուրդը ապրում էր, իր միակ ձգտումը բարենորոգութիւններ էին, այսինքն ապրելու եւ աշխատելու հնարաւորութիւնը։ Մտաւոր — բարոյական իր ոգորումները բնաւ չեն նշանակում քաղաքական ծրագիր, որ առաջին օրից եղել է Բերլինի վեհաժողովի 61րդ յօդուածը եւ իր մահուան նախօրեակին կազմել է 1913ին հաստատուած բարենորոգութիւնների ծրագիրը։ Ու սխալ է նաեւ, թէ հայութիւնը վարում էր զուտ ազգային քաղաքականութիւն, միայն ի՛ր բախտին հետամուտ։ Առարկայօրէն, միջազգային պայմանները խիստ աննպաստ էին, հայ ազատագրական շարժման շրջանին, այդպիսի մի քաղաքականութեան համար։ Եւ աւելի շատ էին ու հիմնաւոր տուեալները՝ երկրի ընդհանուր բարեկարգութեան հունով ձեռք բերելու ազգայնօրէն մի տանելի կեանք։ Ենթակայօրէն նա երբեք չի ձգտել զատել իր կեանքը հարեւան ժողովուրդների կեանքից, եւ իր ուժերը ներածին չափ նպաստել է երկրի ընհանուր յառաջադիմութեան իրեն մատչելի բոլոր ասպարէզներում։ Ինչ էլ որ ասուի, ո՛չ ոք չի կարող ուրանալ Թուրքիոյ առեւտրի, արհեստի, գեղարուեստի, գիւղատնտեսութեան բարձր զարգացման մէջ հայերի կատարած դերն ու արժէքը։

Երկրի ընդհանուր եւ իր կեանքի բարենորոգութեան յոյսերը հայ ժողովրդին միշտ մղել են համագործակցութեան Թուրքիոյ բոլոր ընդդիմադիր տարրերի հետ։ Եւ Թուրքիոյ տիրող տարրերը, իրենց խաւարամիտ արբանեակներով, դիտել են հայերին ոչ այնքան իբրեւ պատճառ արտաքին միջամտութիւնների,— որոնք, ի դէպ, շատ էլ չէին վտանգում նրանց շահերը,— որքան իբրեւ Թուրք յեղափոխութեան վարակիչ մանրէն։ Յամենայն դէպս, հայ ժողովուրդը Թուրքիայում աւելի շատ արիւն է տուել ընդհանուր հիմքերով, քան իր ազգային ազատագրական շարժման բերումով։ Պատահականութիւն չէ, որ այդ շարժումը գործօն բնոյթ է ստանում Թուրք յեղափոխութեան սկզբնաւորութեան շրջանում։ Այդ

ARAM webaram.com

օրերին է, որ թափ է առնում թուրք յեղափոխական շարժումը երիտասարդ թուրքերի նախահոր՝ Միհհատ փաշայի ջանքերով։ Եգիպտոսում ծնունդ են առնում «Իթթիհատ» եւ «Հուրիէթ» յեղափոխական թերթերը, որոնց էջերում երիտասարդ թուրքերը քննադատում են հին կարգերը եւ պահանջում սահմանադրութիւն։ Նրանց ազդեցութեան տակ երկրի մէջ աճող դժգոհութիւնները իրենից վանելու համար, կառավարութիւնը թուրքերին մղում է քրիստոնեաների եւ, առաջին հերթին, հայերի դէմ։ Դրսի քաղաքական իրադարձութիւնների հետեւանքով, 1877ի Մարտին, բացւում է թրքական առաջին խորհրդարանը, որ յոյսեր է ներշնչում հպատակ ազգերին, որոնց մէջ եւ հայերին։ Բայց հէնց որ Համիտը ամրանում է գահի վրայ, նոյն տարուայ վերջերին նա ցրւում է խորհրդարանը, իր երկարատեւ գահակալութեան շրջանում այլեւս երբեք չհրաւիրելու համար։ Միաժամանակ շնորհազուրկ է լինում մեծ վեզիր Միհհատ փաշան, քիչ յետոյ Արաբիայում խեղդամահ լինելու համար։ Ցաջորդ տարուայ Մայիսին բռնկւում է Ալի Սուաւիի ապստամբութիւնը Պոլսում, ուր, այդ օրերին, ռուս-թրքական պատերազմի հետեւանքով, կուտակուել էին Բալկաններից գաղթած շուրջ 150 հազար գաղտնած մուհաճիրներ։ Ապստամբութեան ճնշումից յետոյ, Համիտը ցրում է այդ գաղտնած ամբոխը գաւառներում ու դրդռում նրանց հայերի դէմ։ Հակառակ այս կացութեան, առաջին քաղաքական, յեղափոխական հայ կազմակերպութիւնը, կամ, աւելի շուտ, հոսանքը, յանձինս Արմենականների, այդ օրերին հանդէս է գալիս ոչ թէ անջատման, ազգային անկախութեան պահանջներով, այլ ընդհանուր հայրենիքի բարեկարգութեան ծրագրով։ Շարժման գլխավոր Մ. Փորթուգալեանը բանաձեւում էր իր հանրային աշխատանքը, որպէս «իւր ազգի եւ օսմանեան տէրութեան գոյդ շահերին նուիրուած գործ»...

Ութսունական թուականներին համիտեան ռեժիմը այլեւս կայուն է ու ներքին ընդդիմադիր ուժերի դէմ՝ հզօր։ Իր արիւնկզակ քաղաքականութեան մէջ Համիտը յենած է արտաքին զրամագլուխների ու ներքին ուտատպետական — կղերական ուժերի վրայ։

ARAM webaram.com

Հայաստանում ապաստակում են «Համիդիէ» եւ քիւրտ տէրերէյ-ները. հայերից խլում են լաւագոյն հողերը, բարձրանում են տուրքերը, յաճախագէպ դառնում են աւարառութիւնները, սպա-նութիւնները, ստեղծելով դժոխային մի վիճակ։ Եւ, սակայն, այդ օրերին հանդէս եկած Հնչակեան կուսակցութիւնը, հակառակ իր ծրագրի, ո՛չ թէ հետապնդում է Հայաստանի անկախութիւն, այլ երազում է այնպիսի կարգերի մասին Թուրքիայում, որ հնարա-ւոր պիտի դարձնեն ընկերվարութեան իրագործումը այդ երկ-րում...

Իննսունական թուերի առաջին օրերին դեռ քնած է Թուրք յե-ղափոխական շարժումը։ Երկրի մէջ դրութիւնը մազաչափ անգամ չի փոխւում. Համիտեան ռեժիմի արեան ու թալանի նոյն քաղա-քականութիւնն է տիրում։ Երկրից դուրս, Կովկասում, յեղափո-խական զատ – զատ խմբերի խմորումներից կազմւում է Հայ Յե-ղափոխական Դաշնակցութիւնը։ Ըստ էութեան, նոր կուսակցու-թիւնը հնչակեաններից տարբերւում է աւելի կազմակերպական ձեւով ու գործնական ձգտումներով եւ գտնւում է դերազանցապէս ռուս նարոդնիկների մտաւոր-բարոյական ազդեցութեան տակ. նա դէմ չէ ընկերվարութեան, բայց նախապէս անհրաժեշտ է համա-րում քաղաքական ազատութիւն Թուրքիոյ բոլոր ժողովուրդների ու ազգերի համար. անջատման ու անկախ Հայաստանի ստեղծման մասին խօսք չկայ նրա ծրագրում։ Մօտաւորապէս նոյն ժամանակ, 1892ին, վերականգնւում է Թուրք յեղափոխական շարժումը եւ Ահ-մէտ Ռիզան Փարիզում հիմնում է Երիտասարդ Թուրքերի նոր օր-գան «Մէշվէրէթ»ը։ Քիչ յետոյ սունկի պէս բուսնում են յեղափո-խական թերթեր։ «Իթթիհատ վէ Թէրաքզի»ի հիմնադիրներից Իս-հակ Սիւքիւտին եւ Աբդուլլահ Ճեւտեթը Ժընեւում հիմնում են «Օսմանլը»ն։ Մուրատ պէյը հրատարակում է ռազմաշունչ «Մի-զան»ը։ Եգիպտոսում լոյս են տեսնում Հոջա Գաստրիի «Կանոնը Խասի»ն եւ Ահմէտ Սանբայի «Սանջակ»ը։ Թուրք պալատական յուսաջղիմականներից իշխան Սալահէտտին Փարիզում լոյս է ընծա-յում «Թէրաքզի»ն։ Եգիպտոսում «Շուրա Օսմանի» ու «Ենի Ֆիքր» թերթերը արծարծում են նրա գաղափարները։

ARAM webaram.com

Չի ուշանում եւ Երիտասարդ Թուրքերի գործունէութիւնը. Միւքիւտին, Ճեւատեթը եւ Իբրահիմ Տենոն 1894ին Պոլսում հիմնում են «ԻԹԹԻՀատ վէ Թէրագգը»ի անդրանիկ կազմակերպութիւնը։ Հիմնականի մէջ նրանք հետապնդում են Միհատ փաշայի սահմանադրութիւնը — պատասխանատու նախարարութիւն, ազգերի հաւասարութիւն օրէնքի առաջ, մամուլի եւ խղճի ազատութիւն, անձի եւ սեփականութեան ապահովութիւն եւ այլն։

Թեւ առած՝ յեղափոխական տրամադրութիւնների այս բարձրացումից, թափ է առնում եւ հայ ազատագրական շարժումը. տեղի են ունենում հայ–Թուրք ընդդիմադիրների համագործակցութեան փորձեր։ Ու Համիտը իր մաղձը Թափում է հայ ժողովուրդի վրայ. սկսւում են 1895—1896ի ջարդերը, որոնց զոհ գնացին 300 հազար հայեր։ Երկրի մէջ գործող Թուրք յեղափոխականներից ձերբակալուեցին միայն մօտ հարիւր հոգի. 13 հոգի պատապարտուեցին մահուան, 68 մարդ բանտարգելութեան...

Նոր դարի սկզբին, հայ ազատագրական շարժման ղեկավարները, Թուրք յեղափոխութեան վրիպումներից յուսահատ, ձեռնարկում են հայ – մակեդոնական շարժման համագործակցութեան։ 1903ին Մակեդոնիայում բռնկւում է ապստամբութիւն, որ անմիջապէս ծնունդ է տալիս արտաքին շահագրգռութիւնների. Աբդուլ Համիտը ձգտում է ձեռք անցընել Սելանիկը եւ իր համար ստեղծել պատուանդան դէպի Արեւելք։ Ռուսաստանը վախենում է Աւստրիոյ ուժեղացումից Բալկաններում եւ պնդում է միջամտել հաւասարապէս։ Սեպտեմբերին երկու երկրների վեհապետների տեսակցութիւնը յանգում է համաձայնութեան, որով մակեդոնացիները ստանում են բարենորոգութիւններ՝ աւտոնոմ քաղաքացիական գործակալների հսկողութեան տակ։ Օրինակը վարակիչ էր եւ յուսադրիչ։ Յաջորդ տարին Սասունում բռնկում է ապստամբութիւն։ Բայց այս անգամ պետութիւնները լուռ են։ Ու Համիտը իրեն պարտադրուած զիջման վրէժը Մակեդոնիայում լուծում է հայերից. սկսւում է Սասունի ջարդը։ Երկրի մէջ հայերը լիզում են վէրքերը։ Երկրից դուրս նրա ապատագրութեան

ARAM webaram.com

գեկավարները նոր ֆորձում են ընդհանուր հակառակ առեղծել Թուրք ընդդիմադիրների հետ։ Դեռ երկու տարի առաջ, 1902ին, Թուրք ընդդիմադիրների համագումարից յետոյ Փարիզում, այդպիսի մի համագործակցութեան հնարաւորութիւնը ներշնչում է յոյսեր։ Միայն թէ այժմ Թուրք ընդդիմադիրները բաժանուում են երկու հոսանքների։ «Ազգակենտրոնացման Լիգան»՝ իշխան Սարգսահէտինի գլխաւորութեամբ՝ անհրաժեշտ է գտնում Թուրքիոյ մէջ սահմանադրական կարգեր հաստատելու գործում դիմել եւրոպական պետութիւնների միջակցութեան։ Ազգայնականները, որոնք համախմբուած են «ԻԹԹիհատ վէ Թէրաքգը»ի մէջ, Ահմէտ Ռիզայի գլխաւորութեամբ, անհրաժեշտ են նկատում շարունակել յեղափոխական գործունէութիւնը սեփական ջանքերով՝ երկրի մէջ առեղծելով յեղափոխական մարմինների ապմեր, խստօրէն կենտրոնացուած հիմքերով։ Եւրոպայի կողմից բաղձացս խարուած հայ ազատագրական շարժման գեկավարները այս վերջինների հետ են։

Թուս առաջին յեղափոխութիւնը մեծապէս ազդեց յեղափոխական տրամադրութիւնների վրայ Թուրքիայում։ Սակայն նաեւ անկախաբար այս յեղափոխութիւնից, նրա նախասեմին իրար յետեւից անցնում են Կովկասեան Հայաստանի սահմանը Թումանի, Ղարսրդ Գէորգի, Ալանի, Զալլատի, եւ այլ պարտիզանական խմբերը։ Բուն երկրի մէջ ծաւալւում են Անդրանիկի, Մուրատի, Սեպուհի եւ այլոց հայդուկային խմբերի շարժումները։ Այս անգամ շարժումը համակում է աւելի լայն խաւեր նաեւ Թուրք ժողովուրդի մէջ, զօրքի եւ նաւատորների շարքերում տեղի են ունենում անկարգութիւններ։ Երկրի ընդդիմադիր տրամադրութիւնները ազդում են տրատատահմանում հաւաքուած Թուրք յեղափոխականների վրայ։ 1907 Դեկտ. 27—29ին Փարիզում տեղի է ունենում Թուրքիոյ ընդդիմադիր տարրերի համագումար։ «ԻԹԹիհատ վէ Թէրաքգը»ից զատ համագումարին մասնակցում են «Ազգակենտրոնացման Լիգան», Հ. Յ. Դաշնակցութիւնը, մակեդոնական, արաբական, հայկական զանազան Թերթերի, ինչպէս նաեւ հրէական ու եգիպտական ընդդիմադիր հոսանքների ներկայացուցիչները։ Այստեղ

ARAM webaram.com

շատ մեծ է հայ յեղափոխականների ազդեցութիւնը ընդունուած որոշումների վրայ. բոլոր ընդդիմադիր ուժերը պիտի գործեն հաւաքաբար. գլխաւոր նպատակն է Համիտի գահընկէցութիւնը եւ սահմանադրական կարգերի հաստատումը. այդ նպատակին հասնելու համար ժողովը քուէարկում է այն բոլոր միջոցները, որոնք կիրարկւում են ռուսական յեղափոխութեան մէջ:

1908 Յունիսին, ռուս եւ անգլիական վեհապետների տեսակցութիւնը Ռեւալում եւ համաձայնութիւնը՝ հաւաքաբար միջամտելու մակեդոնական խնդրին, հարկադրեց երիտասարդ – Թուրքերին հանդէս գալ աւելի շուտ քան ենթադրում էին: Շարժումը սկիզբ առաւ Սելանիկում, գնդապետ Նիազիի նախաձեռնութեամբ: Նրան ենթակայ յեղափոխական ուժերին շուտով միացան ուրիշները, ի Թիւս որոնց եւ Ինվերը: Համիտի կողմից ապստամբների դէմ ուղարկուած զօրքերը միացան նրան: Զգալով իր անխուսափելի պարտութիւնը, Համիտը ստիպուած եղաւ Յուլիս 24ին յայտարարել վերականգնուած այն Սահմանադրութիւնը, որի հեղինակին երեսուն տարի առաջ խեղդել էր: Այդ միակ ելքն էր գահի վրայ մնալու ու ժամանակ շահելու: Իր հերթին, Թուրք յեղափոխութեան վարիչ ուժը՝ «Իթթիհատ վէ Թէրաքգը», միշտ խուսափելով շարժման տալ լայն ժողովրդական բնոյթ, ներկայ դէպքում որոշում է յեղափոխութիւնը պահել «խաղաղ, սահմանադրական հունի մէջ: Այդ օրերին Պոլսում կուսակցութեան գերագոյն խորհուրդը որոշում է գահի վրայ պահել Համիտին, քանի դեռ նա հաւատարիմ կը մնայ Սահմանադրութեան...

Ի՞նչ էր այդ օրերին հայ ժողովուրդի զգացածը. դժուար Թէ նա կարող լինէր բաժանել Թուրքիոյ բոլոր ժողովուրդներին համակած ցնծութիւնը. քանի Համիտը գահի վրայ էր, նրան չէր կարող փրկել նոր պատուհասներից եւ ոչ Սահմանադրութիւն: Ու այդպէս էլ եղաւ, ամիսը չանցած Համիտը լարեց հայերի դէմ մռայլ ու խաւարամիտ եւ կղերա-աւատապետական տարրերի մի ամբոխ, որ Ատանայում սրի քաշեց շուրջ քառասուն հազար հայեր: Նոր զանգուածային ջարդերի նախերգանքն էր այդ: Բայց նախ քան այդ՝ Համիտին անհրաժեշտ էր մաքրել իր հաշիւները

ARAM webaram.com

յեղափոխութեան հետ։ 1909 Մարտին Պոլսում ծայր տուեց հակայեղափոխութիւնը։ Սակայն, այս անգամ բախտը դաւաճանեց Համիտին։ Ապրիլ 26ին հակայեղափոխութիւնը ճզմուեց եւ Համիտը գահընկէց եղաւ։ Այդ օրը վերջապէս հայ ժողովուրդը ուշնեց իր յաղթութիւնը։ Բայց, դժբախտաբար, նրան վիճակուած չէր այդ յաղթութեան պտուղները վայելել...

Անցաւ երեք տարի, յոյսերի, ակնկալութիւնների, սպասումների տարիներ, որոնց ընթացքում հայ յեղափոխական կուսակցութիւնների եւ համայն արեւմտահայութեան միակ կարգախօսը օսմանեան ընդհանուր հայրենիքի վերածնունդն էր. կան անհամար որոշումներ, յայտարարութիւններ ժամանակի հայ յեղափոխական դրականութեան մէջ այդ մասին։ Եւ սակայն ոչինչ չփոխուեց. յեղափոխութեան նախօրեակին Իթթիհատի տուած բոլոր խոստումները հայ ժողովուրդի կեանքի եւ ապահովութեան մասին՝ ջուրն ընկան։ Հայկական գաւառներում կողոպուտներն ու մասնակի սպանութիւնները շարունակուեցին, հողային յափշտակութիւնները ստացան ծաւալուն բնոյթ։ Վկայ են այս բոլորին Պոլսոյ Պատրիարքարանի անհամար բողոքագրերը, որոնք ուղղուել են կառավարութեան այդ մռայլ դէպքերի առթիւ, 1912ի ընթացքին։

Այդ օրերին հայ յեղափոխականների մէջ բարոյալքումը ընդհանուր էր։ Ոմանք քարոզում էին նորից «լեռ բարձրանալու» անհրաժեշտութիւնը։ Բայց ընդհանրապէս նրանց հայեացքները ուղղւում են դէպի դրսի ուժերը։ Թուրքաստանում նրանց խոստանում են իրական բարենորոգութիւններ, որոնց համամիտ են Անգլիան եւ Ֆրանսիան։ Բազմաթիւ սին խոստումներից յետոյ, թերեւ սրտով չէր, որ հայ յեղափոխականները մօտենում էին այդ ելքին. բոլոր միջոցները սպառած էին, ուրիշ ելք չկար։ 1913ին բարենորոգումների խնդիրը կարծես ստանում է իրական հանգամանք։ Ցաջորդ ամրան հասնում է Պոլիս եւրոպացի երկու բարենորոգիչներից մէկը, արդէն ընդունուած բարենորոգութեանց գործին ձեռնարկելու համար։ Բայց բռնկում է պատերազմը, ու մէկ տարի յետոյ Հայաստանում այլեւս հայ չկայ...

ARAM webaram.com

Ի՞նչպէս կարելի եղաւ իրագործել այդ ահաւոր դէպքը մեր դարում։ Արևմտահայ ժողովուրդի բնաջնջումը միայն Իթթիհատի և նրա գեկավար դէմքի՝ Թալէաթի գործը չէր։ Կար մի հին, արիւնոտ անցեալ, որ դարերի յետևից դեռ ցցած էր իր մռայլ դէմքը։ Թալէաթը ժառանգել էր տիրոջների միջև գոյութիւն ունեցող այդ հին՝ — արիւնոտ ու ատելավառ — անցեալը։ Սակայն նաև Թալէաթի անձը, անկախաբար այդ անցեալից, իր մեծ դերն ունեցաւ։ Թալէաթ իր հրէշային դաժանութեամբ գերազանցեց հայ ժողովուրդի բոլոր հին ու նոր դահիճներին։

Ո՞վ էր այդ մարդը, որ այսպիսի ճակատագրական դեր կատարեց հայ կեանքում։ Ըստ տեղեկութիւնների, Թալէաթը պոմաք էր, բուլգարական ծագումով, որի նախահայրերը դարեր առաջ ընդունել էին մահմեդականութիւնը։ Որքան ճիշտ է այդ, չգիտենք. յիշում ենք միայն, որ պատերազմի շրջանում հակառակորդ թթիլաֆիականները նրան որակում էին «տոնմէ», ատելավառ մի արտայայտութիւն, որ նշանակում է դաւանափոխ, աւելի շուտ՝ ուրացող։ Իրեն համար կրօնական հանգամանքները ոչ մի արժէք չունէին. նա անտարբեր էր և հաւասարապէս դէպի բոլոր կրօնները։ Հայրը՝ Գրբճա Ալի, Զէփէնի գիւղից, գատական պաշտօնեայ էր։ Ըստ թրքական աղբիւրների, դեռ երիտասարդ հասակում Թալէաթը բանտարկուել էր Աղրիանուպոլսում, ուր եւ յարել է յեղափոխական շարժումին։ Ինքնուսական թուականներին, երբ Երիտասարդ Թուրքերի դլուխն էր անցել Ահմէտ Ռիզան, Թալէաթը հեռագրական պաշտօնեայ էր։ Իր յեղափոխական կնքահայրն է եղել Իմէկի երևելի Իբրահիմ բէյը, որ ընդունել էր երիտասարդ Թալէաթին կազմակերպութեան մէջ և յանձնարարել նրան՝ «Մէշվէրէթ»ը տարածելու գործը։ Քիչ յետոյ, Թալէաթը կարգուում է Սելանիկի հեռագրական քարտուղար, ուր եւ մնում է «Օսմանլը Հուրիէթ ճէմիէթիի» մէջ, իբրև գործօն անդամ։ Իր ընկերներն էին Մանեասի Զատէ Ռէֆիզ, Ճաւիտ, Միտհատ Շեւքրի, Նազիմ եւ Զամփոլատ, որոնք կազմում էին Սելանիկի կազմակերպութեան կորիզը։

Ե՞րբ են սկսել իր յարաբերութիւնները հայ յեղափոխական-

ARAM webaram.com

ներբի հետ, սուղապէս չդիտենք։ Ճայանի է միայն, որ իր անբա-
պառ եռանդով, յամառ կամքով եւ, մանաւանդ, շրջապատը դրա-
ւելու բացառիկ ընդունակութիւններով, նա շատ շուտով ձեռք է
բերում որոշ դիրք ու ազդեցութիւն Երիտասարդ Թուրքերի մէջ
եւ բարեկամներ՝ հայ յեղափոխականների շարքերում։ Իր այս
հայ բարեկամների մօտ է, որ Թալէաթ 1909 Մարտ 31ի հակայե-
ղափոխութեան օրերին ապաստան գտաւ, պահուեց, մինչեւ որ
իրեն յաջողուեց փախչել եւ անվտանգ Սելանիկ հասնիլ։

1911ին Թալէաթը ներքին գործոց նախարար է եւ միաժամա-
նակ Իթթիհատի նախագահ։ Այդ օրերին է, որ յատկապէս վար-
թարանում է հայ գաւառի կացութիւնը, ուր հողային յափշտա-
կութիւնները, աւարառութիւնները եւ մառնակի սպանութիւնները
վերջ չունին։ Իր դիրքի, ազդեցութեան ու պաշտօնի բերումով նա
կարող էր հիմնապէս արմատախիլ անել այդ երեւոյթները։ Բայց,
եթէ արդէն իսկ ապառում էր յարմարագոյն պահուն իր դիւային
ծրագիրը գործադրելու, հասկանալի է դառնում նրա թոյլատու
ընթացքը։

Թալէաթը մնաց զեկավար դիրքերում զրեթէ մի ամբողջ
տասնամեակ, բայց Թուրքիոյ կեանքի եւ ոչ մի խնդիր լուծում
չստացաւ նրա երկարատեւ իշխանութեան ընթացքին։ Ներքին վե-
րանորոգութիւնների բոլոր խնդիրների լուծման մէջ նա ցոյց տը-
ւաւ՝ մի քառասային պատեհապաշտութիւն, որ համիտեան ռեժիմին
յատուկ էր միայն՝ արտաքին խնդիրների լուծման մէջ։ Գալով
այս վերջիններին ուշադրաւ է, որ Թալէաթը եւ իր կուսակցութիւ-
նը թէ՛ Տրիպոլիսի, թէ՛ Բալկանեան պատերազմի, թէ՛ մեծ պա-
տերազմի նման բախտորոշ խնդիրների լուծման ժամանակ բիրտ
ու պարզունակ ելքերից զատ ուրիշ միջոց չգտան։ Թալէաթի հետ
գործ ունեցած եւրոպական դիւանագէտները, ինչպէս նաեւ Թուրք
թէ օտար հասարակական գործիչները, չեն նշմարում նրա մէջ իր
դիրքին, պաշտօնին համապատասխանող մտաւոր պատրաստութի-
նը եւ պետական անձին անհրաժեշտ փորձառութիւնը։ Բայց յիշա-
տակում են մի շարք տուեալներ, որոնց ուժով նա խոնարհ խա-
ւերից հասաւ ամենաբարձր դիրքերի,— կամք, եռանդ եւ ան-

ARAM webaram.com

զուլ աշխատանք նոր անոր դիրքեր գրաւելու, խօսելու, համոյելու, անխառն զուարթութեամբ չրջապատը իր հետ կապելու արտակարգ ընդունակութիւն, մինչեւ իրեն յատուկ հզօր բնազդ՝ դիմացինի թագուն մտադրութիւնները կանխելու, շափաւոր եւ անդամ «զեմոկրատ» կենցաղ մասնաւոր կեանքում, «անկեղծութիւն», երբ դաւադրում է. «բարեկամութիւն», երբ կատաղի թշնամի է։ Այսպէս էին իր յատկութիւնները եւ քաղաքագիտական իմաստութիւնը։ Իսկ այդ բոլորը շատ քիչ էր վերածնուող Թուրքիան նոր ուղիներով առաջնորդելու համար։

1914ի ամրան գումարուեց Հ. Յ. Դաշնակցութեան հերթական Ընդհանուր ժողովը։ Այդ ժողովը մասնաւորապէս Ռուսաստի պընդումով գումարուեց Էրզրումում։ Բայց թալէաթը ուրախ էր, որ Հ. Յ. Դ. Ընդհ. ժողովը գումարուում է Էրզրումում։ Հայ յեղափոխականները այդ հանդամանքը նկատում էին բարեկամութեան վերականգնման մի ցոյց թալէաթի կողմից։ Ու նորից վերապրքնում էին յոյսեր հայկական բարենորոգութիւնների գործադրութեան շուրջ։ Իրականին մէջ թալէաթը, այդ ճակատագրական օրերին, ցանկացել էր իր ձեռքի տակ ունենալ հայ ակնառու յեղափոխական գործիչներին։ Ժողովը դեռ չէր վերջացել, երբ սկսուեց ընդհանուր պատերազմը։ Քիչ յետոյ, Էրզրումում յայտնուեցին թալէաթի երկու պատուիրակները՝ Իթթիհատի կենդրոնական կոմիտէի քարտուղար Բէհաէտտին Շաքիրը եւ յայտնի իթթիհատական գործիչ Նազիմ բէյը։ Նրանք եկել էին բանակցելու հայ յեղափոխականների հետ, Թուրքիան պատերազմին մասնակցելու պարագային նրանց բանելիք դիրքի մասին։ Վատահ, որ Ռուսաստանը պատերազմում պիտի ջախջախուի, թալէաթի պատուիրակները չէին ծածկում պատերազմին մասնակցելու իրենց մտադրութիւնը։ Նրանք, համակուած ռազմաշունչ տրամադրութեամբ, առաջարկում էին հայ յեղափոխականներին գործօն աջակցութիւն ցոյց տալ իրենց. յատուկ յայտարարութեամբ հանդէս գալ արտաքին աշխարհի առաջ՝ հայ–Թուրք միացեալ ճակատով. զէնքի տակ քաշել բոլոր հին հայդուկային խմբերը. հայ կամաւորական բանակներ կազմել, կռիւներում առաջ բերել ապստամ-

ARAM webaram.com

թութիւն եւ ռուսների թիկունքը քայքայել. ամէն կերպ նպաստել Թուրքերի առաջխաղացութեան դէպի Անդրկովկաս։ Հայ յեղափոխականները մերժեցին այդ արկածախնդրութիւնը, յորդորելով յետ կենալ պատերազմին մասնակցելու մտքից, որ կարող է կործանարար լինել Օսմանեան կայսրութեան համար ու առարկելով, որ հայ ժողովուրդը կարող է կատարել միայն իր քաղաքացիական պարտականութիւնները պատկանելով երկրների նկատմամբ։ Ընդհանուր ժողովը իր օրակարգը չոգառած փակուեց. պատգամաւորներից ոմանք բանտարկուեցին, ոմանք աքսորուեցին, ոմանք էլ յաջողեցին փախչել ուր կարող էին։ Աչնան սկիզբներին, երբ դեռ Թուրքիան պատերազմի մէջ չէր, արդէն սկսուել էին մասնակի անդահանութիւններն ու ջարդերը Էրզրումի, Մուշի ու Բիթլիսի շրջաններում։ Այս վայրերում կատարւում էին զանգուածային ձերբակալութիւններ ու դինաթափութիւն։ Այդ օրերին Թալէաթը Թուրքիոյ միահեծան տէրն էր... Դառնագէտ դէպքերի զարգացման եւ Թալէաթի դերին քիչ – շատ ծանօթ մարդկանց համար այնուամենայնիւ մնում է մութ այս մարդու հոգեկան աշխարհը, որ ընդունակ եղաւ մի ամբողջ ժողովուրդ ոչնչացնել եւ արմատախիլ անել Թուրքիոյ մէջ։ Բայց այդ մասին մենք չենք կարող ասելիս ասել, քան Թուրք նշանաւոր գրագէտ Ճէնապ Շէհապէտինը, որ այս գրքի յաւելուածի վերջում զետեղուած իր գրութեան մէջ տալիս է Թալէաթի բնութագիրը։

Գրի առնելով Ս. Թէհլիրեանի վերմիչումները՝ մենք մէկ նպատակ ունեցանք,— յայտնել այն ամէնը՝ ինչ կապ ունի հայ ժողովուրդի մեծագոյն ողբերգութեան հետ, եւ յանձնել պատմաբանի ուշադրութեան այն ամէնը՝ ինչ կարող էր ասել այդ մասին Թալէաթի ահաբեկիչը։

1943, Մայիս Վ. Մ. (*)
Բելգրատ

---

*) Վահան Մինախորեան եղբինակն է «1915 ԹՈՒԱԿԱՆԸ» մե-

ARAM webaram.com

ծաթէֆ գրքին, լոյս տեսած 1949ին, հեղինակի մահէն հինգ տարի ետք: Մինախորհան հանրային հարուստ անցեալով անբաւիր անուն մըն է: Կ'անդրադարձէր Սոցիալիստ – Յեղափոխականներու կուսակցութեան: Մեռաւ տարագրութեան մէջ, Բելգրադ, 1944ին:

«ՅՈՒՍ·»

ARAM webaram.com

ՄԱՅՐԻԿԻՍ...

Անհունի աղջամուղջին մէջ յիշատակդ իսկ թառամելու, առ յաւէտ կորսուելու գաղափարէն զարհուրած՝ փնտռեցի քեզ, մա՛յր իմ...

Թափառեցայ երկրէ երկիր, անապատէ անապատ: Անցայ մեր տարաբախտ ու աւերակոյտի վերածուած հայրենիքի քաղաքներն ու գիւղերը, սարերն ու ձորերը...

Զուր եղան իմ բոլոր որոնումները... Ամէն կողմ ամայութեան զարհուրելի համայնապատկերը կը ներկայանար իմ աչքերուն: Չկար այլեւս այն կեանքը, եռ ու զեռը, դաշտերու հմայիչ երեւոյթը, առուակներուն կարկաչիւնը, թռչուններուն ուրախ զուարթ ճրուողիւնը...

Բոլո՛ր, բոլո՛ր չքացեր էին արիւնոտ բռրենիին գազանային բնազդին բաւարարութիւն տրուած ըլլալու հետեւանքով:

Բուերու թագաւորութիւնն էր տիրապետողը մեր հայրենիքին մէջ...

Ամայութիւն, ամայութի՛ւն...

Եփրատը անհանգիստ ու գժտուած էր ձեր խոշտանգուած դիակներէն իր անսկիզբ ժամանակներու ընթացքը խանգարուած ըլլալուն... Բողոքի ու ըմբոստութեան մռնչիւնները մի-

ARAM webaram.com

այն կը լսուէին իր կռիակներէն: Ան եւս կ'ողբար իր անցեալը:

Վնիտ ու յստակ ջուրերը ներկուած էին հայ մայրերու, երեխաներու, երիտասարդներու եւ ծերերու անմեղ արիւնով··· Իր հոգին եւս վրդովուած էր հայ ցեղի ահռելի ողբերգութեան կենդանի վկան ու ականատեսը ըլլալուն համար···

Հեռաւոր եւ անծանօթ անապատները անողոք ու լուռ էին: Կարծես յագեցած լինէին իրենց հրկիզեալ աւազներուն վրայ ցրուած ոսկերոտիքէն···

Դառնօրէն ողբացի ի տես մարդկային պատմութեան մէջ տեղի ունեցած արհաւիրքներու այս ամենազարհուրելիէն: Տատանումներ ունեցայ մինչեւ յուսահատութեան անփառունակ ոլորտները տանող, բայց կսկիծը, ողբերգութեան ահաւոր տեսարանները ցնցեցին իմ հոգին, ուժ ու կորով ներշնչեցին ինծի՝ ապրելու, կեանքը շարունակելու մարմաջը պարտադրելով: Թերեւս անոր համար, որ առիթը ունենամ քեզի հանդէպ, մայր իմ, եւ քեզ հետ բիւրաւոր հայ մայրերու, որոնք խաչուեցան հայ գողգոթային վրայ, իմ՝ հայ զաւկի՝ տարրական պարտականութիւնս կատարելու··· որեւէ ձեւով յաւերժացնելու յիշատակը թափուած արեան գետերու···

Դուն, մա՛յրիկ, որ կեանք տուիր ինծի, արտասուաթոր աչքերով համբուրեցիր զիս դառն զգացումով մը լեցուած, թէ այլեւս պիտի չտեսնուէինք· իրաւունք ունէիր: Ճիշդ էր նոյնպէս քու հառաչանքը եւ արդարացի՝ «հազիւ մեծցուցի, թեւ առիր ու կը թռիս կը հեռա-

ARAM webaram.com

նաս ինձմէ»։ Այո՛, հեռացայ։ Այլեւս քեզ յաւիտեանս չտեսնելու պայմանով, բայց քու տրուած կաթը, քու ունեցած մայրական անսահման գուրգուրանքը այնպիսի խոր արմատներ ձգած էին իմ հոգիի ալքերուն մէջ, որ մոռնայ այդ բոլորը, անտարբեր մնալ, մանաւանդ քու եղերական վախճանէն յետոյ, կարելի չէր...

Այսօր, խորհրդապաշտ հաւատացեալի մը նման, ուզեցի «Անձանօթ մօր անյայտ գերեզման» մը կառուցանել իմ հոգիիս մէջ ու երկիրդածօրէն երկրպագել այդ կոթողին առջեւ, որպէս հնամենի բագինի մը... Ուզեցի, իմ հեթանոս աղօթքի խորհուրդները, միացուցած խունկի ու կնդրուկի բուրումնաւէտ ծուխին, ցրուել ու հասցնել անհունի առեղծուածային բարձունքները, որպէս իմ սրտագին պաշտամունքը քու անմոռանալի յիշատակին, մա՛յրիկ, ինչպէս նաեւ հազար – հազար ողջակիզուածներուն, որոնք նահատակուեցան մեր ցեղի ազատագրութեան պայքարին համար ու անէացան առ յաւէտ՝ առանց հոդակոյտի, առանց շիրիմի...

ՍՈՂՈՄՈՆ

ARAM webaram.com

Լուսանկարուած Երզնկա, 1910ին: *Առաջին կարգ* (ձախէն աջ). Սողոմոնի եղբօր՝ Միսաքին կինը՝ Հռիփսիմէն (նահատակուած), աղջիկը՝ Արմենուհին (ազատուած) Սողոմոնի մայրը՝ Հնազանդ (նահատակուած) եւ եղբայրը՝ Միսաք, Սողոմոն Թէհլիրեան: *Բ. կարգ.*— հօրեղբօր աղջիկը՝ Բերսաբէ եւ եղբայրը՝ Աւետիս (երկուքն ալ նահատակուած):

ARAM webaram.com

Լուսանկարուած Եուկոսլաւիա, 1921ին: *Ա. կարգ* (ձախէն աջ). Սողոմոնի մօրեղբօր զաւակը եւ եղբօր՝ Միսաքին աղջիկը Արմենուհի: *Բ. կարգ*, նստած, հօրեղբայրը՝ Օսկիան, Սողոմոնի հայրը՝ Խաչատուր, հօրեղբայրը՝ Ասատուր: *Գ. կարգ.*— Միհրան Տէր Ղազարեան (Արմենուհիին ամուսինը), հօրեղբօր տղան՝ Ներսէս, եղբայրը՝ Սեդրակ եւ Սողոմոն:

ARAM webaram.com

Ա. ԳԼՈՒԽ

ՍԵՐԲԻԱՅԻՑ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Երկնակայից նոր էի հասել Սերբիայի գաւառական քաղաք Վալեւոն, երբ տակն ու վրայ եղաւ ամէն բան։ Սարաեւոյում մի սերբ ուսանող ատրճանակի երկու հարուածներով սպանել էր աւստրիական գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդին։ Ենթադրւում էր, որ պատերազմ կը լինի։ Այնուհետեւ դէպքերը զարգացան գլխապտոյտ արագութեամբ։ Յուլիսի վերջերին Ռուսաստանը դէնքի տակ տուաւ իր ծովային եւ ցամաքային ուժերը։ Օգոստոս 1-ին Գերմանիան կանխեց նրան՝ յայտարարելով պատերազմ։ Ֆրանսան հանդէս եկաւ իր դաշնակցի կողքին։ Բայց դէնքի առաջին հարուածները լիքան Բելգիայի գլխին, ինչ որ հանդիսացաւ լաւագոյն առիթը Անգլիոյ համար պատերազմ յայտարարելու Գերմանիոյ դէմ։ Այսպէս սկսուեց պատմութեան առաջին մեծ սպանդը։

Սերբ ժողովուրդը ոգեւորութեամբ փարեց դէնքի։ Հասել էր իր ազգային իղձերի պսակման ժամը։ Լաւ ուսոյց, խմոյ, արեւելեան մեղկ անուրջների տակ թմրած Վալեւոյի բնակչութիւնը շարժման մէջ էր։ Տեղի էին ունենում բազմամարդ հաւաքոյթներ եւ ռազմաշունչ ցոյցեր։ Ժողովուրդի առաջնորդները իրենց ճառերում յիշում էին Ստեփան Նեմանիայի, Տուշան Սիլնիի ժամանակները, նրանք հրաւիրում էին ժողովուրդը ներշնչուել Մարիցայի հովիտի, Գոսովոյի նահատակ հերոսների ոգիներով։

ARAM webaram.com

Օղոստոսի կէսերին, պատերազմի հրդեհը հասաւ Սերբիոյ սահմաններին. աւստրիացիները երկու բանակներով մտան Սերբիա, մէկ հարուածով վերջ տալու յոխորտացող թշնամուն: Բայց շուտ օրուան ծանր կորուստներից յետոյ ստիպուած եղան յետ քաշուիլ: Հարուածը այնքան անսպասելի էր, որ աւստրիացիները կրկնեցին իրենց ներխուժումը միայն շուտ ամիս անցած, երբ արդէն պատերազմի մէջ էին նաեւ Թուրքերը:

Ի՞նչ էր կատարւում Վալեւոյից դուրս, յայտնի չէր: Քաղաքի վեց - եօթը հայերը գրեթէ ամէն օր մեզ մօտ էին: Կարծես պատերազմի բովանդակ ծանրութիւնը վիճակուել էր նրանց: Բոլորն էլ ընտանիքներ ունէին երկրում: Բոլորն էլ խիստ մտահոգուած էին նրանց բախտի մասին, եւ ամենից շատ՝ հայրս, եղբայրները: Ինձ համար անհասկնալի էր այդ. ի՞նչ կարող էր պատահել կանանց, երեխաներին, երբ համիտեան ռեժիմը արդէն ապտակուած էր, ու երկրում տիրում էր Երիտ, նրանց օրով եղան Առաջին Ջարդերը, բայց ո՞վ չի տատարդ Թուրքերի արդարախոհ իշխանութիւնը: Ճիշտ պիտեր, որ այդ վերջին տուրքն էր Թուրք հակայեղափոխութեան, որ պէտք է վճարէին հայերը, իբրեւ Թուրք յեղափոխութեան գլխաւոր ապրակը, կամ նրա առաջին արտայայտիչը:

Ու ես աշխատում էի սիրտ տալ նրանց՝ երկրից բերած դեռ շատ թարմ տպաւորութիւնների հիմքերով: Մօտքերս ամենիչ ապրեցութիւն էին ունենում նրանց վրայ: Բացառութիւն էր հայրս, որ լռում էր գլուխը բիչ թեք, ծնօտը ձեռնափայտին յենած, ապակիների պէս անշարժ աչքերը դէմքիս յառած: Նրա այդ հայեացքը միշտ շփոթութեան էր մատնում ինձ:

Տարուան վերջերին նա մի նամակ ստացաւ Սոֆիայից: Գրում էր իր հին բարեկամ Ղուկաս ապան, որ տարիներից ի վեր Բուլկարիայում կատարում էր հա-

ARAM webaram.com

տարակական, յեղափոխական աշխատանք։ Ղուկաս ապան գրում էր, թէ հասել է հայ ժողովրդի վերջնական ազատագրութեան ժամը թրքական լծից, թէ Բուլկարիոյ հայութիւնը կազմում է կամաւորական խմբեր՝ կռիվկատահայերի ձեռնարկած ազատագրական շարժման միանալու համար եւ, եթէ տարիքը ներէր, ինքն էլ պէտք է ձեռին պիտի միանար այդ խմբերին, զարաւոր թշնամուն դէմ կռուելու համար։ Նամակին կցուած էր մի կոչ, որ հրահանգում էր պէտքի բնդունակ բոլոր հայերին արձանագրուել կամաւոր։

Հոգիս 18 տարեկան էի, եւ նամակը ինձ ցնցեց իր ազնիւ բովանդակութեամբ։ Բայց, հակառակ ապառաժիս, այդ ամէնը խիստ ծանր ապաւորութիւն թողեց մեր մէջ վրայ։

— Վերջացաւ, ասաց հայրս բոլորովին ընկճուած. պէտք է մտածել թէ ի՞նչպէս կարելի է դուրս բերել այն դժոխքից մնացիններին։

Ինձ չէր զրաղեցնում այդ հարցը, ես ոչ էութեամբ համակուած էի Բուլկարիա անցնելու գաղափարով, որ առանց հօր համաձայնութեան, առանց անցագրի այդ օրերին դիւրին չէր։ Քաղաքում սերբերի ոգեւորութիւնը հասել էր իր գագաթնակէտին. Թասալիի շրջանում նոր, ջախջախիչ ջարդ էին կրել աւստրիացիները եւ անկանոն կերպով նահանջել։ Դաշնակիցները, բոլոր տեղեկութիւնների, յաղթական էին ամէն տեղ, թէեւ, բացի ռուսական հակառից, կռիւները տեղի էին ունենում իրենց իսկ հողերում։ Թուրքերը մտել էին Սիլիդիա, Պոդնան եւ իրը թէ շուտով վար պիտի հռչէին Կարպատներից։ Վիեննայի, Բուտապեշթի, անգամ Բերլինի օրերը հաշուուած էին։

Նոյեմբեր ամսի վերջերին, սերբ - բուլկարական սահմանում ինձ ձերբակալեցին իբրեւ լրտես, բայց ինձ յաջողուեց պարզել այդ թիւրիմացութիւնը եւ անցնել

ARAM webaram.com

Բուլկարիա։ Այդ օրերին, երկու այլ ժողովուրդների արամադրութիւնների մէջ տարբերութիւն չկար։ Բուլկար ժողովուրդի համակրանքը նոյնպէս գաչնակիցների կողմն էր. նա ոչ մի քինախնդրութիւն չունէր երկուան թշնամի սերբերի հանդէպ։ Բայց այլ էր պետական շրջանների արամադրութիւնը։ Մակեդոնիայի բաժանումը, Տոպրուճայի բուլկարական մասի կորուստը դեռ շատ թարմ էին։ Բուլկարիան չէզոք էր, բայց արդէն այդ օրերին պարզ էր, որ իր չէզոքութիւնը նպատակ ունի ժամանակ շահիլ՝ յարմար վայրկեանին փոխ վրէժի դիմելու համար։

Սոֆիայի հայերին մէջ տիրում էր արտակարգ եռուզեռ, ժողովներ, հաւաքոյթներ, վայրուն ծրագիրներ ամէն տեղ։ Մարտիկեանի «Ճէոդի Սեպտեմբեր» արձարանը ծայրից ծայր լիքն էր շարքային զորձիչներով։ Նրանք վիճում էին դէպքերի հաւանական զարգացման մասին։ Թանձրամարմին, միջահասակ, հին կաղնու բունի պէս հաստատուն Ղուկաս աղան այստեղ էր։ Նա կտրականապէս մերժեց ինձ մացնել կամաւորական խմբերի ցանկի մէջ, երբ իմացաւ, որ եկել եմ առանց հօրս դիտութեան։ Բայց աւելի լաւ դրութեան մէջ չէին եւ միւսները։ Մի շարաթ առաջ արձանագրուածներին էլ չէին ճամբում։ Եւ Ղուկաս աղային շրջապատել էին արեւմտահայ երիտասարդներ, որոնք գաղափար պահանջատէրերի նման ուղղում էին նրան հարցումներ.

— Ինչո՞ւ, մինչեւ ե՞րբ, ի՞նչ է այս ձգձգումների պատճառը։

Ղուկաս աղան, որին անուշութեամբ, որին խրոխտաղին, հրաւիրում էր կարդի՝ տալով խուսափողական պատասխաններ։

— Պէտք է սպասէք, կարգադրուած է մի առ ժամանակ կամաւորների առաքումը դադարեցնել. ի՞նչ

ARAM webaram.com

կարող ենք անել, չէ՞ որ պէտք է վերին մարմնի հրահանգին ենթարկուիլ։

Բայց ոչ ոք միտք չունէր այդ անյայտ մարմնի հրահանգին ենթարկուելու։ Ազգի ապառապրութիւնը սկսել էր, եւ ամէն մարդ ներքին բուռն պահանջ ունէր այդ սուրբ գործին օր առաջ մասնակցելու։

Մի խմբի հետ յաջողեցի անցնել Ռումանիա։ Պուքրէշում իմացայ, որ հայրս հեռագրել է ինձ յետ ճամբել։ Բայց արդէն ուշ էր. մի քանի ընկերներով, ռուսական դեսպանատան աջակցութեամբ, նոյն պիշերը մեկնեցի Ռուսաստան։

Կայարանում ամէն տեղ իրարանցումը արտակարգ էր. գնացք գնացքի եռեւից մեկնում էր ծանրաբեռնուած թնդանօթներով, ռազմամթերքով, զինուորներով, ձիերով։ Տեղ-տեղ կատարուում էին շոնդալից հրաժեշտի ցոյցեր զէպի ճակատ մեկնողներին։ Ապա գնացքի յետեւից շարժուում էին թաշկինակներ, ու երբ ցոյցով ոգեւորուածները ցրուում էին, մայթերի վրայ մնում էին կանգնած ծեր, երիտասարդ կանայք, աղջիկներ, որոնք քիչ առաջ զուարթօրէն պարզած թաշկինակները առնում էին աչքերին ու ծածուկ լաց լինում։

* * *

Արդէն Թիֆլիս էի, արձանապրուել էի կամաւոր։ Ինձ հետ հասած ընկերների եւ նախապէս արձանագրուածների հետ միասին տեղաւորուել էինք Վելեմինովսկայա փողոցի ծայրին ազդային մի ընդարձակ կալուածքի մէջ, որ կազմում էր կամաւորական հանրակացարանների մէկը։ Կալուածքը գուգորդում էր Ռուսարանական Այդու շրջանին, ուր եւ կատարում էինք զինավարժութեան փորձերը։ Թէեւ անցել էր մի շաբաթ, բայց նոր էի ընտելանում բազմազիմի Թիֆլի-

ARAM webaram.com

ռին, որ առաջին օրից համակել էր ինձ։ Իրիկնապահերին սովորաբար իջնում էի Վելեամինովսկայա փողոցի Լերկաբութեամբ եւ կանգ առնում քաղաքապետարանի անկիւնի դեղարանի մօտ։

Փետրուարին մեր սարերն ու ձորերը դեռ պառած էին լինում ձիւնով։ Այնինչ այստեղ արեւի ջերմ ճառագայթների տակ փայլփլում էր դեղատեսիլ Երեւանեան հրապարակը։ Մանր քարերով սալայատակուած այդ ընդարձակ հրապարակը կարծես ներկայացնում էր Թիֆլիսի մանրանկարը՝ շրջապատուած հիւրանոցներով, վաճառատներով, խանութներով, դեռնափոր դիւնեռներով, Թամամշեւի ընդարձակ քարւանատարայով, որ քաղաքապետարանի դիմաց բռնում էր հրապարակի ամբողջ ճակատը՝ հարիւրաւոր կրպակներով։

Այդ օրերին Երեւանեան հրապարակն էր հայ քաղաքական կեանքի կենտրոնը։ Կային երեք անկիւններ, ուր սովորաբար խմբուում էին հայ ազգային, հասարակական, յեղափոխական գործիչները։ Դեղարանի դէմուդէմ, փողոցի անկիւնից քիչ ներս, դեռ լերկ ու իրենց գարդարանքներին ապասող ծառերի տակ ընկած էր «Անատոլիա» ճաշարանը, որ պահում էր մի էրզրումցի հայ։ Այստեղ կարելի էր տեսնել Թիֆլիսում եղած բոլոր խմբապետներին, գինուորներին, կամաւորներին, որոնք սեղանների շուրջ խմբուած՝ վիճում էին կամ ազմկարար ծիծաղում։ Միւս անկիւնը, որ գտնուում էր Թամամշեւի քարւանատարայի տակ, ներկայացնում էր հռչակաւոր «Թիլիպուճուրին», դեռնափոր առաջնակարգ մի գինետուն, որ յայտնի էր իր ընտիր խորոված-ով, Կախէթի լաւագոյն գինիով. պատկանում էր Թիֆլիսեցի մի հայի։ Այստեղ խմբուում էին դէպքերի հետեւանքով իրենց հայութիւնը յանկարծ գտած Թիֆլիսեցի վրացախօս, ռուսախօս հարուստ հայեր, Անդրկովկասի գանազան շրջաններից Թիֆլիս

ARAM webaram.com

եկած հայ հասարակական գործիչներ, ինչպէս նաեւ այդ օրերին ազգային գործունէութեան նուիրուած հայեր։ Երբորդ անկիւնը «Սակայանի կանդիտերսկին» էր, եւրոպական իմաստով մի առաջնակարգ սրճարան, որ բռնում էր Երեւանեան հրապարակից դդալի գառիվերով բարձրացող Սոլոլակ թաղամասի անկիւնը։ Այստեղ հաւաքւում էին գերասաններ, գրագէտներ, կուսակցական յեղափոխական գործիչներ, ուսուցիչներ, ուսանողներ, առհասարակ ամէն կարգի հայ մտաւորականներ։

Բոլոր այդ ժամադրավայրերում կեանքը եռում էր. Հայը, Հայաստանը, հայկական հարցը, պատերազմը, կռուող ուժերի գործնական ու տեսակարար կշիռները, զանազան ճակատներում ստեղծուած գրութիւնը թունդ էին հանում մարդկանց։ Ցոյզերի եւ յոյսերի մի անսահմանութեան շրջան էր ապրում կովկասահայութիւնը զգալով իրեն սերունդների փայփայած ազգային երազների իրագործման նախօրեակին։

Պարապմունքներից ազատ բոլոր ժամանակս գրեթէ միշտ անցնում էի իմ միակ հայրենակից Եանըդեանի մօտ, որ «Սեվերնիյէ Նոմերա» հիւրանոցի տակ ունէր մի համեստ կաթնատուն։ Ամառուան վերջերին պատահաբար իմացայ, որ Թիֆլիս են գտնւում նաեւ Թաթիկեանները։ Երկու եղբայրներից ճանաչում էի միայն պր. Խաչատուրին, որ մեկնել էր Երզնկայից ընդամէնը երեք - չորս տարի առաջ։ Այնքան դեռ մեծ էր ծննդավայրիս կարօտը, որ անմիջապէս հասցէն առի ու գնացի մօտը։

Պր. Խաչատուրի համեստ մանրավաճառանոցը գտնւում էր Միքայէլեան փողոցում, որ դեռի եղերքին զուգահեռ երկարում էր Վորոնցովի կամուրջի թիկունքից մինչեւ Մուշտայեմի պարտէզը։

Տեսնելով ինձ անմիջապէս ճանաչեց եւ նստած տե-

ARAM webaram.com

դից այնպէս վեր թռաւ, որ յարուցեց մօտը կանգնած մանկահասակ մի աղջկան ընդոստ ծիծաղը։ Վայրկեանի մէջ այնքան հարցումներ ուղղեց ինձ, որ չգիտէի ո՛ր մէկին պատասխանեմ. չփոթութեան մատնեց ինձ նաեւ մանկահասակ աղջիկը, որ լրջացած՝ սեւ մեծ աչքերով անթարթ նայում էր, կարծես ես նրան տեսել էի կամ նման մէկի մասին երազել։

— Է՜, յեռո՛յ, ձերոնք ո՞րտեղ են,— շարունակում էր պր. Խաչատուրը։

— Հայրս, երկու եղբայրներս Սերբիայում, մնացածները՝ Երզնկա։

— Իսկ դո՞ւ ինչ ես անում այստեղ։

— Կամաւոր եմ, շուտով պիտի մեկնիմ ճակատ, ասացի խիստ ուրախ աղջկան ներկայութեամբ այդ մասին խօսելու առիթից։

— Հայրդ գիտէ՞։

— Նախանցեալ օրը գրեցի։

— Այստեղի՞ց։

— Այո՛։

— Իսկ Սերբիայից մեկնելի՞ս։

— Գիտէ՛ր, գիտէ՛ր...

— Հա՛, ծանօթացի՛ր, եղբօրս աղջիկն է, մեր Անահիտը։

Աղջիկը համարձակ նայեց ինձ։

— Վերջին անգամ ի՞նչպէս տեսար մերոնց, ասաց պր. Խաչատուրը։

— Լաւ էին։

— Հիմա ի՞նչ պիտի լինի մեր Շահէնի վիճակը. ապայից վարժարանը այս տարի պիտի աւարտէր, ուրեմն եղբայրը եկրօր գէ՞մ՝ մէկը կամաւոր, միւսը ակամայ։

— Այո՛, ի՛նչ արած, նա էլ պէտք է իր քաղաքա-

ARAM webaram.com

ցիսկան պարտքը կատարէ, թէեւ չեմ կարծում, որ նրա-բաւարարներին ճակատ ուղարկեն:

— Առու�խօսքդ լսէ, մինչեւ այս պատերազմը վերջանայ, հոգիներս կ'ելնէ: Վերջին անգամ պրեալ էր, որ Իուրէն էֆէնտին պիտի գայ եւ ամէն բան կը պատմէ, բայց չեկաւ: Նրանք ի՞նչպէս էին:

— Որո՞նք:

— Մամճեանները:

— Գարծէրը յաջող, լաւ էին:

— Ինչ որ է, պէտք է եղբօրս հետ ծանօթանամ. նա էլ, անշուշտ, կը ցանկայ տեղեկութիւններ իմանալ:

— Այո՛, հայրիկս ուրախ կը լինի ձեզ տեսնելով, պարոն,— պարզութեամբ ասաց աղջիկը:

Մեկնեցի առաջին առիթով հանդիպելու խոստումով: Գնում էի ինքս էլ զարմացած ինձանից, հոգիս ճօճանակի պէս նետւում էր վեր - վար՝ անծանօթ յոյզերի տարափի տակ: Ոչ տեսնում, ոչ լսում, ո՛չ զգում էի շրջապատս: Հասնելով հանրակացարան՝ ընկայ բակի խորքում հատատուած նստարանի վրայ: Կարծես հարբած էի. ոչ մի ատոյդ միտք չկար գլխիս մէջ: Մթնշաղը թանձրանում էր: Թռչունները, յարակից պարտէզի ծառերին, կռկռոց էին պատում վայրագ ու կրքոտ կանչերով: Նրանք թռչում էին դէս ու դէն՝ հոգիս նշմարելի շիւղ կառուցնելու: Գաղջ հոգի, բացուող կանաչների ու փթթող ծառերի զարնան բոյրը երերում էր օդի մէջ: Մթնել էր, երբ սկսեցի հասկանալ, թէ ի՛նչ է կատարւում ինձ հետ: Կարելի՞ է արդեօք, որ անծանօթ մէկը, առաջին հանդիպումին, այնպէս կաչկանդէ մարդուն, ինչպէս եղաւ ինձ հետ: Այնքան զարմացի մէջ, այդ չէր ներդաշնակւում առաջարկած նպատակիս հետ:

Քնից սթափուածի պէս եւ եղայ ու մտայ հանրակացարան: Ըստ սովորութեան ազմուկ էր: Օրուան յու-

ARAM webaram.com

զող խնդիրը Խոյի շրջանում տեղի ունեցած Տիւղ - Տաղի կռիւն էր, որի ընթացքում առաջ է եկել ինչ որ անհամակցողութիւն հայ կամաւորների եւ ռուս զօրաբաժնի պետերի միջեւ: Գնդապետ Նալգիեւը հրահանգել է կամաւորներին ճակատից դրաւել Տիւղ - Տաղը: Բայց հաշուի առնելով, որ այդ անհնարին է, ըստ էութեան նպատակ է ունեցել ճակատից լրջօրէն դրաղեցնել Թշնամուն, որպէսզի ինքը իր զօրամասով անցնի լերան թիկունքը եւ հակառակորդի ուժերը բնաջնջի: Հայերը դրաւել են Տիւղ - Տաղը ու Թշնամին ելել է դաշտ, մինչեւ գնդապետի հասնիլը: Այսպէսով Թշնամին փոխանակ բնաջնջուելու, փախել էր՝ խլելով հայերից մի քանի տասնեակ զոհեր...:

* * *

Անցաւ երկու շաբաթ: Լման դարուն էր: Ազգային Բիւրոյի կարգադրիչ մարմնի որոշման համաձայն պիտի մեկնէինք ճակատ: Հակառակ խոստումիս, Թաթիկեանների մօտ չգնացի, ինձ Թւում էր, որ լաւ է այլեւս չտեսնել այն դպրոցական աղջկան, որ այնքան մտածել տուեց ինձ: Սակայն, մեկնումիս նախօրեակին, տեղ չէի գտնում ինձ քաղաքում եւ ուր էլ գնում էի, կարծես աչքիս առջեւն էր նրա դէմքը: Ես որոշել էի բախտին թողնել այդ խնդիրը, այժմ անհրաժեշտ էր կատարել ազգային պարտականութիւնս, ապագայում, եթէ ողջ մնացի եւ եթէ բախտը ցանկանար, նա կարող էր իմս լինել: Ու պէտք չէր, որ ինքս ընթացք տայի այդ հարցին, թող ինքն իրեն լուծուէր: Մի տարօրինակ նախազգացումով անդամ Թւում էր ինձ վտանգաւոր միջամտութիւնս: Եւ սակայն մեկնումից առաջ նրան մի անդամ էլ տեսնելը հզօր պահանջ էր դարձել ինձ համար:

Վորոնցովի կամուրջում դեգերում են ինձ նման

ARAM webaram.com

անպարծներ։ Մի գեղջուկ կանգնած է կամուրջի անկիւնում, թեւի տակ սեղմած առասպելական ճանճի նման պարկապզուկը տզզում է։ Տասնամեայ մի տղեկ, նրա մօտ կանգնած, յոգնած աչքերով դիտում է անցորդներին։ Հայը եւ որդի միասին պէտք է հայթայթեն թեբեւս բազմանդամ ընտանիքի օրուան ապրուստը այդ ձեւով։ Այդ էլ բախտի խնդիր է, նայած թէ անցորդներից ով ուշադրութեան կ՝առնէ նրանց։ Տղեկը յանկարծ նայեց ինձ, ես մօտս եղած բոլոր մանրուքը տուի նրան։ Շշմեց, հօր նուագը ընդհատուեց։

Կուր գետը յորդել էր, տիղմի պէս պղտորել։ Թափով քշում տանում էր յորձանքների մէջ ընկած փայտեր, մացառներ, եղերքներից տեղահան արած ծառերի կոճղեր։ Կամուրջի տակ նա հարկադրուած է դժուարիւնը չափաւորել, եղերքներից կոհակները խուժում են դէպի ներս ու կենտրոնում պտուտակաձեւ լճանում։ Կամուրջի միւս ծայրին ջուրը բարձրացել է այնքան, որ մնում է մեղրաչափ մի բարձրութիւն անկիւնի դիմեսան բութ պատին բացուած կլոր օդանցքներին հասնելու համար։ Այնտեղ մարդիկ, կամուրջի երկաթեայ ճաղերին կոթնած, նայում են պատին։ Սաժէնաչափ պատի օդանցքներից մէկով մի կատու առաջացել է դէպի գետը այնքան, որ գլուխը մնացել է դուրս, մարմինը անցքի մէջ, նա չի հասկանում յետ - յետ գնալու հնարաւորութիւնը ու սարսափահար դիտելով առջեւը բացուած յուզուած ջրերը, մեծ զգուշութեամբ փորձում է մարմնով դառնալ։ Բայց օդանցքը նեղ է, փորձերը աւելի են վտանգում դրութիւնը։ Այն ժամանակ նա սկսում է աղերսագին մլաւել դէպի կամուրջը՝ մարդու պէս խնդրելով օգնութիւն։ Մի ոտս կին դլխապատառ իջնում է դիմեսուն։ Վայրկեան չանցած կատուն դիւահարի պէս նետուում է գետը ու կոհակների մէջ

ARAM webaram.com

չքանում։ Պատի անցքից յայտնւում է մի կեռ փայտ, որ կոչուած էր նրան փրկելու։

Իրիկնադէմ էր։ Ագեքսանդրեան այդու վարի մասերում դեղերում էին գինուորները, արեւածագիկ շրթացնող աղախիններին հետ։ Աւելի վեր, նորաբողբոջ ծառերի կատարներին խումբով աղմկում են ճնճղուկները։ Դուրս ելայ Գոլովինեան պողոտան։ Միւս մայթին, քիչ վարը, գտնւում է Նշան Թաթիկեանի խանութը։ Ես կարող էի նրան այցելել խանութում, առանց խախտելու աղջկան չտեսնելու որոշումս։ Բարձրահասակ, դեռ երիտասարդ, համակրելի դէմքով մէկն էր պ. Նշանը, որ նայեց ինձ հարցական, մինչեւ ինքնութիւնս յայտնեցի։ Այն ժամանակ հայրենակցութիւնը համազօր էր ազգականութեան եւ այդպէս էլ ինձ ընդունեց։ Շուրջ մէկ ժամուան հարցուփորձից յետոյ, առաջնորդեց ինձ բնակարան, որ գտնւում էր նոյն շէնքի մէջ երրորդ յարկում, թիկունքի մուտքով։ Անահիտը՝ տեսնելով ինձ՝ յանկարծակիի եկաւ, բայց շնորհալի բարեւեց եւ անմիջապէս չքացաւ։ Ապա նեբոր ինչ որ տեղ, երեւի խոհանոցում, թնդաց մի ծիծաղ։ Այդ ինձ շփոթութիւն պատճառեց։

Թէեւ տարիքէս էր հայրենիքից մեկնելս եւ տեղեկութիւններս թարմ չէին, բայց նոյն բծախնդիր հետաքրքրութիւնն էր արտայայտում նաեւ տիկինը, անգամ աղջիկները, որոնց համար Երգնկան անուն էր։ Երեւի գիտէին, որ իրենց հայրը հին ռեժիմի օրերին անցեալ ունեցել է, մի համեստ անցեալ, իբրեւ Ռուբէն Շիշմանեանի՝ Տերսիմի Քեռու գործակից։ Այդ սերունդը բաղկացած էր լաւ մարդկանցից ու լաւ հայերից։ Եւ պ. Նշանի մասին կարելի է ասել, որ նա առաջ մարդ էր, յետոյ հայ։ Այդպէս էր գոնէ իր լայնախոհութեամբ։ Դեռ 90ական թուականներին նա փարում է այն տեսակէտին, որ արեւմտահայութեան բարեկեցութիւնն

ARAM webaram.com

ու ապառութիւնը կախուած է նրա անմիջական հարեւանների, յատկապէս քրդերի, համագործակցութիւնից։ Նա ջանք չի խնայում Գալուստ Արխանեանի, Շիշմանեանի այդ ուղղութեամբ թափած ջանքերին նպաստելու, մինչեւ որ վերջինը ձերբակալւում է, եւ ինքը յաջողում է ճողոպրել Կովկաս։ Բայց այնուհետեւ էլ նա չի կտրել կապը այդ գաղափարի հետագայ բախտին հետ։ Նա գիտէ, օրինակ, որ Շիշմանեանի յաջորդները աշխատել են համագործակցութեան կապեր հաստատել Տիարպէքիրի քիւրտ Իբրահիմ փաշայի, Սլիվանի քիւրտ հզօր ցեղերի հետ, որոնք մեծ ազդեցութիւն ունէին հայկական բարձրաւանդակի աշիրէթների վրայ. գիտէ Ղասրմ պէյի հետ հաստատուած հայ-քիւրտ համաձայնութեան տխուր վախճանը, դրմլիկցիների հետ վարած բանակցութեան անյաջողութիւնը, աշիրաթապետ Զէյնալի ողբերգական մահը Բինգէօլում եւ այլն։

Բայց այդ բոլորը գիտէ այլեւս իրրեւ տեղեկութիւն։ Այժմ պ. Նշան սահմանափակուել է ընտանեկան հոգսերով, զաւակները դաստիարակել է հայ ոգով՝ պայքար մղելով ռուսացման վտանգի դէմ։ Իր հարուստ գրադարանի մէջ ունի Արովեանի «Վէրք Հայաստանի»ն եւ բազմաթիւ այլ հայերէն գրքեր։ Միստ օրէնք է տան մէջ հայերէն խօսելը։ Պ. Նշանը նաեւ իրազեկ է տեղի ունեցող իրադարձութիւններին։ Նա գիտէ, որ հնչել է հայ ժողովրդի ազատութեան ժամը եւ որ Հայաստանը պիտի ծաղկի, քաղաքակրթուի եւ ինքն էլ, վերջապէս, իր զաւակներով մի անկիւն պիտի ունենայ ծնընդավայրում։

Նա քիչ քիչ գուարթացաւ եւ ընթրիքին, բաժակ բաժակի յետեւից, ազգային կենացներ առաջարկելով ու խմելով՝ խանդավառուեց մօտ ապագայի յոյսերով։ Եւ յանկարծ սկսեց երգել.

ARAM webaram.com

— «Բարի՛, զեղեցիկ, առաքինի ընկերը մարդու, որ փայլեցնում է աբեւի պէս պատկերը մարդու»...

— «Ինչ մարդ ունենայ իր մօտը հաւատարիմ ընկեր, ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն»:

Անահիտը յանկարծ սկսեց ծիծաղել: Հայրը ժըպտալով դարձաւ նրան.

— Աղջի՛կս, քո այդ ծիծաղը ռուսերէն է, հայ աղջիկները այդպէս չեն ծիծաղում:

Ու դառնալով ինձ՝ յարեց.

— Խօսք չունիմ, երախտիքս լաւ են, բայց դարձեալ այն չեն ինչ կ'ուզէի որ լինեն: Ինչ որ է, այս էլ իմ ենք «սուրբ գործի» յաջողութեան կենացը:

Կէս գիշեր էր, երբ պ. Նշանը արտօնեց ինձ մեկնել: Մինչեւ բակի դուռը ինձ ճանապարհեց Անահիտը:

— Այժմ բարեկամներ ենք, յոյս ունիմ, որ երբեմն կը հանդիպէք:

— Ուրախութեամբ պիտի գայի, օրիորդ, բայց վաղը կը մեկնիմ:

— Ո՞ւր, գոչեց նա այնպէս անակնկալի մատնուած, որից ակնյայտ էր, թէ խնդիրը նրա համար անարժէք չէ:

— Դէպի Ճակատ, օրիորդ:

— Ա՛խ, այդպէս, ասաց կարծես ինքն իրեն եւ անտարբերութեամբ յարեց.

— Երբ վերադառնաք, մեզ չմոռանաք:

— Իսկ եթէ չվերադառնամ, յոյս ունիմ, որ ինձ իրրեւ բարեկամի երբեմն կը յիշէք:

— Ի հարկէ, ասաց անմիջապէս անկարեւոր բանի մասին խօսելու ձեւով...

* * *

Մարտի 28ին շուրջ երկու հարիւր հոգուց բաղկա-

ARAM webaram.com

ցած մեր զօրախումբը մեկնեց կայարան եւ տեղաւորուեց վագոններում։ Հազարների հասնող բազմութեան ցնծութեան ազաղակները թնդում էին երկաթուղագծի ուղղութեամբ՝ կայարանից ահագին հեռաւորութեան վրայ։ Հայ ժողովրդի ոգեւորութիւնը անսահման էր, տեսարանը յուզիչ, կարծես սերունդների ազգային իղձերի մարմնացումը մե՛նք էինք։ Ու մի անօրինակ տակնուվրայութիւն էր տիրում մէջս, երբ յիշում էի Համիտեան օրերի Երզնկան, հօրեղբօրս ձերբակալութիւնը, յեղափոխական խլրդային աշխատանքները, Ջարդի մշտական վախերը, Կովկասից սահմանն անցնող բազում հայդուկային խմբերի նահատակութիւնները ու համեմատում մեր շնորհալից մեկնումի հետ։

Գնացքը շարժուեց եւ շուտով բռնեց Ալեքսանդրապոլ — Երեւան — Ջուլֆա ուղղութիւնը։ Հողը յետ էր փախչում ընթացքի թափից։ Գծին յարակից, մերթ ընդ մերթ պատահող մենակեաց շէնքերը աչք էին թարթում մեզ վրայ։ Զոքս կողմս նստած էին անուանի հայդուկներ՝ Երիտասարդ, տարիքոտ, զուարթագէմ, մտազրաղ։ Անցնելով վրացական շրջաններից, գնացքը ընդունեց աւելի ու աւելի զիկզակաձեւ ընթացք։ Լուսաբացին անցնում էինք Լօռիի կիրճով՝ քերելով հաճանուն գետի եզերքը։ Երբեմն թւում էր, որ գնացքը նեւուում է հանդիպակաց ապառաժների յանցին՝ Ջարդ ու փշուր լինելու մի թափով։ Բայց մէկ էլ տեսար հրաժեշտ տուեց գետին, ծալծլուեց, մտաւ գետնի տակ դղրդաց, բարկացաւ, փրփրեց, զոռաց ու յանկարծ դուրթծրէն սուլելով, նորից ընկերացաւ կիրճերի մէջ ազազակող գետին։ Գետն ու գնացքը, քոյր ու եղբօր պէս, կարծես խաղում էին։ Նրանք շնչահատ մի պահ դարձեալ վազվզեցին դէս ու դէն, մինչեւ որ գնացքը զատուելով, սկսեց հոգեվարքի պէս տնքտնքալ ու ճռռցիլ բարձրաբերձ սարերը։ Եւ բոլորովին ուժա-

ARAM webaram.com

ՍՈՂՈՄՈՆ, ՍԱՄՈՒԷԼ և ՅՈՎՍԷՓ
ԹԷՀԼԻՐԵԱՆ (հօրեղբօրորդիներ)

ARAM webaram.com

ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆ
1921ի վերջերը, Փարիզ

ARAM webaram.com

պառ՝ կանգ առաւ անտառապատ մի սարի լանջին։ Սոնահնի կամուրջն էր։ Փարթամ բնութիւնը նոր էր արթնանում յօրանջելով։

— «Ղօ՛...» լսուեց օդի մէջ. կարծես օդը բաղկացած էր անտեսանելի բշտիկներից ու լսւում էր նրանց ճաթռտոցը։

— «Ո՛ւ... հո՛ւ...», սուլում էր գնացքը։

— «Ղօ՛... օ՛...», արձագանգում էր կիրճի մէջ խեղդուած գեռը։

Անդունդից կախուած՝ գնացքը շարժւում է ու ողնու պէս կծկուած, դողահար մագլցում կամուրջը։ Ստորեւ նշմարւում են թգաչափ գեղջուկներ։ Ապա, յանկարծ, ոտքերի տակ հող զգալով՝ գնացքը նորից սկսում է վազվզել՝ սարերը իր հետ քաշելով տանելու խենթութեամբ։ Ձեղքելով թաւշանման մարգագետիններ, անվերջ սահում են վար։ Ձորերի մէջ անտառը զգեստաւորուած է։ Վերերում ծառերը դեռ ոպասում են իրենց զարդարանքներին։ Գնացքը գանգատում է.

— Ղարաքիլիսէ՛. գոչում են ներսից։

— Ուռռա՛, թնդում է բաղմութիւնը կայարանի մայթի վրայ։

Փոքրիկներ ծաղկեփունջերով, գեղջուկներ գիւղամթերքներով, գարաչուխալուների մի ամբոխ, որ ցրւում է, շլմորած աչքերով դէս ու դէն նայում, ապա հարայ-հրոցով խմբւում մի այլ տեղ ու գոռում.

— Ուռռա՛... ա՛...

Այստեղից օձապտոյտ ուղիներով անցնում ենք լերկ սարեր, որոնց լանջերին կայծկլտում է արեւը։ Ապա մտնում ենք մի տարածուն ձոր, որից կարծես ելք չկայ։ Ճամբուն ընկած սարի լանջին նշմարում եմ մի սեւ կէտ, որ խոշորանում ու խոզոմակաձեւ բացւում է։ Յանկարծ, անտեսելի զգրգռոցով մեզ համակում է խաւարը։ Ջաջուռի ներքնուղին է։ - Վեց եօթը վայր-

ARAM webaram.com

գեանը թուում է յաւիտենականութեան չափ երկար։ Ճաշս խաւարը սկսում է աղջամուղջի պէս նօսրանալ ու նորից դուրս ենք ընկնում լոյս աշխարհ։ Հեռուն նրշմարւում է Ալեքսանդրապոլի սպիտականների կայարանը։ Այստեղ դառել - տիտիւկի նուագի տակ, մայթին զարում են կինոոյատիպ մարդիկ...

Ապրիլին Սալմաստ էինք։ Աւելի մեծ էր այդ օրերին խանդավառութիւնը պարսկահայերի մէջ։ Զեռքից ձեռք էին խլում կամաւորներին՝ իրենց մօտ հիւրընկալելու համար։ Մի քանի օր յետոյ մեզ ուղարկեցին Վաղարշապատ՝ լրացնելու Անդրանիկի գնդի Սեպուհի վաշտը։ Ցեխէ պատերով, եղէգնածածուկ կտուրներով անհրապոյր հիւղակներ, նեղ, ծուռ ու մուռ, փոշոտ փողոցներ, աղբակոյտեր, որոնց վրայ ճախրող խոշոր ճանճերը կարծես թուջութակով նուագահանդէս էին տալիս։

Վաշտը բաղկացած էր 250 զինուորներից, որոնց մէջ կային մեր երկրի բոլոր վայրերից մարդիկ։ Նոր էր վերջացել Դիլմանի ճակատամարտը, եւ Վաղարշապատ՝ եղած զինուորների զրոյցները դառնում էին նրա շուրջ։ Նրանց մէջ ունէի երկու հայրենակիցներ՝ Գէորգ Յովհաննէսեանը, որ դեռ Քեմախում յայտնի էր իբրեւ բանիմաց յեղափոխական գործիչ եւ աւելի երիտասարդ՝ Քերովբէ Երէցեանը։ Զինուորութիւնից ազատ ժամանակս անցընում էի նրանց հետ։ Քերովբէն քաջ ու յանդուգն զինուորի համբաւ ունէր, բայց կռիւների մասին պատմելու ժամանակ ընկնում էր անպիսի չափազանցութիւնների մէջ, որ Գէորգ յաճախ ստիպուած էր լինում նրա «փէշը քաշելու»։

Պարսկական ճակատում նախկին յեղափոխական շեգէոնի մնացորդներից, Անդրանիկից զատ, կային Սեպուհը, Կիւմիւշխանցի Աւօն, Սմբատը։ Անդրանիկը կենդրոնական դէմք էր, իբրեւ կամաւորական Ա. գնդի

ARAM webaram.com

հրամանատար։ Վերջին երկուսը դեռ պահել էին յանդգնութեան, համառութեան եւ անձնազոհութեան հին բարոյական արժէքները։ Դրանցից ճանաչում էի միայն Աւոյին. կինը երգնկացի էր, որդին՝ Նշանը՝ դասընկերս, իսկ իրեն տեսել էի եօթը տարի առաջ, երբ յեղափոխութեան մեղրամիսին Մուրատի հետ եկել էր Երզնկա։

Մայիսի 2ին մեր վաշտը շարժուեց դէպի Արաուլ, ուր քաշուել էր մի շաբաթ առաջ Դիլմանի կուսում պարտուած Խալիլ փաշայի զօրամասը։ Մեզ ընկերանում էր կոզակների մի ջոկատ, 400 հոգուց բաղկացած։ Երբ հասանք Սուսկ Բուլակի գագաթը, պարզուեց, որ թշնամին պատրաստւում է ընդունելու կռիւը Արաուլի վրայ։ Այս այն լեռն է, որ Խանասորի արշաւանքի ժամանակ զարձաւ հայ ռազմիկների շուկէտը դէպի Մաղրիկ քրդական վրանները։

Կոզակների մի հարիւրեակ եւ Աւոյի ձիաւորները հրաման ստացան առաջանալու դէպի լեռը։ Ապա զգնացան կողմերից սկսեցինք մագլցել նաեւ մենք։ Կռիւը գնալով տաքցաւ։ Վերից վար կարկուտի պէս տեղում էին գնդակներ ու սրսռում երկու կողմի թնդանօթները։ Արդէն հասել էինք լեռան բարձունքներից վար նստած մի բլրի գագաթը, երբ յանկարծ ոտքերիս տակ գետին ընկան հեծեալ կամաւորներից ոմանց Սիմոնը։ Թոհ ու բոհի մէջ հազիւ մէկ քայլ փոխեցի ու ընկայ նաեւ ես։ «Հէյ վա՜խ, դեռ ոչ մի գոթծ չտեսած զարնուեցի», անցաւ գլխովս, ու թուլութիւն եկաւ վրաս։ Մէկը կռնակն առաւ ոմանց Սիմոնին, վար տարաւ։

— Տօ՛չեմնես մի՞, գոչեց մի հսկայ։ Ես վեր ցատկեցի, շօշափեցի ինձ. ոչինչ չէր պատահել։ Ամօթից զգացումը ինձ այնպէս մտրակեց, որ բուռն կատաղութեամբ խոյացայ առաջաւոր դիրքը։

— Ուռռա՜, հնչեց թիկունքից։ Վաշտի մէջ ոմանց

ARAM webaram.com

Սիմոնի անկումը կատաղեցրել էր բոլորին։ Բառիս բուն առումով հրաշքներ գործեցին կամաւորները մի քանի անգամ թուապէս գերազանց թշնամու դէմ։ Իրիկուան թուրքերը լքեցին Արաուլի բարձունքները եւ սկսեցին նահանջել դէպի Բելերի։ Մութի հետ կռիւը գնալով թուլացաւ ու մարեց։ Կարգադրուած էր դիրքեր բռնել, աշխատելով հակել թշնամուն, ապասելով լուսաբացին։ Հեռուները, դաշտի մէջ ասողազարդ խաւարը ճեղքում էին կանթեղների պէս ցրիւ եկած կրակներ, կայուն վիճակը մատնում էր խարոյկներ, որ վառել էր թշնամին։ Սառուցեալ ցուրտ էր. կրակ էինք վառել նաեւ մենք։ Կէս գիշերը անց՝ մեր խմբի պահակութեան հերթը հասաւ ինձ։ Կրակներից բաւական հեռու մի տեղ կանգնած՝ անքթիթ նայում էի դիմացս։ Լերան վրայ ցուրտը սպանիչ էր։ Չէր կարելի ծխել։ Անսովոր գործը, օրուան ապաւորութիւնները այնպէս էին ջլատել ինձ, որ կանգնած տեղս կարծես քնած էի։ Ճիգ էի գործադրում աչքերս բաց պահելու, լաւ նայելու չորս կողմս, բայց ի զո՞ւր. կոպերս անջիղ մատակոյտերի պէս իջնում էին աչքերիս։ Անց ու դարձ անելը հակառակ էր տրուած հրահանգներին, իսկ միեւնոյն տեղը հոլի պէս դառնալը ձանձրալի։ Մուշտակիս մէջ կծկուած՝ նստեցի մի քարի տակ, որ պաշտպանում էր դիմացից փչող ցրտաշունչ հովից։ Երկինքը ասողազարդ խորութեամբ հրակում էր լեռը։ Աչք ու ականջ չորս արած, լարուած ուշադրութեամբ դիտում էի դաշտի կանթեղաձեւ կրակները։ Բայց եւ քնի պահանջը գնալով սաստկանում էր։ Հինգ վայրկեան միայն եթէ քնէի, կարող կը լինէի հինգ ժամ հակել։

— «Դո՛ւ, որին յանձնուած է խմբի ապահովութիւնը», մտածում եմ ես եւ ընդոստ վեր կենում. «պէտք է վարժուիլ. թուլութիւնը համապօր է գաւառանութեան. պէտք է բարեխղճօրէն կատարել ստանձ-

ARAM webaram.com

նած պարտականութիւնս, միայն այդ ձևով կարող եմ դառնալ տանտապետ, յետոյ յիսնապետ, վերջապէս խմբապետ»...

Հեռուներից անցաւ մի մոլորած գնդակ՝ շարպուժօրէն սուլելով: Սարսուռը ցնցեց հոգիս. նստեցի: «Հայր մեր, որ յերկինս ես», մրմնջացի: Ու կրկին տիրեց լռութիւն: «Եւ ինչո՞ւ միայն խմբապետ», մտածում եմ ես, «ո՞վ գիտէ ինչ փայլուն ապագայ է սպասում ինձ. ինչո՞ւ չեմ կարող բարձրանալ ամենամեծ աստիճանների, ի՞նչ էին նախապէս Լորիս - Մելիքովը. Մատաթովը»...

Ու ինձ թւում է, որ գօրավարի փայլուն հագուստներով գնում եմ Թիֆլիսում: Աղեքսանդրեան այգու դիմաց մի բարձր շէնք վերից վար յատկացուած է ինձ: Ցան դիմաց կանգնած է պահակ: Երկրորդ յարկում տիրում է արտակարգ եռուզեռ, այդտեղ եմ ընդունում ես զանազան գործերով եկած աղերսաբկուներին: Այստեղ մուտքի մօտ կանգնած է ոսկեթել հագուստներով դռնապանը: Միջանցքում խմբուած են մարդիկ. նրատածները ընդոստ վեր են կենում ու բարեւում ինձ: Ցաջորդ սենեակում նստած են պաշտօնեաներ, նրանք ես էլ վեր են կենում ու ցցուած մնում: Ապա իմ առջեւ բացւում է ընդունելութեան ընդարձակ դահլիճը, ուր կան գործավարներ, օդնականներ: Դահլիճին յաջորդում է թաւշապատ մի սենեակ, որտեղ նստած է անձնական քարտուղարս՝ Անահիտը: Վերջապէս, բացւում է առանձնասենեակս: Ես թաղւում եմ բազկաթոռի մէջ ու քիչ սպասելով՝ դրասեղանից վերցնում եմ արծաթէ փոքրիկ գանգակը ու զանգահարում: Ներս է մտնում Անահիտը ու կանգ առնում շեմքին:

— «Սկսեցէք ընդունիլ», ասում եմ ես ու սիկարս վառում:

ARAM webaram.com

— «Այստեղ կայ մի աղջիկ, որ, իբր թէ, ճանաչում է ձեզ Բուլկարիայից, ուզում է ձեզ տեսնել»:

— «Ա՛խ, այն փարթամ մազերով աղջիկը», ասում եմ յանկարծ, յիշելով Ղազար աղայի աղջկան:

— «Ո՛չ, մազերը կեղծ են, ես տեսայ, բացագանչում է Անահիտը:

— «Միևնոյնն է, թող գայ»:

— «Ուրեմն, դուք ուզո՞ւմ էք այդ աղջկան տեսնել», ասում է տհաճութեամբ Անահիտը:

Ես զարմացած թօթւում եմ ուսերս ու նայում: Այն ժամանակ նա դուրս է գալիս առանձնասենեակից ու վայրկեան չանցած ներս մտնում մի պառաւ կնոջ հետ, որ հազիւ է շարժւում մինչեւ դրասեղանս՝ դողդոջուն ձեռքին մի թուղթ բռնած. նա դարձնում է դէպի ինձ թօշնած սերկեւիլի պէս դեղնած դէմքը եւ շրթունքները շարժում կաղամբ ուտող նապաստակի պէս: Նայում եմ Անահիտին.

— «Սա աղջկան մայրն է», ասում է նա չքմեղանքով:

— «Ի՞նչ է ուզում», հարցնում եմ ես:

— «Ուզում է, որ տղան զինուորութիւնից ազատէք, այսինքն՝ բաց թողնէք», ասում է Անահիտը ու պառաւի ձեռքից առնելով թուղթը՝ դնում առջեւս:

«Բաց թողնել», գրում եմ ես թղթի վրայ ու զիկզակաձեւ ստորագրում... վզզ՛զ... նորից սուլում է մի գնդակ ու նուաղելով մարում: Ցիսո՛ւս Քրիստոս, մրմնջում եմ ես ու զապանակից նետուածի պէս վեր թռչում: Ո՛չ, բան չկայ: Իսկ եթէ, յանկարծ, գնդակ ստանամ ու ոգնեցի Սիմոնի պէս դեռին փռուիմ... մտածում եմ ես ու նորից նստում...

Ցիշելով ցերեկուայ ընկնելս ու «մեռնելս»՝ սիրտս լեցւում է զոհունակութեամբ, որ մեռան ուրիշները, իսկ՝ ես ողջ մնացի: Դէպքը, ի հարկէ, շատ էլ հաճելի

ARAM webaram.com

բան չէր։ Բայց թոհ ու բոհի մէջ ամէն մարդ կարող է սայթաքել եւ ընկնել։ Միայն կարծեմ քիչ երկար տեւեց իմ երեւակայական մահը, ու մէկը դոշեց. «Տօ՛, ի՞նչ ես երկարել, չելնե՞ս մի՞»...

Ոչի՛նչ, մի օր երեւի պատերազմը կը վերջանայ, կը վերադառնամ հայրենիք ու մօրս, եղբօրս, հարազատներիս, հարեւաններին կը պատմեմ բոլորը, սկզբից մինչեւ վերջ։ Ցանկարծ յիշեցի Ալաշկերտից հոր փախած Աշոտի սարսափելի պատմութիւնները ու սարսուռը ցնցեց ինձ... «Այր, կին, ծեր, երեխայ կոտորւում են անխնայ», ասում էր նա։ Հապա՛ եթէ ջարդերը հասել են մինչեւ Երզնկա։ Մէկը շարժում էր իմ կողմը, գ

դը բռնեց ինձ։

— Ո՞վ է, դոշեցի, բայց ձայնս պուհանջուած խրոխտութեամբ դուրս չելաւ...

Պոլսեցի Լեւոնն էր. եկել էր ինձ փրկաբինելու։ Ատաղերը գալկանում էին։ Քարանձաւի մէջ կրակը ընդունել էր պղնձէ գոյն։ Գէորգը պատմում է Խանասորի արշաւանքի մասին։ Լաճներս ցնդում են ու գլխիս մէջ միայն մնում են անունները՝ Սաքօ, Խէչօ, Կարօ, Բիձա, Դուման, Սարգիս, Վարդան, զարմանալի Տէր Գրիգոր...

— Աղբակի բոլոր կոտորածների վրէժն էր ու միաժամանակ յեղափոխական դատ ու դատաստան, պատմում է Գէորգը...

Մնկաչոք, նստած, կրակի շուրջ երկարած՝ լսում են նրան։

— Առաջին զօրասիւնը բաղկացած էր երկու հարիւր յիսուն կռուողներից, մութ էր, երբ նրանք այս տեղից շարժուեցին դէպի վար, դէպի Շարաֆ պէկի երկու հարիւր յիսուն վրանները, ահա այնտեղ, գաշտի մէջ, մէկ փարսախ հեռու, հարիւրները երկարելով՝ պատմում է ցրտահար Գէորգը։ Բոլորովին մօտենալիս

ARAM webaram.com

էին, երբ կիսախաւարի մէջ քիւրտ պահակը ձայն տուաց.

— Լո՛, լո՛ հուն չի՞ մարիին...

Ու հրացանները սրատացին։ Մնացած երիք հազար եօթ հարիւր յիսուն կռուողները օղակեցին դաշտը հեռուներում ուղղութիւններով.

Ու առաջներից մնում են գլխիս մէջ դարձեալ միայն անունները՝ Սիսան, Աբասս, Վարդ, Անոս, Կարգուաց լեռներ, Սուրբ Բարթուղիմէոս...

Փայտացած մառների արանքներից պղնձագոյն կրակի բոցերը ընկնում են խմբի ոգաներից սրա կամ նրա գէմքին ու փափախների տակ ծամածուռ առուներներ գծում։ Ու մտածում են, թէ ո՞վ պիտի ողջ մնայ եւ ո՞վ պիտի մեռնի...

* * *

Լոյսը չբացուած պարզուեց, որ թշնամին նահանջել է։ Մենք անարգել իջանք Խանասորի դաշտը եւ բանակ գրինք Սուրբ Բարթուղիմէոս վանքի մօտ։ Այստեղ մեր առջեւ պարզուեց Ջարդերի առաջին պատկերը, որս մասին խօսում էր, երբ Թիֆլիս էի։ Նահանջող թշնամին սրի էր քաշել Հարիսան գիւղի բնակիչներին։ Կին, երեխայ, ծեր, պառաւ կողք-կողքի, դատ դատ, խորտակուած դռների մօտ, հիւղակներում, պատերի տակ, գոմերում, կուրծքերին, ծառերի ճիւղերին, ամէն տեղ ընկած էին ծուռ ու մուռ գիրքերում, ցաւը վրան պաղած դէմքերով։ Ճամբից դուրս, փլատակների մօտ ընկած էին շուրջ քսան աղջիկների դիակներ՝ բզկտուած հագուստներով, սարսափից ապակիացած, կապոյտին յառած աչքերով...

Մայիսի 4ին մեր վաշտը մեկնեց դէպի Զուխակուսկ։ Խմբապետ Աւօն իր ձիաւորներով մեկնել էր առաջ։ Միշտ մի հմայք կար այս համբ ու քաջարի մար-

ARAM webaram.com

գու մէջ, կռիւների ժամանակ նա ամէն տեղ էր, առաջին շարքերում, կռիւներից յետոյ մարդ չէր տեսնում նրան. քնած էր կամ մի տեղ մենակ նստած։

Երբ հասանք Զուխակեռուկ, Աւոյի ձիաւորները արդէն գրաւել էին ուժեղ դիրքեր։ Շատ ծանր էր կռիւը. Հարիսան գիւղի նախճիրը թունդ էր հանել բոլորին։ Բայց թշնամին էլ կատաղել էր, նահանջից զազազած թուրք բանակը այստեղ, ըստ երևոյթին, որոշել էր վճռական ճակատամարտ մղել։ Ըստ տեղեկութիւնների, թշնամին Վանից ստացել էր օգնական ուժեր եւ յաջողութեամբ դիմադրում էր, խլելով մեզնից զոհեր։ Քիչ վերջը, երբ հասան մեր թնդանօթները, կացութիւնը փոխուեց։ Շրջապատը դղրդում էր երկու կողմի թնդանօթների որոտից, քանից երեսուն հազար հրացան էր պարպւում չորս կողմը, ծուխը, փոշին երբեմն պարուրում էին ամէն բան։ Կէսօրից յետոյ թշնամու ձախ թեւը թուլացաւ, բայց կենտրոնում յամառօրէն դիմադրում էր։ Հետեւակ, ձիաւոր խառնուել էին իրար, աջ, ձախ, վեր վար վազվզում էին մահաբեր գնդակները։

Կամաւորները ընկնում, գլորւում, վեր էին կենում ու վրէժ դուռալով խոյանում։ Մարդկանց համակել էր ցասումը, գիտակցութիւնը մթագնել էր։ Իրիկուան դէմ թշնամու ձախ թեւը տեղի տուեց։ Աւոյի ձիաւորները յայտնուեցին թշնամու թիկունքին, բայց հետեւակների շարժումը ուշացաւ, եւ Խալիլ փաշայի բանակի մնացորդները դարձեալ յաջողեցին ճողոպրիլ՝ ճանապարհին ջարդելով հայ անզէն ժողովուրդը։

Աւելորդ է ասել, որ մեզ հետ կռուող ռուս զօրքերը յետ չէին մնում կամաւորներից քաջութեամբ եւ շատ մեծ չափով գերազանցում էին իրենց կարգապահութեամբ եւ կռուելու հմտութեամբ։ Բայց որքան կարողացայ դիտել Արաուլ եւ այստեղ, վճռական պահին կռուի բախտը որոշում էին կամաւորները։

ARAM webaram.com

Մայիսի 5ին սկսեցինք հետապնդել նահանջող թշնամուն։ Մինչեւ իրիկուն հալածեցինք։ Բայց Խալիլ փաշան բռնեց Վանի ուղղութիւնը՝ ճանապարհին մահ սփռելով ամէն տեղ։ Նոյն օրը գրաւեցինք Պաշգալէն. թուրք բնակչութիւնը փախել էր, հայերը մինչեւ վերջին մարդ բնաջնջուած էին։ Յաջորդ երկու օրուայ մէջ հետապնդումը շարունակուեց անընդհատ։ Մտանք երեք - չորս ամայի գիւղեր։ Աւոյի ձիաւորները ազատեցին քիւրտերի կողմից առեւանգուած մի քանի հայ աղջիկներ, որոնք ուղարկուեցին Սալմաստ։ Այդ տեւական առաջխաղացման ընթացքում շարժումը առաջնորդում էին հայ ձիաւորները, նրանց յետեւից գնում էին մեր վաշտերը. ապա գալիս էին հեծեալ կողակները, որոնց յաջորդում էին ռուս հետեւակները. այնուհետեւ հրետանին ու դարձեալ ռուս հետեւակազօրքեր. վերջապէս՝ պաշարակիր գումարտակը։

Մայիսի 15ին դուրս եկանք Ռազանից եւ իրիկունը ուշ հասանք Իսմէրզատէի լեռներին։ Թեթեւ կռիւ ունեցանք թշնամու յետապահների հետ, բայց մութը վրայ հասաւ, եւ կռիւը դադարեց։ Այդ գիշեր չկարողացայ աչք փակել. անհաշիւ տարակուսանքներ համակել էին ինձ մեր ձեռնարկած գործի նպատակայարմարութեան մասին. թշնամին նահանջելով կոտորում էր հայերին, մենք գրաւում էինք լքուած, ամայի գիւղեր...

Աղջամուղջին իմ առջեւ պարզուեց արտասովոր մի տեսարան. բացւում էր լոյսը. արեւելքը շառագունում էր, ու կիսախաւարի անորոշութեան միջից իրար յետեւից յայտնւում էին Իսմէրզատէի ոսկրագոյն ապառաժները, որոնք հեռուից նման էին կմախքների կոյտերի։ Օդի մէջ ինչ որ խուլ ճաթճատիւն կար։ Ապառաժների թիկունքից հորիզոնը բոցավառւում էր, կրակի լճի պէս տարածւում։ Խոռոչների միջից մարդկում էին սուրերներ ու երեբալով չքանում։

ARAM webaram.com

Առաւօտեան հրաման առացինք հեռապնդումը շարունակել՝ աշխատելով ճակատելու մղել թշնամուն։ Բայց թուրքերը շարունակեցին նահանջել ու մտան Իսմէրզատէի տարածուն կիրճերը։ Մենք արիւն-քրտինք թոռած հեռապնդում էինք, բայց թշնամին այլեւս կարեւորութիւն չէր տալիս մեզ. նա անվրդով նահանջում էր դէպի Սղերդ, Բիթլիս՝ ճանապարհին մահ սփռելով իր շուրջը։ Մայիսի 18ին, առաւօտեան, կարծես բոլորովին մօտեցել էինք թշնամուն ու պատրաստւում էինք կռուելու։ Բայց արեւը ծագելուն պէս պարզուեց, որ թշնամին նահանջել է եւ հետքն անդամ չէր երեւում։

Այժմ շղթայաձեւ առաջանում էինք Նորտուղի լերկ ու մոխրագոյն կածաններով։ Յոգնած ու ջարդուած էինք, բայց աւելի ծանր էր հեծեալների վիճակը։ Սար ու ձոր լեցուած էր ոչխարի հօտերով, անապատ հարստութիւններ թափուած էին ճանապարհին ամէն տեղ. թանկարժէք դորդեր, գանազան իրեր, մթերքներ եւ այլն։

Լեռներից իջանք Սիկունիս հայ գիւղը, քարայրների միջից յայտնուեցին մէկ-երկու խենթացած պառաւ կանայք։ Գիւղը բնաջնջուած էր։ Թուրք զօրքերը անցել էին Տիգրիսը եւ ուղղուել դէպի Ճարճալան լեռները։

Ամառայ վերջերը մտանք Վասպուրական եւ հասանք Վան, որ ապաստարան էր շնորհիւ իր կորովի զիմադրութեան, դրսից հասած կամաւորական խմբերի օգնութեան, մանաւանդ իր անվեհեր առաջնորդ Աբրամի ջանքերի։ Սա միակ մխիթարութիւնն էր համատարած թշուառութեան մէջ։ Մեր վաշտը ժամանակաւորապէս ցրուեց այստեղ։ Տուս հրամանատարութիւնը յեռաձգել էր գրեթէ պարզուած Բիթլիսը գրաւելու որոշումը։ Ինձ եւ կիւրինցի Սահակին հիւրընկալել էր տեղական ընկերներից Գրիգորը։ Երկու օր շարունակ դիտում էինք փառաւոր դիմադրութեան աւե-

ARAM webaram.com

բակները։ Անգամ այդ կիսաւեր դրութեամբ հոյակապ էր Վանը։ Զիմզիմ Մազաբայից մեր դէմը պարզուած Աքնոսի, Արտօսի, Գրգուռի անհուն լեռնաշղթաները փակում էին հորիզոնը. վեհափառ Սիփանի ձիւնները կորչում էին ամպերի մէջ։ Այդ բարձունքներից հովը մեղմօրէն իջնում էր մինչեւ մեծ դաշտը, ուր նիրհում էր վճիտ Վանայ ծովակը։ Զինջ երկնակամարի տակ փայլփլում էր Վարագայ սարի փէշերին բացուող ընդարձակ հովիտը, ուր խաղում էին ստուերները ու լոյսերը բազմերանգ դոյների մէջ եւ արեւի տակ փողփոգում կանաչները, ոսկու ու մարջանի փայլով։ Շամիրամի հնադարեան ամրութեան ժայռը պարուրում էր հովիտը, որ ապա եզերում էր կանաչների մէջ թաղուած Արտամէտ գիւղին եւ Աւանց նաւահանգստին։ Գոհունների ընթացքում, բուն քաղաքի վրայ թուրքերը թափել էին 16,000 թնդանօթային ռումբեր։

Զիմզիմ մազաբայից իջնում ենք դէպի վար հայկական ամրութիւնների, խրամների գծերով, ուր անմահ հերոսներ պաշտպանել են քաղաքը։ Վանի մէջ այդ օրերին երեւի կար ոչ նուազ քան 80 հազար բնակիչ, որովհետեւ տեղացիների վրայ մի այդքան էլ տեղացել էր շրջանի գիւղերից քաղաք ապաստանածներից։ Չնայած այդ խճողման, ընդհարումների գործած աւերին, Վանը ապրում էր խանդավառութեան, վերաշինութեան աննախնթաց օրեր։ Գիշերը մինչեւ լոյս լսում էինք Գրիգորի պատմութիւնները Վանի հերոսամարտի մասին, որ մեծ զօրավիգ էր մեր լքուած հոգիների համար։ Բայց երկար չտեւեց այդ։ Ցունիսի առաջին օրերին սկսեց ռուս զօրքերի ընդհանուր նահանջը։ Ստեղծուեց մի կացութիւն, որից ոչ ոք բան չէր հասկանում. նահանջում էր բոլոր ճակատների վրայ ջարդուած թշնամին. նահանջում էր նաեւ ռուս յաղթական զօրքը, նահանջում էինք եւ մենք։ Բայց մեր նահանջի

ARAM webaram.com

գծից այն կողմը թողնում էինք պապակած թշնամուն մի անտէր ժողովուրդ, որից այլևս մարդ չէր կարող փրկուել...

Հ. Յ. Դ. ԿԱՐՆՈՑ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ
Նստած՝ Ա. ՎՌԱՄԵԱՆ, Ռ. ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ
Ոտքի՝ Վ. ՄԻՆԱԽՈՐԵԱՆ, Ս. ՎՐԱՑԵԱՆ

ARAM webaram.com

Բ. ԳԼՈՒԽ

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

Ցունիսեան նահանջի հետեւանքով Թուրքահայաստանից տեղահան եղած տարագիրները կլոր թուով կազմում էին 250,000 մարդ։ Դրանցից պէտք է դուրս հանել շուրջ 20,000 մարդ, որոնք շարժուելով Բերկրիի շրջանից՝ անկարող եղան միանալ նահանջի ընդհանուր հոսանքին եւ ոչնչացան։ Մնացածները շարժւում էին երեք ուղղութեամբ՝ Կարսի, Իգդիրի եւ Ջուլֆայի։ Այդ տարագիրներից ռուսական հող հասան 207,000 հոգի։ Մնացածները փճացան ճանապարհին։ Կովկաս հասնողների ստուարագոյն մասը կազմում էին կանայք եւ երեխաներ. հարիւրից հազիւ 10ը տղամարդ էր եւ այն էլ մեծ մասամբ ծերունիներ։

Գաղթականների ընդհանուր հոսանքը շարժւում էր Իգդիրի ուղղութեամբ, շուրջ 170,000 հոգի։ Այս հոսանքի հետ էի եւ ես։ Մեր յետեւից գալիս էին ուշ մնացածներ, աւելի հեռու վայրերից փախածներ, ու փոշու ամպերի մէջ կորած այդ շարքերի վերջը յայտնի չէր։ Թրքական սահմանապլուխներում կարգուած էին ձիաւորներ՝ փնտռելու ցրուած մանուկներին ու հիւանդներին։ Այդ վայրերից մինչեւ Իգդիր, արտերում, դաշտերում, այգիներում, ընդարձակ տաքածութիւնների վրայ ցրուած էին գաղթականներ։ Բուն Իգդիրի մէջ խճողուած էին 20,000 հոգի։ Էջմիածնում կուտակուել էին 45,000 հոգի։ Ապաստան փնտռողների մի

ARAM webaram.com

խոշոր հասանք շարժում էր դէպի Երևան՝ ճանապարհին մոռեխի պէս հնձելով օգտակար բոյսերը եւ որթատունկերի արմատները կրծելով։ Սահմանագլուխներում հակող ձիաւորները առաջին երկու օրուայ մէջ հաւաքեցին մօտ 500 լքուած կամ կորսուած երեխաներ։ Նոյն օրերին Էջմիածնի մէջ թաղեցին 103 գաղթականներ, իսկ յաջորդ օրը՝ 80։

Ցանկարծական նահանջը անհնար էր դարձրել կանխապատրաստութիւն տեսնել նման մի բազմութիւն ընդունելու համար։ Տեղ չկար, բաւարար քանակութեամբ հաց, տաք սնունդ, բժշկական օգնութիւն չկար, այնինչ գաղթականների մեծ մասը հիւանդ էր։

Երևանի եւ Էջմիածնի մէջ եղած հիւանդանոցները հազիւ կարողացան ներս առնել 1500 մարդ։ Էջմիածնում հիւանդների մեծ մասը տարածուած էր Ներսիսեան լճակի շորս կողմը, ծառերի եւ վանքի պատերի տակ։ Շատ մեծ էր մանաւանդ հիւանդ մանուկների թիւը։ Էջմիածնի ճեմարանում խոնուած էին 3500 մանուկներ, որոնց ծնողները չկային։ Երրորդ օրուայ իրիկունը Մեծ սրահի մէջ եւս հաշուեցի 110 մանուկներ, որոնք պառկած էին տախտակամածին, գրեթէ մերկ. ոմանք քնել էին, բայց մեծ մասը լալիս էր։

Օգնութեան գործը խիստ դժուարանում էր կազմակերպութեան բացակայութեան պատճառով։ Պատահական մէկը դառնում էր «կարգադրիչ», ամէն մարդ հնազանդութեամբ ենթարկուում էր նրան, մինչեւ որ յայտնուում էր մի ուրիշը։ Ես ինքս ինձ նշանակել էի որբերի եւ մանուկների խնամակալ եւ զբաղուում էի այդ գործով։ Բայց երկար այդպէս չտեւեց, բազմութիւնները սկսեցին նօսրանալ, եկան Թիֆլիսի, Մոսկուայի ազգային կոմիտէները. Բաղաքների Միութեան օգնութեան մարմինները իրենց բազմաթիւ մասնաճիւղերով։

ARAM webaram.com

Վերջինի մասնաճիւղը Երեւանում ինձ տուեց «որբեր հաւաքող»ի պաշտօն, որ արդէն փաստօրէն կատարած էի։ Այդ գործը կարծուածին չափ պարզ չէր, անհրաժեշտ էր նախապէս ստուգել, թէ տուեալ երեխան արդեօք չունի՞ ազգական, որի մօտ կարող է ժամանակաւորապէս մնալ, մինչեւ նոր որբանոցներ հաստատելը եւ եղածներին էլ քիչ շատ կարգի բերելը։ Կար եւ ուրիշ դժուարութիւն, հաւաքուած որբերից խելահասները, մէկ երկու օր անցած, փախչում էին այսպէս կոչուած որբանոցներից՝ նախամեծար համարելով մուրացկանութիւնը։ Այդպիսիներին կարելի էր բռնել միայն լուսաբացին, խանութների դռների տակ, ծառերի բների ներքեւ, խուլ փողոցների անկիւններում, կամ քանդուած շէնքերի փլատակներում քնած վիճակի մէջ, որովհետեւ արթնանալուն պէս ձեռք չէին ընկնում։ Սակայն, որքան բարելաւուեցին որբանոցների պայմանները, այնքան փախստականների թիւը նուազեց։ Բայց, դրա փոխարէն, հանդէս եկաւ նոր դժուարութիւն, օրէց օր յայտնւում էին «կեղծ» որբեր. անծայր թշուառութեան ենթակայ տարապիր ծնողները, անկարող՝ զաւակների գոյութիւնը ապահովելու, բերում էին քաղաք երեխաներին ամենահեռաւոր գիւղերից եւ, թողնելով փողոցում, հարազատ զաւակներից փախչում էին դէպի գիւղ։ Այս «կեղծ» որբերը մեծ մասամբ տեղաւորւում էին հայ ընտանիքներում, որոնց եւ յայտնւում էր ծնողների անունները, եթէ կարելի էր լինում հասկանալ։

Որբերի մէջ ամենից անհանդիստ տարրը գաղթից առաջ որբացածներն էին։ Սրանք, քիչ բացառութեամբ, բաղկացած էին մանչերից, 8 — 12, հազուադէպօրէն մինչեւ 14 տարեկան։ Ջարդերի ընթացքում նրանք փախել էին քիւրտերի մօտից ու վերադարձել իրենց լքուած գիւղերը՝ իրենց գոյութիւնը քաշքշելով այնտեղ,

ARAM webaram.com

մինչեւ ընդհանուր նահանջը, ապա, միանալով առաջ անցած այս կամ այն կամաւորական խումբին, գաղթել էին։ Տանջալից տարեկան մի որբ յաջողել էր քիւրտերի մօտից ոչ միայն փախցնել իր հինգ տարեկան քրոջ, այլ եւ շալակած հասցնել նրա մինչեւ Կովկաս։ Յանդուգն, բանիմաց, տոկուն էին սրանք։ Չէին սիրում խօսել. ծնողների մասին եղած հարցումներին պատասխանում էին մէկ եւ միեւնոյն բառով՝ «սպանուած են»։

Չէր երեւում, որ նրանք ցաւ են զգում այդ առթիւ։ Միայն մէկը ասաց, որ թոնրի մէջ պահուած էին եւ այնտեղ էլ այրեցին, ու լաց եղաւ։ Գրեթէ բոլորն էլ ունէին իրենց «ոդիսականը»։ Մնացած որբերի մէջ աւելի դիւրահաղորդ էին աղջիկները, քան մանչերը։ Սակայն, առաջիններն աւելի դիւրութեամբ էին ընտելանում ազամարդկանց, քան որբախնամ կանանց հետ։ Ըստ երեւոյթին, յանձին օտարի զիջում էին հօր, հօրեղբօր, եղբօր, բայց ոչ երբեք մօր տեղը։

Որո՞նք էին Յունիս 2ի նահանջի ռազմապիտակոն հիմքերը եւ ի՞նչ յարաբերութեան մէջ էին այդ նահանջի հետ Թուրքիայ մէջ ծայր առած ահաւոր ջարդերը, եւ չգիտեմ։ Բայց դէպքերը կարդացան այսպէս- նահանջից անմիջապէս յետոյ տեղահանուեցին Բիթլիսի, Մուշի եւ Սասունի շուրջ 150,000 հայերը. Յունիսի 7ին տեղահան եղան Երզնկայի 20,000 հայերը. Յունիսի 16-ին՝ Էրզրումի 18,000 հայերը, Յունիսի 28ին՝ Տրապիզոնի 14,000 հայերը, 29ին Բարեզրդի, Սվազի, Խարբերդի հայերը եւ ամռուան վերջերին Սվազ - Խարբերդ գծով արդէն գնում էր դէպի գերեզման շուրջ կէս միլիոն ժողովուրդ...

Երեւանի հայութիւնը սուգի մէջ էր։ Նահանջը տակնուվրայ էր արել հայ կեանքը ու ամէն տեղ ջղային մթնոլորտ առեղծել։ Վիճի պէս մի անջրպետ էր

ARAM webaram.com

բացուել հայ ժողովուրդի եւ երէկուան «բարեկամ» ռուս կառավարութեան միջեւ։ Մարդ չկար, որ նահանջի մէջ չար դիտաւորութիւն չտեսնէր։ Դատողութիւնների հիմքն էր «Հայաստանը՝ առանց հայերի» հնաւանդ թեզը։ Ամէն տեղ խօսւում էր ջարդերի մասին։ Թիֆլիսի հայ թերթերը, որ մինչեւ այդ զբաղած էին Վանի դէպքերով, նահանջով, Պոլսոյ հայ մտաւորականութեան աքսորով, մասնակի կոտորածների լուրերով, այժմ հնչեցնում էին ահազանգը համայն արեւմտահայ ժողովուրդի ոչնչացման։ Թուրքիայի ամենահեռաւոր անկիւններից դեռ հասնում էին հատ ու կէնտ փախստականներ, որոնց ահաւոր պատմութիւնների մէջ վայրագութեանց, ջարդի եւ մահուան տեսարանները յաջորդում էին իրար...

Կոնտ Թաղամասի որբանոցից քիչ վար ապրում էր Համազասպ Բարաղամեանը, տիվրիկցի մի համեստ երիտասարդ, որ նախապէս վարում էր կազմակերպչական աշխատանքներ կամաւորների շարքերում, իսկ նահանջից յետոյ մեկնեց Թիֆլիս։ Այժմ նա վերադարձել էր Երեւան «Հորիզոն»ի թղթակցի հանդամանքով եւ օրն ի բուն դառնում էր նորեկ տարագիրների մէջ, դէպքերի մասին տեղեկութիւններ հաւաքում։

Տարագիրների մէջ հանրածանօթ դէմք էր, իբրեւ «թղթակից Համօ», եւ ամէն մի նոր փախստական առաջին ուրիշով լինում էր նրա մօտ։ Նրա մօտ էի անցընում եւ ես բոլոր ազատ ժամանակս, Երզնկայից տեղահանուածների մասին մի բան իմանալու ակնկալութեամբ։ Բայց ամէն կողմից տեղեկութիւններ կային, բացի Երզնկայից։ Թէեւ հարազատներիս բախտը տարակոյս չէր վերցնում, բայց անյայտութիւնը հիւծախտի պէս մաշում էր ինձ եւ հիւանդագին դրութեան մատնում։ Օգոստոսի սկզբներին Համոյի մօտ տեսայ Տրապիզոնից նոր փախած մի մանկահասակ կին, որ

ARAM webaram.com

մխալաբ պատմում էր, թէ ինչպէս ծովամոյն արին քաղաքում ձերբակալուած շուրջ 500 հայ մտաւորականներին, որոնց, իբր թէ, աքսորում էին Սամսոն։ Այնքան սրատաճիկ էին կնոջ նկարագրութիւնները, որ խիստ դժուար էր լսել։ Համոն, քննիչի անտարբերութեամբ, նոթագրում էր առջևը դրուած երկարաւուն թղթերի վրայ՝ նոր հարցումներ ուղղելով կնոջ։ Երբ կինը սկսեց նկարագրել ճեւիպլիկի ջարդը, ինքս ինձ բռնադատուում էի լսելու.

— Նախապէս այրերը բաժնեցին կիներէն եւ դաւակներէն,— պատմում էր նա,— ապա սուրի հարուածով, դանակի հարուածով, հրացանի սուիններով, անգթութեան հազար նրբութիւններով կը սպաննէին զանոնք։ Սոսկումի աղաղակները դաշտը կը լեցնէին։ Հողը, խոտը արիւնով թաթաւուած էր։ Տղաքը, զարհուրանքէն խուշտրցած աչքերով, երկար կականներ կ՚արձակէին։ Կիները բազուկներն կ՚երկնցնէին, կ՚ապերսէին, կը նուաղէին. ամէն կողմ տարածուած էր արիւնի տաք հոտը...

Ցանկարծ, ինձ թուաց, թէ տեսնում եմ այդ ամէնը, լսում ապիսորդի ճիչերը, սարսափի ու ցաւի աղաղակները, բուռն ապերանները, խելագարութեան ու հոգեվարքի գոչիւնները. տեսնում դիակները ճիշդ այնպէս՝ ինչպէս նրանք տարածուած էին Հարիսան գիւղում. զգում արեան տաք հոտը։ Մղձաւանջով համակուած ոտքի ելայ, որ գնամ ու այլեւս ոչինչ չլսեմ, բայց գլուխս գարձաւ, եւ ընկայ...

Երբ ուշքի եկայ, կինը չկար։ Համոն թեւանցուկ առաջնորդեց ինձ սենեակս։ Գիշերը չկարողացայ աչք փակել. բաւական էր, որ քիչ շատ թմբութեան մէջ ընկնէի, եւ ինձ պատկերանում էին զանազան սարսափելի տեսարաններ, իբր թէ մայրս Սիկունիս գիւղի քարանձաւին մէջ է. իբր թէ մեր բոլոր երեխաները

ARAM webaram.com

թոնրի շուրջ բոլորուած՝ միաբերան ճչում են, իրը թէ եղբայրս ջախջախուած գլխով ընկած է պարտէզում... Ու ամէն անգամ, երբ ի վիճակի էի լինում դառնալու, աչքիս առջեւ պատկերանում էր Թալէաթի փքուն, ինքնագոհ դէմքը, որի պատկերը առաջին անգամ տեսայ Վանում: Բռնել, վրից թոկ կապել, չան պէս քաշքշել մինչեւ իր կազմակերպած սպանդանոցների վերջին կայանը եւ մահամերձ զոհերի առջեւ արիւնաքա՞մ ը-նում: Բայց այդ օրուանից ժառանգեցի գլխապտոյտի եւ ուշագնացութեան մի հիւանդութիւն, որ մէջ ընդ մէջ հարուածում էր ինձ:

Սեպտեմբերի կէսերին Թիֆլիսի հայկական թերթերից մէկում կարդացի Խարբերդի ամերիկեան ներ-կայացուցչի Յուլիս 11 թուակիր պաշտօնական տեղեկագրի թարգմանութիւնը, որի մէջ ասուած էր.

«Յուլիսի առաջին օրերին, ցնցոտիների մէջ, սո-վալլուկ, հիւանդ, Կարինից, Երզնկայից Խարբերդ հա-սան առաջին կարաւանները: Նրանք երկու ամիս անցել էին ճանապարհներին զրեթէ առանց անուղի եւ ջրի: Մայրերը յոժարակամ տալիս էին իրենց զաւակները բոլոր նրանց, որոնք ուզում էին առնել: Հարուստ թուրքեր բժիշկների քննութեան են ենթարկում երի-տասարդ աղջիկներին եւ ամենից գեղեցիկներին առնե-լով՝ քաշում են իրենց հարեմների համար: Այդ դըժ-բախտների պատմածների համաձայն, մեծ մասը բռնի կորզուած կամ սպանուած են քիւրտերի կողմից, որոնք տեւական յարձակումներ են գործում կարաւանների վրայ:

Շատերն էլ մեռել են ճանապարհին անօթութիւնից եւ ուժասպառութիւնից: Երկու օր յետոյ, նոր կարա-ւաններ հասան: Տարադիրների մէջ երեք քոյրեր կա-

ARAM webaram.com

յին, որոնք անպլերկն դիտէին։ Իրենց ընտանիքի 25 անդամներից տասնըմէկը արդէն սպանուած էին ճանապարհին, ողջ մնացած արական սեռի տարէցը ութ տարեկան էր։ Իրենց տեղերից մեկնելու ժամանակ, տարագիրները ունէին ձիեր, դրամ, կապոցներ, բայց ճանապարհին ամէն բան կողոպտուել է, նոյն իսկ իրենց հագուստները, եւ աղջիկներից մէկը բոլորովին մերկ էր։ Խարբերդի մէջ տարագրութեան կարգադրութիւնները սկսուեցին հաղարաւոր այր մարդկանց ձերբակալութիւններով։ Գիշերը նրանց տարին մօտակայ լեռները, եւ այլեւս ոչ ոք չվերադարձաւ։ Նրանց մէջ էին հայոց առաջնորդը, ամերիկեան գոլէճի ուսուցիչները եւ քաղաքի ծանօթ դէմքերը։ Ինչպէս նաեւ բոլոր հայ զինուորները ու բոլոր նրանք, որոնք զինուորական տարիքի մէջ բէտել էին վճարել։ Յունիսի 5ին ձերբակալուեցին եւս ութ հարիւր այրեր։ Հետեւեալ օրը նրանց տարին լեռների անապատային մասը, այնտեղ տասնըչորս հոգինոց խմբերով իրարու կապեցին-որովհետեւ իրենց ունեցած պարաններով տասնըչորս մարդուց աւելի կարելի չէր կապել — եւ հրացանի բռնեցին։ Մերձակայ գիւղի մէջ հայերի ուրիշ խմբեր արդելափակուեցին։ Երեք օր առանց ուտելիքի եւ ջրի պահելուց յետոյ, նրանց մօտակայ ժայռերի առաջ կանգնեցրին եւ հրացանապարկ արին. որոնց վրայ որ դեռ շունչ կար՝ սուիններով ու դանակներով սպանեցին։ Յուլիսի տասնին հաղարաւոր հայերի նոր խարդեր եղան քաղաքից երկու ժամ հեռու։ Նոյն սպանութիւնները չրջակայ բոլոր գիւղերի մէջ»...

Նոյեմբերի վերջերին Թիֆլիս հասաւ Սվազցի Մուրատը, որ, տասն ամիս շարունակ կռիւներ մղելով լեռներում, 13 ընկերներով Սվազից հասել էր Սամսոն եւ՝ բռնապրաւելով մի առագաստանաւ յաջողել էր ցամաք

ARAM webaram.com

իջնել Բաթումում։ «Հորիզոն»ում տպագրուած էր այդ առասպելական փախուստի պատմութիւնը «Մուրատի ողբատանը» խորագրով, որից կարելի էր գաղափար կազմել Սամսոն-Սմոլ ուղղութեամբ կատարուած զանգրուածային տեղահանութիւնների եւ ջարդերի մասին։

Ցաջորդաբար սկսեցին լոյս տեսնել զանազան միսիոնարների, իտալական գիւանագիտական ներկայացուցիչների սահմռկեցուցիչ տեղեկագիրները, որոնք պարզում էին, թէ իրենց ծաւալով ու կազմակերպուած բնոյթով հայկական ջարդերը գերազանցում էին պատմութեան բոլոր այդօրինակ դէպքերը։

Տարուայ վերջերին լուրեր հասան բնաջնջուած ժողովուրդի մի շարք ընդվզումների մասին. ապստամբել էին Շապին - Գարահիսարը, Ուրֆան, Այնթապը, Զէյթունը, Ճէպէլ - Մուսայի ապստամբուս բարձունքների հայութիւնը...

Այլեւս պարզ էր, որ հայկական սպանդը կարող էր վերջ գտնել, երբ ընդհանուր պատերազմը վերջանար։ Բայց դինուորական նախարար լորդ Կիչները յայտարարում էր, թէ Անգլիան կարող է գործօն մասնակցութիւն ունենալ պատերազմին միայն երկու տարի յետոյ, իսկ ցամաքի երկու գլխաւոր ճակատներում գրութիւնը աւելի քան անմխիթար էր։ Զնայած, որ գերմանացիները իրենց ուժերի մի խոշոր մասը արդէն նետել էին արեւելեան ճակատ, բայց տարուան ընթացքում անգլիացիների եւ ֆրանսացիների բոլոր ջանքերը ապարդիւն անցան Սոմմի շրջանում ճեղքելու գերմանական ճակատը։ Բոլանդակ արեւմտեան ճակատում կռիւը ընդունել էր «դիրքային» բնոյթ, որ Գերմանիային ընձեռում էր հնարաւորութիւն՝ մնալ այնտեղ նուազագոյն ուժերով պաշտպանողականի վրայ՝ արեւելեան ճակատում իր հաշիւները ռուսների հետ նախապէս մաքրելու համար։

ARAM webaram.com

Նեղուցներում, Մարտ 18ի անյաջողութիւնից յետոյ, երբ դաշնակիցները կորցրին շորս խոշոր ռազմանաւեր, անգլուֆրանսական նաւատորմը այլևս փորձ չարաւ Դարդանէլը անցնելու։ Իսկ Գելիպոլուի եղերամասերում ցամաք իջած Համիլտոնի բանակը ամբողջ տարուայ ընթացքում ոչ մի յաջողութիւն չունեցաւ։

Բալքաններում մինչև այդ հերոսաբար դիմադրող փոքրիկ Սերբիան Հոկտեմբեր - Դեկտեմբեր ամիսներին ջարդ ու փշուր եղաւ աւստրօգերմանական, բուլգարական գերազանց ուժերի ճնշման տակ, որոնք ներս խուժեցին միաժամանակ հիւսիսից եւ արևելքից՝ Մակենզէնի ընդհանուր հրամանատարութեան տակ։

Աւելի անմխիթար էր կացութիւնը ռուսական ճակատում։ Կրակովի շրջանում կենտրոնացած գերմանական ուժերը դեռ Մայիսին, մի քանի ուժգին հարուածներով, հարկադրեցին ռուսներին յետ քաշուել եւ Վիսլայի ձախ ափով նահանջել։ Փիչ յետոյ ռուսները թողին Պերեմիշը եւ Լվովը, իսկ ամրան վերջերին բովանդակ Գալիցիան պարպուեց նրանց կողմից։ Աշնան, գերմանացիները յաջորդաբար գրաւեցին Կովնոն, Գրոդնոն, Բրեստ - Լիտովսկը։ Այնուհետեւ ռուսները սկսեցին նահանջել ամբողջ ճակատով, երբեմն միայն մղելով թեթեւ կռիւներ թիկունքում պատրաստուած ամրութիւնների վրայ...

* * *

1916ի սկզբներին մեր բարոյալքումը հասաւ իր գագաթին, երբ իմացանք, որ Համիլտոնի բանակը պարպել է Գելիպոլուն։ Մեր ժողովուրդի մնացորդների կեանքը փրկելու ամէն յոյս օդը ցնդեց։

Երեւանում, ամէն տեղ, նրբամիտ մտաւորականներ խնդիրը բացատրում էին անգլեռուս հակամարտութեամբ։ Իբր թէ Անգլիան եթէ ցանկանար, կարող

ARAM webaram.com

էր գրաւել Նեկուցները։ Բայց որոմհեռու այդ պարապային սոխպուած պիտի լինէր Պոլիսը գիջելու ռուսներին, մի տարի ձգձգելով յետ քաշուեց...

Միջպետքից փախած բժիշկ Թորոյեանը այդ օրերին հասել էր Թիֆլիս եւ դեռ ողջ մնացած տարագիրների վիճակի մասին յայտնում էր.

«Միջպետք տարագրուած իմ դժբախտ հայրենակիցները բաղկացած են մեծ մասամբ կիներից, աղջիկներից։ Դժբախտները հապիւ են ծածկում իրենց մերկութիւնը ցնցոտիներով, եղանակի խստութիւնների դէմ պաշտպանուելու համար ոչինչ չունեն. ոմանք, հոգերին ծալապատիկ նստած, փորձում են լաթերի կլատրներից մխացած հոմանոցների շուքի տակ պաշտպանուել, բայց մեծ մասը դուրկ է նաեւ այս խեղճուկրակ ապաստանից։ Աւտոմոբիլների մէջ, ամէն տեղ, բարձրանում են հոգեթմբեր, որոնց շուրջը դառնում են գազազած շներ։ Դիակներից շատերը մնում են անթաղ։ Հազարներ են այդ կմախքացած դժբախտները՝ փոսացած այտերով, մարած կամ շատ փայլուն աչքերով, խօսելու փարժութիւնից զրկուած, տառապանքից ապուշացած դէմքերով»...

Եթէ մինչեւ այդ իմ մէջ դեռ մնում էր մի յոյս, որ հարազատները կարող էին ողջ մնացած լինել անապատներում, այժմ այդ յոյսն էլ մարում էր։ Մնում էր մի բան, ի՞նչպէս կարելի է Պոլիս ընկնել եւ Թալէաթը գտնել։ Միայն նրա մահը կարող էր քիչ շատ ամոքել ապրած կսկիծս։ Տեւական մղձաւանջի պէս, երբեք հանգիստ չէր տալիս ինձ այս գաղափարը. երբեմն նա համակում էր ինձ այնպէս, որ մոռանում էի ամէն բան։ Քաղաքների Միութեան մէջ դեռ շարունակւում էր պաշտօնս, բայց ոչինչ չէի անում։

Քիչ յետոյ ռուսները գրաւեցին Էրզրումը։ Եւ եւ մնում ռումբի պէս պայթեց այդ լուրը, ոչ ոք յոյս ունէր Կովկասի ռուս բանակի մարտունակութեան վրայ. որ-

ARAM webaram.com

դէն յայտնի էր, որ այդ բանակի լաւագոյն ուժերը փոխադրուել էին ռուս - ռումանական ճակատը, իսկ մնացածները պահանջուած քանակութեամբ ռազմանիւթ չունէին յարձակման համար։

Այժմ բացւում էր յոյսերի մի նոր շրջան. մարդիկ նորից կեանք առան. դեռ կորած չէր ամէն բան։ Ո՞ր ժողովուրդն է ազատագրուել Թրքական լծից առանց զանգուածային ջարդերի, ինչո՞ւ ասասել, որ մենք բացառութիւն կազմէինք, ո՞րքան մարդ կար երկրում, երբ ազատագրուեց Բուլգարիան,— այսպէս էին այժմ տրամադրութիւնները։ Ու սկսուեց նոր շարժում դէպի ճակատ։ Համոն նոյն օրը, թղթերի պարկը շալակած, եկաւ ինձ հրաժեշտ տալու։ Գնում էր իբրեւ թղթակից թարմ լուրեր բերելու։ Ցաջորդաբար մեկնեցին կամաւորական խմբերից Երեւանում եղած բոլոր ընկերները։ Սակայն, այժմ կամաւորական խմբերը ցրուած էին, իբրեւ այդպիսին՝ նրանք իրենց դերը կատարել վերջացրել էին. նորակազմ խմբերը, ինչպէս նաեւ նախկին խմբերի մնացորդները, վերածւում էին հայկական հրացանաձիգ գնդերի եւ՝ վկայեալ սպաների ենթակայ՝ մուծւում ռուսական բանակը։

Մարտի վերջերին ես հազիւ կարողացայ ապաքինել հիւանդութիւնից ու մեկնել։ Գնում էի Քաղաքների Միութեան գործերով։ Սարբղամիշից հաճոյքով ընդունեցին ինձ իրենց մօտ ռուս բանակի թնդանօթաձիգ երկու սպաներ՝ Տէր Ակորով եւ Տէր Պետրոսով, որոնք ապրանքատար ինքնաշարժով տանում էին Էրզրում դաշտային կապի եւ հեռախօսային հաղորդակցութեան պիտոյքներ։

Այս գծով ես առաջին անգամն էի մտնում Երկիր։ Սար ու ձոր վկայում էին պատմական հին ու նոր արնաներկ անցեալը։ Երեկոյեան հասանք Գարաուրկան։ Հաճելի, քաղաքավար ընկերներս, տեսնելով որ նոր

ARAM webaram.com

եմ ապաքինել հիւանդութիւնից, ինձ հանդէպ ցոյց էին տալիս խնամք եւ ուշադրութիւն: Ցաջորդ օրը, Զիվինի ճանապարհով ուղղուեցինք դէպի Քէօփրիւ-Քէօյ: Ագջամուղջի շրջանից նոր պարզուող Զիվինը յիշեցնում էր Վաղարշակ - Կայծակի խմբի նահատակութիւնը, որի մասին կարդացել կամ լսել էի շատ տարիներ առաջ: Մեր վագեմի Վաղարշաւանում կանգ չառանք: Երեկոյեան հասանք Հասան - Քալէ, ուր հազար չորս հարիւր տարի առաջ ամրացել էր իր քաջերով Մամիկոնեան Վահանը՝ իրեն հալածող պարսիկ բանակների դէմ: Լուսաբացին մեկնեցինք, ճանապարհը դժուար էր, բայց օդը լաւ: Մայրամուտ էր, երբ բարձունքներով շրջապատուած Կարինը յայտնուեց կրկէսի պէս խոր ընկած տարածութիւններում: Արեւի վերջին ճառագայթները խաղում էին մինարէների ներին ու սուր ծայրերին:

Քաղաքում ամէն քայլափոխի, պատահում էին զինուորականներ, զօրքեր, բեռնաւորուած սայլեր, ուղտի կարաւաններ: Ցանկարծ տեսայ կիւրինցի Սահակին, որի հետ միասին նահանջից յետոյ էջմիածնում գրաղում էինք որբերի գործով: Զլապինդ Սահակը առաւ ինձ բազուկների մէջ: Ապրում էր Սանասարեան վարժարանի մօտերը: Առաջնորդեց իր մօտ: Ամերիկայից իր հետ մեկնած կամաւորներից Էրզրումում ոչ ոք չկար, եւ ինքն էլ մտադիր էր գնալու վերապրաւուած Վանի, Բիթլիսի ուղղութեամբ:

Էրզրումի 18,000 հայերից մնացել էին 120 մարդ, Նահանգի գիւղերի բոլոր հայերը ոչնչացուած էին:

Առաւօտեան նկերկայացայ Տիգրան Ադամալեանին, որ Քաղաքների Միութեան լիազօրն էր. բարձրահասակ, ժժգոյն դէմքով, մեծ, մելամազձոտ աչքերով մէկը, որ կլանուած էր գործերով: Մօտակայ շրջաններում գտնուած մի քանի տասնեակ որբերը արդէն համ-

ARAM webaram.com

բլուած էին Ալեքսանդրապոլ։ Բայց այդ ուղղութեամբ, մինչեւ ինուա, կատաբելիք շատ գործ կար։

Քիչ վերջ Համոյի մօտ էի, դեռ Երեւանում կարդացել էի նրա սահմռկեցուցիչ թղթակցութիւնները Օսմանեան պարլամենտի անդամներ Սէյֆուլլա եւ Ինկլիզ Ահմէտ բէյերի, հրամանատար Քուզի բէյի, Բէհահէտտին Շաքիրի եւ Հաճի բէյի կազմակերպած ջարդերի մասին։ Համոն այժմ էլ զբաղած էր նոյն գործով։ Նրա կեանքը թեքումներ չունէր։ Տրամադրութիւնը բարձր էր։ Մի քանի բառով ինձ պարզեց կացութիւնը. եղածը եղել էր, հիմա անհրաժեշտ էր գալիքի մասին մտածել։

Աճապարում էր ինչ որ յիշատակարան գիտելու հերթական թղթակցութեան համար։ Նա գրպանից սեղանից մի տրցակ երկարաւուն թղթեր ու ուրքի եղաւ։

— Ի միջի այլոց, դու կարող ես ինձ այստեղ օգտակար լինել, գնա՛նք, ճանապարհին կը խօսենք։

«Յիշատակարանը» մի կիսաւեր շինութիւն էր, որ գտնւում էր հայկական գերեզմանատնից քիչ վար, մի բլրապարզ դաշտի վրայ։ Կոչուած էր լինելու Իթթիհատականների ամենամեծ ակումբը, խաղասրահներով, մարզանք բաժիններով, լիճով, ճեմելիքներով եւ այլն։ Մնացել էր կիսատ, քարաքը ուռենների կողմից գրաւուելու պատճառով։ Շէնքի երկու մեծաչափ պատերը կառուցուած էին հայկական գերեզմանատնից բերուած տապանաքարերով. բատ երեւոյթին, վայրը ընտրուած էր շինութիւններին մօտ լինելու նպատակով, քանի որ աւելի վար պարզւում էին ծաղկազարդ գեղեցիկ դաշտեր։ Այժմ Բարտղամեանը ինձ նստեցրել էր շինու թեան կենդրոնից քիչ հեռու քարերին, որ թելադրածները գրի առնեմ։

— Գրի՛ր,— գոչում էր նա, գլուխը դուրս հանե-

ARAM webaram.com

զով այնտեղից։— Աբեւելեան պատ, ձախից աջ, առաջին շարք։ ասա հանդչի...

— *Ի՞նչ։*

— «Ասա հանգչի Խնուսցի Յակոբեանց Նախրանի որդի տիրացու Գէորգը, որ դառնակնիծ մահուամբ, ասասի կեանցս 1845 թուականին»... *Գրիր յաջորդը։*

— «Այս է տապանն հանգստեան դուստրի Նուրի ջնաթունին, որ առաջին ծնունդաբերութեանն որ էր ջուխտ՝ հանգաւ առ Քրիստոս, ինքն եւ մանկունք իւր, որ էր կողակից Իփէքեանի Յովհաննէս Զէլէպուն որ մականուամբ Զուխուր կոչեն»... *Գրիր երրորդը։*

— «Ասա հանգչի Մուղտուսի Մատթէոս, որ կաթուածէն փոխեցաւ յաշխարհս։ որք հանդիպիք ասէք զՀայր մեր եւ զողորմին»... *Երկրորդ շարք, գրի՛ր։*

— «Ընդ հովանեաւ այսմիկ շիրմի հանգչի Հայկազն Էրզրումցի, որ Աւագեան մականուանի, յազգէն մեր Հայկազունի, սա փափաքեալ դամբարանի Առաքելոյն Սուրբ Պետրոսի»... *Ափսո՜ս, գրիր միւսը։*

— «Այս է տապանն Էրզրումցի Մահտեսի Յակոբին դուստր Սուրբուհուն, որ մահ տարաժամի եղաւ թվն։ 1889»։ *Գրա տակը գրիր։*

— «Որք հանդիպիք յայսմիկ տապան մի անցանէք քաց օրհնութեանց, զի աշխարհս անցողական առիթ է մեզ միշտ զլտորման»...

Սիրտս նեղւում էր, վրաս տաքութիւն իջնում։ Համան մտել էր շէնքի նեբսերը եւ այն տեղից հոգիս գլուխը դուրս հանելով՝ գոչում էր։ «ասա հանդչի», «ասա հանդչի»։

— *Գրի՛ր*, «Դամբարան Քէհրիբարի վանուանական Միհրտաղայի՝ կողակից Հանրմայի»...

— *Բաւական է, գոչեցի ես։*

— *Գրի՛ր, գրի՛ր, այս շարքի մէջ վերջինը։* «Ասա հանգչի Թադէոս Աղայն, որ էր որդի աբքունի վանո-

ARAM webaram.com

դապետ Մահտեսի Աբաքեղ ամիրայի Զբիչբիեանց»։ Դրա տակը գրիր — «Ո՛վ սնցաւորք ճանապարհի կեանցաղոյս, եկայ ի տես ի տեսարան իմ հոգւոյս»...

* * *

Ապրիլին ռուսները գրաւեցին Տրապիզոնը, իսկ Յուլիսի կէսերին՝ Երզնկան։ Էրզրումի գաւառում ամէն տեղ յայտնուում էին ոսկրացած, վայրենական վիճակի մատնուած մանուկներ, որոնց մեծ մասը իր գոյութիւնը էր պահպանել աւերուած հայ գիւղերի փլատակներում։ Զեռք ընկնողները գողում էին աշնան տերեւի պէս. մեծ ջանք էր պէտք հասկացնելու, որ իրենց այլեւս վտանգ չի սպառնում։ Մոռացել էին լեզու, հայութիւն, մարդկութիւն։ Խնուսում գրանցից խմբուած էին շուրջ երկու հարիւր հոգի։ Ամէն տեղ առաջնակարգ արժէք էր ստացել որբերի գործը. ամէն մի որբուկ մի նոր ապիւս էր ապրը վերակառուցանելու համար։ Ես ճգնում էի օր առաջ աւարտել իմ բաժին աշխատանքները Երզնկա մեկնելու համար։ Օղոստոսի վերջերին մեր մօտ յայտնուեց Մուրատի հետ փախած տղաներից Յովնանը, որ եկել էր Բաթում - Թիֆլիս - Կարս գնով եւ գնում էր Մուրատի մօտ։ Կիւրինցի Սահակի եւ նրա հետ մեկնեցինք։

Ճանապարհը բռնուած էր անհաշիւ եղան սայլերով, որոնք տանում էին ռազմամթերք եւ պարէն՝ ռուս զինուորների ուղեկցութեամբ։ Գնում էինք Քաղաքների Միութեան երկաթի սայլով, որ պիտի յետ դառնար Երզնկա խմբուած որբերով։ Սայլապանը՝ թիկնեղ, կլոր, սիրուն աշխարհային աչքերով մշեցի Գարեգինը՝ կիսով չափ թեք նստած աւելի շատ լսում էր Յովնանի պատմութիւնը Մուրատի եւ ընկերների փախուստի մասին։

ARAM webaram.com

քան վարում սայլը։ Եւ յաճախ մնում էինք բեռնակիր արաբների պոչերին գամուած։ Ամէն անգամ, երբ Ցոմնանը պատմում էր փախուստի այս կամ այն դժուարութեան կամ խմբի անհաւասար կռիւների մասին Սվազից - Սամսոն երկաթ ճանապարհին, Գաբեկինը չմոռացած բացագանչում էր. «Հէ՛յ, Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետ» կամ քթի տակ սրտամորմոք մրմնջում՝ «Եա՛, Եա՛»։ Տեղ - տեղ, իրօք որ, խիստ յուզիչ էր Ցոմնանի անպաճոյճ պատմութիւնը։ Օրինակ, երբ Մուրատը եւ ընկերները, մի քարանձաւի մէջ զարանակալ, դիտում են հարազատների տեղահանութիւնը, բազմութեան մէջ ճանաչելով մայր, քոյր, եղբայր, զաւակ՝ անկարող դնդակ արձակելու ջարդարարների վրայ.— Ի՞նչ ընէինք, մենք պիտի սպաննէինք հինգ տասը մարդ, անոնք՝ բոլորին, ասում էր նա։

Կամ երբ նրանք հասնում են սուրբ Տաճար, եւ Մուրատը այստեղ նամակ է ստանում կնոջից, որի մէջ նա գրում է. «Իմ մասին երբեք մի՛ մտածեր, ես ինքզինքս կը սպաննեմ, խնդրեմ գրէ զեղապուրծին, որ ինձի քիչ մը թոյն տայ»...

Հասանք Մամախաթուն։ Մեծ փոփոխութիւններ էին կատարուել այստեղ. կառուցուած էին տախտակի հակայական մթերանոցներ, հանրակացարաններ, պահեստներ։ Հրապարակը բռնուած էր եղան, ձիու սայլերով, գինուորներով, ռազմամթերային բեռներով։ Հազիւ մէկ ժամ մնացինք այստեղ։ Քոթուր Քէօփրիի մօտ Եփրատը վերափոխուելն ճեղքում - անցնում էր ճանապարհը։ Որքան մօտենում էինք հարազատ վայրերին, այնքան յուզումը համակում էր ինձ։

Ցաջորդ օրը մեր դիմաց պարզուեցին դէպի Տրապիզոն եւ Կարին տանող ճանապարհների միացման կէտում բնկած գօրանոցները, որոնց վրայ այժմ ծածանում էր ռուսական դրօշակ։ Քիչ վարը բարձունքից սր-

ARAM webaram.com

ոչն նշմարում եմ Ենի – Ճամիի սրածայր գագաթը։ Ամենի վար արևը փողփողում էր Սուրբ Նշան, Սուրբ Փրկիչ եկեղեցիների գմբէթներին։

Իրիկնամուտ էր, երբ մտանք Երզնկա։ Թրքական թաղի առաջամասում, թուրք տղեկներ, մէկ ձեռքով վարտիքների գօտուց բռնած, թանձր փոշու մէջ վազելով՝ աշխատում են հասնել արընթաց սայլին։ Պատերի տակ, առուներում յայտնուում են կկղած, մտադրաց թուրքեր։ Մայթերով անցնող թրքուհիներ խընամքով պարուրուում են ծածկոցների մէջ։

Մտնում ենք թաղի կենտրոնական հրապարակը, ուր աջ ու ձախ, դէմ դիմաց ցցուած ապայակոյտի, կառամատարանի, քաղաքապետարանի եւ Միւշիր Սարայի շէնքերին ծածանում են ռուսական դրօշակներ։ Կարծես ոչինչ չի պատահել. փոխուել է միայն իշխանութիւնը։

Բայց շատ կարճ տեւեց այս խաբկանքը։ Երբ Գաբեկիներ թեքուեց դէպի աջ, իմ առջեւ պարզուեց Եկեղեցաց թափուր հրապարակը, այն ընդարձակ հրապարակը, որ միշտ խճողուած էր լինում բազմութեամբ։ Աջ կողմից միայնակ ցցուել է որբացած Սուրբ Սարգիս Եկեղեցին, մանկութեան օրերի գատկական հաւկթախաղի կենտրոնը։ Դէմ – դիմաց, ուղղակի հրապարակի ճակատին, մեր տունն է։ Վար ցատկելով սայլից՝ հզօր թափ ունեցայ վազելու այնտեղ, բայց մի սուր, տհաճ զգացում թափս կոտրեց. անյայտութիւնը նախամեծար էր այն ամէն բանից, ինչ կարող էի տեսնել։ Ուղղուեցի դէպի ձախ, դէպի կենտրոնական դպրոցը, Երրորդութեան Եկեղեցին, Առաջնորդարանը։

Կենտրոնական վարժարանը վերածուել էր որբանոց – հիւանդանոցի։ Վարիչն էր բժիշկ Աբշակ Պօղոսեանը՝ թիկնեղ, քիչ կորաքամակ, հանդարտ ու խելօք աչքերով մօտ քառասուն տարեկան մի համակրելի

ARAM webaram.com

մարդ։ Զուր էին ակնկալութիւններս. որբերի մէջ ոչ ոք չունէի։ Արդէն Երզնկայից մէկը չկար, բոլորը հաւաքուած էին շրջաններից։ Երզնկացիներից մնացել էին միայն 2—3 ընտանիք, որոնց մէջ նաեւ մեր Հարեւան Թառիկեանները։ Դուրս ելայ ինչ անելս չիմանալով։ Մեր տան դիմաց կանգնած էր մի սպայ։

— Ի՞նչ էք ուզում, դոչեց նա։

— Մեր տունն է, կ՚ուզէի տեսնել...

— Այս ձեր տո՞ւնն է։

— Այո՛...

— Ո՞րտեղից էք գալիս։

— Էրզրումից։

— Կամաւո՞ր էք։

— Ո՛չ, Քաղաքների Միութեան պաշտօնեայ։

— Ձեր հարազատները այստե՞ղ էին։

— Այո՛։

— Իսկ հիմա՞։

— Չգիտեմ...

Համակրելի մարդը գլուխը կախեց, ապա ծխախոտ հանելով ասաց.

— Հրամեցէք...

Հանրակացարան էր դարձել մեր տունը, բայց ներսը մարդ չկար։ Թիկունքում շէնքի մի մասը քանդուած էր։ Վարի յարկում փայտարանը, մառանը, խոռի, ալիւրի, մրգի բաժինները, ինչպէս նաեւ թոնրատունն ու խոհանոցը լեցուած էին անծանօթ իրերով։ Վերը՝ խոշոր «Մապէին»ը, ուր նստում, ճաշում, ընթրում էինք ամբան, և չորս սենեակները բռնուած էին զինուորի աղքատիկ անկողիններով։ Պատմական յիշատակարանի բնոյթ էր ստացել աչքիս մեր տունը։ Իմ փոքրիկ ննջասենեակից յայտնուեց մի զինուոր. չհասկցայ ինչ ասաց։ Կոկորդս սեղմուում էր, հազիւ էի պահում արտասուքներս։ Վար իջայ, դուրս ելայ։ Բնակարանը

ARAM webaram.com

եղերող բոլոր ծառերը, հին ու հաւատարիմ բարեկամ-ներբի պէս, շարքով կանգնած՝ նայում էին ինձ։ Ես գի-ակէի նրանց վրայ եղած բոյները եւ հասկանում էի թռչունների ծլրտոցը։ Ես պատուհանից նեռում էի հայի միջուկից գնդիկներ։ Գիտէի, թէ ո՛ր ծառը խէժ է արձակում ամրան։ Ամրան ես նրանց ոտերը ոգ-տում էի թանձր ձիւնից, որպէսզի վեր ձգուին։ Ծառերի շարքը երկարում էր մինչեւ մեր բնդարձակ պարտէզի առաջամասը։ Այստեղ պտղատու ծառերի մեծ մասը կտրուած են կամ արմատներով դուրս հանուած։ Ա-մէն տեղ գոյացել էին թումբեր ու փոսեր։ Ներսում մի քանի ծառեր, թեւերը կախ, թախծոտ նայում էին ինձ։ Ստորեւ թփեր, վայրի բոյսեր տարածուած, պտակած կամ ցցուած էին դէս ու դէն։ Այստեղ այլեւս կեանք չկար։ Երբեմն պէս չքացել էին մանկութեան բոլոր յի-շատակները։ Միայն պարտէզի խորքում մնացել էր անվթար մի անկիւն, ուր մանուկ օրերին՝ Աւետիս փիլոնի պէս նեռում էր ուսերին մօրս սեւ շալը ու քա-հանայի նման կոկորդալիր երգում «Սո՛ւրբ Աստուած», «Սո՛ւրբ Աստուած» եւ պանապան շարականներ։ Բայց այստեղ գոյացել է մացառապատ մի մեծ թումբ։ Ի՞նչ ստիթ եւ ի՞նչպէս, քանի որ ծառերը իրենց տեղն էին ... Սարսուռը ինձ ցնցեց, պպզի պպզէ արեան մի պոպ օդ ու գլուխս գարձաւ։ Զարհուրանքով յետ նեռեցի ինձ, բայց ընկայ...

Երբ ուշքի եկայ, թանձր մթնշաղ էր։ Դողահար դուրս ելայ պարտէզից։ Հրապարակի ծառերին ոգմկե-լով թառում էին ագռաւներ։ Գլխիս մէջ քաոս էր եւ ուր գնալս չգիտէի, ջերմի պէս մի գոգ մերթ ընդ մերթ ցնցում էր ինձ։ Թառիկեանների բակում նկատեցի մէ-կին. ի՞նչ էր այս, ցնո՞ւք, թէ իրականութիւն. նա շատ նման էր մեծ եղբօրս՝ Միսաքին։ Այնպիսի մի տ-նամենակալ էր այս, որ հագիւ վստահութիւն ունեցայ

ARAM webaram.com

ձայն տալու։ Նա՛ էր։ Միսաք եղբայրս։ Իմ Սերբիայից հեռանալէս մօտ մի տարի վերջ նա եւս կարողացել էր դուրս գալ այդ երկրից, Թումանեանի վրայով անցնել Կովկաս։ Մենք, երկու եղբայրներ, իրարու հանդիպեցինք 1915ի նահանջից յետոյ Քանաքեռ, Անդրանիկի բանակում, երբ ան վերակազմուելու վրայ էր։ Վանի վերապրումներ եւ դէպի Պիթլիս - Մուշ արշաւանքի ընթացքին, մինչեւ Արճէշ միասին էինք բանակին մէջ։ Արճէշում բծաւոր տիֆից վարակուելով Վանի դին, հիւանդանոցը փոխադրուեցայ։ Այդպէսով դիրար կորսընցուցինք մի առ ժամանակ։ Երկնքի գրաւումէն մի քանի ամիս յետոյ ահա նորից իրարու կը հանդիպէինք։

— Հիւա՞նդ ես։

— Ո՛չ, բայց երէկ գիշեր ճանապարհին մի քիչ պաղ առի։

— Ներս գնանք, Թառիկեաններին մօտ եմ։

Ինքը, կինը եւ երեխաները։ Իրենց յիշում եմ։ Կարծում են, թէ եղբայրս է գալ ինձ։ Թառիկեանը ողջագուրում է ինձ, կինը ուրախութիւնից արտասւում... Թէյ, պանիր, հաց, խաչած հաւկիթներ, հին հիւրընկալների զուարթ շարժուձեւեր, բայց՝ կիսակարծան ու պարապ տուն։

Փախել են եւ հրաշքով մահից ազատուել։ Երկար դեգերելով Տէրսիմի ձորերում գտել են մի քիւրտի ձեռք, որ խնայել ու պահել է նրանց, պայմանով, որ խալամութիւն ընդունին։ Դեռ թարմ են նրանց քաշածները ու պարոն Թառիկեանը ներքին պահանջ ունի, որ ամէն մարդ իմանայ իր ապրած սարսափները, գոյութիւնը պահելու հնարամտութիւնները։ Եղբայրս լսում է նրան լարուած ուշադրութեամբ՝ անելով լրացուցիչ հարցումներ քաղաքի ոստիկանապետ Մէմուհ բէյի պժոխային գործի, Քեմախ Բողազի դանդուածային ջար-

ARAM webaram.com

գերի եւ այլ այդ կարգի զէպքերի մասին։ Գնալ, գնալ էի ուզում այդ տեղից, բայց ո՞ւր...

Կինը երեւի զգաց վիճակս, վեր գնաց ու քիչ յետոյ յայտնուելով՝ ասաց, թէ կարող եմ գնալ վեր հանգըստանալու, եթէ ուզում եմ։ Վերնայարկում եղբօր յատկացուած սենեակի միակ պատուհանը նայում էր վերի հօրեղբօրս բնակարանի պարտէզին, որի հետ կապուած էին մանկական անհաշիւ յիշողութիւնները։ Թուխ ամպերը անցնում էին երկնքով՝ մերթ ընդ մերթ ծածկելով լուսինը։ Վրայ գրի պատուհանի փեղկերը ու մատյանը, բայց հնամաշ վերմակը ջերմութիւն չունէր։ Գլուխս հնոցի պէս այրւում էր, մարմինս դողում։ Ելայ ու վերարկուս նետեցի վրաս։ Օգուտ չունեցաւ, մարմինս դողում էր։ Մտածում եմ, որ արդարացուցիչ եմ, անպէտք, անօգնական մէկը. զգուանք եմ զգում իմ հանդէպ, գոյութեան նպատակ, կամք ունեցող մարդիկ ինձ պէս չեն. օրինակ՝ Համոն, լաւ-վատ անսայթաք վարում է իր գործը, տեղեակ պահում հայ ընթերցող հասարակութեան իրազործութիւնների։ Տեսնես ի՞նչ եղաւ տապանաքարերի արձանագրութիւնը, ծիծաղելի չէ՞ մեռած մարդկանց շիրիմները արձանագրել, երբ քար քարի վրայ չի մնացել եւ սար ու ձոր բռնել են անթաղ շիրիմների ոսկորները... Անկարող եմ հասկանալ, թէ ի՞նչպէս եղաւ, որ այս չէնք քաղաքում, քանի հազար հայերից մնացին միայն մի քանի ընտանիք, որոնց մէջ նաեւ մեր բարեկամ Թաւիլեանները իրենց երեխաներով. նախախնամութեան ընտրեալները, իբրեւ վկաներ աննախընթաց նախճիրի։ «Ո՛չ, չէր կարող այսպէս լինել, եթէ մի հզօր ձեռք յարատեւօրէն ու խղճի մտօք չվարէր ապանդը», ասաց մի անգամ Համոն, երբ խօսում էինք Ջարդերի մասին... Ու իմ առջեւ դարձեալ պատկերանում է Թալէաթի փը-

ARAM webaram.com

քուն, ինքնապահ դէմքը, որ մթութեան մէջ կարծես վեր է հանում բրգոտ թաթը...

Ա՛խ, կարել այդ ձեռքը ու թողնել, որ արիւնաքամ լինի հրէշը, որ կարող լինի զգալ ու հասկանալ իր կատարած ոճիրի ահաւոր չափերը... Հաւատա՞լ արդեօք, որ մի օր, երբեւիցէ, կը լինի մի արդար դատաստան... Հոգիս լեցւում է ջերմեռանդութեան մի զգացումով, որ յատուկ էր ինձ եօթը տարի առաջ այստեղ, պատից այն կողմը, իմ փոքրիկ ննջասենեակում, ուր ամէն գիշե՛ր մօրս թելադրութեամբ ես քնելուց առաջ մրմնջում էի՝ «Հայր մեր, որ յերկինս ես»...

Եւ, իբր թէ, ես եկել եմ մեր տուն շատ հեռու տեղերից, փոշու մէջ կորած երկարավիզ կօշիկներս հագած. Տէ՛ր Աստուած, ո՛րքան ճանապարհ եմ անցել: Սարեր ու ձորեր կտրելով: Վերջապէս հասել եմ Ղուլպաշին եւ այն տեղից ուղիղ գծով անշեղ քայլելով՝ ահաւասիկ դռել եմ մեր տունը: Դեռ ներս չմտած բարձրունների տակ տեսնում եմ մի գլուխ, որ ցատկռտելով, գլորուելով գալիս է դէպի ինձ: Մայրս է, մօրս գլուխը, բայց զարմանալի է, որ բաց է՝ փշոտ գլխակապը ականջների տակով հանդուցած ծոծրակին:

— «Աբի հո՞ն, որ չտեսնեն քեզ, զաւակս», ասում է նա ոտքերիս մօտ, շնչահատ:

— «Ո՞ւր, մայր»:

— «Հո՛ն, հո՛ն, պարտէզը, մացառների տակ, ամէնքս հոն պառկած ենք»:

— «Իսկ մարմինդ ո՞ւր է, մայր»:

— «Հո՛ն է, հո՛ն, զաւակս, շո՛ւտ»...

Ու գնում եմ ես մօրս գլխի յետեւից որ անհետանում է թուփերում... Իրաւ որ բոլորն էլ այստեղ են, մացառների տակ անշշուկ երկարած: Ահա եղբայրս.

— «Աւետի՛ս, բարեւ», շշնջում եմ ես...

— «Աւետի՛ս»... Սքսո՛... մեղմ հովի տակ սու-

ARAM webaram.com

լում են բարեթները։ Եղբայրս բաց աչքերով նայում է երկնքին, ու մօրս գլուխը քնել է՝ մարմնի մօտ նստած։

— Դուք այստեղ, այսպէ՞ս», մրմնջում եմ շշմած. «Հռիփսիմէ, Մարգար, Պայծառ, վե՛ր կացէք»։

Յանկարծ, եղբայրս նայում է ինձ ու ասում.

— «Դու ո՞վ ես եւ ի՞նչ ես ուզում մեզնից»։

— «Ձե՞ս յիշում», ասում եմ ժպտալ ջանալով։

— «Ո՛չ», ու եղբայրս մեղմօրէն բացասաբար շարժում է գլուխը։

Ամպերի միջից յանկարծ դուրս է ընկնում լուսինը ու գալուկ դէմքով նայում դէպի վար։ Նոր եմ տեսնում, որ եղբօրս գլուխը ջարդուած է։

— «Սողոմոնն եմ, Աւետի՛ս», ասում եմ զարհուրանքից սարսափած ու վար թեքելով ուզում գլուխը գրկել։ Բայց, յանկարծ, նրա դէմքը մթագնում է ու շուրթերին յայտնւում մի պաղած ժպիտ.

— «Ախ, դո՜ւ... այո՛, նման ես, բայց ո՞ւր էիր, երբ մենք փախանք այստեղ, ինչո՞ւ դու էլ պառկած չես մեզ հետ եւ ինչո՞ւ եկել ես ինձ փաղաքշելու դողի պէս դիշերը, գնա՛, գնա՛, ես չեմ ճանաչում քեզ»...

Ու ես տղու պէս ոտիզողորմ լաց եմ լինում՝ թփի տակ ծնկաչոք...

— Սողոմո՛ն...

Ընդոստ արթնցայ.

— Ա՛յ տղայ, ի՛նչ ես ցուլի պէս բառաչում, զոչեց Միսաքը։

Լուսանում էր...

ARAM webaram.com

ԿԱՑԾԱԿ ԱՌԱՔԵԼ

ARAM webaram.com

Գ. ԳԼՈՒԽ

ՄՈՒՐԱՏԻ ՀԵՏ

Առաւօտեան նեբկայացայ Մուրատին: Նրան տեսել էի միայն մի անգամ, եօթը տարի առաջ, այստեղ՝ Երզնկայում, Եկեղեաց հրապարակի վրայ, տպա Երզրոբզութեան Եկեղեցում, ուր նա խօսում էր խուռն բազմութեան առաջ թուրք յեղափոխութեան եւ «Օսմանեան ընդհանուր հայրենիքի» մասին: Այն ժամանակ նա բրոնզէ, ձուլածոյ կազմուածքով մէկն էր: Խորունկ, կրակոտ, անհանգիստ աչքերը կայծկլտում էին թաւ ու թանձր սեւ յօնքերի տակ: Առնական պարանոցի վրայ ունէր մի գլուխ, որի յետ սանտրուած խուրձի պէս առատ մազերը յիշեցնո՛ւմ էին դասապրքիս մէջ նկարուած առիւծի բաշը: Այժմ նախկին Մուրատից մնացել էին միայն աչքերը, մազերը: Դէմքին գոյացել էին կնճիռներ: Կորցրել էր աշխուժութիւնը, դարձել անժպիտ: Կայծկլտուն աչքերի մէջ մի ցաւ կար, շատ խորունկ մի ցաւ, որ լեզու չունի. հպարտ, տիրական դէմքը խեղճացել էր:

Ա՜յնքան շատ գործ կար եւ այնքան քիչ մարդ, որ Մուրատը անմիջապէս ինձ մոցրեց իր տղաների խմբի մէջ, որոնք տեղաւորուած էին Քրիստինեանց աղջկանց վարժարանում: Տղաների մէջ ամենից առաջ ուշադրութիւնս գրաւեց Վահրամ Տէր - Մանուէլեանը, որին անուանում էին «Զմշկածաղցի», նա ոչին էր Մուրատի կազմակերպած «որոնող խմբերի»: Բարձրահասակ,

ARAM webaram.com

ՍԵԲԱՍՏԱՑԻ ՄՈՒՐԱՏ

ARAM webaram.com

բարեձեւ, հազիւ 25 տարեկան մի հմայիչ երիտասարդ էր։ Առոյգ կազմուածքը յատուկ գրաւչութիւն էր տալիս նրան. լայն, քիչ դուրս ընկած ճակատի տակ փայլփլող մեծ, վառվռուն աչքերը ներշնչում էին բացարձակ վստահութիւն։ Իր յաղթ կազմուածքի զարդն էր դուրս ընկած կուրծքը, որ հանգստի պահերին գրեթէ միշտ ծածկում էր ջլապինդ թեւերը վրան խաչաձեւելով։ Քայլերը առնական, հաստատուն էին։ Պատասխանները՝ կարճ ու կտրուկ։ Կեցուածքը յարգալից եւ ազատողական, որ դիմացինը խօսի։ Գործի ժամանակ դէմքին վարանումի հետք չկար, լարուած ու կենտրոնացած ուշադրութեամբ լսում էր իրեն ուղղուած հրահանգները՝ խոհուն աչքերը Մուրատի դէմքին յառած եւ, առանց որեւէ ցուցական ինքնավստահութեան, գլխով թեթեւ հաստատական նշաններ անելով։ Նրա մէկ ոտքը Տերսիմ էր, միւսը՝ Երզնկա. յաջողել էր քիւրտերու հետ կապեր հաստատել, որոնց մէջ Մուրատի «մէկ հայ՝ մէկ ոսկի» ազդարարութիւնը լայն ժողովրդականութիւն էր ստացել։ Զմշկածագին ճշդրտորէն կատարում էր այդ հրահանգը՝ վճարելով քիւրտերի կողմից ներկայացուած ամէն մի հայի համար մէկ օսմանեան ոսկի եւ այդ միջոցով ամէն օր յայտնւում էին քաղաքում նոր ու նոր ազատագրուածներ։

Ոչ նուազ ուշագրաւ էր ճէպէճի Սարգիսը, որ գրկում էր ազատագրուածներին եւ արջի պէս բազուկների մէջ ճմլելով՝ բացագանչում. «Վա՛յ, որո՞ւ ես», առանց իմանալու, թէ ով է։ Զուարթ, կենսուրախ, յանդուգն, անվեհեր ճէպէճին Մուրատի ներկայութեան նորահարսի պէս էր։ Իրենց քաջութեամբ եւ անձնազոհութեամբ նրանից յետ չէին մնում քեմախցի (Ա.ւագ – վանքէն) Մխիթարը, բազառիճեցի Գալուստը, կովտունցի Մարտիրոսը, Ցարութիւն Զաչանեանը, Ա.ւետիս Մուշմուլեանը եւ այլն։ Սվաղ - Սամսոն – Բա-

ARAM webaram.com

թում գծով Մուրատի հետ փախած ընկերներից, Ցովնանից զատ, աշքի էին ընկնում Նշանը, Արմենակը, Վարդանը։ Վէրջինը ցուլի ուժ ունէր, բռնած ընկերոջ ակնթարթի մէջ դնում էր տակը ու վեր կենալով անձայն ծիծաղում՝ ոչխարի գմակի պէս շարժելով զանգուածային մարմինը։ Ընդհանրապէս բոլորն էլ անձնուէր, փորձուած, ամէն զոհողութեան պատրաստ երիտասարդներ էին։

Մուրատի մօտիկ գործակիցներն էին բժիշկ Արշակ Պօղոսեանը եւ գէնքի հին ընկեր Կայծակ - Առաքելը։ Բժիշկ Պօղոսեանը Քաղաքների Միութեան ներկայացուցիչն էր Երզնկայում։ Խնամում էր իրեն յանձնուած որբերին, հիւանդներին։ Արտաքնից դատելով հազիւ աշքի ընկնող բան կար վրան. խորհրդակցութիւններին հանդարտ նստած, թւում էր առանց լսելու մտքերով թափառում էր հեռուները։ Մտադրաղ, դալուկ դէմք ունէր, քիչ էր խօսում, կարճ նախադասութիւններով ու գրեթէ միշտ գործնական առաջարկ անելու առիթով։ Ընկերները մեծ ուշադրութեամբ էին լսում նրան։ Կայծակ - Առաքելը քառասունը անց, ջղերից ու ոսկորից կազմուած, արեւից խանձուած մորթով մի մարդ էր, որի մղած կռիւները Համիտի ռեժիմի դէմ յայտնի էին բոլորին. այժմ նա ջանասիրութեամբ նուիրուել էր «հայ հաւաքելու» գործին։ Հին յատկանիշներից մնացել էր գայլի պէս առաջ ցցուած ծնօտը։

Այս անձնուէր մարդկանց անդուլ աշխատանքները, մէկ երկու ամսուան մէջ, մեծ արդիւնք էին տուել. «Մէկ հայ՝ մէկ ոսկի» ազգարարութիւնը մեծ գործ առաւ։ Երջակայ քիւրտ գիւղերից հարիւրաւոր մարդիկ ազատուեցին գերութիւնից։ Բախտը ժպտաց նաեւ մեզ՝ եղբօր Միսաքին. գտնուեց նրա զաւակներից տասը տարեկան Արմենուհին։

Կարճ ժամանակում Երզնկայի թափուր հայկական

ARAM webaram.com

թաղը սկսեց նորից կեանք առնել։ Կատարւում էին վերաշինութեան տենդային աշխատանքներ։ Աւերակ տները նորոգւում էին. ծուխը վերատին բարձրանում էր երդիքներից, դաշտերը հերկւում էին. պատրաստւում էր աշնանային ցանքը. անօրինակ կենսունակութիւն էին արտայայտում օրը օրին իրենց յարկի տակ դարձող մեր ժողովուրդի մնացորդները։

Երգնկա հասած տեղեկութիւններից երեւում էր, որ նման շարժումով համակուած էին բոլոր վերապրբաւուած վայրերը։ Ըստ այդ տեղեկութիւնների, ամէն տեղ վերաշինւում էին գիւղերը, մշակուած արտերը ծածկւում էին կանաչով։ Աշխատանքը ամէն տեղ եռում էր։ Հայ գիւղացին ամէն տեղ քրտինքով ողողում էր հայրենի հողը եւ ոգեւորութեամբ վերաշինում այն, ինչ կործանել էր թշնամին եւ պատերազմը։ Գոյութիւն ունէր վերարնակեցման ծրագիր, այդ գործը վարում վարչութիւն։ Յատկացուած էին մեծագումար վարկեր եւ ձեռք առնուած միջոցներ, որ գաղթականութիւնը վերադառնայ իր տեղերը։ Բացի կառավարական հաստատութիւններից, գրաւուած վայրերում աշխատում էին բարեգործական եւ մշակութային մարմիններ՝ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, Եդրայրական Օգնութեան Կոմիտէն, Մոսկուայի Կոմիտէն, Քաղաքների Միութիւնը. Գաղթականական Կենտրոնական Կոմիտէն, զանազան Հայրենակցական Միութիւններ եւ այլն։ Դիտելով այդ խաղաղ աշխատանքի ու վերաշինութեան մի նմոյշը Եր գրնկայում, թւում էր, թէ հայ ժողովուրդի գոյութեան դէմ նիւթուած դաւերը անցել են ապարդիւն։

Բայց այդ՝ խնդրի մէկ երեսն էր։ Դեռ նախորդ տարուայ Յունիսի նահանջից եւ հայ կամաւորական բանակի ցրւումից յետոյ, ռուս միապետութեան վերաբերմունքը դէպի հայերը փոխուել էր։ 1916ի ձմրան

ARAM webaram.com

այլևս չէր խօսում «Հայկական Ինքնավարութեան» մասին։ Ըստ տեղեկութիւնների, այժմ Ռուսաստանում գտնում էին բաւարար՝ հայերին «դպրոցական, եկեղեցական ինքնավարութիւն» շնորհել եւ այն էլ «որքան այդ թոյլ կը տան տեղական պայմանները»։ Այդ ոգով էլ վարում էր գործերը, գրաւման շրջաններում, Կովկասի կառավարիչ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը։ Այդ շրջաններում նրա կողմից նշանակուած ընդհանուր նահանգապետ գօրավար Պեշկովը լեցնում էր հայաբնակ վայրերը հայատեաց պաշտօնեաներով։

Միապետութեան այդ կարգի գործակալներից էին Երզնկայի զինուորական ուժերի հրամանատար գօրավար Կալեմինը եւ սպայակոյտի պետ Լաստոչկինը։ Քաղաքի ոստիկանապետն էր Թրքահպատակ մի վրացի։ Թուրք բանակի նախկին գնդապետ Խայրի բէյը նշանակուած էր Կալեմինի կողմից քաղաքապլուխ։ Թուրք լրտեսներ, որոնք մնացել էին Երզնկայում քաղաքացիական պաշտօնեայի հանգամանքով, Թուրքերի նահանջից յետոյ, վիսում էին ամէն տեղ։ Կարիքի դէպքում, Թուրքերը ուղարկում էին մարդիկ նաեւ բանակից. այսպէս, օրինակ, Քէմախի ճակատի 8րդ գնդի հրամանատար Մուսթաֆա Վէֆա բէյը, Խայրի բէյի նամակ – հրաւէրի վրայ, իբր թէ «փախաւ» Թրքական բանակից, իբրեւ Իթթիհատական կառավարութեան «հակառակորդ» եւ Տերսիմում հաստատուած՝ գրգռում էր հետախուզութեամբ իր երկրի օգտին։ Ահա այս թեր ու դէմ տուեալներով էր, որ մենք գիմաւորեցինք նոր տարին Երզնկայում։

* * *

Փետրուարի սկիզբներին, կարճատեւ հիւանդութիւնից յետոյ, Երզնկայում մահացաւ Կայծակ Առա-

ARAM webaram.com

քելը՝ վաստակաւոր յեղափոխականը, բոլում մահառիթ կռիւների առաջնորդող ոգին, որ գիւմուշխանեցի Աւոյի պէս, իր մահկանացուն կնքեց անկողնում։ Նա պառկած էր անշուք գազաղի մէջ՝ ծանրօրէն ընկած բարձին, գլուխը կքած, մեղրամոմի պէս գեղին ճակատը բաց ու վարի ծնօտը քիչ առաջ նետած. դէմքի արտայայտութիւնը աւելի ուշադրաւ, քան ողջ եղած ժամանակ։ Այդ արտայայտութիւնը կարծես ասում էր, թէ ինչ որ պէտք է, ինքը արդէն կատարել է ու մեռել, որովհետեւ այլեւս գործ չկայ։

Մեզ համար այդ մահը հանդիսացաւ նշանակալից դէպքերի սկզբնաւորութիւն։ Ռուսաստանում սկսուեց Փետրուարեան յեղափոխութիւնը։ Եւրոպական ճակատներում ռուս զէնքի տեւական անյաջողութիւնները մէկ կողմից, պարենաւորման դժուարութիւնները միւս կողմից, մայրաքաղաքում ծնունդ առին տարբերային շարժումների, որոնք, յանկարծ ծաւալուելով, կազմեցին ռուս առաջին յեղափոխութեան շարունակութիւնը։ Փետրուարի 28ին գահընկեց եղաւ ցարը։ Բայց խորունկ ընկերային հիմքեր ունեցող շարժումը միայն քաղաքական փոփոխութիւններով չէր կարող գոհանալ։ Յեղափոխութիւնը խորացաւ ու լայնացաւ, համակելով նաեւ զէնքի տակ եղած զինուորութիւնը եւ քայքայելով բանակը։ Այս տեսակէտից վճռական դեր ունեցաւ Պետրոգրատի բանուորական խորհրդի գործադիր կոմիտէի Մարտ 11ի «հրամանի թիւ առաջինը», որով գործող բանակների մէջ ներմուծւում էին ընտրովի մարմիններ՝ հրամանատարական կազմի վրայ հսկելու եւ առհասարակ զինուորական գործը այդ մարմիններին ենթարկելու նպատակով։ Կարճ ժամանակում կարգապահութիւնը չքացաւ, եւ բանակը սկսեց արագօրէն քայքայուել։ Մարտ եւ Ապրիլ ամիսները անցան զանազան կուսակցութիւնների, հոսանքների, կառա-

ARAM webaram.com

վարական շրջանների ներքին պայքարներով։ Այս պայմաններում բանուորա - գինուորական զանգուածները երես դարձրին պատերազմից եւ Յունիսին սկսուած ռուսական յարձակումը եւրոպական ճակատում, նախնական մէկ երկու յաջողութիւններից յետոյ, դիջեց՝ զարկ տալով զօրքերի դասալքութեան ու ստեղծելով նոր եւ աւելի մեծ շարժումներ թիկունքում։ Օգոստոսին, զօրավար Կորնիլովի ելոյթից յետոյ, ռուս բանակը այլեւս կազմալուծուած էր եւ անընդունակ՝ շարունակելու պատերազմը։

Ռուսաստանի այս դէպքերը չէին կարող անհետեւանք մնալ ասիական ճակատների համար եւս, եւ նրանց ազդեցութիւնը զգացւում էր Երզնկայում, դեռ զարնան։ Հայրենիքից հեռու, երեք տարուայ կռիւներից յոգնած, զաղաղած զինուորները սկսեցին լքել ճակատները ու շարժուել դէպի տուն։ Շարժումը յատկապէս ուժեղ էր Երզնկայի շրջանում։

Մեզ համար ստեղծւում էր խիստ ծանր կացութիւն. օրը օրին մերկացուող ճակատները բռնելու համար անհրաժեշտ էին ուժեր, որոնք չկային։ Քանի դեռ ռուս զօրքի դասալքութիւնը մասնակի բնոյթ ունէր, չէր զգացւում կացութեան ահաւորութիւնը։ Բայց երբ Ռուսաստանի գանագան կողմերում եւ Անդրկովկասում սկսեցին զարգանալ կենտրոնախոյս ուժերը եւ ծայր տուին քաղաքացիական ընդհարումները, կացութիւնը գնալով ծանրացաւ։

Այս պայմանների մէջ էր, որ ծաւալուեց Հոկտեմբերեան յեղափոխութիւնը։ Կալուածատիրական հողերի բռնագրաւման յեղափոխական իրաւունքն ու անմիջական պատուաւոր հաշտութեան նշանախօսքերը զանգուածային շարժման մէջ դրին ճակատում գտնուած զինուորներին։ Ռուսաստանի համար պատերազմը վերջացած էր։ Խորհրդային իշխանութիւնը առաջարկում

ARAM webaram.com

էր տանց հողային նուաճումների եւ պատերազմական տուգանքի պատուաւոր դեմոկրատական հաշտութիւն։ Երզնկան կազմում էր ռուս զէնքով նուաճուած հողերի մի մասը, որ հաշտութեան պարագային պէտք է յետ տրուէր Թուրքերին։ Անգամ ճակատում մնացած սակաւաթիւ ռուս զինուորների համար այլեւս արժեզուրկ էր նրա պաշտպանութիւնը։ Ու նրանք աճապարում էին տուն, իրենց բաժին հողը ստանալու եւ իրենց ընտանիքների մօտ լինելու համար։

Զուրկ՝ միջոցներից իրական աջակցութիւնից, խապտո մնկուսացած, դիմացը ունենալով Թրքական բանակները, Թիկունքում՝ Թշնամի քիւրտերը, մենք փորձեցինք մեր չնչին ուժերով բռնել լքուած ճակատը, տէր կանգնել ռուսների Թողած անհաշիւ ռազմամթերքին, փոխարինել տեղական իշխանութիւնների պաշտօնները։ Սակայն, դէպքերի ընթացքը ունէր իր ուղին, Նոյեմբեր 17ին հասատատուեց զինադադար Աւստրիոյ, Գերմանիոյ եւ Ռուսաստանի միջեւ։ Նոյն օրը, կովկասեան բանակի ընդհանուր հրամանատարին նոյն առաջարկով դիմում արաւ Թուրք ուժերի հրամանատար Վէհիբ փաշան։ Դեկտեմբերի կէսերին, ռուս զինուորական մի յանձնաժողովի հետ, Երզնկա հասաւ Ա. Զամալեանը զինադադար կնքելու համար։ Աչքաբաց հայ հասարակական յեղափոխական գործիչը չէր Թագցնում կացութեան լրջութիւնը։ Սակայն, առանց այդ էլ շատ պարզ էր, որ եթէ ռուս զօրքի բարոյալքումն ու դէպի տուն դարձը շարունակուի նոյն Թափով, անկարող պիտի լինենք մեր ցանցառ ուժերով պաշտպանել աւելի քան 500 քիլոմէտր մի ճակատ, որ երկարում էր Սեւ ծովից — Գելբիտ - Երզնկա - Խնուս - Վան ուղղութեամբ։ Ըստ Զամալեանի, զինադադարը անհրաժեշտ էր Թուրքերին. նախ՝ ռուսական ճակատի քայքայմանը նպաստելու, այդպէս, ուժերի վերաբաշխում կատարի-

ARAM webaram.com

լով, անցնելու յարձակման։ Ոչ մի յոյս չկար Անդրկովկասում կազմուած կոմիսարների խորհրդից՝ ճակատը պաշտպանելու գործում։ Վրացիները ձգտումը էին անկախութեան, իսկ թաթարները Թուրքերի կողմն էին։ Խիստ մտահոգիչ էին յատկապէս տեղեկութիւնները Կովկասում ծայր տուած թաթարական շարժումների մասին։ Կովկասի մահմեդականութիւնը պատրաստուում էր զրկարաց ընդունելու Թրքական բանակները։ Հին ռեժիմի օրերին զսպուած Թրքասիրութիւնը այժմ ստացել էր հրապարակային բնոյթ։ Ամէն տեղ սկսուել էին մահմեդական շարժումներ, որոնք ծաւալում ու խորացնում էին երկրի մէջ ստեղծուած քաոսը։ Շարժումները վարում էին Թրքական գործակալները։ Ներքանք առաջ էին բերում խռովութիւններ եւ կատարում էին աւազակային յարձակումներ գնացքների, պարենակիր խմբերի, տուն դարձող ռուս զինուորների եւ հայ ազգաբնակութեան վրայ։ Ցաճախադէպ էին այդ շարժումները յատկապէս Կարսի, Երեւանի, Գանձակի եւ Էրզրումի շրջաններում։

Դեկտեմբերի 18ին հասատատուեց զինադադարը, գնդապետ Էօմէր Լութֆի բէյի և զօրավար Վ.Բիշինակու կողմից։ Միաժամանակ յետ կանչուեց Երզնկայի ռուսական ուժերի հրամանատար զօրավար Լեախովը, որ փոխարինել էլ զօրավար Կալեռինին, Փետրուարեան յեղափոխութիւնից ի վեր։ Լեախովի մեկնումը փատօրէն դարձաւ Երզնկայի ճակատի մերկացում։ Ռուս մարդու համար այլեւս աննպատակ էր մնաց դիրքերում, երբ մէկ կողմից հազարաւոր վերստեր հեռու իր երկիրը տակն ու վրայ էր եղել, իսկ միւս կողմից յայտնի էր, որ գրաւուած հողերը պիտի վերադարձուէին Թուրքերին։

Լեախովի մեկնումից յետոյ Երզնկայում գտնուող ռուսական զօրասիներից հազիւ մնացել էին 500—600

ARAM webaram.com

մարդ եւ մի քանի հայ եւ ռուս սպաներ, որոնք այլեւս ազդեցութիւն չունէին ռուս զօրքի այդ մնացորդների վրայ։ Քիչ – շատ կարգ ու կանոն մտաւ նրանց մէջ Յունուարի կէսերին, երբ մեզ մօտ յայտնուեց գնդապետ Մորելը, որ եկել էր Թիֆլիսից՝ ստանձնելու նրանց հրամանատարութիւնը։

Դէպքերի այս ընթացքը պարտադրում էր մեզ քաղաքական մի այլ ուղի, բայց մենք մնում էինք կառչած մինչեւ վերջին շունչ մեր երկիրը պաշտպանելու որոշման։ Անմիջապէս յայտարարուեց Երզնկայի հայութեան ընդհանուր զօրակոչ, մինչեւ 70 տարեկանները։ Շինարար աշխատանքի լծուած եւ հազիւ իր կործանուած տները վերանորոգած շրջանի գիւղերի վերապրող արի հայ բնակչութիւնը այժմ թափուել էր Առաջնորդարանի հրապարակը՝ նորից զէնքի դիմելու համար։ Այդ օրը Տրապիզոնի ճակատի վրայ գտնուող ռուսահայ զինուորներից 200 հոգի հասան Երզնկա։ Կարծես մի ամբողջ բանակ էր եկել. խանդավառութիւնը շատ մեծ էր. ենթադրւում էր, որ նոր, աւելի մեծ խմբեր պիտի հասնին։ Զօրակոչի ենթակաները ոգեւորութեամբ ձեռնարկեցին գործի, օրն ի բուն կատարում էին զինուորական մարզանքներ։ Այդ գործով զբաղւում էին Երզնկայում մնացած նախկին ռուս բանակի հայ սպաները, որոնց մէջ էին գաբարպցի այն երկու երիտասարդ սպաները՝ Տէր - Ակոբոմն ու Տէր - Պետրոսովը, որոնց հետ Կարսից ճամբորդեցի Էրզրում, մի տարի առաջ։ Կային եւ ուրիշներ՝ ենթասպայ Դանիէլեանը, զինուորական բժիշկ Արսլանեանը, Կաֆեանը եւայլն։ Մեզ հետ մնացել էին նաեւ մի քանի ռուս սպաներ, որոնց մէջ իր եռանդով եւ անձնազոհութեամբ աչքի էր ընկնում Մուզովը։

Երզնկայի մէջ հաստատուել էր հայկական կառավարութեան պէս մի բան, որի պետն էր Մուրատը։ Նա

ARAM webaram.com

քաղաքական էր նշանակել Թուրք Եուսուֆ էֆէնտին, կարգադրել էր, որ բացուին մզկիթները եւ Թուրքերը ազատօրէն կատարեն իրենց կրօնական պաշտամունքը. թոշակ էր սահմանել հոջաներին, մուէզիններին, իւլէմաներին: Նա ջանք չխնայեց սիրաշահելու տեղական Թուրքերին, բարեկամութիւն հաստատելու Դերսիմի քրտերի հետ, բայց այդ ջանքերը չէին կարող արդիւնք տալ, որովհետեւ ճակատը պաշտպանելու համար ուժ չկար: 1918ի սկզբներին, 300 գումարտակներից բաղկացած կովկասեան ռուս բանակից ճակատներում մնացել էին երեքուն խմբակներ: Սրա դիմաց Թրքական ուժերը, անհրաժեշտ հրետանիով եւ պատերազմական սարք ու կարգով, կազմում էին 142 գումարտակ հեծեւակ եւ 41 գումարտակ հեծելազօր, մօտ 150,000 կռուող: Այս հսկայ զանգուածին դէմ հայկական ուժերը կազմում էին ընդամէնը վեց գումարտակ: Դրանցից Երզնկայի ճակատում կար ընդամէնը 1200 սուին, որից 200ը յատկացուած էր կապի եւ հաղորդակցութեան պաշտպանութեան: Սրա հետ միասին, Երզնկայի զօրախումբը խստօր մեկուսացած էր, գտնուած Էրզրումի բերդից 150 քիլոմետր տարածութեամբ:

Մարդ չկար, որ չհասկնար մեր կացութեան այս դժուարութիւնը, բայց բոլորս էլ գօտեպնդուած էինք այն յոյսերով, թէ շուտով օգնական խմբեր պիտի հասնին: Օր չէր անցնում, որ այս առթիւ դիմումներ չանէր Մուրատը հեռախօսով Էրզրում՝ գնդապետ Թորգոմին, որ այդ գործի վարիչն էր այնտեղ: Բայց դիմումները անցնում էին ապարդիւն:

Մի օր կիւրինցի Սահակը վազելով հասաւ մեզ. փնտռում էր Մուրատին, որ բժ. Ա. Պօղոսեանի մօտ էր: Լուր տուինք, բայց մենք էլ թունդ եղանք: Նրա հետ ուզում էր խօսել գնդապետ Թորգոմը, տեսակոյս չկար, որ օգնական խմբեր էին գալիս: Խմբուել էինք

ARAM webaram.com

գրասենեակի դրան մօտ, անհամբեր էինք հասկանալու, թէ ո՛րքան են հասնող ուժերը, որոնցից են դալիս, ե՛րբ ուր կը հասնին։ Վերայ հասաւ Մուրատը բժիշկ Ա. Պօղոսեանի հետ։ Վազուց մթագնած զէմքը ճառագայթում էր, այնքան յուզուած էր, որ մեր բարեւելն էլ չնկատեց։ Ձեռք առնելով հեռախօսի խողովակը՝ զոչեց.

— Այո՛, այո՛, ես եմ, Մուրատը, բարե՛ւ, բարե՛ւ, գնդապետ, ճամբայ ելա՞ծ են... Ի՞նչ... Հասկացայ... Ի՞նչ անկախութիւն։

Քիչ յետոյ իմացանք, որ գնդապետ Թորգոմը յայտնել է, թէ վաղը, առաւօտեան ժամը 10ին, Էրզրումի մէջ շուքով պիտի յայտարարի Հայաստանի անկախութիւնը եւ խնդրում է Մուրատին նոյն պահին միւնոյնը կատարել Երզնկայում...

* * *

Մեր այս կացութեան լաւ ծանօթ թուրքերը սկսեցին առիթներ ստեղծել գինադադարը խախտելու։ Յունարի կէսերին նրանք շարժման մէջ դրին իրենց գործակից քիւրտերին, որոնք սկսեցին յարձակումներ գործել Երզնկայի մեր ուժերի թիկունքում։ Բայց ամէն տեղ ուժգին հակահարուած ստացան ու գոհեր տալով քաշուեցին։

Զգալով, որ եթէ քրտական շարժումը մեր թիկունքում ծաւալուի, անել կացութեան պիտի մատնուենք, Մուրատը ջանք չխնայեց հասկացողութեան գալու քիւրտ աշիրեթապետների հետ։ Ամիրխանեանը եւ Չմշկածագցին ճամբուեցին նրանց մօտ բանագնացի հանգամանքով ու մի օր նրանց առաջնորդութեամբ, Մուրատի ճամբած կտրքին մէջ բռնված, քանի չափ գինուած քիւրտերով շրջապատուած, Երզնկայում յայտնուեցին Դերսիմի Հասան և Սիւլէյման ագաները։

ARAM webaram.com

Նրանց ընծայուեցին իշխանավայել պատիւներ, որքան այդ կարելի էր մեր պայմաններում։ Հիւրասիրութիւններից յետոյ տեղի ունեցան բարեհաճ բանակցութիւններ։ Յաջորդ օրը քիւրտ պետերը մէկ-մէկ ձի եւ մէկ-մէկ ժամացոյց նուէր ստացան եւ դոհ որբտով մեկնեցին։ Նոյն ձեւի յարաբերութիւններ մշակելու փորձեր եղան եւ Դերջանի քիւրտերից փոքրրդանցի Մէմիշ ագայի մարդկանց հետ։ Քաղաքում որեւէ անպատեհութեան տեղիք չտալու համար, ձեռք առնուեցին միջոցներ, թրքական թաղերի մէջ գիշեր-ցերեկ հսկողութեան չքջուն պահակներ, եւ թուրք կանանց, աղջիկների անցուդարձը փողոցներում արգիլուեց։

Բայց արդիւնք չունեցան այս ջանքերն ու զգուշական միջոցները. մեր ուժը պահանջուած ապրեցութիւնը չէր դրծում քիւրտերի վրայ, եւ նրանց յարձակումները կանգ չառան։ Զինադադարը խախտելու հետամուտ՝ թրքական հրամանատարութիւնը սկսեց օգտագործել իրեն իսկ ստղրանքներով սկսուած հայ-քրտական ընդհարումները, որոնց ընթացքում գոհեր ունեցանք թէ մենք եւ թէ քիւրտերը։ Օր չէր անցնում, որ Էրզրումում մնացած ռուս ուժերի հրամանատար զօրավար Օտիշիլիծէն չուղղէր մեզ թուրքերի կողմից ստացուած որեւէ մեղադրանք. իբր թէ, մենք Յունուարի 12ին հրդեհել ենք Երզնկայից 18 քիլոմէտր դէպի հարաւ — արեւելք ընկած թրքական Զեկկիպ գիւղը. իբր թէ, բռնաբարել ենք Աբտասից դէպի հարաւ — արեւելք Քէսկ թրքական գիւղի կանանց եւ տղամարդկանց կոտորել. իբր թէ, Երզնկայի ռուս զօրամասը հեռանալուց յետոյ, շրջանում կատարուել են մասնակի ոտանութիւններ։

Ապա՝ այս անհեթեթ մեղադրանքները սկսեցին ստանալ մտածուած յերիւրանքների բնոյթ. իբր թէ, Երզնկայի թուրքերից «շատերի» թեւերը կապած՝ քը-

ARAM webaram.com

չել ենք զինուորական հանրակացարանները եւ այնտեղ բոլորին սրի քաշել. իբր թէ, Յունուարի 28ին «բաղմաթիւ թուրքեր ողջ – ողջ այրել ենք Եկեղեաց հրապարակում». իբր թէ, Երզնկայի շրջակայքում ամէն տեղ այրել ենք թրքական մզկիթները. իբր թէ, Գիւմիւշխանէից զէպի հարաւ ճամբու վրայ կոտորել ենք անհաշիւ թուրքեր:

Վերջապէս, նրանց երեւակայութիւնը այնքան բորբոքուեց, որ սկսեցին բողոքագրերին տալ ծաւալուն «հայկական խժդուժութիւնների» բնոյթ, որոնց մէջ այժմ նկարագրում էին զէպքեր հայկական ջարդերի հարազատ ընդօրինակութեամբ. իբր թէ, Երզնկայում հաւաքել ենք 650 թուրքեր եւ անյայտ ուղղութեամբ տեղահանել. իբր թէ, Վեհիբ բէյի տան մէջ լեցրել ենք 500 թուրքեր եւ տունը չորս կողմից հրդեհել. իբր թէ, նոյն ձեւով լեցրել ենք երեք խոշոր տներ թուրք կանանցով, երեխաներով ու բոլորին այրել. իբր թէ, միւսյն քաղաքում հազարից աւելի տներ ենք հրդեհել եւ այլն: Իրողութիւնը այն էր, որ քրտական յարձակումները զսպելու ժամանակ թուրքերն էլ ունեցան զոհեր, որոնց թիւը 200ը չէր անցնում:

Փետրուարի 10ին ընդհատուեցին Քրեստում սկըսուած ռուս – գերմանական բանակցութիւնները, որոնց արդիւնքին սպասում էինք ահ ու դողով: Երկու օր յետոյ Վէհիբ փաշան խախտեց զինադադարը եւ «հայկական չարագործ»ներին պատժելու պատրուակով անցաւ յարձակման: Իրիկուան դէմ, Զարտախլուի մեր պահակախմբերը ենթարկուեցին հրացանաձգութեան թրքական հետախոյզների կողմից եւ անմիջապէս յայտնուեցին 100 հետեւակ, 16 ձիաւոր թուրք զինուորներ, որոնք ուզում էին անցնիլ մեր պահակախմբերի թիկունքը՝ հիւսիս – արեւելքից: Այդ դանդաղ կողմերից յայտնուեցին ուրիշ ուժեր: Սկսուեց մի անհաւասար

ARAM webaram.com

գոտեմարտ թշնամու գերազանց ուժերի հետ։ Առաջին իսկ վայրկեանից պարզ էր, որ մեր դիմադրութիւնը անյոյս էր։ Անհրաժեշտ էր միայն ժամանակ շահիլ, փրկելու ժողովուրդը եւ նահանջի ճանապարհը ապահովելու։ Անմահների պէս էին կռուում բոլորը, մանաւանդ քեմախցի Մխիթարը, Գալուստ, Ճէպէճի Սարգիսը եւ Յովհաննը։

Բայց ի՞նչ կարելի էր անել հազար մարդով թուրք կանոնաւոր բանակին եւ քրտական հորդաներին դէմ։ Բարեբախտաբար Մուրատը, չնայած մեր անյոյս կացութեան, չէր կորցնում իր պաղարիւնութիւնը եւ որքան ծանրանում էր մեր վիճակը, այնքան աւելի դառնում էր շրջահայեաց։ Անվերջ վերաբաշխելով մեր սակաւաթիւ ուժերը, օգնական դինուորներ դատելով մեզնից՝ կամուրջի, Վաղաւերի եւ Քեմախի ճանապարհապահ խմբերին, որոնց վիճակը աւելի քան ծանր էր, նա յաջողեց կասեցնել յառաջ խաղացող թշնամուն, որ յետ քաշուեց՝ սպասելով լուսանալուն։

Առաւօտեան Քեմախի խճուղու մեր պահակախումբը ենթարկուեց 200 հետեւակ, 25 ձիաւոր թուրք զինուորների յարձակման։ Կասեցնելով թուրքերի շարժումը, պահակախումբը քաշուեց դէպի Երզնկայի հարաւ-արեւմտեան ծայրամասը։ Ժամը 7-ին, 700 հոգուց բաղկացած թրքական մի զօրամաս Քեմախի խճուղիով շարժուեց դէպի Երզնկա։ Քաղաքից 10 — 12 քիլոմէտրի վրայ, այդ զօրամասը ուղղուեց դէպի Խաչխաշ եւ Վասկերտ գիւղերը, որոնք գտնուում են Երզնկայի արեւմտեան ծայրամասից նոյնքան հեռու։ Այնուհետեւ թուրք զօրքերի շարժման հետախուզութիւնը դժուարացաւ սաստիկ ձիւնի պատճառով։ Կէսօրից յետոյ, ժամը 2-ին, չորս - հինգ քիլոմետր հեռաւորութեան վրայ նկատուեց քաղաքի արեւմտեան ու հարաւային ծայրամասերի վրայ

ARAM webaram.com

յարձակու

յանկարծ նա թափով վերսկսեց յարձակումը. գնդակ-ները կարկուտի պէս թափւում էին քաղաքում: Մարդիկ, հնամաչ վերարկուներով, վերմակներով, սփռոց-ներով պարուրուած, ընկնում, կանգնում էին ու խելագարի պէս վազում. կանայք, երեխաները շալակած, լաց ու կոծով հեռւում էին նրանց:

Մի ժամ չանցած նահանջի կարաւանը շարժուեց: Վեց հազար մարդ՝ հաշուելով նաեւ զինուորներին: Թուրքերը կրնկակոխ մտնում էին քաղաք, ուր մնացել էին ծանր վիրաւորներ եւ մի քանի պառաւ կանայք, որոնք նախամեծար համարեցին մեռնել իրենց ծննդավայրում...

* * *

Նահանջը առաջնորդում էր Գնդապետ Մորելը: Մուրատը իր ձիաւորներով պաշտպանում էր թիկունքը: Թնդանօթներն ու գնդացիրները բաշխուած էին առաջապահների եւ յետապահների միջեւ: Առջեւն էին գնում անիւաւոր մթերատայները: Մնացած հայ, ռուս զինուորները շարժւում էին զապթիաների հետ: Զարհուրելի էր տեսարանը. ցնցոտիների մէջ պարուրուած կանայք, երեխաներ, լալագին, սարսափահար, ձիւնների մէջ ընկնելով ելնելով գնում էին: Փոքրիկները, մեծ մարդու պէս, հասկանում էին ամէն բան. նրանք պահանջ ու արտունջ չունէին, ցրտից կարկամած լուրջ ու ինքնամփոփ՝ գնում էին կամ հարիւրների պէս հարազատների յետեւից վազում, ոմանք ցրտից ձեռքերը պահել էին կրծքին, մէջքին խաչաձեւ կապուած լաթերի տակ ու շարժուն խաղալիքների տեսք առել: Դրանցից միշտ մէկն ու մէկին կարելի էր տեսնել ճէպէճու ձիուն վրայ, նա շփում էր պաղածների

ARAM webaram.com

քիթն ու բերանը, ձեռքն ու ոտքը եւ խրախուսելով վար դնում։

Հազիւ անցել էինք երկու ժամուայ ճանապարհ, երբ Բթառիճ գիւղի լեռներից քիւրտերը կրակ բացին մեր վրայ։ Հանդիպելով մեր կողմից արագ ու ուժեղ դիմադրութեան, նրանք ցրուեցին։ Բայց երբ մօտեցանք Յան գիւղի շրջանին, երկու կողմից սկսուեց բուռն հրացանաձգութիւն. միաժամանակ կրակ սկսուեց նաեւ թիկունքից։ Անկարգրելի խուճապ առաջացաւ. ընկնողի, վազողի, ճչացողի հաշիւը չկար։ Երկար տեւեց կռիւը, մինչեւ վրայ հասաւ մութը։ Զիւնը դադարել էր. պարզ ու վճիտ գիշեր էր, քարը ճաթեցնելու աստիճան ցուրտ, օդը պաղպաղակի պէս մարդու բերանում հալում էր. հիւսիսային ցրտաշունչ մի քամի էր փչում լեռներից։ Որքան էլ մարդիկ ջարդուած էին, բայց մի վայրկեան անգամ չէին կանգ առնում դերծ մնալու համար սառչելու անխուսափելի վտանգից։

Կէս գիշերը անց, կռուի բռնուեցինք Նորկախ եւ Իրագուխ գիւղերի յարակից բարձունքներից յարձակուող քիւրտերի հետ։ Գաղթող ժողովուրդի երթը մատնում էր մեզ, այնինչ քրտերը նախապէս բռնել էին անմատչելի դիրքեր։ Այդ պայմաններում տեւական կռուի նատել՝ հնարաւոր չէր. ժողովուրդը սառելով պիտի մահանար։ Առաջ շարժուել վտանգաւոր էր առանց իմանալու, թէ ի՞նչ է սպասում մեզ՝ դիմացը։ Մնում էր մի ելք, կռուելով անցնել՝ անտես առնելով զոհերը, և հետախոյզներ ճամբել առաջ։ Գիշերային այդ թոհ ու բոհի մէջ Մուրատը գոչեց.

— Տղա՛ք, ո՞վ կայ ձեր մէջ, որ կ՚ուզէ այս ժողովուրդի կեանքը փրկել։

— Ե՛ս, ձայն տուեց չմշկածագցին, որ լաւ ծանօթ էր այդ շրջանին։

Նրան ընկերացան կիւրինցի Սահակը ու քաջարի

ARAM webaram.com

յիսնապետ Մուրզովը՝ հպարտագիտակ ռուս զինուորականներից մէկը, որ իր բախտը անդարձ կապել էր մեզ հետ։ Նրանք, ձորի փէշերը քերելով, անհետացան կիսախաւարի մէջ։ Հրացանաձգութիւնը դեռ շարունակւում էր, բայց չէինք կարող երկարել։ Փորձեցինք առաջ շարժուիլ, սակայն քրտերը սասկացրին կրակը։ Պարզ էր, որ նրանք ուզում էին մեզ այդտեղ պահել մինչեւ լոյսը բացուի։ Մուրատը դիմեց գնդացիրների օգնութեան. նրանց անընդհատ ճարճատիւնների տակ ժողովուրդը առաջ մղուեց։ Մանր կռիւ էր, բայց թեթեւ անցանք. ունեցանք ընդամէնը հինգ սպանուած եւ մի քանի վիրաւոր։ Ցեռեւի, դիմացի բարձունքներից դեռ հասնում էին մեզ հրացանների որոտը, բայց վերտանգը արդէն անցել էր։ Կիրճերի մէջ սեղմուած Ենիրատը շշկուել էր ու սառոյցների տակ թաղնուել. տեղ-տեղ սառոյցը անզօր է եղել յաղթահարելու գետը, եւ երբեմն հասնում էր մեզ ջրերի միօրինակ դլդլոցը։ Առջեւից երբեմն հասնում էին ճիչ ու աղաղակներ, բայց դրանք սովորական էին այլեւս. մէկն ու մէկը սառել կամ մեռել էր։ Ցանկարծ, մեր առջեւ ցցուեց Սահակը, չմշկածագցին եւ յիսնապետ Մուրզովը սպանուել էին։

— Ա՛յ քեզ խարար, ծօ ի՞նչպէս սպանուեցին, շրջմած գոչեց ձէպէճին։

— Սպանուելը քանի՞ տեսակ կը լինի։

— Վա՛յ, տունդ չքանդուի...

Ձէպէճին լաց եղաւ։

Ընկերացայ Սահակին դէպի յետ, Մուրատի մօտ, որ լսեց Սահակի կարճ պատմութիւնը՝ աչքերը խուփ, կարծես քնած էր, միայն դէմքի թեթեւ կծկումներից կարելի էր հասկանալ, որ լսում էր։

Աղջամուղջին մեր դիմաց յայտնուեց սպանուած Վահրամի արաբական նժոյգը, որ չփոթի վազքով մօտենում էր մեզ։ Ցուրտը սառեցել էր, լուսասաղը

ARAM webaram.com

յայտնուեց եւ սկսեց բարձրանալ։ Արեւելքը քիչ - քիչ շառագունում էր. հեռուն հորիզոնից կախուած երկաբաւուն ամպերը շարք – շարք բոցավառւում էին։ Լուսացաւ, վարը ճանապարհին ընկած էր մի գիակ։ Մառուզոմն ու ձին չկային։ Զմշկածաղցին երկարել էր ձիւնի մէջ մէջքի վրայ, ձեռքի մէկը հորիզոնաձեւ գլխից վեր նետած։ Կարծես քնած է։ Ո՞վ էր, որ չէր սպաշառում նրան...

Հասանք Զելիկ։ Ցրտից պաղած մանուկների, անպա՛մ մեծերի, լացն ու կոծը առեղծել էր իրարանցում։ Նրանց մէջ էր փոքրիկների խնամակալ ճէպէճին. որին փաղաքշելով, որին բարկանալ ձեւացնելով մեղմում էր ժխորը։

— Ծօ՛, չե՞ս ամչնար, կուլաս կոր, հէր հալտա մէրդ քեզ մեծցուցեր է գաթայով։

— Ծօ՛, ի՞նչ կ՚ըլլաս կոր, ինձի նայէ՛... Սա՛նկ, հա՛, տեսար որ լալէն խէր չկայ. հայտէ նայիմ, աֆէրի՛մ։

— Ծօ՛, ճայնդ, է՛...

Ասում էր նա մէկին կամ միւսին, եւ մանուկները լսում էին նրան։

Ցոգնած ու ջարդուած ժողովուրդի միակ ցանկութիւնն էր մի օր մնալ Զելիկում, շունչ առնել։ Բայց նրա իսկ փրկութեան համար ժամն անգամ արժէք ունէր այժմ, անհրաժեշտ էր արագ շարժուել, կիրճերի շրջանից շուտ անցնել։

Երկու ժամ յետոյ մեկնեցինք դէպի Զորա։ Կէս ճանապարհին, Դերջանի լեռների կատարներից որոտացին հրացանները։ Ծայր տուեց նոր խուճապ ժողովուրդի մէջ, որ սասակացաւ, երբ Սանասարի վտանգաւոր կիրճի մէջ, Դերսիմի բարձունքներից սկսուեցին քրտերի համազարկերը։ Ժայռերի տակ պահուած՝ անընդհատ կրակում էին։ Նրանք լաւ էին տեսնում մեզ եւ անիրէպ

ARAM webaram.com

Նշանաւութեամբ դեռին փռում մեղնից մէկին կամ միւսին։ Մեր գլխաւոր դժուարութիւնը ժողովուրդն էր. աղեշարժ ձայներ, ճիչեր, օղնութեան կանչել ամէն կողմ։ Կռուի ամենաառաջ պահին, երբ ձիւնապատ լեռան լանջն ի վեր մագլցելով աշխատում էինք տեղահան անել քրտերին, ճիչտ նրանց դէմ ու դէմ, Դերջանի լեռնաշղթան բռնեցին յիսունից աւելի քրտեր ու երկու կողմից սկսեցին կարկտի պէս տեղալ գնդակներ։ Դասպար բնաջնջուելու մի պահ էր. սահեցինք վար։ Այժմ յուսահատութիւնը պատեց բոլորին. լացը, աղաղակները բռնել էին կիրճը։ Իրարանցման մէջ Մուրատը մեր դատ, քիւրտերին սանձահարելու միակ դէնքը թնդանօթն էր. երկու հատ արագութեամբ շարժուեցին եւ ուղղուեցին քիւրտերի դիրքերին։ Այժմ բոլորի փրկութիւնը կախուած էր երկու ռուսահայ երիտասարդների՝ Տէր-Ակոբովի եւ Տէր Պետրոսովի ձանքերից։ Կարծես ոչ թէ թնդանօթները, այլ կիրճն էր դողում։ Առաջին իսկ հարուածները խուճապի մատնեցին քրտերին, ապա ջարդուեցին, ջախջախուեցին նրանց անմատչելի դիրքերը եւ կէս ժամ չանցած դատապարտուեցին լռութեան։

Շարժուեցինք, կիրճի մէջ թողնելով 25 սպանուած գրուողներ եւ 38 սպաննուած կամ վիրաւոր ձիեր։ Մեզ հետ առինք 60 հոգի ծանր ու թեթեւ վիրաւորներ։

Գիշերը հասանք Զորս, ուր կային ռուսների կառուցած փայտաշէն զօրանոցները։ Պահակատեղին պահպանում էին հարիւր հայ զինուորներ։ Ժողովուրդը թափուեց զօրանոցները։ Վայնասունը կրկնապատկուեց. աւելի կամ պակաս չափերով այդ գիշեր ճանապարհին սառել էին 50 զինուոր եւ 200 դպիրական։

Աղջամուղջին շարժուեցինք դէպի Վժան։ Վիրաւորների, սառածների եւ ձիերի մէկ մասի կորուստի պատճառով հարկադրուեցինք Զորսում թողնելու, ան-

ARAM webaram.com

գործածելի վիճակում, երեք դաշտային, մէկ լեռնային թնդանօթ եւ մթերաբեռների կէսը։

Լուսանում էր. երկինքը գորշ էր, քամի կար. ըրբընձի պէս կարծր ձիւնը ծեծում էր մեզ։ Կարծես ըրնութիւնն ու մարդիկ դաշն էին կռել մեզ ոչնչացնելու համար։ Յետեւից քշում էինք յոգնատանջ ժողովուրդին Շահ – Աբբասի ձիաւորների պէս անխնայ. փրկութեան ուրիշ միջոց չկար այլեւս, ամէն մարդ ինքն էր իր ճակատագրի տէրը. ով ուզում է փրկուել, թո՛ղ քայլէ...

Լոյս էր արդէն, երբ պարզուեց, որ Զոբս - Վժան խճուղու շուրջ քառասուն մէտր երկարութիւն ունեցող կամուրջը այրուած է։ Տարակոյս չմնաց, որ հետապընդող թշնամին որոշել է մեզ այստեղ վերջնապէս ջախջախել։ Եւ իրօք, դեռ ձորի խորքերին չհասած որոտացին հրացաններ։ Ժողովուրդը վազում էր, սարսափակ ներս ընկած խոռոչների ուղղութեամբ։ Մուրատը խելագարի պէս դառնում էր վեր վար՝ հրահանգներ տալով։ Քիւրտերը կրակում էին դիմացի լեռան նպաստաւոր դիրքերից. վարից դէպի լեռ ճարճատում էին մեր գնդացիրները։

Ու սկսուեց մի կատաղի, օրհասական կռիւ։ Ինձ համակել էր ջերմից բռնուածի պէս մի դող, ատամների կափկափոց, որ առնչութիւն չունէր վախի հետ։ Երբ պարզուեց մեր տասնեակի անելիքը, դողս չքացաւ, զարմանալի անդորրութիւն եկաւ վրաս, գիտակցութիւնս սկսաւ գործել յստակ ու արագ։

Լեռների փէշերին խումբ - խումբ ձիաւոր եւ հետիոտն քրտեր, յետ ու առաջ շարժուելով, գրաւում էին յարմար դիրքեր. ուրիշներ, անընդհատ կրակելով, աշխատում էին մօտենալ կիրճին նայող բլրակին, որ կոնաձեւ բարձրանում էր մեր դիմաց։

ARAM webaram.com

— Ամէ՛ն գնով այդ բլրակը գրաւել, գոչեց Մուրատը ձէպէճուն։

Սողում, ընկնում, վազում, ցատկում, մագլցում էինք եւ յետ սահում, բայց եւ այնպէս առաջանում էինք՝ տասը համազարկին մէկ պատասխան տալով։

Մեր գլխի վրայով ճարճատում էին գնդացիրները։ Բլուրն ի վեր մեր յետեւից շարժւում էին ուրիշներ։

— Հա՛ տղերք ջա՞ն, հա՛ զուրպա՞ն,— վարից հասնում էին Մուրատի սրտակոտոր աղաղակները։

Վերը, վար ընկնողների, քրտերի գնդակների մահացողների հաշիւը չկար։ Այստեղ էր, որ մարդիկ ենթակայ էին ճակատագրի քմահաճոյքին. այդ պահին մարդ կարող էր ե՛ւ ապրել, ե՛ւ մեռնել՝ նայած, թէ ի՛նչպէս կը տնօրինէ բախտը։

— «Հի՛ւչչ...», սուլեց մէկը եւ երեսի վրայ դեռին փռուեց ճիշտ կողքիս։

— Հա՛յ - հո՛ւյ, տղե՛րք... Վարդանն էր որ մի ծանր գնդացիր մէջքին կապած՝ չորեքթաթ մագլցում էր դէպի մեզ։ Որոտացին հրացաններ։ Վարդանը պառկեց մէջքով դէպի գնդակները ու, յանկարծ, վարից դղրդաց թնդանօթը.

— Հա՛յ - հա՛յ... բախտը խնայել էր Վարդանին. ձիւնների մէջ թաւալգլոր մագլցելով գալիս էր։

Այլեւս անընդհատ որոտում էին թնդանօթները։ Ճէպէճին, Յովնանը եւ Սահակը իրենց նետեցին բլրի գագաթը եկերող գոգը. մենք՝ նրանց յետեւից։ Գընդակների մի տարափ իջաւ այդ տեղ. շարժուելու հնար չկար. մնում էր դիրք բռնել ու կռուել, բայց յարմար դիրք չէր հաւում։

— Դէպի ձա՛խ, դէպի ձախ, վարից հասնում էին Մուրատի գոչերը։

Բուքը կատաղօրէն մոմնչում էր, թնդանօթները որոտում էին, հրացանների, գնդացիրների ճարճա-

ARAM webaram.com

տիւնից չրջապատը դղրդում էր։ Թուրք – քրտական հրոսակները ամէն տեղ ամրացած՝ շարունակում էին կրակ թափել մեր գլխին։ Շարժուելուն պէս մէկը չոքից, կծիկ եղաւ եւ անշշուկ գլորուեց վար։ Ճէպէ-ճին, Ցոմնանը սողում էին, մենք՝ նրանց յետեւից։

— Դէպի ձա՛խ, դէպի վե՛ր, վարից անընդհատ գոռում էր Մուրատը։

Ցանկարծ, ճէպէճին վեր ցատկեց ու ձախ կողմից մի ոտիւնով անցաւ բլրի թիկունքը։ Ապա Ցոմնանը Սահակի հետ յաջողեց բռնել բլրի վեր ցցուած ապառաժուտ գագաթը։ Քիւրտերը կատաղի հրացանաձգութեան տակ ետին բարձունքը, բայց դուրս մղել ապաներին այդ դիրքից՝ չկարողացան։ Մեծ յաջողութիւն էր այդ։ վարը գոնուողներիս յառաջացումը զգալապէս դիւրացաւ։ Վայրկեան առ վայրկեան բլրի թիկունքում յայտնւում էին նոր ուժեր։ Կանոնաւոր համապարկերը յաջորդում էին իրար։ Քիւրտերը անընդհատ կրակում էին՝ դիրքից դիրք անցնելով եւ ընդարձակ մահիկի ձեւով բացուելով։ Թոհ ու բոհի մէջ անկարելի էր հասկանալ, թէ ի՞նչ է կատարւում։ Բայց ակներեւ էր, որ տեղին լաւ ծանօթ քրտերը սեղմում են օղակը՝ աշխատելով անցնել մեր թիկունքը։ Ցանկարծ, նրանք, յանդուգն կիսաշրջանաձեւ շարժումով, բացուեցին դէպի մեզ։ միաժամանակ նրանց թիկունքում յայտնուեց բազմութիւն, կռուող նոր ուժեր։ Ի՞նչ էր կատարւում վարը եւ այլ դիրքերում՝ չգիտէինք։ այլեւս չէինք լսում Մուրատի ձայնը։ դղրդոցն ու աղմուկը խլացրել էին ամէն բան։ Ստեղծուեց յուսահատական վիճակ։— Ակրա՛կ, բացուող չգթայի ծայրին, գոռաց ճէպէճին։

Առաջին իսկ համապարկերի տակ քիւրտերը դադարին ու ծլկուեցին։ կարծես մտան գետնի տակ։ Ամէն ակնթարթ սպասում էինք նոր յարձակման, երբ յանկարծ լսեցինք։

ARAM webaram.com

— Հէ՛յ - հէ՛յ.— Վարպետն էր. դամէշի պէս ընկել էր ձիւներին, քիչ վարը, ու չէր կարողանում շարժուել: Վրայ հասանք. փուքսի պէս փչում էր՝ ուժասպառ: Վեր հանեցինք ու գնդացիրը վայրկեանապէս սարքեցինք: Յանկարծ, քիւրտերը դուրս թռան դիրքերից ու հարայ - հրոցով գրոհեցին դէպի մեզ:

— Տը՛ր - ատա - տա՛ - տա՛ - տա՛... դղրդաց գնդացիրը՝ հնձելով առաջին շարքերը: Քրտերը խուճապահար նահանջեցին՝ մտնելով ապառաժների տակ: Յարձակման վայրում մնացին տասնից աւելի դիակներ եւ բազմաթիւ վիրաւորներ, որոնք ձիւնների մէջ փորոգ տալով աշխատում էին իրենց նեռել ապառաժների եռեւը: Շատ քչերին յաջողուեց այդ: Մի ժամանակ պարզուեց ահաւոր մի տեսարան. հազարից աւելի ձիաւոր, հեռեւակ քրտեր, ընդարձակ տարածութեան վրայ, տեղահան եղան մահիկաձեւ առաջացած շղթայի թիկունքում, ուր պատսպարուել էին նահանջող ժողովրդի բնաջնջման եւ թալանի յոյսով: Վեր հանուած մէկ գնդացիրը այժմ խուճապի մատնեց նրանց:

Ծեծում էինք անխնայ լեռան առաջամասը, կենտրոնը, ամենահեռաւոր թիկունքը: Խուճապահարները տալիս էին գոհը. պակասը լրացնում էին լաւ նշանառուները. ձի, մարդ գլորուում, շոքում, վեր ցատկում՝ դիւահարի պէս փախչում էին: Այստեղ այլեւս կացութեան տէրը մենք էինք, բայց վարը դեռ շարունակւում էր օրհասական կռիւը. աւելի յաճախ էին որոտում թնդանօթները, աւելի բուռն էր հրացանաձգութիւնը:

Նոր էր պարզուում ինձ, թէ ի՞նչ մեծ նշանակութիւն ունէր մեր գրաւած բլուրը: Միայն այդ բլրի առորոտներից կարելի էր անցնել կիրճին ծանծաղ ու սառած ջուրը՝ շրջելով հրդեհուած կամուրջը:

Արդէն սկսուել էր ժողովուրդի փոխադրութիւնը

ARAM webaram.com

դէպի միւս ափը, բայց ծանր խնդիր էր նրանց լլրի թիկունքին հասցնելը. հեռաւոր, անտեսանելի գիրքերում ամրացած քրտեր անվերջ շարունակում էին տեղալ գնդակներ: Թնդանօթն ու գնդացիրը անզօր էին նրանց դէմ, եւ անցնող ժողովուրդի տասնից մէկի մահը անխուսափելի էր: Ժողովուրդի անցքը պաշտպանում էին լաւ հրացանաձիգներ՝ Մուրատի անմիջական գնդավարութեան տակ: Վարը ամէն տեղ ընկած էին դիակներ: Շատ դժուար էր կանանց, երեխաների, ասուածների, վիրաւորների փոխադրութիւնը, որոնք անցնում էինք ծանծաղ ջրով՝ շալակած, ձեռքերի վրայ, կամ ողջ մնացած սակաւաթիւ ձիերով: Ծանր վիրաւորները սողում էին ձիւնների մէջ, առասպելական օձերի պէս: Բժիշկ Պօղոսեանը, մի քանի մարդկանց օգնութեամբ, քաշում, քաշքշում էր նրանց դէպի անցքի շրջանը, բայց ո՞ր մէկին պիտի հասնէր...

Առաւօտեան ժամը 9ին փոխադրութիւնը վերջացաւ, աւելի ճիշտ հարկադրուած եղանք ընդհատել, որովհետեւ նահանջը պաշտպանող կամաւորների առուաբաղնի մասը ոչնչացաւ: Բայց այդ ժամանակ վիրաւորներն ու ասուածները, բացի 30 գաղթականներից, արդէն փոխադրուած էին: Վերջիններից գատ. միւս ափում մնացին ութ վիրաւոր կամաւորներ: Մեր գոհերի ընդհանուր թիւն էր, կուսակ ժողովուրդն էլ միասին, մօտ 500 հոգի. ռուս զինուորներից սասել էին 200 հոգի, գաղթականներից՝ 300 մարդ: Միւս ափը մնացին մեր բոլոր մթերասայլերը, թնդանօթներն ու գնդացիրները...

Կիրճը անցել էինք, հրացանաձգութիւնը դադարել էր: Մեզ հետապնդողները երեւի զբաղուած էին վիրաւորներն ու դիակները կողոպտելով եւ սատոն աւարը բաշխելով: Բուքը փոխել էր իր ընթացքը, այժմ նա ցատկռտելով փչում էր թիկունքից՝ քշելով մեզ դէպի

ARAM webaram.com

վար։ Ձիւնածածուկ քարքարոտ էր, բուքը թույլ չէր տալիս ճանապարհը տարբերել. ընկնողների, ձեռք ու ոտք ջարդողների հաշիւը չկար։ Խիստ դժուար էր վիրաւորների, սառածների խնդիրը. շատերը, տեսնելով որ պատճառ են դարձել կարաւանին դանդաղութեան, խնդրում էին վերջ տալ իրենց կեանքին։ Մորելի կողմից վժան ճամբուած ձիաւորները հասան մեզ միայն կէս ճանապարհին՝ ընդամէնը հինգ սայլով։ Բայց այդ էլ մեծ թեթեւութիւն էր աւելի արագ շարժուելու համար։ Կարաւանը կարծես քարացել էր. անձայն, անշըշուկ գնում էր։ Ո՛վ կորուստ ունէր, ո՛վ էր սառում՝ յայտնի չէր։ Գերագոյն մի թափ էին արարայոյում հրաշքով մահից ազատուածները, մի օրհասական ճիգ որ մարդուն դարձնում է մեքենայ։ Բայց եթէ մենք ճողոպրել էինք մարդ – գազանների հալածանքներից, բընութիւնը դեռ հաշիւ ունէր մեզ հետ։ Հաղիւ իջանք հարթութիւնները, բուքը կատաղօրէն մոնչաց։ Դերսիմի փոթորիկն էր, որ հետապնդում էր մեզ։ Քիչ ետքը նա սկսեց երեսն ի վար սահիլ, շօշափել ձիւնների կոյտերը, ձիւնածածուկ փոսերի մէջ մտնել, մաղլցիլ բըլուրներն ու դլխի վրայ ծուլօրէն դառնալով՝ ձիւնի աւազներ նետել մեզ։ Ցանկարծ, ամէն բան իրար անցաւ. կարծես տիեզերական երկրաշարժ պիտի լինէր ու հողը պիտի ճեղքուէր՝ մեզ ներս առնելու համար։ Հորիզոնից դէպի մեզ արշաւում էին ճերմակ ամպերը՝ սեղմելով տարածութիւնները, առեղծելով արհեստական մթնշաղ։ Ձիւնաւազները, բզկտուած լաթերի պէս, դառնում էին մեր շուրջը։ Տեսիլքների պէս դեղերուն՝ նրանք փուում էին երեսի վրայ մոխրացող տարածութիւններում, վեր ցատկում, իրար վրայ հեծնում, այծերի պէս ճակատ ճակատի զարնում. ապա, յանկարծ, խմբւում էին, անիւի պէս դառնում, երկարում դէպի վեր եւ ամպերը ճեղքելով՝ չքանում...

ARAM webaram.com

Այնուամենայնիւ երիկուայ ժամը 9ին տեղ հասանք. ժողովուրդը թափուեց փայտաշէն նորակառոյց հանրակացարանները։ Ինչ կարելի էր՝ ջարդուեց ու վառուեց դեռ երեկոյ տեղերը մնացած թիթեղէ վառարաններում։ Տեղական պահակներից իմացանք, որ Ցամբէ եւ Վարդակչու մեր պահակախմբերը չըջապատուել էին թուրքերի կողմից եւ բնաջնջուել։ Այդ հանրակացարանում մերոնցից ոմանք մաքրում էին հրացանները, ոմանք էլ տեղ բռնելով թախտերին՝ երկարում։ Քուն չկար, թէեւ մահուան չափ ջարդուած էի. կարծես ընրորուել էի սայլի տակ։ Մօտս երկարած անխռով խռմփում էր Ճէպէճին։ Ուշի ուշով լսում էի գիշերային իրարանցումը. բուքը դեռ մռնչում էր. կարծես սառնամանիքի բոլոր թգուկները խմբուել էին վժռում ու մառները բերաններում սուլում էին, հա՛ սուլում։ Փոթորիկը անփոփոխ սաստկութեամբ շաչում էր։ Նա ճանկռտում էր տախտակէ պատերը, ծեծում դռները, պատուհանները։ Ու կարծես մէկը հեծեծում էր, լաց լինում, մի ուրիշ հրհռում։ Ճէնքի պատերին կարծես բահերով իջնում էին խճաքարեր։ Երբեմն լսւում էր բութ թնդիւն. կարծես տանիքը պիտի պոկուէր, գերանները վար թափուէին։ Ցանկարծ, դղրդալին վար թափուեց տախտակով դամուած պատուհանը։ Ճէպէճին վեր թռաւ. հայեացքը պտըտեցրեց չորս կողմը՝ վառնդ կանխազգոյշ անասունի պէս անհանգիստ։

— Ցիսո՛ւս, Քրիստո՛ս...

Երեսը խաչակնքեց ու երկարեց միւս կողին։ Բուքը կոկորդ պատռելով՝ աղաղակում էր դրան տակ, ապա յետ քաշուելով՝ հառաչում ու հպարտաւոր անօթի գայլերի պէս հեռուներում ոռնում...

Առաւօտ բռնեցինք Բաղչէ – Էրզրում ուղղութիւնը։ Հետապնդում չկար։ Պարզ օր էր. արեւը կայծկլտում

ARAM webaram.com

էր ձիւնապատ տարածութիւնների մէջ, որոնք քմծիծաղում էին երէկուայ բուքի եւ անցուդարձերի վրայ։ Մարդիկ, գլխի ընկած, նոր էին ողբում կորուստները։ Կէսօրը անց հասանք Քարճիլ։ Էրզրումից ուղարկուած հրահանգի համաձայն, բոլոր պահակախմբերը պէտք է կենտրոնանային Մամախաթուն, ուր հասանք նաեւ մենք Փետրուար 17ի երեկոյեան։ Այստեղ կային ամէնկարգի մթերանոցներ, վերմակների, հագուստեղէնի ամբարներ եւ անհաշիւ ռազմանիւթի հսկայական պահեստներ։ Ժողովուրդը այստեղ կազդուրուեց։

Գնդապետ Մորելը աշխատում էր կապիտան Կաֆեանի եւ հոգիով դեռ ուժեղ հայ սպաների օգնութեամբ կազմել ոչ մեծ, բայց վստահելի մի զօրաբաժին՝ Մամախաթունը պաշտպանելու համար։ Բայց ստեղծուած պայմաններում նրա ջանքերը չէին կարող յաջողութեամբ պսակուել։ Ռուսական ճակատի փլուզումից յետոյ թուրքերը մեր վրայ նետել էին իրենց լաւագոյն ուժերը եւ, ըստ տեղեկութիւնների, վեհիր փաշայի երկու բանակներից զատ, Երզնկա – Էրզրում ուղղութեամբ շարժւում էին եւ այլ ուժեր։ Մի ժամանակ շարժման մէջ էին դրուած ամենաընդարձակ չափերով քրտական հորդաներն ու չեթաները, որոնք այժմ շահագրգռուած էին դիւրութեամբ ձեռք բերուելիք պատերազմական աւարով, ռուս անհաշիւ մթերաբեռներով, պահեստներով եւ ամէն տեղ թափուած բազմաթիւ հարստութիւններով...

Փետրուարի 19ի առաւօտեան մեկնեցինք։ Մամախաթո՛ւնը այրւում էր։ Լեռ, սար ու ձոր դոռում, դղրդում ու տարածուն արձագանգով ոռնում էին. օղն էին հանւում ռազմամթերքի պահեստները...

Կարապէյլիդում մեզ միացաւ Սեպուհը իր ձիաւորներով, կամաւորներով եւ հայ ու յոյն տարագիրների

ARAM webaram.com

ՍԵՊՈՒՀ

մի մասով, որոնք գաղթել էին Բաբերդի Աղասնք - Մատէն - Քոպիան - Բռնակապան գծով: Այս գծով Բաբերդից գաղթած տարագրութեան մեծ մասը արդէն շարժուել էր Իլիճայի ուղղութեամբ:

Իրիկունը այստեղ էինք եւ մենք, իսկ յաջորդ օրը՝ Էրզրում...

ARAM webaram.com

Դ. ԳԼՈՒԽ

«ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԿՈՐՑՐԻՆՔ»

Էրզրումը դարձել էր Արշակաւան. էլ ո՛վ ասես որ չկար. տրապիզոնցի, վանեցի, բարեբդցի, խնուսցի, պոլսեցի, ալաշկերտցի, Թիֆլիսեցի, մշեցի, Թաւրիզցի, զարաբաղցի, երեւանցի եւ այլն: Կարծես աշխարհի բոլոր ծայրերում ողջ մնացած հայերը վտխել, ապաստանել էին Էրզրում: Կային հայկական, ռուսական ամէն տեսակ «իշխանութիւններ», բայց քաղաքը մատնուած էր անիշխանութեան եւ տիրում էր քաոսային մի վիճակ. ո՞վ էր պետը, ո՞վ ենթական, ի՞նչ էր մըտածւում քաղաքի պաշտպանութեան համար, ի՞նչ էր մեր քաղաքական ուղեգիծը կամ մեր անելիքը՝ յայտնի չէր: Ընդհանուր քայքայումների ու կազմալուծման մէջ կար միայն մի սրտապնդիչ համոզում. Էրզրումը «աշխարհահռչակ» բերդ էր. իր ամրութիւնները, թընդանօթները բաւական էին դէմ դնելու ամենահզօր բանակներին...

Սահակի եւ Յովնանի հետ տեղաւորուել էի Սանասարեան վարժարանում, ուր խճողուած էր տարագիր բազմութիւնը:

Հազիւ անցել էր մէկ – երկու ժամ, երբ մեզ մօտ յայտնուեց Համօ Բարաղամեանը: Նոյնն էր, միայն կորցրել էր աշխուժութիւնը: Բնականաբար, դրկախառնուեցինք իրար երես տեսնելու առթիւ: Բայց Համոն շատ գլուխ չունէր հոգեկան զեղումների ու մէկ

ARAM webaram.com

երկու հարցումներից յետոյ գրպանից դուրս քաշեց երկաթուն թղթեր. որպէսզի դրի առնի մեր առածները հերթական թղթակցութեան համար: Մեզնից ոչ ոք տրամադիր էր այդ գործով զբաղուելու. մեր հետաքրքրում էր էրզրումի կացութիւնը, քաղաքը պաշտպանելու հնարաւորութիւնը: Եւ Համոն ստիպուած եղաւ յետ դնել թղթերը ու գոհացում տալ հարցումներին:

Էրզրումի ամրութիւնները ունէին բաւական ուժեղ հրետանի, 400 բերդային եւ դաշտային թնդանօթներով: Բայց նրանց մեծ մասը, անպործաձելի վիճակում, լքուած ու թաղուած էր ձիւնների մէջ. հապիւ մէկ երկու տասնեակ թնդանօթներ պահել էին ռազմունակութիւնը: Հրետանին վարում էին 40 սպաներ եւ 400 զինուորներ, որոնց մարտական կորովը ընկած էր: Ռուսական սպայակոյտը էրզրումից արդէն տեղափոխուել էր Սարիղամիշ եւ բերդի պաշտպանութիւնն ու «զօրքերի» հրամանատարութիւնը անցել էր հայերի ձեռքը: Էրզրումի ամրացուած շրջանի պետ էր նշանակուած Անդրանիկը, որ դեռ գտնուում էր Ալեքսանդրապոլում: Երզնկայի, Բաբերդի նահանգից յետոյ էրզրում հասած ուժերի հետ միասին տեղական ուժերը կազմում էին 3100 սուին, 400 ձիաւոր եւ ութ թնդանօթ: Անդեկիրենց բախտին թողնուած այդ ուժերը բարոյալքուում էին, եւ կարգապահութիւնը օրէց - օր ընկնում էր: Տարագիր զանգուածներ խմբուում էին զանազան հասատութիւնների դռների մօտ եւ պահանջներ անում: Գաղթի, նահանջի հետեւանքով առեղծուած դժուարութիւնները յաղթահարելու համար անհրաժեշտ կազմակերպութիւն չկար...

Ցաջորդ օրը գնացինք դէպի կոմիսարիատ, ուր կը յուսայինք տեսնել Մուրատին եւ մեր անելիքը հասկանալ: Մարդ չկար: Դահլիճին յարակից սենեակում

ARAM webaram.com

նակ նստած էր մի չքնաղ գինուորական։ Բուխարայի ընտիր փափախի ճակատին փայլում էր երկաթիը. թանձր յոնքերը պերճաձև ստուերանում էին սև, կայծկլտուն աչքերին, լայն ռունգերի տակ խրոխտօրէն հանդչում էին թաւ պեխերը՝ ծայրերով ցրիւ գէպի վեր. կարճ ծնօտը երկարելու նպատակով թողած համաչափ մօրուքը մեղմում էր դէմքի վարի մասին բթութիւնը, ուսնոցներին փայլում էին «Հ. Ա. Զ.» հայերէն ոսկեգօծ գրերը։ Մեզ տեսնելով նա մի անհանգիստ շարժումով յետ մղեց ապդրի վրայ հանդչող թուրը ու մաքուր հայերէնով գոչեց.

— Ի՞նչ կ'ուզէք։

Զարմանալի արագութեամբ ասաց այդ։

— Ովքե՞ր էք, գոչեց աւելի անհանգիստ։

— Մուրատի ազաներ ենք, ասաց Յովնանը։

Ձեռք մեկնեց։

— Գնդապետ Թորգոմ։

Յիշեցի հեռախօսային զրոյցը Մուրատի հետ, Հայաստանի անկախութիւնը հռչակելու առաջարկը։ Այժմ գնդապետին հետաքրքրում էր այն հարցը, թէ ինչո՞ւ ընդհարումներից առաջ Երգնկայի ժողովուրդը չտեղահանուեց եւ օր առաջ չուզարկուեց Էրզրում, քանի որ այդ դէպքում պիտի դիւրանար ինքնապաշտպանութեան գործը եւ ժողովուրդն էլ այնպիսի ահռելի զոհեր պիտի չտար նահանջի ժամանակ։ Սահակը բացատրեց, որ Երգնկան պաշտպանողներից շատերը հարազատներ ունէին ժողովուրդի մէջ եւ եթէ ժողովուրդը օր առաջ տեղահանուէր, այդ դէպքում քաղաքի պաշտպաններն էլ նրանց հետ պիտի գնային, առաւել եւս, որ ժողովուրդն էլ չէր ուզում բռնել Էրզրումի ճանապարհը առանց լուրջ պաշտպանութեան, վախենալով քրտերի յարձակումներից։

Գնդապետ Թորգոմ գլուխը կախեց, ածուխի պէս

ARAM webaram.com

ԶՕՐԱՎԱՐ ԹՈՐԳՈՄ, լուսանկարուած Իզմիր, 1922ին: Իր քով՝ անգլիացի սպայ մը, Հայկական Լեգէոնի մարգանիքը դիտելու ատեն:

ARAM webaram.com

սեւ, կայծկլտուն աչքերը մի պահ դեղերեցին, սեղանի վրայ բան փնտռելու պէս ու ասաց.— Այո՛, անհրաժեշտ էր գալիքը էն գլխէն մոռնալ. առաջին մէկ օրէն կ՚ըսէի, որ Վեհիր փաշայի բանակներուն չենք կրնար դիմանալ, պէտք է մեր օրիանթասիոնը փոխենք, բայց լաւ չեղաւ: Հիմա ելեր դիս կը մեղադրեն. լսած եմ, որ Սեպուհի ազանները արժանապատուութիւնս կը խծբծեն, ապառնալիքներ կ՚ընեն. օգնական ուժեր չե՞մ ճամբեր եղեր ոչ անոնց, ոչ ձեզ, ասաց յուզուած «չեմ» բառը երկարելով.— Իրր թէ նահանջն ալ տեղի է ունեցեր այդ իսկ պատճառով, յարեց աւելի ու աւելի յուզուելով: «Ի՞նչ կրնար ընել 50—60 դինուորներու չափ նոր ուժը, երբ թշնամին կը շարժէ մեր դէմ բանակներ՝ չհաշուած քրտական հորդաները: Տղայութիւն չէ՞ այդ դատողութիւնը: Եւ, վերջապէս, ի՞նչ կրնար ընել այս փլուզումին մէջ գնդապետ մը, որ թէեւ նշանակուած է ուժերուն բաշխման պետ Ազգային Խորհուրդին պէս հեղինակաւոր իշխանութեան կողմէ, բայց որուն չենք ուզեր ենթարկուիլ եւ որուն իշխանութեան հիմերը կը փորէ ուրիշ մը...

Գնդապետը նայեց մեզ այդ «ուրիշ»ին վրայ ծանրանալու շնչառով, բայց մեզ չէր հետաքրքրում այդ:

— Ինքզինքը ինձմէ դերազանց կը սեպէ, թէեւ ես նշանակուած եմ Թիֆլիսէն, Ազգային Խորհուրդի կողմէ, իսկ անիկա գնդապետութեան ատիճանը ստացած է ինձմէ միայն քանի մը օր առաջ եւ մարդ չի գիտեր, թէ ո՞վ է դինուորական պետ կարգեր դինք: Ցիսուն հոգինոց խումբ մը կազմեցի ձեզի օգնելու համար. Երզրնկա ճամբելու, վար դրաւ ըսելով, թէ հոս պէտք են...

— Ո՞վ, հարցրեց Ցոմնանը:

— Զէ՞ք գիտեր, գնդապետ Գարաքէշիշեանը. ուրիշ խումբ մըն ալ կազմեցի Բայբուրտ ճամբելու համար:

ARAM webaram.com

Ձեզի կը հարցնեմ, առանկ պայմաններու մէջ ի՞նչպէս պիտի օգնական ուժեր ճամբէի...

Այդ գրոյցը պարզում էր ուելին, քան կարող էր մեզ ասել Մուրատը։

— Անցեալը անցել է, պարոն գնդապետ, կարեւոր է հասկանալ թէ ի՞նչ որոշեցիք քաղաքը պաշտպանելու համար եւ ի՞նչ պիտի անենք մենք,— ասացի։

— Ամէն բան «որոշուած» է, բայց արժէք չունի, ուժ չունինք։

— Այդ դէպքում արդեօք լաւ պիտի չլինէ՞ր օր առաջ քաղաքից դուրս հանել ժողովուրդը դէպի Կարս որ նահանջի ժամանակ չմնասուի։

Նրա ժպիտն դէմքին գոյացաւ դառն ժպիտ։

— Իրաւունք ունիք, բայց Կարսէն ո՞ւր պիտի տանենք այդ դժբախտ ժողովուրդը։

— Ուրեմն, ենթադրում էք, որ թուրքերը պիտի գան մինչեւ Կա՞րս։

— Ի՞նչ «ենթադրել», չէ՞ք գիտեր, որ Բրեստի հրամանագրութեամբ Կարսը, Բաթումը, Արտահանը տրուած են թուրքերուն...

— Ե՞րբ, գոչեց Ցոմնանը, երեւի կարծելով, թէ թուրքերը արդէն այնտեղ են։

— Երէկ, սիրելիս, երէկ հեռագիր ստացանք այդ մասին։

— Ի՞նչ կ՚ըսէք, հէյ - վա՜խ...

Լուրը անակնկալ էր նաեւ ինձ եւ Սահակի համար։

— Ի՞նչ էք մտածում այդ առթիւ, հարցրեց Սահակը։

Գնդապետ Թորգոմի դէմքը յանկարծ ճառագայթեց, սեւ աչքերը կայծկլտացին. ինքնագործ կափարիչի պէս շրթունքները շարժուեցին ու արտասանած խօսքերին համաչափ բաց խուսի անելով բերանը, հատ-հատ շեշտելով ասաց.

ARAM webaram.com

— Ես ձեզ սոսկական շարքային զինուոր չեմ նկատեր. ձեզ կը համարեմ սրացաւ, բանիմաց հայ երիտասարդներ եւ անկեղծօրէն կը խօսիմ. եթէ վստահ ըլլայի, որ անձնական զոհաբերութիւններով կացութիւնը կը փրկուի, բոպէ մը իսկ չէի տատաներ անձս զոհաբերելու ազգիս համար: Դժբախտաբար, ոչ իմ եւ ոչ ալ ձեզ նման հայաբաւորներու անձնազոհութիւնը, ներկայ պարագաներուն մէջ, չեն կրնար գործը ցլուի հանել: Կացութիւնը աւելի քան բարդ է, մեր դէմ կը կըռուին ոչ միայն զէնքով, այլեւ քաղաքականութեամբ: Այսպիսով, եթէ չենք կրնար զէնքի դէմ զէնք գործածել, գոնէ քաղաքականութեան դէմ քաղաքակութիւն բանեցնելու ենք. մենք պէտք է մեր օրիանթասիոնը փոխենք. ձեռք քաշենք ռուսերէն եւ անկախութիւն հռչակենք:

— Դուք կարծո՞ւմ էք, որ թուրքերը հաշուի կ'առնեն մեր անկախութիւնը, ասաց Սահակը հեռաքրքրութեամբ:

Գնդապետ Թորոսոմը զգացուած գոչեց.

— Ա՛խ, սիրելիս, եթէ այդ ակտը կատարած ըլլայինք երկու ամիս առաջ, երբ Բրեստի մէջ դեռ չէր ճշդուած մեր խնդիրը, բոլորովին այլ պիտի ըլլար հիմա մեր կացութիւնը. ըսի՛, հեռախօսեցի՛ Ազգային Խորհրդին, Մուրատին, Սեպուհին: Խե՜նթ կարծեցին զիս: Սակայն դեռ ուշ չէ. անհրաժեշտ է ժամ առաջ կատարուած իրողութեան առջեւ դնել թշնամին: Անգամ մը այդ ընելէն ետքը, ան չի համարձակիր Հայաստանի անկախ պետութեան սահմանները ոտք կոխել:

— Ինչո՞ւ, մտամոլոր հարցրեց Յովնանը:

— Որովհետեւ մօտ ապագային հաշիւ պիտի տայ մեր դաշնակիցներուն՝ Անգլիոյ եւ Ֆրանսայի, որոնք անպայման յաղթական պիտի ըլլան...

ARAM webaram.com

Վերջին խօսքերը պարզեցին ինձ ամէն բան։ Ես լայ։

— Չէ՞ք կրնար այդ մասին խօսիլ Մուրատի հետ, դարձաւ գնդապետը Սահակին։

— Մենք փոքր մարդիկ ենք, պարոն գնդապետ, մենք ի՞նչ կարող ենք ընել։

— Կը կարծէ՞ք օգուտ չունի...

Սահակի դէմքը ընդունեց այնպիսի մի արտայայտութիւն, որ կարող էր լինել եւ «այո» եւ «ոչ՝ նայած, թէ ինչ կը լինի գնդապետի խօսքի շարունակութիւնը։

— Ախո՛ւ, հառաչեց վերջինը՝ մեկնելով մեզ իր ձեռքը։

* * *

Ընդհանուր փլուզումի այդ օրերին, յանկարծ բռնեցուեց անհաղթելի խանդավառութիւն. Անդրանիկը Ալեքսանդրապոլից իր բանակով հասել էր Հասան Գալէ։ Երբ լուրը հասաւ, ժողովուրդի ոգեւորութիւնը հասաւ խենթութեան։ Մարդիկ, ամէն բան մոռացած, փողոցներում երգում էին «Զայնը հնչեց Էրզրումի հայոց լեռներէն», «Ինչպէս արծիւ սաւառնում ես լեռ ու ձոր» հանրածանօթ երգերը։

Էրզրումի քան հազարնոց թուրք բնակչութիւնը, որ մինչ այդ չէր ծածկում իր ուրախութիւնը մօտալուտ ազատութեան յոյսով, յանկարծ ամբեց ու փակուեց տներում. նրա բոլոր յոյսերը ջուրն ընկան. Անդրանիկը գալիս էր։

Անդրանիկը եկաւ. ընդունուեց արտակարգ շուքով եւ հանդիսաւորութեամբ։ Հուռներամ բաղմութիւնը բռնել էր ճանապարհը մինչեւ Կարս Գափու — Կեցցէ՞ Անդրանիկը, գոռում էր խելայեղ ամբոխը։

— Կեցցէ՛... գոչում էին փողոցները։

ARAM webaram.com

Բ. ՅԱՐՈՒՆԻ
ԲԵՐԵԼԻ ՀԵՏԵՎԱԿԱՆ
Գ.Ա. ԲՈՒԼԱԽՈՎԻ
ԱՌԱՋԻՆ
1921 Ս. ԳԻՇԵՐԻ ՏԱՃԱՐ.

ARAM webaram.com

ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ

Բայց յաջորդ օրը վերականգնուեց նոյն կացութիւնը։ Մանուկ ժողովուրդը սպասում էր հրաշքին, որ չկար։ Այժմ նա անում էր դատողութիւններ՝ եւ ոչ շատ նպաստաւոր՝ զեկավարների, անդա՛մ Անդրանիկի համար։

— Ինչո՞ւ այդքան ուշացաւ...

— Ո՞ւր էր մինչեւ հիմա...

— Վերջին պահուն ի՞նչ կարելի է անել...

Ապա հեռանում էին զանազան զրոյցներ եւ ենթադրութիւններ։

Մեզ չէին զրաղեցնում այդ զրոյցները. եւ երբ Մուրատը կանչեց, բոլոր ողջ մնացած ընկերները զարձեալ խմբուեցին նրա շուրջ։

Նախ քան այդ՝ արդէն մի շաբաթ էր ինչ թուրքերը զարձրել էին էրզրումը իրենց զինուորական գործողութիւնների թիրախ, եւ հայկական առաջապահ մասերը, նրանց ճնշման տակ, քայլ առ քայլ նահանջում էին դէպի Իլիճա։

Մարտ 11ին, թշնամին՝ համախմբելով իր ուժերը Իլիճայի դէմ՝ դիմեց ուժեղ յարձակման. մենք նահանջեցինք տալով անհամար զոհեր։ Անդրանիկի հրաւէրով դումարուեց զինուորական արտակարգ խորհրդակցութիւն։ Յաջորդ օրը առաւօտից սկսուեց էրզրումի պարպումը եւ նահանջը ամենածանր պայմաններում։ Ժամը 9ին թուրքերը արդէն քաղաքումն էին։ Նրանց ձեռքն անցաւ անհաշիւ ռազմամթերք, պարէն, հանդերձանք, եւ այլ հարստութիւններ։ Քաղաքում մնացած հարիւրից աւելի հայերը կոտորուեցին։ Ճանապարհին բազմահազար տարագիրներին միացան թնուսի կռուողների մի մասն ու գաղթականները։ Այնուհետեւ, ընդարձակ տարածութիւնների վրայ, պարզուեցին գաղթականական մեծ հոսանքների նոյն տեսարան-

ARAM webaram.com

ներբ, որոնք ինձ արդէն ծանօթ էին Երզնկայից սկը-
սած ...

Մառնում էինք Ռուսական Հայաստանի սահման-
ներին: Լուսատուը բարձրանում էր վեհափառ շքեղու-
թեամբ՝ խոստանալով վճիտ օր: Շատ ցուրտ էր: Մա-
սիսի գմբեթաձեւ ձիւնափայլ գագաթը, դուրս գալով
թանձր խաւարի միջից, գծագրւում էր եթերում մեծա-
փառ վսեմութեամբ: Հեռուներում, ապշամուղջի նիգա-
կաձեւ խուրձերից, քիչ – քիչ պարզւում էին ուսկեգոյն
ապառաժների ուրուագծերը: Հորիզոնը այնուհետեւ բոցա-
վառւում էր: Քիչ յետոյ հրավառ գունդը ուռումներով
սկսեց բարձրանալ: Ոսկեգոյն ապառաժների սրածայր
գագաթները, ծիրանի հագած, մշուշի մէջ ցցուեցին:

Դիտում էի շրջապատը հայրենապուրկ թախիծով:
Ես, նախնիքներիս վերջին սերունդի մնացորդներից
մէկը, պարզ ու որոշ գիտակցում էի, որ այդ պահին
մեր հայրենիքը կորցրինք: Ու իմ բաժին պատասխա-
նատուութիւնը նախորդ սերունդների հանդէպ՝ թւում
էր խիստ ծանր, դառն ու ահաւոր: Անձնական վշտից
ծնունդ առած վրէժի զգացումը դառնում էր իմ մէջ
սառն գիտակցութեան պահանջ, իբրեւ մեր սերունդի
ինքնարդարացման մի ուղի:

Հեռապնդող թշնամին շփման մէջ մտաւ մեզ հետ
Մարտի կէսերին, Կարս – Ուրկանի շրջանում: Ստանա-
լով ուժգին հակահարուած՝ հետապնդումը դանդաղեց
բայց կանգ չառաւ: Նա ոտքի հանեց մեր թիկունքում
քրտերին: Մարտի 13ին, թուրքերի ճնշող գրոհների
առաջ, քաշուեցինք դէպի Խան - Տերէ: Ապրիլի 2ին
թուրքերը մեծ ուժերով շարժուեցին դէպի Կարաքուրտ,
Բարդաս եւ այս կէտերը գրաւելով՝ յարձակուեցին
Խան - Տերէի վրայ: Սկսուեց արիւնահեղ կռիւների մի
շարք, որ տեւեց մի քանի օր: Ապրիլ 6ի գիշերը պար-
պրեց Սարբզամիշը, ուր նախապէս պայթեցրին պա-

ARAM webaram.com

հեռանները ու փճացրին ռազմական նշանակութիւն ունեցող ամէն բան։ Զգալի էին մեր կորուստները, յատկապէս Կարաքուրթի կիրճում, ուր ընկան բազմաթիւ կամաւորներ։ Այդտեղ ես վէրք ստացայ աջ թեւից ու դուրս հանուեցի կռուողների շարքից։

* * *

Սարըղամիշը դեռ կանգուն էր, երբ մեկնում էր Թիֆլիս մի խումբ վիրաւորների հետ։ Ռեվակոմոյ իրաբանցումը կայսրանում աննկարագրելի էր։ Բազմութիւնը պաշարել էր գնացքը։ Մարդիկ խումբ-խումբ վազվզում էին դէս ու դէն, հսկայական պարկեր շալակած, որոնց մէջ կաթսա փոխադրում էին անդամահատուած դիակներ։ Վագոնները բերդի նման գրաւում էին խուժումով։ Ոտնաման, գլխարկ, կապոց, վերմակ, հագուստի թեւ դուրս էին մնում, երբ մարդիկ, մազերը ցրիւ, օձիքը պատռուած, կատաղօրէն նեռում էին իրենց վագոնի մէջ։ Փրկուելու կենդանական մղումը մթագնել էր մարդկանց գաղղութիւնը։ Տուն դարձող ռուս զինուորների մի յամեցած խումբ, զէնք ու զրահով, բռնել էր գնացքի ուղին եւ սպառնում էր ջարդ ու փչուր անել ամէն բան, եթէ իրենց տեղ չտրուի գնացքում։ Կայսրանի հայ պաշտօնեան, գլուխը կորցրած, վազվզում էր մայթով ու վագոնների դռների մօտ գոռգոռում, պաղատում, որ տեղ տան նրանց։ Տեսնելով, որ ոչ ոք չի ուզում զիջել, նա մեր վագոնի մօտ յանկարծ ցուլի պէս ոլորում է հատա վիզը ու բռունցքի շարժումներով ամբոխը ճեղքում։ Հարայ-հրոցը, անասելի աղմուկը խլացնում է ամէն բան։ Վերջապէս, ռուսները տեղաւորւում են ու գնացքը շարժւում է։ Ամբոխը այժմ քննադատում է հարդարակցու-

ARAM webaram.com

թեան անհանդուրժելի կարգերը. տէր չկար, իշխանութիւն չկար, մանաւանդ կարգ ու կանոն չկար։ Ամենախիստ քննադատողները կորուստ ունեցողներն էին. նրանք փնտռում էին պատուհաններից վազող նեռած իրենց իրերը։ Թուխ դէմքով, բարձրահասակ ու թիկնեղ կովկասահայ մի երիտասարդ, սեփ - սեւ երկար մազերը ջղաձգաբար շոկելով, յուզուած բացագանչում է.

— Վայ, մէրդ չմեռնի, Հայաստա՛ն, էս ի՞նչ արին քեզ։

Հարեւան բաժնում, հացթուխի լեցուն դէմքով մի արեւմտահայ չափազանցութիւններով նկարագրում է դէպքերը՝ ծանրօրէն բաց ու խուփ անելով աչքերը։ Տանձի կոթի պէս բարակ վզով մի ուրիշը հաստատում է նրա ասածները՝ իր գունատ գլխի շարժումով...

Խուճապի ազդեցութիւնը զգացւում էր եւ կարում, կայարանում կարգապահութիւնը դեռ չէր խանգարուել. հինաւուրց բերդը հաւատ էր ներշնչում. այստեղ պատճառ չկար շատ վախենալու։ Կէսօրը անց հասանք Ալեքսանդրապոլ. ձիւնը կայարանի մայթին հալել է, կազմելով ծփուն տիղմ։ Երեք տարի առաջ, դպրոց գուռնայով մեզ այստեղ դիմաւորեց կինոոյատիպ մի ամբոխ։ Նոյն մարդիկն էին եւ այժմ ճկուն, շարժուն ու ցրտից կարմրած քիթերով։ Յուզուած, նորութիւններով անհանգիստ, կարծես բոլորն էլ փընտռում էին բոլորին ու իրար էին գտնում։ Ահա մէկը, որ, արխալուղը հովին, մազերը ցրիւ, բռնում է միւսի շլինքից, նրան յետ շրջում ու երեսն ի վեր դոչում.

— Տօ՛, իշու ճաղ, ի՞նչ ես կայներ. արի երթանք արող գրուինք։

Արո՞ղ, արո՞ղ, արո՞ղ՝ դաղթող ժողովուրդը փոխադրելու, մնացորդների կեանքը փրկելու. այժմ այդ էր օրուայ կարգախօսը...

ARAM webaram.com

Աւելի վեր՝ դէպի հիւսիս, Ղարաքիլիսէ. Սանահին, ժողովուրդը հանդարտ է եւ փիլիսոփայօրէն խոզապ. նախ՝ հեռու են դէպքերը, ապա՝ ինչ լինելու է, կը լինի: Կայարաններում հանդիպում էին միայն տարիքաւորներ, որոնք կորաքամակ անցնում էին մայթերով, ապա՝ բթամատերով գօտիներին կառչած՝ կանգ էին առնում ու անորոշ ուղղութեամբ նայում: Ո՛չ մի հետաքրքրութիւն. այլեւս ոչինչ չէ կարող նրանց զարմանք պատճառել:

Լոռու փարթամ բնութիւնը դեռ չէր ձերբազատուած ձիւնից. լերկ ծառեր, բնները ցից, մերկ թեւերը պարզած, դեռ սպասում էին իրենց կանաչ զարդերին:

Առաւօտ էր, երբ հասանք Նուխիլուղ, որ ասել է Թիֆլիս: Իրար յաջորդող մշուշապատ սարերը մնում են թիկունքում: Ապա յայտնւում է Մամա - Դաւիթի լեռը, որ ճեղքել է սարերի շղթան, շնչահատ առաջ վազել ու յանկարծ, ապշահար կանգ առել՝ քաղաքի առաջից հմայուած: Նա հիւրընկալել է իր փէշերին քաղաքի ծայրամասերը: Այստեղ զարուն է. Կոչարի ուղղութեամբ տարածւում են մուգ – կապոյտ կանաչներ: Վարը լայնանիստ տարածուել է շքեղ Թիֆլիսը, որի հեռաւոր փէշերը կորչում են ցրտապարզ այդիների մէջ: Ահա եւ Կուր գետը, որ քաղաքը երկու հաւասար մասի բաժանած՝ օձապտոյտ երկարել է արծաթագոյն ժապաւէնի պէս: Գարնանամուտի արեւը կայծկլտում է տների ապակիներին, որոնք կարծես լուացուած ու սրբուած են: Առուած իմ, ո՞րքան կայուն են իրերը, եւ ի՞նչքան երերուն է մարդկանց ճակատագիրը...

Երբ գնացքը կանգ առաւ, ինձ պատկերացաւ երեք տարի առաջ մեր շոնդալից մեկնումը: Փոխոխութիւն-

ARAM webaram.com

ները անչափելի էին։ Կայարանը լեցուած էր տուն դարձող անպլուխ զինուորների բազմութեամբ։ Երեւանեան հրապարակը խաղաղ կերպարանք էր ստացել, դրոյց էին անում։

Վելեամինովկայում եւ Բեհրուտեան փողոցներում մի քանի մարդիկ քաղաքապետարանի առջեւ կանգնած՝ հաւաքուած էր տարագիր բազմութիւն։ Զորքորդ հիւանդանոցը, ուր առաքուած էինք, դանուում էր այդ շրջանում։ Մեզնից միայն հինգ հոգի կարելի եղաւ այդտեղ տեղաւորել, այն էլ շնորհիւ բժշկի Գ. Սաղեանի ջանքերի. թափուր տեղ չկար։ Մնացածները տոմս ստացան Արամեանի շէնքին կից դարմանատան մէջ բուժուելու եւ այնտեղ էլ մնալու։ Երեւանեան բանուկ հրապարակը դրեթէ ամայի էր։ Սակայնի արճարանում չկային այլեւս երկարամաղ ակնոցաւոր մտաւորականներ, որոնք այն ժամանակ վիճում էին քաղաքական դէպքերի շուրջ ու հանում հետեւութիւններ, որոնցից եւ ոչ մէկը չիրականացաւ։ «Անատոլիա» ճաշարանում, ռազմաշունչ կամաւորների փոխարէն, խմբուած էին Արեւմտեան Հայաստանի զանազան շրջաններից փախստականներ։ Քիչ աւելի կեանք կար Գոլովինեան պողոտայում։ Պալատին կից ռուսական տաճարի երկաթաձող շրջափակի մէջ խմբուած էին ռուս բարձրաստիճան զինուորականներ. երեւի՝ նշանաւոր անձի հոգեհանգիստ էին կատարում։ Քիչ աւելի վար, միւս մայթին, Աղեքսանդրեան այգու մուտքին չհասած, բարձրանում է Արամեանցի հինգյարկանի տունը, ուր հակառակ մեծահարուստ տիրոջ կամքի, այժմ տեղաւորուած է Հայոց Ազգային Խորհուրդը իր յարակից կազմակերպութիւններով։ Դէպքերը այնպէս տակնուվրայ են արել ամէն բան, որ ներկան ու անցեալը խառնուել են գլխիս մէջ...

Մի քանի օր անցած Արամեանցի տան առաջին յար-

ARAM webaram.com

կում հասատատուած ընդարձակ ճաշարանում ուսիս ի-ջաւ մի ձեռք. պարոն Թաթիկեանն էր։

— Վերադարձել ես ու չես յիշում մեզ, թեւդ ի՞նչ է եղել։

— Ոչինչ բան է, նստեցէք, ասացի անակնկալի մատնուած։

— Ո՛չ, եթէ դարձ չունիս այստեղ, տուն գնանք. ճաշի ժամանակ է։

Թէեւ անցել էր երեք տարի, բայց նախապէս հին մանկական յիշողութեան պէս էին պատկերանում ինձ Թաթիկեանների տունը եւ այն առաջին զգացումները եւ զգայութիւնները, որ արթնացան իմ մէջ Անահիտի նկատմամբ։ Այժմ որքան մօտենում էինք բնակարանին, այնքան յուզումը համակում էր ինձ։

— Գոնէ Կարսի տակ կարո՞ղ կը լինեն կասեցնել թուրքերի առաջխաղացքը, հարցրեց Թաթիկեանը, երբ մի քանի խօսքով պարզեցի ճակատի անյոյս վիճակը։

— Թերեւս...

Մեր այն ապշիկները կարող են այնպէս փթթել, ինչպէս տեսայ Անահիտին. մեծացել էր, գեղեցկացել. կեցուածքը՝ լուրջ, իմաստալից։ Նա արագ մօտեցաւ ինձ միջանցքում, բայց երբ խօսեց, դժուարութեամբ կապեց ասելիքը իրար հետ.— Գիտէի, որ եկել էք, բայց ձեզ չտեսայ. ա՜խ, ո՛չ, մի անգամ տեսայ ձեզ Աբրամեանցի տան դիմաց. պարոն Եանբզեանը՝ ասաց, որ դուք էք։

Ցայտնուեցին մայրը եւ մեծ քոյրը։ Քիչ - քիչ այդ ընտանիքի ջերմ մթնոլորտը կազդուրեց ինձ։ Փոքրիկ քոյրը՝ Սեղիկը, որ այն ժամանակ հազիւ մէկուկէս տարեկան էր, այժմ ազատ խօսում էր, «կշն «տ» հնչելով։ Անահիտը մանկութիւնից պահպանել էր գլուխը թեք բռնած լսելու սովորութիւնը, երբ խօսում էր հայ-

ARAM webaram.com

1919 ԱՇՆԱՆ, ԵՐԵՒԱՆ – ՓԱՆԱՓԵՌ: Ձախէն աջ· 1·— ՄԻՍԱՔ ԹԷՀԼԻՐԵԱՆ, Սողոմոնի եղբայրը, Սերպիայէն կամաւոր գացած է: 2·— ՍԱՀԱԿ ԹԷՀԼԻՐԵԱՆ, Սողոմոնի հօրեղբօրորդին, Սելանիկէն կամաւոր գացած է: 3· — ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆ, 1915ին, Փանաֆեռ, Ա· բանակի մէջ գործակատար:

ARAM webaram.com

ը։ Իսկ պ. Նշանը շարունակում էր հարցափորձել տխուր բանէրի մասին.

— Ուրեմն, Մարտիրոսի բազմանդամ ընտանիքից ոչ ոք չի փրկուել։

— Ոչ ոք։

— Իսկ ինչո՞ւ ես կարծում, որ մեր Շահէնը ողջ է...

— Թրքական բանակին մէջ դեռ կան հայ ոպաններ, որոնք շարունակում են ծառայել։

Գիտէի, որ սիրած եղբօրորդին՝ Շահէնը ոչնչացուել էր շուրջ 2000 հայ գինուորների, ոպանների հետ միասին, Խարբերդի շրջանում, ուր նրանք աշխատում էին ճանապարհների շինութեան վրայ, իբրեւ «ամէլէ»-ներ, բայց այնքան շատ էին անհաճոյ տեղեկութիւններս, որ ստիպուած էի այդ մասին լռել։

— Ո՛րքան աշխատեցի այստեղ բերել ամլ. քանիս անգամ գրեցի...

— Իսկ Մամճեանները ի՞նչ եղան, հարցրեց տիկին Զուարթը։

— Փչուած ու ջարդուած են, տիկին։

— Իսկ մեր հարեւան Դանիէլեաննե՞ր։

— Բաւական է, միջամտեց պ. Նշանը։

* * *

Արդէն իրազեկ էի կացութեան։ Քաղաքի ծայրամասերում, Հաւլաբարում, Շէյթան բազարի, Սալտատրաքի բազարի թիկունքում, Խոջամանքի գերեզմանատանը եւ այլ տեղեր հաստատուած էին պաղեստինական կայաններ։ Տարագիրների մի հոծ բազմութիւն կուտակուած էր քաղաքից հեռու Բակուբեանի շրջանում։

Թէեւ «Հայկական շարագրծները» — որոնց պատ-

ARAM webaram.com

ժելու պատրաստակամ թուրքերը խախտեցին զինադադարը դեռ Երզնկայից սկսած — փաղուց արդէն ապատանել էին Անդրկովկաս, բայց թշնամին՝ բնաջնջելով արեւմտահայութիւնը՝ գալիս էր վերջ տալու նաեւ կովկասահայերի գոյութեան։ Վրացիների համար թրքական վտանգը գոյութեան խնդիր չէր, այլ քաղաքական հարց։ Թաթարները բացէ բաց անցել էին թշնամու կողմը եւ այլեւս առանց քաշուելու աշխատում էին թուրքերին առաջնորդել Անդրկովկաս։ Նրանք ամէն տեղ կազմակերպում էին խռովութիւններ, շարժումներ. կատարում էին լրտեսութիւն ամենալայն չափերով ու բոլոր միջոցներով քայքայում թիկունքը։

Մարտի կէսերին Կարսի շրջանում սկսուած քրտերի ու թաթարների շարժումը տարցել էր կազմակերպուած զինուորական գործողութիւնների բնոյթ։ Զինուած խալամական խմբեր շրջապատել էին Մուրտինեկն ու Արտահանը, ուր տեղի կ'ունենային կատաղի կռիւներ։ Հազարներից բաղկացած աւազակային խմբեր, սահմանամերձ մասերում բնաջնջում էին հայերին։

Անդրկովկասում անհամաձայնութիւններ երեք ազգերի միջեւ, յատկապէս հայերի եւ թաթարների, պնդում ծաւալում եւ խորանում էին թէ՛ Սէյմի, թէ՛ Անդրկովկասեան կոմիսարիատի մէջ։

Այս պայմաններում Տրապիզոնի մէջ սկսուած հաշտութեան բանակցութիւնները թուրքերի ձեռքին դարձել էին խաղալիք։ Վեհիբ փաշան շարունակում էր առաջանալ Բաթումի, Արտահանի ուղղութեամբ՝ ամէն օր պրուակում նոր վայրեր։ Ռէուֆ բէյը խօսում էր հաշտութեան «նախնական պայման»ների մասին, որոնց միակ իմաստն ու ձգտումն էր քայքայել հայ - վրացական՝ առանց այն էլ թոյլ գործակցութիւնը։ Շշմեցուցիչ հեռագիրներ էին տեղում Թիֆլիս՝ Կարսի շրջանային կոմիսար Զամոյանի, Արտահանի շրջանային կո-

ARAM webaram.com

միասը Շապալովի, Քաղաքային եւ Շրջանային գործադիր կոմիտէի նախագահ Սարալիձէի, գանձապետ Իւանովի ստորագրութիւններով այդ շրջաններում տիրող տակնուվրայութիւնների, աւազակային խմբերի յարձակումների, կոտորածների, կողոպուտների, գանգրուածային գաղթերի մասին։ Եւ այն ժամանակ, երբ Սէյմի ամբիոնից հնչում էին յուզումնալից ճառեր, ուղղուած «ներքին թշնամու» դէմ, բերնէ բերան պատմում էին ինչ որ գաղտնի թուրք - վրացական բանակցութիւնների մասին, որոնց համաձայն Զիւենկէլին Տրապիզոնում աշխատում էր Բաթումը պահել Անդրկովկասի սահմաններում — Կարսն ու Արտահանը թուրքերին յանձնելու պայմանով։

Ապրիլի 13ին թուրքերը մտան Բաթում։ Քիչ անց Թիֆլիզ հասաւ Տրապիզոնի պատուիրակութիւնը, եւ շրջան անող վրաց - թրքական գաղտնի համաձայնութեան գրոյցները ստուգուեցին։ Զիւենկէլին յանձնել էր Բաթումը թուրքերին՝ Բրեստի համաձայնութիւնը Անդրկովկասի վերաբերող մասով իրականութիւն դառնալուց յետոյ այդ քաղաքը Վրաստանին կցելու պայմանով։ Հայերի դէմքին գոյն չկար։ Ապրիլի 22ին վրացի եւ թաթար քաղաքական գործիչները Անդրկովկասը յայտարարեցին «անկախ պետութիւն», որ հանդիսանում էր թուրքերի կողմից պահանջուած հաշտութեան «նախապայմաններից առաջինը։ Նոյն օրը Գեղեչկորիի կառավարութիւնը հրաժարուեց ու հաստատուեց մի նորը, որի մէջ Զիւենկէլին ամէն բան էր՝ և՛ արտաքին գործոց նախարար, եւ վարչապետ, և՛ «հաշտութեան բանակցութիւն»ների պատուիրակութեան նախագահ։ Հաշուի առնելով նախորդ կառավարութեան տատանուող ռուսասիրական օրիանթացիան, կարելի է ասել, որ այս փոփոխութեամբ մարմին էր առնում չեշտուած թրքասիրական քաղաքականութիւնը։

ARAM webaram.com

Ապրիլի 24ին Ակակի Զիմենկէլին հրահանգեց հայկական ուժերի հրամանատար զօրավար Նազարբէկեանին՝ կարսը յանձնել Թուրքերին։ Թաթարները ցնծութեան մէջ էին, Կարսի յանձնումը նշանակում էր Թուրքերի անարգել առաջխաղացութիւնը դէպի հարաւային Անդրկովկաս։ Վրաց քաղաքական գործիչները այժմ բանակցում էին Թուրքերի հետ՝ Բաթումը յետ ստանալու եւ անկախ Վրաստան կազմելու ցանկութեամբ։ Աննախընթաց ոգրերգութեան օրեր էր ապրում Թիֆլիզի հայութիւնը։

Այդ օրերին Թիֆլիզում յայտնուեցին Մուրատն ու Սեպուհը։ Վէրքս բուժուելու վրայ էր եւ առիթից օգտուեցի նրանց տեսնելու՝ անելիքս ճշդելու համար։ Բայց երանի՛ տեսած չլինէի հայկական ազատամարտի այդ երկու հին մարտիկներին այն վիճակի մէջ. անճանաչելի էին, գառնացած, յուսահատ եւ քարոյալրքուած։ Մուրատը այնուամենայնիւ ինձ ասաց, որ մարտադիր է կազմել ձիաւոր մի խումբ, լեռնային ճանապարհներով Ալեքսանդրապոլ մեկնելու համար, հէնց որ Ազգային Խորհուրդը հաւանութիւն տայ այդ գործին, եւ խոստացաւ ինձ այդ խմբի մէջ առնել։ Մի քանի օր յետոյ իմացայ, որ Հիւսիսային Կովկասով մեկնել է դէպի Թուրքիան՝ իր ուժերը Լենինին տրամադրելու որոշումով...

Մայիսի կէսերին Թուրքերը գրաւեցին Ալեքսանդրապոլը։ Ապա կռիւները ծաւալուեցին Ղարաքիլիսայի շրջանում, ուր մի քանի յաջող ընդհարումներից յետոյ, հայերը ստիպուած եղան տեղի տալ ու բռնել նոր դիրքեր Բոգիդիզի ու Նիկիտինայի շրջանում՝ փակելով Երեւանի ճանապարհը։

Ղարաքիլիսան գրաւելուց յետոյ, Թուրքերը իրենց ուժերի մէկ մասով շարժուեցին դէպի Հիւսիս՝ Թիֆլիզի ուղղութեամբ։ Միաժամանակ ոտքի ելաւ եւ Սա-

ARAM webaram.com

տախլու Սանտարի շրջանի մահմեդականությունը, որ կարեց երկաթուղային հաղորդակցությունը հարաւային Անդրկովկասի հետ։ Այդ օրերին դրաւեալ վայրերից տեղահան եղած տարագիրների ծայրը արդէն հասել էր Թիֆլիզ։ Մերկ ու սոված բազմահազար գաղթականների նոր շարքեր ամէն օր յայտնւում էին Թիֆլիզում ու դեռ վերջը յայտնի չէր։

Նման մի բազմութեան մէջ մի օր, յանկարծ, նշմարեցի բարձրահասակ Յովհաննին։ Քայլում էր կքած, ծանր հիւանդի պէս։

— Յովհա՛ն...

Կանգ առաւ, տատամսոտ նայեց դէպի մայթը մէկի նման, որ ինչ անելը չգիտէ, մինչեւ մօտեցայ ու դուրս քաշեցի բազմութեան միջից.

— Տօ էտ ի՞նչպէս, ուրեմն, դո՞ւ ես,— դոչեց նա ուրախացած, փոփոխեր վար առաւ, ճակատի քրտինքը նրանով սրբեց։ Մէկ ձեռքին ունէր գինուորի պայուսակ, միւսի անութին տակ սեղմել էր մի բարձիկ եւ վերմակ։ Կարծես ուզում էր ինչ որ բան վերյիշել՝ ցից աչքերի վերը խոր ընկած մանր աչքերը թարթելով ասաց.

— Այս անգամ հազիւ խալսեցանք մահէն, աղբարը, կրակի բոցերէն ելանք։ Բայց դարձեալ կը մնայի, եթէ ասանկ չըլլար. անպլուխ մնացինք։ Մուրատի մեկնելէն ի վեր ամէն բան գնաց, հիմա կ՝ուզեմ գինքը տեսնել, հասկնալ, թէ ի՛նչ պիտի ըլլայ մեր վերջը։ Կ՝ուզեմ Մուրատէն հրաման առնել, բոլշեւիկ դրուիլ եւ ցարական ռուսերուն դէմ կռուիլ. անոնք քանդեցին մեր տունը,— ասում էր Յովհաննը լեզուի ծայրով թրջելով շրթունքները։

— Մուրատը այստեղ չէ։

— Ի՞նչ կ՝ըսես, գոչեց յուսահատ։

— Այո՛, մեկնել է Հիւսիսային Կովկաս։

ARAM webaram.com

ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆ
(1915–ին)

ARAM webaram.com

— Հէ՛յ – վա՛խ...

Կարծես հոգը ոտքերի տակից փախաւ, այնպիսի յուսահատ վիճակի մատնուեց։

— Ձե՞ս կրնար Ազգային Խորհուրդէն միջոցներ խնդրել, որ երթամ...

— Ո՞ւր։

— Անոր եռեւէն, ի՛նչ գիտնամ...

* * *

Ճակատագրական օրեր էր ապրում Անդրկովկասի հայութիւնը։ Օրհասական պայքար էր մղում Թուրք զինուորական ուժերի դէմ Արարատեան դաշտի հայութիւնը Սարտարապատի տակ, ուր կռիւը ժղւում էր Վարդանանց պատերազմի կրկնութեան նշանախօսքի տակ։ Քառասային կացութիւն էր Թիֆլիզում. ամէն տեղ խճողուած էին բազմահազար գաղթականներ։ Սէյմը եւ Անդրկովկասի կառավարութիւնը ապրում էին իրենց քայքայման նախօրեակը։ Վրացիները ճգտում էին դուրս գալ ապագայ դժուարութիւններից՝ յայտարարելով Վրաստանը անջատ ու անկախ։ Օրը – օրին խարանում էր հայ - թաթարական հակամարտութիւնը, վերջիններիս առաջնորդում էին թուրքերին Բաքու. հայերը մնացել էին մենակ՝ արեան ու կրակի մէջ։ Այս պայմաններում իմաստ չկար Թիֆլիզում անգործ ժամանակ վատնելու մէջ, եւ յաջորդ օրը Յոմնանի հետ մեկնեցինք դէպի Փոթի։ Արդէն ծաւալուած քաղաքացիական կռիւների պատճառով, այն ժամանակ, դիւրին չէր արագութեամբ Ռուսաստան անցնել, եւ մենք յոյս ունէինք Հիւսիսային Կովկասում հասնել Մուրատին եւ նրան միանալ։ Գնացքը լիքն էր Հիւսիսային Կովկաս գաղթողների բազմութեամբ, որի ստուար մասը կազմում էին Թիֆլիզեցի հայեր։ Աւելի մեծ էր տարագիրների կուտակումը Փոթիում։ Բոլոր հիւրանոցները,

ARAM webaram.com

քարանձաբանները, ճաշարանները, կաթնատները լեցուած էին վերջին ծայր։ Տեղում էր յորդ անձրեւ՝ խորտուբորդ մայթերին գոյացնելով լճակներ։ Ուղղակի դիմեցինք դէպի նաւամատոյց, ուր այդ պահին պիտի մեկնէր մի նաւ դէպի Տուապսէ։ Բայց տոմսերը սպառուած էին եւ անկարելի էր այդ առիթից օգտուիլ։ Ուղում էինք յետ դառնալ քաղաք, երբ, յանկարծ, Յովնանը գոչեց.

— Տօ՛, նայէ...

Սպասման սրահի մի անկիւնում գնդապետ Թորգոմը գրուցում էր մի սիրասուն, մանկահասակ կնոջ հետ։ Մօտը իրար վրայ դարսուած էին ճամբորդական պայուսակներ։ Տիկնոջ մօտ կանգնած էր տասիքառ մի ուրիշ կին, հաւանաբար մայրը։

— Կանչէ նայինք, ի՞նչ կ՚ընէ հոս։

Անյարմար էր. մօտեցանք բարեւելով անցնելու։ Տեսնելով մեզ Թորգոմ խօսքը ընդհատեց ու ձեռքի թեթեւ շարժումով մեր բարեւը առնելով՝ իշխանօրէն ասաց.

— Ի՞նչ կ՚ընէք հոս։

Պարզեցինք, որ եկել ենք Տուապսէ մեկնելու, բայց տոմս չլինելու պատճառով ստիպուած ենք վերադառնալ քաղաք։

— Տոմսը խնդիր չէ, հոս քիչ մը սպասեցէք, կը կարգադրեմ։

Յետ քաշուեցինք՝ զարմացած Թորգոմի ինքնավստահ ձեւից։ Բայց երեւի որեւէ պաշտօնական հանգամանք ունէր, կամ ծանօթներ՝ այստեղ։

Գնդապետ Թորգոմը շարժուձեւերով պատկերացնում էր ինչ որ հեռաքրքրական պատմութիւն կամ պատերազմ. մանկահասակ տիկինը լարուած ուշադրութեամբ լսում էր։ Մայրը մերթ ընդ մերթ նայում էր գնդապետին ու ասես բերանը ծածկելով յօրանջում։

ARAM webaram.com

Ահա կարծես վերջացու պատմութիւնը. գնդապետը թեթեւօրէն շարժուեց դէպի մեզ՝ փայլուն, երկարավիզ կօշիկների խթանները զարնելով գետին։

— Բարեւ, տղայք, ասաց զուարթօրէն, կարծես նոր էր տեսնում մեզ։ Ո՞ւր կ՚ուզէք երթալ, դարձաւ նա ինձ, վերջին բառի հետ ընդհուպ փակելով բերանը ու առաջ նետելով ծնօտը։

— Տուապակ, յետոյ՝ Արմաւիր։

— Աղէկ, սպասեցէ՛ք հոս, միասին կ՚երթանք։

Քառորդ ժամ չանցած մեզ երկու հատ տոմս բերեց՝ խնդրելով օգնել իրեն նեբս առնելու համբորդական պայուսակները մեկնելու ժամանակ։

Կէսօր էր, երբ նաւը հովահարաձեւ ալիքներ պարզելով քարափում՝ շարժուեց դէպի բացերը։ Անձրեւը վազուց դադարել էր, ծովը հմայիչ էր, արեւի հառապայթները ամպերի ճեղքերից փշուր - փշուր թաւալում էին ջրերում, պարզելով մի հսկայական ոսկեփեռուր ընդարձակ տարածութիւնների վրայ։ Հայելու պէս հարթ, լեղակի պէս կապոյտ ծովի անհեռացող հորիզոնների թիկունքում նշմարւում էին Պոնտական լեռների մշուշապատ ուրուագծերը, որոնց թիկունքում ընկած էր հայրենիքս։ Մղձաւանջային երազ էր թւում ամէն բան...

Գնդապետ Թորգոմը զրուցում էր տիկնոջ հետ. մայրը նիրհում էր արեւի տակ։ Իրիկուան դէմ, երբ տիկինն ու մայրը ելան վար, գնդապետը մօտեցաւ ինձ ու թեւս առնելով քաշեց մայթի միւս ծայրը.

— Կ՚ուզէի քեզի հետ խօսել կարեւոր խնդրի մը մասին, բայց նախ պարզեմ քեզ կացութիւնը. պատերազմը կը մօտենայ վախճանին, ասաց նա մարգարէի պէս նեբշնչուած, վերջին բառին հետ ամբապէս փակելով բերանը։ Ապա շարունակեց.

— Ֆլանդրիոյ մէջ, Իպրի ու Լա - Բասէի ուղղու-

ARAM webaram.com

թեամբ, գերմանացիներու յարձակումը յաջողութիւն չունեցաւ. անոնք հոգիւ 20 քիլոմէթր խորութեամբ ճեղքուած մը առաջ բերին ու կանգ առին, այնինչ անոնց նպատակն էր ջախջախիչ հարուած տալ անգլիական ուժերուն: Անցեալ անցաւ եւ անոնց վերջին յարձակումը Փարիզի ուղղութեամբ: Ապրիլ 5էն սկսեալ Ամերիկան դարձեր է գործօն ուժ, եւ ան է, որ այժմ պատերազմը կը մղէ վախճանին: Անգլիական բանակը, կատարուած եռամսեայ աշխատանքներուն շնորհիւ, այժմ մեծ արժէք է ստացած: Այս պարապմունքներուն մէջ յայտնի է, որ ռուսական ճակատին հաշուի յարգելու կեղրոնական պետութիւններուն վիճակը չի փրկեր: Աւստրօ-Հունգարիան, Բուլգարիան արդէն հաշտութիւն կ'ուզեն: Աւելի գէշ է Թուրքերուն վիճակը. Միջագետքի ճակատին վրայ Թուրքերը ենթակայ են ջախջախիչ պարտութեան. Մարտ 26էն ի վեր անգլիացիները գրաւած են Բաղդատը. Սիւրիոյ մէջ Թուրքերը անդարձ կը նահանջեն Եաֆա - Երուսաղէմ բովանդակ գծի վրայ...

Մեծ հետաքրքրութեամբ էի լսում գնդապետի ախոսիչ տեղեկութիւնները, որոնք նորութիւն էին ինձ համար:

— Տեսնենք այժմ ի՞նչ կ'անցնի - կը գաւառնայ մեր շուրջը, յարեց նա: Թաթարներու ընթացքը պարզ է. անոնք կ'ուզեն Թուրքերու գերիշխանութեան ենթարկել Անդրկովկասը՝ բաժնելով երկիրը իրենց եւ վրացիներու միջեւ, իբրեւ կիսանկախ երկիրներ: Աւելի բարդ է ու շատ կողմերով ուսանելի վրացիներու ընթացքը: Երեք օր առաջ Թիֆլիզի մէջ ատոյդ ազգերէ իմացայ, որ անոնք ունեցեր են գաղտնի խորհրդակցութիւն Վրաստանի անկախութիւնը յայտարարելու մասին. ասոնք կը ձգտին, որ իրենց անկախութիւնն ու հոգայինն ամրողջութիւնը երաշխաւորուի Գերմանիոյ կողմէ:

ARAM webaram.com

Վերջինին ներկայացուցիչը պիտի ըլլայ վրաց կառավարութեան մօտ Կոմս Շուլենբուրգը։ Արդէն ստորագրուած են կարգ մը գաղտնի համաձայնութիւններ գերմանացիներուն հետ երկրի հաղորդակցութեան միջոցներն ու հարստութիւնները օգտագործելու մասին։ Գիշեր - ցերեկ այս կարգի գաղտնի բանակցութիւններ կը վարեն Զիմենկէլին, Նիկոլաձէն, Ժորտանիան, Սուրգուլաձէն, զօրավարներ՝ Քվինիտաձէն, Օտիշիլիձէն և վրաց այլ պետական գործիչներ։ Անոնց վարած աշխատանքներուն իրազեկ են Խան Խոյսկի, Խասմամէտով, Սաֆիքիւրտակի, Ուսուֆբէկով, Զաֆարով եւ թաթար այլ պետական գործիչներ։ Վրացիները համաձայն են, որ արեւելեան Անդրկովկասը ունենայ գործելու ազատութիւն ու տնօրինէ իր բախտը Թուրքերու օգնութեամբ։ Ասանկ ահա, ամենատորին գաւառաճանութեամբ մենք՝ հայերս ձգուած ենք երեսի վրայ, արեան ու կրակի մէջ։ Երէկ Փոթիէն մեկնեցաւ Բերլին գերման պատուիրակութիւնը՝ Ֆոն Լոսովի գլխաւորութեամբ. Թուրքերը ուզածնին կ՚ընեն եւ դայն բանի տեղ չեն դներ, իսկ ուրիշ ոչ մէկ պաշտպան ունինք մենք։ Հիմա քեզի կը հարցնեմ, ի՞նչ ընելու է այս պայմաններուն մէջ։

Նրա սեւ աչքերը վրէժխնդրօրէն կայծկլտում էին, առաջ ցցուած ծնօտով վրան կենտրոնացած դէմքը քարացել էր։ Նորութիւն չէին մեր շուրջը դարձող գաւառրութիւնները, բայց առաջին անգամն էր լրիւ հաշիւ տալիս ինձ։

— Է՞, դժուար է, չէ՞, պատասխան գտնելը, ասաց խիստ յուզուած. բայց ես պատասխան ունիմ ու նոր չէ, որ կ՚ըսեմ ասիկա, անհրաժեշտ է գաւառաճանները կանխել եւ անմիջապէս հռչակել Հայաստանի անկախութիւնը, յարեց գնդապետը հատ - հատ շեշտելով բա-

ARAM webaram.com

ռերը ու նրանց արժէքի համաձայն բաց ու խուփ անելով բերանը։

— Երեք օր առաջ Թիֆլիզ վերջին փորձ մը ըրի. դարձեալ խենթ կարծեցին զիս եւ ոչ Ազգային Խորհուրդի անդամներուն, ոչ ալ մեր գործիչներուն չկրցի հասկցնել, թէ ո՛րքան անհրաժեշտ է ժամ առաջ անկախութիւն հռչակել։ Այժմ կ՚երթամ Մոսկուա, հոնկէ պիտի անցնիմ Աբխազէլոք ու նաւ առնելով շիտ – շիտակ պիտի մեկնիմ Լոնտոն՝ հայկական անկախութեան ի նպաստ գործի ձեռնարկելու համար։ Նախնական բոլոր աշխատանքները կատարած եմ եւ տարակոյս չունիմ յաջողութեան վրայ. ատուղապէս գիտեմ, որ անգլիացիները համամիտ են ատոր։ Հիմա կ՚առաջարկեմ այդ գործին մէջ միանալ ինծի. ճամբու ծախքդ կը հոգամ, տեղ հասնելէն ետքն ալ գիւրին է, ի՞նչ կ՚ըսես...

Խօսքերի վերջաւորութիւնը այնպիսի անակնկալ էր, որ զարմացած նայեցի։

— Զգէ այդ «կամաւորական» ծրագիրներդ, ոչ թէ մէկ, այլ տասը «Մուրատ» իսկ չեն կրնար մեր կացութիւնը փրկել, մենք չէ՞ որ պէտք է որոշենք պատերազմի բախտը։ Ա՛լ կը բաւէ, քիչ մըն ալ խնայենք մեր արիւնը ու քաղաքականութեան նայինք, գուն կրնաս ինծի օգտակար ըլլալ հայկական շրջաններու մէջ ձեռնարկելիք աշխատանքներուս ուղղութեամբ. ապրիլ առաջարկը, որ կ՚ընեմ, մեծ ապագայ կը խոստանայ անձնապէս եւ քեզի։

— Գնդապե՛տ, ներեցէք, բայց ես ոչ մի կոչում չունիմ դիւանագիտական աշխատանքների համար. այդ իմ գործը չէ, ասացի ես...

— Ափսո՛ս, ասաց նա եւ զինուորականի համաչափ քայլերով մեկնեցաւ։

Ամպի տակից մի անդամ էլ դուրս նայեց արեւը հրավառ աչքերով ու չքացաւ։ Վարը, նաւի ամբարի

ARAM webaram.com

դուրս ցցուած բարձրութեան վրայ շարուել էին աւար հակախորհրդային ճամբարներ եւ երգում ու խմում էին։ Բաժակաճառերի մէջ յաճախ լսում էի Կալէտինի ծանօթ անունը, որ քիչ առաջ անձնասպանութեամբ վերջ էր տուել իր բախտախնդիր կեանքին, ու մղձաւանջի պէս նորից ինձ պատկերացաւ Երգնկան։

* * *

Առաւօտը ուշ հասանք Տուապսէ։ Շնորհակալութեամբ բաժանուեցինք գնդապետից իր ընձեռած աջակցութեան համար Փոթիում ու վար իջանք։ Հեռուից գեղեցիկ, ամփիթատրոնաձեւ իրար թիկունք հենած շէնքերով Տուապսէն ներսից անհրապոյր էր։ Հայ տարագիր բազմութիւններ բռնել էին ծովեզերքի բացերը. գնում էին, կամ պիտի գնային դէպի Հիւսիս։ Քաղաքի մէջ վրացիները տօնական տրամադրութեան մէջ էին։ Վրաստանը հռչակուած էր անկախ պետութիւն։ Հակընդէմ տրամադրութիւնների այս բարեբռնում ոուսներն էլ իրենց յոյզերը ունէին. քաղաքացիական կռիւները թաւալգլոր տարածւում էին երկրի մէջ։ Ռուսաստանի հարաւում շարժման նախաձեռնութիւնը պատկանում էր Դոնի կոզակներին, որոնք դեռ Ապրիլից ապաստանում էին երկիրը, Ազամատ Կրասնովի գլխաւորութեամբ։ Նրանք տիրում էին ծովեզերքի մեծ մասին, Դոնի շրջանին, ու տարածուելով դէպի արեւմուտք եւ Հիւսիս, ապառնում էին գրաւել բոլանդակ Հիւսիսային Կովկասը...

Արմաւիրը նոյնպէս խճողուած էր հայ տարագիրներով. մի շաբաթ առաջ Թիֆլիզից մեկնած հոծ բազմութիւնների ծայրը արդէն հասել էր այստեղ։ Հանդոյները ճիւղաւորւում էին երկու ուղղութեամբ. ոմանք դէպի Հիւսիս - արեւմուտք, դէպի Ռոստով. ոմանք էլ դէպի հարաւ - արեւելք, Վլատիկովկասի ուղղու-

ARAM webaram.com

թեամբ. այս վերջին ուղղութեամբ գաղթում էին թիֆ-լիզեցիները եւ առհասարակ կովկասահայերը: Իմացայ, որ մի խումբով մեկնել են եւ Թաթիկեանները դէպի Էջէնուկի: Տարագիրների առուտրագոյն մասը արեւմտահայ էին որոնք ահա երբորդ տարին է ինչ վայրից վայր են գաղթում: Ասում էին որ Թիֆլիզից Բագմավիրական ճանապարհով շարժւում են հազարաւոր սայլեր, կառքեր, ինքնաշարժներ, գրասներ, ֆուրգոններ՝ բեռնաւորուած տնային իրերով, ամէն տեղից գաղթող տարագիրներով դէպի Վլատիկաւկաս, իրր թէ մէկ մարդու տեղը ֆուրգոնում արժէ մինչեւ 10,000 ռուպլի: Հայոց աշխարհը տեղահան եղած՝ շարժւում էր. երեւի այդպէս էին գաղթել դարեր առաջ մեր բազմութիւնները դէպի Լեհաստան, Բալկանները եւ այլուր...

Մուրատը չկար. Սեպուհի հետ մեկնել էր Ցարիցին, այնտեղից Մոսկուա կամ Բագու գնալու դիտաւորութեամբ: Ցոմնանը պնդում էր գնալ Ցարիցին: Ասանց Մուրատի նրա կեանքը արժեզուրկ էր եղել. եւ այլեւս միտք չէի գտնում զեզերումների մէջ, տասել եւս, որ յայտնի չէր, թէ պիտի գտնե՞նք արդեօք Մուրատին Ցարիցինում եւ երբ գտնենք, ի՞նչ պիտի անենք. ծաւալուն թշուառութիւնը դիմագրաւելու համար անհրաժեշտ էին այլ միջոցներ, եւ իրաւացի էր գնդապետ Թորգոմը, որ ցաք ու ցրիւ եղած առանձին գործիչները այլեւս չէին կարող շօշափելի գործ տեսնել: Ես բաժին հանեցի Ցոմնանին դեռ Երզնկայում եղբօրից ստացած դրամներից, եւ նա նոյն օրը մեկնեց դէպի Ցարիցին, ինձ լուր տալու խոստումով:

Օրուան մեծ մասը անցընում էի տարագիրների մէջ, կայարանում: Նախկիններին վրայ կուտակւում էին նորերը ու կարծես վերջ չկար: Գաղթը տեղի էր ունենում անկազմակերպ: Եկուորները թողնուած էին

ARAM webaram.com

ԱՒԵՏԻՍ ԹԷՀԼԻՐԵԱՆ· Սողոմոնի երէց եղբայրը, որ բժշկական ուսանող էր Պէյրութի ամերիկեան համալսարանի մեջ, երբ մօտ գնաց 1915ի ապրիլեան եղեռնին:

ARAM Weekly Archive

Տեղական ռուս բնակիչների վերաբերմունքն էլ գնալով դառնում էր անբարեացակամ. կեանքը պահելու անհրաժեշտութիւնից մղուած՝ արեւմտահայ տարագիրները հանդէս էին գալիս շուկայում ամէն տեսակ գործերով, առեւտուր անում, սպառնում յեւ մղել հրապարակից ռուս մանրավաճառներին. ռանչպար հայը նրանց աչքում դառնում էր «ջհուտ»...

Աջակցում էի տեղական հայերից կազմուած գաղթականական մարմնի աշխատանքներին եւ ջանք չէի խնայում օգնել այդ թշուառութեան ինչով և ինչպէս կարող էի: Ամէն մի մայր, երեխայ յիշեցնում էր ինձ հարազատներիս, որոնց երեւակայում էի դեռ ողջ, Աբրաբիայի անապատներում, ի հարկէ, գոյութեան աւելի ծանր պայմաններում: Բայց երկար չտեւեցին այդ աշխատանքներս. գլխացաւ, կոտրտուք, տաքութիւն անպակաս էին ինձնից, երբեմն դառնում էր գլուխս ուշագնացութեան աստիճան, ինչպէս մի ժամանակ Երեւանում: Պարզուեց, որ վարակուած եմ տիֆով: Տակնուվրայութիւնների այդ օրերին միակ բարեկամներս թաթիկեաններն էին: Թէեւ շատ անհաճոյ էր, բայց ժամ առաջ անհրաժեշտ էր մեկնել Էսէնտուկի, քանի դեռ ի վիճակի էի շարժուելու:

Մի խումբ կովկասահայ տարագիրներ գնացքում վիճում էին Բաթումի դաշնագրի մասին, որի համաձայն, իբր թէ, Հայաստանը հռչակուած է անկախ պետութիւն: Ոչինչ չեմ հասկանում. աղօտ կերպով յիշում եմ Փոթին, նաւը, գնդապետ Թորգոմը: Կարծես հնոցի մէջ եմ. գնացքի դիզելոցը ծակծկում է ուղեղս: Երբեմն յաջողւում է ինձ լարել ճիգերս ու գրոյցից մի բան հասկանալ:

ARAM webaram.com

— Թանկա՞րդ է, եղբայր, եւ ոչ թէ անկախութիւն, գոչում է մէկը. տասնեակու հազար քառակուսի քիլոմէթր տարածութիւն ու ամէն կողմից թուրքերով շրջապատուած մէկ միլիոն հայեր... ի՞նչպէս կարող է ապրիլ այդպիսի մի պետութիւն:

— Դու հասկանո՞ւմ ես, թէ ինչ է կատարւում. ի՞նչ անէին, ուրիշ ի՞նչ ձեւով կարելի է մի քիչ շունչ առնել այս տեւական մղձաւանջից, ճչում էլ մի ուրիշը:

— Ուրեմն, եթէ մեր գահերը նուազագոյն չափով հաշուենք մէկ միլիոն երկու հարիւր հազար մարդ, պիտի գանք այն եզրակացութեան, որ նորատուկ Հայաստանի ամէն մի քառակուսի մէթր հողի համար գահարելել ենք մէկ մարդ, գառնօրէն ասում է երրորդը...

Բոլորն էլ շատ մարդասէր են. թէեւ յայտնել եմ, որ վարակուած եմ տիֆով, բայց չեն վախենում եւ ամէն կերպ խնամք են տանում ինձ: Ե՞րբ էր, չգիտեմ, որ նրանցից մէկի օգնութեամբ հասայ Թաթիկեանների մօտ շատ ծանր վիճակում: Երկյարկանի մի շէնք էր, պարտէզով:

— Ոչի՛նչ, ոչի՛նչ, կ'անցնի. ասում էր պ. Նշանը՝ օգնելով ինձ հանուել:

Ապա տարբերում եմ տիկին Զուարթը, Անահիտը, Զեփիւռը եւ մի ուրիշ մարդ, որ բժիշկ էր: Գլուխս արճիճի պէս ծանր, ականջներս կարծես ջարդուած էին:

Անցաւ երեք շաբաթ. գոյութիւնս պարզապէս էր Թաթիկեանների եւ յատկապէս Անահիտին, որ երկար, անքուն գիշերներ անցկացրեց անարիս մօտ քրոջ հոգածութեամբ խնամելով ինձ: Նա բծախնդրութեամբ հետեւում էր բժշկի պատուէրներին ու խստութեամբ գործադրում: Հիւանդութեանս ընթացքին նա իւրացրել էր ինչ որ իշխանութիւն որ յուճախ ինձ ցոյցնացնում էր=

ARAM webaram.com

Եւ սակայն մի բան հարկադրում էր ինձ երեխայի պէս հնազանդուել նրան եւ հպատակութիւնս ընդունիլ։ Անահիտն էր, որ վազվզում էր ամէն տեղ կաթ, մածուն պտնելու, որ այդ օրերին դիւրին գործ չէր։ Օրը օրին համոզւում էի, որ այդ աղջիկը տարբեր է իմ տեսած բոլոր կիներից։ Երբեմն ինձ թւում էր, թէ կեանքս շատ թանկ է նրա համար. ո՛նքան ջերմ հոգածութիւն էր արտայայտում ինձ հանդէպ։ Բայց լաւ դիտելով՝ միշտ պալիս էի այն եզրակացութեան, որ կ՝երթեւ-եկելի շատ նրան զբաղեցնում էր հիւանդութեանս դէմ պայքարելու գործը, քան անձս։ Երբեմն հօր հետ վէճ էր ունենում իմ շուրջը. բատ պ. Նշանի՝ չէր կարելի արդիլել ուտելը, երբ հիւանդը ախորժակ ունի. եւ իրաւունք ունէր, որովհետեւ կեանքիս մէջ այնպէս քաղց չէի զգացել, ինչպէս այդ ծանր օրերին։ Բայց դուր բան էր։ Անահիտը բժշկի պատուէրից մոգաչափ չէր շեղւում, եթէ անգամ անօթութիւնից մեռնէի։ Յաջորդ շաբաթին, երբ բժիշկը յայտնեց, թէ «ճգնաժամ»ը անցել է եւ այսուհետեւ սկսւում է «կազդուրման շրջանը», մայր ու աղջիկ, գաշն կռած, կարծես որոշել էին ինձ պայթեցնել։ Մինչ տիկին Զուարթը, մայրական հոգատարութեամբ ու գորովով, գոհանում էր միայն յանդիմանել ինձ թերացումիս համար, Անահիտը ուղղակի հրահանգում էր կատչել բժշկի պատուէրներին եւ ուտել այն որ արտօնուած է։

Երգնկայի դահանջից ի վեր ապօտացել էր սրտիս մէջ ուրուագծուած սիրոյ շէնքը, որ կառուցուել էր ինքն իրեն երեք տարի առաջ։ Բայց ահա նորից նրա խնամքը, հոգածութիւնը, անվերապահ մատնութիւնը անասելի հրճուանքով լեցնում էին պարապ հոգիս, եւ ինձ օրը օրին համակում էր արեւի պէս պայծառ հոգեկան մի գինովութիւն։ Անհամբերութեամբ սպասում էի, երբ նա բացակայում էր անից։

ARAM webaram.com

Հէնց որ ապաքինեցի, Անահիտը բարեխառնեց իր խանդավառությունը, մի տեսակ պաղեց, ու կարծես տխրեց, որ առողջացայ եւ իրեն այլեւս անելիք չմնաց։ Այժմ իր ընթացքը նոյնն էր՝ ինչ վերջին տնգամ Թիֆլիսում. քաղաքավար, բարեկամական ու երբեմն միայն մտերմական։ Ժամանակի մեծ մասը անցընում էր բնակարանի ընդարձակ պարտէզում, փարթամ, տերեւախիտ ծառերի տուներների տակ՝ ընթերցանությամբ։

Ցուլիսի վերջերին այնքան կազդուրուած էի, որ կարող էի վերադառնալ Արմաւիր։ Բայց ինչ անելու. ինքս ինձ երեւակայում էի «գործ»ի մէջ, որ վաստօրէն առաջ էլ գոյութիւն չունէր. կատարել գաղթականական յանձնաժողովի, որ երեւի արդէն լուծուած էր, այս կամ այն յանձնարարութիւնը։ Նոր էի հասկանում, թէ որքան անպատրաստ էի կեանքի համար. հայրենիքից մեկնեցի ուսանելու վարդապետ հեռանկարներով, բայց մտայ արեան ու աւերածութիւնների մէջ եւ դարձայ կիսակատար մի հայդուկ։ Ճի՞շդ էր արդեօք կեանքիս այս ընթացքը. անհրաժեշտ չէ՞ր արդեօք հիմնական փոփոխութիւն։ Ու երբեմն թւում էր, որ կեանքի բուն իմաստը անձնական անդորր գոյութեան մէջ է. համեստ մի գործ, ընտանիք, երեխաներ, ինչպէս ապրում է մարդկանց մեծ մասը։ Բայց ամէն անգամ յիշում էի անցած ճանապարհս, հարազատներիս, ընկերներիս անթաղ շիրիմները եւ զգում էի, որ չեմ կարող երջանիկ լինել այդ կեանքով։ Ի՞նչ էր մտածում արդեօք Անահիտը, իրօք շահեկա՞ն էին այն բոլոր գրքերը, որ կարդում էր նա, թէ՞ ուզում էր մի բանով զբաղուած լինել։ Տան մէջ, ճաշի եւ ընթրիքի ժամանակ, նա արտայայտում էր մտացիր վիճակ եւ յաճախ արժանանում մօր կամ հօր դիտողութեան։ Երբեմն էլ համակւում էր անգուսպ զուարթութեամբ, «ոչ արտա-

ARAM webaram.com

յայտնում էր ընդոստ ծիծաղով։ Ամէն պարագայի, մեր յարաբերութիւնները գնալով այնպէս բարդանում էին, որ նա խուսափում էր մենակ լինել ինձ հետ։

Անստուգութիւններով հոգնեպէս գեղերուն՝ օրերիս մեծ մասը անցընում էի ամարանոցի հարաւային բլրաւարդ շրջանում։ Հոյակապ էր թիկունքում արեւի ճառագայթների տակ պլպլացող կովկասեան լեռնաշղթան իր ձիւնազարդ էլբրուսով։

Իրիկնամուտ էր. գառնալով դէպի տուն՝ բռնեցի այլ ուղի, որ երկարում էր ամարանոցի ծառախիտ շրջանով։ Անհամար թռչուններ խմբուած էին տերեւախիտ ծառերին, ծլլուն, հնչեղ, անհասկնալի լեզուներով աղմկում օդը։ Այդ իրարանցման մէջ ծառերն ու բլուրները նիրհում էին յաւիտենական խաղաղութեամբ։ Իջնելով բլուրներից՝ տեսայ Անահիտին, որ մի դիրք թեւի տակ յամրաքայլ գնում էր։ Ցանցանքի մէջ բռնուած երեխայի պէս յանկարծակիի եկաւ ու գոչեց.

— Զարմանալի՛ բան, բնաւ չգիտէի, որ այստեղ էք...

— Ոչ, ի հարկէ, գլխիս մէջ միտք ծագեց մի անգամ էլ այս կողմից անցնել, ասացի, հազիւ զսպելով յուզումս։

Նա վայրկենապէս իրեն գտաւ, զուարթօրէն սկսեց խօսել օրուայ անցուդարձերի, հարեւանների մասին, որոնք իմ հիւանդութեան ժամանակ խզել էին իրենց յարաբերութիւնները եւ այժմ նորից աշխատում էին մօտենալ։ Համառարած ազէաներից անտեղեակ՝ նրա հոգին վրդովւում էր այդ առթիւ։ Ապա, յանկարծ, գայրոյթին յաջորդում էր մի տեսակ հրճուանք, որ հարեւանները «բարոյապէս» պարտուած են։ Այն ժամանակ նա ժպտում էր ու մերթ ընթ մերթ նայում ինձ երկար արտեւանունքների միջից կիսաբաց աչքերով։

ARAM webaram.com

Իր բոլոր խօսքերը աւելի քան պարզ բաներ էին, բայց նա ճառագայթում էր, մղուած՝ նեբքին խորունկ հրբ-ճրւանքից։ Այո՛, նա երջանիկ էր. իր տառնեւմից տա-ջինները չէին վիճակել նրան ոչինչ, բայի անպիտակից հաճոյքից։ «Այժմ կամ երբեք», անընդհատ ենցնում էր գլխովս։ Բայց ի՞նչպէս սկսել։ Ես գրեթէ չէի լսում նրա շաղակրատանքները, բայց զգում էի, որ իրաւունք չունեմ նրա այդ անհոգ գուարթութիւնը խանգարելու։ Հատանք տուն. ինձ համակեց տհաճութիւն, որ յաւա-գոյն տեսիլը փախցրի...

Յաջորդ օրը նստած էի պարտէզում փոքրիկ Սեղ-ի՝ հետ, որ հաւաքել էր ոտերի մի խուրձ եւ խնդրում էր ինձ դանակով կտրատել համաչափ մեծութեամբ, երբ յանկուսից Անահիտը մի նամակ ձեռքին. հասցէագրը-ուած էր Արմաւիր, պատիւանական յանձնաժողովի նախագահ Սէֆէրեանին՝ ինձ համար։ Գրում էր Յով-հաննը, որ Յարիցին հասել է եւ միացել Մուրատին. որ տեղական խորհրդային ուժերի հրամանատար Պետրո-վը ընդունել է Մուրատին եւ Սեպուհին մեծ պատիւնե-րով եւ նրանց տուել բոլոր հնարաւորութիւնները մեկ-նելու Բագու, թուրքերի դէմ կռուելու համար։ «Անմի-ջապէս մեկնի՛ր, հոս Վոլգա գետին վրայով՝ երեք օրէն պիտի բլլանք Բագու», յարում էր Յովհաննը։ Բայց նա-մակը գրուած էր մօտ ամիսուկէս առաջ ու դամակա-գրոյցի չկար։

— Ո՞վ բերեց։

— Մի հայ մարդ։

— Հարցրի՞ր, թէ ո՛վ է։

— Մոզոակցի մի հայ վաճառական, անուն մոռա-ցայ. կարեւո՞ր է, յարեց Անահիտը մտազբաղ։

— Ոչինչ, եթեւի դեռ այստեղ է, կը գտնեմ։

— Կարող եմ ձեզ օգնել, դէմքը յիշում եմ. լուսին ճակի պէս կլոր, շատ կարմիր թշերով, այսպէս գոգա-

ARAM webaram.com

ւոր փոքով,— ասաց նա օդի մէջ դժելով մի կիսաբոլորակ. եւ յանկարծ, ընդոստ ծիծաղեց...

Հարեւան «Ասասրիա» հիւրանոցում դիւրութեամբ գտանք նրան. բակում ծառերի սառեցրնների տակ ճաշակով շարուած սեղաններից մէկի մօտ նստած՝ անժամանակ ճաշում էր: Տեսնելով Անահիտին՝ իրար անցաւ. նեռելու պէս յետ քաշեց տակի աթոռը, միւս ձեռքով հանեց օձիքից կրծքին փռուած անձեռոցը, նետեց աթոռին, մօտեցաւ, յետ գնաց.— Հրամեցէ՛ք, հրամեցէ՛ք, խնդրեմ նստէք, պատիւ ունիմ... որիորդ մէկ ասուրճ, գաբեջնուր, ոչի՞նչ, իսկ դո՞ւք, ինչպէ՞ս կարելի է...

Վերջապէս, կարգի ընկանք:

— Արմաւիրում խաղաղ է, հարցումներիս պատասխանելով ասում էր նա, բայց Մոգոսկում իրարանցում կայ:

— Ո՞վ է իշխում այնտեղ:

— Շատ դժուար է ասել, նախանցեալ առաւօտ կռիւ էինք խանութից ճերմակ դրօշակ. բայց երբ իմացանք, որ բոլշեւիկները յաղթել են, ի հարկէ, անմիջապէս վար առինք այդ. բայց մինչեւ ոնից խանութ հասաւ կարմիր դրօշակը, ճերմակները յաղթեցին. բնականաբար, նորից կախեցինք ճերմակը: Յաջորդ առաւօտեան դեռ լոյսը չբացուած տղին ուղարկեցի դուրս հասկանալու, թէ ո՛վ է իշխում. դուրս եկաւ՝ կարմիրները. ճերմակը վար առի, կարմիրը կախեցի ու եկայ այս կողմերը: Հիմա ո՞վ կարող է ասել, թէ ով է իշխում:

— Ներեցէք, ի՞նչպէս ընկաւ նամակս ձեր ձեռքը:

— Հա՛, այդ պիտի ասէի, Բագու էի, այնտեղից հասայ Արմաւիր:

— Բագո՞ւ էիք:

— Այո՛:

ARAM webaram.com

— Ե՞րբ։

— Քիչ առաջ։

— Ի՞նչպէս են։

— Ո՞վ։

— Քաղաքը, հայե՛րը...

— Քաղաքը լաւ չէ, կռիւ կայ. հայերը վնաս չունին, ասիւծի պէս կուռում են, ասաց նա բռունցքները դնելով սեղանին։

— Ուրեմն, կռիւը դեռ շարունակո՞ւմ է։

— Ի հարկէ։

— Ե՞րբ էք թողել Բագուն։

— Մօտ չորս - հինգ օր առաջ, ասաց՝ հոմոհարաձեւ դարձնելով մատները։

— Առիթից օգտուեցի եւ Բիչերախովի զօրամասի հետ մեկնեցի Դերբենդ, այնտեղից՝ Արմաւիր...

— Բիչերախո՞վ ասացիք։

— Այո՛, շատ քաջ զօրավար է, բայց Յուլիսի 25ի գիշերը ատիպուած եղաւ նահանջել։

— Այսօր Օգոստոսի ութն է, ուրեմն, Բագուից մեկնել էք երկու շաբաթ առաջ։

— Այդպէս, իրաւ էք, այնքան դէս ու դէն ընկանք, որ օրերի հաշիւն էլ մոռացանք։

— Այդ հաշուով, ուրեմն, Դերբենդ - Բալանջարի գիծը դեռ ազա՞տ է։

— Ի՞նչպէս չէ, Բալանջարին գտնուում է հայոց հրամանատար Համազասպի ձեռքում։

— Իսկ Մուրատը այնտե՞ղ է։

— Մուրա՞տը...

Նա դուրս քաշեց գրպանից մի մեծ գունաւոր թաշկինակ ու ճակատի քրտինքը սրբեց։ Մուրատի մասին, զժբախտաբար, ոչինչ չգիտէ, բայց լսել է. այնտեղ է։ «Հայոց հրամանատար» է.— Այստեղ ի՞նչպէս է կեանքը, յարեց մոզտոկցին դառնալով Անահիտին, հուսկաց-

ARAM webaram.com

նել ուզելով, որ ինձ հետ զրույցը վերջացաւ։ Ճաշարանի գներից դատելով՝ բաւական թանգ է երեւում։

Բայց Անահիտը, իր մտքերով տարուած, չհասկացաւ հարցումը ու չքմեղանքով ժպտաց։ Շատ բան կարելի չեղաւ հասկանալ այդ հալածական հայրդուց։ Բայց այդքանն էլ հերիք էր ինձ ալեկոծելու համար...

Երբեք այնպիսի հոգեկան երկուութիւն չէի զգացել, ինչպէս այդ գիշեր։ Աչքիս առջեւից չէր հեռանում Ցոլմանը իր ջղուտ ու բարձր հասակով, ամրոյն ու ոսկրացած դէմքով։ Մանր, կասկածոտ աչքերը կարծես նայում էին ինձ մթութեան միջից դառնապին մեղադրանքով։ Այո՛, լաւ թէ վատ, նա շարունակում էր իր ուղին։ Ու մի՞թէ այդպէս չէին ամէնքը. հէնց նոյն ինքն Մուրատը, որ քաջութիւն ունեցաւ սիրած կնոջը արտօնել որ անձնասպան լինի. որ լեբան գլխից հեռադիտակով տեսաւ, թէ ի՛նչպէս են տանում դէպի մահ հարազատներին, որ ցաւից կրծոտեց հրայանի կոթը՝ անկարող արձակելու մահաբեր գնդակը դահիճներին, որպէսզի տարապիրները չմնասուին...

Ֆարակոյս չկար, որ ես էլ պարտաւոր էի մեկնել Բագու, բայց շատ հզօր էր կաչկանդումս։ Անձնականներ ու հանրայինը դատողութեամբ հաշուեցնել անզօր էի. մնում էր մի ելք՝ կտրել ու նետել այդ հանգոյցը... Ինձ պատկերանում էր Բագուն, որի պաղջ օդը, փոշին, մթակ պարտէզի թոքախտաւոր ծառերը, խենթի պէս վազվզող անցորդները, փոքրիկ սրաբշաւ կառքերը, ծանրօրէն նստած բարձրաբերձ շէնքերը յիշում էի զեռ այնպէս, ինչպէս տեսայ երեք տարի առաջ, Թոստովից Թիֆլիս անցնելիս։ Ինձ թւում էր, թէ ամէն քայլափոխիս պատահում եմ մէկն ու մէկին՝ ճէպէճուն, Ցոլմանին, Սահակին, Վարդանին, Նշանին. ու զգում էի, որ կեանքի միակ իմաստը ընկերոջ հետ հանդիպելն է որեւէ տեղ։ Ապա յիշում էի մեր անցած դժոխային ճա-

ARAM webaram.com

Դասարանը՝ Վիտանը, Զորոը, Զիլիկը. յիշում էի Զմբշկածաղցուն, կարծես տեսնում էի շմոր վազքով մեզ մօտեցող ձին, ճառագայթող լուսաստղի տակ ձիւներին քնկած դիակը, բաց ու զարգած աչքերը...

Լուսաբացին ընդոստ արթնցայ մի ծանր երազից. իրը թէ մեռել եմ ու մտել գերեզման, ուր գտնուում են հարազատներս: Գերեզմանը բաւական ընդարձակ է, քարաշէն, բայց խոնաւ: Միայն մի կանթեղ լուսաւորում է անթափանցելի խաւարը: Մերոնք շատ ուրախ են, որ, վերջապէս, մեռել եմ. մանաւանդ հարսներն ու երեխաները: Վերջինները ցատկում են ուսերիս՝ հրճուանքից խենթեցած: Բայց մայրս խիստ դժգոհ է. նա լաց լինելով մեղադրում է ինձ, որ շուտ եմ մեռել ու առանց իրենց վրէժը լուծելու իջել գերեզման...

Դուրսը անձրեւում էր. հովը բեկբեկում էր ծառերի տերեւների անձրեւահար խշխշոցը: Լուսանում էր. շիփ - շիտակ վեր ցցուած բարդիի մէկ ոստը ծայրով շփում էր պատուհանս՝ չանչաձեւ թաթի պէս:

Առաւօտ դուրս նայեցի պատուհանից: Քմահաճոյքով լաց եղած եւ արտասուքը աչքերին լճացած ծիծաղկոտ երեխայի պէս էր երկինքը: Արեւը շողշողում էր ծառերի կատաբներին: Վարը, հաւանաբար, խոնաւ էր: Բայց բատ սովորութեան այնտեղ է բացուած թէյի սեղանը: Անահիտը ինքնաեռի մօտ կանգնած՝ լեցնում էր թէյամանը: Վար իջայ նրա հետ խօսելու վճռական արուշումով. «Այս կամ ոչ», պիտի ասէի նրան: Բայց մերը մօտեցաւ, բոլոր վճռականութիւնս չքացաւ:

— Բարի լո՛յս:

— Բարի լոյս...

— Կ'ուզէի քեզ հետ խօսել, որովհետեւ փոքր մեկնում եմ, ասացի վերջապէս:

Ցանկարծ գոչեց.

— Ո՞ւր:

ARAM webaram.com

— Բաղու։

— Բայց ինչո՞ւ...

— Երէկ լսեցիր մոզաոկցուն, նամակն էլ գիտես։

— Բայց չէ՞, որ դուք դեռ կազդուրուած չէք, դոչեց նա, ապա, յանկարծ դղջալով՝ ծանրօրէն շնչեց ժպտալով։

Զղջի, որ խնդիրը նրան սաստիկ յուզեց։ Սիրտս դողում էր ու էլ խօսք չէի գտնում ասելու։

— Ի հարկէ, դուք գիտէք, բայց չեմ կարծում, որ ձեր այդ որոշումը շատ հաճելի լինի հայրիկին, ասաց ինքն իրեն գանելով։

— Պ. Նշանը գիւրութեամբ կը հասկանայ ինձ, բայց խնդիրը այն է...

Ու մնացի։

— Ի՞նչ խնդիր։

— Կարծում եմ քեզ յայտնի է...

Վէրա աչքերով անթարթ նայում էր երեսս, կարծես չուզէր պահել էր. «Եթէ մերկացումս ժիտէ, ուրեմն վերջացած է. մէկ խօսք այլեւս չեմ ասի», որոշեցի։ Յանկարծ, նա սաստիկ կարմրեց, վար առաւ աչքերը, դէմքը ընդունեց անորոշ արտայայտութիւն։ Սիրտս ասի։

— Ձիշդն ասած, ես ինքս էլ չեմ հասկանում ինձ. նախապէս կարծում էի, թէ քո հանդէպ մէջս արթնացած զգացմունքներս յաղթահարել եմ, բայց քանի գնաց, խորացան։ Երբեմն ինձ թւում է, որ կարող եմ յայտ ունենալ փոխադարձութեան։ Բայց, բայց, ի հարկէ, դու ոչ մի հիմք չես տուել ինձ...

Այստեղ մտքերիս կապը կտրեցի։

— Մի խօսքով, թէեւ դեռ շատ է, բայց կարո՞ղ եմ արդեօք յայտ ունենալ, որ երեք - չորս տարի յետոյ...

— Հայրիկը գալի՛ս է, ասաց նա ոչլսելով։

ARAM webaram.com

— Աղջիկս, խոնաւ չէ՞, աւելի լաւ չէ՞ր թէյը ներսը խմէինք, ասաց պ. Նշանը մօտենալով։

— Ոչ, հայրիկ, արեւը արդէն մեզ հասաւ։ Ու անտարբերութեամբ յարեց.

— Գիտե՞ս ինչ, հայրիկ, Սոզոմանը մեկնում է։

— Ո՞ւր։

— Բագու։

— Բագո՞ւ...

Ինձ այնպէս թուաց, թէ Անահիտը լուրջ չէ համարում այդ եւ խիստ վատ զգացի ինձ։

— Այո՛, վաղը երեկոյեան պիտի մեկնիմ, ասացի հօրը, որ զարմացած նայում էր։

Կարգաց ստացած նամակս, պատմեցի մոզաուկցու ասածները, մոռացայ.

— Ի՛նչ ասեմ. քանի որ այս ծանր օրերին ատիթը քեզ մեր գալը բերեց, բնական է, որ հօրդ առաջ ես պատասխանատու եմ նկատում ինձ քեզ համար։ Գոնէ ես այդպէս պիտի զգամ նրա հանդէպ, եթէ, Աստուած չանէ, քեզ մի բան պատահի։ Բայց կարծում եմ, որ հայրդ էլ ոչինչ չէր կարող ասել այս դէպքում. մենք վաղամեայ ծերացանք, անպէտքացանք. հիմա եթէ քեզ էլ յետ պահենք, էլ ի՞նչ խղճով կարող ենք ապրել։ Գնա՛, բայց զգոյշ եղիր...

Անահիտը, որ շարում էր թէյի բաժակները, բուր մէջ հաւաքած բոլո՛ր զգալները զրնգոցով նետեց մէկ բաժակի մէջ ու նստեց։

— Լեցո՛ւր, աղջիկս, զարձաւ նրան պ. Նշանը ու խօսք արաւ Մուրատի մասին, որով հմայուած էր...

Յաջորդ առաւօտը խռովուեց անդորր էսէնտուէին. տեղ հասաւ փոխատականներին մի ստուար խումբ, որ գալիս էր Բագուից։ Առոյգ, ճարպոտ, գոգաւոր փորերով, լաւ հագնուած, ձեռքի ճամբորդական փայլուն պայուսակներով այդ մարդիկ բնաւ նման չէին մեր ստ-

ARAM webaram.com

վարական տարապիրներին. նաւթարդիւնաբերողներ, կառավարիչներ, վաճառականներ, գարշելիներով պճնուած կանայք, աղջիկներ. ապա նորից ոգեմարդկանց շարքեր, որոնք ստիպերի պէս ազմկելով անցան: Նրանք կանգ առին «Ասորիա» հիւրանոցի մօտ: Գիշերը տեղ հասած ոգեմարդկանց մի խումբ դուրս գալով՝ մօտեցաւ. նրանք շառաչիւնով համբուրեցին կանանց, որոնց պրպտուն աչքերը զառնում էին դէս ու դէն լայր նեղր ամառնային գլխարկների տակ: Շատ նիհար ու բարակ մէկը բացագանչութիւններով պարզում էր նրանց էսէնտուկիի կեանքի դժնդակ պայմանները: Ու, յանկարծ, ամբոխի մէջ տարբերեցի պոլսեցի Լեւոնին, Ափտուլի զինակից ընկերոջս: Թունդ եղած՝ մօտեցայ: Բայց երկար չտեւեց ուրախութիւնս. Մուրատը սպանուած էր, Բագուի ժամերը հաշուուած էին. թուրքերը հասել էին արուարձաններին...

ARAM webaram.com

Ե. ԳԼՈՒԽ

ՊՈԼՍՈՒՄ

Լսէնոուկին պարձել էր մի փոս, որից դուրս դալու մասին մտածելը այլևս աւելորդ էր։ Անահիտը, մէկ երկու օրուայ խուսափումներից յետոյ, վերականգնել էր իր պարզ ընկերական ընթացքը։ Ոչինչ չէր փոխուել իր վերաբերմունքի մէջ, միայն այժմ խօսում էր ինձ հետ «դու»ով։ Ես էլ պահանջ չունէի անդրադառնալու ինձ յուզող հարցին։ Արդէն օրուայ մեծ մասը անցնում էի հարեւան «Ասորիա» հիւրանոցում։ Երեկոները, երբ դառնում էի տուն, Անահիտը ինձ ուղղում էր հարցումներ իրեն մութ մնացած ընդհանուր խնդիրների մասին, որոնք քիչ - քիչ մասնաւորուելով՝ դառնում էին բազուեցիների շուրջ,— ո՞րը որի կին է, ի՞նչպէս են կոչւում աղջիկները, ի՞նչ կրթութիւն ունեն, չե՞մ կարծում, որ խարտեաշ մազերով աղջիկը բաւական գեղեցիկ է, մի քիչ քիթը երկար է եւ այլ հարցումներ, որոնց մէջ ոչ մի իմաստ կար։

Սեպտեմբերի երկրորդ կէսին թուրքերը մտան Բազու։ Տարապիրների մեծ հոսանքի ծայրը մեզ էլ հասաւ։ Փախստականների մի մասը ճողոպրել էր Պարսկաստանի, Պեսրովսկի, Կրասնովոսկի ուղղութեամբ։ Քաղաքում ջարդուածները հաշւում էին 20 — 30 հազար մարդ...

ARAM webaram.com

Այդ օրերին տակաւ խճճւում էր համայն Ռուսաստանի վիճակը։ Հակախորհրդային գինուած շարժումները ծաւալւում էին օրէց օր։ Ամէն տեղ ծնունդ էին առնում Խորհուրդների հակամարտ կազմակերպութիւններ։ Նախապէս տեղական բնոյթ կրող ընդհարումները ստանում էին ծաւալուն քաղաքացիական պատերազմի հանգամանք։ Զեխոսլովակները գրաւում են Կազանը, Սեմբերսկը, Ուֆան եւ միջին Վոլգայի շրջանը՝ յայտարարելով այդ հողերը «Սահմանադիր ժողովի երկիր»։ Ցամաք կռիւներ են տեղի ունենում Եւրոպական Ռուսաստանի հարաւ - արեւելեան մասերում, Դոնի, Գուբանի, Օրէնբուրգի շրջանում։ Կենտրոնում հակախորհրդային ուժեր կազմակերպում են դաւեր, ահաբեկումներ եւ ապստամբութիւններ։ Ապա՝ Դենիկինի բանակը գրաւում է բովանդակ Հիւսիսային Կովկասը՝ Սեւ ծովի եզերքներից մինչեւ Հաշտարխանի ոնապատները։ Օրէնբուրգի շրջանում ապստամբում են զօրավար Դուտովի ուժերը։ Ուրալ - Վոլգա ճակատով կենտրոնից կտրուած Սիբիրում յայտնւում են «ինքնավար» Օմսկի, Վլատիվոստոկի «կառավարութիւն»ները։

Ներքին դասային, դասակարգային խմբաւորումներից զատ, շարժման մէջ հակայական դեր են կատարում լայնածաւալ Ռուսաստանի խայտաբղէտ ժողովուրդների ազգային ուժերը։ Ամէն ազգից զատ՝ ամէն շրջան էլ յայտարարում է «անկախութիւն»։ Հեռաւոր Արեւելքում, Անդրկասպեան երկրում, Ուրալի շրջանում, Արխանգելսկում, Ֆինլանդիայում, բովանդակ Մերձբալտեան շրջանում, Ուկրաինայում, Դոնում, Գուբանում, Դաղստանում, Անդրկովկասում բուսնում են նոր-նոր պետութիւններ եւ անդամ Խարբինում ուզում են ունենալ իրենց «ժամանակաւոր կառավարութիւնը»։

Երկրի ներսի այդ հակաշարժումները մեծապէս

ARAM webaram.com

խթանում են դրսի հակամարտ ուժերը, ինչպէս նաեւ երկուսան դաշնակից պետութիւնները։ Գերմանացիները պահում են իրենց իշխանութեան տակ Ռուսաստանի բոլանդակ արեւմտեան շրջանը, Ուկրայինան եւ Ֆինլանդիան՝ զանազան տեղական գործակալների կամ «իշխանութիւն»ների միջոցով։ Հեռաւոր Արեւելքում իշխում են Ճապոնացիները, որոնց աջակցում են անգլիական, ֆրանսական, ամերիկեան եւ իտալական զօրամասերը Վլատիվոստոկում։ Սիբիրում նախկին դաշնակիցները աջակցում են Ծովակալ Կոլչակին զէնքով, դրամով, մթերքով։ Արխանգելսկում ափ են իջնում անգլիացիներն ու ամերիկացիք։ Հարաւում Ֆրանսացիները աջակցում են յայտնի բախտախնդիր Պետլիուրային։ Անդրկասպեան երկրում ասպատակում են բասմաչները՝ անգլիացիների դրդումով։ Անդրկովկասում վասաօրէն իշխում են գերմանացիներն ու Թուրքերը...

Այս ընդհանուր փլուզումի օրերին, երբ մարդ մխիթարական ոչինչ չէր գտնում օրերը անցկացնելու համար, յանկարծ մի լուր էսէնտուկիում թունդ հանեց բոլորին։ Հոկտեմբերի 30ին Մուտրոսում կնքուել էր զինադադար եւ Թուրքերը վար էին դրել զէնքերը։ Նրանք պարտաւորւում էին անմիջապէս պարպել Անդրկովկասում գրաւած հողերը։ Դաշնակիցները տէրն էին Պոլսոյ եւ նեղուցների։ Զինադադարի մի ուրիշ կէտի համաձայն, ողջ մնացած հայ տարագիրները պէտք է խմբուէին Պոլիս եւ Ջարդարարները պէտք է պատասխանատուութեան ենթարկուէին։

Հաշուեյարդարի օրերը մօտեցան։ Նորից ինձ համակեց Պոլիս ընկնելու եւ Թալէաթին ապաննելու գաղափարը, որ հանդէս էր գալիս այժմ իմ մէջ իբրեւ մօտ ուրուականի թելադրութիւն։ Միաժամանակ ինձ յուզում էր այն յոյսը, որ Պոլսում կարող է յայտնուել տարագրուած հարազատներից մէկն ու մէկը, կամ այն-

ARAM webaram.com

տեղից դիւրին պիտի լինէր նրանց մասին լուր առնել։

Այժմ բոլորն էլ աճապարում էին դէպի տուն։ Առաջին իսկ օրը բազուկներին մի սառուար մասը մեկնեց. նրանց հետ էր Լեւոնը, որին, ըստ երեւոյթին, դժուար էր բաժանուել այն կողմերից գաղթած մի հոգեհատուրից, ինչպէս ինձ՝ Անահիտից. նախընտրել էր երկար ոլորապտոյտ ճանապարհ՝ Բագու, Բաթում, Պոլիս, իբր թէ Սեւ ծովի այլ նաւահանգիստներից դժուար էր յարմար նաւ գտնել։ Յաջորդ օրը մեկնեցինք եւ մենք դէպի Նովորոսիյսկ։

— Զգէ՛ այդ անիծապարտ երկիրը, հապիւ ազատուեցինք, ճանապարհին համոզում էր ինձ պ. Նշանը։

Տիկին Զուարթ յորդորում էր ինձ գնալ Թիֆլիս եւ մնալ իրենց բնակարանը մինչեւ պատերազմը վերջանայ եւ կարող լինեմ վերադառնալ Սերբիա, հօրս մօտ։ Լաւ էր միայն Անահիտը եւ երեւութապէս անտարբեր։

Գիշեր էր. ճանապարհին ամէն կայարանից գնացք էին թափւում տարագիրներ. գնում էին դէպի Խերսոն, Օտեսա, ռումանական սահմանը. տարածութիւնները նրանց համար դարձել էին խաղալիկ։ Մի ռուս գիւղացի նեբա մտաւ ինչ որ կայանից եւ տեղաւորուեց մեր բաժնեակում։ Նա ուզեց ինչ որ բան հարցնել ինձ, բայց այդ պահին գնացքը շարժուեց։ Հանելով գլխարկը՝ նա երեսը խաչակնքեց եւ սկսեց շշուկով աղօթել։ Աւարտելով աղօթքը ու երեք անգամ նորից խաչակնքելով՝ յետ ծածկեց գլխարկը ու նստած տեղը շտկուելով՝ հարցրեց. «Ժամը քանի՞ է»։ Երեքը անց էր, լուսանալու մօտ։ Գիւղացին գլուխը յենեց ծնկներին եւ մէկ վայրկեանի մէջ սկսեց խոմբալ։ Քնած էին եւ թաթիկեանները, բացի Անահիտից, որ ամբողջ ժամանակը արձանացած էր նստած տեղը։ Ինձ թւում էր, որ նա հասկանում էր այն բոլորը ինչ գրում եւ մտածում էի

ARAM webaram.com

Եւ. իսկ այդ գիշեր, աւելի քան երբեք, նրա մտքին մտածում էի ամենաբարձր բաներ։ Ես գտել էի խնդրի լուծումը. նախ՝ պիտի լուծէի մօրս եւ հաբագառներիս վրէժը, ապա՝ պիտի ուզէի անբաժան լինել նրանից մինչեւ մահ, եթէ բախտը ինձ ժպտար։ Պիտի ուզէի այդ ամէնը պարզել նրան հանդարտօրէն, բայց աւա՜ղ, այդ շնորհքը տրուած չէր ինձ։

Նեբս մտաւ կոնտուկտորը ու տեսնելով, որ ճրագի պատրոյգը հատնելու վրայ է, հանդցրեց, բայց նորը չդրեց։ Կիսախաւարի մէջ այլեւս յաւ չէի տեսնում Անահիտին։ Գիւղացին խոմրում էր, անօրինակ ձայներ արձակելով քթից։ Վագոնի ապակիները ցնցումից շրխկշրխկում էին միօրինակ։ Ամբողջ օրը լեցուեց ու պարպուեց մեր վագոնը գանազան ուղղութեամբ ճամբորդներով։

Իրիկուան գէմ հասանք Նովոբասիյսկ։ Մի նաւ մեկնում էր գէպի Փոթի. պ. Նշանը այդ ասիթից օգտուեց։ Որքան մօտենում էր բաժանման ժամը, այնքան Անահիտի հետ խօսելու պահանջը սրւում էր մէջս։ Բայց այժմ էլ ինձ մի վայրկեան ազատ չէր թողնում պ. Նշանը՝ ջանալով համոզել, որ գնամ իրենց հետ։ Բարոյալքուել էի. մտածում էի, որ աւելի յաւ է նամակով յայտնել ասելիքս։

Արդէն մեկնում էին. Անահիտը մօտեցաւ ինձ ու թախծոտ ժպիտով ասաց.

— Ուրեմն, այսպէս...

— Այո՛, բայց ես քեզնից պատասխան չստացայ...

— Ի՞նչ պատասխան։

— Հարցումիս պատասխանը, որ արի քեզ երկու ամիս առաջ պարտէզում։

— Ի՛նչ արժէք ունի հիմա։

— Ինձ համար շատ մեծ...

— Արի մեզ հետ Թիֆլիս, ահա իմ պատասխանը։

ARAM webaram.com

— Պատուոյ խօսք, որ պիտի գամ, միայն խօսք տուր, որ պիտի սպասես։

— Ա՛խ, Աստուած իմ, էլ ի՞նչ խօսք։

— Որ պիտի սպասես, յամառեցի ես...

— Լա՛ւ, տեսնենք ո՛վ ուելի խոստմնապահ պիտի լինի մեզնից...

Նաւը մեկնեց, գնալով փոքրացաւ։ Հեռուից, շատ հեռուից դեռ տարբերում էի մի ձեռք, սպիտակ մի թաշկինակ...

* * *

Մթնշաղ էր, տեղում էր մեղմ անձրեւ։ Գնում էի դէպի կայարան՝ պատահելով սակաւաթիւ անցորդներ։ Ի՞նչ էի մտածում, չգիտեմ։ Զգում էի, որ այլեւս նեռուել եմ մի ճանապարհի վրայ, որից դարձ չկայ առանց յաջողութեան։ Կայարանում տիրում էր արտակարգ եռուզեռ. ամէն մարդ գնում էր թռուցիկաձեւ մի հաղորդագրութիւն՝ սեփական աչքերով կարդալու համար. պատերազմը վերջացել էր, Գերմանիան ընդունել էր զինադադարի պայմանները։ Երկու ժամ վերջը մեկնեցի Օռեան։

Մուտքում զինադադարից անմիջապէս յետոյ, համաձայնական պետութիւնները դարձել էին Սեւ ծովի ափն ու տիրակալը. ռուսական եկեղեցիներում յայտնւում էին անգլերէնով ու ռուսերէն. Ուկրայինայում, Դոնի շրջանում, Թիֆլիսում, Էսսենտուկում, Լատվիայում՝ անգլիական զօրքեր. Ղրիմում ցամաք էին իջնում ֆրանսացիները։

Օռեայում տիրում էր ֆրանսերէնական խշխաղութիւն։ Մօտ մի ամիս տեւեց մինչեւ կարողացայ կարգաւորել անցագրային գործարքները ու տեղ ապահովել ինձ «Եփրատ» նաւի մէջ, որ շուտով պիտի

ARAM webaram.com

մեկներ Պոլիս։ Ճամբորդների մի բազմութիւն նոյն կացութեան մէջ էր. խեղճերի համար ամէն օր ստեղծուում էր մի նոր դժուարութիւն. ամէն մարդ անհամբեր էր օր առաջ հասնելու Պոլիս՝ երկրում մնացած իր հարազատների մասին լուր առնելու յոյսով։

Վերջապէս, Դեկտեմբերի կէսերին մեկնեցինք։ Ցաջորդ առաւօտ նաւը կանգ առաւ Կոստանցայում։ Կարանդինայի պատճառով արգիլուած էր ցամաք իջնել, եւ տաղտկալի մի օր ու գիշեր անցրինք այստեղ։ Դեկտեմբեր 18ի առաւօտեան մօտեցանք Վոսփորին։ Օդը պարզ էր ու կարծր. երկնակամարի մի մասով յամրաքայլ շարժուում էին սպիտակ ամպեր։ Արեւի մեղմ ճառագայթները ոսկեզօծ հովահարի պէս քիչ - քիչ բացուում էին, տարածուում՝ վարդագոյն շերտեր պատցնելով հորիզոնում. կուպրի պէս սեւ ջրերին մերթ ընթ մերթ յայտնուում էին շողի փշուրներ։ Ամէն վայրկեան փոխուում էին ծովի ու երկնքի վառվռուն գոյները, կարծես երկու արեւելեան թագուհիներ էին, որ իրար հետ մրցելով՝ ձգտում էին գիտողին շլացնել իրենց երփներանգ զգեստներով։ Շոգենաւը իր սուր կտուցով ճեղքում էր նեղուցի նախադրան ջրերը՝ աջ ու ձախ նետելով կոհակներ։ Տախտակամածի մէկ ծայրին գամուած դիտում էի դիմացի ձորերն ու բլուրները. մտքով թափառում էի այդ արիւնաներկ երկրի խորքերում՝ Վան, Խնուս, Էրզրում, Երզնկա, Զեյթիկ, Զորս, Վժան։ Դալուկ արեւը այժմ իր հետ բերում էր բամպակի պէս ճերմակ ամպեր, որոնք սահում էին երկնակամարում խուռներամ։ Բզկտուած ամպերի մի հանդիսաւոր թափօր էր, որ բազում մեռած հոգիների պէս, յամրաքայլ ուղեկցում էր մեզ օձապտոյտ նեղուցի ուղղութեամբ։ Կամրջակին վրայ քիչ - քիչ բազմանում են ճամբորդներ։ Նրանք գանագան ուղղութիւններ ցուցնելով՝ հաճոյք են-զգում տարիներ յետոյ նորից

ARAM webaram.com

ծանօթ վայրերը տեսնելով։ Մեր յետեւը մնացին ծովի ջրերը, եւ Վոսփորի նեղ անցքից ներս մտանք։

Վոսփոր յունարէն նշանակում է «ցուլի անցք»։ Բան յունական դիցաբանութեան՝ նրա միջով անցել է լողալով Արգոսի առաջին թագաւոր Ինակուսայի աղջիկ Իօ-ն, նոյնինքն այն Իօ-ն, որին յետոյ Արամազդը դարձրեց կով։ Աւանդութիւնը ասում է, որ նախապատմական շրջանում ծովերը այստեղ բնաւ հաղորդակցութեան մէջ չէին իրար հետ։ Եւ այդ են հաստատում նեղուցին եղերքների երկրաբանական ուսումնասիրութիւնները. երկու եղերքների խորունկ ծոցերը, սուր հանգրուանները այնքան համապատասխանում են իրար, որ, ասում են, բաւական է մօտեցնել իրար, որպէսզի միանան ու նորից կազմեն ամբողջութիւն. անդամ երկու կողմերի հողի առանձին շերտերը զաստուրուած են համապատասխան ձեւով։ Հողի յատկութիւնը, բազալտային առատ շերտերը, գոյացած քարանձաւները վկայում են նրանց հրաբխային ծագումը։ Հաւանաբար Վոսփորը կազմուել է մի հզօրագոյն հրաբխային ժայթքումի հետեւանքով, որ ճեղքել է երկրի այդ մասը ու բաժանել երկուսի։ Ու մտածում եմ, թէ ի՞նչ կը լինէր հայ ժողովուրդի բախտը, եթէ այդ ժայթքումը տեղի չունենար... Ամենանեղ մասը թւում է ոչ աւելի, քան վեց - եօթը հարիւր քայլ. լայն մասերը երեւի կազմում են հինգ - վեց հազար քայլ։ Կամրջակում կուտակուած ճամբորդների այդ շրջաններից կան բաւական հայ, յոյն տարագիրներ, փախստականներ. նաւի անիւների մէն մի շրջանը բոլորելու հետ, նրանց միջից լսւում են դուարթագին բացագանչութիւններ։ Եւրոպական ափին ընկած է Թուռքլի - Կաւակը, Գալատաչ բարձունքի ստորոտում փէշերին. դժուար չէ տարբերել հնագոյն ամրութեան մնացորդները։ Ձախ կողմից, մօտ ափին, Գինուկկեան բերդի փլատակների տակ, յանցաստրա-

ARAM webaram.com

ապատանել է Անատոլու Կուակը։ Անցել են դարեր, բայց կեանքից ու մարդկանցից մոռացուած այդ հնագոյն բերդերի մնացորդները դեռ մոայլօրէն նայում են իրար, մի ժամանակ մահ սփռող պատերի ծակերից։ Այստեղ էր, որ առաջին անգամ կամուրջ նետուեց Եւրոպայի եւ Ասիոյ միջեւ ու մէկ ափից միւսն անցան Դարեհի զօրքերը։

Քիչ վարը, աջ ափին, տարածուած է Ենի - Մահալէ գուտ յունական գիւղը։

— Պանաեոտա՛..., յուզումով բացագանչում է մի ծերունի յոյն. իրենց գիւղն է։ Գրեթէ դէմը, միւս ափին, ընկած է Հիւնքեար Իսկէլէսին. այստեղ էր, որ բանակ դրին ռուս զօրքերը 1833ին՝ պարտադրելով Սուլթան Մահմուտին ստիպուած մի դաշնագիր, որի տակ նա հնձեցրին զոչեց մօտիկներին.

— Ի՞նչ անէի, ծոմն ընկնողը օձին կը փաթաթուի...

Ապա՝ եւրոպական ափին յայտնւում է Մեզաբրուրնուն՝ ցից շերմենների իր տարածուն դերեզմաններով. ունայնութիւն է տիրում այնտեղ՝ աշխարհիս ստեղծագործութիւնից ի վեր տեղի ունեցած պատմական բոլոր անցքերի առթիւ։ Միւս ափին, ծոցի մէջ, տարածուել է Թրքական Բէյկոսը, այստեղ կատարուեց ալեւոր պատմութեան վերջին խաղերից մէկը, այստեղ խարխս նետեց, 1854 թուին, անգլիաֆրանսական նաւատորմիղը, նախ քան ռուսների դէմ Ղրիմում գործողութիւնների ձեռնարկելը։

Աջ եզրով մօտենում ենք Բէօյիւկ - Դէրէի հիասքանչ պղեակների, պալատների շրջանին. մարդու աչքը չի կշտանում դիտելուց։ Ըստ աւանդութեան բուն Բէօյիւկ - Դէրէն առաջին խաչակիրների կայանն էր։ Ասիական եզերքին նրա դիմաց տարածուած են Փաշա - բախչէի Սուլթանիէ հռչակաւոր այգիները, որոնք տե-

ARAM webaram.com

բեւաթափ են։ Վարը, աջ կողմից, մօտենում ենք հնադոյն Թարապիային՝ բիւզանդական մեծամեծների ամարանոցը. եթէ մարդ իմանա՞ր գալիքը, եթէ այդ հիասքանչ վայրը մարդկանց չարամադրէ՞ր մեղկութեան...

Աւելի վար, ասիական եղերքին, յայտնւում է բրլրաթաւ Զիրուքլուն, եղիպտական խտիւի չքեղ ամառնային պալատով։ Թիկունքում ընկած է Կանլըջանը, իր գեղեցիկ վիլլաներով եւ Ֆուատ փաշայի հոյակապ պալատով։ Ապա յայտնւում է Անատոլու Հիսարը, հընադոյն մի ամրոց, որ կառուցել է Սուլթան Բայազիտը յունական առաճարի վլատակների վրայ, 1390 թուին, երբ առաջին անգամ պաշարուեց Պոլիսը։

Ճամբորդակից Ենիքէօյցի Ցակոբը, որ հինգ մատի պէս գիտէ բոսֆանդակ շրջանը, այժմ լուռ է եւ յուզուած. ահա նա, իր ծննդավայրը, Ենի քէօյը, որ շուրջ 10,000 հայեւյոյն բնակիչներով փոռուել է ծաւալուն սարի փէշերին, նեղուցի աջ ափին։ Մայր, քոյր, եղբայրներ. ո՞վ է արդեօք ողջ մնացել եւ ինչե՞ր են անցել դարձել այնտեղ. հասկանում եմ...

Նոյն եղերքով իրար յաջորդում են մի շարք աւաններ, բայց մարդու աչքը կենտրոնանում է ափին շատ մօտ Բէրեկի վրայ, ուր մի ժամանակ եղել է Արտեմիսի առաճարը։ Եւրոպական եղերքով անցանք Կուրու - Զէշմէն, Օրթաքէօյը, Պեշիքթաշը, Զրադանի պալատը, դրեթէ քերեցինք հռչակաւոր Տոլմա - Բախչէն, որի թիկունքում, դէպի նեղս, բլրի վրայ ցցուած է Եըլդըզ - Քէօշքը. ա՜հ, ո՞րքան ցաւ է կապուած այդ ձիւնափայլ պալատների հետ...

Ասիական եղերքում կիսաղէմքով գտնում է դէպի մեղ Սկիւտարը։ Նաւի մէջ սկիւտարցիներ կան. բատ նրանց՝ Սկիւտար նշանակում է պարսկերէն հանգստակայան. Քսենոֆոնը կանգ է առել այնտեղ, նախ քան

ARAM webaram.com

Եւրոպա անցնելը։ Հոգ չկայ, ուրեմն, այս երկրում, որ իր հին ու նոր արեան շաղախը չունենայ։ Իր հին անունն է Բրիգիպոլիս՝ Ագամեմնոնի որդու յիշատակը։ Բիւզանդացիք կառուցել են այնտեղ երեք մեծ յուշարձաններ ի նշան երախտապիտութեան աթենացիներին՝ Փիլիպպոս Մակեդոնացու դէմ նրանցից ստացած ոչակցութեան համար։ Այժմ այնտեղ արեւի տակ ճառագայթում են բազմաթիւ մինարէների սրածայր գագաթները...

Եւրոպական ափում անցանք Կարագաչը, ուր մեր առջեւ պարզուեցին Մարմարայի արծաթափայլ ջրերը որոնք հոսանուտ օդակում են Սարայ – Բուրնուն։

Մեր դիմաց, ջրերում, միայնակ ցցուած է Գրը – Գուլէսին։ Աշտարակը շինուած է Մանուէլ Գոմնենի օրով, Վոսփորի անցքը արգիլելու նպատակով, իսկ բառ թրքական աւանդութեան՝ կառուցել է Սուլթան Մէհմէտը. մի գնչուհի գուշակում է, որ նրա ապջիկը պիտի մահանայ օձի խայթուածքից, եւ Սուլթանը կառուցում է այդ աշտարակը իր սիրած ապջիկը այնտեղ պահելու համար։ Անցնում են տարիներ ու Մեհար Շէհիթի գեղեցկութեան համբաւը տարածւում է աշխարհներ։ Պարսից շահի որդին գալիս է նրան կնութեան առնելու։ Բայց ահա ճակատագիր. իր բերած շքեղ ծաղկեփունջի մէջ պահուած մի իժ խայթում է գեղանի Մեհար Շէհիտին՝ մահուան գուռը հասցնելով նրան։ Սակայն, ինչպէս պէտք էր սպասել, իշխանազունը ծծում է թոյնը, նրա կեանքը փրկում եւ կնութեան առնում...

Ոսկեղջիւրի մէջ ենք. իրօք որ երազական է Պոլիսը։ Ըստ բիւզանդական աւանդութեան, նոյն ինքն Ապոլոնն է մատնանշել վայրը, ուր հետագային կառուցուել է նա։ Իր ասիական մասը շրջապատում է դիտողին անհաշիւ մինարէների գագաթներով, իսկ եւրոպա-

ARAM webaram.com

կանը՝ հոյակապ պարտատնման չէնքերով, որոնք կարծես լողում են ջրի մէջ։

Ծոպենաւը գանդաղօրէն մօտեցաւ Ղալաթիոյ քարափին։ Կանգ առաւ։ Նաւամատոյցը լեցուեց նաւին սպասող խայտաբղէտ ամբոխով։ Բեռնակիրները ձեռքից ձեռք են խլում ճամբորդների իրերը, որոնք կարծես տէր չունին։ Ալացուցիչ գոռում - գոչումներ, բազմալեզու հայհոյանքներ, կարմիր Ֆէսեր շորս կողմը։ Նոյն բանն է ու կարծես ոչինչ չի փոխուել։ Ռոտիկանները սառուցում են ու հաւաքում անցագիրները։ Ինձ համակեց վերջին ծայր հիասթափութիւն, երբ քարափից դուրս ելանք. որքան հմայիչ էր քաղաքը հեռուից, այնքան անհրապոյր է ներսը՝ իր նեղ ու մռայլ փողոցներով, աղտոտութեամբ, խեղճ ու կրակ փայտէ չէնքերի լաբիւրինթոսով, որոնց վրայ տեղ - տեղ դեռ մնում են հրդեհի հետքեր։ Ծովից տեսնուած եւ ոչ մի քաղաք չի հմայում ու ապա իր ներսը մարդու հիասթափեցնում այնպէս ուժգին, ինչպէս Պոլիսը։ Առաջին պատահած լրագրավաճառից գնեցի «Ճակատամարտ»ի օրուայ թիւը։ Վերջին երկու էջերը լեցուած էին մեծ ու փոքր յայտարարութիւններով, որոնց միջոցով մարդիկ փնտռում էին տեղահանուած հարազատներին։ Ղալաթա Սերայից մինչեւ Թաքսիմ բազմերանդ հասարակութիւնը աճապարում է զանազան ուղղութեամբ։ Հայ, յոյն, թուրք, ամէն ազգի եւ կրօնքի եւրոպացիներ խառնուել են իրար այնպէս, որ կարծես մարդկութեան որբանոր Պոլիսն է։ Ամէն քայլափոխիս նկատում եմ անգլիացի, ֆրանսացի զինուորներ, եւ այդ է միայն դրսի իշխանութեան յայտարարը։

Անհամեմատ աւելի մաքուր եւ հրապուրիչ Պերայի պողոտայով հասայ վերջապէս «Ճակատամարտ»ի խմբագրատունը։ Մեծ ափսոսանք էր այնպէս շէն տեսնել այս շէնքը, որ ապրել էր արհաւիրքներ. երիտա-

ARAM webaram.com

տարդներ, հրավառ դէմքեր, կանայք, աղջիկներ խռնուած են խմբապրատան կիսամութ առաջամասում։ Ցաջորդ, աւելի հանդարտ և լուսառատ սենեակում, երկար դրասեղանի մօտ նստած է ըմբիշի արտաքինով մէկը, որ հաւանաբար երիտասարդ դրող է, կամ բանաստեղծ։ Մօտեցայ նրան։

— Ներեցէք, կ'ուզէի մի յայտարարութիւն տալ, որ փնտռում եմ հարպատներիս, բայց չգիտեմ՝ ո՛ւր կարելի է այդ։

— Հոս. ո՞վ կը փնտռէք...

Շեշտից հասկացայ, որ այդ դորձը դարձել է սովորական աշխատանք։

— Մայրս, եղբայրս, երկու մեծ եղբայրներիս կիները, զաւակները...

— Ամէնը մէկ հնարաւոր չէ. մէկը եթէ դտնէք, ատ ալ մեծ բան է։

— Գրեցէ՛ք մայրս, եղբայրս...

— Ձեր հասցէ՞ն։

— Հասցէ չունիմ, նոր եկայ։

— Ո՞ւրտեղէն։

— Ռուսաստանից։

Գրիչը յետ դրեց ու նայեց։

— Ի՞նչպէս հոս հասաք։

— Նաւով, Օտեսայից։

Ելաւ։

— Ուրիշ տարագիրներ ալ եկա՞ն։

— Ի հարկէ։

— Եկէք հոս։

Հարեւան դահլիճում խռնուած էր բազմութիւն։

— Պարոն Գրիգո՛ր, ահաւասիկ պարոնը նոր է հասած Ռուսիայէն, դոչեց նա։

— Ե՞րբ, ի՞նչպէս, վրայ պրծաւ նա...

Ու սկսուեց նրա՝ եւ շուրջիններիս մանրամասն հար-

ARAM webaram.com

ցուփորձը, Հիւսիսային Կովկասի տարածքների թուի, տրամադրութիւնների, Անդրկովկասի, Ռուսաստանի իրադարձութիւնների, «Եփրատ» նաւով տեղ հասածների մասին եւայլն:

Գունատ մի աղջիկ, որ բոլոր ժամանակ կանգնած ուշադիր լսում էր, տրամաբանեց հարցրեց.

— Պարոն, չէ՞ք լսած արդեօք Լեւոն Մատաթեանի մասին:

— Պոլսեցի Լեւո՞նը:

— Այո՛, Պոլսէն է:

— Ի՞նչպէ՞ս չէ...

— Ո՞ղջ է:

— Այո՛, օրիորդ, մօտ ընկերս է:

— Ի՞նչ կ՚ըսէք...

— Հաւատացէք, էսէնտուկի միասին էինք, բայց նա ինձնից շուտ մեկնեց. պէտք է որ արդէն այստեղ լինէր:

Ըստ երեւոյթին շատ մօտ էր օրիորդի համար Լեւոնը. նա բոլորովին իրեն կորցրեց:

— Պարոն, եթէ դիտայիք ծնողներու վիճակը, որ ու դիշեր կուլան. ո՞ւր կ՚ապրիք, ձեր հասցէն կրնա՞մ հասկնալ, պարոն:

— Դեռ տեղ չունիմ, օրիորդ:

— Թերեւս կը հաճիք ինձ հետ Լեւոնի ծնողներուն երթալ:

— Ուրախութեամբ, բայց նախ կ՚ուզէի մի յայտարարութիւն տալ ու մի սենեակ վարձել:

Նա կարծես վախենում էր ինձ կորցնել բազմութեան մէջ:

— Պարոն, ես սենեակ դիտեմ, յայտարարութեան պէտք չկայ:

— Ո՛չ, ուրիշ յայտարարութիւն, օրիորդ, որ փնտռում եմ հարազատներիս:

ARAM webaram.com

— Ա՛խ, ներեցէք, թոյլ տուէք ծանօթանալ, Երանուհի Դանիէլեան. կ՚ուզէ՞ք ձեզ օգնեմ, խնդրեմ հոս...

Ու նախորդ սենեակում ըմբիշատիպ երիտասարդի հետ կարգադրելով այդ գործը, դուրս եկանք:

* * *

Վանականի շունչ կար օրիորդ Երանուհու վրան. նա չէր ներգաշնակւում այդ Պոլսոյ հայուհիների մասին հեռուից կազմած գաղափարիս հետ: Աշխարհիկ ոչինչ կար նրա մէջ: Վարժուհի էր՝ քաղաքական – հասարակական իրազարձութիւններին բաւական իրազեկ: Խրատած էր ազգային գործերի մէջ: Լեռնի մօտ ազգականն էր, ապրում էր Բանկալթի, մօր հետ: Առաջին տեղեկութիւնը, որ իմացայ, Ջարդարարների փախուստն էր:

— Այո՛, Թալէաթը, Էնվէրը, Ջեմալը, Հալիմ փաշան, Պեարին եւ առհասարակ բոլոր նշանաւոր Ջարդարարները դեռ պինաղազարի նախօրէին փախան:

Թէեւ դժուար էր ենթադրել որ այդ ոճրագործները հրապարակի վրայ լինէին, բայց այդ լուրը ինձ խորունկ հիասթափութիւն պատճառեց:

— Զգիտէ՞ք:

— Ո՛չ...

— Ամենէն առաջ փախաւ Թալէաթ փաշան:

— Մի՞թէ չէր կարելի այդ հրէշը ձեռք անցընել մինչեւ պինաղազարը:

— Օ՜, եթէ գիտնայիք, պարոն, թէ ո՛րքան աշխատեցաւ մեր ընկեր Մուրատը, բայց ինքը գտաւ իր մահը հրէշէն:

— Մուրա՞տը, ասում էք:

— Այո՛, Համբարձում Պոյաճեանը, մեր կուսակ-

ARAM webaram.com

յութեան սիւնեբէն մին, որ յայտնի էր «Մուրատ» կեղծ անունով, չէ՞ք լսած հնչակեան Մուրատի մասին։

— Դուք հնչակեա՞ն էք։

— Այո, երեւի դաշնակցակա՞ն կարծեցիք, խոստովանեցէք, որ հիասթափեցուցի ձեզ, պարոն։

— Ի՞նչ էք ասում, օրիորդ, ի՛նչ տարբերութիւն ունի։

— Այո՛, ինձ համար տարբերութիւն չկայ. անոնց մէջ ալ շատ բարեկամներ ունիմ։

Սենեակը, որ նկատի ունէր օրիորդը, իրենց հարեւան յոյն պառաւ կնոջ մօտ, բարեբախտաբար, ապատ էր։ Աւարտելով այդ գործը, նա ինձ առաջնորդեց մօր մօտ, որին թունդ հանեցին Լեւոնի մասին տուած տեղեկութիւններս։ Եւ այն ժամանակ, երբ մայրը հարցուփորձում էր ինձ այդ մասին, աղջիկը հարեւան սենեակում իրար էր խառնում բաժակ, պնակ, դգալներ։ Վայրկենապէս սեղանի վրայ շարուեցին վաղուց չտեսնուած բաներ՝ կաթ, կարագ, սուրճ, պանիր եւ այլն։ Կէսօր էր, երբ օրիորդը ինձ, ձերբակալուածի պէս հանրակառք դրեց եւ առաջնորդեց Պեշիկթաշ՝ Լեւոնի ծնողների մօտ։ Այստեղ պէտք է խնդիրը պարզուէր անհրաժեշտ զգուշութեամբ, որ հիւանդ հայրը ուրախութիւնից յանկարծ չմեռնէր։ Շքեղ, ընդարձակ բնակարանում, Լեւոնի ծնողներից զատ, մարդ չկար։ Ներկայացայ նախապէս, իբրեւ օրիորդի բարեկամը, ապա իբրեւ տարագիր եւ վերջապէս իբրեւ Լեւոնի զինակիցը Խոյի շրջանում եւ այլն։ Ծերունի հայրը յուզումից գոռում էր, մայրը միւնոյն հարցումը անում էր տասն անգամ։ Ի՜նչ մեծ երջանկութիւն էր կորուստը վերագտնելը։ Երբ հանդարտուեցին, մայրը գժգոհեց, որ սենեակ եմ վարձել. պարտաւոր էի ուղղակի գալ իրենց մօտ։ Ի հարկէ, վար դրին ճաշին եւ իրիկուան դէմ հա-

ARAM webaram.com

գիւ կարելի եղաւ ապաստուել՝ նոր թից տեսնուելու խոստումով։

Վերադարձին օրիորդ Երանուհին կանգ առաւ նոյն փողոցում՝ վերելքից բաւական վար մի տեղ ու ցոյց տալով գեղեցատեսած մի շէնք՝ ասաց.

— Հոն կ՝ապրի Թալէաթի հայ գործակալը։

— Հայ գործակա՞լը...

— Այո՛։

— Ո՞վ է։

— Մասնիչ Յարութիւն Մկրտիչեանը։ Մեր ժողովուրդի լաւագոյն գաւակներու արեան գնով հարստութիւն դիզեց, ասուն գնեց, հիմա կը վայելէ։ Անոր կազմած ցանկին համաձայն ձերբակալուեցան ու ջարդուեցան Պոլսոյ հայ մտաւորականները։

Շշմել էի։

— Ինչո՞ւ չեն վրէժ լուծում։

— Ո՞վ պիտի լուծէ, ասաց զառնապին։

— Դուք կը ճանչնա՞ք այդ մարդը։

— Պոլսոյ մէջ ո՞ր հայն է, որ չի ճանչնար այդ մասնիչ Աբթինը։

— Կարո՞ղ էք ինձ ցոյց տալ...

Կանգ առաւ ու նայեց այնպէս, որ կարծես նոր էր տեսնում ինձ։ Ապա քայլելով՝ դիտեց թեւի ժամացոյցը.

— Օ՜, ո՜րքան ուշացանք, մայրիկը հիմա անհանգիստ է։ Ան ալ հայկական ակումբն է, կը տեսնէ՞ք, քիչ վարը կրնանք հանրակառք առնել...

Երկար ճանապարհին միակ միտքս այդ նոր հրէշն էր՝ մասնիչ Յարութիւնը. անհրաժեշտ չէ՞ր վրէժխնդրութեան առաքելութիւնս, որ վաղուց դարձել էր գոյութեան նպատակ, նրանից սկսել։ Բայց ո՜րքան ճիշդ էին օրիորդի առածները...

— Դեռ շուտ է, այժմ հարեւան ենք, չէ՞ք փոփո-

ARAM webaram.com

քեր սուրճ մը առնել մեզ մօտ, ասաց, երբ Հասանք Բանկալթի։

— Չեզ բաւական յոգնութիւն պատճառեցի։

— Ե՞ս ձեզի, թէ՞ դուք ինծի, ասաց ժպտալով։

ՕՐ. ԵՐԱՆՈՒՀԻ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Մայրը, բոլոր հայ մայրերի պէս, օտարականի հանդէպ գուրգուրոտ, յանդիմանեց նրան, որ ճաշին իրենց մօտ չեմ եղել։

— Վնաս չունի, մայրիկ, պարոնին ընկերակցութիւնը հիմա յաճախ պիտի վայելենք, չէ՞, դարձաւ ինձ դուարթօրէն։

Առաջին անգամը չէր, որ բախտը ժպտում էր ինձ լաւ մարդկանց մօտ ընկնելու օտարութեան մէջ։ Օրիորդը իր կոկիկ դրասեղանի վրայից վերցրեց մի չքնաղ ալ-

ARAM webaram.com

բում ու մեկնեց ինձ։ Այնտեղ դաշնակցական, հնչակեան եւ այլ մտաւորականներ գրել էին օրիորդին իրենց թելադրութիւնները, բաղձանքները։ Հասկացայ, որ մի բան էլ ես պէտք է գրեմ, եւ իրօք։

— Չէի՞ք ուզեր երկտող մը գրել։

«Եղեգնեայ գրչով վրէժ երդեցի. ընդ եղեգան փող բո՛ց ելանէր», գրեցի այնտեղ։

— Ա՛խ, Վարուժանէն, շնորհակալ եմ. շատ կը սիրեմ անոր գիւցազնավէպերը. ի՞նչ ուժեր կորանցուցինք, յարեց գառնութեամբ։

— Սպանուա՞ծ է։

— Այո՛, ան ալ մատնիչ Արթինի կազմած ցանկին մէջ էր։

— Իսկ Սիամանթո՞ն։

— Ա՛ն ալ։

— Զարգարեա՞նը։

— Ա՛ն ալ, ա՛ն ալ, ամէնքը...

Գրածս ուշադրութեամբ ցամքեցրեց ծծունով ու նորից աչքէ անցընելով՝ ասաց.

— Կը պատմեն, որ վերջին պահուն Վարուժան ընկերներուն բսեր է.— «Մնաք բարով, եթէ ողջ մնաք, մեր որբերուն ակը եղէք. նոր գաւակ մը ունեցած եմ, թող անուաներ Վարուժան դնեն»...

— Ո՞ւր է սպաննուել։

— Զանգըրիէն Էնկիւրի տանող ճամբուն վրայ, Թիւնոյի գառիվարին տակ, ուր կը սկսի Գալայճըքի սարաւանդը։ Կ՚ըսեն, որ այդ խմբի մտաւորականներէն միայն Վարուժան անձնապաշտպանութեան կը դիմէ, եւ իրը պատիժ ոճրագործները դանակով դուրս թափելէ վերջ փորոտիքը, կը փորեն նաեւ հայրենասէր բանաստեղծին աչքերը...

ARAM webaram.com

* * *

Պոլսում այդ օրերին ոչ ոքի չէր զբաղեցնում ոչ մատնիչ Յարութիւնի, ոչ Թալէաթի եւ ոչ էլ միւս փախած ոճրագործների վնդիրը։ Տրամադրութիւնները այլ էին։ Օրուան նշանախօսն էր հայն ու Հայաստանը. դաւանական, երկրային բաժանումներն ու նախապրութիւնները արժեզուրկ էին եղել. ձգտում կար առանձին հատուածների մնացորդներից առաջ բերելու ազգային մի ամբողջութիւն։ Կուսակցական նեղսիրտ շրջանակներից դուրս, զանգուածների մէջ յատուկ գուրգուրանքի առարկայ էր այժմ «Արարատեան Հայաստանը». այնտեղ էր ծագել արշալոյսը եւ այնտեղից էլ կարող էր լոյս սփռուել հայկական խաւար հորիզոնների վրայ ու վերածնել ազգը։

Այս տրամադրութիւնները յատկապէս ուռճացան 1919ի Յունուարին, երբ Հայաստանից Պոլիս հասաւ հայկական պատուիրակութիւնը՝ Ա. Ահարոնեանի գլխաւորութեամբ։ Պատուիրակութիւնը իջել էր Թոքատլեանի հիւրանոցը, Բերա, ուր գիշեր ու ցերեկ ներս ու դուրս էին անում ամէն կարգի ազգայիններ, եւ Հայաստանի լուրերով խանդավառուում։ Առիթ ունեցայ եւս լսելու Ա. Ահարոնեանին, երբ նա հանդէս եկաւ Բերայի հայկական ակումբում եւ իր պերճ եւ սահուն լեզուով պարզեց, հոծ բազմութեան ծափերի տակ, թէ ինչ գերագոյն ճիգով է դուրս մղել երկրից հայ զինուորը թշնամուն եւ ինչպիսի ծանր երկունքով է ծնունդ առել «Մանուկ Հայաստանը»։ Այդ ժամանակների համար, իրօք որ, հրաշք էր այս։ Եւ տաղանդաւոր հռետորի պատկերաւոր խօսքը և՛ յուզում, և՛ խանդավառում էր ներկաներին։ Քիչ վերջը, երբ նա մեկնում էր դէպի Փարիզ, Ղալաթիոյ քարափում խմբուել էր անհամար բազմութիւն ողջերթ մաղթելու. շմորած

ARAM webaram.com

Թուրքերի աչքերի առաջ, շրջապատը թնդում էր «կեցցէ՛»ներից։

Աւելի մեծ խանդավառութիւն առեղծուեց Փետրուարի վերջերը, երբ անգլիական «Սեզար» գրահանաւը Ղալաթիոյ քարափում ափ հանեց Զաւէն պատրիարքին, որ վերադառնում էր աքսորից։ Դեռ նոր էինք շօշափում պետականութեան ուղին. հնաւանդ հոգեւոր իշխանութիւնը ամէն բան էր դեռ։ Պատրիարքը ողջ առողջ վերադարձել է. նշանակում է ազգը դեռ կանգուն է եւ պիտի ապրի։ Եւ ուրքի վրայ էր Պոլսոյ բազմահազար հայութիւնը։ Ծովափից մինչեւ Բանկ Օթոմանի շրջակայքը բռնուած էր բազմութեամբ։ Ծերունի պատրիարքի դարձը խորհրդանշում էր բոլոր աքսորուածների վերադարձը...

Հայ - Թուրք յարաբերութիւնները վատ չէին. դանդաղուածօրէն Պոլսոյ հայերը դժգոհութեան շատ պատճառներ չունէին Թուրքերից։ Իսկ քաղաքական պայմանները վերջիններին հարկադրում էին համակերպութեան։ Դեռ անցեալ տարի Ցուլիսին վախճանուած Սուլթան Ռէշատի տեղ գահ էր բարձրացել իշխան Վահիտէտտինը Մուհամմէտ Զ. անուամբ, որ համարում էր անգլիական քաղաքականութեան երկրպագու եւ հայասէր։ Պատկառելի հայեր վկայում էին, որ նոյնինքն լուսամիտ եւ գեղարուեստասէր գահաժառանգ իշխան Ապտ - իւլ – Մէջիտը մի ազգեցիկ հայի ասել է, թէ «մեր այժմեան Սուլթանը գերազանցապէս բարի է եւ հայերի վրէժը պիտի լուծէ»։ Բայց ո՞ւմից եւ ի՞նչպէս, չէր ասել։ Թուրք թերթերից «Իգտամ»ը գրում էր, որ «բոլոր տարագրուած հայերը պիտի վերադարձուեն»։ Նոյն պատկառելի մարդիկ դիմում արին հայասէր սուլթանի հայասէր գահաժառանգին այդ առթիւ,— «Այո՛, անպայման, բոլոր աքսորուած հայերը, ուր որ էլ լինեն, պիտի վերադարձուեն», ասել էր նա։

ARAM webaram.com

Իսկ եթէ չլինե՞ն... «Մանուկ Հայաստան»ի պէս մանուկ էր այն ժամանակ հայ ժողովուրդը։

Սերտ եղբայրակցութեան բնոյթ էին ստացել արհաւիրքների ընթացքում բախտակից երկու ժողովուրդների՝ հայերի եւ յոյների յարաբերութիւնները։ Այդ օրերին, յոյն պատրիարքարանի վարչութիւնը, Բերա Թաքսիմի Այա - Թրիատա մեծ եկեղեցու մէջ, կատարեց հայ նահատակների յիշատակին շքեղ պատարագ ու հոգեհանգիստ եւ արտասանուեցին յուղումնալից դամբանականներ, քարոզներ։

Իրենց հերթին, հայերն էլ Սուրբ Երրորդութեան եկեղեցու մէջ կատարեցին աւելի շքեղ հոգեհանգիստ եւ պատարագ, յոյն նահատակների յիշատակին՝ մետրոպոլիտների եւ Ֆէնէրի յոյն պատրիարքարանի մասնակցութեամբ ու երգեցին «Ի վերին Երուսաղէմ», «Քանզի զքեզ օրհնեմք», «Հոգւոյն հանգուցելոց» եւ այլ շարականներ ու աղօթքներ։

Բնականաբար, կատարուում էին եւ ապրօպուս գործեր, պատրիարքարանը յաջողել էր կազմել կաթոլիկ, բողոքական կրօնապետների մասնակցութեամբ, համազգային մի մարմին, որը պէտք է վարէր որբախնամը, հոգար տարագիրների կարիքները եւ հովանաւորէր Հայ Կարմիր Խաչը։ Շարժման մէջ էին եւ հասարակական ուժերը. ժրաջան աշխատանք էր թափում, յատկապէս, Հայ Կարմիր Խաչը, որ ունէր հիւանդանոցներ Շիշլի, Բանկալթի, Պեշիկթաշ։ Որբախնամը ունէր անդամու կայաններ զանազան թաղամասերում եւ որբանոցներ, որոնք դրուած էին աւելի լաւ հիմքերի վրայ, քան Կովկասում։ Հայ Բժիշկների Միութիւնը բացել էր հիւանդապահների արագ դասընթացք, որին արձանագրուում էին հարիւրաւորներ։ Օրը - օրին վերականգնուում էին նախկին գրական ակումբները. կազմուած էին նոր ընկերութիւններ, միութիւններ,

ARAM webaram.com

ինչպէս, օրինակ, Հայաստանի Օգնութեան Միութիւնը, Նպաստից Յանձնաժողովը, Աշխատանքի Տունը, Տիկնանց Միութիւնը եւ այլն։ Նորից տրւում էին թատերական ներկայացումներ, կազմակերպւում հանդէսներ, երեկոյթներ ի նպաստ Հայաստանի։ Նոյն նպատակին էին ծառայում բազմաթիւ թէյասեղաններ, հացկերոյթներ՝ համաձայնական պետութիւնների զօրավարներին կամ օտար թերթերի թղթակիցներին ի պատիւ, որոնք կամ արդէն հայասէր էին կամ, ըստ ենթադրութեան, համակւում էին այդ ոգւով՝ շռայլւած պատիւների ընթացքում։

Պոլսեցիներին թւում էր նպաստաւոր եւ քաղաքական դրութիւնը, Մարտի 20ին, Ուիլսընի առաջարկութեամբ Վէրսայլի վեհաժողովը որոշել էր ուղարկել Մերձաւոր Արեւելք՝ Ամերիկայի, Ֆրանսայի, Անգլիոյ եւ Իտալիոյ ներկայացուցիչներից մի յանձնախումբ՝ քննելու օսմանեան կայսրութիւնից անջատուելիք երկրամասերի վիճակը եւ ժողովուրդների կարիքները։ Հայ ազգային քաղաք. շրջանակները ջանում էին հայկական հարցով հետաքրքրել Ամերիկայի Միացեալ Նահանգները, որոնց ներկայացուցիչները վեհաժողովում եւ յատկապէս, ինքը նախագահ Ուիլսընը, ինչպէս ասում էին, շատ մօտ է ընդունում հայերին իր սրտին ու արդարամտութիւն ցոյց տալիս ստանձնելու Հայաստանի հոգատարութիւնը...

Յոյսերով, ակնկալութիւններով, արեան ու կրակի միջից անցնելով՝ հայ ժողովուրդի մնացորդները ամէն տեղ արտայայտում էին հզօրագոյն կենսունակութիւն եւ իրրեւ ազգութիւն ապրելու մի չտեսնուած յամառութիւն։ Մեծ ազգերի շարժառիթների մէջ իր նկատմամբ այդ ժողովուրդը տեսաւ միայն բարին։ Իսկ երբ հասկացաւ իր սխալը, արդէն ուշ էր։ Այժմ նրա մնացորդները ձեռք էին դարնում ամէն բանի՝ ինչ

ARAM webaram.com

կարող էր օգտակար լինել ապրելու համար։ Նկատելի էր միայն մի բաց՝ յեղափոխական տրամադրութիւնների չէզոքացումը։ Շա՞տ ուժգին էր ստացած հակայեղափոխական եւ հակամարդկային հարուածը եւ զանգրուածօրէն հնձուած նախկին յեղափոխական գործիչների դիրքերը մնացել էին թափուր...

Արդէն ունէի բարեկամներ, ընկերներ, որոնք միաբերան վկայում էին մատնիչ Յարութիւն Մկրտիչեանի կատարած տխուր դերի մասին։ Նա՛ էր պատրիարքարանի մէջ տեղի ունեցած իրադարձութիւնների զեկուցողը Թալէաթին՝ տեղահանութեան նախօրեակին, նա՛ էր եւ արմաշական կարգալոյծ ծանօթ վարդապետ՝ Համազասպը, որոնք հակողութեան տակ էին առել Հայաստանի պատուիրակութեան անդամներին, մի տարի առաջ, Թալէաթի կառավարութեան օրով. նա՛ էր, որ կազմել էր աքսորուած ու կոտորուած հայ յեղափոխականների, մտաւորականների ցանկը. նա՛ էր, որ մինչեւ վերջին հնարաւորութիւն հետապնդել էր Պոլսոյ հասարակական հայ ուժերին անխտիր։ Արդէն ստուգուած էր, որ մատնիչի կազմած ու ռասիկանապետ Պետրի միջոցով Թալէաթին յանձնուած սեւ ցանկը բաղկացած է եղել 250 մտաւորականներից, որոնցից փրկուել է հազիւ տասը մարդ։ Այդ փրկուածներն էլ, մեծ մասամբ նրանք էին, որոնց թշուառականը մուծել էր սեւ ցանկի մէջ անհոգ թիւրիմացութեամբ։ Այսպէս, օրինակ, Մինաս Չերազի փոխարէն մատնել է փոստատարան եղբօրը՝ Գասպար Չերազին, որ յաջողել էր հաստատել գործուած սխալը եւ մահից ազատուել. չիմանալով, թէ ո՛րն է դաշնակցական Մկրտիչ Յովհաննէսեանը, միաժամանակ մատնել է, նոյն անուամբ երկուսին, որոնցից մէկը փրկուել էր. յայտնի յեղափոխական Հայկ Թիրեաքեանից զատ, մատնել էր մի այլ «Հայկ», որ յաջողել էր մահից ազատուել չնորհիւ միայն Թիր-

ARAM webaram.com

եաքեանի պնդումին, որ իսկական Հայկը ինքն է. Լեւոն Շամտանճեան շփոթել էր Միքայէլ Շամտանճեանի հետ, որ յաջողել էր աքսորից վերադառնալ, եւ այլն:

Արդէն երկու շաբաթ էր ինչ լրջօրէն հետապնդում էի այդ հրէշին: Ամէն օր մի քանի ժամ, տարբեր ժամանակներ, լինում էի Պէշիկթաշ: Բայց մատնիչը հասկանում էր, որ ժամանակները փոխուել են եւ ներս ու դուրս չէր անում, նրան ձեռք անցընել կարելի էր միայն բնակարանի մէջ, սակայն մուտքի դուռը միշտ փակ էր:

Մի ժամանակ նշանաւոր այս թաղի անցեալից մնացել էին Զրապանի պալատի այրուած պատերը: Մատնիչը հաստատուել էր թաղի այս մասում: Գետնատարած բնակարանի դիմաց կար մի դիւնեատուն, որ պատկանում էր հայի: Այդտեղից վեր վար ընկած էին նպարավաճառների խանութներ: Աւելորդ էր այդտեղ բնակարան փնտռելը, ինչ որ շատ անհրաժեշտ էր մատնիչին մօտից հետամուտ լինելու համար: Թաղամասի թիկունքում կային յատուկ շուկաներ խմորեղէնի, արեւելեան դունագեղ կօշիկների, գորգերի խանութներ, որոնց տէրերը, կիսափուխ աչքերով դանդաղօրէն դարձնելով համբիչները, սպասում էին յաճախորդների: Վերի մասերում, ցաք ու ցրիւ ընկած էին հայերի տներ: Այստեղ էին ապրում պոլսեցի Լեւոնի ծնողները: Վարի մասը բռնում էր արճարանների մի շարք, ուր կանաչ, ճերմակ լաչակներով, ձիւնի պէս սպիտակ մօրուքներով, փառահեղ դէմքերով ծերունիներ պատերի տակ, չամքերին, արճարանների շուքերում կկղած ծուլօրէն ծծում էին նարգիլէն ու մերթ ընդ մերթ դանդաղօրէն մօտեցնում շրթունքներին սուրճի մատնաչափ գաւաթները:

Մարտի վերջերին մի օր փորձ արի դիւնեատան տէրոջ հետ բարեկամանալու, բայց իմանալով, որ տարա-

ARAM webaram.com

գիր եմ՝ անհրապոյր դէմք առաւ։ Այդ օրն էր, որ մատնիչի տան շեմքում յայտնուեց մի պատանի, որ շիփ - շիտակ դիմեց դէպի գինետուն ու մէկ շիշ «Մարդել» գնելով տուն դարձաւ։ Իրիկունը այդ մասին յայտնեցի օրիորդ Երանուհուն, որ միակ աջակիցս էր այս գործում. ծանօթների միջոցով կապ էր հաստատել մատնիչի ազգականների հետ ու ձեռք բերել նրա նկարը։ Պատանին մատնիչի միակ զաւակն էր։

Ցաջորդ օրը Կիրակի էր։ Բերայի Երրորդութեան եկեղեցում տեղի ունէր ազահանդէս հայ մտաւորականների նահատակութեան առթիւ։ Ներկայ էր խուռն երկսեռ բազմութիւն, Կոմիտասեան երգչախումբով կատարւում էր քառաձայն պատարագ։ Տեսարանը յուզիչ էր ու սրտառուչ։ Ներկաներից շատերը ունէին կրուստներ։ Պատարագից յետոյ Զաւէն պատրիարքը խօսեց՝ «Եթէ ո՛չ հատն ցորեանոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա թէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ» բնաբանով. բոլոր նահատակները ցորենի հատիկների պէս պիտի ծլէին ու բազում արդիւնք տային...

Իրիկունը Բանկալթիի Երիտասարդաց Միութիւնը, Կարմիր Խաչի ընդարձակ սրահում, կազմակերպել էր քաղաքացիական ազահանդէս։ Երբ հասայ, բոլոր տեղերը բռնուած էին երկսեռ բազմութեամբ։ Մնացի պատի տակ՝ անկիւնում խմբուածների մէջ։

Ազահանդէսը բացեց «Կամրջի» խմբագիր Ե. Թօրլաքեանը, որ մէկն էր վերապրող տարագրեալներից։ Նա մի քանի խօսքով վեր հանեց նահատակուած մտաւորականութեան արժէքն ու նշանակութիւնը՝ հրաւիրելով երիտասարդութեան ուշադրութիւնը դրական, հասարակական, յեղափոխական ասպարէզներում առաջացած պարապութեան վրայ ու յորդորելով նրան օր

ARAM webaram.com

առաջ բռնելու նահատակ մտաւորականութեան թափուր մնացած տեղերը։

Վերապրող մտաւորականներից գոկտոր Մելքոն Կիւլխատանեան վերյիշեց այն չարաշուք շարաթ դիշերուան իր եւ ընկերների ձերբակալութիւնը, երբ Պոլսոյ հայութեան հանրային աշքառու բոլոր գործիչներին՝ ժողովական, երեսփոխան, յեղափոխական, խմբագիր, ուսուցիչ, բժիշկ, սեղանաւոր, դեղագործ, վաճառական եւ այլն՝ հապճեպով հագնուած, քնաթաթախ, հոգաթափներով, առանց գլխարկի, իրար յետեւից առաջնորդում էին բանտ։

— Նոր եկները կու գային ուրախ ու արհամարհոտ ժպիտով, ասում էր նա, բայց երբ կը տեսնէին հարիւրաւոր հանրածանօթ ազգային հին ու նոր գործիչներ իրենց շուրջը թախծոտ ու մտախոհ, իրենք ալ կը խորասուզուէին ծանր մտահոգութիւններու մէջ...

Լուսանում է. ամէն մարդ հոգեպէս զինուում դրսից հասնելիք օգնութեան յոյսերով։ Սպասումներ, որ «թիւրիմացութիւնը» շուտով կը պարզուի։ Մօտակայ մինարէից լսում է միւէզնի «Ալլահ էքպէր»ը։ Բայց «Մէհտէրիամիէ» կենտրոնական բանտում քիչ - քիչ թանձրանում է մթնշաղը ու նորից թպպաւորում խաւարը։ Դրսից միայն լսում է անգլիական մարտանաւերի որոտների արձագանգը...

Ապա սկսում է ողբերգութեան երրորդ արարքը։ Ցանկերի ոռուգում, խուզարկութիւն, բաժանում խմբերի՝ ոչ աւելի քան քսան մարդ ամէն մի խմբի մէջ ու դէպի դուրս։ Ոստիկանութեան ընդհանուր տնօրէն Պեարին, իր մտանաւոր ինքնաշարժով, այստեղ է։ Ու խումբ - խումբ երթ՝ Այա - Սոֆիայի պողոտայով դէպի ծովեզերք, Սիրքէճիի ուղղութեամբ։ Հեծկլտուք։ Ու Սարայ - Բուրնուի, Կիւլհանէի դարաստանը։ Ցուցուած ծով լեռնակուտակ ալիքներով։ Զատ - զատ խմբ-

ARAM webaram.com

բերը հանում են այստեղ. նորից իրար երես տեսնելու ասուածային մի շնորհ։ Ու Շիրքէթի 67 թիւ շոգենաւը։ 220 հոգի, ապր հայ ազգի, ու նոյնքան էլ ռուսիկաններ, զինուորներ։ Ահա Մարմարան, հոգեխռով վերջիչումներ։ Մահուան տագնապ։ Հայտար - փաչա։ Լոյսերը մարած մի գնացք։ Ապա Սէնճան - Քէօյի կայարանը։ Աղջամուղջ։ Կենտրոնական բանտի պեսը կարդում է նահատակների առաջին խմբի ցանկը։ Մրմունջ։ Ցիշատակուածները դրկախառնուում են, համբուրուում, վար իջնում. 75 հոգի դէպի Այաշ՝ Ակնունի, Խաժակ, Զարգարեան, Ճանկիւլեան, Շահրիկեան, Սիմանթօ, Փաչայեան, Բարսեղեան, Տաղաւարեան, Վարուժան, Աշրպպաշեան, Զաքարեան, Լեւոն Լարենց, Զաւուշեան, Թոմաճանեան...

Եւ բանախօսը միապաղաղ կարդում է 75 հոգու անուն։ Մի կին բարձրաձայն հեկեկում է։ Դահլիճի մէջ լսում են շշուկներ՝ «ո՞վ է», «քոյրն է», «որո՞ւ»։ Բանախօսը անվրդով շարունակում է.

Արշալոյս։ Գալայճրքէն դէպի Զանկրրը... Ինչ որ խոշոր զօրանոց, որի պատուհանները տախտակներով գամուած են։ 56 անձերի մի նոր ցանկ. ինձ անծանօթ անուններ։ Բայց ո՞ւր մնաց թափուր խոշոր զօրանոցը, որի պատուհանները գամուած էին տախտակներով, մտածում եմ ես, այլևս անկարող հետեւելու բանախօսին.— «Պիլա թէրէտտիւթ վէ մերհամէթ, պիր այլըզտան տօգսան եաշրնա գատար իրլաֆը». թուրքերէն կարդում է Թալէաթի հրամանը...

Հասկանում եմ. «անխնայ եւ առանց ողորմելու, մէկ ամսականից մինչեւ ինսուն տարեկանը ոչնչացնել»...

Մեծ բազմութիւն կար, օդը ծանր էր, գլուխս զառնում էր ու շնչահեղձ էի լինում։ Դժուարութեամբ էի

ARAM webaram.com

հասկանում բանախօսին. խօսքերը գլխիս մէջ ցատկըռտում էին. «Ձէլալ - Հալէպ»... «Զէրքէզ Մէհմէտ»... «Վարդգէս, Զօհրապ»... լարում եմ բովանդակ ուշադրութիւնս:

— «Վարդգէ՛ս, քեզ Բուլգարիա երթալու հրաման չեմ տար, գիտեմ, օձիքդ ազատել կ՚ուզես, բայց ճար չկայ. մենք ինչ որ ըլլանք, դու ալ մեզի հետ պիտի ըլլաս»...

— Ո՞վ է ասել այդ. դարձայ հարեւանիս:

— Թալէաթը՝ Վարդգէսին...

— Զօհրապ, զգալով թէ դէպի մահ կ՚առաջնորդըւին, տանտիրոջ Մահմուտ Նեմիմին կը դիմէ՝ «մեզ ազատելու կը տանին, կ՚աղաչեմ միջամտեցէք», պատմում է բանախօսը...

Ու նորից մի հեծկլտոց խանգարում է դահլիճի դիրեղմանային լռութիւնը:

— Հուսկ ուրեմն հեծեալ ոստիկան զինուորներու հսկողութեամբ Զօհրապ եւ Վարդգէս մէկ կառքի մէջ, միալար շարունակում է բանախօսը...

Ու նորից բան չեմ կարողանում հասկանալ... գարձեալ նոյն մարդը՝ «Զէրքէզ Մէհմէտ»... ինչ որ Ֆալիլ... Տիգրանակերտ... Գարաքէօփրիւ...

Գլխիս կարծես սաղաւարտ կայ, որ արճիճի պէս սեղմում է, մղձաւանջ է եւ ոչ թէ սպահանդէս... Ցանկարծ, գլուխս դարձաւ, պաղ արեան հոտ առի, սարսափը համակեց ինձ, պիտի վայր ընկնէի: Ոտքերիս ուժ տալով՝ հպիւ կարողացայ հասնիլ դրան ու երերալով դուրս ելայ...

Դուրսը դով էր, երկինքը վճիտ: Մտածում էի գընալ Պէշիկթաշ՝ Լեւոնի ծնողների մօտ, խնդրել թոյլ տալ մի առ ժամանակ այնտեղ ապրելու, որպէսզի մօտ լինէի մատնիչի բնակարանին. այլ կերպ, ահագին տարածութեան վրայ, ոչինչ չէր կարող դուրս գալ: Թե-

ARAM webaram.com

քեւս արդէն վերադարձել էր Լեւոնը. այդ դէպքում խնդիրը կը դիւրանար, նրան կարող էի յայտնել դիտաւորութիւնս։

Անցնելով դինուորական վարժարանը՝ մտայ Նշանթաշի պողոտան, որի բարձունքներից ճրագների տակ փողփողում էին Վոսփորի ջրերը։ Դեռ Օխլամուրի Քէօշկին չհասած, հեռուից տեսնում եմ ճերմակ մարմարէ Համիտիէ մզկիթը, որի մօտ ցցուած սրածայր մինարէն խաղում է աստղերի ցոլքերի տակ։ Այստեղ պէտք է իր մահկանացուն կնքէր 14 տարի առաջ Թալէաթի հոգեւոր հայր Համիտը, բայց օդն ելաւ հուր ժայթքող կատաղի «Մեծ մարդասպանի» քթի տակ։ Ո՞վ կարող էր երեւակայել, որ նրանից անհամեմատ աւելի մեծ մարդասպաններ պիտի ծնէր այս հողը։ Քիչ վարը, դէպի ներս, բարձունքին թառած «Եըլտըզի Քէօշկը» նիրհում է ծառերի դիշերային սեւ ստուերների մէջ...

Հասնելով մատնիչ Յ.-ի շէնքին, տեղս գամուած մնացի։ Ճրագ կար։ Փողոցին նայող պատուհանների վարագոյրները քաշուած չէին։ Դահլիճի մէջ ձիւնի պէս ճերմակ սփռոցով ծածկուած լայն սեղանի շուրջ դառնում էր մի կին. նա շարում էր սեղանի չորս բոլորը ափսէներ, դդալ, դանակ, պատառաքաղ։ Կինը, յանկարծ, նայեց դէպի դուրս։ Անմիջապէս չքացայ դէպի վեր, անցայ միւս մայթը ու յետ դառնալով՝ մտայ տան դիմացի դինետունը։ Տէրը, որ նստած էր կլոր սեղանի շուրջ երկու տարեկիցների հետ, հարցական դէպի ինձ երկարեց վիզը։

— Մէկ չիշ դարեջուր...

— Պօղոս Նուպար փաշան չըլլար նէ, ո՛վ դիտէ ինչպէս կ'ըլլար խնդիրը, ասաց երկու տարիքոտ հայերից պատի տակ նստածը՝ ծալելով առջեւը դրուած ծոցատետրը. ապա քթի ծայրից ակնոցները տեղափոխելով ճակատին՝ նայեց ինձ։

ARAM webaram.com

— Մաշալլա՛հ, Եօթը վիլայէթ, աշխարհի չափ հող է պէ՛տ. ասաց միւսը՝ օղու բաժակները լիցնելով։

— Կիլիկիան ալ ասոր մէ՞ջն է, հարցրեց գինետան տէրը։

— Պէ՛տ ապրա՛ր, ի՞նչ տեսակ մարդ ես դու, քեզի կ՚ըսեն Եօթը վիլայէթ, Մարաշի, Կոզանի, Ջէրէյլ-Բէրէքէթի, Առանայի սանջակները եւ Ալեքսանդրէթի նահանգատին հետ մէկ տեղ մեզի կու տան, դուն նորէն կ՚ըսես «Կիլիկիա», ապա ո՞ւրտեղ են ատ սանջակները, ցաւումով պոռթկաց ակնոցաւորը՝ անձնական ծանր վիրաւորանք զգացողի պէս։

— Ըշտէ ես ալ ատ կ՚ըսեմ, Համեստս ապա, չքմեղանքով ասաց գինետան տէրը ու հապաց կոկորդը մաքրելու ձեւով։

— Ադէկ, լաքին Երկիրը առանց բնակչութեան մի-եւնոյն է թէ անջրդի պարապէզ. ո՞վ պիտի երթայ հոն ապրի, ասաց Երկրորդը ծխելով։

— Ապրա՛ր, մէյ մը հողը ձեռք անցընէինք, անկէ ետք դիւրին է. մարդ ամենէն առաջ տո՞ւնը կը մոռնայ, թէ՞ քիրաճին...

Մէկէն, գինետան տիրոջ նշանի վրայ, լռեցին. ներս մտաւ դլխարաց մի պատանի, որին կարծես տեսել էի։

— Հինգ չիշ «Մարդելի»...

Վճարեց, չիշերը առաւ ու դուրս գնաց։

— Ո՞վ էր, հարցրեց ակնոցաւորը։

— Շուտին մանչն է։

Յանկարծ յիշեցի, որ պատանին մատնիչին տղան էր։

— Ի՞նչ խարար է. հի՞նգ չիշ «Մարդելի», չշնջաց Երկրորդը։

— Հիւրեր ունի...

ARAM webaram.com

Շփոթութիւնը համակեց ինձ. չէ՞ որ կարող էի պատանու հետ ներս խցկուել։

— Հէյ - վա՛խ, մէկը չգտնուեցաւ, որ շանսատակ ընէ ու ազգի ճակատէն ատ մուրը սրբէ, հատուցեց ակնոցաւորը...

— Ատենը չէ, Համեստս ապա, մէյ մը թող ազգը ինքզինքը գտնէ, ասաց երկրորդը։

— «Ատենը չէ՛», ապա եթէ ան ալ Ամաչականին պէս կծիկը դնէ...

— Ո՛ւր ալ երթայ, Ցուզային վերջը պէլլի է։

Ցանկարծ, կարծես զսպանակից վեր նետեցին ինձ։ Բայց մինչեւ վճարեցի, վրայ հասայ՝ ուշ էր։ Մուտքի դուռը փակ էր։ Ցուսահատ՝ վազեցի դէպի պատուհանը եւ ի՞նչ տեսնեմ. բոլորուել են սեղանի շուրջ ատենից աւելի կանայք, տղամարդ, սեղանին գլուխը, ճիշդ պատուհանի դէմ ու դէմ, բազմել է մատնիչը ու բաժակը ձեռին՝ ճառում է։ Ինձ համակեց մի վհատ կատաղութիւն. դուրս քաշեմ, շանթահարեմ ուղղակի պատուհանից... Ցանդուգն, սնափառօրէն ինքնագոհ կեցուածքը, մի քիչ կոր նստուածքը, մանր աչքերի կայծկլտուն գոհունակութիւնը, բարակ շրթունքներով բաց ու խուփ անող լայն բերանը, ամէ՛ն բան ինձ գող էր պատճառում.

— Դուրս քաշե՞մ...

— «Դո՛ւրս քաշիր»...

— «Ուղղակի պատուհանի՞ց...

— Ուղղակի պատուհանի՞ց...

Փոթորկւում էր էութիւնս։

— «Գլխի՞ն»...

— «Սրտի՛ն...

Ցանկարծ՝ ճարճատիւն ու ահաւոր դղրդիւնով վար թափուեցին ապակիները. մատնիչը մահասարսուռ յետ ընկաւ ու ծալուեց նստած տեղը...

ARAM webaram.com

Առաւօտը շուտ թերթերից իմացայ, որ մառնիչը միայն վիրաւորուած է։ Ամէն բան փճացաւ։ Գլխի՛ն պէտք է դամէի գնդակը։ Անճարակութեանս պիտակցութիւնը մահուան չափ ծանր էր...

Քիչ վերջ ինձ մօտ յայտնուեց օրիորդ Երանուհին. սովորականից աւելի գունատ, չփոթ, բայց ժպտուն նա ձեռքս թօթուեց.— Կը շնորհաւորեմ, եղբայրս, ի՞նչ զուգադիպութիւն, ի՞նչ հոյակապ... ու չչմած նայեց։

— Հիւա՞նդ էք։

— Մաղրո՞ւմ էք...

— Ի՞նչ կ'ըսէք, ինչո՛ւ պիտի ծաղրէի։

— Զղիտէ՞ք, որ մառնիչը ողջ է մնացել։

— Օ՛, անհոգ եղէք, ես արդէն այցելեցի՝ հիւանդանոցը, ուր պառկած է. բարեկամ յոյն բժիշկ մը բաւ, որ ժամերը համբուած են...

Ցաջորդ օրը մառնիչը վախճանուել էր։

ARAM webaram.com

Զ. ԳԼՈՒԽ

ԴԷՊԻ ԱՄԵՐԻԿԱ

Մատնիչի մահը Պոլսոյ հայութեան մէջ առաջ բերեց ընդհանուր ցնծութիւն։ Կուսակցութեան շրջանակներում հարց բարձրացաւ հետամուտ լինելու մեծ մարդասպաններին, յարաբերութեան մէջ մտնելու այդ առթիւ Ռուսաստանի, Անդրկովկասի, Բերլինի, Ժընեւի կուսակցական մարմինների եւ ընկերների հետ։ Բայց շատ կարճ տեւեց այդ խանդը, ու նորից գերակշիռ արժէք ստացան քաղաքական հարցերը։

Երեւանից նոր էր եկել Հայաստանի պատուիրակութեան անդամ Պապաջանեանը, փարիզ մեկնելու համար։ Երեւանում Արեւմտեան Հայաստանը արդէն համարում էր «կցուած» Արեւելեան Հայաստանին։ Այնտեղ պատրաստւում էին մեծ շուքով տօնելու «Մխայեալ, Անկախ Հայաստան»ի առաջին տարեդարձը։ Նոյն տօնական պատրաստութիւններով էին տարուած ընկերները Պոլսում։ Մայիսի 28ին, յունական Սիլլոդոսի մեծ դահլիճում, խուռներամ բազմութեան առաջ, այդ մասին խօսեց պ. Պապաջանեանը՝ մեծ ոգեւորութիւն ըստեղծելով ներկաների մէջ։

Թւում էր մօտալուտ եւ դիւանագիտական ջանքերի պսակումը։ Հաշտութեան վերհաժողովը դեռ Ցունուարին որոշել էր ազատագրել Հայաստանը եւ մի հոդատար նշանակել Ապրերի Դաշնակցութեան Ուխտի 22րդ կէտի համաձայն, որ վերաբերում էր միջազգային

ARAM webaram.com

մանդատներին։ Սկսած Փետրուարից, Հայաստանի պատուիրակութիւնը Փարիզ էր ու գործակցութեան մէջ Ազգային պատուիրակութեան հետ։ Եւ այժմ, Պոլսում, օրուայ հրատապ խնդիրը երկու պատուիրակութիւնների կողմից վեհաժողովին ներկայացուած բողձանքների «Ցուշագիրն» էր։

Եօթը վիլայէթների եւ Կիլիկիոյ պահանջից զատ, մենք գնում էինք հատուցումների պահանջ Թուրքիայից՝ կատարուած սեպհականութիւնների, կոտրածների, բռնապրանումների եւ հայ ազգի կրած ամէն տեսակ զրկանքների համար։ Հայկական ազգային եւ մասնաւոր լքեալ գոյքերը Թուրքիայում պէտք է յանձնուէին Պոլսոյ հայոց հոգեւոր իշխանութիւններին եւ գործադրուէին հանրային կարիքների համար։ Հոգատարութիւնը ստանձնող պետութիւնը պարտաւորւում էր՝ հարկադրել հայկական հողամասերը գրաւող Թրքական, Թաթարական եւ այլ իշխանութիւններին՝ մաքրել այդ հողերը, ընդհանուր զինաթափութեան ենթարկել բնակիչներին, արտաքսել եւ պատժել բոլոր նրանց, ովքեր մասնակցել էին ջարդերին, բռնութիւններին ու թալաններին, այլ եւ հեռացնել հանրային անդորրութիւնը խանգարող բոլոր տարրերը, Աբդիւլ Համիտի եւ Իթթիհատականների իշխանութեան օրով Հայաստանում բնակեցուած մուհաճիրներին, եւ, վերջապէս, թէ՛ Հայաստանի ներսը եւ թէ դուրսը միջոցներ ձեռք առնել հայ եկեղեցու գիրկը վերադարձնելու բռնի խլամացած կանանց, աղջիկներին ու երեխաներին, եւ հարէմներից ազատել հայ կանանց։ Այս բոլորից զատ, Թուրքիան պէտք էր հայերին վճարէր պատերազմի ժամանակ բռնութեամբ գրաւուած գոյքերի, ինչպէս եւ Թրքական հողերի վրայ մնացած հայկական ստացուածքների փոխարժէքը, այլեւ վերադարձնէր հայերից

ARAM webaram.com

յափշտակուած եկեղեցիները, դպրոցները, վանքերը՝ իրենց բոլոր հիմնարկութիւններով եւ հողերով...

Մի վկայական է այս յուշագիրը հայերիս քաղաքական հասունութեան աստիճանը չափելու համար: Այդ տեսակէտով Թուրքերը շափաւոր ու գործնական էին: Պոլսում այլեւս գաղանիք չէր, որ Անատոլիայի ազգային շարժումը ուղղուած էր յաղթական պետութիւնների եւ միաժամանակ յոյների ու հայերի դէմ: Ամէն մարդ գիտէր, որ Նեղուցների հերոս Մուստաֆա Քեմալը, որ, իրը թէ Պոլսոյ կառավարութեան կողմից ուղարկուել էր Անատոլիա շարժումը զսպելու, անցել էր ապստամբների գլուխը: Թուրքերը ձգտում էին ազատագրել փոքր - ասիական թերակղզու արեւմտեան մասը յունական նուաճումներից, Իզմիրի, Բրուսայի, Պոլսոյ հետ միասին. ազատել Պոլիսն ու Նեղուցները դաշնակից զօրքերից. մի նեղ հողաշերտ ձեռք բերել Եւրոպական Թուրքիայում՝ Պոլիսը ապահովելու համար: Ապա՝ միանգամ ընդ միշտ տիրանալով լիակատար անկախութեան՝ զանց առնել ազգային փոքրամասնութիւնների շահերն ու պահանջները եւ ստեղծել մի նոր Թուրքիա՝ Թիւրքերի համար: Միջագետքը, Սիւրիան, Պաղեստինը, ինչպէս նաեւ Եւրոպական Թուրքիոյ որոշ մասերը, գոնէ ժամանակաւորապէս համարւում էին կորած:

Միաժամանակ Թուրք պետական մարդիկ ամէն տեղ աշխատում էին պատերազմի, տեղահանութեան, կոտորածների, աւերածութիւնների բովանդակ պատասխանատուութիւնը փաթաթել իթթիհատական երեք – չորս պարագլուխների վրին ու երկրին սպասող պատուհասները մեղմել: Մայիսի վերջերին մամուլում ծանուցուեց, որ փախստական վիճակի մէջ գտնուող վարչապետ Թալէաթին, պատերազմական նախարար Էնվերին, կրթական նախարար տոկտոր Նազիմին եւ

ARAM webaram.com

ծովային նախարար Ջեմալ փաշային տասը օր պայմանաժամ է տրուում Պոլսոյ պատերազմական առեւանին-ներկայանալու համար։ Հակառակ պարագային, պիտի զրկուէին քաղաքացիական բոլոր իրաւունքներից եւ դրաւման պիտի ենթարկուէին իրենց բոլոր կալուածները։

Նոյն օրերին Պոլսոյ թուրք մամուլը վերադնահատման էր ենթարկում մօտիկ անցեալի իրադարձութիւնները՝ լուսաբանելու երկրին վիճակուած ապէտ պատճառները։ Ամէն օր հանդէս էին գալիս նոր մերկացումներ։ Պատերազմին մասնակցելու խնդիրը որոշել էր Իթթիհատի գեկավար մարմինը, առանց դահլիճի հաւանութեան։ Կուսակցութեան գեկավարներից Ռիզա բէյ իր հարցազննութեան մէջ հաստատում էր, որ պատերազմի յայտարարութիւնից շատ առաջ ուղարկուել էին գինուած խմբեր Անդրկովկաս՝ խռովութիւններ առեղծելու նպատակով։ Եղեմական նախարար Ճաւիտ բէյ, հանրային շինութեանց նախարար Մահմուտ փաշա, թղթատարական հեռագրական նախարար Ռական բէյ Մարտիկեան եւ առեւտրական նախարար Միւլէյման բէյ հրաժարուել էին իրենց պաշտօններից այդ խիստ առիթներով։ Մասյլ գոյներով էր նկարագրուում պետական ռնտուկի կոդոպուտը։ Փախուստի ժամանակ, իբր թէ, միայն Թալէաթի տրամադրութեան տակ եղել է տասը հազար օսմանեան հընչուն ոսկի։ Կատարուած խոշոր գեղծումների բոյնը կազմում էր Իսրայիլ Հակկը փաշային ենթակայ պատերազմական նախարարութեան մատակարարման տեսչութիւնը։ Գեղծումների մէջ միայն, այսպէս կոչուած, «վագոնների առեւտուր»ը կազմում էր մի քանի միլիոններ։

Ցունիսի տասնին Պոլսոյ թուրք պատերազմական առեւանը ի բացակայութեան մահուան դատապարտեց Թալէաթ, Էնվեր եւ Ջեմալ փաշաներին, իրրեւ դաւա-

ARAM webaram.com

ւոր Ջարդարարներ։ Մի ամբողջ ազգի սիստեմատիք ոչնչացման համար, որ տարիներ տևեց, մահուան երեք անուանական պատամիտները գալիս էին սրբելու երկրի հակատից պատմական արատը...

* * *

Պոլսոյ ընկերներից մին ինձ առաջնորդեց պատրիարք Զաւէնի մօտ, որ փափաքել էր ինձ տեսնել։ Ց. Մկրտիչեանի մատնութիւններից զգալապէս տուժել էր պատրիարքարանը։ Ազգային Ժողովի մի խոշոր մասը քշուել ու ջարդուել էր։

Աշխարհի ամենաթշուառ մարդն էր, մեր պատմութեան ամենատարաբախտ հովուապետը, որ մնացել էր առանց հօտի. Զաւէն արքեպիսկոպոս Եղիայեանը դեռ 1913ի վերջերից բազմաթիւ թղթերներով հրաւիրում էր Բարձրագոյն Դրան ուշադրութիւնը Էրզրումի, Վանի, Բիթլիսի շրջաններում տեղի ունեցած մատնակի ջարդերի, հոգային յափշտակութիւնների, աւարառութիւնների վրայ։

Յաջորդ տարուայ վերջերին, երբ դէպքերը սկսեցին ստանալ գանգուածային բնոյթ եւ տեղի ունեցան Բոզաս - Քէսէնի, Բելուի, Բաշկալէի, Հարպասանի, Սաթմանիսի, Արշամի, Հասան - Թամբանի, Տաշ - Օղլուի, Գարա - Զորիկի եւ այլ հայ գիւղերի կոտորածներն ու աւարառութիւնները, նորընտիր պատրիարքը ջանք չխնայեց գալիք մեծ պատուհասները կանխելու՝ օրինական միջոցներով։ Այնուհետեւ, նա զրկուեց ամէն արժէքից իշխանութեան աչքում։ Պատերազմը Թուրքիայում ծաւալուելուց յետոյ, մինչեւ 1915ի Մարտ - Ապրիլ ամիսները, նրա այդ դերը կատարում էին Օսմանեան Խորհրդարանի անդամներ Վարդգէսն ու Զօհրապը Պոլսում եւ Վռամեանը՝ գաւառում։ Բայց

ARAM webaram.com

նրանց միջամտությունները վերջացան իրենց մահ-ուամբ, իսկ պատրիարքը հազիւ ազատուեց նոյն ճա-կատագրից Մոսուլում։ Այժմ իր տխուր, քիչ թեք աչ-քերը ակնոցների միջից վրաս յառած, նա օրհնեց ինձ ու ասաց.

— Այո՛, զաւակս, մատնիչ Յարութիւն Մկրտիչ-եանը երիցս դերազանցեց Վասակը...

Ինձ համար այդ տեսակցութեան միակ արժէքը այն էր, որ խնդրեմ պատրիարքի աջակցութիւնը Թա-լէաթը հետապնդելու նպատակով։ Բոլոր միջոցները սպառել էի ու վերջին յոյսս այդ էր։ Բայց այդ պա-հին յայտնուեցին Ազգային Ժողովի անդամներից ո-մանք, եւ մենք ստիպուած եղանք հեռանալ։

Ո՛ւր էլ լինէր Թալէաթը, պարզ էր, որ նրա հետքը կարելի էր գտնել Պոլսում, իր կուսակցական հակա-ռակորդների օգնութեամբ։ Իսկ դրա համար անհրա-ժեշտ էր դրամ, որ չկար։ Ապարդիւն անցան օրիորդ Երանուհու բոլոր ջանքերը այդ ուղղութեամբ իր կու-սակցութեան շրջանակում որեւէ գործ տեսնելու հա-մար։ Եւ այժմ, յուսահատ, մտադիր էր մեկնելու Ամե-րիկա, ուր նրան հրաւիրում էին ուսուցչուհու պաշտո-նով։ Ես ինչ անելս չգիտէի...

Ամրան վերջերին Անատոլիայի ազգային շարժման ազդեցութիւնը զգալի էր Պոլսոյ Թուրքերի վրայ։ Օրը օրին նրանք դառնում էին յոխորտ ու ամբարտաւան։ Հայ - Թուրք յարաբերութիւնների նախորդ փափկանը-կատութիւնները Թուլանում էին։

Թուրք մտաւորականութիւնը բաժանուած էր երկու մասի, աւելի շուտ՝ քաղաքական հոսանքների։ «Արեւմտեաններ»ի եւ «Արեւելեաններ»ի։ Առաջինները գտնում էին, որ Թուրքիոյ փրկութիւնը հնարաւոր է միայն արեւմտեան պետութիւնների հետ համաձայնու-թեան գալով։ Առանց այդպիսի համաձայնութեան,

ARAM webaram.com

անկարելի է վերականգնել ոչ միայն բզկտուած երկիրը, այլեւ յոյս ունենալ տնտեսական, ելեւմտական ծանր կացութիւնը կարգաւորելու։ Միայն համաձայնութեան միջոցով կարելի էր փրկել Պոլիսն ու Նեղուցները։

Արեւելեանները, ընդհակառակն, գտնում էին, որ Արեւմուտքը Թուրքերի համար միշտ եղել է շարիք եւ այդ կողմից փրկութիւն սպասելու հիմք չկայ։ Անհրաժեշտ է յենուել Պարսկաստանի, Աֆղանիստանի, արաբների, հնդիկների, յատկապէս Ռուսաստանի խլամների վրայ եւ կռիւ մղել արեւմտեան ուժերի դէմ՝ ազգային շահերի պաշտպանութեան սահմաններում։

Վերջինների շարքերը արագութեամբ աճում էին։ Թուրք երիտասարդներ, նախկին զինուորականներ, իթթիհատական գործիչներ փախչում էին Պոլսից ու խտացնում շարքերը քեմալական շարժման, որը արդէն ունէր գործունէութեան ճշդուած ծրագիր։ Արեւմտականները այժմ փաստօրէն կազմում էին Ֆուզի փաշայի «վանտուած» կառավարութեան եւ «դերի» Սուլթանի սակաւաթիւ կողմնակիցները։

Զուգահեռաբար, Պոլսոյ հայերի մէջ հետզհետէ նկատելի էր քաղաքական տրամադրութիւնների տեղաշարժութիւն, «Մեծ դաշնակից»ներից հիասթափութիւն։ «Դաշնակից» զանազան «հայասէր» զօրավարներ, Պոլսում քիչ շատ շփման մէջ մտնելով Թուրքերի հետ, առանց յատուկ ջանքերի, գտնում էին նաեւ «Թրքասէր», ինչ որ մտցնում էր երկուութիւն հայ - եւրոպական նախկին անաղարտ յարաբերութիւնների մէջ։ Լինում էին եւ այնպիսի նախկին «հայասէր»ներ, որոնք այժմ չէին քաշւում ասելու, թէ հայերն էլ բարի պլտուզ չեն։ Միջին քաղաքացին խիստ ազդւում էր նման անախորժ անակնկալներից։ Բանիմաց տարրերի հա-

ARAM webaram.com

մաբ որոշիչը, ի հարկէ, քաղաքական կացութիւնն էր, որ չէր կարող նպաստաւոր նկատուել։

Ամենից առաջ, աննպաստ եղրակացութեան էր յանգել զօրավար Հաբիբբրոի առաքելութիւնը Հայաստանի հոգատարութեան մասին. Հայաստանում հայ չկար...

— «Դաշնակիցները պարտաւոր էին հաշուի առնել մեր գերեզմանները», ասում էին արտասուախառն աչքերով մարդիկ։ Այո՛, բայց գերեզմաններով կարելի չէր պետութիւն կազմել։

Մխիթարեան չէին նաեւ Երեւանից հասնող լուրերը. սովն ու հիւանդութիւնները դեռ շարունակում էին կոտորել։ Անգլիան Կովկասում այլեւս չէր ուզում յենուել որեւէ հայ ուժի վրայ. պարզուել էր, որ հայը աւելի է ռուս, քան ռուսը ինքը, եւ չէր կարելի յենուել հայի վրայ, երբ այժմ Ռուսաստանի դէմ է իր կռիւը։ Սուր վրդովում էր առաջ բերում անգլիացիների դարձելակերպը Զանգեզուր - Ղարաբաղի հարցում. նրանք ցանկանում էին կցել այդ հողերը Ադրբեջանին՝ հակառակ տեղական բնակչութեան բուռն բողոքներին։ Կարս, Շարուր - Նախիջեւանը ժամանակաւորապէս դառնում էին անգլիական նահանգապետութիւններ, որոնց տակ փաստօրէն հաստատւում էր թրքական իշխանութիւն։

Անգլիացիների այդ ընթացքից թեւ առած՝ թուրքերը աշխատում էին ներսից պայթեցնել նորաստեղծ Հայաստանը. Կարս, Սուրմալու, Շարուր - Նախիջեւան և այլն կազմում էին տեղական «անկախ հանրապետութիւն»ներ իրենց կառավարութիւններով, «չուրա»ներով ու պայքար մղում Հայաստանի տիրապետութեան դէմ։ Հայաստանի հոգի վրայ կային «Արեւմտեան Կովկասի հանրապետութիւնը» Կարսի «չուրա»յով եւ Արեւելեան Կովկասի կամ «Արաքսեան հանրապետութիւ-

ARAM webaram.com

նը», որի մէջ մտնում էին Սուրմալուն, Զանգի եւ Վեռի Բասարները, Միլլին, Շարուրն ու Նախիջեւանը՝ Նախիջեւան կենտրոնով։ Այս «հանրապետութիւն»ներից իւրաքանչիւրը, իր հերթին, բաժանւում էր աւելի փոքր, գաւառական միութիւնների՝ իրենց տեղական «շուրա»ներով։ Այդ հանրապետութիւնները պահում էին սեփական բանակներ՝ զինուած թրքական թնդանօթներով, գնդացիրներով ու հրացաններով, թուրք ոստանների եւ շաւուշների հրամանատարութեան տակ։ Ղարաբաղ, Զանգեզուր, Բէօյիւք - Վեռի, Դաւալու, Կողբ, Շարուր, Սուրմալու, Կարսի շրջանում մինչեւ Սարըղամիշ տեղի էին ունենում արիւնահեղ կռիւներ։

Գաղութներում ծնունդ էին առել հատուածական տարակարծութիւններ, որոնց ազդեցութիւնը զգացւում էր նաեւ Պոլսում։ Որոշ շրջաններ չէին ուզում հաշտուել այն մտքի հետ, որ ստեղծուած երկիրը, տուեալ պայմաններում, նոյն ինքն Հայաստանն է։ Ոմանք մինչեւ իսկ ջղայնանում էին, որ կովկասահայերը իւրացրել են «Հայաստան» անունը իրենց երկրին։ «Արարատեան հանրապետութիւն»ը առանձին ռուսական հարց էր, մինչդեռ Հայկական Խնդիրը վերաբերում էր Թուրքահայաստանին։ Լաւագոյն դէպքում այդ հանրապետութիւնը հայութեան մէկ հատուածի երկիրն էր եւ ոչ թէ Հայաստանը...

Օգոստոսի վերջերին օրիորդ Երանուհին մեկնեց Փարիզ, այնտեղից Ամերիկա անցնելու համար։ Մեծ յոյս ունէր Փարիզում Թալէաթի գործով շահագրգռուել։ Ցուսադրում էր ինձ եւ պնդում, որ սպասեմ։

Բայց անցաւ մի ամիս. ոչ մի լուր չստացայ նրանից։ Սպասումների այդ օրերս անցընում էի քաղաքի պատմական, գեղարուեստական յիշատակարանները դիտելով։ Երբեք չեմ կարող մոռանալ այն երազական տպաւորութիւնը, որ ստացայ Ղալաթիոյ աշտարակից

ARAM webaram.com

դիտելով քաղաքը՝ սեպտեմբերեան մի իրիկնամուտի։ Ամփիթատրոնաձեւ տարածուել էր քաղաքը իր աշտարակներով, մզկիթների մեծ ու փոքր գմբեթներով ու նրբակերտ մինարէներով։ Դէպի հիւսիս, Վոսփորի երկու եզերքներով տարածւում էին ծառերի մէջ նիրհող երազական ապարանքներ, պալատներ։ Դէպի արեւելք, ասիական եզերքում, նոճիների մէջ փռուել էր Սկիւտարը իր վարդագոյն շէնքերով, տարածուն գերեզմաններով։ Հեռուն տարրերում եմ Կատար - Բէօյը, հնագոյն Քաղկեդոնը։ Ամէն մի առանձին շրջան լողում էր կարծես իր բաժին ջրերի մէջ, ուր յամրօրէն շարժւում են բոլոր ուղղութիւններով առապատանաւեր, մակոյկներ, մեծ ու փոքր շոգենաւեր։ Երկինքը կարծես այլւում էր վերջալոյսի կրակով։ Բեազիմ - փաշայի, Դերսհանէի, Ղալաթիոյ շրջանները կարծես լողում էին հրդեհի մէջ։ Բերան, մինչեւ Շիշլի, պարուրուել էր վառ պղնձագոյն ճառագայթներով։ Միւս կողմից՝ ճառագայթում էին քաղաքի ասիական մասերի մինարէների, մզկիթների գագաթները, անհամար շէնքերի պատուհանների ապակիները՝ ստեղծելով լափլիզող բոցերի մի խարկանք, որին կարծես ենթակայ էր իրիկուան երկում նիրհող Պոլիսը։

Եղայ եւ աշխարհահռչակ Այա - Սոֆիայի մէջ։ Տպաւորութիւնս շշմեցուցիչ էր. դուր չէ, որ Յուստինիանոս Մեծը, առաջին անգամ ոտք կոխելով նորակառոյց տաճարը, գոչել է. «Օ՜ Սողոմո՛ն, ես յաղթեցի քեզի»։ Հսկայ շէնքը բաժանուած էր անթիւ բաղմերանգ ու կամարաձեւ մասերի, որոնց կենտրոնում ցրցուած առասպելական մեծութեամբ գմբեթը թւում էր ոսկի շղթաներով առկախուած երկնքից։ Խելքս չէր հասնում, թէ ծանրութեան և յարակցման ի՛նչ օրէնքներով այդ վիթխարի զանգուածը կարող էր մնալ այնտեղ շուրջ 60 մէթր բարձրութեան վրայ. կարծեմ այդ հա-

ARAM webaram.com

չիւը կազմում էր միայն Հայաստանի հնարիմաց Տըրդատ ճարտարապետը, որ վերակառուցեց աշխարհահռչակ ճարտարապետներ Անդեմիոս Տրալլացի եւ Իզիտոր Մելիտացիի շինածը, որ հետագային քանդուեց։ Եթէ ստոյգ է, որ բիւզանդական դեղարուեստը ներկայացնում է ինքնատիպ շաղախը քրիստոնէութեան, հելլենականութեան եւ Արեւելքի, ապա ուրեմն այդ տարրերի մի գեղեցիկ մարմնացումն է Սուրբ Սոֆիան։ Բարի եւ խոնարհ Քրիստոսը այստեղ զգացւում է խրոխտ, յաղթական, աշխարհակալ։ Ու թէեւ շէնքի նրբակերտ քանդակների, պատերի զարդարանքների մէջ խնամքով ծեփուած են նրա կրօնքի արտաքին նշանները, իսկ առաքեալների դէմքերը ծածկուած ոսկեղոյն աստղանկարներով, բայց հնի վեհութեան շուքը մնացել է առյաւէտ։ Հնագոյն բոլոր մեհեանների յատակագոյն քարերը, աշխարհի մարմարների բոլոր ընտիր նմոյշները այստեղ են։ Թւում է, թէ լոյս ճառագայթում են նրանք եւ ոչ թէ հասնում դրսից։ Բազմերանգ մարմարէ հատիկներից կազմուած յատակը ոտքերիս տակ նման է հիասքանչ գորգի, իսկ դէմս փռուածը՝ քարացած ծաղկազարդ պարտէզի։ Ըստ երեւոյթին, աշխարհի այս հոյակապ տաճարը մզկիթի վերածելու համար մեծ փոփոխութիւններ կատարելու պէտք չէ զգացուել. ծեփով քողարկել են քրիստոնէութեան հետքերը, գմբեթին, խաչին տեղը գրաւել է մահիկը, իսկ շէնքին կցուել են չորս մինարէներ, որոնցից առաջինը կառուցել է յաղթական Մոհամէտը, երկրորդը՝ Սուլթան Պայազիտը, իսկ վերջին երկուքը՝ Սուլթան Սելիմը։

Նոյն ձեւի հարեւանցի փոփոխութեան արդիւնք է Պոլսոյ թրքական յիշատակարանների մեծ մասը, որոնք իրենց կառուցուածքի մէջ կրում են Այա – Սոֆիայի ընդհանուր գծերը։ Այդպէս է, օրինակ, Էտիրնէ Գա-

ARAM webaram.com

բուի շրջանում հռչակաւոր Գահիրէ - Ջամին, հնագոյն Միքայէլ Հրեշտակապետի տաճարը. այդպէս են Ակ - Սարայի շրջանում Կոջա - Մուսթաֆա - փաշա Ջամին, Աթ - մէյտանի Մէհմէտ - փաշա Ջամին, Ուն - Գափանի Գիւլ - Ջամին, Վէֆա մէյտանի Քիլիսէ Ջամին, Ֆէներ-ի Ֆէթիէ - Ջամին եւ այլն:

Հոկտեմբերի վերջերին մի բացիկ ստացայ օրիորդ Երանուհուց: «Երգեցէք միշտ», գրուած էր այնտեղ: «Կ'ասցնին օրեր, կը գայ կրկին մի նոր գարուն վարդաբեր եւ մոռացած քո վիշտը հին՝ նորից կ'երգես վարդի սէր»: Ստորագրել էր, «Հաւատարիք քրոջական անկեղծ սիրոյ ե. Դ.»: Դեռ Փարիզ էր. հասցէ չկար: Ի՞նչ կը նշանակէր Աշուղ Ջիւանու այդ քառեակը. չհասկացայ...

Պարապանները հարկադրում էին անդրադառնալ իրականութեան եւ հաշուի առնել առօրեան: Դեռ Երզրնկայում եղբօրից ստացած ոսկեդրամներից մնացել էին երեք հատ: Սերբիայից ակնկալած նիւթական աջակցութիւնը չստացայ. պատերազմը քայքայել էր հօրս, եղբօրս գործը, ու նրանք գրեթէ թշուառութեան մէջ էին: Թալէաթը դանելու մտասեւեռումով այժմ պարզապէս հիւանդ՝ քարշ էի տալիս անիմաստ մի գոյութիւն: Ծանր երդումներով փակել էի կեանքիս բոլոր ուղիները, քանի այդ հրէշը ողջ էր: Գիշերներն իրար յաջորդում էին մղձաւանջային երազներ, որոնց մէջ գլխաւոր դերակատարը մայրս էր: Տեսնում էի նրան երազիս գրեթէ միշտ, զանազան տեղեր ու տարբեր վիճակներում. իր բոլոր տառաջները միշտ դառնում էին միեւնոյն խնդրի շուրջ՝ Թալէաթի մահը: Փոթորկոտ մի գիշեր նա պատուհանս ծեծեց. նայեցի, ցոյց տուեց իր արիւնաներկ պարանոցը: Արթնացայ. սարսափահար վեր կացայ, մօտեցայ պատուհանին. դուրսը տեղատարափ էր... Դեկեմբերներս, սառը դատողութիւ-

ARAM webaram.com

նը անգոր էին ազատել ինձ նախապաշարումներից, որոնցմով համակուել էի ես։

Պոլսում, վերջին օրերին, մտածում էի, որ այդ խնդրին կարող է ընթացք տալ Զաւէն պատրիարքը, որ այժմ գտնւում է Փարիզում։ Արհաւիրքների մրուրը քամած այդ հոգեւորականը չէր կարող չհասկանայ հոգիս մաշող ցաւը, որ կարող էի ամբողջութեամբ յայտնել նրան առանց վարանելու, իբրեւ խոստովանանք։ Նոյեմբերին մեկնեցի։

Իրիկնադէմ էր, սրածայր մինարէներին յայտնւում էին մրջիւնաշափ միւէզիններ՝ բարձրութիւնից փառաբանելու Ալլահին, անցնող օրուան համար։ Արեգակը իջնում էր դէպի անհունութեան ովկիանոսը եւ իր թագաւորից մոդական վրձինով փոխոխում երկնքի տեսքը՝ նոր գոյներ, երանգներ պարգեւելով ցերուցան ամպերին։ Հեռուից երեւում էին Մարմարայի եզերքներին խարսխած հինգ – վեց դաշնակից մարտանաւեր որոնք, առասպելական կարապների պէս թեւերը ծալած, նստել էին ջրերին. իրենց պողպատէ կռուցներով՝ արծաթագոյն կայմերը փայլփլում էին վերջալոյսի ճառագայթների տակ։ Երջելով Սարայպուրնուի հրուանդանը, շպենաւը բացուեց Մարմարայի ջրերում. ոչ կողմից մնաց թիկունքում Մարմարիքէօյը, Սան - Ստեֆանոն ուր դիւանագիտութիւնը արձակեց իր առաջին վճիռը մեր կեանքի ու մահուան մասին։ Զախից անցնելով Իշխանաց կղզիները մտնում էինք Դարդանէլ, պատմական Հելլեսպոնտոսը։

Եւրոպական մասում անցնում էինք Թեւրակիոյ վրայ տարածուած Գելիպոլու աւանը, հնագոյն Գալիպոլիսը։ Առաջին քաղաքն էր, որ ընկել էր Թուրքերի ձեռքը դեռ 1357ին, Պոլսոյ անկումից շուրջ հարիւր տարի առաջ։ Անցեալի ամէն մի դէպք, ամէն մի վայր գալիս էր կարծես անողոք սրութեամբ հասատաւելու

ARAM webaram.com

պատմական ճակատագրի այն ուղին, որ վիճակուած էր մեզ այս երկրում։ Զէ՞ր կարող արդեօք պատմութիւնը մի այլ ընթացք ունենալ, եւ այդ դէպքում ի՞նչ պիտի լինէր մեր ճակատագիրը...

Ասիական եղերքին պարզուում էին Զարդաքն ու Լամպսակը, որոնցից վերջինը Քսերքսէսը դիջեց Թեմիստոկլին՝ գինի իր տարեկան պէտքը հոգալու պայմանով։ Դարերի ընթացքում ի՞նչ է փոխուել արեան ու դիակների վրայ հաստատուած իշխանութիւնների այդ քմայքներից...

Եւրոպական եղերքին յայտնուում է Գարա - Օլոս անունը, հնագոյն Էգոս - Պոտամոսը, ուր մեր թուականութիւնից չորս դար առաջ վերջ դուս պելոպոնեսեան պատերազմը։ Պէ՞տք էր արդեօք, որ ժամանակի մեծ ուժերը տասը տարի շարունակ արիւն թափէին դերիշխանութեան համար, երբ իրենցից անուններ միայն պիտի մնային պատմութեան մէջ...

Աւելի վար՝ նեղուցը գնալով սեղմուում է, ձախից՝ Նաղարա հրուանդանի եւ աջից՝ Ակ - Բաշի Լիմանի միջեւ, որոնք կազմում են հնագոյն Աբիտոսն ու Սեստոսը, նեղուցի լայնքը հազիւ ութ - ինը հարիւր քայլ է. այստեղ է, որ ամէն գիշեր Լէանդրը ճեղքում էր Հելլեսպոնտոսի ջրերը Աբիտոսից դէպի Սեստոս, որի եղերքին սպասում էր գեղանի Հերոն՝ ձեռքին լուսավառ ջահը որ նրա ընթացքը ճշդում էր։ Միակ բանը, որ յաւիտենական է...

Նեղուցը նորից բացուում է, լայնանում։ Հեռուներում, երբեմն դէմ ու դէմ, իրար յետեւից յայտնուում են Զանակ Գալէն, Քիլիա էլ Բահրը, Սէտ էլ Բահրը, Կում Կալէն, վայրեր՝ ուր նոր է ցամաքել արիւնը։ Մթնում էր, մօտենում էինք բաց ծովին։ Բայց դեռ Ենի Քէօյից շատ վար ատուերների մէջ նիրհում էին Տրոյադայի պատերազմի յիշատակները...

ARAM webaram.com

* * *

Փարիզում բազմաթիւ տպաւորութիւններից չշմել էի. հոյակապ շէնքեր, հրապարակներ, լայն ու անծայր պողոտաներ, թափօրանման անցուդարձ, եռուզեռ կենդանութիւն ամէն կողմ, անթիւ ինքնաշարժեր, որոնք ագռաւների երամների պէս խմբւում են մի տեղ ու յանկարծ կուպրի պէս հոսում: Ես, որ ինձ արդէն համարում էի «աշխարհ տեսած մարդ», զգացի, որ Փարիզը աւելի մեծ է քան կարող էի երեւակայել: Զարմացուցիչ էր յատկապէս կեանքի արագութիւնը. մնացել էի զարմացած, թէ ո՞ւր են շտապում այդպէս մարդիկ. կարծես ամէն տեղ հրդեհ կար: Գար - ար - Լէսից գնում էի մառնանշուած ուղղութեամբ, որի ծայրը չկար: Բազմազան տպաւորութիւնների տակ գլուխս ցաւում էր: Այս դէպքում թերեւս դեր էր կատարում եւ այն, որ այդ օրը նիւթական պատճառներով ինձ զրկել էի ճաշից:

Արդէն մթնել էր, երբ հարցուփորձով, վերջապէս գտայ հայկական եկեղեցին եւ առաջնորդարանը: Այցելութիւնս անժամանակ էր: Բացատրեցի, որ յատկապէս եկել եմ Պոլսից կարեւոր գործով՝ պատրիարքին տեսնելու: Քիպարեան վարդապետը պնդումիս տեղի տուաւ: Պատրիարքը ինձ յիշեց: Բայց իր խորաթափանց հայեացքը այնպիսի շփոթութեան մատնեց ինձ, որ նախապէս պատրաստած սրտառուչ ճառս փուլ եկաւ: Հարցման հաղիւ կարողացայ պատասխանել, որ Փարիզ գալուս նպատակն է միջոցներ գտնել հետապնդելու Թալէաթին եւ խնդրեցի նրա աջակցութիւնը այդ գործում: Մի ակնթարթ նայեց ինձ ակնոցների միջից ցաւակցութեամբ, ինչպէս դիտում են հոգեկան հիւանդներին. ապա՝ գլուխը կախեց ու մեղմօրէն ասաց:

— Ես այդ կարգի գործերում մէջ չեմ կրնար մասնակցել, դուակս:

ARAM webaram.com

Ես եկայ։

— Ո՛չ, նստեցէք. դիտէ՞ք, ես կը հասկնամ, կը զգամ ձեր նեղքին փոթորիկը, բայց ոչ դիրքս, ոչ ալ պաշտօնս կը նեղեն նման գործերու խառնուիլ։ Սակայն անձամբ ձեզ կրնամ օգնել, մինչեւ տեղաւորուիք եւ գործ գտնէք։

Զգացի, որ կարմրում եմ։

— Անձնապէս աջակցութեան դէմ չունիմ, Սբբրազան, ասացի ու դուրս եկայ։

Մի պահ մնացի փողոցում կանգնած. ի՞նչ անել եւ ո՞ւր գնալ։ Վերջին օրերը այնքան համոզուել էի այդ դիմումիս յաջողութեան, որ յանկարծ պարապութեան մէջ զգացի ինձ։ Մեղմ անձրեւում էր։ Մառախլապատ մթնոլորտում հրապոյները նման էին փոր իջած մշուշապատ ատաղերի։ Ինձ գտայ Էռուալի հրապարակում։ Այս կողմերը պիտի լինէր Բուսոյի փողոցը, ուր այն ժամանակ գտնուում էր Հայաստանի պատուիրակութիւնը։ Դեռ Ցունուտբին, երբ պ. Ահարոնեանը Պոլիս էր, ես մի քանի անյաջող փորձեր արի նրան անձամբ տեսնելու եւ խնդրելու նրա աջակցութիւնը ինձ մատլկող հարցում։ Այժմ նոյն մտադրութեամբ անցնում էի Էռուալի հրապարակը, երբ յանկարծ բազմաթիւ ինքնաշարժներ ուղղուեցին դէպի ինձ։ Շատ մեծ էր հրապարակը եւ ո՛չ յետ, ո՛չ էլ առաջ փախչելու հնարաւորութիւն կար։ Կարծես մի կանգնած լէշ էի, որի շորա կողմը վխտում էին ճանճեր։ Թզաչափ հեռաւորութեան վրայ սուրում էին ինքնաշարժներ. ամենաթեթեւ շարժումիս՝ մէկն ու մէկը կարող էր իր տակն առնել ինձ։ Մի քաղաքապահ ոստիկան դուրս քաշեց ինձ այդ բաւիղից ու բացատրեց Բուսոյի փողոցի ուղղութիւնը։ Ահա նա, Hotel Vouillemontը, ուր գտնուում է պատուիրակութիւնը։ Լուռ ու համր է հայ քաղաքական կենտրոնը. այնինչ ես կարծում էի, թէ դռս մոտ

ARAM webaram.com

մի մեծ դարբնոց է, ուր կռում ու կոփում է մեր բախտը: Ահարոնեանը չկար: Ցիսուենոց մի մարդ մատցիր հայեացքով մօտեցաւ ինձ:

— Ի՞նչ առիթով էք ուզում տեսնել պարոն Ահարոնեանին:

— Գործ ունէի...

Երեւի չլսեց կամ չհասկացաւ:

— Շատ զբաղուած է. դժուար թէ կարող է ձեզ օգտակար լինել, գործ դտնելն էլ դժուար է. աւելի լաւ է դիմէք Կարմիր Խաչին կամ գաղթականական մարմնի յանձնաժողովին:

Աւելորդ համարեցի երկարել ու դարձայ, որ դընամ:

— Սպասեցէք. ո՞րտեղացի էք:

— Երզնկացի:

Եռանկիւնաձեւ դէմքին գոյացաւ տհաճութիւն:

— Կարծեցի, թէ առաբագարցի էք, կամ այդ կողմերից:

— Ո՛չ, Երզնկացի եմ, Բաղասիճ գիւղից:

— Արհեստ գիտէ՞ք:

— Ո՛չ...

— Ուզո՞ւմ էք կօշկակարութիւն սովորել. ես առաբագարցի մի բարեկամ ունիմ, կարող էք նրա մօտ գործ դտնել... դրամ ունէ՞ք:

— Այո՛...

— Ճիշդն ասացէք, կարող եմ ձեզ օգնել:

— Ո՛չ, շնորհակալ եմ...

Մեքենաբար առի այցեառմանը, ուր գրուած էր երկու տող ու հասցէ: Խուլ փողոցներից մէկում գտայ երկրորդական մի հիւրանոց: Զորրորդ յարկում մի խցիկ, 12 Ֆր.: Թանկ չէր, մէկ – երկու օր ապրելու համար մօտս դեռ դրամ կար: Շատ յոգնած էի. հանուեցի ու մտայ անկողին: Թէեւ վաղուց բաժանուած էի

ARAM webaram.com

հարապատներից, բայց նոր միայն զգացի, թէ ի՛նչ է նշանակում օտարութիւն։ Քննութեան առնելով վիճակը՝ գալիս էի այն եզրակացութեան, որ կոշկակարութիւնից զատ ուրիշ անելիք չի մնում։ Այնքան մռայլ էր ամէն բան, որ այդ գործը թուաց ինձ միակ փրկութիւնը։ Բայց ո՞վ էր այն մարդը եւ ի՞նչ եղաւ այցեւորմսը։ Ինձ համակեց անհանգստութիւն։ Ելայ ու փնտռեցի գրպաններս. այնտեղ էր. այցեւորմսին վրայ տպուած էր «Յակոբ Քոչարեան»։

Առաբաղարցու արհեստանոցը գտնւում էր Բէլվիլի շրջանում։ Առաւօտեան երբ իրեն ներկայացայ, բարկացա՛ծ էր եւ յանդիմանում էր բանուորներին։

— Ես չըլլայի նէ, երեքդ ալ անօթութենէ պիտի մեռնէիք, գոչեց նա։

Ցից, սկիւռի պոչի պէս ցցուած թաւ պեխերը, լայն բերանը, խռպոտ ձայնը լաւ բան չէին խոստանում։ Բայց երբ նայեց, տեսաց, որ աչքերը բարի էին, կլոր, պարզունակ, ոչխարի աչքերի պէս զեղեցիկ։

— Ուրկէ՞ կու գաս, ասաց այցեւորմսը կարդալով։

— Պոլսէն։

— Անկէ առա՞ջ։

— Ռուսիայէն։

— Առա՞ջ, առա՞ջ։

— Կովկասէն։

— Տօ՛, մարդ Աստուծոյ, ո՞ւր տեղացի ես։

— Երզնկացի։

— Հա՛, հիմա հասկցանք. նստէ հոն ու նայէ, թէ ի՛նչ կ՚ընեն ասոնք. ես չըլլայի նէ, չորսդ ալ անօթութենէ պիտի սատկէիք...

* * *

Դիտելով ամէն կողմից Փարիզը թափուած տարագիր աշխատաւորների վիճակը, գալիս էի այն եզրա-

ARAM webaram.com

կացութեան, որ իմը կարող էր աւելի վատ լինել։ Փրկուած էի, կարող էի ապրուստս սեփական աշխատանքով հայթայթել։ Առաքաղաքցին թէեւ առիթը բաց չէր թողնում յիշեցնելու, որ մեր գոյութիւնը պարտական ենք իրեն, բայց բարի մարդ էր, գործի մէջ յաճախ արտայայտած բարկութիւնը տեւում էր հազիւ մէկ րոպէ, երբեմն մի քիչ երկար, երբ խնդիրը դառնում էր վարպետի իր արժանապատուութեան շուրջ։ Ընդհանրապէս սիրում էր աւելի իշխանութիւն ցոյց տալ, քան պէտք էր։ Միւսների պէս չէր նեղում ինձ այդ. ես կոշկակար բանուոր էի եւ այդպէս էլ պահում էի ինձ վարպետիս նկատմամբ։ Առաւօտեան ժամը 7-ից մինչեւ երեկոյեան 6ը գործի վրայ էի, մէկ ժամուան դադարով կէսօրին։ Սկզբում բաւական դըժուար էր, գործը՝ անծանօթ։ Բայց քիչ - քիչ վարժըւեցի եւ հետզհետէ տանելի դարձաւ կացութիւնս։ Այժմ ամէն կերպ աշխատում էի մոռանալ ինքս ինձ ներշընչած առաքելութիւնը։ Պարզ էր, որ թալէաթը գտնելու գործը դիւրին չէր. անհրաժեշտ էր կազմակերպութիւն, միջոցներ, ընկերներ. վարդապետների եւ ազգային ջոջերի միջոցով կատարելիք գործ չէր այդ։ Բանուորութիւնն էլ դրաղեցուցիչ էր, մանաւանդ, երբ տեսնում էի գործի մէջ կատարած յառաջդիմութիւնս։ Արդէն աշխատում էի կտորով, կարող էի կոշիկ կարել։ Առաւօտները արթնանում էի առոյգ, կայտառ, գործի ձեռնարկելու անհամբեր։ Բայց անցնում էր մէկ - երկու ժամ, եւ զգում էի, որ ուրախութեամբ կարող էի հրաժարուել այդ գործից։ Մտածում էի, որ անհրաժեշտ է շուտ վերջացնել աշխատանքը, որպէսզի ազատ ժամանակ ունենամ մանրամասն ամէն բան մտածելու։ Սակայն նորից ինձ պատկերանում էր մռայլ անցեալը, ու բաւական էր այդքանը որ գոյութիւնս աննպատակ համարեմ։ Երբեմն ինձ յաջողւում էր մի քանի օր այդ

ARAM webaram.com

մասին բնաւ չմտածել։ Բայց բաւական էր լինել ճաշաբանում, ուր գործից յետոյ խմբւում էին տարբերը աշխատաւորները, լսել նրանցից մէկն ու մէկի պատմութիւնը դեռ թարմ դէպքերի մասին, ու նորից ինձ պատկերանում էր Թալէաթի փքուն ու ինքնագոհ դէմքը, որ կարծես ծաղրում էր ինձ։ Այն ժամանակ ես սկսում էի երեւակայել ապանութեան զանազան ձեւեր՝ շամփրել, հարուածել, յօշոտել, դաշունահարել, արիւնը քամել, ըղկտել, ցից հանել, անդամահատել, այրել։ Բայց այդ մտածումների հետեւանքով ինքս էլ զզւում էի ինձնից։ Այն դէպքում գտնում էի, որ մի ելք կայ միայն այդ մզձաւանջային մտածումներից ազատուելու. լաւ աշխատիլ, շատ դրամ վաստակիլ, վերադառնալ Կովկաս եւ անձնական մասնաւոր կեանք ապրիլ։ Բայց այդ էլ բացայայտ ինքնախաբէութիւն էր. վաստակած դրամը հապիւ էր բաւում անհրաժեշտ պէտքերիս, թէեւ շատ լաւ գիտէի, որ առանց այդ էլ չեմ կարող վերադառնալ։ Աշխատում էի քիչ լինել ճաշարանում, ոչինչ չլսել Ջարդերի մասին, խուսափիլ հանդիպումներից, բայց միեւնոյն մնալով ինքս էի վերյիշում ամէն բան, ու ոչինչ չէր փոխւում...

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Փարիզի Կոմիտէն զբաղուած էր հանդէսներով ու քաղաքական հարցերով։ Տարուան վերջերին Երեւանից հասնող լուրերը այստեղ ստեղծել էին այնպիսի մի խանգավառութիւն, ինչպէս ամբան ամիսներին Պոլսում։ Հայաստանի Թրքաշատ վայրերում ծնունդ առած հակաշարժումները ճնշուած էին եւ ամէն տեղ հաստատուած էր հայկական իշխանութիւն։ 1920ի Յունուարին Գերագոյն Խորհուրդը ճանաչել էր հայկական պետութիւնը de facto։ Ճանաչումը թէեւ չէր կոնխորոշում մեր պե-

ARAM webaram.com

ությեան սահմանները, բայց այդ էլ օրերի խնդիր էր։ Քիչ յետոյ իմացանք, որ Վենիգելոսի գործակալ, Պոնտոսեան պատուիրակութեան նախագահ՝ մետրոպոլիտ Սրբոանֆը Երեւանում Հայաստանի կառավարութեան հետ կնքել է մի պաշտպիր, որի համաձայն Պոնտական լեռների եւ Սեւ ծովի միջեւ ընկած ամբողջ տարածութիւնը, Ռիզէից մինչեւ Սինոպ, մօտ մէկ միլիոն երկու հարիւր քսան հազար յոյն եւ մահմեդական բնակիչներով, կցւում էր Հայաստանին իբրեւ նրա դաշնակցային մէկ մասը։ Այս դիւանագիտական յաղթութեամբ մեր առջեւ բացւում էր փայլուն մի հեռանկար. բովանդակ Փոքր Ասիայում ազնիւթիւնից յանկարծ դառնում էինք տիրող ազգ...

Ապրիլին՝ դաշնակից պետութիւնները աւտրտեցին իրենց աշխատանքները Սան Ռէմոյում. արդէն յայտնի էր, որ Թուրքիան պէտք է հրաժարուէր Իրպրումի, Վանի, Բիթլիսի եւ Տրապիզոնի վիլայէթներից ի նպաստ Հայաստանի, որոշ շրջանների բացառութեամբ։ Ցուռնասանին էր յանձնւում Եդեսիայի արեւմտեան եղերքների մեծ մասը, Իզմիր քաղաքով, ինչպէս նաեւ Թրակիան իր կենտրոնով՝ Ադրիանուպոլսով։ Եւրոպական ցամաքամասում Թուրքիային անուանապէս մնում էր միայն Պոլիսը, անշան հողաշերտերով՝ Վասիլի եւ Մարմարայի եղերքներում, բայց այստեղ էլ սահմանափակումներ կային։ Արաբներով բնակուած երկիրներից կտրւում էր Մեծ Արաբիան։ Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը անդարձ կերպով պոկւում էին Թուրքիայից։ Վերջապէս պոկւում էր նաեւ Քիւրդիստանը, որեւէ պետութեան հովանաւորութեան ենթարկելու համար։ Հողային նուիրաբարձութեան այս պատմական օրերին, անյաջող էին միայն ասորական

ARAM webaram.com

պատուիրակութեան նախագահ Աղա - Պետրոսի գործերը. նրանց բան չկար...

Թուրքիան փաստօրէն բղկտում էին. ներքին տընտեսական բնագաւառներում նա ընկնում էր միջազգային յանձնաժողովների հակակշռի տակ: Նեղուցները, մաքսերը, բոլոր եկամուտները, առանձնաշնորհումները պիտի վարէին եւրոպական յանձնաժողովները: Ցոյները արդէն գրաւել էին Իզմիրը եւ մեծ թափով առաջանում էին օր առաջ տէր դառնալու իրենց տըրուած հողերին:

Իսկ մե՞նք. զարմանալի՛ էր... Ասում էին՝ Պօղոս Նուբար փաշան կառաւարէն բողոքում էր Երեւանի կառավարութեան կողմից Էրզրումը գրաւելու հաւանականութեան դէմ՝ համարելով այդ «բռնագրաւում». նա չէր ճանաչում այդ կառավարութեան իրաւունքները իբրեւ «բուն» Հայաստանի իշխանութիւն: Երկու պատուիրակութիւնների անվերջ բանակցութիւնները եւ արտաքին հայերի բարեխօսութիւնները անցնում էին ապարդիւն: Փաշան կամակոր էր...

Հակառակ այս բոլորին, Փարիզի հայութեան ղեկավարութիւնը Օգոստոսին հասաւ իր դադաթնակէտին. հայերի բազում դիւանագիտական աշխատանքները պսակուել էին յաջողութեամբ: Հայաստանի պատուիրակութիւնը ստորագրել էր Սեւրի դաշնագիրը: Մեր երկիրը ապատ էր, հողը սահմանուած, ապագան փայլուն...

* * *

Սեպտեմբեր ամիսն էր. նորից մթագնում էին Հայաստանի հորիզոնները. Ղարաբաղ - Զանգեզուրի խնդիրը սրուել էր. հազիւ խաղաղած Կարսի շրջանը ան-

ARAM webaram.com

հանգիստ էր։ Քեմալական թուրքերը զօրացել էին. ենթադրւում էր ընդհարում նրանց հետ։ Ես պատրաստւում էի վերադառնալ Կովկաս, երբ մի երեկոյ ճաշարանապետ Թոմմաս ազան ասաց.

— Առտուն քեզ կը փնտռէր ազուորիկ աղջիկ մը, Օր. Դանիէլեան։

Զարմանալի էր, որովհետեւ Փարիզում կին ծանօթ չունէի։ Ցանկարծ յիշեցի Երանուհուն, բայց նա վաղուց պէտք է լինէր Ամերիկայում...

Ցաջորդ իրիկունը, աշխատանքս աւարտելուն պէս, վազեցի ճաշարան։ Անկիւնի սեղանին մօտ նստած սպասում էր ինձ մի մանկահասակ աղջիկ, որ նման էր Երանուհուն։ Այո, քոյրն էր։

— Վերջապէս գտնուեցաք, ասաց նա հին բարեկամի պէս ժպտելով. քոյրս պատմեր է ձեր մասին։ Անդրեր է ձեզի Պոլիս, բայց մայրս յայտներ է, որ դուք մեկնած էք Փարիզ եւ ահա ինձի կը դիմէ, ասաց ձեռքի պայուսակից դուրս քաշելով մի նամակ։

Օրիորդ Երանուհին խնդրում էր ինձնից, որ անմիջապէս մեկնիմ Ամերիկա ինձ յայտնի գործով։ Ականջներիս չէի հաւատում. հազիւ կարողացայ դոպել յուզումս։ Բայց ինչո՞ւ Ամերիկա, միթէ այնտե՞ղ էր հրէշը։ Նամակի մէջ ուրիշ ոչինչ չէր ասուած։

— Ի՞նչ գործ է այդ, եթէ գաղտնիք չէ, ասաց աղջիկը, կծկելով սիրուն աչքերի կոպերը։

— Ճիշդն ասած՝ ես էլ չեմ կարողանում հասկանալ, Պոլսում օրիորդ Երանուհու հետ շատ եմ խօսել ուսանելու փափաքիս մասին, հիմա երեւի յաջողել է ընկերներիս միջոցով այդ գործին ընթացք տալ։

Զարաճճի մատի շարժումով բացատրեց ասածս։

— Ինչ որ է. ե՞րբ պիտի մեկնիք։

— Դժուար թէ կարող լինեմ մեկնիլ, օրիորդ, չէ՞ որ ահագին գումար է պէտք։

ARAM webaram.com

— Ա՛խ, ներեցէք, մոռցայ ըսելու, որ Պատուիրակութեան մէջ նամակ ունիք, պարոն Հանըմեանի մօտ,

ան ալ կը փնտռէ ձեզ, կ'ուզէր ինձ տալ, բայց վերջը ետ առաւ, խնդրելով, որ յայտնեմ ձեզ. նամակը Բոսոնէն էր, գուցէ հոն...

Դեռ երկար պիտի շարունակէր օրիորդը, բայց նեղողութիւն խնդրելով աճապարեցի Պատուիրակութիւն, քանի դեռ ուշ չէր:

Գրում էր Համօ Բարսղամեանը: Ո՛րտեղից ուրուրախութիւնից խենթացել էի: Գրում էր, որ անմիջապէս մեկնիմ Բոսոն: Ճամբու ծախքը պէտք է առնեմ Հանըմեանից, որին այդ մասին միաժամանակ գրում է Գարեգին Փասարմաճեանը (Արմէն Գարօ)...

Ժամանակից շուտ ճաղատացած, կանացի դէմքով եւ զմայլելի ժպիտով Հանըմեանը ոչ մի հարցում ուղղեց ինձ. միայն փոփոքեցաւ հասկանալ, թէ ե՞րբ կարող եմ մեկնել:

— Թէկուզ վաղը:

Երեք օրուան մէջ նա կարգաւորեց անցագրային դժուարութիւններս եւ Հոկտեմբերի առաջին օրերին մեկնեցի: Այժմ ամէն բան պարզ էր ինձ համար. գործը կենտրոնացած էր նրանց ձեռքում ,Ամերիկա: Բարսղամեանը խմացել էր իմ մասին անտարակոյս օրիորդ Երանուհուց: Լեցուած էի բուռն եռախտապիտութեամբ գէպի այդ գաղափարական աղջիկը: Յիշեցի նրա գրած քառեակը, որ այնպէս հիասթափեցրեց ինձ. «Կ'ասցնին օրեր, կը գայ կրկին մի նոր գարուն վարդաբեր...», վատահ էր, ուրեմն գործի յաջողութեան վրայ...

Ջմեռ էր թէեւ, բայց համակուած էի «վարդաբեր գարնան» տրամադրութեամբ: Առաջին անգամն էի տեսնում ովկիանոսը: Մինչեւ այդ՝ կատարած ծովային ճամբորդութիւններս միշտ հորիզոնի մէջ պարզում

ARAM webaram.com

էին մի սառուցաղիծ, որից այն կողմ սկսւում էր հողը։ Այժմ, երբ երկիրը բոլորովին անբեւեռաթացաւ, բարձրը տրամադրութիւնս սկսեց տեղի տալ եւ ինձ պաշարեց մի անբացատրելի թախիծ. կարծես բոլորովին բաժանուեցի աշխարհից եւ ընկայ անյայտութեան մէջ։ Ովկիանոսը հանդարտ էր, բայց երկու օրուայ անդորրութիւնից յետոյ, յանկարծ նա ծածկուեց մշուշով՝ նախ նօսր, ապա հետզհետէ թանձր։ Շոգենաւը սկսեց դանդաղել։ Ալիքները երկու կողմից սկսեցին զարնուիլ նրա կողերին, նախ՝ կարծես խաղալով, ապա՝ աւելի ու աւելի ուժգին թափով։ Շոգենաւը անքաց, ճարճատեց։ Ալիքները գնալով վեր ու վեր էին ցատկում։ Բաշերով վեր ցցուած՝ նրանք լեղունները պարզում էին տախտակամածից շատ վեր։ Վիթխարի նաւը դարձել էր ջրերի խաղալիքը, ինչպէս մի տաշեղ։ Նա բարձրանում էր ալիքների վրայ, իսկ ցռուկի առջեւ բացւում էին ջրային վիհեր։ Թւում էր, որ նաւը ջարդ ու փշուր պիտի լինի այդ մութ անդունդներում, բայց ամէն անգամ դուրս էր հանում կտուցը ու ճեղքելով կատաղի ալիքները՝ դարձեալ վեր սահում։ Նաւն ու ծովը խորհրդանշում էին պայքարի ու յաղթութեան հեռանկարը։

Կէսօրին փոթորիկը մեղմացաւ. ալիքները այժմ նաւի կողից բարձրանում էին, հոսում տախտակամածի վրայով ու սրբում լուանում նաւի այդ մասը։ Ապա քիչ - քիչ մառախուղը սկսեց նօսրանալ եւ հետզհետէ չքանալ։ Անհուն տարածութիւնների վրայ ջրերի մէջ խաղում էին արեգակի ճառագայթները։ Դահլիճներում, սրահներում, խցիկներում թաղնուած ճամբորդները նորից յայտնւում էին կամրջակի վրայ։ Կանայք ջղայնօրէն ծիծաղում ու քրքջում էին...

Երաշ թուաց ինձ, երբ եօթներորդ օրը հորիզոնի վրայ նշմարեցի Ամերիկայի ափերը։ Համակուած էի

ARAM webaram.com

այնպիսի հրճուանքով, որ կարծես ես էի յայտնագործում Նոր Աշխարհը։ Ահա նա, վերջապէս։ Շոգենաւը՝ յոգնատանջ մօտեցաւ նաւահանգիստին։ Արդէն վաղուց երեւում էին Նիւ Եորքի հռչակաւոր «երկինք քերող»ները։ Նաւի մեծ սրահը լեցուեց բազմաթիւ պաշտօնեաներով, որոնք սկսեցին քննել մեր թղթերը։ Դիտում էի անվրդով ու ծանրաբարոյ ամերիկացիների խոհուն դէմքերը, նրանց ինքնավստահ ձեւերն ու շարժումները՝ ապասելով հերթիս։ Թերի ֆրանսերէնս ինձ օգնեց անցնել այդ քննութեան բովից։

Թէեւ դեռ չէր մթնել, բայց դուրսը, շինութիւնների վրայ լուսավառւում էին էլեկտրական ճրագներ, ու քաղաքը թւում էր ոսկեղէն։ Եօթը միլիոն բնակիչներով այս վիթխարի քաղաքը ինձ ապշեցրել էր իր անթիւ, անհամար ճրագներով, էլեկտրական լուսավառ ծանուցումներով։ Առաջին իսկ պատահած ինքնաշարժի վարիչին մեկնեցի Հ. Բ. Դաշնակցութեան ակումբի հասցէն։ Գլխիս մէջ ոչ մի միտք կար։ Համակուած էի մի երախտապէտ զգացումով դէպի շրջապատս, որ բախտը վիճակում էր ինձ լինել այստեղ։ Ճգնում էի ճշդել «երկինք քերող»ների բաժինները, որոնք երեւի բաղկացած էին 25 — 50 յարկերից։ Մի տարի առաջ ինձ զարմանք պատճառեց Փարիզի եռուզեռը, բայց նա մի խաղալիք էր Նիւ Եորքի համեմատութեամբ։ Զարմանալին այն էր, որ այդ իրարանցումին մէջ ինքնաշարժի վարիչը չէր կորցնում գլուխը։ Անցանք շքեղ վաճառատների եւ շէնքերի լուսառատ շրջանակից։ Շարժապատկերի շինութիւնների առաջ խմբուած էր ահագին բազմութիւն։ Կեանքը հնոցի պէս եռում էր ամէն տեղ։ Քիչ վարը, լայն պողոտայի կենտրոնում ուր կանգ էին առել բազմաթիւ ինքնաշարժեր, դանդաղեց ու կանգ առաւ նաեւ մեր ինքնաշարժը։ Դիմացը աշտարակաձեւ շէնքից արձակուած լոյսի նշաններով

ARAM webaram.com

ցայց են տալում ուղղութիւններ։ Ցերեկուայ պէս լոյս մայթերով անցնում են ձիգ, ամուր, կանոնաւոր մէջքերով ամերիկացիներ, գլուխները բարձր, գիտելով հեռուն։ Աշտարակից յայտնւում են նոր լոյսեր, ու մեր ինքնաշարժը դարձեալ սուրում է շարէշար ընթացող ինքնաշարժի փարամների մէջ։ Ցաջորդաբար հասանք համեստ չէնքերի շրջաններին ու մի տեղ կանգ առանք։

Ակումբի մէջ եմ. ի՛նչ հաճելի անակնկալ էր աշխարհի միւս ծայրում լսել քաղցրահնչիւն մայրենի լեզուն։ Երեք սենեակներ, լուսափառ, մաքուր. գրքեր, լրագրեր, վառվռուն գէմքեր։ Ի՞նչ է ազգային զգացումը. երեւի նմաններին միանման ապրումներ, որոնք անմիջապէս արտայայտուեցին ինձ շրջապատող երիտասարդների կողմից ուղղուած բազմաթիւ հարցումներով։ Նախապէս աշխատեցի գոհացնել բոլորի հետաքրքրութիւնը, բայց քիչ - քիչ սկսեցի նեղուիլ. հարցումներին վերջ չկար. կարծես պահանջատէրեր էին, եւ ես պարտաւոր էի իւրաքանչիւրին հասանելիքը անմիջապէս վճարել։ Վերջապէս ելայ՝ յայտնելով, որ պիտի մեկնեմ։

— Ո՞ւր, եղբայր, տակաւին ոչինչ չբռնք հրատապ խնդիրներու մասին...

— Ես եկայ այստեղ, որ ինձ օգնէք Բոստոն մեկնելու եւ ոչ թէ ձեզ բանախօսութիւն կարդալու, ասացի հազիւ գոգելով ջղայնութիւնս։

— Լա՜ւ, եղբայր, Բոստոնը խօ չփախաւ...

— Հայ Ցեղ. Դաշնակցութեան կենտրոնական կոմիտէի հրահանգով պարտաւոր եմ ժամ առաջ այնտեղ լինել։

Այս խօսքը ազդեց։ Դիրքս յանկարծ բարձրացաւ, եւ նրանք ընկան ապատարկու գրութեան մէջ. դուրս ելանք։ Ճանապարհին ամէն կողմից հարցումներ էին

ARAM webaram.com

ուղղում ինձ, մինչեւ վերջին հնարաւորութիւն ժամանակը օգտագործելու մի թափով։ Բոլոր խնդիրների մասին այդ պապակ հոգիների հետ զրուցելու համար անհրաժեշտ էին օրեր. ժամանակը անզօր էր մոռցնել նրանց այն ամէնը, ինչ արդէն անցեալ էր։ Իսկ ինձ հմայել էր առասպելական քաղաքը գիշերին։ Աչքերս սկսել էին վարժուել դիտելու։ Բարձրաղաղաթ շէնքերը այլեւս չէին ճնշում, ինչպէս քիչ առաջ. նրանք այժմ թւում էին այնքան թեթեւ, որ կարծես շինուած էին թղթերից. անթիւ անհամար լուսամուտներից վար թափուող լոյսերի կոհակները լեցնում էին լոյսի եւ խաւարի անջրպետը. «Երկինք քերող»ների դմբէթներին պարզուած ճրագները նման էին շրջուն լուսնակների։ Ո՞ղջ մնար Բաղառիճի ժողովուրդ, որին թոյլ չտուին իր կեանքը ապրիլ անդամ իր դեռնափոր խրճիթների մէջ։ Մեծ դժուարութեամբ էի կարողանում հաւաքել մտքերս՝ ընկերներից մէկի կամ միւսի հարցումին պատասխանելու համար. իմ տեղեկութիւնները, թէկուզ հին ու անկատար, հետաքրքիր էին նրանց. ըստ երեւոյթին, նրանց համար այդ բոլորի մասին այլ բան էր կարդալը եւ այլ բան կենդանի խօսք լսելը։ Վերջապէս հասանք կայարան, ուր քիչ յետոյ սրտառուչ բաժանուեցի այդ ջերմ ու հայրենասէր երիտասարդներից...

ARAM webaram.com

Է. ԳԼՈՒԽ

ՈՐՍԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Բոստոնում «Հայրենիք» օրաթերթի խմբագրութեան մէջ սկսուեց նոյն բանը ինչ Նիւ Եորքում։ Այստեղ հարցուփորձի նախաձեռնութիւնը պատկանում էր Համոյին, որ իր վերյիշումները սկսել էր Էրզրումից, ուր վերջին անգամ տեսել էի նրան հինգ տարի առաջ։ Կոճղի պէս հաստատուն, գոգաձեւ ոտքերով, խաւարած լուսնի պէս կլոր ուս եւ դէմքով տիվրիկցի այդ ընկերը այստեղ նման էր քաղաքակիրթ քիւրտի։ Իւր հակումների, բնաւորութեան մէջ ոչինչ չէր փոխուել. դէպքերը անկարող էին եղել նրան մաղաչափ անգամ շեղելու իր նախասխրած գործից։ Անգամ մեր ջերմ ընկերական տեսակցութեան այդ պահին թուղթի թերթիկների մի տրցակ կար ձեռքին, ուր կարող էր նշանակել որեւէ բան «հերթական թղթակցութեան» համար։ Բայց Համոն այստեղ պարզ թղթակից չէր, այլ խմբագրութեան անդամ եւ միաժամանակ Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Կոմիտէի քարտուղար։ Բոստոն կանչուելուս մղում տուողն էր օր. Երանուհին, որ այժմ գտնւում էր Կալիֆորնիայում, նրանից էր իմացել Համոն իմ մասին։ Ծանօթացայ եւ խմբագրութեան մէջ եղած ընկերների հետ — Սեդրակ Բաղդիկեանի, Կենտրոնական Կոմիտէի գործավար, մեր երգչուհու «Սէթօ»ն, Յոսրով Եսայեանի, «Հայրենիք»ի գործավարը, եւ ուրիշներին։ Այս վերջին երկու ընկերների հետ առաջին իսկ օրէն մտերմացայ եւ իրենց սենեկակից դարձայ։

ARAM webaram.com

Այստեղ Ամերիկայում էլ, մեր ժողովուրդը լարուած հետաքրքրութեամբ հետեւում էր Հայաստանի դէպքերին: Մանաւանդ մեծ յուզում ու վրդովում էր առաջ բերել թուրք ջարդարարների անպատիժ մնալը: Պատերազմի սկիզբին Դաշնակիցները հանդիսաւոր յայտարարութիւն էին արել, որ Թուրքիոյ կառավարութեան անդամները անձնապէս պատասխանատու պիտի նկատուին հայկական ջարդերի համար: Բայց պատերազմը վերջացաւ Դաշնակիցների յաղթանակով եւ հայկական Մեծ Եղեռնի հեղինակները մնացին անպատիժ եւ նոյն իսկ պաշտպանութեան տակ առնուեցին:

Ամերիկայի հայութեան մէջ հասունացել էր այն միտքը, թէ հայերը սեփական միջոցներով պէտք է պատժեն թուրք ջարդարարներին: Այս մտայնութեան ոգին էր Արմէն Գարոն, որի նախաձեռնութեամբ յատուկ Ֆոնտ էր ստեղծուած եւ յատուկ աշխատանք էր կատարուում:

Պէտք է ասել, թէ միայն Ամերիկայում չէր այս արամադրութիւնը. բովանդակ հայութիւնը, ամէն տեղ, վրդովուած էր Դաշնակիցների վերաբերումից. մի ամբողջ ժողովուրդ էր բնաջնջուած բարբարոս այդ միջոցներով, եւ յաղթական Դաշնակիցները, հակառակ հանդիսաւոր խոստումների, մատը մատին չդարկին ոճրագործներին արդարադատութեան ենթարկելու համար: Ամէն կողմից ժողովուրդը արդար հատուցում էր պահանջում եւ բոլորի աչքերը յառած էին Դաշնակցութեան:

Դաշնակցութիւնը, բնականաբար, չէր կարող անտարբեր մնալ եւ նոյնպէս մտածում էր փոխ հատուցման մասին: Հ. Յ. Դաշնակցութեան 9րդ Ընդհանուր ժողովն էլ, 1919ի աշնան, զբաղուել էր այդ հարցով: Եւ ահա Ամերիկայում պարզուեց, որ այն՝ ինչի մասին ես երազում էի գիշեր ու ցերեկ, այստեղ արդէն կեն-

ARAM webaram.com

դանի գործ էր դարձած։ Արմէն Գարոյի գեկավարութեան տակ կատարուել էր նախնական ահագին աշխատանք։

Ամերիկայում ևս իմացայ, որ Պոլսից փախած իթթիհատականները Եւրոպայում վարում էին գործօն աշխատանք։ Նրանք կապեր էին հաստատել Եւրոպայի քաղաքական շրջանակների հետ եւ աշխատում էին նրանց միջոցով հակազդել Դաշնակիցների վրայ՝ ի չիք դարձնելու հայկական խնդիրը եւ աւելի գիջող ընթացք ապահովելու Թուրքիոյ նկատմամբ բոլոր մնացած խնդիրներում։ Այդ նպատակով նրանք ունենում էին դաշնակից պետութիւնների ներկայացուցիչների հետ տեսակցութիւններ եւ անում էին խորհրդակցութիւններ։ Էնվերը գտնւում էր Ռուսաստանում. այնտեղ նա հիմնել էր «Իսլամի Ազատագրութեան Միութիւն», որ ունէր մասնաճիւղեր Բերլինում և Անատոլիայում։ Երկու ամիս առաջ Բերլինում գումարուել էր համաժողով՝ Անգլիոյ վրայ ճնշում գործ դնելու նպատակով։ Աշխատանքների գլխաւոր վայրը հանդիսանում էր Ռուսաստանը, յատկապէս Անդրկովկասը՝ Քեմալական շարժման հետ սերտ գործակցութիւն պահպանելու նպատակով։ Ըստ ամենավերջին տեղեկութեան, Բագու էին գտնւում Էնվերը, Իբրահիմ Թալինը, Քիւչիւկ Թալէաթը, Պէհաէտտին Շաքիրը, Մուստաֆա Սուբհին, Նուրի եւ Խալիլ փաշաները։ Այնտեղ նրանք մասնակցել էին «Արեւելեան ժողովուրդների Համագումար»ին։ Հայաստանում արդէն ծայր տուած հայ - թրքական պատերազմը համաբուում էր այդ համագումարի որոշման հետեւանք։ Թալէաթը ենթադրւում էր ժամանում կամ Բերլինում։

Մի օր էլ ես ծանօթացայ հասակագեղ, յաղթանդամ, տպաւորիչ արտաքինով եւ բարեհամբոյր Արմէն Գարոյի հետ։ Միայն մէկ անգամ էի տեսել նրան,

ARAM webaram.com

Իմ թանկագին կնոջ,
Սոֆիային, որպես հուշարար-
ձանաբանություն գրում եմ:
5 հոկտ. 1922. Ա. Ջալալյան
Երևան.

ARAM webaram.com

բայց շատ էի լսել նրա մասին։ Շիտակ, ազնիւ, բարի, բոլորանուէր առաջնորդը, իմանալով որ ես եմ Փարիզից եկողը, միանգամայն մտերիմ, սրտաբաց, անկեղծ, հայրական գորովով ու եղբայրական ջերմութեամբ ձեռքս թօթուեց։ Ինչպէս առաջին հանդիպումիս, ինձ համակեց չափոթիւն։ Արմէն Գարոն պատկերանում էր ինձ իբրեւ մարդկային կատարելութիւն։ Եւ չէի սխալւում. նա ծնած էր այդպէս՝ առաքինի, վճիտ եւ բիւրեղ։ Բայց վերջին հինգ տարիները շատ էին ազդել վրան՝ ստեղծելով նրա հանդարտ հոգու մէջ մի աննուաճելի անհանգստութիւն։ Իր կոր ու քիչ ուռած կոպերի տակ սիրուն աչքերը գրկուել էին նախկին փայլից ու պայծառութիւնից. առնական դէմքին յայտնուել էին կնճիռներ։

Խմբով դնացինք ճաշարան, որ պահում էր տարեց ընկերներից մէկը։ Կլսկլոր, խոշոր գլուխի պէս գուրս ընկած փորով, թաւ յօնքերի տակ կորսուած անհանգիստ աչքերով ճաշարանապետը, տեսնելով Արմէն Գարոյին, վեր ցատկեց նստած տեղից, ափերի մէջ թաղեց նրա ձեռքը եւ ուրախացած բացագանչեց.

— Վա՛յ, պարոն Գարո...

— Է, Գոգո, ըէ՛ տեսնենք ինչ կայ չկայ, զարձաւ նրան Գարոն հին բարեկամի պէս։

— Ջան սաղութիւն, ի՞նչ պիտի լինի։ Աստուած օգնութեան հասնի, ազգի վիճակը յայտնի է...

Գոգոն մեզ առանձնացրեց մի սենեակ եւ իր հսկողութեան տակ առաւ ապասարկութիւնը։

Արմէն Գարոյից իմացայ, որ ութ օր առաջ հեռագրել էին Փարիզ Հանրմեանին, որ այնտեղ սպասում Ամերիկայից գալիք մէկին, բայց ես արդէն մեկնել էի։ Այժմ այդ մէկը գտնում էր անհրաժեշտ անմիջապէս գարձի անցնել եւ մեկնել Զուիցերիա։ Արմէն Գարոն գտնում էր, որ հեռախուզական նախնական աշխա-

ARAM webaram.com

տանքները այդ անձը կարող է մինակ կատարել՝ կարի-
քի դէպքում դիմելով տեղական ուժերի աջակցու-
թեան, իսկ ես պէտք է մեկնիմ այն դէպքում, երբ պար-
զուի, թէ ո՛ւր է Թալէաթը՝ Ժընեւո՞ւմ, թէ Բերլինում։
Իմ ցանկութիւնն էլ այդ էր։ Գործի համար անհրա-
ժեշտ զգուշութիւնների նկատումներով, այդպէս էլ
որոշուեց։

Յայտնի եղաւ նաեւ, որ գրուած է Պոլիս եւ Բեր-
լին՝ Թալէաթի հետքերին հետամուտ լինելու մասին։
Ստացուած տեղեկութիւնները պէտք է կենտրոնանա-
յին հետախուզական մասի վարիչի մօտ։ Մինչ այդ
արդէն երիքական պատճէններով արտանկարուած ու
պատրաստ էին բոլոր գլխաւոր ջարդարարների լուսան-
կարները։ Ապահովուած էին եւ նիւթական միջոցները։

Թէեւ խնդիրը դեռ շատ ջուր կը վերցնէր, բայց
ինձ համակել էր մի ներքին հրճուանք, որ գործը գոնը-
ւում է կարող մարդկանց ձեռքում եւ արդէն գրուած է
չիտակ ճամբու վրայ։ Բոլոր հարցերը պարզուեցին ու
ճշգուեցին առանց վիճաբանութեան եւ տարակարծու-
թիւնների, կարծես մի ընտանիքի անդամներ էին, ո-
րոնց մէջ ամենից շատ կշիռ ունի մեծի խօսքը։

Այժմ Գարոն պատմում էր իր տպաւորութիւնները
Թալէաթից։ Լսում էինք նրան հետաքրքրութեամբ.
գոնէ ինձ համար նրա պատմած ամէն մի դէպք բնու-
թագծում էր դաւադիր ոճրագործին ու նաեւ ներկա-
յացնում արժէք։

— Վերջին անգամ ե՞րբ հանդիպեցիք նրան, հարց-
րի ես։

— Վերջին անգամ 1914 Յունիսի 4ին էր, երբ Վը-
ռամեանը եւ ես լուրջ խօսակցութիւն ունեցանք Խա-
լիլ պէյի տանը այդ հրէշին հետ՝ ծրագրուած հայկա-
կան բաբենորոգմանց շուրջ, ասաց Գարոն կարծես ին-
քըն իրեն՝ թաղուելով դեռ թարմ յուշերի մէջ։ Թալէա-

ARAM webaram.com

թը սկսաւ խօսակցութիւնը երկար յառաջաբանով մը, որով կ՚աշխատէր մեզ համոզել, թէ ի՛նչպէս իրենց կամքին հակառակ, չկարողացան մինչեւ այսօր մեր արդարացի պահանջներուն գոհացում տալ, այսինքն հողային հարցի, դպրոցական խնդրի, հայ պաշտօնեաներու յաւելման եւ այլ խնդիրներու վերաբերմամբ: Եւ յետոյ, անդրադառնալով բարենորոգմանց խնդրին, Թալէաթը մեզ մեղադրեց, որ մենք արտաքին միջամտութեան դիմած էինք, փոխանակ ուղղակի իրենց հետ հասկացողութեան մը գալու: Վռամեանը շուտ - շուտ կ՚ընդհատէր անոր խօսքը եւ փաստերով կ՚ապացուցանէր անոր ըսածներուն անլրջութիւնը: Իսկ Խալիլ բէյը կ՚աշխատէր Վռամեանը համոզել, ի մասնաւորի պաշտօնեաներու կէս առ կէսի անկարելիութեան մասին: Այս առթիւ Թալէաթը ակնարկեց Հոֆֆին հետ իր ունեցած բանակցութեանց եւ ըսաւ, թէ ինքը մերժեց իմ թեկնածութիւնը այն պարզ պատճառով, որ համոզուած է, որ եթէ ես երթայի Հոֆֆին հետ իրրեւ անոր օգնականներէն մէկը, իրական ընդհանուր քննիչը ես պիտի ըլլայի եւ ոչ թէ Հոֆֆը: Անոր այս ակնարկութիւնը ջրելու համար Վռամեանը յայտնեց, որ իմ թեկնածութեան մասին խօսիլն աւելորդ էր, քանի որ ես ինքս արդէն խնդրեր էի Հոֆֆէն՝ իմ անունս դուրս հանել ցանկէն: Բայց կէս առ կէսի սկզբունքը չգործադրելը ամենաբաւ ապացոյցն էր մեզ համար, որ իրենք դարձեալ հին աչքակապութեանց ճամբան էին բռնած եւ առաջին քայլին իսկ կ՚ուզէին վիժեցնել իրենց ստորագրած բարենորոգումները: Ժամը 8էն սկսած մինչեւ 11ը երեքով կը վիճէին: Ես ոչ մէկ խօսք արտասանեցի. ուշադրութեամբ կը դիտէի Թալէաթին դէմքը, որ այդ երեկոյ անասելի կերպով անհամակրելի կ՚երեւար աչքիս: Ամէն անգամ, երբ Վռամեանը կը տաքնար եւ իրեն անպատեհ բառեր կ՚ըսէր, Թալէաթի դէմքին վրայ

սատանայական ժպիտ մը կ'երևար, ինքնագոհ մարդու մը յատուկ, որ դիմացինին վրայ կը խնդայ։ Ի վերջոյ, երկուքն ալ նկատեցին, որ ես բնաւ խօսքի չխառնուեցայ։ Թալէաթը դառնալով ինծի ըսաւ.

— «Գարօ, դուն ինչո՞ւ այս երեկոյ բնաւ չխօսեցար»։

— Ի՞նչ խօսիմ, երբ որոշակի կը տեսնեմ, թէ դուք այնքան զոռոզացեր էք ձեր վերջին յաջողութիւններով, որ մեզ հետ խաղալ կ'ուզէք, պատասխանեցի ես։

— «Ես կը բաղձամ քու այդ դարձուածքին համար եւ կը խնդրեմ, որ ապացուցանես ըսածդ»։

— Եթէ Վռամեանը չկրցաւ ձեզ համոզել, ես բնաւ պիտի չկրնամ ընել այդ։ Միայն այսքանը պիտի ըսեմ, որ դուք սխալ ճամբու վրայ էք. ձեր բռնած այս ընթացքը օսմանեան կայսրութիւնը պիտի տանի դէպի խորխորատ։ Դուք ձեր վերջին յաջողութիւններէն հարբած՝ ոտարուեր էք մեծամտութենէ մը, երեւակայելով թէ Նափոլէոններ եւ Պիզմարքներ էք։

— «Պիզմարքը ե՞ս եմ», ընդհատեց Թալէաթը ժպտելով։

— Այո՛, դուն ես, բայց շատ կը սխալիս այդպէս կարծելով։ Դուք բոլորդ դժբախտաբար ոգէտ էք եւ անընդունակ հասկնալու, թէ ո՞ւր կ'առաջնորդէք այս պետութիւնը։ Ապացո՞յց կ'ուզես ըսածիս։ Քիչ մը առաջ դուն չէի՞ր, որ Վռամեանին կ'ըսէիր, թէ դուք քիւրտերը պիտի թրքացնէք։ Ինչո՞վ, ձեր ո՞ր կուլտուրական շնորհովը. եթէ պատմութենէն չուր ուսնոյիր, այդպիսի անհեթեթութիւններ պիտի չըսէիր։ Կը մոռնաս, թէ հինգ - վեց հարիւր տարի է, որ դուք՝ թուրքերդ եկաք մեր երկիրը, իսկ ձեզմէ առաջ շատ ուրիշ ազգեր են եկած ու գնացած մեր եւ քիւրտերուն գլխովը՝ պարսիկները, հռոմայեցիք, արաբները եւ իւզանդացիք։ Եթէ անոնցմէ եւ ոչ մէկը չկրցաւ քիւր-

ARAM webaram.com

ակրը ձուլել, դուք ինչո՞վ էք ձուլելու։ Անցեալ ամառ Համբարձեցի մեր երեք վիլայէթները եւ միայն երեք հատ կամուրջ տեսայ այդ ահագին տարածութեան վրայ. անոնցմէ երկուքը հին հայկական շինութիւններ են, իսկ երրորդը՝ Լենկթիմուրի շինել տուածն է։ Իսկ ձեր քաղաքակրթութեան հետքն ոնգամ չտեսայ։ Չի կարելի այդպէս թեթեւ կերպով վերաբերուիլ պետական լուրջ հարցերուն։ Գալով մեր հարցին, ըսի անոր, դուք անկեղծ չէք։ Դուք կը կարծէք, թէ յաջողելու էք խոստումներով մեզ քնացնել այստեղ, եւ երկրին մէջ ալ այնպիսի անտեսական քաղաքական պայմաններ ստեղծել, որ Հայաստանը դատարկուի հայերէն եւ դուք միանգամ ընդ միշտ ապատիք հայկական հարցէն։ Այս է ձեր ապիտութեան երկրորդ ապացոյցը։ Կը սխալիք ձեր հաշիւներուն մէջ։ Մենք ձեզ այդքան ժամանակ չենք տալու, որ ձեր ծրագիրները գործադրէք։ Մեր ազգային գիտակցութիւնը այնքան զարգացած է, որ մենք պիտի նախընտրենք քարուքանդ ընել այս մեծ շէնքը, որուն անունն է օսմանեան կայսրութիւն եւ ձեզ թոյլ չտալ, որ տեսնէք Հայաստանը առանց հայու...»։

Անցեալի յուշերով տարուած Արմէն Գարան յանկարծ կանգ առաւ. նրա դէմքը արտայայտում էր անորակելի թախիծ։

— Աւա՜ղ, մենք սխալեցանք մեր հաշիւներուն մէջ...

— Ինչո՞վ վերջացաւ, հարցրեց Համոն։

— Երբ ես վերջացուցի, Թալէաթը բացագանչեց. «Այդ ինչի՞ր կը խօսիս, Գարո. դուն բոլորովին փոխուած կ'երեւիս»։ «Մէջերնիս եթէ փոխուած մը կայ՝ դուք էք, որ ձեզ մեծ մարդիկ կը կարծէք, պատուախանեցի ես։ Մենք առաջուայ հայ յեղափոխականներն ենք եւ ձեզի կ'ըսենք այն, ինչ միշտ ըսեր ենք»։ Թալէաթը կատ կարմիր դարձաւ եւ սկսաւ թեւին վրայի

ARAM webaram.com

ժամացոյցին նայիլ շուտ – շուտ։ Ցանկարծ ոտքի ելաւ ու ըսաւ, թէ ժամը 11ին ժամադրութիւն ունի, կը ցաւի որ այս խօսակցութիւնը կիսատ կը մնայ եւ մեկնեցաւ, խնդրելով, որ ուրիշ օր մը նորէն հանդիպինք զիրար համոզելու համար։ «Քիչ յետոյ պատերազմը սկսաւ եւ այլեւս Թալէաթը չտեսայ»...

Կարծես խոստովանանքի պէս մի բան էր այդ զրոյցը Արմէն Գարոյի համար, կարծես ինքն իրեն դատաստան էր անում՝ ո՞ւնքան ընկճուած էր։ Ես մտածում էի, թէ պէ՞տք էր արդեօք նա խօսէր յեղափոխականին վայել, բայց այդպիսի պարզութեամբ եւ անկեղծութեամբ դահճապետի հետ...

— Ինչ որ է, ասաց մտքերից սթափուելով, անցեալը թողնենք, նայինք գալիքին։ Ես հիմա պիտի մեկնեմ։ Բարի ճանապարհ եւ յաջողութիւն ձեզ։ Շատ պիտի ուզէի աչքս եռեւս չմեռնել, յարեց նա ելնելով, մեր այս ծանր օրերուն այդ ճիւաղի մահը մեծագոյն միխիթարութիւնը պիտի ըլլար հայութեան համար...

Ճաշասրահից լսուեց.

— Երկրէն ի՞նչ խաբար կայ, պարոն Գարօ։

— Նոր խաբար չկայ, Գոգօ, ամէն ինչ գիտցածիդ պէս է...

* * *

Մեր ներկայացուցիչը երեկոյեան մեկնեց Նիւ Եորք այնտեղից Եւրոպա անցնելու համար։

Գիշերը Սէթոյի եւ Խոսրովի հետ նստած ոճրագործների լուսանկարներն էինք ուսումնասիրում։

Թալէաթը, Էնվերը, Ջեմալը, Սայիտ Հալիմ փաշան, Ջեմալ Ազմին, Բէհաէտտին Շաքիրը, Պոլսոյ ոստիկանապետ Պեսրին, դոկտոր Նազիմը եւ այլն, գա-

ARAM webaram.com

նապան դիրքերում։ Կան նաեւ Թալէաթի եւ Էնվերի կանանց նկարները, որոնք ըստ երեւոյթին դուրս են հանուած խմբանկարներից։ Երկուսն էլ գեղանի, հրեշտականման դէմքերով կանայք։ Մարդ մնում է զարմացած, թէ ի՛նչպէս կարող են նրանք ապրիլ այս հրէշների հետ։ Իր կազմուածքով ամենից ուշագրաւն է Թալէաթը. հզօր թեւերը, քառակուսի թիկունքը, ժայռի պէս ցցուած դնդերները մատնում էին ուժ եւ կորով։ Նկարին նայողը պիտի զարմանար, թէ ի՛նչպէս ոգեշունչ կերպարանք ունեցող այդ մարդը երեք տարի շարունակ դիմացաւ գթութիւն աղերսող մի ամբողջ ժողովուրդի աղաղակներին, բնաջնջման իր ծրագիրը անշեղօրէն գլուխ հանելու համար։ Մի ուրիշ նկարի մէջ գլխի քունքերին հագիւ նշմարւում էին ճերմակներ։ Արեւելքցու կարկառուն շուրթին աջ ու ձախ երկարել էին կուպրի պէս սեւ ու թաւ պեխերը։

Շուայտ պարանոցը նեղ օձիքի միջից դուրս էր ընկել։ Ճերմակ բաճկոնի կիսուածքը ծածկել էր փորի ազեղնաձեւ մասը, դէմքից բուրում էր սրտապին անկեղծութիւն...

Ահա եւ Էնվերը, ժամանակի թուրք կանանց կուռքը, որ կեանքին մէջ ազամարդու վայել գործ չտեսաւ եւ համբաւ շահեցաւ Էսխիրնէի վերապրումն ժամանակ, երբ արդէն գործը վերջացած էր։ Պատանեկան կայծկլտուն կերպարանք եւ կանացի արտաւանունքներով թարմ դէմքը արտայայտում էին պարելու ցանկութիւն։ Պոլսում ասում էին, որ իր ընդունարանի պատից, իր դիմանկարի երկու կողմերից, կախել էր Նափոլէոն Առաջինի եւ Ֆրիտրեխ Մեծի նկարները, երկու հանճարեղ փառամոլներ, որոնց իր կարճ հասակով մի-այն նման էր։ Ասում էին, որ Էնվերը կրում էր բարձրկրունկներով երկարաւիզ կօշիկներ նրանցից աւելի երկար երեւնալու համար։ Պարսկական գդակի յարդար-

ARAM webaram.com

ուած դպրոցը, որ երբեք վար չէր առնում, նոյն նը-պատակին էր ծառայում։ Եւ իրօք, մարաջախտի ոսկե-ճամուկ համազգեստով նկարի մէջ ունի կոկոզավիզ արտայայտութիւն։ Բայց երկու շարք ժապաւինակալ շքանշանները գործը փճացնում էին՝ տալով նրան պըշ-նասէր, թեթեւամիտ, պատանեկան հանդգնանք։ Ու դարձեալ նոյն բանը՝ շլմորած, վախի արտայայտու-թեամբ աչքերը շրջանակող կոպերը աղջկայ աչքերի յատուկ բացուածք ունէին։ Մի ուրիշ նկարի մէջ մանր պեխերի տակ հպիւ նշմարուող շնական ժպիտը արտայայտում է «արժանապատիւ դերազանցութիւն»։ Եթէ նրա այդ արժանապատուութիւնը դառնապէս վի-րաւորուած չլինէր Քարլոսի տակ, ուր պէտք է վաստակէր «Թրքական Նապոլէոնի» առաջին պատկը, թե-րեւս այլ լինէր մեր ժողովուրդի բախտը...

Երրորդ Ջարդարարի՝ ծովային նախարար Ջեմալ փաշայի դէմքը արտայայտում է վայրագութեան, մե-ծամտութեան ու կորովամտութեան խառնուրդ։ Մեծ, սուր ու թափանցող նայուածքով սեւեռուն աչքերը մատ-նում են խորամանկութիւն, անխղճութիւն եւ անձնա-պաշտութիւն։ Սա էր, որ Զորրորդ զօրաբանակի հրա-մանատարի հանդգնանքով պակասը լրացրեց՝ սովի ու հալածանքների ենթարկելով մեր ժողովուրդի մնա-ցորդը անապատներում...

Զեռք անցընելով Պեսրի պէյի նկարը, մնում եմ շուարած, թէ ի՛նչպէս այդ ոչնչութիւնը յաջողեց ան-ճիտել մօտաւորապէս 500 փայլուն մտաւորականներ։ Դնոջական թեք ուսերով, երազուն, վաւաշոտ աչքե-րով այդ անյայտ մարդուն միակ արժանիքը այն էր, որ Թալէաթի մտերիմն էր։ Բայց այդ անամէջ մարդը դարձեալ մի բան է խրտուիլակ Սայիտ Հալիմ փաշա-յի համեմատութեամբ, որի ներքինիի ախտաժէտ դէմ-քը գարշանք է յարուցում. մէկը՝ որ վարչապետի ա-

ARAM webaram.com

թուին հասաւ դրամի ուժով, պատերազմից յետոյ Եգիպտոսի Խոփ դառնալու յոյսով։ Ունայնամիտ, փառատենչ, իրական իշխանութիւնից զուրկ եգիպտական այդ իշխանը իր մէջ բաւարար կորով ունեցաւ մերժելու ջարդերին վերջ տալու համար իրեն եղած բոլոր դիմումները...

Իր դէմքի բանիմաց ու գործնական արտայայտութեամբ, ապահովագրական ընկերութեան գործակատարի տպաւորութիւն է թողնում Բէհաէտտին Շաքիրը, որ մեծ ջարդերի նախերգանքը սկսեց դեռ 1914ի ամրան, Էրզրումի շրջանում կազմակերպած մասնակի տեղահանութիւններով ու կոտորածներով։ Այնուհետեւ իթթիհատական յայտնի հռետոր Նաջի բէյի հետ միասին, ջանք չխնայեց ոտքի հանելու թուրք խաւարամիտ ամբոխը անզէն հայ ժողովուրդի դէմ, Էրզրումից մինչեւ Մուսուլ։

Աչքառու ջարդարար նահանգապետների շարքում սարսափ է ազդում Ջեմալ - Ազմիի նկարը, դրեթէ քառակուսի դէմք, արիւնկպակ ծնօտ. մի կատաղեալ հրէշ, որ դարերը ճեղքելով բերել է մինչեւ մեզ հացըրել ասիական բոլոր բարբարոսութիւնների նմոյշները։ Սա էր, որ երկու օրուայ մէջ ոչնչացրեց Տրապիզոնի 14 հազար հայերը եւ որ նախապէս ջարդել տուեց զինուորագրուած երիտասարդները. հաւաքեց քաղաքի վեց հարիւր ականաւորներին ու բարձելով նաւերը՝ ծովամոյն արաւ. ապա դուրս հանեց քաղաքից կանանց, երեխաներին եւ ձեւիզլիկ գիւղի մօտ՝ ոչնչացրեց բոլորին այնպիսի անգթութեամբ, որ գերազանցում է մարդկային ամէն երեւակայութիւն...

Արդէն ուշ էր, ժամը գիշերուայ 12ը անցել էր, երբ Խոսրովը իր անկողնից «հերի՛ք է, պառկեցէք» գոչեց քնաթաթախ։

Մտանք անկողին, բայց աչքերս չէի կարողանում

ARAM webaram.com

փակել. քունս բոլորովին փախել էր։ Աշխատում էի Անահիտին աչքիս առջեւ բերել, իր մասին մտածել, բայց դահիճների նկարների ազդեցութիւնը աւելի ուժեղ էր եւ երկար ժամանակ խաւարի մէջ նրանց հրեշատիպ դէմքերը ցատկռտում էին աչքերիս առաջ...

* * *

Հեռաւոր գաղութում հաստատուած, բայց երկրի հետ սերտօրէն կապուած «Հայրենիք»ը մեծ դեր էր կատարում։ Անվիճելի իրողութիւն է, որ եթէ հայութիւնը գաղութներում պահպանում էր իր կերպարանքը, դա խոշոր չափով արդիւնքն է այն կազմակերպուած աշխատանքին, որ վարում են հայ հանրային, քաղաքական հոսանքները, նրանց թերթերը եւ հրատարակութիւնները։ «Հարենիք»ը մեծ տեղ ունէր այդ հրատարակութիւնների մէջ։ Սկսուելով Նիւ Եորք, նոր էր լրացրել իր քսանամեակը Բոստոնում։ Ընկերներից ոմանք — դոկտոր Թաշճեանը, պրոֆ. Զադմպճեանը, Մ. Համբարձումեանը, Ն. Տէտէկիւլը,— ըստ առել էին այդ գործի վրայ 10 — 15 տարուայ աշխատանք, մեծ մասամբ ժուռարին, անտանելի պայմաններում։ «Հայրենիք»ի խմբագրութիւնը մի «Ազգային Բիւրօ» էր, առանց որի ոչ մի աշխատանք չէր կատարուում։ Բոլոր ազգային հանգանակութիւնները նրա միջոցով էին տեղի ունենում, բոլոր ժողովները այստեղից էին ղեկավարուում, գաղթականների համար նա միթղթատուն էր, տեղեկատու մարմին. այստեղ էին գալիս նամակները տարագիրների անունով. հակառակ որ անցել էր հինգ տարի, դեռ մնում էր յայտարարութիւնների յատուկ բաժինը, ուր ջարդից ազատուածները փնտռում էին իրենց կորած, աքսորուած հարա-

ARAM webaram.com

զատներին։ Օրն ի բուն բաց էին խմբագրութեան դռները եւ ամէն մարդ մուտք ունէր այնտեղ, նրանց ընդունում էին մաերմօրէն, լսում ուշադիր, կարեկցում ցաւերին, օգնում բարոյապէս՝ միշտ պահելով նրանց մէջ հաւատը դէպի աւելի լաւ ապագան։

Ինչպէս մի ժամանակ Երեւանում, այստեղ էլ նրանց մէջ ժողովրդականութիւն ունէր Համոն։ Օրերով նստած դիտում էի այցելուներին, եւ միշտ, խօսքը թախիծի հետ, ինձ համակում էր մի հաճելի զգացում, որ մի անկիւն կայ, ուր հողմավար հայութեան բեկորները կարող էին իրենց վշտերը ամոքել։ Նրանք պատմում էին իրենց ցաւերը միալար. գաւակների կորուստի մասին խօսում էին շշնջիւնով, ու նրանց շուրթերը ակամայից դողդողում էին ջերմից բռնուածի պէս։ Բայց լինում էին եւ այնպիսիներ, որոնք կարծես ծնուած էին յաւիտենական պայքարի համար, եւ լսելով հայ - թրքական պատերազմի մասին՝ գալիս էին «ազգութեան գինուոր» գրուելու, Հայաստանին «իմաստ» անելու պատրաստակամութեամբ։

Օրը օրին դարձեալ մթագնում էր հայկական հորիզոնը։ Նոյեմբերի առաջին օրերին մեզ հասաւ Կարսի անկման լուրը, թուրքերը շարժւում էին դէպի Ալեքսանդրապոլ. կրկնւում էր նոյն բանը, ինչ երկու - երեք տարի առաջ։

Մի քանի օր յետոյ Եւրոպայից ստացուած հեռագրի համաձայն, մեկնեցի Ժընեւ։ Դիւրութեամբ գտայ «Դրօշակ»ի խմբագրատունը, ուր յոյս ունէի տեսնելու մեր ներկայացուցչին, որ իր հացէն չէր յայտնել։ Ժընեւը, յատկապէս «Դրօշակ»ի խմբագրատունը այն ժամանակ պատկերանում էր իրրեւ հայ յեղափոխական շարժման ուխտատեղի։ Եւ անտարբերութեամբ չէր, որ մօտեցայ երկաթեայ շրջափակով պարտէզի մէջ ընկած երկյարկանի համեստ շէնքին, որ կարծես

ARAM webaram.com

աւերակ էր եւ կենդանութեան նշոյլ չունէր։ Պարտէզի խորքում, ծառերի մէջ, կիսով չափ փլած ձողափայտերը մատնում էին հանգստեան տաղաւարի մնացորդները... Վար թափուած ոստերը, թփերը, մացառները թողնում էին լքուած անկիւնի տպաւորութիւն։ Շէնքի դուռը բաց էր, ներսը պատերից կախուած էին նահատակ յեղափոխականների նկարներ. երկու սենեակների միջանցքաձեւ մասում, ապակեպատ դարակներում շարուած էին գրքեր։ Մաքուր, համեստ կահաւորուած պաղ սենեակները թողնում էին աւելի շուտ յիշատակարանի, քան բնակարանի տպաւորութիւն։ Մարդ չէր երեւում. գերեզմանի պէս լուռ էր շէնքի ներսը։ Տարակուսանքով դուրս էի գալիս, երբ ներքնայարկից լսեցի կանացի մի ձայն։

— Ո՞վ է։

— Ներեցէք, տիկին, ո՞ւր է տան տէրը, կամ մէկը...

— Ի՞նչ տան տէր...

Ու յանկարծ դիմացս բուսաւ մազաղաթի պէս դեղնած դէմքով, նիհարակազմ մի մարդ, որ ձեռքը կոդին, վիրաւորուած արժանապատուութեամբ յարեց.

— Այս շէնքի մէջ կիներ չկան, պարոն, սխալ հասցէով եկած էք...

Ինձ համակած ակամայ զուարթութիւնը բարկացրեց նրան։

— Ո՞վ էք եւ ի՞նչ կ'ուզէք։

— Ներեցէք, երեւի դուք Տիար Անտոնն էք։

— Այո՛։

— Ընկերները պատմել են ինձ ձեր մասին։

— Ի՞նչ ընկերներ, ասաց։ այժմ հետաքրքրութեամբ։

— Ամերիկայի։

— Ընկեր Թէհլիրեա՞ն։

ARAM webaram.com

— Այո՛։

— Զրսե՞ս մի, օրհնուածի զաւակ, արի ներս...

Այսպես պարզուեց, որ մեր ներկայացուցիչը հինգ օր առաջ մեկնել էր, առանց յայտնելու, թէ ուր, թողնելով Տիար Անտոնի մօտ ինձ համար մի նամակ։ Նա գրում էր, թէ Պոլսից ստացած մի նամակի շնորհիւ զանել է իր մօտ ազգականներից մէկի հետքը Բելգիոնում, ուր եւ մեկնում է։ Պէտք է ես էլ աճապարէի, եթէ ուզում էի համալսարան մտնել...

Տիար Անտոնը ունէր յեղափոխական որոշ անցեալ Բալկաններում։ Բայց գրեթէ «Դրօշակ»ը Ժընեւում հաստատուելուց ի վեր, հանդիսանում էր շէնքի ու գոյքերի բծախնդիր վերահսկիչը։ Նա հասկացաւ, որ եկել եմ կարեւոր գործով, բայց ոչ մի հետաքրքրութիւն չարտայայտեց։ Հիւրասիրեց ինձ թէյով։ Զրոյցից պարզուեց, որ «Դրօշակ»ի խմբագրութիւնը ուզում են փոխադրել Փարիզ եւ մտադրութիւն կայ Ժընեւի շէնքը ծախելու, այնտեղ մի ուրիշը դնելու համար։ Դառնութեամբ էր խօսում այդ մասին. նրա կարծիքով «Դրօշակ»ը Ժընեւից փոխադրուելուն պէս կը խամրի։ Դա մի անպատասխանատու գործ էր, անգամ ոճիր՝ շէնքի փառապանծ անցեալի նկատմամբ։ Նա չէր կարող հասկանալ, թէ ի՛նչպէս կարելի է «Հայ Յեղափոխութեան Էջմիածին»ը վաճառել։ Տիար Անտոնը միտք չունէր Ժընեւի շէնքից հեռանալու. կատուի պէս, նա տիրոջից աւելի կապուած էր շէնքի ծակ ու ծուկերի հետ. նա գրեթէ վստահ էր, որ մինչեւ վաճառուիլը այդ շէնքի մէջ էլ կը մեռնի. արդէն շատ ապրելիք չունէր, տարիքը, հիւանդութիւնը եւ այլն. հակառակ պարագային՝ պիտի խնդրէր շէնքի նոր տիրոջից թոյլ տալ ապրելու այնտեղ դռնապանի պաշտօնով։

Լսում էի, բայց միտքս ուրիշ տեղ էր։ Յուզուած ու ցրուած էի, «հետքը գտնուել էր». պէտք ունէի մի-

ARAM webaram.com

նակ լինելու այդ լուրի արժէքը չափելու համար։ Տիար Անտոնը ինձ օգնեց տեղաւորուելու հաբեւան մի պանդոկում։ Հակառակ աճապարանքիս, հինգ - վեց օր տեւեց մինչեւ կարողացայ վիզա ստանալ Բերլինի համար, ուր գնում էի մեքենագիտութիւն ուսանելու նպատակով։ Դեկտեմբեր 3ին մեկնեցի։

* * *

Գերմանիան դեռ գտնւում էր պատերազմի հետեւանքով ստեղծուած ծանր կացութեան մէջ։ Հաշտութեան պայմանները ստեղծել էին երկրի համար կիսագաղութային մի վիճակ, տնտեսական առումով։ Պատերազմական ծանր տուգանքները քայքայել էին երկրի տնտեսութիւնը։ Հաշտութիւնից ի վեր իրար յաջորդող կառավարութիւնները անկարող էին ելք գտնել։ Երկիրը անհանգիստ էր, գործադուլները մարում ու նորից բռնկում էին ամէն տեղ։

Բերլին հասայ երեկոյեան. թէեւ հապիւ ժամը 10 էր, բայց չորս միլիոն բնակիչ ունեցող այդ քաղաքի կեանքը մեռած էր։ Տեղում էր ձիւնախառն անձրեւ։ Ինքնաշարժը կանգ առաւ «Թիրկարտէն» հիւրանոցի դիմաց, ուր ապրում էր ներկայացուցիչը։ Անհամբեր էի իմանալու, թէ ինչ դրութեան մէջ է գործը։ «Շատ լաւ է», եղաւ պատասխանը։ Թալէաթը Բերլինում էր։ Եւ ցոյց տալով գերմաներէն մի թերթ ընդգծուած մասերով՝ ասաց.

— Այս յօդուածը ուղղուած է «Իթթիհատ»ի, յատկապէս Իսմայիլ Հագկիի դէմ. գրում է Մէհմէտ Զեքին։

— Ովքե՞ր են դրանք։

— Առաջինը իթթիհատական երիտասարդներից է

ARAM webaram.com

որ երեք տարի առաջ կուսակցութեան կողմից ուղարկված է Բերլին ուսում ստանալու համար: Մէհմէտ-Զեքին մութ անձնաւորութիւն է, որ ժամանակին Պոլսոյ մէջ «Ազգային Պաշտպանութիւն» անունով շաբաթաթերթ էր հրատարակում, յայտնի շարլատան, նշանաւոր դրամաշորթ, նախկին իթթիհատական պնակալէգ. հիմա այստեղ, ըստ երեւոյթին, գործը լաւ չէ նախկին պետերի հետ եւ ձեռնարկել է մերկացումների: Այս յօդուածի մէջ Մէհմէտ - Զեքին, խօսելով Իսմայիլ Հագկիի կողմից հայկական խնդրի շուրջ գրած մի յօդուածի մասին, յարում է.

— «Զարմանալի է, որ իրենց պետը դերման հանրապետութեան հիւրը»... «Եւ Բերլին բնակող ոճրագործների կոմիտէի մասին Իսմայիլ Հագկին ոչինչ չի գրում»: Ապա շարունակելով.

— «Մենք գիտենք, որ Իսմայիլ Հագկը բէյը միայն Թալէաթ փաշայի հետ չէ, որ յարաբերւում է ալբաօրէն, այլ եւ գոկտոր Նազիմի եւ Հալեպի նախկին կուսակալ Պեհրիի հետ: Յայտնի է, որ հայկական ողբերգութիւնը կազմակերպող ու գործադրողները, ինչպէս նաեւ իրենց անցանկալի նկատուած թուրքերին մէջտեղից վերացնողները, այս երեքն են: Պոլսոյ կառավարութիւնը պիտի չուշանայ նրանց արժանի պատիժը տնօրինելու: Բերլին գտնուող իթթիհատականները վերջերս սկսել են իրենց ընկերվարական յայտարարել: Պէտք չէ հաւատալ, ընկերվարականների պետը իշխան Սապահէտտինն է, որ հպիւ կարողացաւ իթթիհատականների հալածանքներից ազատուել: Եւ մօտ օրերս մի դատախօսութիւն պիտի կարդամ, այդ բոլոր խնդիրները անկողմնակալօրէն քննութեան առնեմ եւ մերկացնեմ Իթթիհատ-Թերաքզիի գործունէութիւնը»:

Մեզ համար կարեւորը այն է, որ այլեւս կասկած չէր մնում, թէ ոճրագործները այստեղ էին: Բերլինում

ARAM webaram.com

էին Թալէաթը, Պոլսի նախկին ոստիկանապետ Պեարին, Իսմայիլ Հագկին, Տրապիզոնի Վալի՝ Զեմալ Ազմի բէյը, որ ծխախոտի գործի էր սկսել եւ իր անունով բացել էր խանութ, ուր գրաղում էր նաեւ գորգավաճառութեամբ։

Այս վերջին լուրը ինձ ուղղակի շշմեցրեց, տասնըչորս հազար մարդ կոտորել, նրանց հաբառութիւններով գործ ստեղծել ու անվրդով ապրիլ մի քաղաքակիրթ երկրի մայրաքաղաքում... Ես անհամբեր էի այս սրիկայի հաշիւը տեսնելու, բայց այդ քայլը կարող էր փախցնել միւսներին, աւելի մեծերին, մանաւանդ Թալէաթին, որի ճիւաղային ուրուականը հալածում էր ինձ գիշեր ու ցերեկ։ Պէտք էր շարժուել զգոյշ եւ որսը ձեռքից չփախցնել, թէեւ անհրաւակայելի էր ինձ համար, որ Տրապիզոնի վալին յայտնագործուելուց յետոյ կարող էր դեռ ապրել...

Պարզուեց, որ մի քանիսի յետեւից արդէն նշանակուած էր հետախուզութիւն եւ առհասարակ գործը իր ընթացքի մէջ էր։ Ես էլ, ուրեմն, պէտք է լծուէի աշխատանքի, առաջին հերթին ձեռնարկելով հետախուզութեան։

Յաջորդ առաւօտ, դեռ հիւրանոցից դուրս չէի եկել, յայտնուեց Յազօրը, 27—28 տարեկան մի թխադէմ երիտասարդ, որ ուսանում էր Բերլինի համալսարանում։ Նրա դուրեկան դէմքին պարզուեց մի լայն ժպիտ, երբ ծանօթացաւ հետս։ Նա ասաց, թէ եկել է յայտնելու մի քանի հետաքրքրական տեղեկութիւններ, որ իմացել էր Հրատից։ Իրր թէ այս օրերս Էնվերը Մոսկուայից այս կողմերը պիտի գայ՝ Իթթիհատը վերականգնելու նպատակով։ Բայց այդ խնդրի շուրջ իր եւ Թալէաթի միջեւ մրցակցութիւն կայ։ Վերջինի հողմնակիցները ուզում են, որ վերակազմուած կուսակցութեան կենտրոնատեղին լինի Բերլինը եւ կու-

ARAM webaram.com

սակցութիւնը արտատահմանեան հանգամանք ուներ։ Այն ինչ Էնվերը պնդում էր, որ կուսակցութեան կենտրոնը լինի Մոսկուայում։ Ինքը՝ Հրատը կարծում է, որ այս տարակարծութեան պատճառը հեռաւորն է. Էնվերը շատ յաճախ գտնուում է Մոսկուայում, Անդրկովկասում եւ ուզում է իր ազդեցութեան տակ պահել կուսակցութիւնը։ Բացի այդ, ցանկանում է կարելի եղածին չափ մօտ լինել Անատոլուին եւ բաժին ունենալ երկրի ներքին գործերի մէջ։ Մինչդեռ Թալէաթի կողմնակիցները կանգնած են այն տեսակէտի վրայ, որ իրենց միջամտութիւնը կարող է ազդուել բարձրացրնել Եւրոպայում եւ վնասել երկրում սկսուած ազգայնական շարժման զարգացման։ Այդ առթիւ, իբր թէ մի քանի օր առաջ խորհրդակցութիւն է եղել Թալէաթականների, եգիպտացի շէյխ Աբտիւլ - Ազիզի, սիրիացի Շէքիբ Արսլանի եւ այստեղ գտնուած հընդկաստանցի մի քանի իսլամների մասնակցութեամբ։ Թալէաթը՝ ինքը ներկայ չի եղել այդ խորհրդակցութեան։

Հրատը այս տեղեկութիւնները ստացել էր Թուրք ուսանողներից, որոնց հետ մտերիմ էր։ Ինքը՝ Հրատը, ինչպէս պատմեցին, դէմքով, անունով, անաղարտ տաճկերէնով իսկական Թուրքից չէր տարբերուում։ Բայց ընտիր հայ էր։ Ունէր մտերիմներ Թուրք ուսանողների եւ Թուրքերի մէջ, զգալի ծառայութիւններ էր մատուցանում մեր դիւանագիտական ներկայացուցչին կարեւոր տեղեկութիւններով։

Այս տեղեկութիւնները հաղորդելուց յետոյ, ցաղօրը մեկնեց։ Քիչ վերջը դուրս եկանք եւ մենք։ Զբաղուում էր խոշոր փաթիլներով, որոնք թիթեռնիկների պէս ճախրում էին ամէն ուղղութեամբ ու յամբօրէն վար իջնում։ Տաք, հանգարտ եւ հաճելի ձմրան օր էր։ Գնում էինք յամբաքայլ, ամէն մէկը իր մտքերի հետ։

ARAM webaram.com

Քիչ անց՝ մտանք մի լայն պողոտայ՝ որ երկարում է կայսերական պալատից ուղիղ գծով Բրանդէնբուրգ Կիշըն Թոռ, Բերլինի ամենամեծ փողոցը։ Անհրաժեշտ էր, որ ծանօթանայի քաղաքի դասաւորութեան, գլխաւոր թաղամասերին, փողոցներին։ Անհրաժեշտ էր, որ դէթ մի քանի գերմաններէն բառեր սովորէի։

Թեքուեցինք դէպի ձախ, ապա՝ անցնելով մի քանի երկրորդական փողոցներ՝ հասանք մի անկանոն հրապարակ։ Դէպի աջ, հրապարակը մտնող փողոցի անկիւնի բուն ծայրում գտնուում էր Զեմալ Ազմիի ծրխավաճառանոցը։

Անցանք խանութի առջևից։ Հպիւ զսպեցի ցանկութիւնս ներս մտնելու հրէշի կենդանի կերպարանքը տեսնելու համար։ Դէպի աջ երկարող փողոցով դուրս եկանք հրապարակից եւ շրջելով թաղամասը՝ գուգահեռ փողոցով յետ դարձանք դէպի հրապարակի ձախ մասը, ուր փողոցի ծայրին չհասած, կար մի ճաշարան - սրճարան։ Ճաշի համար դեռ շուտ էր. տեղ բռնեցինք պատուհանի մօտ, որ նայում էր հրապարակի միւս մասում Զեմալ Ազմիի խանութին, եւ պատուիրեցինք մի - մի սուրճ։ Երրորդ օրն էր, որ հակոզութիւն նշանակուած էր այստեղ, բայց մինչեւ հիմա՝ ապարդիւն. առեւտուր չունէր, ժամերով չէր բացուում խանութի դուռը։ Հպարտներով վարձք վճարել եւ խանութի դուռը դոց պահել, նշանակում է յատուկ նպատակով էր հաստատուած խանութը։ Տարակոյս չկար, որ ժամադրավայր էր, բայց ո՞ւր էին անիծեալ տէրերը։

Իմ ուշն ու միտքը դեռ Ցաղօրի ասածների վրայ էր. եթէ յաղթող հանդիսանայ Ինվերի տեսակէտը, Թալէաթն էլ կարող է մեկնել Ռուսաստան կամ Անդրկովկաս։ Թէեւ, միւս կողմից, Թուրք ազգային շահերի համար Թալէաթի ներկայութիւնը աւելի կարեւոր էր այստեղ, Եւրոպայում։ Ցայտնի էր, որ նա վարում էր.

ARAM webaram.com

Եւրոպայում եռանդուն դիւանագիտական աշխատանք, անկասկած նոյն ինքն Ֆեմալի գիտութեամբ ու ցանկութեամբ։ Թէեւ քանիցս Մուսթաֆա-Ֆեմալին վերապրուեցին յայտարարութիւններ, որոնք նպատակ ունէին այն համոզումը տարածել, թէ իր ղեկավարութեան տակ եղած ազգայնական շարժումը ոչ մի կապ չունի Թալէաթի իթթիհատական խմբակի հետ, բայց տարակոյս չկայ, որ Անատոլուի մէջ ծայր տուած այդ շարժման ջիղը իթթիհատականներն էին։ Բանակը, «Ազգային Մեծ Ժողովը», երեսփոխանները, մեծ մասամբ իթթիհատականներ էին։ Ի՞նչ հաշիւ կայ այդ բազմութեան վրայ Թալէաթին էլ աւելացնելու։ Թէ՛ Ռուսաստանում կատարուած բանակցութիւնների ժամանակ, թէ՛ Իտալիոյ խողովակով ստացուած զէնքի ու ռազմանիւթի օժանդակութեան մէջ առաւելապէս Եւրոպա գտնուող իթթիհատականներն էին աշխատանք թափել։ Փաստօրէն Թուրքիոյ ճակատագիրը վարողները դարձեալ իթթիհատականներն էին՝ աշխատանքի բաժանումով ուրիշ ազգայնականների հետ։

Այս մտքերը ինձ պաշարել էին, երբ յանկարծ նկատեցի, որ մի կին մտաւ Ֆեմալ Ազմիի խանութը։ Ես անմիջապէս թռայ դուրս. վայրկեան չանցած մայթի վրայ երեւաց եւ ընկերս։ Բայց ներս մտնելն ու կնոջ դուրս գալը մէկ եղաւ։ Ինչ որ ներքին տհաճութեամբ հարկադրուեցի հետեւիլ այդ կնոջ՝ անցնելով հրապարակի միւս մասը։ Քիչ վարը հասաւ ընկերս՝ պնդելով, թէ լսել էր խօսակցութիւնը Ազմիի հետ։

Հրէշը ասել էր. «Ցոյս ունեմ, որ ինձ կ'իմացնէք». կինը պատասխանել էր՝ «անպայման, եթէ արտօնէ»։ Ըստ երեւոյթին Հրափի տեղեկութիւնները ճիշդ էին։

Իմ հասկացողութեամբ ամենաստորին բանը կին հետապնդելն էր, բայց ի՞նչ արած։ Ձիւնը դադարել էր։ Սեւ մուշտակով, մորթէ կլոր գլխարկով բարեձեւ

ARAM webaram.com

կինը գնում էր յամբաքայլ՝ կարծես շատ դոհ քայլելու առիթից։ Նա մերթ ընդ մերթ իջեցնում էր գլուխը, սեփական քայլերը գննելու ձևով ու յանկարծ կարծես ձանձրանալով այդ զորժից՝ վեր էր հանում գլուխը ու քայլերը արագացնում։ Միայն երաշանքներով համակուածը կարող էր այդպէս քայլել։

Կինը շարունակեց ճանապարհը պողոտայով դէպի վար։ Ինքն իր վրայ հիացածի պէս՝ նա անցաւ, մերթ ոտքերին, մերթ դիմացը նայելով, լուրջ մէկ ժամուայ ճանապարհ, ապա թեքելով դէպի աջ, մտաւ վիլլանների շրջանը։ Այստեղ կանգ առաւ մի հոյակապ բնակարանի առաջ, որ կրում էր 165 թիւը։ Զիւնոպատ պարտէզի դուռը մեղմիւ յետ մղեց, արագօրէն բարձրացաւ սանդուղն կարճ քարէ աստիճաններով ու ձեռքի բռնակիով մուտքի դուռը բռնելով՝ ներս մտաւ...

Ցաջորդ առաւօտից սկսած, հակում էի այդ շէնքի վրայ. կէսօր էր, երբ յանկարծ բակում տեսայ մի երիտասարդ, որ զանգահարեց եւ դուռը բացուելուն պէս ներս մտաւ. այնքան արագ կատարուեց այդ, որ չըհասկացայ, թէ երբ եւ որ կողմից եկաւ։ Հասակով թիկունքից նման էր Էնվերին։ Անիծում էի անուշադրութիւնս։ Քիչ վարը, անկիւնում մէկը կանգնած նայում էր. այս ի՞նչ էր. արդեօք նա էլ լրտեսում էր ինձ... Գլուխը անկիւնից դուրս հանելուն պէս զարմանքով տեսայ որ Ցաղօրն է։

— Ի՞նչ էք անում այստեղ։

— Գնանք, կարող է դուրս գալ ու տեսնել ինձ։

— Ո՞վ։

— Իսմայիլ Հաղկըն։

— Նա՞ էր, որ քիչ առաջ ներս մտաւ։

— Ի հարկէ։

— Է՛հ, ես էլ կարծեցի, թէ Էնվերն է։

— Գնա՛նք, յանկարծ չնկատի մեզ։

ARAM webaram.com

ԱՐԼԻՆԻ Ա ՇԱՐԼՈՏԵՆԲՈՒՐԳ

Հարսանեկան պալատ Շարլոտենբուրգ, տար կը բացուի։

ARAM webaram.com

— Դուք գնացէք, այդ մարդը չի ճանաչում ինձ։

Գրեթէ մէկ ժամ սպասեցի, երբ դուրս եկաւ Հակ-կը եւ արագ քայլերով ուղղուեց դէպի վար։ Սաստիկ յուզուած էի. ինձ թւում էր, որ գնում է առաջնորդելու էնվերին. ափսոսում էի, որ զէնքը հետս չէր։ Հասաւ մեծ պողոտայի ծայրամասին, մտաւ Ուհլանտ փողոցը եւ թիւ 47 բնակարանից ներս անցաւ։ Կէս ժամից աւելի սպասեցի այստեղ, բայց ապարդիւն։ Զիւնում էր, ցուրտ էր, անօթի էի։ Ուղղուեցի դէպի ճաշարան, բայց ուղղութիւնները շփոթեցի եւ հարցուփորձով դժուարութեամբ գտայ «Թիրկարտէն» հիւրանոցը։ Իրիկնամուտ էր, երբ տուն դարձաւ եւ ընկերս.

— Ո՞ւր ես դու, ա՛յ տղայ։

Պատմեցի։ Աչքերը չռեց։

— Ուհլա՞նտ, ասում ես։

— Այո՛։

— Թիւ 47։

— Այո՛։

Ձեռքերը իրար խփեց, նստեց ու ծնօտը վերը ցցած ճառագայթող դէմքով նայեց։

— Ես տղամարդ չեմ, եթէ Թալէաթը չի բնակւում Ուհլանտ թիւ 47 բնակարանում։

— Ի՞նչպէս։

— Առաւօտեան ժամը 10ի մօտերը Ազմիի խանութը մտաւ այն բարձրահասակ մարդը, որին տեսել էի երեք օր առաջ։ Դուրս գալուն պէս ճանաչեցի. գիտե՞ս ում... Բէհաէտտին Շաքիրին։

Օրուայ յաջողութիւնը այնպէս թունդ էր հանել մեզ, որ ենթադրում էինք միաժամանակ ձեռք անցընել երկու գլխաւոր ոճրագործներին, էնվերին՝ վիլլաների շրջանում, Թալէաթին՝ Ուհլանտ. դուցէ երկուսին միասին, տեսակցութեան պահին, որ թւում էր ստոյգ. այլ կերպ ինչո՞վ բացատրել դէպքերի կապակցութիւ-

ARAM webaram.com

Հայաստանի հանրապետության Պերլինի դիւանագիտական ներկայացուցիչ՝ Զ. ԴՐԻՆՖԻԼՏ

Իր խորհրդականը՝ ԼԻՊԱՐԻՏ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ARAM webaram.com

նը։ Նեբս մտաւ Յաղօրը երկու նոր ընկերների հետ։ Դրանցից մէկը Վաղան՝ միջինից քիչ բարձր, նիհար-բակագմ մի երիտասարդ էր, սեփ - սեւ մազերը խնամքով յետ սանրած, խօսում էր ծանր, հանդարտ, առանց աւելորդաբանութիւնների, ժուժկալ նախադասութիւններով։ Դէմքը խոհուն արտայայտութիւն ունէր, մանաւանդ խելօք աչքերը։ Միւսը՝ Հայկն ուսանող էր. ճուտաձեւ, համակրելի դէմքի փայլն էր սիրուն ժպիտը, գուսպ արտաքինի տակ ծածկուած էր պայծառ մտքուր ու զարմանալիօրէն ընկերասէր հոգի։ Երկուսն էլ իրապէս էին խնդրին։

Յաղօրը յայտնեց լսած տեղեկութիւնները Հրաւիրից, որ առ ի զգուշութիւն, ուրիշ մէկի հետ չէր տեսնուում։ Թրքական ակումբում արտակարգ եռուզեռ կար. Հայասատանում Քեմալի ձեռք բերած յաջողութիւնները ոգեւորել էին բոլորին. անհնարին չէր նկատուում նորից մինչեւ Բաղու արշաւելու հաւանականութիւնը։ Էնվերը չէր եկել, բայց ամէն ժամ կարող էր գալ։ Համեմատելով, կշռադատելով օրուայ տեղեկութիւններն ու դիտողութիւնները, ժողովը որոշեց աշխուրջ հսկողութեան տակ առնել Ռէհլանան ու Էնվերի կնոջ բնակարանը։

Դիշեր էր, բայց ես դեռ աքնում էի թերի Ֆրանսերէնիս օգնութեամբ։ Ճամբորդական մի գրուցատրական բառարանի միջոցով, սովորել գերմաներէն անհրաժեշտ բառեր եւ արտայայտութիւններ։ Լուսարացին ինձ թուաց, թէ արդէն իւրացրել եմ բաւական բան։ Բայց երբ անկողին մտայ, մտքիս մէջ հարիւր մրնացել էին չորս – հինգ բառեր...

* * *

Շուրջ երկու շաբաթ հսկողութեան տակ պահեցինք Էնվերի կնոջ բնակարանը, բայց տիկինը այլեւս

ARAM webaram.com

չերեւաց։ Օրական մէկ երկու անգամ այդ չէնքից յայտնւում էր մէկ կամ միւս ապասուհին ու գնումներով վերադառնում։ Էնվերի հետքը մատնող որեւէ նախանշան չյայտնուեց. եղե՞լ էր Բերլինում, պիտի գա՞ր, անկարելի եղաւ ասուզել։ Մի օր միայն այստեղ կանգ առաւ մի ինքնաշարժ, որի միջից դուրս եկաւ Իսմայիլ Հակկին եւ մուշտակի մէջ փաթաթուած մի ուրիշը։ Դէպքը նորից իրար անցրեց մեզ. բայց երբ յաջորդ օրը նա յայտնուեց միայնակ, Ցազօրը հետաքրքրելով պարզեց, որ բժիշկ է. ինչ որ Վակներ։

Ծննդեան տօների նախօրեակին մենք մի խորհրդակցութիւն ունեցանք Լիպարիտ Նազարեանցի մօտ, որ խորհրդականի հանդամանքով աջակցում էր հայկական հիւպատոսարանի գործերը վարող հայ - գերմանացի Գրինֆիլտին։ Շէկ, գանգրահեր, կապուտաչեայ Նազարեանը աւելի շատ նման էր ծայրագոյն հիւսիսի անապատ սլաւոնի, քան հայի։ Մեր կարող ու փորձառու ընկերներից էր։ Նրա կարծիքով ապարդիւն էր Էնվերին Բերլինում սպասելը։

— Հազար ու մի շշուկներ են շրջում Էնվերի մասին, ասում էր նա. անցեալներում Թրքական մի թերթ գրում էր, որ Էնվեր փաշան սուսանակով Բերլին պիտի գար, բայց ճանապարհին իրր թէ սուսանակը ջարդուել է եւ նա հազիւ է ազատուել մահից։ Բախտախնդիրը ինքն է հնարում եւ տարածում այդ լուրերը, իր հետքը կորցնելու համար։ Կարծում եմ՝ այդպիսի լուրեր են նաեւ այստեղ՝ Թրքական շրջաններում եղած պրոյցները։

Նա թէեւ չէր գանում նաեւ անհաւանական, որ Էնվերը եղած լինի Բերլինում, բայց ոչ աւելի քան մէկ երկու օրով, իսկ այդ շատ քիչ ժամանակ էր նրան ձեռք անցընելու համար։

Խորհրդակցութիւնը վէճի բնոյթ առաց եւ եր-

ARAM webaram.com

կար տեւեց։ Բայց ինձ այլեւս չէր հետաքրքրում այդ։

Նոր էի հասկանում, որ ոճրագործների հետ միեւնոյն քաղաքում լինելը բաւական չէ. գործը տեւական ջանքերի եւ անխոնջ հետապնդումների պէտք ունի...

* * *

Դեկտեմբերի վերջերին հիւանդութիւնը գամեց ինձ անկողին։ Նորից մթագնում էին աչքերս եւ ունենում էի գլխապտոյտ։ Վերջին անգամ այդ հիւանդութիւնը կրկնուել էր Երեւանում, երեք - չորս տարի առաջ, իսկ ես կարծում էի, որ նա վաղուց անցած է։

Ոտքի ելնելուս պէս «Թիրկարտէն» հիւրանոցից փոխադրուեցի Աւուզբուրգեր փողոց թիւ 51 բնակարանը, ուր ապրում էր հայկական հիւպատոսարանի քարտուղար Երուանդ Աբէլեանը, 23 — 25 տարեկան մի աչքաբաց երիտասարդ։ Այն ժամանակ շատ դժուար էր Բերլինում ազատ սենեակ գտնել. Աբէլեանը յաջողել էր համոզել տանտիրուհուն՝ տրամադրելու ինձ հարեւան սենեակը։

Վաթսունամեայ տանտիրուհիս, տիկին Էլիզաբէթ Շթէլբաում, ամէն կերմանուհու նման, բծախնդիր տանտիկին էր եւ ուզում էր սենեակիս կարգ ու կանոնը եւ մաքրութիւնը, մինչեւ անգամ կօշիկներս մաքրելը, իր ձեռքով կատարել։ Բայց ես ոչ մի աշխատանք չէի թողնում նրան, ինչ որ նախապէս տարօրինակ թւում էր նրան, ապա հետզհետէ հաճելի։ Պարզում էի նրան, որ ես երիտասարդ եմ, ինքը ծեր, իսկ մեզ մօտ ընդունուած չէ, որ ծեր կանայք ծառայեն երիտասարդներին։ Նա գտնում էր որ թէեւ շատ յարգելի եւ բանաւոր է այդ սովորութիւնը, բայց պարտաւոր է իրը գործադրելու, որ վարձակալութեան պայմանը այդպէս է ու ես էլ դրամ եմ վճարում այդ բոլորին համար։ Եւ այդ մեծ մասամբ դէմքի ու ձեռքի շարժումներով՝

ARAM webaram.com

զրոյցները օգնում էին ինձ քիչ - քիչ գերմաներէն հասկանալ:

Արէլեանին յաճախ այցելում էր իր մօտ ընկեր Լեւոն Էֆթեանը, 21 տարեկան մի կենսուրախ ուսանող, որ ապրում էր քրոջ ու փեսայի հետ: Մի քանի օրուայ մէջ նրանք մտերմացան ինձ հետ: Բայց երկուսն էլ անտեղեակ էին խնդրին եւ կարծում էին, թէ եկել եմ ուսանելու: Սրտաբաց եւ նուիրուած ընկերներ էին: Նրանք դժգոհ էին, որ շատ քիչ ժամանակ եմ տրամադրում գերմաներէն սորվելու. նրանց համար այդ մի անհանդուրժելի բան էր, հայ ուսանողի համար անպատուաբեր եւ օր չէր անցնում, որ չարծարծէին այդ հարցը:

— Այդ ձեւով դու չես կարող համալսարանի երեւ տեսնել, բարեկամ, ասում էր Արէլեանը:

— Միայն սիրոյ միջոցով կարելի է լեզու սովորել. անհրաժեշտ է մի սիրուն ուսուցչուհի գտնել սրա համար. կատակում էր Էֆթեանը:

Ու մի երեկոյ, յանկարծ նրա հետ ինձ այցի եկաւ մի շատ սիրուն աղջիկ, որ պարապում էր լեզուի դասերով:

— Ամօթով չձգես ինձ, ասաց նա հայերէն՝ ներկայացնելով ինձ օրիորդին. ասել եմ, որ դու ես խընդրել գալու, որովհետեւ հիւանդ ես, եւ այլն:

Անակնկալի մատնուած՝ ստիպուած եղայ հաստատել այդ, թէեւ ոչ մի բաղձանք ունէի աւելի ընդարձակելու շրջանակս: Թարմ, գեղեցիկ, մանաւանդ պարզ ու բնական օրիորդ Լեոլա Բայլընզոնը՝ իր մանկութիւնը անցրել էր Մերձ - Բալտեան շրջանում եւ գիտէր ռուսերէն: Բայց ես գերմաներէն չէի հասկանում, իսկ Էֆթեանը՝ ռուսերէն, որով անհնար եղաւ ընդհանուր զրոյցը: Այս պայմաններում նախաձեռնութիւնը անցաւ Էֆթեանին. նա երկար խօսում էր

ARAM webaram.com

լեմ մասին օրիորդին. վերջինը լսում էր ու մտերմօրէն ժպտում։ Վերջապէս ստեղծուեց այնպէսի մի կացութիւն, որ մեծ անքաղաքավարութիւն պիտի լինէր մերժելը. Լիֆթեանը ինձ դրեց կատարուած իրողութեան առաջ եւ ես պայմանաւորուեցի շաբաթական երկու ժամ լեզուի դասերին յատկացնել օրիորդի մօտ։ Առաջին դասերս այնքան յաջող էին, որ յոյս ունէի կարճ ժամանակում այդ դժուարութիւնը յաղթահարել։

Կապանդի գիշերը հրաւիրուած էի Լիֆթեանի քրոջ մօտ, որ ամուսնու՝ պարոն Թէրզիպաշեանի հետ Օրանիէն փողոցում ունէին ծխավաճառի մի համեստ գործ։ Նրանց մօտ ծանօթացայ տարապիր հայրենակիցներից Գէորգ Գալուստեանի հետ, որ նոյն վայրում ունէր նպարավաճառի ճաշակաւոր մի խանութ։ Մնում էի զարմացած, թէ ի՛նչպէս այդ հայրենակիցները, կորցնելով ամէն բան ու ճողոպրելով մահից, հինգ տարուայ մէջ նորից կարողացել էին դիրք եւ բարեկեցիկ վիճակ ստեղծել։ Աւելի զարմանալին այն էր, որ կեանքի դժուարութիւնները չէին ճզմել նրանց մէջ մտաւոր-բարոյականի պահանջը. ամերիկեան կոլէջի նախկին ուսանող Գալուստեանը համալսարանականի չափ բան գիտէր, բոլորն էլ տիրում էին գերմաներէնի, մայրենի լեզուի պէս։

Դեռ երիտասարդ տէր եւ տիկին Թէրզիպաշեանները ոչինչ չէին խնայել կատարեալ դարձնելու կապանդը։ Սակայն բաւական էր օրուան կապակցութեամբ վերյիշել անցեալը, որպէսզի ուրախութեան սեղանը զգացուէր ծածկուած սեւ քողով։ Ո՛չ, մեր սերունդը նման առիթներով այլեւս չէր կարող սրտանց ուրախանալ...

Յաջորդ իրիկունը նոր էի տուն դարձել Ուհլանտի հսկումից, երբ ներս մտան Լիֆթեանն ու Արէլեանը։ Դէմքերից անմիջապէս հասկացայ, որ նոր դաւադրու-

ARAM webaram.com

թիւն էին նիւթել իմ դէմ։ Էֆթեանի դէմքին գծագրուած էր նուրբ եւ շարաճճի մի ժպիտ, իսկ Արէլեանը զննում էր ինձ հեռախուզող հայեացքով։

— Վաղուանից դու պէտք է մեզ հետ յաճախես պարի դասերի, ասաց Էֆթեանը ձեռքերը գոհունակութեամբ իրար շփելով։

— Ի՞նչ պարի դաս։

— Եւրոպական. եւ Արէլեանին գրկելով մի պառոյտ գործեց նրա հետ. ա՛յ, այսպէ՛ս...

— Խե՞նթ է՛ք, ի՞նչ է՛ք. ի՞նչ պարելու ժամանակ է։

— Ճիշդ ժամանակը հիմա է. գարնանամուտ, պար եւ սիրահարութիւն։

Ու դիմացս նստաւ անգործ մարդու անտարբերութեամբ։

— Է՛, ի՞նչպէս պիտի լինի այդ, ասացի ընդառաջելով տրամադրութիւններին։

— Ամենից առաջ պէտք է վրաղ գլուխդ մի քիչ կարգի դնես...

— Թող, եղբա՛յր, տղան նախ անհրաժեշտութիւնը հասկանայ, միջամտեց Արէլեանը, կարեւոր գործի բնոյթ տալով իր խօսքին. խնդիրը այն է, որ միայն դաս առնելով դու չես կարող գերմաներէն սովորել, մինչեւ հիմա սովորածդ «վաս իս տաս»ից այն կողմը չի անցել...

— Կ՚ուզէիք, որ երկու դասով գերմաներէն ճա՞ռ ասեմ։

— Ամսից աւելի է այստեղ ես, գոչեց Էֆթեանը՝ անցնելով յարձակողականի։

— Անհրաժեշտ է գերմանական միջավայրի հետ շփման մէջ մտնել, կենդանի խօսք լսել, որ ականջդ վարժուի, վրայ բերեց Արէլեանը։

— Ականջը խուլ է, միայն սրտի միջոցով կարող է սովորել։

ARAM webaram.com

— Այդ իր գործն է, թող բոլոր պայմանները գործի դնէ, միայն թէ սովորի։

— Ես պարող չեմ...

— Ի՞նչպէս թէ պարող չես, երբ արդէն արձանագրել ենք եւ այս ծանր պայմաններում դրամն էլ վճարել...

Յաջորդ օրը, իրիկուան դէմ «Գրիւնէվալդ» գրասավայրին յարակից փողոցներից մէկում, ինչ որ պարի պրոֆեսոր Ֆրիտրիխի դպրոցի մեծ սրահում խմբուած էին 60 — 70 երիտասարդներ։ Տղաները նման էին պահակապօրի ձիերի՝ առոյգ, կայտառ, կարմրաթուշ, ինքնավստահ դէմքերով։ Աղջիկները զմայլելի էին՝ ալեծածան սաթքուած կամ հիւսքով վար կախուած փարթամ վարսերով։ Խմբուած՝ բոլորն էլ գեղեցիկ էին, բայց ամէն մէկը առանձին, ի հարիկ ,պակասութիւն ունէր։

Ուշացել էինք. ընկերներս ժամանակ չունեցան ինձ ներկայացնելու պարոն Ֆրիտրիխին, գոհ էի, արդէն տաղտուկը պարուրել էր հոգիս։

Բայց կուրծքը օսլայած շապիկով, ֆրակով պարոն Ֆրիտրիխը, ճաղատ գլուխը չափից դուրս յետ նետած, օդի մէջ ինչ որ բաներ գոչեց եւ օձիքից դուրս քաշելով մետաքսէ թաշկինակը՝ սրբեց քրտնած ճակատը։ Ընկերներս նետուեցին դէպի աղջիկները եւ մէկ մէկ հատ գրկելով՝ անցան շարքերի մէջ։ Յանկարծ պարոն Ֆրիտրիխը սաղի նման մի զիլ ձայն հանեց. դաշնամուրը դղրդաց. պարողները արձանացած՝ սկսեցին պտուտքել...

Ու մտածում էի, թէ ի՞նչ լաւ կը լինէր, եթէ յանկարծ հրաման լինէր մի «գէոնտ» պարելու, օրինակ, թէկուզ «սխտոր ծեծեմ»ը, եւ կամ մեր սքանչելի «դատարանիս դաշտում»ը, որ այն երաշ օրերին վարում էր Իրինցանց Զոռոն, կարմիր թաշկինակը ճօճելով,

ARAM webaram.com

շուրջպարի գլուխն անցած։ Ցիշում եմ, թէ ի՛նչպէս, հակառակ անցած տարիքին, ցատկռտում էր նա կապիկի ճկունութեամբ՝ դաշտից կալ քաշելով, կալից սար հանելով շուրջպարի մէջ եղած հարսներին եւ աղջիկներին, որոնց վզկալները պարի մէջ խուլ մրմնջում էին ծնծղաների պէս։ Ինձ պատկերանում էին թոհուբոհի մէջ շարքից վար ընկնող ու լալով նորից շարքն անցնող փոքրերը, հարսների զուսպ ծիծաղը, աղջիկների հրավառ աչքերը։ Ու կարծես լսում էի Զոռոյի այծենման մկրկոցը. «Դատարանիս դաշտում դատը վերջացաւ, մեր հայ մանկանց սրտերը յոյսով լեցուեցան», որին անմիջապէս յաջորդում էր բազմազան ձայների ներդաշնակ աղաղակը.— ա՛խ այդ աղաղակը, որ մինչեւ հիմա ականջիս մէջ է.— Կռուեցէք, հայ տղերք, վառուած սրտերով, ճամբորդել սկսել եմք քնկերնեբով»։ Տէ՛ր Աստուած, ո՞րքան հմայիչ էր այդ ամէնը իր միամիտ պարզութեամբ...

Պարոն Ֆրիտրիխը չոր կոկորդով սագի նման հեծկլտաց. դաշնամուրը եղանակը փոխեց. դիտեմ, «պոլկա» է. զոյգերը համեստօրէն ուտոստում են աջ ու ձախ դառնալով։ Դահլիճի մէջտեղը կանգնած յոգնատանջ պարոն Ֆրիտրիխը ղեկավարում է նրանց կրկէսում ձիեր կրթողի պէս՝ յետ ու առաջ ընկնելով. նա մերթ ընդ մերթ դազազած վազում է դէպի թերացողները. դաժան է։ Պարողների դէմքերին դրոշմուած է ակնածանք եւ հանդիսաւոր լրջութիւն, նրանք չեն խօսում. ամէն մարդ լաւ ցուցադրութեամբ շահագրգռուած է ու կլանուած իր պարով։ Միայն չեմ հասկանում, թէ ինչո՛ւ բոլորն էլ չեն պարում։ Մանչերի, աղջիկների մի խումբ դոհանում է կանգնած տեղը գլխի շարժումներով եւ մտովի պարելով. ըստ երեւոյթին սրանք պատկանում են «վարի դասարան»ին։ Եւ իրօք, հէնց որ պարը վերջացաւ, յայտնուեցին ընկերներս եւ

ARAM webaram.com

ԹԱԼԷԱԹ և Գերմանիոյ արտաքին գործոց նախարար տոքթ. ՐԻՇԱՐՏ ՖՈՆ ԳԻԻԼՄԱՆ 1915ին

Թուրքիոյ խորհրդարանի նախագահ ԽԱԼԻԼ պէյ Պերլինի մէջ

Թուրքիոյ պատերազմական նախարար ԷՆՎԵՐ փաշա

ARAM webaram.com

ինձ ծանօթացրին մի աղջկայ հետ, որ գոհացաւ գլխի նազելի շարժումով եւ ապա մաղերի թանձր հիւսքը ձախ ուսից նետեց աջին: Պարոն Ֆրիտրիխի գործնական բացատրութիւններով մենք սկսեցինք մանկապարտէզային շարժումներ կատարել: Բայց հոգիս էլի մի քանի այդպիսի պատյաններ գործել, երբ յանկարծ աչքերս մթնեցին, գլուխս գարձաւ. վար չընկնելու համար ամբողջ փարեցի ընկերուհուս իրանին, բայց չեղաւ, լսեցի, որ ճչաց...

Այս հին Հիւանդութեան կրկնութիւնը ինձ մոռհոգեց: Բարեբախտաբար հետեւանքները այնպէս ծանրը չէին, ինչպէս Երեւանում եւ յաջորդ օրը արդէն ի վիճակի էի գնալ լեզուի դասին: Սակայն դասը սկսելուն պէս զգացի, որ եկել եմ. ոչինչ չէի հասկանում: Ուշադիր օր. Բայլընգոնը անմիջապէս նկատեց:

— Ի՞նչ է պատահել ձեզ:

— Մի քիչ տկար եմ:

— Ոչ, ես վաղուց եմ նկատել, որ դուք մի բանով միշտ զբաղուած էք:

— Այո, օրիորդ, ասացի ես՝ ճշմարտութեան պահանջի մղումով:

— Զէ՞ք կարող ասել ինձ, թէ ինչ է այդ:

— Ո՛չ...

Նա թեթեւապէս ցնցեց գլուխը, անտեղի մտքեր վանելու ձեւով:

— Այդ դէպքում պատմեցէք ինձ ձեր հայրենիքի մասին:

— Ես հայրենիք չունեմ, օրիորդ, ասացի խնդրելով ինձ արձակել...

Երկու օր յետոյ ի վիճակի էի հերթապահութիւնս վերսկսելու Ուհլանոում: Կէսօր էր, երբ յանկարծ այդտեղ նկատեցի ընկերոջս, որ դիմացի մայթով իջնում էր դէպի վար երկու մարդու յետեւից: Դրանցից

ARAM webaram.com

մէկին անմիջապէս ճանաչեցի, Բէհաէտտին Շաքիրն էր։ Սիրտս ուժգնօրէն բաբախում էր. միւսը ո՞վ էր...

— Դոկտոր Նազրմն է, շշնջաց ընկերս, երբ հասայ նրան։

— Ո՞րտեղից ես բերում։

— Ազմիի խանութից։

Անոնք մտան թիւ 47 բնակարանը։ Հասանք վարի անկիւնին։ Քառորդ ժամ չանցած մայթի վրայ յայտնուեց Բէհաէտտին Շաքիրը եւ ուղղուեց դէպի վեր։

— Հետամուտ եղիր, ես կը սպասեմ Նազրմին, ասաց ընկերս։

Շաքիրը գնում էր շատ արագ, իսկ ես դեռ թոյլ էի եւ այդ պահին յոգնած։ Թաղամասի կենտրոնական շրջանում, ուր Տաունցիհն Շտրասէ, Կանտ Շտրասէ եւ Կիւրֆիւրստէնտամ լայն պողոտաները կազմում են Շարլոտենբուրգի անցուդարձի մեծագոյն երակները, ես քիչ մնաց նրան կորցնէի, բայց վրայ հասայ։ Ուժասպառ էի, երբ Վիլհելմշտրասէի մէջ նա կանգ առաւ մի հոյակապ շէնքի առաջ, որի ճակատին պարզուած դրոշակը մատնում էր անգլիական դեսպանատունը։ Անցուդարձով զեռուն այդ շրջանում նրան սպասելը ոչ մի անպատեհութիւն չէր ներկայացնում։ Բայց յոգնութիւնից գլուխս ցաւում էր։ Մտածում էի, թէ ի՞նչ դաւեր է նիւթում արդեօք այնտեղ Շաքիրը եւ այստեղից ո՞ւր կարող է գնալ... Ցանկարծ նա դուրս եկաւ. դոպի պէս չորս կողմը նայեց ու գնաց։ Անիծապարտը շատ արագ էր քայլում, զարտուղի փողոցներով, կրակի պէս. կարծես գիտէր, որ հետապնդւում է. բայց այդ դէպքում ինչո՞ւ ինքնաշարժ չէ առնում։ Մտաւ Երուսալէմներ երկարաձիգ փողոցը ու դիւահարի պէս քայլեց։ Հասել էի գրեթէ փողոցի ծայրին, երբ յանկարծ աչքերիս իջաւ խաժամուժ, յենուեցի պատին, շէնքերը կարծես ցատկռտեցին, մթնեցին, ես ընկայ...

ARAM webaram.com

Ո՞րքան ժամանակ էր անցել, չգիտեմ։ Ինձ շրջապատել էր ամբոխը։ Մի մարդ հարցնում էր հացէս...

Այս անգամ ինձ համակեց յուսահատութիւն։ Վազան առաջնորդեց ինձ ջղային հիւանդութիւնների մասնագէտ պրոֆեսոր Կասիրէրի մօտ...

Անցաւ մի շաբաթ։ Քիչ շատ կազդուրուելով՝ խընդիր արի մաքրելու արդէն յայտնագործուած ռճրագործների՝ Ադմիի, Շաքիրի, Նազրմի հաշիւը։ Տարիներ շարունակ երազելով գլխաւոր ռճրագործի մասին, այժմ զգում էի, որ այլեւս ուժ չունիմ երկարելու։ Եւ վերջապէս, ի՞նչ տարբերութիւն կար նրանց եւ Թալէաթի միջեւ։ Ընկերս, սակայն, հակառակ էր։ Այդ առթիւ խորհրդակցութիւն ունեցանք, ուր որոշուեց հարցի լուծումը թողնել համապատասխան մարմնին, իսկ մինչ այդ շարունակել հետախուզութիւնը...

* * *

Փետրուարի երկրորդ կէսին մի օր Հրաւիրը յայտնեց, որ սպասւում է իթթիհատական առաջնորդների համագումար։ Այժմ բոլորս էլ լարուած աշխատում էինք այդ լուրը ստուգել, որովհետեւ այդ դէպքում տարակոյս չկար, որ Թալէաթը կը յայտնուէր Բերլինում կամ Հռոմում։ Երկու օր անցած, Հրաւիրի տեղեկութիւնը ստուգուեց. «Լաւարօ Ֆաշիստա»ն քրոնիկոնի մէջ տալիս էր նոյն լուրը։ Ընկերս նոյն օրը ձեռք բերեց իտալական վիզա, ի պահանջել հարկին Հռոմ մեկնելու համար։

Մնացածներս, վաղ առաւօտից աչալուրջ հսկողութեան տակ առինք Շարլոդէնբուրգից մեկնող բոլոր գնացքները։ Ենթադրւում էր, որ այդ թաղամասի կայարանից կը մեկնէին Բերլինի պատգամաւորները, որովհետեւ իթթիհատականների հաւաքատեղիները

ARAM webaram.com

գտնում էին Շարլոտենբուրգում։ Ինկերս պատրաստ էր ամէն վայրկեան մեկնելու, ենթադրում էր Թալէաթին գտնել Հռոմում ու հեռագրել ինձ։ Ես արդէն հեռախօսել էի օր. Բայլընզոնին, որ հիւանդութեան պատճառով մի ժամանակ պէտք է ընդհատեմ դասերս։ Լարել էինք մեր բոլոր ուժերը. գնացք չէինք բաց թողնում, անգամ մարդատար - ապրանքատարները։

Ամսուայ վերջերին մի երեկոյ, ճեպընթացի մեկնումից քիչ առաջ, կայարանի մայթի վրայ յայտնուեց մռայլ դէմքով թուրքը, որ կարծում էինք, թէ ապրում է Ուհլանտում իբրեւ ժամապրավայրի հսկիչ կամ վերակացու եւ անուանում էինք «Մռայլադէմ»։ Հինգ բոպէ վերջը կայարանում յայտնուեցին երեք թուրք ուսանողներ։ Ցաղօրի եւ Հայկոյի այդտեղ մնալը դժուարացաւ։ Գրեթէ միաժամանակ, ճամբորդական շքեղ պայուսակներով յայտնուեցին Բէհաէտտին Շաքիրը եւ ցանցառ մօրուքով, սերկեւիլի պէս դեղնած ու ծալծլուած դէմքով մի ուրիշը, որին առաջին անգամն էի տեսնում. նրանք հրաժեշտի ձեւով շարժեցին ձեռքերը դէպի ուսանողները ու մտան վագոն։ Ճեպընթացի մեկնումին հապա հինգ բոպէ մնացած կայարանի մայթում յայտնուեց յաղթանդամ, կլոր, փքուն դէմքով, լաւ հագնուած, ձեռնափայտով մի նոր մարդ։ Ողնաշարս ցնցուեց. շա՞տ նման էր Թալէաթին, պակասում էին միայն թաւ պեխերը եւ ֆէսը։ Գլուխը ծածկած էր կիսացիլինտր։ Նա արագ մօտեցաւ մայթի վրայ կանգնածներին։ Վերջիններները իրար անցան ու պատուի կեցող զինուորների պէս շտկուեցին։ Կարծես մէկը ինձ մղեց դէպի նրանց։ Առջեւ կանգնած ուսանողներից մէկը ոչն տուաւ, համբուրեց եւ ասաց.

— Արդէն ներսն են, փաշա...

«Նոր մարդը» անմիջապէս դարձաւ դէպի վագոնը ու ձեռնափայտով կիսաբաց պատուհանը ծեծեց։ Ո՞վ

ARAM webaram.com

յայտնուեց այնտեղ. չգիտեմ, բայց յետեւից լսեցի մի թնդիւն եւ հիւթեղ ձայն.

— Էրմէնիկէսիի ուսուցմիէսքն...

Ցուզումը բռնեց ինձ: Քիչ վարը անցայ, սպասման սրահի դրան մօտ կանգնած մարդկանց թիկունքը: Ցանկարծ յետեւից յայտնուեց ընկերս:

— Տեսա՞ր, կարծեմ նա է, հիմա կը մեկնի, հեռապիրս առանալուդ պէս հասիր...

Ու նեռուեց ճեպընթացը: Ակնթարթի մէջ գնացքը մեկնեց... Ու «նոր մարդը», ուսանողները եւ «մոայլադէմը» մնացին: Այնքան արագ կատարուեց այդ բոլորը, որ դժուարութեամբ էի հաշիւ տալիս ինձ: «Նոր մարդը» ինչ որ բան ասաց պատկառանքով իր դէմ կանգնածներին, ու բոլորը շարժուեցին դէպի դուռը՝ առաջ թողնելով նրան...

Ընկերոջս յանկարծական մեկնումը ինձ շատ մեծ շփոթութիւն պատճառեց: Գլուխս չէր գործում, բայց բնազդս ասում էր, թէ «նոր մարդը» նա էր՝ Թալէաթը...

Կրնկակոխ հետեւում էի նրան: Աստիճանների տակ անկիւնից յայտնուեցին Ցարօրը եւ Հայկոն:

— Ո՞վ է...

— Կարծում եմ նա է:

— Գլխաւո՞ր:

— Այո՛:

— Նման չէր...

— Փաշան անուանեցին նրան:

— Տարապրութեան մէջ ամէն շուն հիմա փաշա է...

Հապիւ քսան քայլ էր բաժանում ինձ խմբից: Նրանք գնում էին մէկ քայլ յետ մնալով «նոր մարդուց», մէկն ու մէկը հաւասարւում էր նրան, երբ նա խօսում էր. այդ պատիւը յաճախ վիճակւում էր «մոայլադէմ»ին:

ARAM webaram.com

Զրկիրի պէս հասա ուսերը եւ քառակուսի թիկունքը կասկած չէին թողնում, որ նա է, բայց դէմքը... այնքան էլ լաւ չէի յիշում նկարը...

Ցանկարծ ինձ դուայ ծանօթ շրջանում. գնում էինք դէպի «Թիրկարտէն» հիւրանոցը: Կենդանաբանական այգու մօտ նրանք կանգ առին: Երեք ուսանողները մինչեւ ոտքերը թէմանիւտ անելով՝ թրքական ակնածոտ բարեւով հրաժեշտ տուին նրանց: «Նոր մարդն» ու «մուայլադէմը», զանազան փողոցներից յամրաքայլ անցնելով, իջան Հարտենբերգ փողոցը եւ թիւ 4 բնակարանից ներս մտան...

Թիկունքից, միւս մայթից յայտնուեցին Ցաղօրը եւ Հայկոն: Մօտ մէկ ժամ հսկողութեան տակ պահեցինք այդ չէնքը՝ սպասելով «մուայլադէմին», բայց նա երեւան չեկաւ...

Երկնակայի նահանջից ի վեր հոգեկան այնպիսի մի խռովք չէի ապրել, ինչպէս այդ դիշեր: Ես գրեթէ համոզուած էի, որ «նոր մարդը» թալէաթն է, բայց ընկերներս ջլատում էին իմ այդ ներքին թելադրութիւնը՝ ստեղծելով կասկածներ: Մասամբ էլ իրաւունք ունէին նրանք: Հարիւրին հարիւր չէի կարող պնդել:

... Բերլինը քնած էր. դրսի լռութիւնը երբեմն խանգարւում էր սուրացող պատահական ինքնաշարժի աղմուկից: Ոռնաւ ցուրտը թափանցում էր ներսս ու ողնաշարս ցնցում: Անկողին մտայ: «Եթէ նա է ու յանկարծ փախցնենք», մտածում եմ՝ ինձ համակած թմբրութիւնը վանելով: Բայց ո՞ւր կարող էր փախչել «թէկուզ որեւէ այլ քաղաք»: Ինչո՞ւ եւ ի՞նչ առիթով. եթէ նա չմեկնեց Հռոմ, նշանակում է իր ներկայութիւնը աւելի կարեւոր է այստեղ եւ եթէ հրահանգեց, թէ «հայկականը չմոռնաք», ուրեմն գործ է վարում ու ու պէտք է մի որոշ տեղ լինի իբրեւ դեկավար առաջնորդ: Գործակիցները չեն կարող նրա յետեւից տեղից

ARAM webaram.com

տեղ քաշքշուել։ «Այո՛, բայց չէ՞ որ կարող է բնակարանը փոխել»։ Կարող է, եթէ կասկածի. տրիթ տբւի՞նք արդեօք. կարծեմ ոչ. զարմանալի է միայն, որ «մռայլադէմն» էլ մնաց այնտեղ... Մտածո՞ւմ եմ արդեօք, թէ զառանցում։ Ու իրը թէ, Աբաուլ եմ նըստած լեբան խոռոչում, բոցավառ խարոյկի շուրջ ընկերներով միասին։ Կրակի ցոլքերը խաղում են նրանց դէմքերին՝ փոփոխելով գոյները։ Ու Գէորգը պատմում է Խանասորի արշաւանքի մասին.—

— «Սրանից հազա՛ր հինգ հարի՛ւր տարի առաջ այս լեբան փէշերով անցան Վարդան զօրավարի ձիաւորները ու դաշտի մէջ բանակ դրին գետի ափին, ուր եւ սկսուեց Խանասորի արշաւանքը», ասում է նա ձեռքերը երկարած կրակին.

— «Ահա՛, տեսնո՞ւմ էք, Տէր Գրիգորը անցուդարձ է անում զօրքերի մէջ. լսո՞ւմ էք, պատարագ է», ասում է հայեացքը սեւեռելով դէպի դաշտ...

Այնտեղ, դաշտի մէջ փոփուք կայ. լսւում են ձայներ. երբեմն մի ձիչ երկարում է մարելով։ Մագերը փշերի պէս վեր - վեր են տնկւում, ատամները կատկատում. լեզուս չորանում ու ծանրանում է։

— «Վե՛ր կացէք, Տէր Գրիգորը գալիս է», ասում է Գէորգը՝ կանգնելով ու ձգուելով։ Բայց յանկարծ իմ առջեւ ցցւում է Մուրատը։

— Վա՜յ, պարոն Մուրատ, դո՞ւ ես, այդ ո՞րտեղից, չէ՞ որ դու մեռած էիր», ասում եմ ես։

— «Ի՞նչ մեռած, տնաշէն, քնած էի»։

Նրա կողքին, թիկունքին յայտնւում են ուրիշներ.

— «Եւ Աւետի՞սը, չէ՞ որ նա էլ»...

— «Աւետիսն էլ»։

— «Եւ Առաքե՞լը»...

— «Նա՛ էլ, նա՛ էլ, չե՞ս տեսնում, արար աշխարհ այստեղ է»...

ARAM webaram.com

Աշխարհը պարուրել է մութ ու խորունկ մի անդորրանք, որ իջնում է դանդաղ ձորերի մէջ, դաշտերում, մառաջումի պէս յղի, խորախորհուրդ շարժելով։ Ու ես այլևս ոչի՛նչ, ոչի՛նչ չեմ տեսնում։

— «Նայի՛ր այս կողմը», լսում եմ Մուրատի ձայնը։

Ու նայում եմ լեռն ի վար, մինչև հովիտների հեռաւոր տափաստանները, ուր խաւարի մէջ հազիւ նըշմարում եմ հազա՞ր – հազա՞ր մոխրաթաւալ զօրաբիւններ, ամպի նման ալիք - ալիք շարժուող անթիւ նիզակակիր ձիաւորներ...

Այն ժամանակ՝ Մուրատը գոչում է.— «Ելէ՛ք ձիերը թամբեցէք, չէ՞ք տեսնում, որ լուսացաւ»։ Ո՛չ, մենք չենք տեսնում, որ լուսացաւ։

— «Լուսացա՛ւ, լուսացա՛ւ», ասում է Մուրատը, ու դառնալով Աւետիսին՝ գոչում է.

— Ձիերը թամբեցէ՛ք, շեփորները հնչեցրէ՛ք, որ հազա՞ր հինգ հարիւր մղոնի վրայ բոլոր գիւղերի, քաղաքների, հանդերի, դաշտերի, ձորերի բնակչութիւնը՝ այր, կին, երեխայ՝ մինչև հազա՞ր հինգ հարիւր տարիք ունեցողները վեր կենան, առնեն բահ, բրիչ, գերանդի, ով ինչ կարող է, ու միանան բանակին»...

Յանկարծ դղրդում են լեռ ու ձոր. ամէն տեղ կարծես վիշապներ կան, որոնք գոռում են ու լռում։ Աղջամուղջի մէջ շարժում են մարմարէ լեռնակուտակ զանգուածները։ Կմախքացած ժողովուրդն է, որ թաւալգլոր գետերի պէս հոսում է. նրանց ոսկորները շռինդ – շռինդ հնչում են։ Սակրով, մուրճով, գերանդիով, բահերով զինուած՝ մրրիկի պէս վազում են։ Հեռուներում բազմութիւններ, մինչև մէջքը հողերի մէջ, շիրմները շալակած՝ բութ ակնարկով նայում են, ապա յանկարծ, հուր ժայթքելով փոս բիրերից՝ դուրս են ցատկում գերեզմանից ու վազվզում։ Պա-

ARAM webaram.com

առանքները հովին տուած, շղթայ - շղթայ ծաւալ-ւում են, ճարճատելով սլանում։ Բազմահազար կմախք-ների խաժամուժը արդէն քերում է Արաուլի փէշերը։ Զինափայլ ոսկորները ալիք - ալիք երերում են ու խուռներամ մոլեգնում։ Ատելութեան եւ անէծքի գոռ ու գոչ բռնել է երկինքը։— «Ցառա՛ջ», գոչում է Մուրատը ու նետուում սպիտակ ձիու մէջքին։ Եւ այրուձին աբշաւում է։ Սմբակների կայծակնահար դոփիւններից լեռը թնդում է, փայլակի պէս շանթահարող մերկ թրերը շառաչում։ Երկրաստան դղրդիւնով այժմ խլրտում է լեռը։ Բայց թոհ ու բոհը մնում է վար. թրերը վեր դէպի երկինք, լեռներից փախած եռակտուց անդրդներից էլ վեր...

Ցանկարծ ես մնում եմ առանց ձիու, միայն սանձով ու թամբով ու թէեւ սահում եմ ամպերի մէջ, բայց աւելի ու աւելի դէպի վար։ Ստորեւ արդէն նըշմարում եմ մոխրագոյն լեռների ծաւալուն շարքեր։ Գիտեմ ես այդ լեռները, Իսմերզատէի կիրճերն են։ Զգուշութեամբ վար եմ իջնում ու նստում։ Այստեղ Աբեւի ապրել են բուերի հպարտ սերունդներ, ու մէկ հատ միայն կմախք կայ, որի հոգին անդունդն է վեր մոլեգնող կարիճի պէս՝ կամաց - կամաց երերում է։

— «Դու ո՞վ ես»։

— «Ես՞ յիշում», ասում է նա՝ գետինը չանչերով զարմանալի արագութեամբ փորելով...

Ո՛չ, ես նրան չեմ յիշում։

«Ոգմեցի Սիմոնն եմ», ասում է նա ու ինքնիրեն ծածկում փոսի եզրերին կուտակուած հողերով։ Ակընթարթի մէջ դուրս է մնում միայն նրա գանկը, որ բիբերի մթագնած խոռոչներից անթարթ նայում է ինձ ու սեղմուած ատամների ծայրով անձայն ծիծաղում։ Զարհուրանքը համակում է ինձ։

ARAM webaram.com

— «Պարոն Սիմո՞ն», ճչում եմ ես ու սեփական ձայնից արթնանում...

* * *

Լուսացել էր: Պայմանաւորուել էինք, որ Հայկոն հակողութեան տակ պահի Ջեմալ - Ազմիի խանութը, Յաղօրը Ուհլանտի ժամադրավայրը, իսկ ես Հարդենբերգ թիւ 4 բնակարանը: Բայց դեռ շուտ էր: Վազան տունն էր, աճապարում էր ճիշդ ժամին հասնել պաշտօնատեղի: Մի քանի բառով պարզեցի նրան երէկուայ մեր հանդիպումը՝ խնդրելով երեկոյեան գալ Յաղօրի մօտ խորհրդակցութեան:

Այդտեղից հասայ «Թիրկարտէն» հիւրանոցը: Մտածում էի, որ եթէ ընկերս թողած լինի սենեակիս բանալին, պիտի ջարդեմ դուռը ու վերցնեմ նկարների ծրարը. ինձ անհրաժեշտ էր Թալէաթի նկարը, ես վստահ էի, որ եթէ քերեմ պեխերը՝ թողնելով քթի տակ մի - մի փոքրիկ շերտ ու Ֆէսի փոխարէն մեղանով նկարեմ եւրոպական գլխարկ, պիտի ունենամ երէկուայ «նոր մարդու» պատկերը:

Դուռը փակ էր. միջանցքով անցնում էր ծանօթ գարսոններից մէկը. ինձ տեսնելով՝ ձեռքի անձեռոցիկը օձապտոյտ շարժումով նետեց թեւին:

— Պարոնը մեկնել է:

— Ո՞ւր:

— Լայպցիգ:

— Ափսո՛ս, ճերմակեղէններս կ'ուզէի առնել:

— Բանալին իր մօտ է...

Հարտենբերգ փողոցի սկզբում, լայն պողոտայի խաչաձեւման շրջանում, այդ պահին բաւական անցուդարձ կար: Այդտեղ մի հարիւր քայլի վրայ, դիմացս էր թիւ չորս բնակարանը, որ շարքի տներից տարբերւում էր իր վիլլայաձեւ կառուցուածքով, փողոցին

ARAM webaram.com

նայող պատշգամով ու մայթը եզերող երկաթէ ձողերով ցանկապատուած երկաբաւուն ծաղկանոցով։ Քիչ անցած՝ այնտեղից դուրս ելաւ «մոայլադէմը» մի զամբիւղ ձեռքին ու գնաց խանութների ուղղութեամբ։ Ահա թէ ի՛նչ. ուրեմն այս խաւարած լուսինը ապրում է այստեղ եւ ոչ թէ Ուհլանում։ Ժամը 10ին մայթի վրայ յայտնուեց «նոր մարդը»։ Ինձ հետ պատահեց նոյն բանը, անկարող էի կանգնած մնալ. նա մաքնիսի պէս քաշում էր ինձ դէպի իրեն։ Մի պահ ուշադիր նայեց վեր - վար, կարծես ճշդելու, թէ որ ուղղութեամբ պիտի գնայ ու ձեռնափայտը անփութօրէն ճօճելով՝ հաստատուն քայլերով գնաց դէպի վար։ Անցնելով հարեւան երկու փողոցները՝ հասաւ Ուհլանտի թիւ 47 բնակարանին, հարեւանցի նայեց դէպի դիմացի մայթը, որով անցնում էի եւ ներս մտաւ։ Զարմանա՞լի էր, որ մինչեւ այդ նրան չէինք նկատել այստեղ...

Ցաղօրը նոր էր գալիս։

— Գիշերը չկարողացայ աչք փակել, ուշացայ։ Ի՞նչ ես անում այստեղ։

— Եկաւ։

— Ո՞վ։

— Նա...

— Ե՞րբ։

— Հիմա։ Հետեւիր միայն նրան։ Իրիկունը ժամը իններին քեզ մօտ պիտի գայ Վազան, խորհրդակցութիւն ունինք. յայտնիր այդ մասին Հայկոյին։

Վազեցի «Թիրկարտէն» հասկանալու, թէ արդեօք ընկերս չէ՞ր գարձել ժամը 9ի գնացքով։ Չկար... Դարձայ Հարտենբերգ։ Ժամը 11ին «նոր մարդը» տուն վերադարձաւ։ Ցաղօրը չերեւաց. Ուհլանտից դուրս գալը երեւի չէր տեսել...

— Այսօր Ուհլանտում ներս ու դուրս անողներից

ARAM webaram.com

հաշիւը չկար ու չգիտեմ ինչպէս վրիպեցի նրան, երեկոյեան ասաց Ցազօրը խիստ ճնշուած։

— Ովքե՞ր էին։

— Դոկտոր Նազրմիկ զատ բոլորն էլ նոր, անծանօթ մարդիկ էին։

— Նազրմը ե՞րբ մեկնեց։

— Քառորդ ժամ հազիւ մնաց ներսը։

— Երանի թէ հետամուտ լինէի նրան։

— Ի՞նչ իմանայի, թէ այսպէս պիտի լինէր...

Ներս մտան Վազան ու Հայկոն։ Պարզելով այն հիմքերը, որոնք հաստատում էին, թէ «նոր մարդը» Թալէաթն է, առաջարկեցի վերջ տալ խնդրին։ Լռութիւնը ընդհատեց Ցազօրը։

— Այդ հիմքերը գործի ձեռնարկելու համար թերի են. ճիշդ է, որ ձգձգելով կարող ենք փախցնել, բայց աւելի վատ կը լինի, եթէ սխալուենք։

— Ինչո՞ւ։

— Նախ՝ եթէ նա չէ, անհետ կը կորչի, ապա՝ եթէ մէկին տեղ միւսը սպանուի, կարծում եմ լաւ գործ կատարած չենք լինի։

— Ենթադրում ես, թէ այդ միւսը հօրեղբօրդ որդա՞ն է։

— Մի ջղայնանա, միջամտեց Վազան, թող վերջացնի։

— Ասելիքս կարճ է. գործը լաւ ընթացքի մէջ է, պէտք է շարունակել ու լիակատար համոզում ձեռք բերելուն պէս՝ վերջացնել։ Այդպիսի համոզում կարծեմ դեռ ոչ ոք ունի. ես գոնէ դեռ հնարաւորութիւն չունեցայ մի լաւ նայիլ դէմքին ու նկարի հետ համեմատել։ Այս պայմաններում ես չեմ կարող պատասխանատուութիւն ստանձնել։

— Քո կարծի՞քը, դարձաւ Վազան Հայկոյին։

— Նոյնը պիտի ասէի. մենք դեռ ժամանակ չու-

ARAM webaram.com

նեցանք պարզելու, թէ ո՞վքեր են ապրում Հարտեն-բերգի բնակարանում։

— Ի՞նչպէս պէտք է պարզենք։

— Թէկուզ կվարտում, չէ՞ Բերլինի բոլոր բնակիչները պարտաւոր են արձանագրուած լինել համապատասխան կվարտում։

— Միամտութիւն չէ՞ ենթադրել, որ Թալէաթը պէտք է արձանագրուած լինի սեփական անունով, ատացի ես։

— Կարող է պատահել, բայց դոնէ կը պարզուի, թէ ո՞վ է մեայլ դէմքով այն թուրքը, որ ապրում է նրա հետ միեւնոյն բնակարանում, ինչպէս նաեւ այն, թէ ուրիշ ովքե՞ր կան այդ տան մէջ. չէ՞ որ այդ բոլորը կարող են ամրապնդել կամ թուլցնել մեր ենթադրութիւնը։

— Հայկոն թէեւ խառնուածքով բանաստեղծ է, բայց խօսում է դիտնականի պէս, ասաց Վազան, լուրջ խնդիր է, մենք մարդասպաններ չենք. այդ տեսակէտով սխալմունքը կարող է ճակատագրական արժէք ստանալ։ Ես կապեր չունեմ այդ շրջանի կվարտում, իսկ ոստիկանութեան դիմելը վտանգաւոր է. ես այն կարծիքին եմ, որ Թալէաթը այստեղ վայելում է ոստիկանութեան հովանաւորութիւնը։ Սակայն կարելի է խնդիրը պարզել տան տիրոջ դիմելով։ Թոյլ տուէք ես վաղը այդ ուղղութեամբ մի փորձ կատարեմ։ Դու գոհ չե՞ս, գարձաւ նա ինձ։

— Միեւնոյնն է։

— Այդ չեղաւ. այո՛ կամ ո՛չ։

— Դէմ ոչինչ չունեմ, փորձիր։

— Ո՞ւմ է պատկանում այդ տունը։

— Ես ի՛նչ իմանամ...

Լլկուած ու ջարդուած էի. ծանր մի դիշեր անցրի։ Աստուծոյն թեթեւ ոտնաձայնից արթնացայ։ Առիթից

ARAM webaram.com

օգտուելով՝ մեկին Շուելբաումը կոշիկներս տանում էր մաքրելու։ Բարի կինը կարծում էր, թէ հիւանդ եմ. համոզում էր ինձ տանը մնալ, որովհետեւ շատ վատ եղանակ էր։ Եւ իրաւ ձիւնում էր, թեթեւ քամի կար։ Հասայ «Թիրկարտէն»։ Ընկերս չէր եկել...

Հարտենբերգ փողոցի վերի մասում այնքան քիչ անցուդարձ կար եւ այնպէս ցուրտ էր, որ ստիպուած էի շարժման մէջ լինել։ Ժամից աւելի զեգերեցի այդտեղ։ Մտածում էի, որ այս եղանակին դժուար թէ դուրս գայ «նոր մարդը», երբ յանկարծ յայտնուեց նա, ուշադիր զննեց վար, վեր ու շարժուեց դէպի վար։ Գնում էր արագ, վիզը թեք բռնած, դիմացից փչող ձիւնախառն քամուց պաշտպանուելով։ Հասու Ուհլանտ եւ ներս մտաւ։ Ցաղօր այստեղ էր, ճամբեցի Հարտենբերգ։ Կէս ժամ տեւեց «նոր մարդու» այդ օրուայ այցելութիւնը. նորից գնաց դէպի տուն, ուր Ցաղօրը տեսել էր նրան՝ դիմացից անցնելով նոյն մայթը։ Ինձ համար պարզուեց, որ այցերը կատարում էին ժամը 10 — 11ին։

Երեկոյեան Վապայի մօտ էի. քիչ առաջ Ջեմալ Աղայի խանութի դէմի արճտրան - ճաշարանում Հայկոյից իմացայ, որ Վապան յաջողել է տեսնել Հարտենբերգի տան տիրոջ եւ արդիւնքը բացասական է. այնտեղ ապրում է մի թուրք առեւտրական, որ պահում է արեւելեան արճտրան։ Այժմ Վապան պատմում էր.

— Տանտէրը մի պառաւ օրիորդ է, Գերտրուտապոլա անունով՝ շատախօս, ցրուած, բայց հաճելի զրուցակից. ապրում է իր երկրորդ տան մէջ, նոյն շրջանում, Ֆազանէ փողոցում։ Ներկայացայ իբրեւ զուիցերիական ապահովագրական ընկերութեան գործակալ, ինքրեցի ինձ վարձու տալ Հարտենբերգ թիւ 4 բնակարանը, որ իբր թէ, լաւծիս համաձայն, շուտով պիտի պարպուի։ Ասաց, թէ ինքը այդ մասին չգիտէ.

ARAM webaram.com

գործը փաստօրէն վարում է դռնապանը։ Բայց հաճելի լինելու ցանկութեամբ դարակից դուրս քաշեց թղթերի մի տրցակ ու փնտռեց պայմանագիրը։ Թիւրիմացութիւն է, ասաց, ըստ պայմանագրի դեռ երեք ամիս ժամանակ ունին։ Ներողութիւն խնդրելով ոտքի ելայ։

— «Նստեցէ՛ք, խնդրեմ», ասաց օրիորդը, «քանի՞ սենեակ է ձեզ պէտք»։

— Երկու – երեք սենեակ առայժմ կը բաւէ, մինչեւ այս չրջանում բնակարան գտնեմ։

— «Այդ դէպքում դուցէ դուք համաձայնութեան գաք վարձակալների հետ. տունը բաւական ընդարձակ է. մուտքից ներս մի փոքրիկ սրահ կայ, որի աջ կողմը բացւում են երկու մեծ եւ մէկ փոքր սենեակներ։ Ձախ կողմը մի ուրիշ փոքրիկ սենեակ կայ, մնացեալ սենեակներից մէկը հիւրանոց է, միւսը ճաշասենեակ։ Ես առարկութիւն չունեմ, եթէ առաջամասին սրահը երկու սենեակներով տրամադրեն ձեզ։ Կարծում եմ հաճոյքով պիտի դիջեն. իրենց տրամադրութեան տակ ունին ինը սենեակներից բաղկացած մի ամբողջ յարկարաժին եւ որքան յայտնի է ինձ, շատ քիչ կարասի։ Ապրում են այնտեղ ընդամէնը երեք մարդ. այդպիսի չքեղութիւն այժմ մեր նախարարներն անգամ չեն կարող թոյլ տալ իրենց»։

— Առիթից օգտուեցի, երբ օրիորդը երկար չունչ առաւ ասելու, պատմում էր Վաղան,— այո՛, օրիորդ, շնորհակալ եմ, բայց շատ դժուար է ամէն տեղ վարձակալ լինել. ո՞վ գիտէ ինչ մարդիկ են։

— «Ո՛չ, հանդարտ մարդիկ են, պարկեշտ թուրքեր. մէկը անանկացած նախկին վաճառական է, որ այժմ կարծեմ պահում է արեւելեան սրճարան, անունը... անունը... ո՛չ, մոռացել եմ. յաղթանդամ, դէր, այսպէս», օրիորդը օդով լեցրեց այտերը, «կարծես

ARAM webaram.com

բեռնակիր լինի. միւսը գոկտոր է, Թբաուհի անունով, բայց ինչ գոկտոր՝ չգիտեմ»...

— Իսկ երբո՞ւց

— «Ալի Սալիհ բէյի կինը. ա՛խ յիշեցի. Ալի Սալիհ բէյ, այսպէս է այն նախկին վաճառականը, այնպէ՞ս գեղեցիկ է, այնքա՞ն հրապուրիչ, համայիչ. կի՛նը», յարեց ժպտալով, «որ երբ հարցրի, թէ ո՞վ է, գռնապանը ասաց, թէ Ալի Սալիհ բէյի կինն է. այդպէս էլ մնաց մտքիս մէջ. ա՛խ, որքա՞ն գեղեցիկ է, ուղղակի արեւելքի դիցուհի: Բայց խօսք առէք, որ պիտի չսիրահարուէք», ասաց ցուցամատով մտերմօրէն ըստանալով, «սակայն, սպասեցէ՛ք, կարծեմ նրա հետ այդ մասին խօսելու պէտք պիտի չունենաք. այո՛, այո՛», յարեց պայմանագիրը նայելով. «Բնակարանը վարձել է թրքական դեսպանատան քարտուղար. Զիա բէյը, ահաւասիկ նա էլ ստորագրել է պայմանագիրը. ուրեմն նրան պէտք է դիմել»:

— Անօգուտ է, օրիորդ, ասացի:

— «Ինչո՞ւ»:

— Շատ պարզ է, օրիորդ, երբ թուրքը կին ունի, ոչ մի դէպքում իր յարկի տակ վարձակալ չի ընդունի. այդ դէմ է նրանց օրէնքին:

— «Ի՞նչ էք ասում. պատճա՞ռը»:

— Պատճառը... առիթ չտալ դայթակղութեան:

— «Հիանալի՛. չէ՞ք գտնում, որ լաւ օրէնք է»:

— Ի՞նչպէս ասեմ՝ է՛ւ լաւ է, է՛ւ վատ...

— «Ինչո՞ւ այդպէս»:

— Լաւ՝ քանի դեռ թուրք կանանց հեռու է պահում դայթակղութիւնից. վատ՝ երբ նրանց աչքերը նայում են դրսերը...: Ահա այսպէս, աւտրանց իր պատմութիւնը Վատան. հազիւ կարողացայ օձիքս ազատել այդ շատախօս կնոջից եւ այն էլ ուրիշ անգամ այցելելու խոստումով: Ի՞նչ է կարծիքդ:

ARAM webaram.com

— Կարծիքս այն է, որ Թալէաթը ապրում է այնտեղ Ալի Սալիհ բէյ կեղծ անունան տակ։

— Ինչպէ՞ս թէ...

— Այնպէս։

— Պարզիր միտքդ տեսնեմ։

— Պարզելու բան չկայ. Զիա բէյերը անանկ վաճառականների համար բնակարան չեն վարձում ու աւելի զեղեցիկ կին ես չգիտեմ քան Թալէաթի կինը։

— Ո՞րտեղից գիտես։

— Նկարը տեսել եմ։

Վազան խոր տարակուսանքի մէջ ընկաւ...

* * *

Առաւօտ կանուխ վազեցի «Թիրկարտէն». ընկերս եկել էր։

— Վերջապէ՞ս։

— Այստե՞ղ է, դուշեց։

— Այո՛։

— Տեղը գիտե՞ս։

— Ի հարկէ՛։

— Փառք Աստծոյ...

Մանրամասն պատմեցի ամէնը՝ սկսելով կայարանից մինչեւ վերջին պահը։ Լսում էր ադահութեամբ։

— Ժամը քանի՞ն է։

— Ինը քառորդ անց։

— Ելի՛ր գնանք, չուշանանք։

— Դեռ ժամանակ կայ. Թալէաթի նկարներից մէկ հատ տուր ինձ։

Դուրս հանեց գրպակից նկարների ծրարը, քրքրեց ու դուրս քաշելով Պոլսոյ ոստիկանապետ Պեարիի նկարը, հարցրեց.

— Սրա նման չէ՞ այդ «մռայլադէմ» կոչուածը։

ARAM webaram.com

— Ո՛չ, նրա նկարը չունինք, տո՛ւր Թալէաթի նկարը, ասացի բանալով դրչահատս։

— Հեռաքրքիր է. ասում ես «Ռըսուհի՛», ասաց նա յանձնելով ինձ Թալէաթի նկարը. ոչ լսել, ոչ կարդացել եմ այդպիսի մի անուն... ի՞նչ ես անում, այ տղայ...

— Պեխերը պիտի քերեմ...

Յանկարծ դուռը ծեծեցին։ Նկարը դրի ծոցս։ Սպասաւորն էր, որ մեկնեց մի նամակ՝ յայտնելով, թէ ստացուել է երկու օր առաջ։ Ծածկագիր էր Փարիզից։ Սրտմաշուք դանդաղութեամբ էին պարզւում խառնափնդոր թուանշանները. գրութիւնը վերաբերւում էր խնդրին։ Առաջին բառերն էին. «Եւրոպացի բարեկամից իմացանք, որ Թալէաթը»...

Վերջապէս պարզուեց բովանդակութիւնը. Թալէաթը գտնւում էր Ժընեւում. Փետրուարի սկզբներին այնտեղ ունեցել է տեսակցութիւն անգլիական մի դիւանագէտի հետ...

Ինձ չշմեցրեց այդ ծածկագիրը։

— Ե՞րբ է գրուած։

— Տասն օր առաջ։

— Շատ ժամանակ է...

— Այո՛, խնդիրն էլ այդ է։

— Ե՞րբ է այստեղ ստացուած։

— Սպասաւորը ճիշդ ասաց՝ երկու օր առաջ...

Տարակուսանքների մէջ մխրճուած, ամէն մէկս իր մտքերի հետ, դուրս ելանք։ Բայց արդէն ուշ էր։ Ոչ Ուհլանտում, ոչ Հարտեներերդ Յազօրը չկար։ Ընկերոջս ցոյց տուի Ալի Սալիհ բէյ կոչեցեալին բնակարանը։ Բաժանուեցինք՝ իրիկունը հանդիպելու պայմանով։

Հասնելով տուն, դուռը փակեցի եւ սկսեցի քերել Թալէաթի պեխերը. դանձ փորողի պէս անհամբեր էի, բայց չեղաւ. յանկարծ դուռը ծեծեցին՝ Լիֆթեանն էր։

ARAM webaram.com

— Եղբա՛յր, էս ո՞ւր ես, գոչեց ձեռքերը տարածելով, շուտ հագնուիր, գնա՛նք։

— Ո՞ւր։

— Գոյրս հրաւիրել է քեզ ճաշի։

— Այսօր լաւ չեմ, Լեւոն։

— Անկարելի է, առանց քեզ չեմ կարող տուն դնալ։

— Մի ուրիշ անգամ...

— Տօ, վե՛ր կաց, ասում եմ քեզ, այսօր ծննդեանս օրն է։

— Էլ ուրիշ օր չկա՞ր ծնուելու, ասացի դառնութիւնս սքողելով կատակով։

— Շո՛ւտ, շո՛ւտ, Աբէլեանն ու Գալուստեանը երեւի արդէն գնացել են, Գարեգինն էլ պիտի դայ։

— Գարեգինը ո՞վ է։

— Մշեցի Գարեգինը՝ չպիտե՞ս, նա քեզ ճանաչում է...

Երագի պէս յիշեցի Էրզրումից Երզնկա տանող ճանապարհը եւ մեր կատապան մշեցի Գարեգինին։

— Ի՞նչ է անում այստեղ։

— Ինչ պիտի անի. գիշեր – ցերեկ մտածումն ու գրոյցը Ջարդերն են, գրեթէ խենթացել է...

Ճաշասենեակում նստած էին Թէրզիպաշեանները եւ Գարեգինը։ Տիկինը բողոքեց, որ իրենց մոռացել եմ։

— Եա՛, բացագանչեց Գարեգինը՝ արջի պէս տանելով ինձ հզօր բազուկների մէջ։

Դժբախտ օրերը այդ պահին թուացին ցանկալի անցեալ։ Աշխարհը չափշփել էր։ Այժմ Բերլինի արուարձաններում կատարում էր սեւ աշխատանք ինչ որ առաղձի գործարանում։ Ըստ երեւոյթին, պատմում էր դէպքերից. գոհացաւ մէկ երկու հարցումներով Ցամանի, Սահակի մասին ու դարձաւ նրանց.

— Աղբօրս ասեմ, լոյսը չբացուած կծիկը դրի...

ARAM webaram.com

— Իսկ մա՞յրդ, քոյրե՞րդ, հետաքրքրութեամբ հարցրեց տիկին Քրիստինէն։

— Մայրս, քոյրերս իրենց պզտիկներով Մուշի հովիտէն տարագրուածներուն մէջ կը գտնուէին, եւ թէ իմացայ անոնց քաշածները...

Եւ Գարեգինը պատմում է հարազատների զողգոթան աղեկէզ մանրամասնութեամբ՝ ամէն տեսակ նրզուվքներ թափելով Թալէաթի գլխին։ Գապազած, ջղային անհամբերութեամբ սպասում էի, թէ ե՞րբ պիտի վերջանայ այդ պատմութիւնը, որ յիշեցնում էր հարազատներիս վիճակուած բախտը։

— Բոլոր երեք քոյրերս կ՝առեւանգուին դեռ Եփրատին չհասած. պզտիկները կը մնան մօտս մօտ։ Իրիկուան դէմ Սուրիկը կը մեռնի. մայրս տեսնելով, որ անկարող է տանիլ պզտիկները, կը պահուրտի ցորենի արտերուն մէջ։ Հոս ուրիշ պահուրտածներուն հետ գիշերը կ՝անցընեն։ Առտուն զանոնք կը նկատեն, արտերը կը վառեն։ Դուրս ելածները կը քշեն դէպի Շէխլանի գոմերը, ուր խմբուած կ՝ըլլան ուրիշներ։ Առանց կ՝ըսեն, թէ Թալէաթը ձեզի կեանք շնորհած է, բայց իսլամ պիտի ըլլաք...

— Զգէ՛, Աստուածդ սիրես, այդ հին պատմութիւնները, դարձայ Գարեգինին։

— Նա կարծես մտրակի հարուած ստացաւ. աչքերը դարձան ու չորութեամբ դոչեց.

— Ինչո՞ւ, ջղերո՞ւդ դպան։

— Այնքան լսեցինք, որ էլ սիրտ չմնաց, Թալէաթ, Թալէաթ կրկնելով մեր ցաւը չի բուժուի։

— Ապա ի՞նչ կ՝ուզէիր, արձա՞ն կանգնեցնենք չուներին։

— Ցանցաւորը մենք ենք եւ ոչ թէ Թալէաթը, որ Ատանայի ջարդից յետոյ հաւատ ընծայեցինք նրան։

— Տօ ի՞նչ ըսիր, վո՛յ ես քու Թալէաթի հօր հո-

ARAM webaram.com

գին ու յանկարծ գոռաց նա բռունցքը իջնցնելով սեղանին։

— Լռէ՛, անպատկառ, գոչեց Էֆթեանը։

— Տօ՛, ես էտոր հայ բոդին. Թալէաթը կը պաշտպանէ...

Վայրկեանի մէջ այնպիսի իրարանցում առեղծուեց, որ անիծում էի գալս։ Ներս մտան Գալուստեանն ու Արէլեանը ու շուարած մնացին շեմքում։ Գարեգինը իրեն բոլորովին կորցրած՝ վեր ցատկեց ու յափշտակելով գլխարկը Էֆթեանի ձեռքից, դուրս թռաւ գոչելով.

— Ես առանկ հայու հետ սեղան չեմ նստիր, տիկին Քրիստինէ, ներեցէք...

— Դողում էի՝ լալու աստիճան ապշուած այդ անմիտ, անակնկալ միջադէպից։

— Խենթ է, կարեւորութիւն մի տուք, ասում էր Գալստեանը...

Էֆթեանի, Արէլեանի, Թէրզիպաշեանների ջանքերը տրամադրութիւն ստեղծելու՝ չէին յաջողւում։ Ճաշը վերջանալուն պէս ներողութիւն խնդրեցի տիկնոջից եւ մեկնեցի։

Տուն հասնելով՝ սկսեցի քերել Թալէաթի պեխերը։ Ստոյգ նմանութիւնը Ալի Սալիհ բէյի հետ ինձ ցնցեց. իսկ երբ մատիտով ֆէսի վրան ուրուագծեցի եւրոպական գլխարկ, ոչ մի տարբերութիւն չմնաց...

Նկարը առած վազեցի «Թիրկարտէն»։ Ընկերս նոր էր վերադարձել ճաշարանից ու քննում էր թերթերի ընթացիկ լուրերը։ Խելայեղօրէն բացագանչեցի.

— Նա է, հաւատացի՛ր, ահաւասիկ, եթէ յիշում ես կայարանից...

Դիտեց նկարը հարեւանցի։

— Աժմ ես էլ կասկած չունիմ. թէեւ մի քիչ շփոթութիւն պատճառեց ծածկոցները, բայց հասկացայ...

ARAM webaram.com

ARAM webaram.com

[illegible]

1. Թալաթ. Հայոց ցեղասպանությունը [illegible]
2. Հրանտ Դինքի [illegible]
3. Ասիայի [illegible]
4. Ալեքսանդր Թամամշյան [illegible]
5. Տոքթ. Միհրդատ [illegible]
6. Հայոց [illegible]
7. Մեհրիբան [illegible]
8. Մարդասիրական [illegible]
9. Հայոց [illegible]
10. Հիսուսի [illegible]
11. Բահրի. Զգիտցող [illegible]
12. Կարելի եղած չափով [illegible]
13. Միթիաս [illegible]
14. Ալեքսանդր [illegible]

Ազգամարտիկ յուրի յիշատակը

Հայոց ազգամարտիկ Յուրի Գրիգորյանի [illegible] 1918) [illegible] Գրիգորի Գրիգորյան [illegible]

Լեգեոնական [illegible]

[illegible]

ARAM webaram.com

— Ինչպէ՞ս։

— Ցաղօրից իմացայ, որ այսօր էլ այդ Ալի Սալիհ բէյը ճիշդ ժամը տասին այցելել է Ուհլանտի ժամադրավայրը, իսկ դու ասում էիր, որ մինչեւ կայարանում յայտնուելը նա չի եղել այնտեղ։

— Այո՛։

— Նշանակում է այդ ժամանակ եղել է ժընեւում. ուր եւ տեսակցել է անգլիական դիւանագէտի հետ. ծածկագրի թուականն էլ հաստատում է այս հեռեւութիւնը։

— Ուրե՞մն...

— Պէտք է վերջացնենք. միայն թէ նախ քան այդ, պէտք է մի անգամ էլ տեսնենք նրան։

— Վաղը...

— Այո՛, բայց պէտք է շատ զգոյշ լինել. Բերլինը նորից անհանգիստ է, աննշան պատահականութիւնը կարող է ամէն բան փճացնել, փողոցներում հետապնդելը չիտակ չէ. մինչեւ հիմա պէտք էր, որ այդ շրջանում մի սենեակ գտնուէր։

— Շատ լաւ պիտի լինէր այդ, բայց այժմ, երբ խնդիրը որոշ է...

— Դժուարը հիմա է. այլեւս քո այնտեղ երեւալը գործի համար օգտակար չէ. Ցաղօրին էլ Ուհլանտում պէտք է փոխարինել Հայկոյով, միշտ միեւնոյն մարդու երեւումը կարող է նկատուել։ Ինչ որ է, հիմա կը գան ընկերները, կը խօսինք։

— Նորից խորհրդակցութի՞ւն։

— Այո՛, անհրաժեշտ է վերջնական որոշում տալ։

Իրար յետեւից յայտնուեցին Ցաղօրը, Հայկոն, Վաղան։ Սկսուեց խորհրդակցութիւնը հետագօտութեան վերջ տալու եւ գրական գործի անցնելու մասին։ Կարծես անակնկալ եղաւ այդ՝ ընկերների համար. որքան դիւրութեամբ էին դիրք ճշդում նախնական աշխա-

ARAM webaram.com

տանքների ժամանակ, այնքան այժմ դժուարանում էին որոշ կարծիք յայտնելու։ Ըստ Վազայի, տուեալները ակնբախ էին, բայց գործի ձեռնարկելու համար՝ անբաւարար։ Եւ սակայն չէր կարելի որոշակի ասել, թէ ի՞նչ լրացումներ են անհրաժեշտ։ Հայկոն կարծում էր, որ անհրաժեշտ է սպասել, Ալի Սալիհ բէյի կնոջ տեսնելու առիթ ունենալ ու կնոջ նկարի հիմքով ամուսնութիւնը հաստատել։ Ցազօրը գրեթէ համոզուած էր, որ հետապնդուողը Թալէաթն է, բայց այդ խղճի խնդիրը համարելով՝ չէր ուզում պատասխանատուութիւն ստանձնել։

Ի վերջոյ, որոշուեց մի սենեակ գտնել Հարտենբերգ թիւ չորս բնակարանի շրջանում թէ հետախուզութիւնը շարունակելու եւ թէ գործը յաջողութեամբ գլուխ հանելու համար։ Թէեւ այն չէր՝ ինչ սպասում էի, բայց լռեցի։

Մարտի 2ն էր, կիրակի, իրիկնամուտ։ Ցազօրը անմիջապէս գործի անցաւ։ Եռանդուն, աշքաբաց, բարեխիղճ եւ ամէն կազմակերպչական աշխատանքի համար անփոխարինելի մէկն էր նա։ Խորհրդակցութիւնից հապիւ անցել էր երկու երեք ժամ եւ ուզում էինք դուրս գալ ընթրելու, երբ նա շնչահատ ներս մտաւ. յայտնեց թէ Հարտենբերգ թիւ 4 բնակարանի դիմաց թիւ 37 բնակարանում վարձել էր մի սենեակ, որի պատուհանը նայում էր փողոցին։ Սենեակը պարպւում էր երեք օրից. փոխադրուել կարելի էր Մարտ 5ին։

* * *

Առաւօտեան ուշ էի. Հարտենբերգում պիտի հակէր ընկերս, Ազմիի խանութի վրայ՝ Ցազօրը։ Ուհլանում նրա փոխարէն՝ Հայկոն, որ ընկերոջս հետ պիտի տեսնուէր կէսօրին։ Բայց ինչպէ՞ս սպասնել ժամանակը մինչեւ այդ։ Մաքրեցի, կարգաւորեցի սեն-

ARAM webaram.com

եակս եւ հակառակ տիկին Շառլբաումի սրտունչներին, լուացի միջանցքը։ Գործատեղից անժամանակ տուն դարձաւ Արէլեանը՝ յայտնելով տխուր նորութիւններ. Հայաստանում ծայր էր տուել քաղաքացիական պատերազմ. թուրքերը դեռ մնում էին Ալեքսանդրապոլում. նրանց ենթակայ Կարսի շրջանում տեղի էին ունենալ գնդակահարութիւններ եւ Զաքուռի շրջանում՝ նոր ջարդեր...

Պակասը լրացրեց օրուայ միւս կէսի անյաջողութիւնը։ Ալի Սալիհ բէյ կոչեցեալը չէր երեւացել այդ օրը. ընկերս նրան չէր տեսել։ Ուշանում այցելողներից Հայկոն տարբերել էր միայն Բէհաէտտին Շաքիրին։ Ի՞նչ էր նշանակում սրա վերադարձը Հռոմից եւ տատջինի բացակայութիւնը այդ օրը։ Բոլոր հաւանականութիւններն ու ենթադրութիւնները ջրւում էին եւ մնում էր միայն կասկածը, որ հետապնդողները հասնեն առել, բայց այս դէպքում դառնում էր տարակուսելի, որ Հայկոյի տեսածը Շաքիրն է եղել։ Ամէն պարագայի տակ բանաւոր եւ շրջահայեաց վարմունք պիտի լինէր՝ մէկ – երկու օր չերեւալ Հարտենբերգի շրջանում. արդէն դրա կարիքը ընկնում էր նոր բնակարան փոխադրուելուս պէս։

Յաջորդ օրը երեկոյեան մտայ Արէլեանի մօտ՝ խնդրելով յայտնել տիկին Շառլբաումին, որ պէտք է փոխադրուիմ նոր բնակարան.— Լաւ չեմ. հիւանդութիւնս գնալով բարդանում է, ընդհանուր թուլութիւն, գլխապտոյտ. հիմա էլ կուրութեան նախանշաններ. երէկ նորից եղայ պրոֆեսոր Կասիրէրի մօտ. ամէն բան ջղերի ծանր քայքայման հետեւանք է, ասում է. կազի ճրագը խիստ վնաս է ինձ. եւ իրօք գիշերները մէկ տող չեմ կարողանում կարդալ. հիմա ստիպուեցի վարձել էլեկտրական լոյսով սենեակ։ Այս ամսուան վարձը տիկին Շառլբաումին վճարել եմ. ամէն տեսա-

ARAM webaram.com

կէտով գոհ եմ նրանից եւ պիտի մնայի, եթէ այս պարագան չլինէր։ Խնդրում եմ պարզել այս ամէնը տիկնոջ, ինձ համար դժուար է...

Միւս օրը երեկոյեան դէմ Ցազօրի ընկերակցութեամբ փոխադրուեցի՝ խոստանալով այցելել այդ առթիւ թունդ եւաց բարի տիկին Շուելբաումին։

Նոր տանտիրուհիս, դեռ երիտասարդ որբեւայրի տիկին Դիմանը, ըստ երեւոյթին, յետ չէր մնում նրանից իր առանին բարեմասնութիւններով։ Ամէն ինչ մաքուր, ճաշակաւոր. սպասուհի ունէր, բնակարանը խաղաղ էր եւ թողնում վանքի տպաւորութիւն։ Մուտքը բակից էր, համեստ շէնքերի յատուկ երկաթաձող մի դռնից, որ բացւում գոցւում էր պտուտակաձեւ լեղուակով։ Սենեակս օդասուն էր, լայն ու մեծ պատուհանը ծածկուած էր շքեղ ժանեկազարդ վարագոյրով։ Մահճակալի մօտ սեղանանման դարակ, գրասեղան, քազկաթոռ, պահարան, աթոռներ եւ այլն։ Լայն փողոցի միւս մայթին, դէմուդէմ, ցցուած էր Սալիհ բէյի բընակարանը։ Պատուհանների թանձր վարագոյրները հաղիւ զատում էին կենտրոնի բացուածքից՝ գոյացնելով սեղաձեւ ճեղքուածք։ Այդ պահին փողոցով բաւական անցուդարձ կար. բանուորներ, գործաւորներ դառնում էին աշխատանքից։ Գրեթէ բոլորն էլ աշխատում էին պարապ չանցընել ժամանակը. ոմանք քայլելիս կարդում էին օրաթերթեր, ոմանք ուտում էին...

Գիշերը քուն չկար, հակընդդէմ զգաքմունքների տարածութիւն, միւս կողմից փոթորկում էր ինձ այն իրողութիւնը, որ արդէն հասել եմ նպատակիս շեմքին եւ հրէշից ինձ բաժանում է ընդամէնը 25 մէթրի մի տարածութիւն, միւս կողմից փոթորկում էր ինձ այն մտատանջութիւնը, թէ արդեօք պիտի յաջողի՞մ։ Դիմացի շէնքի ճրագը մինչեւ ուշ գիշեր վառ մնաց։

Առտուն կանուխ կարգի դրի սենեակս ու տեղ բրա-

ARAM webaram.com

նելով դրասեղանի մօտ՝ ձեւի համար դրի առջեւս գեր-մաններէնի դասագիրքը։ Գարնանամուտի մի պարզ օր էր, արեւի ճառագայթները խաղում էին դիմացի շէնքի պատուհաններին։ Դուռը ծեծեցին. ներս մտաւ աղախինը թէյով եւ հաց ու պանիրով։ Հապիւ անցաւ կէս ժամ ու յակարծ մայթի վրայ յայտնուեց Ալի Սալիհ բէյ կոչեցեալը։ Այդպէս շուտ. անակնկալ էր։ Ժամը ինը չկար. նա, ըստ սովորութեան, վեր – վար նայեց. թեւի տակ թղթապանակ ունէր։ Անմիջապէս գէնքս խլեցի ու դուրս ելայ. երբ հասայ մուտքի դրան, նա գրեթէ դէմս էր. գնում էր դիմացի մայթի հակառակ ուղղութեամբ, դէպի վեր, Հարտենբերգի սկզբնաւորութեան շրջանը. այս էլ անսովոր էր։ Վայրկենապէս դուռը քաշեցի, բայց չբացուեց. փորձեցի ուժգին. նոյն բանը։ Հասկացայ, որ նախապէս պէտք է դարձնեմ պտուտակը. չդարձաւ։ Գլուխս կորցրած՝ ջախջախելու աստիճան քաշքշեցի դուռը. անօգուտ։ Ինձ համակեց անորակելի յուսահատութիւն։ Վազեցի աղախնի մօտ. դուռը կողպուած չէր։ Հասաւ եւ աղախինը, բայց դուռը չէր բացւում...

Տասը բոպէից աւելի ժամանակ անցաւ, մինչեւ յաջողուեց անասելի ջանքերով դարձնել պտուտակը ու դուրս գալ։ Բայց էլ ո՞ւր. որսի հետքն անգամ չկար...

Մի պահ շուարած դիտելով չորս կողմս՝ բռնեցի կենդանաբանական այգու ուղղութիւնը։ Անիմաստ էր, կանգ առայ։ Յանկարծ մտածեցի, որ զուգահեռ փողոցներով կարող էր գնալ Ուհլանտ։ Հասայ այստեղ. կէս ժամից աւելի սպասեցի. ներս ու դուրս անող չկար, այնինչ ժամանակն էր։ Անցաւ եւս կէս ժամ. ուղեղս գործելուց դադարեց, մի՞թէ փախցրի...

Չէ՞ր կարող արդեօք ոճրագործը մտած լինել Ագմիի խանութը։ Հրապարակն անցայ, մտայ խանութ. մէկ քայլի վրայ առաջին անգամ տեսայ այս միւս հրէ-

ARAM webaram.com

չին, գլուխն անգամ չշարժեց, լրագիր էր կարդում։ Բուռն մղում ունեցայ գնդակը գամելու ճակատին։ Ցեռուի գորգերով ծածկուած անցքից յայտնուեց տղան. մէկ տուփ ծխախոտ գնելով դուրս ելայ։

Կէսօր էր. չգիտէի ինչ անել։ Բազմաթիւ ոստիկաններ կային ամէն տեղ։ Երջան անելով՝ եկայ ճաշարան։ Ընկերս, նստած իր սովորական տեղը, պրպտում էր թերթերը։ Ցայտնեցի նրան իմ կասկածները. յանկարծ որսը փախած լինի՞։

Նստած երկու կողմերը՝ ՍԵՊՈՒՀ ԵՒ ԱՐՄԷՆ ԳԱՐՕ

Բարձր նստած՝ ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆ

(Ամերիկայի մէջ)

Այս հինգ - վեց օրուան մէջ ժամը 10ից առաջ տնից երբեք դուրս չելաւ. գնում էր Ուհլանտ եւ 11ին տուն դառնում։ Այսօր դուրս ելաւ 9ից առաջ, թղթապանակով։ Նա կարող էր անշուշտ որեւէ տեղ էլ տեսակցութեան գնալ, օրինակ, անգլիական դեսպանատունը։ Ամէն բան կարող էր պատահել։

Վերադարձայ տուն. մի արհեստաւոր քակել է դուռը եւ նորոգել պատուհակը...

ARAM webaram.com

Ը. ԳԼՈՒԽ

ՄԱՅԹԻ ՎՐԱՅ ԸՆԿԱՒ ՀՐԷՇԸ

Առաւօտեան լոյսը բացուելուն արդէն նստած էի գրասեղանիս առջեւ. սենեակս կարգաւորել էի, որ տրիթ չունենան ներս գալու: Դասագիրքս բացած՝ դիտում էի դիմացի շէնքը, շուրջ 25 մէթր լայնութեամբ փողոցը: Դեռ կանուխ էր. բանուոր, արհեստաւոր, գործակատար ճամպարում էին աշխատանքի: Երբեմն ազմուկով անցնում էին ապրանքատար ինքնաշարժեր: Պատուհանիս վարագոյրի միացման նեղ ճեղքից աշխատում էի մի բան տեսնել դիմացի շէնքից ներս, բայց ապարդիւն: Դուռը ծեծեցին. ներս մտաւ ադախինը թէյով. թիկունքում յայտնուեց տիկին Դիմանը: Այնպէ՞ս չփոթուեցի, որ կարծես բռնուած էի ծանր յանցանքի վրայ: Տիկինը ձգտում էր աւելի երիտասարդ եւ հաճելի լինել, քան փաստօրէն կարող էր: Ժպտախառն դրոյցից ոչինչ չեմ հասկանում: Ձեռքի շարժումներից կռահում եմ, որ խնդիրը դառնում է դրան աւրուած պատուհանի շուրջ, որ այժմ նորոգուած ու շտկուած է. տալիս է ինձ բանալի, որի համար ոչինչ պէտք չէ վճարեմ:

— Դանիկէշէօֆ, ասացի կարճ կապելու համար...

Եղաւ ժամը 10, 11. դիմացի շէնքից ոչ ոք չյայտնուեց: Կէսօրին ընկերոջից իմացայ մի ուշացած նորութիւն. Փարիզից ստացուել էր մի ծածկագիր գրութիւն. Պոլսից Փարիզ յայտնել էին, որ Թալէաթը ապ-

ARAM webaram.com

բում է Բելլինում, Հարեանները թիւ 4 բնակարանում, Ալի Սալիհ բէյ կեղծ անուան տակ։ Շատ կարեւոր նոր-թիւն էր այս...

Սենեակիս մէջ ժամերով անշարժ նստած դիտում էի դիմացի շէնքը։ Ճրագ չվառուեց այնտեղ...

Առաւօտեան անկողնից ելայ այնպէս ջարդուած, որ կարծես ամբողջ գիշերը քայլել էի. հաբբուխ, կոտրտուք, տաքութիւն. անհանոյ էր։ Անհամբերութեամբ սպասում էի ժամի 10 — 11ին։ Ոչ ոք եւ ոչինչ։ Անգամ կասկածելի էր, թէ արդեօք բնակութիւն կա՞յ դիմացի շէնքում։

Կէսօրին, ընկերս, Ազմի խանութին նայող պատուհանի մօտ նստած, կարդում էր թերթերի լուրերի բաժինը։

— Եթէ դիւրին գործ լինէր, երեք տարուան մէջ արդէն կատարուած վերջացած կը լինէր, ասաց նա՝ լսելով արտունջները։

— Ես առաջարկում եմ վաղային ճամբել տանտիրոջ մօտ։

— Ինչո՞ւ։

— Որպէսզի իմանանք, թէ այդ տան մէջ բնակութիւն կա՞յ, թէ չէ։

— Սառուցելու միակ ապահով ճանապարհը հսկողութիւնն է...

Գիշերը դիմացի շէնքի առաջամասում կանթեղի պէս մի լոյս պլպլաց ու մարեց...

Յաջորդ օրը բան սովորութեան մինչեւ 11 հսկեցի. այժմ տարակոյս չէր մնում, որ Թալէաթը փախել է։ Զէր երեւում նաեւ «մոտայլադէմը», Թլսուհի կոչուածը։ Կէսօրին առաջարկեցի վերականգնել Ուհլանոի հսկողութիւնը։

Գիշերը անցքերի հիւծուած ու պարտասած, մղձաւանջային երազներով. ինչ որ ամրոխ, իրարանցում,

ARAM webaram.com

գուռում - գոչիւններ, հեռապնդում ու մի գամփռ, որ փակել է ճանապարհս...

Առաւօտեան ժամը 10ից յետոյ ինձ կարծես խեղդում էին սենեակիս պատերը. ի՞նչ ճակատագրական արժէք ունեցաւ մուտքի դրան այն թշուառ պտուտակը...

Կէսօրին ընկերոջս տրամադրութիւնը բարձր էր: Ուհլանեում Ցազօրը մի քանի այցելուների մէջ որոշապէս տարբերել էր Բէհաէտտին Շաքիրին:

— Քանի նա այստեղ է, նշանակում է Թալէաթն էլ շուտով կը յայտնուի:

— Իսկ ինչո՞ւ չես ենթադրում, որ Շաքիրն էլ կարող է գնալ:

— Այդ դէպքում պէտք է արդէն մեկնած լինէր, որովհետեւ եթէ Թալէաթը փախել է, Շաքիրն էլ պէտք է իր կեանքի ապահովութեան մասին մտածէր:

Ասածի մէջ տրամաբանութիւն կար. նորից գօտեպընդուելով դարձայ տուն:

Դիշերը երազիս տեսայ մայրս. իբր թէ Երզնկայից մեկնում եմ դէպի Բալկանները: Հարսները իրար են անցել ծուխի եւ մուրի մէջ կորած թոնրատանը, նրանք պատրաստում են ճամբորդական պաշարս: Մայրս ծընկաչոք անշարժ նստած է մինուարին վրայ, թոնիրի մօտ. փոքրիկները, թարմ հացի կտորներ ձեռքերին, բոլորուել են շուրջը: Անթիւ ճանճեր վխտում են Մարգարի բերանի եւ գլխի չորս կողմը, որովհետեւ նրա հացին վրայ քսուած է մեղր: Դուրսը աղջամուղջ է. արտոյտները պարզում են, թափ տալիս թեւերը: Երբ խուրջինս լեցնում են, ես առնում եմ ուսիս եւ ասում.
— «Մնաք բարով»...

— Այդ ժամանակ վերը է կենում մայրս եւ ինձ հետ դուրս գալիս: Գնում ենք յուռ: Նրա ընկերակցութիւնը

ARAM webaram.com

անախորժ է ինձ. կ'ուզէի արդէն բաժանուած լինել, որ այլեւս նրա մասին չմտածեմ:

— «Մայր, դու ո՞ւր» ասում եմ:

— «Մինչեւ Սուրբ Նշան, զաւակս, ուխտ ունիմ քեզ մինչեւ այնտեղ ճամբու դնելու»:

— Հասնում ենք Սուրբ Նշան: Մայրս կոյրի պէս շօշափում է դէմքս, ուսերս, ձեռքերս ու մրմնջում.

— «Այսպէս մէկ - մէկ մեծացնում եմ, թեւ էք առնում, թռչում ու ես մնում եմ չոր գլուխ»:

— «Տուն գնա», ասում եմ նրան ու շարունակում ճանապարհս:

Սուրբ Նշանից ուղիղ գծով բաւական վար հորիզոնի տակ յայտնւում է արեւի հրավառ սկաւառակը: Յանկարծ յետեւից լսում եմ մօրս կեր-կերուն կանչը: Յետ նայելով՝ տեսնում, որ նա այնտեղ դեռ կանգնած է: Դառնում եմ դէպի նա:

— «Ի՞նչ կայ, մա՛յր»:

— «Գնո՞ւմ ես», ասում է նա հապիւ լսելի ձայնով:

— «Ի հարկէ, չասա՞ցի, որ դուն յետ դառնաս»:

Այն ժամանակ մայրս յամբօրէն քայլում է դէպի առն: Մի քանի քայլ յետոյ նա օրօրում է գլուխը ու քայլերը արագացնում:

— «Մա՛յր», գոչում եմ: Բայց նա այլեւս յետ չի նայում. նա գնում, գնում. վազում է ու յանկարծ չը-քանում...

Առաւօտ էր, թունդ եկած ջղերս անկարող եղայ հանդարտեցնել ու մանկան պէս լաց եղայ...

Յաջորդին, 11ի մօտերը, մի ինքնաշարժ կանգ առաւ դիմացի շէնքի մայթի մօտ: Սիրտս ուժգնօրէն թարախում էր. ինքնաշարժից դուրս եկան մոայլ դէմքով Թրսուհին եւ սեւ վերարկուով դեռատի մի կին: Մինչ առաջինը կը վճարէր, միւս կինը թեթեւօրէն վեր սահեց տարածուն հինգ - վեց աստիճաններով ու բա-

ARAM webaram.com

նալին դարձնելով՝ ներս մտաւ։ Շունչ առի. կասկած չկար, որ Թալէաթի կինն է... Մօտ երկու ժամ քարացած մնացի պատուհանիս մօտ։ Բայց այլեւս անցուդարձ չկար։ Անհրաժեշտ էր լուր տալ ընկերոջս յուսատու անակնկալի մասին։

Լսեց այս կարեւոր լուրը եւ իր հերթին յայտնեց, որ Ամերիկայից օդային պոստով ստացել է ծածկագիր մի նամակ։ Ընկերները, կրկնելով Պոլսոյ տեղեկութիւնը, խնդրում էին բոլոր հնարաւոր միջոցներով վերջ տալ Թալէաթի գործին։ Մնացած ռճրագործները պատժելու համար ձեռք են առնուած միջոցներ եւ այդ խնդիրը մեզ պէտք չէ զբաղեցնէ։ Ծածկագիրը Փետրուարի սկզբներին մեր կատարած դիմումի պատասխանն էր։

Մարտ 13ի առաւօտեան մայթի վրայ յայտնուեց Թալէաթի կինը եւ զանգաղօրէն շարժուեց դէպի վեր։ Դեռ Պոլսից գիտէի, որ ընդունակութիւններով օժտուած եւ քաղաքականութեամբ հետաքրքրուող մէկն էր։ Նա մասնակից էր ամուսնու գործերին, երբ նա հեռագրական պարզ պաշտօնեայ էր, ներքին գործոց նախարար, մեծ վեզիր։ Ասում էին, որ նոյնիսկ մեծ ազդեցութիւն ունէր ամուսնու վրայ։ Ցայտնի էր իրրեւ հրապարակագիր։ Իթթիհատականների նեղ շրջանում անծանօթներից չէր։ Կարող էր երբեմն երեսը բաց, առանց քողի հանդէս գալ Պոլսոյ փողոցներում։ Այնու ամենայնիւ հաճոյքով չէր, որ դուրս եկայ հասկանալու, թէ ո՞ւր է գնում. կին հետապնդելը անհաճոյ էր։

Հասաւ կենդանական այգի ու ներս մտաւ։ Գարուն էր. ձիւնից նոր եկած կանաչները կարծես լուացուած, սրբուած էին։ Բայց դեղատոմսային ճշգրտութեամբ բաժանուած մարդերն ու համահաւասար թփերը աւելի հետաքրքրութիւն, քան հաճոյք էին

ARAM webaram.com

պատճառում ինձ։ Նա գնում էր յամրաքայլ դէպի ցայտաղբիւրները, ուր շիթերով բարձրանում ու անձրեւի պէս իջնում էին ջրերը՝ դոյացնելով ցօղեր մամռապատ շրջապատին վրայ։ Ցանկարծ սիրտս լեցուեց անսահման կարօտով դէպի մեր հայրենիքը, դէպի պղտոր Եփրատը, որ ամպեր համբուրող սրապատ լեռների միջով մտնում է կիրճերը, գոռում հսկայաւոր վագրերի միաբերան ոռնոցով, ապա գայրոյթից փրփրած գուրս է նետւում ու հեղեղատի պէս տարածւում...

Տիկինը հասաւ, կանգ առաւ այստեղ շատերի պէս։ Գերտրուտ Գոլտը իրաւունք ունէր. գեղեցիկ է. տրժդոյն դէմք, մեծ սիրուն աչքեր, սեւ հարուստ մազեր, փոքրիկ բերան, բարեձեւ, նազելի՝ նման հայուհու։ Ցաւանի է, որ շրջապատի գեղեցկութիւնից զատ նրան ոչինչ չի զրաղեցնում։ Ու թէեւ իր գիտութեամբ եւ ամուսնու հրամանով անապատներում զատապարտուել են սովամահութեան, եւ թրքական հարեմներում խամրել իր նման տասնեակ հազարներ, այնուամենայնիւ իրաւունք ունի խաղաղութեամբ վայելելու բնութեան բարիքները։

Վերադարձայ տուն...

Ցաջորդ կէսօրին Ցաղօրից իմացայ, որ Ուհլանոը այդ օրը նման է եղել ուխտատեղիի. այնքան շատ մարդ է մտել ու դուրս եկել. այնտեղ եղել են Բէհաէտտին Շաքիրը, դոկտոր Նազիմը, Իսմայիլ Հաղգին, դոկտոր Ռիզաուհին, անդամ Ջեմալ Ազմին. վեց – եօթ ուրիշներ եւս, որոնց չի ճանաչել։ Անշուշտ, շուտով պիտի երեւար եւ Թալէաթը...

Կրկին վերադարձայ տուն։ Միջանցքում դէմ առ դէմ եկայ տիկին Դիտմանին. աւելի քան սիրալիր էր, բայց ես չկարողացայ նրա հետ հաստատել այն պարզ, դրացիական յարաբերութիւնները, ինչ տիկին Շաէլբաումի հետ։ Նա միշտ շփոթութիւն էր պատճառում

ARAM webaram.com

եւ որքան ուզում էր պարզել, այնքան աւելի դժուարութեամբ էի հասկանում ասածները։ Այո՛, առողջութիւնը լաւ է, պարապմունքներս՝ նոյնպէս. չգիտեմ ինչո՛ւ ենթադրում է, որ ինձ հետ դժբախտութիւն է պատահել, կամ ես չհասկացայ, ու նա ժպտում է, եւ մոռնում եմ սենեակս...

Իրիկուան դէմ փողոցում յայտնուեց Թրսուհին զամբիւղով. շուտով նա յետ դարձաւ եւ այլեւս դիմացի շէնքի դուռը չբացուեց։ Մութը կոխելուն պէս ճրագ վառուեց առաջամասի դահլիճում, բայց յանկարծ մարեց ու բացուեց պատշգամի ձախ մասի սենեակում։ Երկար չտեւեց նաեւ այստեղ ու շէնքը դարձեալ պարուրուեց խաւարով։

Առաւօտը սովորականից շուտ ելայ. արեւի շողերը արդէն հասել էին դիմացի շէնքի պատուհանին։ Հագիւ էի աւարտել թէյս եւ ուզում էի բազկաթոռը մօտեցնել պատուհանի եզրին երբ յանկարծ դիմացի շէնքի պատշգամում տեսայ Թալէաթին։ Քարացայ. նա՞ էր արդեօք։ Այո՛...

Նա մէկ երկու քայլ առաջ անցաւ, ուշադիր զննեց մայթը՝ նախ վեր, ապա վար ու կարծես ինչ մոքերի ծանրութեան տակ գլուխը կախեց։ Ըստ երեւոյթին թեթեւ չէր կեանքը, գործած անպատուամ ոճիրից յետոյ։ Ցամենայն դէպս, թէեւ անցել էր հինգ - վեց տարի, բայց վախը անբաժան էր մնացել նրանից։ Իր լայն ուսերին կրում էր երկու հրապարակային մահավճիռներ. Գոլոսոյ պատերազմական ատեանի եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան։ Առաջինը նրա համար, հաւանաբար, ունէր բարոյական նշանակութիւն. փոխանակ վեր հանելու իր «ազգանուէր» մեծ գործը, հարազատ երկրի մէջ հարազատները դատապարտում էին նրան մահուան, իբրեւ սովորական ոճրագործի։ Բայց ժամանակը կարող էր այդ «թիւրիմացութիւնը» պարզել...

ARAM webaram.com

ապագայ սերունդները կը հասկանային կատարած գործի արժէքը, եթէ... Եթէ չլինէր Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարը։ Այնուամենայնիւ, չկարողացաւ այդ կուսակցութեան բոլոր գեկուցողներին բնաջնջել։ Բայց ո՞վ մնաց իր ճանաչածներից։ Փաստօրէն մէկ հոգի — Գաբէգին Փաստրմաճեանը։ Զէ՞ր յիշում արդեօք իր վերջին գրոյցը նրա հետ...

Լծակի պէս հատ գաղափարը վեր տարաւ, ձեռքով ճակատը շփեց, ներս մտաւ։ Նայեցի ժամացոյցին. 10 էր, Ուհլանտ գնալու իր սովորական ժամը։ Զէնքը առի վրան, պատրաստ գուրս գալու։ Յանկարծ նա յայտնուեց դրան մօտ ու փղի պէս ծանրօրէն սկսեց վար իջնել։ Երբ գուրս եկայ փողոց, գիմացի մայթով արդէն բռնել էր Ուհլանտի ուղին։ Առաջ գաղտնութիւնը ինձ ասում էր, որ այս անգամ անկարող պիտի լինիս ազատուիլ ձեռից, բայց եւ յուզումը բաղմալեզու աղաղակներով փոթորկում էր ինձ։

— «Հասի՛ր, վազի՛ր. անցի՛ր միւս մայթը, ու շեղակի կօնակից, մէջքի՛ն, գլխի՛ն, շո՛ւտ, անցի՛ր փողոցը»...

Մայթից իջայ փողոց՝ յետեւը անցնելու համար, բայց յանկարծ մի բան յետ մղեց ինձ. հարաւ անգամ պարզուած բացարոշ բանը այդ պահին մէկէնթմէկ կատկածելի թուաց. նա՞ է արդեօք...

— «Անցիր գիմացը, գիմա՛ցը, գիմա՛ցը, ուղղակի ճակա՛տին, շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ, վազի՛ր»...

Գիմացի մայթով հաւասարուեցի նրան, աբաջ քայլերով բաւական յառաջացայ. անցայ նոյն մայթը, ուսկից գնում էր նա։ Ցետ դարձայ։ Մօտենում էինք իրար։ Նա գալիս էր ճեմելու ձեւով՝ ձեռնափայտը անփոյթ ճօճելով։ Մի կարճ տարածութիւն մնացած՝ գարմանալի անդորրութիւն համակեց էութիւնս։ Հաւասարուելու վրայ թալէսթը չեշտակի նայեց ինձ. աչ-

ARAM webaram.com

քերի մէջ առկայծեց մահուան սարսուռը։ Վերջին քայլը բեկուեց. մի քիչ թեքուեց որ խուսափի, բայց դէնքը դուրս քաշելս ու դլխին պարպելս մէկ եղաւ...

Թալէաթը հարուածից կարծես ցցուեց ու մի ակընթարթ հզօր մարմինը պրկուեց ձիգ, բայց երերուն. ապա՝ ոդոցուած կաղնու բունի պէս երեսի վրայ տապալուեց թնդիւնով... Քիչ դէնը մի կին ճչաց ու դեռին փռուեց. մի մարդ վազեց դէպի նա... Բնաւ չէի կարող երեւակայել, որ այդպիսի դիւրութեամբ դեռին պիտի փռուի դազանը։ Մի վայրկեան մղում ունեցայ բոլոր դնդակները պարպելու մէջքին, բայց փոխանակ կրակելու ատրճանակս նետեցի։ Սեւ, թանձր արիւնը վայրկենապէս լճացաւ Թալէաթի դլխի շուրջ. կարծես ջարդուած անօթից մազութ էր դուրս թափուում...

— Մարդ սպաննե՞ց, լսեցի...

Նայեցի վեր, վար, դիմացը, ամէն կողմ մարդիկ կանգ առած՝ նայում էին ինձ...

— Մա՞րդ սպաննեց, բռնեցէ՛ք, ճչաց մէկը՝ ցանցաձեւ պարզելով դէպի ինձ ձեռքերը...

Բայց լճացող արիւնը կարծես դիւթել էր ինձ։

— Բռնեցէ՛ք, բռնեցէ՛ք, ճչացին ուրիշներ...

Ես անցայ նրանց մօտով. ոչ ոք փորձեց ինձ բռնել։ Բայց երբ թիկունքից աղաղակները բազմացան, քարացած ջղերս յանկարծ թունդ եղան, ու ես ինձ նետեցի հարեւան փողոցը, ի՞նչ անելու՝ չգիտեմ։ Ահաւոր աղմուկով մարդիկ ինձ հետապնդեցին։ Ես փախայ։ Դիմացից եկող մէկը բռնեց ինձ...

Կարո՞ղ էի արդեօք խուսափել, հաւանաբար, եթէ այդ մասին նախապէս մտածած եւ որոշած լինէի։ Անմիջապէս ամբոխը ինձ շրջապատեց։ Չէի հասկանում, թէ ինչ են ուզում ինձնից. դողում են, բռունցները ճօճելով յարձակւում, այնինչ ես ոչ ոքի հետ գործ չու-

ARAM webaram.com



Հարտենբերգ Շթրասէի թիւ 17 տունը, ո-
բուն առջեւ, խաչանիշով ցոյց տրուած կէտին
վրայ ինկաւ Թալէաթ :

ARAM webaram.com

նեմ։ Մէկը ինձ քաշքշեց, ուրիշներ սկսան անխնայ հարուածել. մի գինուած բռունցք իջաւ գլխուս. աչքերս մթնեցին. վար ընկնելուց խուսափելով՝ չոքեցի. արիւնը սկսում էր դէմքս. բազմաթիւ ձեռք ու ոտք էին իջնում վրաս. անգոր կատաղութեամբ պոռացի.

— Ի՞նչ էք ուզում. ես՝ հայ, նա՝ թուրք, ձի՞ղ ինչ...

Յանկարծ ամբոխը ճեղքուեց. մի ոստիկան ոտքի հանեց ինձ.

— Հա՛յ են, թո՛ւրք են, խլրտում էր տեղի տուող ամբոխը։

Գլխիցս արիւն էր հոսում։ Հասան ուրիշ ոստիկաններ։ Ամբոխը յետ քաշուեց։ Ինձ դարձրին Հարտեն-քերպ։ Մայթի վրայ նոյն դիրքում ընկած էր Հրէշը։ Ոստիկաններ, բազմութիւն, որոշ հեռաւորութեան վրայ, բոլորուել են չորս կողմը։

Անցանք...

Գաղտագած ոստիկաններիր նեռեցին ինձ Շարլոտեն-բուրգի ոստիկանատան մի խցիկը։ Ապա յայտնուեց մի պաշտօնեայ, որ գլուխս վիրակապերով փաթաթեց ու ինձ դուրս հանեց։ Ինքնաշարժով փոխադրեցին գաղտնի ոստիկանական բաժինը։ Պաշտօնեաների եւ ոստիկանների մի բազմութիւն կար այստեղ. մէկը ինձ ներս տարաւ մի աւելի մեծ խուց...

Համակուած էի հոգեկան այնպիսի մի ներքին զո-հունակութեամբ, որի նմանը չէի ապրել երբեք։ Ար-ճիճի պէս վրաս ծանրացած տեւական մղձաւանջը չքա-ցել էր յանկարծ։ Ամէն բան փոխուել էր կարծես. կաշ-կանդուած հոգիս ազատ ու յայնարձակ թռչում էր. կար-ծես էութեամբ ձերբազատուած՝ մտքերս շրջան էին անում աշխարհի ծանօթ բոլոր անկիւններում։ Տէ՛ր Աստուած, ո՛րքան շատ բան կար մտածելու։ Եւ սա-կայն, ամէն բանից ու տեղից մտքերի մի - մի փշուր

ARAM webaram.com

Կայ գլխիս մէջ, որոնք փայլատակում են ու մարում...

Հանդարտել էի, երբ ինձ առաջնորդեցին բաժնի գլուխ մօտ: Ինքնութեանս վերաբերող հարցումներին պատասխանեցի: Բայց երբ սկսեց ինձ հարցաքննել ըստ էութեան, Ֆրանսերէնիս օգնութեամբ խնդրեցի մի հայ թարգման: Գտնուեց Ֆրանսերէն իմացող. առարկեցի, որ Ֆրանսերէնս էլ սկսած էր հարցումներին ճշգրիտ պատասխանելու համար: Ցետ տարին խուցը...

Իրիկուան դէմ էր երբ դուրս բերին ինձ. երկու ոստիկաններից մէկը գրպանից հանեց դիմացկուն թելի մի կծիկ, որի ծայրերին կապուած էին բռնելու յարմար փայտէ գլանաձեւ կտորներ. նա թելը փաթաթեց գաստակս ու փայտերը ափում միացրեց. դուրս ելանք: Մանկութեան օրերին այդ ձեւով ես «ձի» էի խաղում տարեկիցներիս հետ: Միւս ոստիկանը միացաւ մեզ թղթերի մի ծրարով: Անցնելով մի շարք փողոցներ՝ կանգ առանք մի շէնքի առաջ, որի ցուցատախտակին գրուած էր «կենտրոնական ոստիկանատուն»: Երկրորդ յարկարաժնում մի քանի միջանցքներ անցնելով, թըղթատար ոստիկանին հետ մտանք մի ընդարձակ սենեակ: Հակառակ պաշտօնեաների բազմութեան, տիրում էր լռութիւն, մարդիկ կարծես համր էին: Այստեղ մի կարճ ու կլոր մարդ ընդունեց ծրարը, որի մէջ երեւան եկաւ ատրճանակս, ու տոմարի մէջ անցընելով անուները, գլխով շարժում արաւ քովնտի կանգնած պաշտօնեային: Դուրս ելայ նրա հետ. միջանցքներում պատահում էին աւլող եւ մաքրող բանտարկեալներ: Ոստիկանութեան կից բանտն էի: Միջին մեծութեամբ մի խուց, վեր բացուած փոքրիկ պատուհան. պատին զամուած փայտէ շարժական մահճակալ, որ բաց էր. դէմ ու դէմ պատին ամրացուած այլ ձեւի սարքաւորում, որի մէկ ծայրից երբ քաշեցի, յանկարծ բացուեց մի սեղան. միւս փայտերը շարժելով՝ կազմուեց նստարան, ուր եւ

տեղաւորուեցի եւ։ Այլ կողմի պատին գամուած նկատեցի մի դաբակ. թէեւ խիստ յոգնած էի, բայց վեր կեցայ եւ բաց արի. մի պնակ, փայտէ դդալով միասին, ապաման, երկու հողէ ամաններ, որոնցից մէկը ջրով լի, լուացուելու համար հողէ կոնք. օճառ չկար...

Խուցիս մէջ արագօրէն թանձրանում էր մթնշաղ։ Առաստաղից կախուած էլեկտրական լոյսը շատ բարձր էր եւ կարող էր բացուել միայն դրսից։ Երկաթապատ դուռը ունէր հինգ – վեց սանդիմէթր տրամագծով մի կլոր ծակ, որ դրսից փակուած էր շարժական տախտակի լեղուակով։ Մահճակալին վրայ երկարած՝ ուզում էի ինձ հաշիւ տալ, բայց ի զուր։ Այժմ հակընդդէմ զգացմունքների մի քաոս էր մէջս. գոհունակութիւն, որ վերջացած է գործը. դառնութիւն, որ երեւի անխուսափելի է բանտում։ Ու նոր էի զգում առաւօտեան ծեծի ցաւերը. կողերս ճմլուած էին, գլխիս վէրքը կոտտում էր, ծնկերիս կաշին փրցուած էր. մարմինս ջերմի մէջ այրւում էր...

Իրիկունը ինձ առաջնորդեցին երկրորդ յարկում մի սենեակ։ Ակնոցաւոր, այծեմօրուս մի պաշտօնեայ նստած էր մուտքի դիմաց, գրասեղանի մօտ, որի վրայ տեսայ տարբեր նամակներ։ Նրա մօտ կանգնած էր տիպական տիպի մի երիտասարդ, որ առելագոյն գայրոյթով նայեց ինձ։ Այլ կողմից մի այլ գրասեղանի մօտ մի այլ պաշտօնեայ ճրագի տակ թերթում էր թղթեր. սեղանի անկիւնում գրուած էր, ճերմակ ատաղը գէպի վեր, մի եւրոպական արիւնանիկ գդակ եւ ձեռնափայտ։ Այծեմօրուսը սկսեց ինձ հարցաքննել. դժուարութեամբ էի հասկանում նրան. ու մէկ երկու հարցումներին պատասխանելով՝ խնդրեցի հայ թարգման։ Քննիչը յամառ էր բան երեւոյթին, նոյն բաները զանազան ձեւերով կրկնելով, շարունակում էր հարցումների տարափը։ Նրան հետաքրքրում էր, թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս

ARAM webaram.com

ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՀԱՅԵՐՈՒ ՋԱՐԴԱՐԱՐ
ԹԱԼԷԱԹ փաշա

ARAM webaram.com

ապաննեցի «Թալէաթ փաշա»յին։ Բայց ի՞նչպէս կարող էի այդ հարցումներին գերմաներէն պատասխանել, երբ արդէն որոշել էի հրէշի նիւթած սարսափները նը-կարագրել ու աշխարհի դատաստանին յանձնել մեծ ոճիրի հեղինակներին։ Քննիչը ձեռք առաւ ատրճանակս ու սկսեց դարձնել ծոծրակի, քունքերի ուղղութիւններ-ով՝ պարզելու համար, թէ ի՞նչպէս կրակեցի։ Պա-տասխան չստանալով՝ դէնքը վար դրաւ ու նայեց ա-սիատիպ երիտասարդին։

— Անզգա՛մ, ի՞նչպէս ձեռքդ վրայ դնաց ասլանի պէս այն մարդուն սպաննել, Թուրքերէն գոչեց վեր-ջինը։

Թուրք լինելուց աւելի զարմանք պատճառեց նրա հարցումը։

— Այնպէս, ինչպէս նա սպաննեց մէկ միլիոն ան-մեղներ, պատասխանեցի ես։

— Ուրեմն Թուրքերէն գիտէ՞, գոչեց քննիչը։

— Ինձնից էլ լաւ, պատասխանեց երիտասարդը։

— Ուրեմն կարող ենք ձեր օգնութեամբ հարցա-քննել. հարցրէք, խնդրեմ, թէ ի՞նչ պատճառով սպան-նեց Թալէաթ փաշային։

Հարցումը Թուրքերէն կրկնելու ժամանակ երիտա-սարդի ձայնը դողաց։ Կարականապէս մերժեցի Թուր-քերէն որեւէ հարցումի պատասխանել։

Երիտասարդը մօտեցաւ միւս պաշտօնեային։ Վեր-ջինը մի լրագրի մէջ փաթաթեց Թալէաթի գլխարկը եւ ձեռնափայտի հետ միասին յանձնեց նրան։ Դուրս դը-նաց. հաւանաբար ազգականն էր կամ մօտ բարեկամ։

Քննիչը նոր միայն առաջարկեց ինձ նստել ու վե-րաբերմունքն էլ փոխուեց։ Այսօր կերպով հասկանում էի, որ այժմ խօսում է հայկական ջարդերի մասին։ Նա մէկ երկու անգամ յիշեց Լեպսիուսի անունը։ Կրկ-նեցի հայ թարգման հրաւիրելու խնդրանքս։

ARAM webaram.com

Բանտասենեակում ճրագ կար. քառորդ ժամ չանցած մարեցին ու ամէն ինչ պարուրուեց խաւարով: Այնքան համր էր բանտը, որ միայն ուշադիր լսելով կարելի էր հասկանալ, թէ երբեմն շատ զգոյշ, միջանցքով անցնում է հսկիչը: Ժամերով ես տարուած էի այն խնդրով, թէ ի՞նչ եւ ի՞նչպէս պիտի ասեմ, եթէ վաղը ինձ կանչեն հարցաքննութեան հայ թարգմանի միջոցով: Երբեմն անթիւ մարդիր գլխիս մէջ ստեղծում էին իրարանցում՝ զրկելով ինձ նրանց կարգաւորելու հընարաւորութիւնից. երբեմն էլ կարծես բոլորը մէկ դուրս էին թռչում ու գլուխս պարապ տակառի պէս դրմբում էր...

Ինձ թւում էր, որ անհրաժեշտ է սկսել Պոլսոյ հայութեան հանրային աշքառու գործիչների, ժողովականների, երեսփոխանների, յեղափոխականների, խմբագիրների, ուսուցիչների, բժիշկների, դեղագործների, փաստաբանների, գրագէտների ջարդից: Ինքը՝ Թալէաթը նրանց մօտ իր գլուխն էր պահում Աբդիւլ Համիտի հալածանքներից...

Այստեղ ինձ թւում էր, որ նախապէս անհրաժեշտ է պարզել Համիտեան ջարդերի եւ տեղահանութեան տարբերութիւնը: Արդ, որո՞նք էին այդ տարբերութիւնները, ասում էի ինքս ինձ: Համիտեան ջարդերը տեւում էին շորս, հինգ, վեց օր, ամենաշատը մի շաբաթ. կանայք ու երեխաները մասամբ կարողանում էին ազատուել. դազգած ամբոխը, յարձակելով արեան ծարաւը, ընկնում էր Թալանի, կողոպուտի յետեւից: Այդ բարեպատեհ առիթից օգտւում էին շատերը ու մահից ազատւում: Այլ բան էր տեղահանութիւնը. նա տեւական երկրաշարժի նման էր, որից ոչ ոք չէր կարող ազատուել: Քնած թէ արթուն, ոտքի վրայ թէ նստած՝ նա կար ու կար, դիշեր - ցերեկ կար, մինչեւ որ վերջին մարդը մեռնէր: Ամէն մի առանձին հայ

ARAM webaram.com

մարդու համար նա տեւում էր այնքան, որքան անհրաժեշտ էր, որ նա կա՛մ արով մեռնէր, կա՛մ կացնահար լինէր, կա՛մ գնդակահարուէր, կա՛մ պապակից մահանար կամ սովամահ լինէր, կա՛մ դանակոծութեամբ ապանուէր, կամ այրուէր եւայլն։ Նախապէս բնաւ չէր կարելի հասկանալ, թէ ի՞նչ բան էր տեղահանութիւնը, նրա ահեղ ահագնութիւնը սկսեց պարզուել հետագային, երբ ասորիկանները հրամայում էին անդադար քայլել, երբ հեռանում էին ծննդավայրից եւ յետ նայելով՝ տեսնում էին, որ շէնքերը փոքրացել են, երբ այլեւս չէիր տեսնում գիւղից եկեղեցու գմբէթը, երբ լայնատարած դաշտի մէջ էիր, եւ չէիր գիտեր, թէ ուր ես...

Գլուխս ցաւում է։ Ա՛խ, ինչպէս ցաւում է գլուխս. ամենահեռաւոր պատկերն անգամ չեմ կարող պարզել. հնոցի մէջ եմ կարծես, մրմնջացող մի թրմբուիւն համակում է ինձ։ Նախամեծար չէ՞ արդեօք ուղղակի Թալէաթի անմիջական կարգադրութիւնից սկսել. յիշել, օրինակ, Սիրքէճիի, Սէլիմէի, Սարա - Պուրնուի, Սէնճան - Քէօյի, Այաշի, Գալաճըքի, Զանկըրիի եւայլն գէպքերն ու տեղահանութիւնները։ Բայց ի՞նչպէս որակել այդ գէպքերը եւ ո՞վ կը հաւատայ, որ առաջնեկս իրողութիւններ են։ Լաւագոյն գէպքում այժմեմօրուս քննիչը կարող է հարց տալ.

— «Շատ բարի. այդ ի՞նչպէս է, որ Թուրքիայում մի իսկական մարդ չգտնուեց, որ գոչէր՝ բաւական է ու վերջ տար սպանդին»։

— «Ի հարկէ, ասորագաղութի մէջ եղել են մանք, որ չմել են Թալէաթի հրամանը կարդալով. օրինակ՝ գիշերանոցի մէջ փաթաթուած կուսակալ Մազհարը գոչել է. «Օ՜, ներեցէ՛ք, ես ի՞նչպէս կարող եմ անմեղ մարդկանց կոտորելու հրաման արձակել. էշրաֆը չի ընդունիր, ներեցէք», բայց ահաւասիկ սելանիկցի Ա-

ARAM webaram.com

րիֆը, դէմքը կասկածելի, դուրս է քաշում գրպանից մի թուղթ ու ցոյց տալով գոչում.

— «Այն դէպքում կուսակալը ես եմ, ո՞ւր է Գալայ գիւղի հոճա Գարա - Մէհմէտը»:

— «Էֆէնդի՛մ», լուում է խուսափում խմբուած ամբոխի միջից, լուռնի մի ցոլք ընկնում է փաթթոցին ու կապամբի նման սուսէր նետում գեռնին:

— «Էնկիւրիի 1200 եւ Սթանոս գիւղի 350 հայերը՝ միասին», գոչում է Աբիֆը: Ու գեռնին անկուսած կապամբի սուսերը սկսում է շարժուել. գոհերի ազգակները հասնում են մինչեւ Գապլը Պէյ, ուր կրեսոցի Զէքին հապճեպով կապկպում է նրանց թեւերը...

Օ՛, հաւատացէ՛ք, արեւի պէս ճշմարտութիւն եմ պատմում ձեզ. սասնապետ Ֆիշիլ օղլու Ռեֆիկը գարշանգի տեսարանից փախաւ, իսկ Հասան եւ Խուրշիտ շաւուշները խելագարուած՝ սկսեցին գլխատել գիակները: Այդպէս ամէն տեղ, Սարը - Գըշլայի եւ Գանիայի համբով դէպի Ատանա - Հալէպ, մինչեւ Տիգրանակերտ ու Ամանոսի լեռները, Այրանի փակուղիները, մինչեւ Օսմանիէ, Հասան – Պէյլի, Իսլահիէ, մինչեւ Ուրֆա. չէ՛, չէ՛, լսեցէք, նախ թոյլ տուէք ձեզ նկարագրել Ուրֆայի հերոսամարտը. ձեռք ընկածները 18ից 25 տարեկան մտաւորական, արհեստաւոր, հայրենասէր երիտասարդներ, մէկը միւսից ազնիւ, անձնուէր, ազգայի յոյսերով խանդավառ, ծագկափթիթ երիտասարդներ. նրանցից մէկը միայն վերջին պահին թուլացաւ:

— «Աստուծոյ սիրոյն գնդակով սպանեցէք, որ չուտով վերջանանք», ասաց նա:

— «Հոգուտներդ հանեցէք անվնաս պահելու համար, մարմիններդ ծակծկեցէք», հրամայեց հապարապետ Հալոն...

Եւ իրր թէ քննիչը ասում է.

ARAM webaram.com

— «Ընդհանուր ձևով պատմեցէք»։

— «Ընդհանո՞ւր»։

— «Այո՛, այո՛, ընդհանուր. օրինակի համար, ի՞նչպէս էին սկսում ջարդերը ընդհանրապէս քաղաքներում»։

— «Ընդհանրապէս քաղաքնե՞ր»։

— «Այո՛»։

— «Ընդհանրապէս քաղաքներում երեք օր պայմանաժամ էր տրւում կոտորածի վայրերը գնալու համար. իւրաքանչիւր ոք ազատ էր իր կինն ու երեխան հետը առնելու կամ չառնելու»։

— «Ի՞նչպէս թէ առնելու կամ չառնելու»։

— «Այնպէս»։

— «Իսկ եթէ կոտորածի վայրերը չգնայի՞ն»։

— «Անասատողներին սպառնում էր մահուան պատիժ»։

— «Որո՞նք էին ջարդի վայրերը»։

— «Նախ՝ արիւնոտ ճանապարհները, Ատապազար — Պրուսա — Աֆիոն Գարահիսար - Գոնիա — Մերսին. Գասթեմունի — Զանկլերի — Էնկիւրի — Սուլթանիխան — Ատանա. Սամսոն — Մարզուան — Ամասիա — Սըվազ — Կեսարիա — Մարաշ — Այնթապ — Իսկենդերուն. Շապին Գարահիսար — Երզնկա — Ուրֆա — Հալէպ. Տրապիզոն — Բարերդ — Էրզրում — Մուշ — Պիթլիզ — Ռաս - էլ - Այն»...

— «Ճանապարհները ձգեցէք»։

— «Ապա մեծ սպանդանոցները. քառասուն հազարից մինչեւ հարիւր վաթսուն հինգ հազար զոհերով՝ Պոզազլեան, Իւչ - Տէյիրմէնլէր, Կանլը - Կէչիա,, Տէր - Զօր»...

— «Բաւական է»։

— «Այնուհետեւ առանձին խմբերով կացնահարուածները, ուրագով տաշուածները, սղոցուածները,

ARAM webaram.com

բահով, բրիչով, մահակով, սակրով զարնուածները, ջրամոյն, ծովամոյն եղածները. հոբերի մէջ ողջ ողջ թափուածները»...

— «Հերի՛ք է»:

Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ի՞նչ է լինում ինձ հետ...

* * *

Առաւօտեան դուռը բացուելուն պէս ներս մտաւ մի բանտապկեալ ծառայ, որ բարեկամաբար գլուխը թօթուեց, ժպտաց, առաւ ջրի ամանը ու քիչ յետոյ վերադարձաւ թարմ ջրով ու մի բաժակ սուրճով. լեղի, տաք ջուր, մի քիչ գարի, առանց շաքարի բայց կապզուրիչ էր:

Մէկ - երկու ժամ ետքը ինձ առաջնորդեցին զրաանեակների բաժնում մի այլ սենեակում, ուր յանկարծ դէմ առ դէմ եկայ Գալուստեանի հետ: Ցուզուած ողջագուրեց ինձ:

— Բնաւ հոգ մի արա, ամբողջ պատուիրը ուրիշ բայ է քեզ պաշտպանելու համար:

Կեանքը արժէք է ստանում նման հանդիպումների ժամանակ. մէկէն սիրտ առի: Նա վերցրեց, մօտի աթոռից, ինձ բերած շաքարեղէնների եւ բիսկուիտների կապոցները, բայց շփոթութեամբ յետ դրեց:

Գրասեղանի մօտ նստած էր բարեհամբոյր եւ ակնոցաւոր մի մարդ.— Շարլոտենբուրգի դատարանի դաղտնի խորհրդական՝ պարոն Շուլցէն քեզ հիմա պիտի հարցաքննէ. ես հրաւիրուած եմ իբրեւ թարգման:

Ատենիխուսն վերյիշեցի այն ամէնը ինչ որ գիշերը մտածել էի, բայց քննիչը սկսեց վերստուգել նախապէս կազմուած արձանագրութիւնը:

— Ո՛չ, պարսկահպատակ չեմ, ասացի, երբ հասաւ այդ կէտին:

ARAM webaram.com

— Երէկ այդպէս էք յայտարարել. զարմացած, նայեց ինձ քննիչը:

— Այո՛, եկել եմ Բերլին պարսկական անցագրով, բայց թրքահպատակ եմ, Երզնկայի Բաղառիճ գիւղից:

— Ինչո՞ւ այդ կեղծիքին դիմեցիք:

— Կեղծիք չէ, այլ անհրաժեշտութիւն. Ջարպերից յետոյ ոչ մի հայ չի կարող թրքական անցագիր ստանալ:

Քննիչը մեղմօրէն շարժեց գլուխը:

— Ո՞ւր էք ուզանել:

— Երզնկայի ապպային վարժարանում:

— Այդ գպրոցի վկայականը կը բաւէ՞ր այստեղ համալսարան ընդունուելու համար:

— Ո՛չ, կ'ուզէի ազատ ունկնդիր լինել:

— Գերմաներէն գիտէ՞ք:

— Այո՛, որքան կարելի էր երեք ամսուան մէջ սովորել:

— Գիտէ՞ք թէ ով էր Ալի Սալիհ բէյը, որ սպանեցիք երէկ Հարտենբերգ թիւ 17 բնակարանի մայթին վրայ:

— Այո՛, Թալէաթ փաշան:

— Ի՞նչը ձեզ հարկադրեց այդ ոճիրը գործելու:

— Ոճրագործը ես չե՛մ, այլ Թալէաթը. նա բնաջնջեց մեր ժողովուրդը. ես կարող եմ ձեզ պարզել նրա գործած սարսափները Պոլսից մինչեւ Տէր - Զօր:

Այստեղ ես պէտք է ասէի այն ամէնը, ինչ մտածել էի դիշերը, բայց քննիչը աւելորդ նկատեց այդ:

— Ովքե՞ր ձեզ օգնեցին Թալէաթ փաշային սպանելու:

— Ոչ ոք:

Զարմացաւ ու յետ նայեց:

ARAM webaram.com

— Եթէ անդամ այդպիսիները լինէին, պիտի չկարողանայի ասել։

Հայեացքից բացորոշ էր, որ հասկանում էր այդ։

— Ո՞ր կազմակերպութեան հրահանգով կատարեցիք այդ գործը։

— Անձնապէս։

— Անձնական ի՞նչ հաշիւ ունէիք Թալէաթ փաշայի հետ։

— Շա՛տ մեծ. նրա հրամանով էր, որ բոլոր հայերի հետ միասին ոպանոնուեցին մայրս, եղբայրս, եւ բոլոր ազգականներս։ Այդ օրից ի վեր ես ապրել եմ միայն Թալէաթից վրէժ լուծելու յոյսով։

— Ո՞րքան ժամանակից ի վեր հետապնդում էիք այդ պաշտօնը։

— 1915ից սկսած, բայց երեք տարի է ձեռնարկել եմ Թալէաթի հետքը գտնելու աշխատանքին։

— Ի՞նչպէս իմացաք, որ Թալէաթ փաշան Բերլին է։

— Պատահաբար, մի թերթի մէջ կարդացի։

— Իսկ ի՞նչպէս գտաք Թալէաթ փաշային Բերլինում։

— Փետրուարի վերջերին, կենդանաբանական այգու մօտ մի օր յանկարծ թուրքերէն խօսակցութիւն լսեցի. երեք երիտասարդ թուրքերից մէկը «փաշաս» անուանեց յաղթանդամ մի մարդու, որ գրուցում էր նրանց հետ, բաժանուելու պահին երեքը համբուրեցին նրա ձեռքը։ Վերջինը շատ նման էր Թալէաթին, որին կը ճանչնայի թերթերի մէջ տպուած նկարներից։ Հետապնդեցի նրան մինչեւ Հարտենբերգ թիւ չորս բնակարանը։ Մի քանի օր յետոյ սենեակ վարձեցի նրա տան դիմաց։ Վերջին տասը օրուան մէջ առիթներ ունեցայ ստուգելու, որ «փաշաս» կոչուածը Թալէաթն է։ Մարտի 15ին, երբ տնից դուրս ելաւ, խփեցի։

ARAM webaram.com

— Ուրեմն, ընդունո՞ւմ էք, որ ապանութիւնը կատարել էք կանխամտածումով։

Այդ հարցման իմաստը լաւ չհասկացայ. աւելի ճիշդ ինձ զարմանք պատճառեց Գալուստեանի դէմքի տհաճ արտայայտութիւնը, որով թարգմանում էր նստածներս։

— Ի հարկէ...

— Ես հասկանում եմ, որ վրէժի զգացմունքը կարող է ձեզ մղած լինել այդ գործին, բայց միթէ՞ ձեր խիղճը չի տանջում ձեզ, ապանութիւնը կատարելուց յետոյ։

— Ընդհակառակն, սիրտս լեցւում է գոհունակութեամբ, որ վերջապէս մէկ միլիոն անմեղ զոհերի վրէժը լուծուած է։

— Ուրեմն, դուք եկել էք Բերլին ոչ թէ ուսանելու, այլ Թալէաթ փաշային ապանելո՞ւ։

— Բերլինում մեքենագիտութիւն սովորելու մասին ես երազում էի զեռ պատերազմի նախօրեակին։ Բայց տակնուվրայ եղաւ ամէն բան...

Քննիչը յետ նստեց՝ ձեռքի մատիտի հետ խաղալով.

— Գիտէ՞ք, որ օրէնքով ձեզ ապառնում է մահապատիժ։

— Այո՛, բայց գործս յաջողութեամբ կատարելուց յետոյ, ի՛նչ ուզում է թող լինի։

— Ե՞րբ որոշում տուիք ապանութեան ձեռնարկելու։

— Մօրս անյայտ գերեզմանով երդուել էի Թալէաթին ապանել. երբ ձեռքս ընկնէր, անպայման պիտի ապանէի։

— Պատմեցէք, թէ ի՛նչպէս ապանեցիք Թալէաթ փաշային։

— Մարտ 15ի առաւօտեան պատուհանից յանկարծ

ARAM webaram.com

տեսայ, որ Թալէաթը դուրս ելաւ փողոց ու գնաց դէպի վար. սարճանակս ասի, վրայ հասայ. զուգահեռ մայթով արագ գնացի, առաջ անցայ. երբ նա բուսական ցեռ մնաց, անցայ միւս մայթը, յետ դարձայ նրան դիմացից խփելու համար: Բայց մէկ – երկու քայլ մնացած, յանկարծ նա դդաց, սարսափահար նայեց, ուզեց թեքուել, խուսափել, երբ գնդակը դամեցի գլխին:

— Ցիշո՞ւմ էք, որ փողոցը անցել էք երաժշտական վարժարանի մօտ:

— Ո՛չ...

Քննիչը այնուհետեւ շատ երկար կանգ առաւ, թէ վերջին պահին ինչ դիրքի մէջ կատարուեց սպանութիւնը. յետեւի՞ց թէ առջեւից, կողքի՞ց թէ թիկունքից, ի՞նչ տարածութեան վրայ եւ այլն: Ցոգնել էի. գլուխս ցաւում էր, պաղ քրտինքը վիրակապերի տակից ծորում էր: Գալուստեանը ինչ որ բան չընչաց նրան: Վերջինը ինձ արձակեց...

Երբ դարձայ խուցս, յայտնուեց ծառայ բանտարկեալը. նա գլխիս վերքերը լուաց ու նոր վիրակապեր փաթաթեց: Այդ աշխատանքի ժամանակ նա անընդհատ խօսում էր. գիտէր անունս, մականունս, ինչ գործով մեղադրուելս, գիտէր Ջարդերի եւ Թալէաթի մասին. գրեթէ քննիչի չափ բան գիտէր: Ջրատ, բաց գոյն աչքերը կարծես անթարթ էին. դէմքը նիհար, գունատ ու արտայայտիչ: Ի հարկէ, շատ բան իր ասածներից չէի հասկանում, բայց միտքը պարզ էր. նա գտնում էր, որ շատ լաւ եմ արել Թալէաթը սպանելով եւ ինքն էլ, եթէ հայ լինէր, այդպէս պիտի վարուէր: Բայց չարժէ այդպիսի հրէշ սպանելու համար գլխատուել: Եւ հիմա բարեկամական պարտք ունէր ինձ իմացնելու, որ ամէն բան կախուած է նախնական հարցաքննութիւնից: Եթէ ես ասեմ, որ Թալէաթ փաշային սպանել եմ անձնական վրէժխնդրութեամբ, կարող եմ ստանալ տասնչինգ

ARAM webaram.com

տարուան տաժանակիր աշխատանք։ Իսկ եթէ ասեմ, որ սպանել եմ ընդհանուր քաղաքական պատճառներով, այսինքն կանխամտածմամբ, ինձ կարող են գըլխատել։ Այս հետաքրքրական մարդու մականունը Լեւին էր։ Ասածներից հասկացւում էր, որ բանտարկուած է զեղծարարութեան յանցանքով։ Արդեօք որեւէ ակընկալութի՞ւն ունէր ինձնից. չգիտեմ. յամենայն դէպս՝ ես տուի նրան Գալուստեանի բերած շաքարեղէնների մի մասը, որ արագութեամբ տեղաւորեց գրպաններում։

Քիչ ետքը նորից յայտնուեց մի ուրիշի հետ. դրան մօտ նրանք վար դրին մի խոշոր կաթսայ. կէսօր էր, կերակուր էին բաշխում. նա պնակս լեցրեց եւ դրեց սեղանին։ Ամէն բան կար այդ ապուրի մէջ, բացի մսից ու իւղից. բոլորովին բուսեղէն մի ուտելիք։ Լեւինը չչնջաց, որ եթէ կը փափաքիմ, կարող է ինձ լրաթերթ էլ բերել։

Անցաւ երկու երեք ժամ։

— Սոլոմո՛ն, լսեցի։

Մօտեցայ դրան ծակին ու մինչ ես մտածում էի, թէ ինչպէս պէտք է ներս առնեմ ձեռքի թերթը, նա արագութեամբ ներս սահեցրեց դրան տակից «Մորգէն Պոստ»ի մէկ թիւը։ Թերթի ճակատին խոշոր գրերով տպուած էր՝ «Նախկին մեծ եպարքոս Թալէաթ փաշան Բերլինի մէջ սպանուած». տակը՝ «Քաղաքական վրէժխնդրութիւն մի հայ ուսանողի կողմից»։ Մտածում եմ, որ Լեւինի ասածները «գլխատման» ու «տաժանակիր աշխատանքներ»ի մասին այնքան էլ անիմաստ չէին։ Նոր եմ հասկանում, թէ ինչո՛ւ Գալուստեանն էլ տհաճութեամբ էր լսում ընդհանուր բնոյթ կրող պատասխաններս հարցաքննութեան ժամանակ...

Իրիկուան դէմ Շուրցէն շարունակեց հարցաքննութիւնը։ Այս անգամ աշխատեցի որքան կարելի է խընդրին անձնական բնոյթ տալ, որ առանց այն էլ մեծ բա-

ARAM webaram.com

ժին ունէր ինձ մղում առուղ պատճառների մէջ։ Երբ վերջացաւ, յաջողեցի մի քանի խօսք փոխանակել Գալուստեանի հետ։ Թուրքերը ցոյց են տալիս մեծ զործունէութիւն՝ դատը շահելու համար։ Հայ դաղութն էլ ամէն կերպ աշխատում է, որ անպարտ արձակուեմ՝ իւրացնելով խնդիրը իրրեւ համազգային հարց։ Ցերեկուան ցուցմունքներս Գալուստեանը, իրրեւ թարգման, չէր սորագրել՝ նկատելով դատին համար նրանց աննպաստ հանգամանքը։ Նոր էի հասկանում, որ խընդիրը միայն ինձ չի վերաբերում եւ պարտաւոր եմ ներդաշնակելու իմ ընթացքը դրսի բարեկամներիս հրահանգներին հետ...

Նոր էի դարձել բանտասենեակ, երբ լսեցի.

— Սոլոմո՛ն։

Լեւինն էր։ Մի բան սահեցրեց դրան տակով. հայելի մի փշուր։ Այլանդակուած էի. քթիս մէկ կողմը ուռած, աչքիս տակը վէրք, ձախ այտս ծուռուած, ճակատիս աջ կողմը՝ վէրք...

— Սոլոմո՛ն։

Դարձեալ նա։

— Ի՞նչ կայ։

— Հայոց դեսպա՞ն էր։

— Ո՞վ։

— Այն մարդը, որ ներկայ էր հարցաքննութեան։

— Այո՛...

Առաւօտեան ինձ նորից կանչեցին հարցաքննութեան. այս անգամ եղեռնագոյն ատեանի հարցաքննիչ-Մանասոյֆէյլի մօտ. ճաղատ, ձայնի ջերմութիւնը կորցրած, դէմքի սուր արտայայտութեամբ, տարիքն անցած մէկը։ Ամէն կերպ աշխատեցի անձնական քնոյթ տալ խնդրին։ Բայց անկարող էի ժխտել, որ ապանութիւնը կատարել եմ կանխամտածօրէն։ Վերջին պահին Գալուստեանից իմացայ, որ դաղութը որոշել է պաշտ-

ARAM webaram.com

պանութեան համար հրաւիրել Բելլինի նշանաւոր փաստաբաններին։

Երբ վերաքաքաձայ բանտասենեակ, դուռը բաց էր. Լեւինը լուանում էր յատակը։ Կարծես հեռախօսային ցանցով նա կապուած էր բանտի բոլոր ծակ ու ծուկերի հետ. վայրկեան չանցած տեղեակ էր բանտի մէջ տեղի ունեցած բոլոր իրադարձութիւններին։ Մանոյֆէյլը այն մարդն է, որ դժբախտացրել է Լեւինին, հաշուապահական ակնյայտ սխալը ներկայացնելով իբրեւ գեղծարարութիւն. եւ այն էլ ի՛նչ գեղծարարութիւն. ընդամէնը յիսուն հազար մարքի մի խնդիր, երբ գրամի արժէքը ընկած էր եւ ինքն էլ բնաւ յանցանք չունէր այդ գործում։ Ահա թէ ո՛րքան բախտորոշ նշանակութիւն ունի «նախնական հարցաքննութիւն»ը։ Գալով ինձ՝ նա գտնում էր, որ ես շատ լաւ եմ արել ասելով, թէ «ոճրագործը ես չեմ, այլ Թալէաթն է»։

— Հրաշալի է. բայց նախնական հարցաքննութեան մէջ պէտք չէ ասէիք, այլ դատաբանում վերջին խօսքի մէջ։ Այժմ դրանով դուք արտայայտում էք ըմբռնում տրամադրութիւն. «Ոճրագործը ես չեմ, այլ Թալէա՛թը», հասկանո՞ւմ էք, թէ ի՛նչ էք ասել դուք. այսօր մեր փաստը այն է, որ դուք ապանել էք, իսկ նա մեռել է. ո՞վ պիտի հաստատի, որ նա անցեալում ոճրագործ էր, երբ քիչ առաջ այստեղ արժանանում էր պատիւների...

Շեմքում երեւաց մելամաղձոտ հսկիչը. Լեւինը ծլկուեց ու, կրակ կտրած, աւարտելով աշխատանքը, դուրս գնաց։

* * *

Հինգ օր յետոյ ինձ փոխադրեցին կենտրոնական բանտը։ Անախորժ էր այդ, որովհետեւ արդէն յարմարուել էի կեանքիս պայմաններին եւ ունէի Լեւինի

ARAM webaram.com

պէս բարեկամ։ Այդ առթիւ ինձանից ուելի ապրուած էր ինքը Լեւինը։

Կենտրոնական բանտը բռնում էր շատ լայն տարածութիւն, բազմաթիւ շէնքերով, մէջ ընդ մէջ բացուող բակերով եւ բաժիններով։ Քրէականների բաժնում բանտասենեակները դասաւորուած էին երկշարք՝ մի խուշար սրահանման տարածութեան մէջ։ Սրահի կենտրոնում, դրասեղանի մօտ, տեղ բռնած պաշտօնեան մանրամասն արձանագրեց հագուստները, վրան եղած ամէն բան, անդամ ձեռքի թաշկինակս ու մի տոմսով յղեց առաջին յարկը։ Բաղնիք էր՝ օրինակելի մաքրութեամբ եւ սարք ու կարգով։ Բաղնիքից դուրս գալով տեսայ, որ հագուստները փոխարինուած էին բանտայինով։ Հագնուեցի եւ մի նոր տոմսով ներկայացայ նախկին պաշտօնեային, որ ինձ յանձնեց հսկիչներից մէկին։

Այստեղ բանտասենեակը ընդարձակ էր եւ լուսառատ. նոյն ձեւի ծալուող մահճակալ, սեղան, նստարան, դարակ եւ այլն, ինչ որ նախկին բանտում։ Բայց մաքրութիւնը այստեղ դեբաղանց էր։ Հսկիչը ինձ պարզեց տիրող կարգերն ու պարտականութիւնները։ Առաւօտը, առաջին զանգակը հնչելուն պէս, պէտք է վեր կենալ անկողնից, լուացուել եւ ջրամանը պատրաստ ունենալ։ Քառորդ ժամ յետոյ երկրորդ զանգակը նշանակում է, որ պէտք է ջուրը տանալ, որից անմիջապէս յետոյ պէտք է սենեակը մաքրել եւ ապրը, ուլուքը եւ ապրիւսը դրան մօտ կուտակել։ Քիչ վերջը հնչուելիք զանգակի վրայ, այդ բոլորը պէտք է նետուի ապրիւսակալ ժանգոցին մէջ։ Ապա, քառորդ ժամ յետոյ, հնչող զանգակը նշանակում է, որ բաշխուում է օրուան հացը։ Քիչ յետոյ հնչուելիք զանգակը ազդարարում է սուրճի բաշխումը։ Այնուհետեւ հնչում է դրօսանքի զանգակը, յետոյ՝ ճաշի, ապա՝ նորից սուրճի, յետոյ ընթրիքի,

ARAM webaram.com

վերջապէս, պառկել քնելու զանգակը։ Այս կեանքի հեռանկարը սարսափելի էր...

— Հիմա սհաւասիկ հնչեցնում եմ իրիկնադէմի սուրճի զանգակը, յարեց հսկիչը...

Նոյն անունդն էր՝ ինչ նախկին բանտում։ Մի տարբերութիւն այստեղ յատկապէս նկատելի էր. ռեժիմը խիստ էր, կարգապահութիւնը՝ երկաթեայ։ Գիշերը մի ամբողջ թաղամաս բռնող այս բանտային աշխարհում կեանքը խստաս քարացաւ։

Ցաջորդ օրը Կիրակի էր։ Առաւօտեան սուրճից յետոյ, ինձ այցելեց բանտի քահանան։

Ըստ երեւոյթին, մարդասպաններին համար բանտում հատուկ սովորութիւն էր այդ։ Գիրուկ, քիչ կոր, թմբլիկ ձեռքերով, հեզ ու ժպտոյն դէմքով քահանան գիտէր Ֆրանսերէն, որ աւելի մառչելի էր ինձ։ Իր ներշնչումները սկսեց նրանով, որ դոկտոր Լեպսիուսի գործերից ծանօթ էր հայ ժողովուրդին վիճակուած տառապանքներին եւ հասկանում էր արարքիս պատճառները։

— Բայց Տէրն մեր Յիսուս Քրիստոս պատուիրում է խմել դառնութեան բաժակը մինչեւ վերջին մրուրը՝ երկնային փառքին արժանանալու համար, ասաց նա...

Ամէն մարդ կեանքի մէջ պէտք է կատարի իր պարտականութիւնը։ Ու ես համբերութեամբ լսում էի նրա քարոզը՝ համեմուած Տէրն մեր Յիսուսի - Քրիստոսի երկրային կեանքի օրինակներով, նրա անսահման ներողամտութեամբ ու տիեզերական բարութեամբ։ Քահանան արարքիս համար դատապարտութեան խօսք չունէր։ Նրան շատ լաւ ծանօթ էին մարդկային թուլութիւնները։ Բայց որ վրէժը, անպա՛մ նրա զգացումը դէմ է Աւետարանի ոգուն, իրրեւ քրիստոնեայ պարտաւոր էի խմանալ։ Այստեղից շատ պարզ էր այն գայթակղութիւնը, որ մղել էր ինձ յանցագործութեան։

ARAM webaram.com

— Բայց Տէրը ողորմած է ու բարի. եւ բաւական է, որ դուք բռնէք զղջման ու ապաշխարութեան ուղին, որպէսզի թեթեւ ապրէք բանտի կեանքը...

Տեսնելով, որ գերմաներէն դժուար եմ հասկանում ու ֆրանսերէնս էլ թերի է, նա խոստացաւ ուղարկել ինձ հայերէն Սուրբ Գիրք ու մեկնեց իր այցելութիւնից դուռ:

Եւ իրօք, նստած էի ու չգիտէի, թէ ի՞նչպէս կարելի է սպանել ժամանակը, երբ դուռը բացուեց ու հսկիչը ինձ մեկնեց հայերէն Հին ու Նոր Կտակարանները մէկ կազմով: Աչքս ընկաւ Յովհաննու Յայտնութիւններից մէկի վրայ, ուր ասւում է.

— «Ու տեսայ, որ ծովէն գազան մը կ'ելլէր, եւ ունէր եօթը գլուխ ու տասը եղջիւր. եւ անոր եղջիւրներուն վրայ տասը թագ, ու անոր գլուխներին վրայ հայհոյութեան անուններ կային: Եւ այդ գազանը, զոր տեսայ, ընձու նման էր, ու իր ոտքերը արջու ոտքերու պէս, եւ իր բերանը առիւծի բերանին պէս. ու վիշապը անոր տուաւ իր զօրութիւնը, իր աթոռը ու մեծ իշխանութիւն: Եւ անոր գլուխներէն մէկը մահու չափ վիրաւորուածի պէս էր. ու անոր մահուան վէրքը առողջացաւ. եւ բոլոր երկիր գազանին ետեւէն զարմացաւ: Եւ երկրպագութիւն ըրին վիշապին, որ գազանին իշխանութիւն տուաւ, ըսելով, ո՞վ է այդ գազանին նման եւ ո՞վ կրնայ անոր հետ պատերազմ ընել: Եւ անոր մեծ բաներ եւ հայհոյութիւններ խօսող բերան տրուեցաւ, եւ քառասուն երկու ամիս անոր իշխանութիւն տրուեցաւ իր կամքը ընելու: Ու իր բերանը հայհոյութեամբ Աստուծոյ դէմ բացաւ, անոր խորանը ու երկինքը բնակողներուն հայհոյելու: Եւ անոր իշխանութիւն տրուեցաւ սուրբերուն հետ պատերազմ ընելու եւ անոնց յաղթելու, եւ անոր իշխանութիւն տրուեցաւ բոլոր ցեղերու եւ ժողովուրդներու ու

ARAM webaram.com

լեզուներու եւ ազգերու վրայ։ Եւ անոր երկրպագութիւն պիտի ընեն երկրի վրայ բոլոր բնակիչները, որոնց անունները աշխարհի սկիզբէն ի վեր մորթուած Գառնուկի կենաց գրքի մէջ գրուած չեն։ Ով որ ականջ ունի՝ թող լսէ։ Ով որ գերութեան քշէ, ինքը գերի պիտի տարուի. ով որի սրով սպաննէ, պէտք է, որ ինք սրով սպաննուի. հոս է սուրբերուն համբերութիւնը ու հաւատքը»...

Նախապէս գիտէի, որ հայկական ջարդերը տեւել են քառասուն երկու լման ամիսներ, 1915ի Մայիսից մինչեւ 1918ի Հոկտեմբերը, այսինքն տեղահանութեան առաջին հրամանից մինչեւ Մուդրոսի զինադադարը։ Ու տարուել էի այն մտքով, թէ Ցոմնանու ակնարկած գազանը նոյն ինքն Թալէաթն էր, երբ յանկարծ դուռը բացուեց։ Ինձ կանչում էին տեսակցութեան։ Նախասենեակում երեք բանտարկեալներ սպասում էին իրենց հերթին։ Կէս ժամից աւելի անցաւ մինչեւ հերթը հասաւ ինձ։ Սպասման սրահում բազկաթոռին նստած էր մի վարդապետ, տեսնելով ինձ՝ ոտքի ելաւ, հանդիսաւոր զանգազութեամբ խաչակնքեց, հայեացքը ինձ ուղղած եւ ինքային բամբ առողանութեամբ դոչեց.

— Տէրն մեր Յիսուս - Քրիստոսի անուամբ օրհնում եմ քեզ, որ գազանը սպաննեցիր եւ բոլորիս վրէժը լուծեցիր։ Քիչ ատենէն պիտի մեկնիմ Հռոմ, բայց չուտով պիտի գամ քեզ խոստովանանքի ենթարկելու եւ այդ հիման վրայ Հռոմի պապին գիմելու, որ իր օրհնութիւնները ընծայէ քեզի՝ ազգանուէր գործիդ համար...

Պաշտօնեան միջամտեց, որ անհասկնալի լեզուով չխօսուի։ Հայրապետի վարդապետը նուիրեց ինձ Երուսաղէմի մի խաչ ու գնաց։ Այնպիսի մի անակնկալ էր այդ այցը, որ կարծես նոյնինքն Ցոմնան մարգարէն էր։ Որտեղի՞ց ուր, մտածում էի, օրուան հոգեկան ան-

ARAM webaram.com

զոհանքից եւ չիսթութիւններից շշմած, զառնալով նը-
կուզս, Երուսաղէմի խաչը ձեռքիս...

Բանի մատուռի զանգակները զօղանջում էին հեծկլտալին։ Ո՛րքան ձայնը նման էր Երզնկայի Սուրբ Նշանի զանգակների զօղանջին։ Մինչ այստեղ մէկ հեղ զօղանջեց, միւսը կարծես տեւում էր յաւիտեան. այստեղ զանգի հարուածները հարսանիքի պէս խառնափընթար էին եւ անհասկանալի։ Ներս մտնելով ձեռքս ոտի Կոտակաբանները. «Եւ ուրիշ զգան մը տեսայ՝ որ երկրէն կ՝ելլէր ու զառնուկի նման երկու եղջիւր ունէր ու կը խօսէր վիշապի պէս», գրուած էր այնտեղ, «եւ առաջին զգանին բոլոր իշխանութիւնը կը վարէր անոր առջեւ, ու երկիրը եւ անոր բնակիչները կը ստիպէր, որ երկրպագութիւն ընեն առաջին զգանին, որուն մահուան վէրքը առողջացաւ։ Եւ մեծ նշաններ կ՝ընէր, ու մինչեւ անգամ երկնքէն կրակ կ՝իջեցնէր երկրի վրայ մարդոց առջեւ։ Ու երկրի վրայ բնակողները կը մոլորեցնէր այն նշաններով, որ իր ձեռքը տրուած էր զգանին առջեւ ընելու. ու բնակիչներուն կ՝ըսէր, որ պատկեր շինեն այն զգանին, որ սրով վիրաւորուած էր եւ առողջացաւ։ Եւ իշխանութիւն տրուեցաւ անոր, որ զգանին պատկերին հոգի տայ, որպէսզի զգանի պատկերը խօսի, եւ ով որ զգանին պատկերին երկրպագութիւն չընէ, դանիկա սպաննել տայ։ Եւ կը ստիպէր ամէնը, այսինքն պզտիկները եւ մեծերը, ու հարուստները ու աղքատները, եւ ազատները ու ծառաները, որ իրենց աջ ձեռքին վրայ կամ իրենց ճակատին վրայ դրոշմ ընդունին։ Եւ որ մէկը չկրնայ գնել կամ ծախել, բայց միայն ան՝ որ ունի դրոշմը կամ զգանի անունը կամ անոր անուան թիւը։ Հոս է իմաստութիւնը. ով միտք ունի, թող հաշուէ զգանին թիւը, քանի մարդու մը թիւ է ու անոր թիւը վեց հարիւր վաթսունմեկ է»...

ARAM webaram.com

Ցիշում եմ, որ առաջ մեծ գրող Տոլստոյը, իր «Պատերազմ եւ Խաղաղութիւն» գործի մէջ այս տիպիւ կատարել է մի փորձ. Ֆրանսերէն այբբենարանի առաջին ինը տառերը, այսինքն մինչեւ K, իւրաքանչիւրը թըւարկելով միաւորների՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, ապա K տառից մինչեւ Zը տասնեակների՝ 10, 20, 30 և այլն, նա փորձով գտել է, որ «L'Empereur Napoléon»ը կազմող տառերի թուական գումարը հաւասար է 666ի: Բայց այն ժամանակ նա չգիտէր, թէ մարդը մարդուն, բառիս բուն առումով, գազան պիտի լինէր հետագայում...

Նորից գուրը բացուեց. այս անգամ մեկ տասնում են եկեղեցի: Բանտարկեալները, գուրս գալով նկուղներից, շարքի են կանգնում դէմքով դիմացինի ծոծրակին, որով նոր գուրս եկողները չէին կարող ո՛չ տեսնել եւ ոչ էլ խօսել շարքի մէջ արդէն կանգնածների կամ թիկունքում շարուածների հետ: Մառուռի մօտ, ասնգուխի մի քանի աստիճաններ բարձրանալով, մրատանք ամփիթատրոնաձեւ մի սրահ, որ դէմի վարագուրակալ բեմով աւելի շատ յիշեցնում էր թատրոնքան եկեղեցի: Զարմանալի էր նստարանների կառուցուածքը. թէեւ նրանք կազմում էին իրար թիկունքնեերին թառած շարքեր, բայց ամէն մի նստարան մի առանձնացած վանդակ էր, որից չէինք կարող ոչինչ տեսնել ո՛չ վարը եւ ոչ վերը, ո՛չ ձախ եւ ոչ աջ ազգակերից, այդ փայտէ փոսի մէջ կարող էիր նայել միայն դէմդ՝ բեմը: Վերեւից իջնող տախտակի մի շերտ ծածկում էր դլուխդ. աջ եւ ձախ նոյն ձեւի կառուցուածքներ անջրպետում էին կողքերից. ոտքերիդ տակ եղած տախտակը երկարում էր այնքան, որ ծածկում էր վարը նստողի դլուխը:

Նստարանների երկու կողմերին, դարակաձեւ փոքրիկ մակարդակների վրայ, դրուած էին մի - մի դիրք-

ARAM webaram.com

Եւ առի աջ կողմիս գիրքը. Աւետարան էր կաթոլիկնե-
րի համար. գրի տեղը եւ առի ձախ կողմի գիրքը, այն
էլ Աւետարան էր բողոքականների համար. այն էլ գրի
տեղը՝ սպասելով գալիքին:

Յանկարծ բացուեց վարագոյրը եւ այնտեղ երեւաց
ժողովն դէմքով քահանան: Նա դէպի մեզ խաչակնքեց
ու սկսեց աղօթել. ապա՝ աղօթքի վերջաւորութեան,
իր ձայնին հետզհետէ երգի հանգամանք տալով՝ փաս-
տօրէն սկսեց երգել ու յանկարծ սրահը թնդաց անթիւ
ձայներից. անյայտութեան խորքից երգում էին բան-
տարկեալները՝ և՛ մեղմ, և՛ խրոխտ, թէ՝ իրրեւ բո-
ղոք եւ թէ իրրեւ աղերսանք: Հոյակապ էր. կարծես
ոչ թէ մարդիկ, այլ սրահն էր երգում:

Երբ երգը վերջացաւ, քահանան քարոզ խօսեց:
Ոչինչ չէի հասկանում, գիտէի միայն, որ խօսում է
«Սիրեցէք զմիմեանս»ի մասին: Բայց ի՞նչպէս պիտի
սիրէինք միմեանց, երբ իրար երես չէինք տեսնում...

ARAM webaram.com

Թ. ԳԼՈՒԽ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Եղեռնագաղտ ատեանի մի նոր հարցաքննութիւնից յետոյ, ինձ թոյլ տուին տեսնուելու փաստաբաններիս հետ։ Ամսի վերջերին մի օր անակնկալի մատնուեցի՝ տեսնելով առաջին փաստաբան Ֆոն Գոբտոնի հետ Ցաղօրին, որ եկել էր երրորդ թարգման։ Վերջին հարցաքննութեան ժամանակ խնդիր եղաւ, թէ ո՞վ է ինձ համար վարձել Հարտենբերգ թիւ 37 բնակարանը. Գալուստեանը գիտէր այդ, իսկ Ցաղօրին կարծում էի Բերլինից մեկնած։

— Կարեւորութիւն չունի, շատ էի ուզում քեզ տեսնել, ասաց նա։

Բարձրահասակ եւ թիկնեղ Ֆոն Գոբտոնը եկել էր պաշտպանութեան հրաւիրագիրը ինձ ստորագրել տալու եւ գործիս ծանօթանալու։ Բանտի գրասենեակային բաժնում նա ունէր ծանօթներ եւ բարեկամներ, եւ մինչեւ որ ձեռնարկեց գործի, բաւական ժամանակ անցաւ։

— Նոր էի հասել Ուհլանտ, պատմում էր Ցաղօրը, երբ յայտնուեց Բէհաէտտին Շաքիրը։ Հապիւ անցել էր քառորդ ժամ, երբ յանկարծ տեսայ որ «մոայլպէմ»ը գլխապատառ վազում է դէպի ժամադրատեղը։ Հասկացայ, որ մի բան պատահել է։ Վայրկեան չանցած՝ այնտեղից դուրս ընկան Շաքիրը եւ «մոայլպէմ»ը, որոնք գրեթէ վազելով գնացին Հարտենբերգի ուղղութեամբ։ Կրնկակոխ հետապնդեցի նրանց ու դեռ Հար-

ARAM webaram.com

անբերդ թիւ 17 բնակարանին չհասած, ուր ընկած էր դիակը, ամէն բան հասկացայ։ Ահագին բաղմութիւն կար։ Ի՞նչ եղաւ «մռայլադէմ»ը, չգիտեմ։ Ես կանգնած էի Շաքիրի մօտ, երբ նա մի պահ նայեց սրտաբեկ, ապա դողդոջուն քայլերով մօտեցաւ դիակին։ Պահակ կանգնած ոստիկանը արգիլեց։ Շաքիրը, կարծես քնից սթափելով, նայեց չորս կողմը, ձեռքը մեքենաբար տանելով գրպանը։ Այդ պահին տարբերտ մի պաշտօնեայ ձեռքով նշան արաւ նրան, որ մօտենայ ու նայէ։ Շաքիրը դողդոջուն ձեռքով վեր առաւ դիակի գլխին նետուած լաթը ու հառաստակեց, որ ողբանուածը Թալէաթն է։ Ականջի տակից մտած գնդակը, կտրելով ուղեղը, դուրս էր եկել գլխի առաջամասից։ Շաքիրը ծածկեց Թալէաթի մարմինը ու պաղաբիւնը վերադրելով, ինքնամփոփ եւ դանդաղօրէն յետ քաշուեց։ Աբաստնոդ տարեց պաշտօնեան մօտեցաւ նրան եւ ձեռքը սեղմելով ասաց.

— «Շատ ցաւալի դէպք. այնքան չփոթուած ու ցնցուած եմ այս անակնկալից, որ անելիքս չգիտեմ։ Ընդունեցէք ցաւակցութիւններս, դոկտոր»։

Ըստ երեւոյթին, խօսողը ընդհանուր պատերազմի միջոցին եղել էր Թուրքիայում եւ լաւ ծանօթ էր Բերլինի Թուրք քաղաքական շրջանակներին։

— «Ցաւ յայտնելը բաւական չէ, ասաց Շաքիրը. Թալէաթ փաշան մեզ համար ամէն բան էր. նրա հետ միասին թաղուած են նաեւ մեր բոլոր յոյսերը։ Փաշան իրեն բաժին ընկած պարտքի հաշիւը միշտ վճարելու պատրաստ էր, կարելի է ասել, որ պարտքի մուրհակը կրում էր գրպանում։ Ի հարկէ ոճրագործը հայ է, չէ՞»։

— «Այո՛, մի հայ երիտասարդ. շատ վատ վիճակի մէջ ձերբակալուեց, ժողովուրդը ուզում էր լինչի ենթարկել նրան»։

ARAM webaram.com

— «Բայց դուք ի՞նչ էք անում այստեղ, դոկտոր Ժէք», յանկարծ հարցրեց Շաքիրը։

— «Պատահականութիւն չէ. արտաքին գործոց նախարարութիւնից հրահանգ ստացայ ստուգելու մեռելի ինքնութիւնը ու մի ինքնաշարժով վրայ հասայ»։

— «Շատ լաւ, բայց ինչո՞ւ դիակը այսպէս գետին փռուած մնում է այս ամբոխի առջեւ. ո՞վ պիտի վերցնի դիակը. արդեօք ընդհանուր դատախազութիւնից այդ մասին արտօնութեան պէ՞տք կայ», հարցրեց Շաքիրը։ Ժէք կոչեցեալը, ըստ երեւոյթին, անկարող էր պատասխանել այդ հարցին. նա մի պահ մտածեց, ապա ծոծրակը քերելով՝ մօտեցաւ դիակին վրայ հսկող պահակ ոստիկանին ու նրա հետ երկար խօսքի բռնուեց։ Վերջապէս յետ դարձաւ ու ասաց.— «Ընդհանուր դատախազութիւնից հրաման ստանալու պէտք չկայ։ Արդէն լուր է տրուած քաղաքապետարանին, որ դան դիակը վերցնեն, բայց դեռ ինքնաշարժը չի եկել. հակառակի պէս բոլոր մեռելատարած կառքերը այսօր զբաղուած են։ Բայց մէկն ու մէկը երեւի շուտով կ'ազատուի եւ կը դայ, դիակը կը փոխադրի»։ Բէհաէտտին - Շաքիրը ապշահար մնաց ու բաւական մտածելուց յետոյ միայն կարողացաւ ասել.

— «Ուրեմն, ընդհանուր պատերազմի մինչեւ վերջին վայրկեանը Գերմանիոյ հաւատարիմ մնացող մի պետութեան վարչապետի դիակին այսպիսի՞ յարգանք էք արտայայտում, որ ժամերով փողոցների մէջ մնայ»։ Ժէք կոչոցեալը, յայտնապէս դգաստացած յարեց.

— «Քաղաքապետարանում ազատ դիակատոր չլինելու պատճառով այսպէս ուշացաւ. եթէ ցանկանաք ծախքը դուք հոգալ, իսկոյն կարող ենք մի հասարակ ինքնաշարժ ճարել»։

Կարծես կայծակ իջաւ Շաքիրի գլխին եւ իրօք, ի՞նչ ասել էր այս. ո՞ւր տեսնուած էր, որ մեռելը ժամերով

ARAM webaram.com

փողոցը մնայ, ձրի ինքնաշարժ չլինելու պատճառով։ Շաբթին բերանաբաց նայեց Ժէքին, ապա յանկարծ աբաստ գնաց դէպի վեր։ Քիչ վերը, մայթին վրայ, այդ պահին մէկը, օձ պար ածողի պէս կրակ կոխած, ձեռնափայտով գծում էր գետնին ու ամբոխի հարցումներին պատասխանելով՝ ցոյց տալիս զանազան ուղղութիւններ։

— «Թուրքը հասել էր այնտեղ, հայը եկաւ այսպէս ու յանկարծ կրակեց՝ բա՜հ. Թուրքը երեսի վրայ ընկաւ. հայը բաւական առեն այստեղ մնաց. գոչեցի՝ մա՛րդ սպաննեց, բռնեցէ՛ք. գոռացի՝ մա՛րդ սպաննեց. բայց ոչ ոք տեղից չշարժուեց։ Այն ժամանակ հայը այսպէս գնաց, յետոյ փախաւ. Ցաղանէն փողոցում բռնեցինք, քիչ մնաց սպաննէինք, կարծելով, թէ զօրավար Կապպն է. անպիտանը շատ նման էր նրան, որի տեղ որ թուրքէ եղեր»...

Յաղօրը այնքան տարուած էր իր պատմութիւնով, որ Ֆոն Գոբառոնի ներս մտնելը չնկատեց։

— Խնդրեմ նստեցէք, ասաց վերջինը։

Պատմեցի տնցեալիս, ներկայիս եւ գործին վերաբերող այն ամէնը՝ ինչ հետաքրքրում էր նրան։ Նա կատարում էր ընդարձակ նոթագրութիւններ՝ մէջ ընդ մէջ լրացուցիչ հարցումներ անելով. այդ ընդմիջումներին Յաղօրը պատմում էր։

Նրանից խնդրեցի այլեւս բանտում չհրեւալ եւ ես ղարձայ բանտասենեակ։

* * *

Զորս օր յետոյ ինձ կանչեցին երկրորդ փասատաբան Վէրթաուէրի մօտ։ Հաճելի մի նոր անակնկալ էր նրա հետ տեսնել Վազային, որ եկել էր Յաղօրի փոխարէն իբրեւ թարգման։

Բարեձեւ, միջինից բարձր, համակրելի եւ տխուր

ARAM webaram.com

զէմքով զոկտոր Վէրթաուէրին զբաղեցնում էին այլ կարգի հարցեր. ամենից առաջ ջարդերը այնպէս, ինչպէս գիտեմ ես. ապա մանկութիւնս, ծննդավայրս, ծնողներս, ապրումներս, մտասեւեռումներս, անգամ երազներս, զէպքի նախօրեակին ապրած օրերս եւ այլն։ Ինդիրներ, որոնք աւելի շատ կապ ունէին անձիս, քան գործի հետ։ Նա նոթագրութիւններ չէր անում. թղթապանակի մէջ ունէր միայն մի թերթիկ իմ մասին, որին երբեմն նայում էր ու շարունակում իր մեղմ ու համբերատար զրոյցը։ Կանչել էր եւ մի ուրիշ պաշտպանեալ։ Հաճոյքով զիջեց Վարպետի խնդրանքին որ մնամ մի քիչ իր հետ։

— Այո՛, այո՛, ապասեցէք, դեռ շատ բաներ, ասաց փոսատաբանը։

Բնականաբար մեր զրոյցը դառնում էր զէպքի շուրջ։ Վարան ներկայ էր եղել Թալէաթի թաղման։

— Հինգ օր գիակը անթաղ մնաց, պատմում էր նա, ուզում էին Պոլիս փոխադրել, բայց Պոլսոյ կառավարութիւնը մերժեց։ Այլ կերպ չէր էլ կարող վարուել, որովհետեւ Եւրոպայի մամուլը դեռ զբաղւում է այդ հարցով. մերկացումներ, դատապարտութիւններ ջարդարարների հասցէին ամէն կողմ։

Հայ գաղութները ամէն տեղ արտակարգ ցնծութեան մէջ են. բոլոր թերթերը նուիրում են զէպքին ընդարձակ էջեր։ Բայց Թուրքերն էլ անգործ չեն. ամէն կերպ աշխատում են դատը շահել. նրանք յաջողեցին կաշառել մի քանի դրշակներ, որոնք թերթերում հանդէս եկան թրքանպաստ գրութիւններով։ Թաղման նախօրեակին նրանք Բերլինը հեղեղեցին մահագրերով, որոնց մէջ հայերը որակւում էին վարկաբեկիչ խօսքերով։ Սարսռաւոր եղանք գաղութի անունով մի ապդաղիր ապարդելու, որի մէջ զէպքը գիտում էինք իրրեւ հայ ժողովուրդի վրէժի արդար հատուցում։

ARAM webaram.com

Թագման օրը նրանք բերել էին բազմաթիւ պատկներ։ Առաւօտեան ժամը 10ին Հաբառենրերդ թիւ 4 տան առջեւ արդէն համախմբուած էր բազմութիւն. նկատելի էին օտարոտի դլխարկներ՝ ֆէս, փաթթոց, մարթէ դլխարկներ։ Կանաչ հագուստով թուրքեր հսկում էին կարդապահութեան։ Այդտեղ էին շտապում լուսանկարիչներ, եւ շարժապատկերի նկարիչներ։ Թալէաթի բնակարանում կատարուեց կրօնական արարողութիւն։ Թրքական դեսպանատան աշխատակը՝ Շիւքրի էֆէնտին երդեց մահմեդական ապօթքի կոչը — Ալլահ էքպէր։ Ապա կարդաց մահուան ապօթքը, որից յետոյ կատարուեց մեռելի դատաստանի արարողութիւնը.

— «Աստ հանդչի Մեհմէտ Թալէաթ փաշան, բարձրը ատաքինութիւններով օժտուած մէկը, Ալլահի ծառան։ Կա՞յ ձեր մէջ մէկը, որ հակառակը պնդէ», ձայնեց Շիւքրի էֆէնտին։

— «Ո՛չ», միաբերան պոչեցին ներկաները։

Ապօթատացը սկսեց Թագման արարողութիւնը. լուում էին ներկայ կանանց հեծեծանքները։ Ժամը 11 եւ կէսին դուրս հանեցին դագաղը։ Աբեւելքի երիտասարդ մի թափօր էր, որ հանդիսաւորապէս շարժուեց Բերլինի բազմամարդ փողոցներով։ Ռազմիկանական պաշտօնեաներ ճանապարհ էին բացում։ Նրանց հետեւում էր պատկերով բեռնաւոր կառքը. ապա յամբաքայլ գնում էին զանազան քաղաքներից եկած 100—150 խալամ ուսանողներ՝ արաբ, եգիպտացի, հնդիկ, պարսիկ։ Բոլորն էլ կրում էին «Իթթիհատ վէ Թէրաքկի»ի խորհրդանշանը։ Դիակառքին հետեւում էր ապօթատացը՝ մանիշակագոյն զգեստով, ճերմակ փաթթոցով, ճակատին ոսկի երիզներ եւ կուրծքը շքեղ շքանշաններով զարդարուն։ Շատ պատկներ կային եւ մինչեւ վերջին պահը հասնում էին նորերը։ Նրանց մէջ աչքի էին ընկնում Գերմանիայի արա. գործոց նախարարութեան

ARAM webaram.com

Հայ վիրավոր զինվորները Բերլինի փողոցներում

ARAM webaram.com

եւ Գերմանեւթուրք Միութեան ծպկեպատկները։ Ներկայ էին թուրք գեսպանատան պաշտօնեաները, գանազան թուրք հիւպատոսները, ինչպէս եւ այլ միութիւնների ներկայացուցիչները։ Ներկայ էին նախկին ծոմայեն նախարար Մահմուտ Մուխտար փաշան, Գէրէբար, Ֆոն Յիմմերմանը, Կիւրմանը, գօրավար Զէկիպը, գօրավար Ֆրէս Կրէսիշտայնը, գանազան նախարարութիւնների վարիչները, գերմանական գրաժատան վարիչ Կուէրնները, ազնուական Օփֆէնհայմը եւ ուրիշներ։ Կատարեալ յայտնեց իր ցաւակցութիւնը Ֆոն Շուլէնբերգի միջոցով։ Կէսօրին յուղարկաւորութեան թափօրը հասաւ գերեզմանատուն։ Բէհաէտտին Շաքիրը հայրենի կարգաց տակ իր հրաժեշտի խօսքը մեռելին. բառերը խեղդուած էին կոկորդում։ Նրան շրջապատել էին արեւելեան բոլոր ազգերի մահմեականները. կարծես բոմանդակ Արեւելքը ուղարկել էր նրանց իրրեւ ներկայացուցիչ գոչելու.

— «Մենք պատրաստ ենք նրան փոխարինելու. նրա գործը մեր գործն էր»։

Դամբանականների այս շարքը առաջու քաղաքական յայտի բնոյթ։ Բէյրութի արարների կողմից խօսեց Էմիր Շէքիբ - Արսլանը. Ռուսաստանի թաթարների կողմից՝ կազանցի Իսրիս բէյը։ Խօսեց բանաստեղծ Ամրուլլասէրը։ Ապա խօսք առաւ մոտ զէմքով մի թուրք, որ վեր հանելով բառնցքը՝ երդուեցի հրաւիրեց ներկաներին գոհ վրէժ լուծելու, ներկաներից շատերը արձագանգեցին երդուելիս։ Սպիտակ գլխարկով մի հնգիկ, ինչ որ գոկտոր Ֆիլայ, խօսեց բոլոր հնչուած ժողովուրդների անունով։ Բերլինի արեւելագիտական ճեմարանի գասախօս Միրզա Հասանը իր գամբանականի մէջ յիշատակեց պարսիկ փիլիսոփայ Սաատիի խօսքերը, թէ «Մարդկութիւնը մէկ մարմին է. երբ անդամներից մէկը ցաւի, ամբողջ մարմինը ցաւ կը զգայ»։

ARAM webaram.com

Գերմանացիների կողմից Անատոլուի երկաթուղիների նախկին տնօրէն Կիւնթէրը.— «Այժմ մեծ մարդուն անկարող են դնահատել ժամանակակիցները. նրան պիտի փառաւորի պատմութիւնը իր դրչով։ Մենք՝ գերմանացիներս մեր սրտերում կրում ենք նրա վսեմ նկարագրի դրոշմը», ասաց նա։ Գերմանեւթուրք Միութեան նախագահը, Եքոզը, դաղտի վրայ դրեց մի ծաղկեպսակ, որի ժապաւէնին գրուած էր.

— «Մեծ քաղաքագէտին եւ հաւատարիմ բարեկամին»։

Դոկտոր Եքոզը մաղթեց, որ Թալէաթի հոգին յաւիտենապէս ապրի գերման եւ թուրք յարաբերութիւնների մէջ...

* * *

Մայիսին վերջացան բոլոր լրացուցիչ հարցաքննութիւնները։ Ամառուան վերջերին ինձ քննութեան ենթարկեցին ջղային հիւանդութիւնների մի քանի մասնագէտ բժիշկներ։ 1921 Յունիսի 2ին սկսուեց դատավարութիւնը։

Միայն այդ օրը դաղափար կազմեցի, թէ ինչ հրակայական տարածութիւն էր բռնում բանտը յարակից շինութիւններով, պահեստներով եւ արհեստանոցներով։ Ինձ անվերջ առաջնորդում էին բակից բակ, ծանրը ու մռայլ շէնքերի միջով, որոնց դռներով ներս ու դուրս էին անում բանտարկեալները։

Բերլինի նահանգային երրորդ դատարանը գտնուում էր բանտին կից. առանց փողոցի երես տեսնելու, հասանք այդ շէնքին, որի ճախ կողմի երկարաձիգ միջանցքի մի դռնից ներս մտանք։ Ընդարձակ շէնքի բա-

ARAM webaram.com

ժիններում տիրում էր եռուզեռ. համազգեստաւոր ոստիկանները դէս ու դէն էին գնում թեթեւ վազքի ձեւով. պաշտօնեաները նեռս ու դուրս էին անում՝ թըղթապանակները թեւի տակ. դռների մօտ տեղ - տեղ կանգնած էին քաղաքացիները, որոնք զրոյց ունէին դատարանում: Շէնքի այս մասում կենտրոնի մուտքը հսկողութեան տակ էր: Պահակների ուղեկցութեամբ նեռս մտայ ու ինձ գտայ մի հոյակապ դահլիճում: Բարձր առաստաղը հանգչում էր թեթեւագէս վեր սըլացող կամարակալ սիւների վրայ. վարը նրանք հեռապատկերներով բաժանում են դահլիճը սրահների, որոնց կենտրոնում փռուած է կիսակլոր դատարանը՝ երեք կողմից շրջապատուած փայտէ ընտիր զարդարանքների ցածրաղիր կառուցուածքներով: Նեռս մըտնելով խորքի դռնից՝ տեղ բռնեցի ամբաստանեալի յատուկ բաժնում, պահակներից մէկի հետ միասին:

Առաւօտ էր, ժամը 9: Կամարաձեւ սիւների միացման կենտրոնում, խորքի մօտ, կախուած էր մի հսկայ ջահ, որի երիզաձեւ զարդարանքները շիթ - շիթ փայլփլում էին նեռս ընկած արեւի ճառագայթների տակ: Խորքի մասում ինձ դահլիճից բաժանում էր երեք - չորս աստիճաններով մի բարձրութիւն: Դէպի ձախ, առանձին սեղանի մօտ, նստած էր դատարանի քարտուղարը: Կենտրոնում, նոյն բարձրութեան վրայ, երկարում էր երեք - չորս մէթրանոց սեղանատեղի մի կառուցուածք, որի դիմաց նստած էր դատարանի վարիչ դոկտոր Լեմբերգը՝ երկու օգնական դատաւորներով: Կառուցուածքին միւս ծայրին տեղ էր բռնել դատախազ դոկտոր Գոլնիկը: Ինձանից վար ձախ մասում, մի երկարաւուն սեղանի մօտ, նստած էին երեք պաշտպան փաստաբանները, Թարգման Վազան, Գալուստեանի, ինչպէս նաեւ բժշկական փորձագէտների հետ: Նրանց դիմաց, դահլիճի յատուկ բաժնում, սեղաննե-

ARAM webaram.com

բի մօտ, երկշաբաթ նստած էին տասնեակու երդուեալ տենեակալները։ Քիչ դէպի վար, եռ ու առաջ, սթոռներին տեղ էին բռնել վկաները։ Առաջին շարքում աչքս ընկաւ սեւեր հագած տիկին Թալէաթին, որ անքթիթ նայում էր ինձ։ Նրա ձախ կողմին նստած էր օրիորդ Լեոլա Բայլընգոնը, աջ կողմին՝ տիկին Շուլբաուումը, տիկին Դիմանը, ապա՝ Թէրզիպաշեանները, Լիֆթեանը, Աբէլեանը եւ մի քանի անծանօթներ։ Աւելի առաջ, դէպի դահլիճի կենտրոնը, կային թղթակիցներ։ Դահլիճի կենտրոնից դէպի առաջամասը, ընդարձակ տարածութեան վրայ, ամփիթատրոնաձեւ կառուցուած էին նստարաններ հանրութեան համար, որոնք ամբողջութեամբ զբաւուած էին։ Զուգահեռ մասերում ներկաների մի մասը մնացել էր ոտքի վրայ, առաջանալով դէպի կենտրոնը՝ փաստաբանների ու երդուեալների յատկացուած բաժինների ուղղութեամբ։ Գերմանացիներից զատ, կային բաւական թիւով թուրքեր եւ հայեր։

Դահլիճում տիրող խոր լռութիւնը ընդհատեց գոկտոր Լեմբերը՝ բանալով ատեանը։ Պաշտպան Ֆոն Գաբլենցը խնդրեց, որ իրապէսների խմբի մէջ լուսին նաեւ գոկտոր Լեպսիուսն ու Լիման Ֆոն Զանդերսը, իբրեւ հայ իրականութեան ծանօթ վկաներ։ Դատախազը թէեւ դիտել տուեց, որ դէպքը տեղի է ունեցել ոչ թէ Հայաստանում, այլ Բերլին, բայց առաջարկի դէմ չառարկեց։ Դիմացի զոնից ներս մտան յիշեալները։ Նախագահը մի քանի խօսքով վկաներին յիշեցրեց իրենց պարտականութիւնները, ապա երկու խմբի բաժանեց նրանց ու բարձրաձայն կարդալով առաջին տողերով լուսելիք 19 վկաների անունները, խնդրեց բոլորից դուրս գալով սրահից եւ սպասել հրաւէրի։

Սկսուեցին ինքնութեանս վերաբերող սովորական հարցումները՝ մանկութիւնս, ծնողներս, կրթութիւնս,

ARAM webaram.com

Երզնկան, Ջարդերը։ Նախապահը երկար բաբակ կանգ առաւ դէպքերի վրայ։ Վերջապէս աւարտելով այդ նոխնական հարցումները, անցաւ գործի հետ առնչութիւն ունեցող շրջանին։

— Ջարդերից յետոյ ե՞րբ եղաք Երզնկայում։

— 1916ի վերջերին, ռուսների գրաւումից քիչ յետոյ։

— Հարազատներից ո՞վ գտաք այնտեղ։

— Ոչ ոքի, բոլորն էլ սպաննուած էին. քիւրտերի մօտ գտնուեց միայն երբօրս տասը տարեկան աղջիկը։

— 17 հոգուց մնացել էր միայն նա՞։

— Այո՛։

— Երզնկայում ձեր տան մէջ եղա՞ք։

— Այո՛։

— Ի՞նչ տեսաք այնտեղ։

— Տան մի մասը խորտակուած էր, գոները, պատուհանները քանդուած եւ կողոպտուած, իսկ միւս մասում էին ռուս զինուորները։ Շատ փատ եղայ մեր տունը գտնելով աւերակ։ Անցայ մեր ընդարձակ պարտէզը. աւերուած ու հիմնայատակ եղած, ծառերը կտրտուած ու տապալած. ամէն ինչ ամայացած էր։ պարտէզի խորքում գեռին ընկայ։

— Ուշաթա՞փ եղաք։

— Այո՛։

— Ո՞րքան տեւեց այդ։

— Չգիտեմ։

— Երբ ուշքի եկաք, ի՞նչ արիք։

— Գնացի խլամացած հարեւան մէկ ընտանիքի մօտ, քսպաքի միակ ապաստուած հայերը։

— Ուրեմն, դուք միայն մէկ ընտանիք գտաք քսպաքի նախկին բնակչութիւնից եւ այն էլ խլամացա՞ծ։

— Այո՛։

ARAM webaram.com

— Իսկ երբ ռուսները Երզնկան գրաւեցին, դարձեալ քրիստոնեա՞յ դարձան։

— Ի հարկէ։

— Ուրեմն, Երզնկայի բնակչութիւնից միայն նը-բա՞նք էին մնացել։

— Այո՛, եւ մի քանի անհատներ, ընդամէնը քսան հոգի։

— Որքա՞ն մնացիք Երզնկա։

— Մի քանի ամիս։

— Յետոյ ո՞ւր գնացիք։

— Թիֆլիս։

— Ե՞րբ, դուրս ելաք Թիֆլիսից։

— 1918ի աշնան։

— Ո՞ւր գնացիք։

— Հիւսիսային Կովկաս։

— Ի՞նչ էիք անում այնտեղ։

— Հիւանդ էի։

— Ի՞նչ հիւանդութիւն ունէիք։

— Ջղային տապնապ, վերջը հիւանդացայ տիֆով։

— Քանի՞ անգամ կրկնուեցին այդ ջղային տապ-նապները, ձեր հայրենի տունը վերստին տեսնելուց յետոյ։

— Մի քանի անգամ, ատոյգ չեմ յիշում։

— Ե՞րբ մեկնեցիք Կովկասից։

— 1919ի սկզբին։

— Ո՞ւր գնացիք։

— Պոլիս։

— Ի՞նչ նպատակով։

— Հարազատներիս հետքը փնտռելու։

— Այն ժամանակ Պոլսում տեղի էր ունեցել յեղ-ջրջում, ո՞րքան մնացիք այնտեղ։

— Մօտ մի տարի։

ARAM webaram.com

— Ցեռոյ ո՞ւր գնացիք։

— Փարիզ։

— Պոլիս կամ Փարիզ գէպքերի շուրջ տարաբերութիւնների հետ խօսո՞ւմ էիք։

— Քիչ անգամ, մօտ բարեկամներիս հետ։

— Ո՞վ էր համարուում այդ խժդուժութիւնների հեղինակը։

— Նրանց մասին խմացայ Պոլիս, լրագրներից։

— Աւելի առաջ գիտէի՞ք, թէ ով է Ջարդերի հեղինակը։

— Ո՛չ։

— Ե՞րբ այն համոզման եկաք, որ Թալէաթ փաշան է նրանց հեղինակը։

— Պոլիս եղած ժամանակ, լրագրներից։

— Այն ժամանակ գիտէի՞ք, թէ ո՛ւր է Թալէաթ փաշան։

— Ո՛չ։

Միջամտեց պարոն Գոնտ Գոբոնը։

— Ամբասսանեանին կ՚ուզէի հարցնել, թէ արդեօք կարդացե՞լ է լրագրների մէջ, որ Թալէաթ փաշան այդ խժդուժութիւնների համար Պոլիս գինուորական տեսանի կողմից դատապարտուած է մահուան։

— Կարդացել եմ, երբ դեռ Պոլիս էի եւ երբ տեղեկանում Ջարդարարների Քեմալը կոխարդան հանուեց. լրագրներից գիտէի, որ Թալէաթ եւ Էնվեր փաշաներն էլ դատապարտուած են մահուան։

— Երզնկայի մէջ ո՞րչափ հայ բնակչութիւն կար։

— Մօտ քսան հազար։

— Բոլոր բնակիչները սեղմահանուեցի՞ն ու ձեր Երզնկա վերադարձին միայն մէ՞կ բնտանիք տեսաք եւ մի քանի անհատներ։

— Այո՛։

— Կ՚ուզէի իմանալ, թէ ամբասսանեանը գիտէ՞,

ARAM webaram.com

որ 1908ին հայերը, Երիտասարդ Թուրքերի, մասնաւորապէս Թալէաթ եւ Էնվեր փաշաների հետ միասին, առաջ բերին յեղափոխութիւն եւ իրենց ապագային յոյսերը նրանց վրայ էին դրած, բայց յետոյ զարհուրելի կերպով յուսախաբ եղան, երբ տեսան, որ Երիտասարդ Թուրքերը Սուլթան Ապտիւլ Համիտից էլ վատ են վարւում հայերի հետ, դարձաւ նախապահին երբոր պաշտպան Նիմայէրը:

— Գիտէի, որ հայերը զարձակցել են Երիտասարդ Թուրքերին: Բայց յետոյ խիստ յուսախաբ եղան, երբ տեղի ունեցան Առանայի ջարդերը, որոնց զոհ դնացին 40,000 հայեր:

* * *

Նախապահի առաջարկով քարտուղարը կարդում է բացման վճիռը.

— «Մեքենագրութեան ուսանող Համարուած Սարգսան Թէհլիրեանը, ծնուած 2 Ապրիլ 1897 թ. Բարձրեմ, թրքահպատակ եւ հայ բողոքական, որ բնակւում էր Շարլոթենբուրգ, Հարտենբերգ փողոց 37, Դիմանի մօտ եւ 1921ի Մարտ 16ից ի վեր գտնւում է բանտում, մեղադրւում է 1921 թ. Մարտ 15ին Շարլոթենբուրգի մէջ թրքական նախկին մեծ եպարքոս Թալէաթ փաշային դիտմամբ սպանելու եւ սպանութիւնը կանխամտածութեամբ կատարած լինելու համար: Ոճրագործութիւնը նկատի կ'առնուի, քան պատժական օրենսգրքի 211րդ յօդուածի: Այդ հիմքերով բանտարկութիւնը շարունակւում է: Բերլին 16 Ապրիլ 1921. Նահանգային Երրորդ դատարան. պատժոյ 6րդ սենեակ»:

— Եթէ այս մեղադրանքին այս կամ ոչ ասելու ամիսուիք, ի՞նչ պիտի պատասխանէք, դարձաւ ինձ նախագահը:

— Ո՛չ:

ARAM webaram.com

— Խնդրեմ հարցրէ՛ք թէ ինչո՞ւ իրեն յանցաւոր չի համարում, դիմեց նախագահին պաշտպան Ֆոն Գոբատնը։

— Ինձ յանցաւոր չեմ համարում, որովհետև խիղճս հանգիստ է։

— Խիղճդ ինչո՞ւ հանգիստ է, հարցրեց նախագահը։

— Մարդ եմ ապաննել, բայց մարդասպան չեմ։

— Ասում էք, որ ձեր խիղճը մաքուր է, բայց հարց տուէք ձեզ, արդեօք Թալէաթ փաշային ուզո՞ւմ էիք ապաննել։

— Այդ հարցումը չեմ հասկանում, չէ՞ որ ես նրան արդէն ապաննել եմ։

— Ուզում եմ ասել, թէ նրան ապաննելու ծրագիր ունէի՞ք։

— Ո՛չ։

— Փարիզից ե՞րբ եկաք Ժընևս։

— 1920ի վերջերին։

— Իսկ Բերլի՞ն։

— Դեկտեմբերի սկզբին։

— Յունուարի՞ն ապրում էիք Աուգսբուրգեր փողոց 51։

— Դեկտեմբերին։

— Ցեռոյ բնակարանը փոխեցի՞ք։

— Այո՛։

— Ե՞րբ։

— Դէպքից մօտ երկու շաբաթ առաջ։

— Ի՞նչ էր այդ տեղափոխութեան պատճառը։

— Որոշել էի Թալէաթին ապաննել։

— Այդպէս վարուելով գործը նախապատրաստո՞ւմ էիք։

— Այդ ժամանակ ինձ համար հգօր ներքին պահանջ էր Թալէաթը ապաննելը։

ARAM webaram.com

— Ուրեմն, դուք մտապրած էիք նրա մօտ՞ բը-նակուել։

— Այո՛։

— Ասացէք, խնդրեմ, ճի՞շդ է որ դրանից առաջ ասուպել էիք, որ Թալէաթը գտնուում է Բերլինում։

— Այո՛, մօտաւորապէս հինգ շաբաթ առաջ ես նը-բան տեսայ։

— Ո՞ւր։

— Կենդանաբանական պարտէզի մօտ լսեցի թուր-քերէն խօսակցութիւն, ուր մէկին «փաշա» անուանե-ցին։ Ցեղ նայելով տեսայ, որ Թալէաթ փաշան է. հե-տեւեցի նրան։ Հարտենբերգ փողոցի սկզբի մառում ե-րեք ուղեկիցները հրաժեշտ տալով նրա ձեռքը համ-բուրեցին, իսկ Թալէաթ փաշան մի ուրիշի հետ տուն մտաւ։

— Ուրեմն ասոյդ չէ՞, որ դուք տեսել առաջ դի-տէիք, որ Թալէաթ փաշան գտնուում է Բերլինում։

— Ո՛չ։

— Ի՞նչ պատճառով ժամանակին դիմել էք պրոֆե-սոր Կասիրէրին։

— Հիւանդ էի, ջղային տապնտպներ եւ գլխապը-տոյտներ էի ունենում։

— Ե՞րբ էր այն ջղային տապնտպը, որի միջոցին դրամատան մի պաշտօնեայ ձեզ վեր հանեց ու Երուսա-լէմէր փողոցից տուն տարաւ։

— Չեմ յիշում...

— Այն ժամանակ դեռ տպրո՞ւմ էիք Աւդսբուր-գեր փողոցը։

— Այո՛։

— Որո՞նք էին ձեր ծանօթները։

— Թէրգիսպաշեան, Էֆթեան, Գալուստեան, Աբէլ-եան։

ARAM webaram.com

— Ցունուարից այս կողմը օրիորդ Բայլբնպոնից դաս առնելուց դատ ի՞նչ էիք անում։

— Այցելում էի ծանօթներիս։

— Կարծեմ պարի դա՞ս էլ էիք առնում։

— Այո՛, մէկ անգամ։

— Ճի՞շդ է, որ դասերի ժամանակ չդայլին տապնապ էք ունեցել։

— Այո՛։

— Ի՞նչպէս էիք ձեր նախորդ տանտիրոջ տիկին Շակլբաուէմի հետ։

— Շատ լաւ։

— Տիկին Դիամանի մօտ էլ գո՞հ էիք։

— Այո՛։

— Ի՞նչպէս եղաւ, որ ապանութիւն գործեցիք։

— Սենեակիս մէջ քայլում էի, երբ Թալէաթ փաշային տեսայ իր բնակարանի պատշգամում։ Ողջ էութեամբ ցնցուեցի. նա էր, որ ապանել էր մօրս, եղբօրս, հարազատներիս եւ հաղարաւոր ազգակիցներիս։ Տեսայ, որ դուրս է գալիս, ատրճանակս առի, վազեցի եւ գնդակահար արի։

— Դուրս եկած ժամանակ Թալէաթը գիմացի՞ մայթի վրայ տեսաք։

— Այո՛։

— Իրեն մօտեցաք եւ Հարտենբերգ փողոցը կտրեցի՞ք։

— Փողոցի այս կողմով վազեցի մինչեւ իրեն հասայ եւ անցայ, յետոյ փողոցը կտրեցի եւ վրայ հասայ։

— Երեսը դիտեցի՞ք, հետը խօսեցի՞ք։

— Հետը չխօսեցի, մայթի վրայ նրան հաւասարուեցի եւ կրակեցի։

— Գլխի՞ն նշան առիք։

— Բոլորովին իրեն մօտեցայ։

ARAM webaram.com

— Ցեռոյ ի՞նչ եղաւ։

— Այսքանը միայն գիտեմ, որ Թալէաթ փաշան գեռին ընկաւ, գլխից արիւն էր հոսում, ու շտապ գին խմբուած էր բազմութիւն։

— Չռեսա՞ք, որ Թալէաթին ընկերանում էր մի կին։

— Ո՛չ։

— Տիկին Թալէաթը չռեսա՞ք։

— Ո՛չ։

— Սպանութիւնից յետոյ ի՞նչ արիք։

— Ձեմ յիշում։

— Չէ՞ք յիշում, որ փախել էք։

— Փախչելու ոչ մի կամք չկար մէջս, բազմութիւնը հարկադրից՝ յարձակուելով վրաս։

— Ի՞նչ մտածեցիք ձեր արածի մասին։

— Սրտի գոհունակութիւն էի զգում։

— Իսկ այսո՞ր։

— Դեռ այսօր էլ եղածից շատ գոհ եմ։

— Ծեծի ժամանակ չէ՞ք յիշում թէ ինչ ասացիք ամբոխին՝ ձեզ արդարացնելու համար, հարց տուեց պաշտպան Նիմայէրը։

— Ասացի, որ ես հայ եմ, իսկ նա թուրք. ձեզ հետ առնչութիւն չունի։

— Կ՚ուզէի իմանալ, թէ ամբաստանեալը ի՞նչպէս ճանաչեց, որ այդ անձը Թալէաթն է. տեսա՞ծ տեսել էր նրան, թէ պատկերների վրայով ճանաչեց, ասաց դատախազը։

— Նրան չէի տեսել, լրագրների մէջ տպուած պատկերներից ճանաչեցի։

— Երդնկայում հայերից դատ ուրիշ ի՞նչ ազգեր կային։

— Քանից – երեսուն հազար թուրքեր...

ARAM webaram.com

* * *

Նախապահ Լեմբերդը անցաւ վկաների հարցաքննութեան։

Շարլոտենբուրգի վաճառական Եսէնը պատմեց, թէ ինչպէս հաւատարուեցի Թալէաթին ու կրակեցի.

— Մի քիչ առջեւից անցնում էր մի կին որ ուշաթափ եղաւ. նախ՝ վեր հանեցի այդ կնոջ՝ կարծելով, թէ վիրաւորուած է։ Յետոյ ամբաստանեալի յետեւից վազեցի ու Ֆրանկֆուրտ խողոցում ձերբակալեցի նրան։ Բնական է, հաւաքուեց բազմութիւն. մարդիկ անխնայ ծեծում էին ամբաստանեալին. մէկը բանալիով շարունակ հարուածում էր գլխին. ուրիշներ դռռում, կանչում էին...

Վկային եղած հարցումներից պարզւում է, որ ուշաթափ եղած կինը անցորդ է եւ ոչ Թալէաթին կինը, ինչպէս գրել էին թերթերը։ Նախապահը խնդրում է յայտնել տիկին Թալէաթին, որ նրա վկայութեան այլեւս պէտք չունի եւ կարող է մեկնել։

Յաջորդ հինգ վկաները տարբեր երանգներով կրկնեցին նոյնը։ Շարլոտենբուրգի ոստիկանութեան պետ Գնասը, որ առաջին հարցաքննողն էր ինձ, աշխատում էր փաստել, որ սպանութիւնը կատարել եմ կանխամտածումով։ Այդ՝ կանչուեց առաջին տանտիրուհիս՝ տիկին Շտեյբաումը։ Կարծես անցել էր շատ ժամանակ ու կարօտի մի զգացում յայտնուեց այդ պահին իմ մէջ դէպի նա. կարճ ժամանակում դարձել էր հարազատ՝ այդ օտար կինը։ Նա ծեր աչքերով նայեց դէպի ինձ ու ասաց.

— Այո՛, ամբաստանեալը բնակուել է իմ մօտ. իր մասին միայն լաւ կարող եմ վկայել։ Շատ պարկեշտ ու համեստ էր. սպասուհի չունիմ եւ ինքս եմ կատարում տան գործերը, սակայն ինչ որ կարող էր, անում էր ինքը՝ ինձ չծանրաբեռնելու համար, իր կօշիկները

ARAM webaram.com

մաքրելը չէր ձգում ինձ: Ամէն տեսակէտով շատ համեստ ու պատուաւոր էր:

— Հիւանդացա՞ւ ձեզ մօտ, հարցրեց նախապահը:

— Զարիզանց ջղային էր. չէր կարողանում քնել:

— Գիտէ՞ք, որ այցելում էր բժշկին:

— Այո՛, պրոֆեսոր Կասիրէրին:

— Զգաստացա՞ք, որ յանկարծ տեղափոխուեց:

— Ինչպէ՞ս չէ. այդ առթիւ հարցումիս պատասխանեց, թէ բժիշկը ասել է, որ գազի լոյսը վնաս է իրեն եւ պէտք ունի արեւի լոյսի: Հաւատացի, որովհետեւ շատ ջղային էր:

Փորձագէտ բժիշկ Լիպմանը երկար բարակ հարցաքննութեան ենթարկեց նրան հոգեկան վիճակիս մասին:

Նոյն ձեւով վկայեց իմ մասին նաեւ մեւս ատենապետիս, տիկին Դիտմանը: Դէպքի մասին ասաց.

— Մարտի 15ի առաւօտը, դէպքի օրը, ապատուհիս ինձ լուր տուաւ, որ պարոնը սենեակում լաց է լինում, ասացի՝ հանգիստ թող, գուցէ մերձաւորներից մէկը մեռել է. քիչ յետոյ դուրս եկաւ:

— Որեւէ կասկած չունեցա՞ք, հարցրեց նախագահը:

— Ամենեւին, մինչեւ որ ապատուհիս տուն վերադարձաւ եւ ասաց, թէ պարոնը ապանեուած է: Խե՞նթ ես, ի՞նչ ես, ասացի, յետոյ իմացայ, որ ինքը մէկին ապանել է:

— Ամբաստանեալը սովորական հանգարտութե՞ամբ մէջ էր այդ օրը:

— Մի օր նրա ծանօթներից մէկը եկաւ եւ ասաց, թէ պարոնը հիւանդ է եւ արեւոտ սենեակի պէտք ունի, ասաց տիկին Դիտմանը երկար պատմութիւն անելու մասին...

—Ձեզ մօտ եղած ժամանակ ոչինչ չնկատեցի՞ք:

ARAM webaram.com

— Ո՛չ։

— Ուռանո՞ւմ էր։

— Այո՛, շատ քիչ անգամ էր դուրս գալիս։

— Այցելուներ ունէ՞ր։

— Բնաւ։

— Նկատե՞լ էք վրան ջղայնութիւն։

— Ամաչկոտ էր. չէր կարող երեսս նայիլ, շփոթուում էր։

— Ահաբեկուա՞ծ էր։

— Զարհուրածի երեւոյթ ունէր։

— Ծանր խորհուրդներից հալածուածի՞ պէս։

— Այո՛։

— Հիւանդագին երեւոյթներ նկատե՞լ էք։

— Ո՛չ։ Բայց ինքը ասում էր, որ հիւանդ է, ջղային։

— Ամբաստանեա՛լ, դարձաւ ինձ նախագահը, ո՞վ գնաց տիկին Դիմանի մօտ ձեզ համար բնակարան վարձելու։

— Հայ Ուռանոզական Միութեան նախագահը։

— Այսո՞ղ է։

— Ո՛չ...

— Ամբաստանեալը նեղուածի՞, թէ ընկճուածի տպաւորութիւն էր թողնում, հարցրեց Դիմանին՝ փոքրագէտ Լիզմանը։

— Վարանում էր, գոնէ իմ կարծիքով շատ վարանում էր երիտասարդը, ասաց ժպտալով, հայեացքը Լիզմանից դարձնելով ինձ։

— Ամբաստանեալի ձեզ մօտ եղած ժամանակ ուրբաթանակը տեսե՞լ էք, տիկին Շուլբասում, դարձաւ նախագահը նախկին տանտիրուհուս։

ARAM webaram.com

— Ո՛չ։

— Ամբասանեալի դոյքերը չա՞տ էին։

— Ո՛չ, միայն մի սնտուկ ունէր, որ միշտ բաց էր։

— Ամբասանեա՛լ, դարձաւ ինձ նախագահը, ո՞ւր էիք պահել ատրճանակը։

— Սնտուկիս մէջ։

— Տիկին Շտելբաումի մօտ նո՞յնպէս։

— Այո՛, սնտուկիս մէջ էր։

— Ես չեմ տեսել, մրմնջաց տիկին Շտելբաումը։

— Զարմանալի է, որ յաճախ նայել էք սնտուկը եւ ատրճանակը չէք տեսել։

— Չեմ կարող ասել, թէ սնտուկը յաճախ նայել եմ, ասաց զուսպ բարկութեամբ տիկին Շտելբաումը...

Հերթը հասաւ մանկահասակ վարժուհուա՝ Լեոլա Բայլընդոնին։

— Դուք ամբասանեալին լեզուի դա՞ս էիք տալիս։

— Այո՛։

— Ի՞նչ կարող էք ասել իր բարք ու վարքի մասին։

— Ցունուարի 18ից սկսած դաս էր առնում. սկզբում սովորում էր շատ լաւ, բայց վերջը ցրուած էր։

— Ասե՞լ է ձեզ, որ հիւանդ է եւ դիմել է բժիշկի։

— Վերջը պատմեց, որ եղել է պրոֆեսոր Կասիրէրի մօտ, դեղ է ընդունում, աշխատելը դժուար էր իրեն համար։ Մի դասի ժամանակ նկատեցի, որ նոյնիսկ չէր կարողանում գրածը կարդալ. յայտնի էր, որ հիւանդ է. եւ իրեն ասացի, որ այսուհետեւ դասերը շարունակելը աննպատակ է։ Դրանից յետոյ դասերը ընդհատուեցին։

— Ե՞րբ էր այդ։

— Մօտաւորապէս Փետրուարի երկրորդ կէսին։

— Յետոյ դարձեալ եկա՞ւ։

ARAM webaram.com

— Մի անգամ էլ եկաւ եւ ասաց, որ իրեն վատ է զգում. արդէն երեւում էր, որ հոգեկան վիշտ ունէր. շատ տխուր էր:

— Այդ տխրութեան վրայ խօսո՞ւմ էր:

— Մի անգամ միայն, երբ դասի բերումով իր հայրենիքի մասին հարցրի, ասաց, որ ինքը այլեւս հայրենիք չունի, իր բոլոր հարազատները սպանուած են: Ա՛յնքան բացայայտ էր արտացոլում այս պատասխանի մէջ տառապանքը, որ այլեւս չուզեցի հարցնել:

— Չի՞ կարող պատահել, որ դասերը ընդհատուած լինեն Մարտի սկզբին:

— Կարող է:

— Գուցէ Մարտի 3-ից քիչ առա՞ջ, բնակարանը փոխելուց յետո՞յ:

— Նոր բնակարանից այլեւս չեկաւ:

— Գուցէ իրական պատճա՞ռ կար, որ ստիպուած էր բնակարանը փոխել եւ դասերը ընդհատել:

— Չգիտեմ: Մարտին, զէպքից մօտ մի շաբաթ առաջ, հեռաձայնով ինձ լուր տուաւ, որ բնակարանը փոխել է եւ դասերը պէտք է վերսկսի, երբ իրեն լաւ զգայ:

— Ամբաստանեա՛լ, ինչո՞ւ ընդհատեցիք դասերը:

— Առողջական վիճակս լաւ չէր:

— Տիկին Դիմանի մօտ եղած ժամանակ չէի՞ք ճանձրանում:

— Ինչո՞ւ պիտի ճանձրանայի:

— Քանի որ այլեւս դաս չունէիք:

— Դասերը ինձ մասնաւոր հաճոյք չէին պատճառում...

Որքան կարող էի հասկանալ, ինդիրը դառնում էր «կանխամտածումի» շուրջ, որ դեռ մնում էր մութ ու հոգեկան հիւանդ վիճակներով պարուրուած: Կանչուեց Երուանդ Արէլեանը. իրեն ուղղուած հարցումների

ARAM webaram.com

բերումով պատմեց պարի դասի ժամանակ պատահած դէպքերը, բժիշկն այցելելը, կենցաղս, վիճակս։ Վերջինի առթիւ նախագահը հարցրեց.

— Խօսե՞լ է ձեզ հետ, թէ հարպատանների կոլլեգիան պատճառը ով էր։

— Ո՛չ։

— Թալէաթի Բելլին գտնուելու մասին խօսք չարա՞ւ։

— Ո՛չ։

— Տիկին Դիմանի մօտ փոխադրուելու մասին ձեզ կանխաւ յայտնե՞լ էր։

— Ո՛չ։ Բայց մի օր խնդրեց ինձնից տիկին Շուլբաւումին յայտնել, որ բնակարանը ուզում է թողնել, որովհետեւ բժիշկը ասել է, թէ դաղի ճրագը վնաս է իրեն։

— Ուրեմն փոխադրուելու իրր պատճառ ձե՞զ էլ իր առողջական վիճակը ցոյց տուաւ։

— Այո՛։

— Ձեզ ասե՞լ էր, որ Հարտենբերգ փողոցը բնակարան է գտել։

— Ո՛չ, չգիտէի թէ ո՛ւր է գտնուում նա։

— Տեղափոխուելուց քիչ առաջ իր բարք ու վարքի մէջ փոփոխութիւն նկատեցի՞ք։

— Ո՛չ։

— Երբեք Թալէաթին ապտնելու մասին ձեզ չի՞ խօսել։

— Ո՛չ։

— Բայց չէ՞, որ յաճախ միասին էք եղել։

— Յեսոյ ես էլ դրա վրայ զարմացայ։

— Գիտէի՞ք, որ Թալէաթ փաշան բնակւում է Հարտենբերգ փողոցում։

— Ո՛չ։

— Ձեզ հետ Թալէաթի մասին չի՞ խօսել։

ARAM webaram.com

— Ո՛չ։

Նախագահը յետ նստեց։

— Հայերդ Ջարդերի մասին խօսելիս ինչի՞ վրայ էք առաւելապէս ծանրանում, հարցրեց պաշտպան Ֆոն Գորտոնը։

— Մեր գլխով անցածների վրայ։

— Ամբաստանեալը չի՞ պատմել ձեզ, որ Ջարդերին իր հարազատները կորցրեց։

— Այո՛, մի անգամ. բայց առհասարակ այդ մասին չէինք խօսում։

— Շատ զարմանալի է այդ, ընդմիջեց փորձապէտ Լիսմանը։

— Մի օր Լեպսիուսի «Հայերն ու Գերմանիան» գիրքը ձեռքս էր. Թարգմանեցի նրան մի քանի տող. յանկարծ գիրքը ձեռքիցս խլեց ու ասաց. «Զդէ՛. հին վէրքերը չբանանք»։

— Ուրեմն խուսափո՞ւմ էր այդ դէպքերը յիշելուց։

— Կ՚երևի թէ...

Ոչինչ պարզեց նաև Էֆթեանի և Թէրզիպաշեանի հարցաքննութիւնը։ Բայց ահա Շարլոտենբուրգի դատարանի դպրանի խորհրդական Շուլցէն, որ հարցաքննել էր ինձ Մարտ 16ին, սկսեց փաստել ապանութեան կանխամտածումը։

— Ամբաստանեալի պատասխանները դեռ բաւական յստակ յիշում եմ, ասաց նա, առանց դժուարութեան խոստովանեց, որ Թալէաթին սպանել է դիտակցութեամբ և դիտումով։ Իսկ երբ հարցրի պատճառը, ասաց թէ Թալէաթը այն մարդն է, որի հրամանով ապանուել են իր մերձաւորները Հայաստանում. դրա համար էլ որոշել է լուծել հարազատների վրէժը և այդ նպատակով էլ եկել է Բերլին։ Արտաքնակը ձեռք է բերել հայրենիքում. աշխատել է գտնել Թալէաթի

ARAM webaram.com

հետքը, որը գտնելուց յետոյ, նրա բնակարանի դիմաց վարձել է սենեակ՝ դիտելու եւ հսկելու նպատակով։ Մէկ օր էլ նշմարելով, որ Թալէաթը դուրս է գալիս, ատրճանակը առել է ու վրայ հասել. որեւէ սխալմունքից խուսափելու համար, անցել է դիմացը եւ համոզում գոյացնելով, որ անցորդը նոյն ինքն Թալէաթն է, նրան սպանել է։

Մինչեւ այդ թմբած գատախազը, այժմ կատարում էր նոթագրութիւններ՝ անելով լրացուցիչ հարցումներ։ Ունկնդիր հասարակութեան մէջ սրուել էր հետաքրքրութիւնը։ Պաշտպաններս աշխատում էին արժեզուրկ դարձնել Շուլցէի վկայութիւնը։ Սկսում էր պայքարը։ Նախ վկայութեան զգալի հարուած հասցրեց թարգման Գալուստեանը. նա ասաց, թէ այդ օրը ես ի վիճակի չէի ցուցմունքներ տալու, որովհետեւ ծեծուած, տփուած եւ ուժաթափ էի։ Շուլցէն հաստատեց, որ իրօք խոշտանգուած էի, սակայն բոլորովին հանդարտ մէկի տպաւորութիւն էի թողնում։ Նախագահը ցանկացաւ պարզել, թէ միթէ հարցումների բնոյթով չէի՞ն թելադրուած պատասխանները։ Պաշտպան Նիմայէրը խնդիր յարուցեց, թէ ի՞նչ ձեւով է կատարուած ցուցմունքներիս թարգմանութիւնը եւ արդեօք Գալուստեանը չի՞ արտայայտել այդ դէպքում իր անձնական տրամադրութիւնները։ Բարեմիտ Շուլցէն յիշեց, որ թարգմանը բերել էր իր հետ ինձ համար շաքարեղէններ եւ իր այն առարկութեան, թէ ի՛նչպէս կարելի է մարդասպանին շաքարեղէններ տալ, բացատրեցել է. «Ի՞նչ մարդասպան, մեզ համար նա մեծ մարդ է»։ Ֆոն Գոբտոնը բռնեց Գալուստեանի այդ խօսքերի պոչից փաստելու համար անձնական տրամադրութիւնների հաւանականութիւնը թարգմանութեան մէջ։ Իր հերթին՝ Գալուստեանը յայտնեց, թէ ա՛յնքան կասկածել է պատասխաններիս ճշգրտութեանը, որ հրաժարուել

ARAM webaram.com

է հարցաքննութիւնը առաջարկել։ Նախագահը ճշդեց այդ պարագան, որով նախնական ցուցմունքներս աբժեզուրկ եղան...

* * *

Մի ջօրէի կէս ժամուայ դադարից յետոյ, դատավարութիւնը վերսկսուեց մի կին Բրիտանիէ Թէրզիպաշեանի հարցաքննութեամբ։ Պաշտպան Ֆոն Գորոնը նախագահից խնդրեց վկան հարցաքննել Ջարդերի մասին։

— Պատերազմի ժամանակ ո՞ւր էիք բնակւում, հարցրեց վերջինը վկային։

— Կարին էի։

— Այդ ձեր հայրենի՞քն է։

— Այո՛։

— Այնտեղ սեղահանութիւններ եղա՞ն։

— 1915ի Յուլիսին բնակիչներին ժողովեցին ու յայտնեցին, որ պէտք է թողնեն քաղաքը։

— Քաղաքի մէջ եղա՞ն ապղտարարութիւններ, թէ հայերը պարտաւոր են գաղթել։

— Նախ ոստիկանների միջոցով լուր տուին քաղաքի հարուստներին, ապա յայտնեցին բոլորին, որ քաղաքը պիտի պարպուի, որովհետև ռազմապիտօրէն գտնւում է վտանգուած շրջանում։ Քաղաքի հարուստները ութ օր առաջ տեղեկացան այդ մասին, իսկ մնացածները՝ մէկ օր առաջ միայն։ Ցեղոյ պարզուեց, որ եղածը խաբէութիւն է եւ միայն հայերը պիտի աքսորուին։

— Բնակչութիւնը մէ՞կ անգամից դուրս հանեցին քաղաքից։

— Զորս անգամից։

— Զո՞րս խմբով։

— Զորս խումբ ութ օրուայ մէջ։

ARAM webaram.com

— Եւ մնացողներին յայտնի՞ էր, թէ ի՛նչ են լինում նախընթաց խմբերը։

— Ո՛չ։

— Ճշդուա՞ծ էր որոշ ուղեկէտ։

— Նախ Երզնկա պիտի գնայինք։

— Դուք ո՞ր խմբի մէջ էիք։

— Երկրորդ։

— Նկարագրեցէք, ո՞րքան մարդ տեղահան եղաւ, դուք ո՞րչափ առաջացաք եւ ի՞նչ պատահեց։

— Մեր ընտանիքը բաղկացած էր 21 անձից. նրանցից միայն երեքը մնացին։

— Ո՞րքան մեծ էր խումբը։

— 500 ընտանիք։

— Ձեր հարազատները ի՞նչպէս մեռան։

— Մեր ընտանիքը բաղկացած էր 21 հոգուց։ Վարձել էինք եղան երեք սայլեր ու նրանց մէջ չեռեղել ինչ կարելի էր. մեզ հետ առինք ուտելիք եւ դրամ։ Կարծում էինք, թէ Երզնկա պիտի գնայինք, հայրս, մայրս երկու եղբայրներս, երիցապոյնը 30 տարեկան, երեք մանչ, փոքրիկը վեց ամսական. ամուսնացած քոյրս իր ամուսնու հետ, վեց տղայ, երիցապոյնը 22 տարեկան։ Իմ աչքովս տեսայ բոլորի կոտորածը. միայն երեք հոգի ողջ մնացին...

Տիկնոջ ձայնը դողաց, դողդոջ ձեռքը տարաւ կրծքին ու յարեց.

— Երդւում եմ, որ Պոլսոյ հրամանով տեղահանուեցին։

— Ի՞նչ կերպով։

— Երբ քաղաքից դուրս եկանք, Կարնոյ բերդի գոնեքի առջեւ ոստիկանները հաւաքեցին ու սկսեցին ղէնք փնտռել։ Դանակ, անձրեւանոց եւ այլն տրին։ Հասանք Բաբերդ։ Երբ անցնում էինք այս քաղաքին առջեւից, տեղ - տեղ դիակներ տեսանք։

ARAM webaram.com

— Դիակները Կարնից եկող նախընթաց խմբերի՞ց էին։

— Ո՛չ, Բարեբդից։ Ապա՝ հասանք Երզնկա։ Խոստացել էին բնակարան տալ մեզ, բայց ջուր խմելու անգամ հրաման չտուին։

— Ի՞նչպէս տեղի ունեցաւ ջարդը, որի ընթացքում ձեր հարազատները սպանուեցին։

— Երբ բաւական ճամբայ առաջացանք, խմբերից 500 երիտասարդներին ընտրելի զատեցին. դրանց մէջ էր մէկ եղբայրս, որ յաջողել էր փախչել ու մեզ մօտ գալ, ապէկան հաղուստներ հագցրինք նրան։ Միւս երիտասարդները ջարդուեցին...

Նախապահի յօնքերը վեր թռան զարմանքից, աչքերը խոշորացան։

— Ի՞նչ եղան ընտրուածները, ասաց նա։

— Ջարդուեցին ու ջուրը թափուեցին։

— Ո՞րտեղից գիտէք։

— Աչքերովս տեսայ։

— Տեսաք, որ գե՞տը թափուեցին։

— Այո՛, գետը նետուեցին եւ հասանքը քշեց տարաւ բոլորին։

Նախապահը թուքը կուլ տուաւ։

— Ցետ մնացողները ի՞նչ եղան։

— Պաղատեցինք, լացինք, բայց մեզ սուիններով առաջ մղեցին։

— Ո՞վ։

— 30 ոստիկան եւ մի ջոկատ գինուոր։

— Ապա ձեր հարազատները ի՞նչ եղան։

— Տայլերը թափել էին ամէն բան, գնացել. ինչ կարողացանք՝ շալակեցինք ու հասանք Մալաթիա։ Բայց թոյլ չտուին քաղաք մտնել ու մեզ քշեցին լեռները։ Այստեղ այրերին կանանցից բաժանեցին։ Ընդա-

ARAM webaram.com

մէնը տասը մէթր մեզնից հեռու բոլորին կացնահար արին...

Շատ անսովոր նիւթ էր նախապահի համար ու դժուարութեամբ էր վարում հարցաքննութիւնը:

— Այրերն ու կիներ՞ը, հարցրեց նա:

— Ո՛չ, միայն այրերին ջարդեցին: Երբ մթնեց, ոստիկանները եկան ու դեղեցիկ կանանց ու աղջիկներին առեւանգեցին: Դիմադրողներին սուրներով խոցոտում էին, սրունքները պատռում. նոյնիսկ յղի կանանց կողերը փշրում էին...

Մեծ իրարանցում առաջացաւ սրահի մէջ: Տիկին Քրիստինէն յետ նայեց ու դողդոջ ձայնով գոչեց.

— Երդմամբ հաստատում եմ այս...

Շշմած նախապահը իրեն գտաւ:

— Դուք ի՞նչպէս ապրուեցիք:

— Եղբօրս ապաւեցին. մայրս երբ տեսաւ այդ, փաթ ընկաւ մեռաւ. յետոյ մի թուրք ուզեց կնութեան առնել ինձ. դիմադրեցի, ոչաս ապաւուեց...

— Ի՞նչպէս ազատուեցիք, գոչեց նախապահը մըրճաւանջից ազատուելու ակնարեւ ցանկութեամբ:

— Հեռուից նշմարեցի ծուխ. այստեղ տեսայ եղբօրս կնոջ, որի երկունքը սկսուել էր: Քշեցին Սամսէք. կինը մնաց այնտեղ...

— Քանի՞ հոգի մնացիք:

— Մօտաւորապէս 600 հոգի:

— Իսկ ձեր ընտանիքի՞ց:

— Հայրս, երկու եղբայրներս եւ ես:

— Ուրեմն, Սամսէ՞ք եկաք, մեքենամաս հարցրեց նա:

— Այո՛, այստեղ հիւանդացաւ հայրս, նրան էլ տարան. թէեւ եղբայրս յաջողեց նրան բերել, սակայն իրիկունը մեռաւ...

— Իսկ երկու եղբայրնե՞րդ:

ARAM webaram.com

— Ողջ են...

Նախագահը, յետ նայելով, խորունկ շունչ առաւ։

— Այդ բոլորը իրականութի՞ւն է, թէ երեւակայութիւն։

— Պատմածս իրականութիւնից շատ պակաս է։

— Դուք Սամսէ՞ք մնացիք։

— Ո՛չ, քշեցին Սառուչ...

— Լա՛ւ, ընդհատեց նրան իր հարցումից զզջացած նախագահը, ո՞վ էր համարւում այդ արհաւիրքների պատասխանատուն։

— Ամէն բան կատարւում էր էնվեր փաշայի հրամանով. զինուորները ստիպում էին մեզ ծնրադրել եւ ապօթել նրա արեւշատութեան համար, որ մեզ կեանք է շնորհել...

Այդ խօսքերը նոր շարժման ու յուզման տեղիք տուին հասարակութեան մէջ՝ ընդհատելով տիկնոջ։ Խօսք առաւ պաշտպան Նիմայէրը։

— Հասկանալի իրարանցումից պարզ է, որ վկայի ասածները թւում են անհաւատալի։ Բայց մենք ունինք մեր արամադրութեան տակ հազար ու մէկ նման զեկոյցներ։ Սակայն, որպէսզի վկայի արժանահաւատութեան վրայ ամենաթեթեւ տարակոյս իսկ չծագի, պիտի խնդրէի, որ այժմ երկու լաւատեղեակ իրաւեկները՝ պ. պրոֆեսոր դոկտոր Լեպսիուսը եւ վանեմաշուք Լիման ֆոն Զանդերսը հարցաքննուեն այն ժամանակուայ թրքական ռազմականութեան եւ զինուորականութեան մասին։

Վաթսունը անց, բայց դեղեցիկ ճակատ, կարճատես կապոյտ աչքեր, մանկունակ բերան, ալեխառն կարճ մօրուք, պիրկ ու խիստ այտեր, այսպէս էր դոկտոր Եոհաննէս Լեպսիուսը. նրա կատարած ջանքերի եւ դիմումների յիշատակը դեռ շատ թարմ էր, ու հայերի երախտապիտութիւնը դէպի դերման հայրենասէ-

ARAM webaram.com

բը շատ մեծ։ Զարդերի շրջանում նա լոյս ընծայեց իր «Bericht über Lage des Armeischen volkes in der Turkei» աշխատութիւնը, որ եղաւ առաջին մեծ գործը սարսափների մասին։ Գերման դրաքննութիւնը ջանք չխնայեց այդ գրքի տարածումը սահմանափակելու եւ ամէն կերպ աշխատեց, որ գերման մամուլի մէջ Թուրքերի մասին հանրային կարծիքը «շպրտուի»։ Պաւերպամի քովանդակ տեւողութեան, դէպքերի մասին գերման մամուլը իրաւունք չունէր ոչ մի բառ յիշատակելու։ Այս պայմաններում հայածական հայասէրը անցընում էր իր օրերը արտասահմանում՝ նպաստի եւ օգնութեան գործերով։ Հետագայում Լեպսիուսը իր վերոյիշեալ աշխատութիւնը հրատարակեց լրացուած «Der Fodesgang des Armenischen volkes» խորագրով։ Այդ նա շատ մեծ ծառայութիւն մատուցեց ճշմարտութիւնը պարզելու գործին՝ գինադադարից անմիջապէս վերջը հրատարակութեան տալով Ջարդերի ու տարագրութեան շուրջ գերման արտաքին գործոց նախարարութեան մէջ եղած փաստաթղթերը «Deutschland und Armenien» մեծահատոր գրքով։ Այժմ նա սկսեց իր խօսքը սուր ակնոցների միջից կապոյտ աչքերը կենտրոնացնելով նախագահին վրայ։

— Ընդհանուր տեղահանութիւնը որոշեց Երիտասարդ Թուրքերի կոմիտէն՝ Թալէաթ եւ Էնվեր փաշաների գլխաւորութեամբ, որոնք գործադրեցին որոշումը երիտասարդ Թուրքերի օգնութեամբ։

«1915 թ. Ապրիլին ձեռնարկուած տեղահանութիւնը վերաբերում էր Թուրքիոյ մէջ եղած բոլոր հայերին՝ շատ քիչ բացառութեամբ, որոնց մասին պիտի յիշեմ։ Պաւերպամից առաջ Թուրքիայում կար ընդամէնը 1,850,000 հայ։ Թուրքիոյ մէջ առոյգ մարդահամար չկայ. այս թիւը ճշգրտում է եղած վիճակագրական տեղեկութիւններից, որոնք ներդաշնակում են հայոց

ARAM webaram.com

Պատրիարքարանի ազգահամարին։ Հայ բնակչութիւնը պատերազմից առաջ տարածուած էր Եւրոպական Թուրքիոյ մէջ (Պոլիս, Ադրիանուպոլիս, Ռոսմոսդօ) եւ Ասիական Թուրքիայում (Անատոլու, Կիլիկիա, Հիւսիսային Ասորիք, Միջագետք)։ Հայերի մեծ մասը ապրում էր արեւելեան Անատոլիայում, հայկական լեռնաշղթայի վրայ, հայ ազգի հին հայրենիքում, վեց վիլայէթների մէջ՝ Կարին, Վան, Բաղէշ, Դիարբէքիր, Սեբաստիա եւ Խարբերդ։ Արեւմտեան Անատոլիայում, Պոլսոյ դիմաց, Մարմարայի հարաւային եղերքներում բնակւում էր ազգի մի խոշոր բեկորը։ Հարաւային Անատոլուի մէջ Կիլիկիա՝ Տաւրոսի տափաստանով եւ Ալեքսանդրիոյ ծովախորշին սահմանակից հիւսիսային ասորական երկրներով՝ կազմում է հայկական հին հայրենիքի մի մասը։

Լեպսիուսը վար առաւ ակնոցները, սրբեց՝ թարթելով յոգնած աչքերը։

— Անատոլիայի ամբողջ հայ բնակչութիւնը տեղահանուեց բարձրագոյն հրամանով, դէպի հիւսիսային եւ արեւելեան եղերը Միջագետքի անապատի՝ Տէր-Զօր, Ռակկա, Մեսկենէ, Ռասուլ-Այն, մինչեւ Մոսուլ։ Տեղահան եղան մօտաւորապէս 1,4000,000 հայ, ասաց նա ակնոցները դնելով ու ձայնին ուժ տալով յարեց.

— Ի՞նչ է նշանակում այս։ Թալէաթի ստորագրած հրամանագրի մէջ ասուած է. «Տեղահանութեան նպատակն է ոչնչացում»։ Եւ համաձայն այս հրամանագրի՝ գործը առաջ տարուեց. արեւելեան Անատուլուի նահանգներից դէպի հարաւ տեղահան եղած ամբողջ բնակչութեան միայն տասը տոկոսը աքսորավայր հասաւ. մնացած 90%ը ճանապարհին սպաննեցին. կանայք ու աղջիկները առեւանգուեցին ասիկաններով եւ քրտերի կողմից, մնացածն էլ մեռաւ անօթութիւնից

ARAM webaram.com

Նկարին մէջ կ'երեւին Թէհլիրեան, գերման եւ թուրք պաշտօնատարներ կառախումբի մէջ եւ տեսարան մը հայկական ջարդերէն:

ARAM webaram.com

ձեւ ուժասպառութիւնից։ Այն հայերից, որոնք քշուեցին Արեւմտեան Անատոլուից, Կիլիկիայից եւ Հիւսիսային Ասորիքից, անապատի եզրի հաւաքատեղիներում հետզհետէ կուտակուեց հազարաւոր մարդկանց բազմութիւն։ Սրանք յետոյ ոչնչացան մեծ մասամբ սիստեմատիք սովով ու ջարդերով։ Երբ հաւաքատեղիները լցւում էին նոր խմբերով այնպէս, որ այլեւս տեղ չէր մնում, նրանք գունդ գունդ առաջնորդւում էին անապատ եւ այնտեղ մորթուում։ Թուրքերը ասում են, թէ իրենք որդեգրեցին հաւաքատեղիների գաղափարը անգլիացիներից, որոնք կենտրոնացրին Հարաւային Աֆրիկէում բոերներին։ Պաշտօնապէս յայտարարւում էր, թէ աքսորները նախազգուշական կարգադրութիւններ են, սակայն անհատապէս հեղինակաւոր անձինք բոլորովին յայտնի կերպով ծանուցում էին, որ աքսորի նպատակն է հայ ժողովուրդի բնաջնջումը։ Ասածս հետեւում է այն փաստաթղթերից, որ ես հրատարակեցի՝ հաւաքելով կայսերական դեսպանութեան եւ արտաքին գործոց նախարարութեան արձանագրութիւններից, մանաւանդ գերման հիւպատոսների եւ Պոլսոյ գերման դեսպանների զեկոյցներից։

Լէպսիուսը դուրս հանեց թաշկինակը, հակատը սրբեց ու մտացիր ասաց.

— Դուք այստեղ լսեցիք մէկ զեկուցում տիկին Թէրզիպաշեանի քաշածների ու տեսածների մասին տեղահանութեան ժամանակ։ Այդպիսի զեկոյցներ, թանձրը մանրամասնութիւններով, որոնք բոլորն էլ անձնական փորձառութեան դրոշմ ունին, հարիւրներով տպագրուած են մեծ մասամբ գերման, մասամբ էլ ամերիկեան եւ անգլիական հրատարակութիւնների մէջ։ Իրողութիւնները անտարակուսելի են։ Գործադրման եղանակները ամէն տեղ նման են տիկին Թէրզիպաշեանի պատմածներին։ Հակառակ պարագային, պէտք է

ARAM webaram.com

հարց լինէր, թէ ի՞նչպէս կարելի է այնքան կարճ ժամանակի մէջ միլիոնաւոր մարդիկ ապանել։ Այդ հնարաւոր է եղել ամենավայրագ միջոցների շնորհիւ, ինչպէս ապացուցուեց նաեւ Պոլսոյ դատավարութեան ընթացքում, որ տեղի ունեցաւ Թալէաթ փաշայի եւ ընկերների դէմ այնտեղ, պատերազմական ատեանի առջեւ։ Ատեանը կազմուած էր մի զօրաբաժնի հրամանատարից, երեք զօրավարներից եւ մէկ հարիւրապետից։ Ամբաստանութեան հինգ կէտերից առաջինը վերաբերում էր հայկական ջարդերին։ Պատերազմական ատեանը, 1919 Յուլիս 6ին, մահուան դատապարտեց ջարդերի բոլոր գլխաւոր հեղինակներին՝ Թալէաթ, Էնվեր, Ջեմալ եւ դոկտոր Նազիմ։ Հայերին ոչնչացնելու հրամանի կատարումը Պոլսից յանձնուեց վալիներին, մութէսարիֆներին եւ գայմագամներին, այսինքն՝ նահանգային, գաւառական վարիչներին։ Այն պաշտօնեաները, որոնք չէին ուզում կատարել տրուած հրահանգները, պաշտօնանկ էին լինում։ Օրինակի համար, Հալեպի վալին, Ջելալ փաշան, մերժեց իր վիլայէթի մէջ տեղահանութեան հրամանները կատարել։ Թալէաթը նրան պաշտօնանկ արաւ եւ տեղափոխեց Գոնիա։ Ջելալ փաշան այստեղ իր հովանաւորութեան տակ առաւ դեռ ողջ մնացած հայերին։ Հետեւանքը եղաւ այն, որ այստեղից էլ վռնտուեց ու այլեւս մնաց առանց պաշտօնի։ Եւ տակայն նա մէկն էր այն արժանաւոր եւ արդարակորով վալիներից, որ ունէր Թուրքիան։ Մի ուրիշ վալի, Ռաշիտ բէյը, Դիարբէքիրի մէջ, մարդախոշոշների ձեռքով ապանել տուեց երկու գայմագամ, որոնք յանձն չառին գլուխ հանել տեղահանութիւնները։ Հրամանները անասասող թրքական բնակչութեան, պաշտօնեաների ու զինուորականների դէմ գործադրուում էին բռնութիւններ։ Երբորդ զօրաբաժնի մի հրամանատար ապդաբարեց, թէ ով հայերին օգնու-

ARAM webaram.com

թեան հասնի, իր ասն մէջ պիտի ապանուի եւ ասունն էլ պէտք է հրկիզուի։ Եթէ պաշտօնեաներից ոեւէ մէկը օգնէր հայերին, պէտք է անյապաղ պաշտօնանկ լինէր եւ պատերազմական ատեանի առջեւ քաշուէր։

Դատարանը, հասարակութիւնը կարծես քարացել էին այդ անլուր յայտնութիւնների առաջ։ Լեպսիուսը շարունակեց.

— Հայերի սկզբնական 1,850,000 թուից տեղահանուեցին 1,400,000 հոգի։ Մնում էր, ուրեմն, 450,000 մարդ։ Սրանցից 200 հազար մարդ ողջ մնացին աքսորից, գլխաւորապէս Պոլսոյ, Իզմիրի եւ Հալեպի բնակչութիւնը։ Հալեպի հայութեան ազատուելուն մէջ դեր կատարեց գերման հիւպատոս Ռէօսլէրը, այն՝ որ համաձայնական մամուլի մէջ զրպարտուեց իբրեւ Ջարդեր կազմակերպող։ Իզմիրի մէջ գօրավար Լիման ֆոն Զանդերսը արգելք եղաւ հայերի տեղահանութեան։ Նոյնը արաւ ընդհանուր մարաջախտ ֆոն Դեր Գոլցը։ Երբ նա եկաւ Բաղդատ, իմացաւ, որ Բաղդատի հայերը աքսորուած են Մոսուլ եւ Մոսուլի հայերի հետ միասին պիտի տեղահանուին դէպի Եփրատ, այսինքն՝ դէպի մահ... Մոսուլի վալիին ազդարարեց, որ արգիլում է տեղահանութիւնը. իսկ երբ վալին նոր հրաման ստացաւ տեղահանութեան ձեռնարկելու, ֆոն Դեր Գոլցը նեղկայացրեց իր հրաժարականը։ Ինքնիր փաշան ստիպուած եղաւ տեղի տալ ֆոն Դեր Գոլցին իր գրած թղթի մէջ աւելացնելով, թէ «Իր վերին հրամանատարի իշխանութիւնը իրեն իրաւունք չի տալիս թրքական պետութեան ներքին գործերին խառնուելու»։ Պոլսոյ մէջ դեսպանները արգելք եղան հայերի տեղահանութեան։ Թոյլ տուէք այստեղ մի անցողակի դիտողութիւն անել։ Ցաւախ կարդում ենք, թէ հայկական ջարդերը հեռուանք են այն բանին, որ Հայ վաճառականական դասակարգը կեղեքել է Թուրքերին եւ

ARAM webaram.com

թուրք բնակչութիւնը զայրացած՝ ինքնաբերաբար ոտքի է ելել հայերի դէմ։ Նախ՝ ապացուցուած է, որ ոչ 1895 — 96 թուերի ջարդերը եւ ոչ էլ վերջին ջարդերը ժողովրդական ինքնաբուխ խլրտումների հետեւանք չեն, այլ պետութեան վարչական հրամանների դործադրութիւն։ Ապա՝ փաստօրէն Պոլսոյ, Իզմիրի, Հալեպի նման վաճառատեղիներն ու հայ վաճառական դասակարգն էր որ փրկուեց մահից թէ՛ այն ժամանակ և թէ հիմա, մասամբ էլ նրա համար, որ ի վիճակի էին իրենց փրկելու։ Սրա դիմաց Անատոլուի ամբողջ գիւղացիութիւնը, որ կազմում է հայ բնակչութեան 80 տոկոսը, արհեստաւորների հետ միասին, որոնք մեծ մասամբ հայեր են, ճամբուեցին անապատ եւ ոչնչացան։ Հայ բնակչութեան մնացորդը, մօտ 250,000 հոգի, տեղահանութիւնից զերծ մնաց, սահմանամերձ վիլայէթների ռուսական գրաւումով եւ ապաստանեց Կովկաս։ Այն ժամանակ ռուսները առաջացան Վանայ ծովի արեւմտեան եզերքները։ Երբ նահանջեցին, հայերին միասին առին, բայց ոչ նրա համար որ հայերը սիրելի էին նրանց. Եանուշկեւիչը, Նիկոլայ Նիկոլայեւիչի ադայակոյտի պետը, որ այն ժամանակ Կովկասում հրամանատար էր, յայտարարեց, թէ Ռուսաստանը դատարկուած երկրների մէջ հայերի փոխարէն պիտի բնակեցնի քիւրտ եւ կոզակ դաղութներ, որպէսզի կազմուի զինուորական մի լայն զօտի Թուրքերի դէմ. ռուսների նպատակն էր ձեռք անցընել «Հայաստանը առանց հայի»։ Ցամենայն դէպս, ռուս առաջխաղացութիւնը փրկեց մօտ 350 հազար հայերի կեանքը, թէեւ ռուսական նահանջը նրանց զրկեց իրենց երկրից։ Այդ տարագիրները մինչեւ օրս ապրում են Կովկասում շատ անձուկ երկրամասի վրայ, տարիներով ռուսի ու մեծ նեղութիւնների ենթակայ։ Մարդ ակամայից ինքն իրեն հարց է տալիս, թէ ի՞նչպէս պատմա-

ARAM webaram.com

Ցեղ ասող, սեղանի գլխին, ինչ էլ որ լինի, պետք է ցմկտեցնի վարանումը:

ՍՈՂՈՄՈՆ ԹՈՒՀԻԵԱՆԻ ԴԱՍԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ՍՈՂՈՄՈՆ ԹՈՒՀԻԵԱՆ կազմակերպեց, ամբողջապես, իր տան վրայ, ուսմի վրայ, մեր ազգը, մեր ազգը: Ինքնակոչ ոչ մի կարգ, ոչ մի ցուցակ չէ կազմուած, դասաւորեցին իրարու հետ երկու օգնականներով:

կանօրէն հնարաւոր եղան նման դէպքեր։ Պիտի փոր-ձեմ համառօտակի պատասխանել այս հարցին։

«Հայկական հարցը ինքնաբոյս մի տունկ չէ, այլ եւրոպական դիւանագիտութեան ծնունդը։ Հայ ազգը զոհ դնաց Ռուսաստանի եւ Անգլիոյ քաղաքական շահերի հակամարտութեան։ Լոնտոնի եւ Պետերբուրգի ճառարակի մէջ հայը զինուոր էր, որ երբեմն առաջ էր քաշւում, երբեմն զոհւում։ Մարդասիրական յորջորջումները, «քրիստոնէից հովանաւորութիւնը» պատրուակներ էին։

Լեպսիուսը յիշատակեց մի շարք յայտնի պատմական փաստեր, թէ ի՛նչպէս Ապտիւլ Համիտի օրով պետութիւնների կողմից առաջադրուած հայկական բարենորոգութիւններին նախորդել ու յաջորդել են հայերի կոտորածներ, հանելով վերջապէս Երիտասարդ Թուրքերի օրով հայ ժողովուրդի բնաջնջման։

Ապա վերադառնալով տեղահանութեան, խիստ յուզուած նկարագրեց հայ մտաւորականների տարաղրութիւնն ու ջարդերը։

— Թալէաթի անձնական բարեկամ, Խորհրդարանի հայ անդամ Վարդգէսը դեռ ձերբակալուած չէր, պատմում էր նա։ զնաց Թալէաթի մօտ հալածանքների պատճառը հասկանալու։ «Մեր ծանր օրերին մեր կոկորդին կպաք եւ հայկական բարենորոգման հարցը յուղեցիք, հիմա մենք պէտք է օգտուինք մեր նպաստաւոր դրութիւնից եւ ձեր ազգը այնպէ՛ս ցիրուցան անենք, որ 50 տարի ձեր մտքից հանէք բարենորոգումների գաղափարը»։ Վարդգէսը վրայ բերաւ. «Ուրեմն, ուզում էք շարունակել Ապտիւլ Համիտի գո՞րծը»։ Թալէաթ ըպատասխանեց. «Այո՛»։ Այս ապառնալիքի համաձայն էլ կատարուեց գործը։ Պոլսոյ պատերազմական առեանի դատավարութիւնը, «Journal officiel»ի գեկուցման համաձայն, պարզում է, որ աքսորը որոշել

ARAM webaram.com

է Երիտասարդ Թուրքերի կոմիտէն, եւ Թալէաթ փաշան, կոմիտէի հոգին եւ նրա ամենաազդեցիկ մարդը, հրամայել է բնաջնջումը։ Գերման եւ Թուրք փաստաթղթերի հիմքերով այս մասին կարելի է գրաւոր վկայութիւն ներկայացնել։ Իմ այս խօսքերի նպատակն է պարզել, որ պետութիւնների քաղաքագիտական խոզերը հասցրին այնտեղ, որ նախապէս Ապտիւլ Համիտը, ապա Երիտասարդ Թուրքերը այնքան կատաղած զարձան հայերի դէմ, որ եկան այն եզրակացութեան, թէ ուրիշ բան չի մնում անել, բայց եթէ միայն ոչնչացնել հայերին...։

ARAM webaram.com

Ժ. ԳԼՈՒԽ

ԴԱՏԱԽԱԶԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՄԱՀԱՊԱՏԻԺ

Շշմեցուցիչ ապաւորութիւն թողեց Լեպսիուսի դեկուցումը ոչ միայն անտեղեակ հասարակութեան, այլ եւ փաստաբանների, դատաւորների վրայ: Ջոն Գորտոնը խոստովանեց, որ այդպիսի լրիւ գաղափար չունէր այդ զարհուրելի դէպքերի մասին: Հասարակութիւնը արտայայտում էր իր յուզումը շշուկներով: Դատախազ Գոլնիկը չփոում էր գլուխը առջեւը դրած թղթերի վրայ հակած: Երդուեալները դեռ խորասուզուած էին կիսատ մնացած նոթագրութիւնների մէջ: Նախագահը մի պահ չիմացաւ ասելիքն ու անելիքը: Առիթից օգտուեց պաշտպան Վերթաուէրը եւ մի քանի հարցումներ ուղղեց դոկտոր Լեպսիուսին.

— Ինչո՞ւ Անգլիոյ եւ Ռուսաստանի քաղաքական խաղերը նպաստեցին հայերի բնաջնջման:

— Որովհետեւ Թուրքերին ներշնչեցին այն վախը, թէ ուզում են Հայաստանից անկախ պետութիւն կազմել, իսկ այդ պէտք է վտանգէր Ասիական Թուրքիոյ գոյութիւնը, պատասխանեց Լեպսիուսը:

— Առաջ այնպէս պիտէինք, թէ հայերի եւ Թուրքերի փոխադարձ ատելութիւնը հարիւրաւոր տարիների հնութիւն ունի, որովհետեւ առաջինները քրիստոնեայ, երկրորդները մահմեդական են:

— Համաթրքական, համիսլամական պետութիւն ստեղծելու էրեւակայական գաղափարը, որի մէջ քրիս-

ARAM webaram.com

ատեանները ոչ պիտի չունենային, Կոմիտէի եւ ինքնին փաշայի մտայղացումն է։

— Ուրեմն, որպէսզի հայերն էլ բոլկանեան ժողովուրդների պէս չազատագրուին, որոշեցին նրանց ոչնչացնե՞լ։

— Այո՛, կոմս Մեռաեռնիխը, որ 1918ին Պոլսոյ գերման դեսպանն էր, Յուլիսի 30 թուակիր, իր զեկոյցին մէջ գրում էր. «Հայերի գործը վերջացած է։ Երիտասարդ Թուրքերի վոհմակը անհամբեր սպասում է այն բոպէին, երբ Յունաստանը պիտի պատերազմի Թուրքիոյ դէմ։ Յոյները կազմում են Թուրքիոյ քաղաքակիրթ տարրը։ Բայց նրանք էլ պէտք է ոչնչացուին, ինչպէս հայերը»։ Այսպէս էր գրում կոմս Մեռտերնիխը։

Նախագահը անցաւ Թուրքիոյ իրապարձութիւններին իրազեկ միւս վկային՝ Օտտո Լիման ֆոն Զանդերսի ցուցմունքներին։ Բարձրահասակ, կլոր դէմքով, բարեձեւ Զանդերսը, հակառակ որ ծեծում էր 70ի դռները, պահպանել էր իր թարմութիւնը։ 1913ից սկսած, Վիլհելմի կողմից Պոլիս ուղարկուած զինուորական պատուիրակութեան պետն էր. նա վերակազմեց թրքական բանակը եւ ինքն էլ վարեց զօրակոչը 1914 Օգոստոսին, Թուրքիան պատերազմի մէջ մտնելուց երեք ամիս առաջ։

— Կ՚ուզէի պ. դոկտոր Լեպսիուսի տուածներին մի քանի բան աւելացնել զինուորական տեսակէտից, ասաց նա։ Իմ կարծիքով պէտք է երկու մասի բաժնել այն ամէնը, ինչ տեղի ունեցաւ Հայաստանում եւ որակւում է «հայկական ջարդ» անունով։ Նախ՝ Երիտասարդ Թուրքերի տեղահանութեան հրամանը։ Կարող ենք Թուրք կառավարութիւնը ամբողջապէս պատասխանատու նկատել այս կարգադրութեան համար, իսկ հետեւանքների համար՝ միայն մասամբ։ Ապա այն

ARAM webaram.com

Դրութիւնները, որոնք տեղի ունեցան Հայաստանում. հայերը ինքնապաշտպանութեան էին դիմել. Թուրք կառավարութեան հրահանգած զինաթափութեան չէին ուզում ենթարկուել, եւ ռուսների հետ միացած պայքարում էին Թուրքերի դէմ: Բնականաբար այդ կռիւները ջարդի համար դուռ բացին: Կարծում եմ, որ սրբանք զանազանելի բաներ են: Զինուորական եւ քաղաքական վերին պաշտօնեաների զեկոյցների հիման վրայ, որոնք զինուորական տեսակէտից անհրաժեշտ էին գտնում արեւելեան Անատոլուն հայերից պարպել, Թուրք կառավարութիւնը հրամանագրեց տեղահանութիւններ:

Այս այն էր ինչ ասել էր Լեպսիուսին Էնվերը, մեծ մարդասէրի դիմումին առթիւ՝ գոնէ ծովեզերքի հայութեան կեանքը խնայելու:

— Քանի որ գերմանացիների դէմ սխալ ու անճիշդ բաներ են ասուած, շարունակեց զօրավարը, կ'ուզէի այստեղ շեշտել, որ կովկասեան ճակատում գնդապետները եւ հրամանատար զօրավարները բաղկացած էին Թուրքերից: Արդէն ասացի, որ այս զինուորական եւ քաղաքական պաշտօնեաները զեկուցել էին Պոլին կացութեան մասին. այդ հիման վրայ սկսուեց տեղահանութիւնը, որի գործադրութիւնը գտնուում էր ամենավատ ձեռքերի մէջ: Պէտք է աւելցնել, որ Թրքական ատրիկանութիւնը պատերազմից առաջ շատ լաւ էր: Ունէր 85,000 հոգի եւ մի ընտրեալ գունդ: Բայց նրանք մաւծուեցին բանակի մէջ, եւ փոխարէնը ստեղծուեց օգնական ատրիկանութիւն, որ լաւ տարրերից չէր բաղկացած, մասամբ աւազակներ, մասամբ էլ Թափառաշրջիկներ էին: Այս մարդկանց մէջ կարգապահութիւնը բնականաբար չնչին էր: Ահա այս պարագաները պէտք է հաշուի առնել, երբ խօսք է լինում հայերի գաղթի ատեն տեղի ունեցած խժդժութիւնների մասին:

ARAM webaram.com

Թուրք զինուորները չէին այդ խժդժութիւնները հրահրողները, այլ ռասիկանական մի պատահական կազմ, որ կարիքը հարկադրեց առեղծել։ Ապա պէտք է նկատի առնել, որ Թրքական էտապը այնքան խեղճ էր, որ ոչ միայն հայերը, այլ եւ շատ Թուրք զինուորներ մեռան անդի պակասութիւնից, հիւանդութիւններից, կազմակերպութեան բացակայութիւնից։ Հազարաւոր Թերասուն զինուորներ մեռան իմ բանակի մէջ Գելիպոլուի արշաւանքի ժամանակ։ Ես կարծում եմ այս բոլորը անհրաժեշտ է հաշուի առնել, յարեց զօրավարը ու քիչ մտածելով՝ շարունակեց. վերջապէս չի կարելի անտեսել, որ ուղեկից խումբը մասամբ ազդուած էր «սուրբ պատերազմ»ի գաղափարից եւ հայերին նկատելով քրիստոնեաներ՝ կարծում էր, Թէ նրանց հետ խստութեամբ վարուելը բարի գործ է։ Սառրազաս պաշտօնէութիւնը կարող է այս կիրքը աւելի արծարծած լինել։ Արդէն քրդերն էլ, որոնք Թշնամի էին հայերին, միշտ յարձակւում էին նրանց վրայ ու ջարդում...

Զօրավարը դուրս քաշեց գրպանից մեռաքէ Թաշկինակը, լայն ճակատը սրբեց ու սեղմող օձիքը մատներով լայնացնել փորձելով՝ շարունակեց.

— Ինչքան դիտեմ, գերման կառավարութիւնը այն ժամանակ արաւ հնարաւորը հայերի Թշուառութիւնը մեղմելու համար, որքան Թոյլ կը տային պարագաները։ Բայց նրա համար դժուար էր այդ։ Յատկապէս դիտեմ, որ գեներալ Մեռտերնիխը վճռական բողոքներ ուղղեց կառավարութեան՝ հայերի դէմ եղած կարգադրութիւնների համար։ Մեղ համար, որ այնքան կասկածների ենթարկուեցինք, կարող եմ ասել, Թէ ոչ մի գերման ոպայ հայերի դէմ ուղղուած կարգադրութիւնների մէջ մասնակցութիւն չի ունեցել։ Ընդհակառակը՝ միջամտեցինք, ուր կարողացանք։ Պէտք է

ARAM webaram.com

չեշտեմ, որ ես երբեք հայերի մասին Թալէաթի կողմից ստորագրուած մի հրաման չեմ ստացել։ Իմ ստացած հրամանները ստորագրուած էին Էնվէրի կողմից եւ թեթեւ էին, երբեմն էլ բոլորովին անեմաստ։ Օրինակի համար, մի անգամ հրաման ստացայ բոլոր հրէաներին ու հայերին սպայակոյտից հեռացնելու։ Բնականաբար հրամանը չգործադրուեց, որովհետեւ նրանց պէտք ունէինք իբրեւ թարգմանների։ Այսպիսի անիմաստ հրամաններ յաճախ էի ստանում։

Թուաց, թէ զօրավարը աւարտեց իր խօսքը, նախագահը անգամ համապատասխան շարժում արաւ, բայց յանկարծ Զանտերսը կարեւոր բան յիշողի պէս ասաց.

— Երբ 1916ի Փետրուարին լուր ստացայ տեղակալ Վէրմարից, թէ վալին ուզում է Աղբիւրուպոլսի հայերին ու հրեաներին աքսորել, անցայ Պոլիս եւ իմ ջանքերով գեսպան կոմս Մետտերնիխի եւ գեսպան իշխան-Պալաւիչինիի ընդդիմութեամբ աքսորը կանգ առաւ։ Մի ուրիշ անգամ Իզմիրում, երբ վալին գիշերը անկողիններից դուրս էր հանել 600 հայ, վագոնների մէջ լեցրել եւ ուզում էր տեղահանել, սպառնացի գինուորներիս միջոցով հրացանի բռնել իր ոստիկաններին, եթէ մէկ հայի վնասէ. վալին ստիպուած եղաւ հրամանը յետ առնել։ Այս իրողութիւնը պատմում է իր գրքի մէջ պ. դոկտոր Լեպսիուսը։ Այս է մօտաւորապէս այն ամէնը ինչ գիտեմ։ Կ'ուզէի շեշտել, որ ես ոչ եղել եմ Հայաստանում, ոչ նրան մերձեցել եւ ոչ էլ Թուրքերի կողմից ինձնից խորհուրդ է ուզուել հայերի դէմ ձեռք առնուելիք միջոցների մասին։ Ընդհակառակը, ամէն բան մեզնից ծածկւում էր, որպէսզի գաղափար չունենանք քաղաքական նէրքին իրադարձութիւնների մասին։ Աբդուլահամիդի մամուլի գրպարտութիւններից ամենամեծն այն է, որ իբր թէ, մենք մասնակից ենք

ARAM webaram.com

եղել այդ կարգադրութիւններին։ Ընդհակառակը, մեր պարտականութեան համաձայն՝ միջամտեցինք ուր կարողացանք։ Ինձ ենթակայ շրջանում ապրում էին ցիրուցան հայեր եւ քիչ առաջ յիշած դէպքերը միակն են, որ ինձ պատահեցին։ Թէ ո՛րքան Թալէաթը մասնակից էր հայերի դէմ եղած կարգադրութիւններին, չգիտեմ։ Որքան ինձ յայտնի է, հայերի տեղահանութեան գլխաւոր հրամանը եղաւ 1915 Մայիս 20ին։ Յամենայն դէպս կոմիտէի մտայնութեան արդիւնքն էր այդ, որ ապա ստացաւ նախարարութեան ընդհանուր հաճութիւնը։ Գործադրութիւնը, ինչպէս ասացի, վալիների ու նրանց ենթակայ պաշտօնեաների եւ ամենից աւելի ահռելի ոստիկանութեան ձեռքն էր։ Ամէն պարագայի մէջ պարտքս եմ նկատում ասելու, որ հինգ տարիների ընթացքում, երբ ես Թուրքիա էի, Թալէաթի ստորագրութեամբ հրամանագիր հայերի դէմ չեմ տեսել եւ ոչ էլ կարող եմ վկայել, թէ այդպիսի հրամանագիր տրուած է...

* * *

Զանազանի խօսքից յետոյ ստեղծուեց մի կացութիւն, որ կարծես դատուողը ես չէի, այլ Թալէաթն ու ինքը։ Անկապ, գուրկ ներքին համոզումից, ձեւական, անսիրտ եւ, որ գլխաւորն է, անճիշդ գեկուցումը ոչ մի ազդեցութիւն ունեցաւ։ Ոչ միայն դատարանը, այլ եւ քանիմաց հասարակութիւնը հասկանում էր, որ չի կարելի «գինուորական անհրաժեշտութեամբ» մի ամբողջ ժողովուրդ ոչնչացնել. որ չիտակ չէ «վերին» պաշտօնեաների յանցանքը փոխանցել «վարին»ների վզին, երբ նրանք գործադրում են վերինների հրամանը. որ կարելի էր վերջ տալ ապանդին, եթէ իրօք տեղահանութեան որոշումը գործադրուում էր սիրալ. որ անիմաստ է վերապահ լինել այդ որոշման հանդէպ ու

ARAM webaram.com

մասնանշել «վատ» գործադրությունը, որ վերջապէս յերբիւրուած քաղաքական անցուդարձերի մէջ, այնուամենայնիւ, յանցանք չունէին հազարաւոր երեխաներն ու կանայք։

Պաշտպաններս ակնյայտնօրէն հիասթափուած էին իրենց կողմից հրաւիրուած իրագեկի գեկուցումից։ Շատ փափկանկատօրէն այդ հիասթափութիւնը արտայայտեց Ֆոն Գորտոնը։

— Վանմաշուք տէր, ասացիք, թէեւ ոչ գրական կերպով, բայց յամենայն դէպս արտայայտուեցիք այն իմաստով, որ խժդուժութիւնների պատասխանատուները ատրպատս պաշտօնեանե՞րն են։

— Անդիթութիւնների եւ ոչ թէ տեղահանութեան, պատասխանեց գօրավարը։

— Վանմաշուք Լիման Ֆոն Զանտերսը մեզ խղճի անհանգստութեան մէջ ձգեց, դարձաւ Ֆոն Գորտոնը նախագահին, նա ասաց, որ Թալէաթ փաշան չէ պատասխանատուն խժդուժութիւնների, այլ այն անկարգ մարմինները, որոնց յանձնուած էր տեղահանութեան հրամանների գործադրութիւնը։ Հայերի մէջ տիրող ընդհանուր ըմբռնման եւ մասնաւորապէս պ. դոկտոր Լեպսիուսի համոզման հակառակ է այդ։ Ես պարտք եմ համարում այստեղ ներկայացնել Հալեպի փոխ-վարչութիւնից ստացուած հինգ հեռագիրները...

Ֆոն Գորտոնը ջղայնոտ շարժում արաւ դէպի նախագահը, բայց կեցաւ եւ յարեց.

— Այս հեռագիրներից երկուսը կ՚ուզէի այստեղ կարդալ. պրոֆեսոր Լեպսիուսը քննել է...

— Փառաւոր կանխած պիտի լինէք, եթէ այդ հեռագիրները այժմ այստեղ կարդաք, ընդհատեց նրան նախագահը։

— Բայց պէտք է ասեմ, թէ ի՞նչ կայ նրանց մէջ, վրայ բերեց Ֆոն Գորտոնը յուզուած եւ առանց թոյլ-

ARAM webaram.com

ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆԻ
փաստաբաններէն
պ· ՎԵՐՏՆԱՈՒԷՐ

ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆԻ
փաստաբաններէն
փրոֆ· ՆԻՄԱՅԷՐ

ARAM webaram.com

տաւութեան սպասելու շարունակեց — Հեռագիրները հաստատում են, որ Թալէաթը անձամբ հրաման է տուել բոլոր հայերին, մանուկներն էլ միասին, ոչնչացնելու։ Նախապէս հրաման է տուել միայն այն երեխաներին պահել, որոնք ի վիճակի չեն յիշելու, թէ ո՛վ են եղել իրենց ծնողները։ Յետոյ, 1916ի Մարտին, այդ հրամանը ջնջուել է եւ մանուկներն էլ նկատուել են Թուրքիոյ համար վնասակար տարր։ Այս հեռագիրների ճշդութեան մասին կարող է վկայել գրագէտ Արամ Անտոնեանը, որ ստացել է Հալեպի փոխ – վարչութիւնից անգլիացիների գրաւումից յետոյ ու տրամադրել հայկական պատուիրակութեան։

Բայց Ֆոն Գոլտոնին յուզողը ոչ թէ դառն իրողութիւնների մերկացումն էր, այլ ճշմիտ անձս պաշտպանելու մտահոգութիւնը։

— Անձնապէս հնարաւոր, նոյնիսկ հաւանական եմ համարում, եւ յոյս ունիմ, որ երդուեալները հաւատում են ամբաստանեալին, որ նա հաստատուն եւ ոչ առանց պատճառի, մինչեւ սրտի խորքը համոզուած էր, որ Թալէաթն է հայերի դէմ գործուած ահռելի խժդուժութիւնների հեղինակն ու պատասխանատուն։ Եթէ այսպիսի համոզում կայ, այդ դէպքում կարող եմ հեռագիրները կարդալուց հրաժարուել։

Հարցը այս ձեւով չօշափում էր պաշտպանութեան բարոյական հիմքերը։

— Խնդրում եմ այդ առաջարկը մերժել, խստօրէն միջամտեց դատախազ Գոլնիկը, պարոն նախագահը թոյլ տուաւ շատ ընդարձակ վիճաբանութիւններ Թալէաթի անձնաւորութեան մասին։ Ոչ ոք տարակոյս ունի, որ ամբաստանեալը համոզուած է, թէ խժդուժութիւնների յանցաւորը Թալէաթն է. դրանով նրա շարժառիթը լիուլի պարզւում է։ Բացարձակապէս անհնարին է այս առեանի առաջ վճռել Թալէաթի յանցա-

ARAM webaram.com

աղբութեան խնդիրը. այդ դէպքում պիտի կայացուէր մի պատմական վճիռ, որի համար անհրաժեշտ է տարբերը առաղձ ունենալ:

Հիմնականին մէջ թէեւ Ֆոն Գորտոնը դոհացում առացաւ, բայց ստեղծուած լարումը միանգամից չմարեց: Պաշտպան Նիմայէրը ուշադրութեան առաւ. որ Թալէաթ կառավարութեան վերին պաշտօնեան էր, մեծ վեղիրը, պետութեան ներկայացուցիչը, որ ամէն բանի պատասխանատուն նա էր, եւ այլ կերպ կարծել անհնարին է...

Նախապահը անցաւ բժշկական փորձագէտների զեկուցման, որոնք զատ - զատ քննութեան էին ենթարկել ինձ բանտում: Դրանցից բժշկական զաղանի խորհրդական բժիշկ Ռսիիրա Շտորմէրը, վաթսունամեայ չոր ու ցամաք մի մարդ, վերագրում էր ինձ հոդեկան պատճառներով ծնունդ առած վերնոտութիւն, որի հիմքն էին ջղային քայքայումների հետեւանքով ինձ հետ պատահած ուշաթափութեան դէպքերը: Բայց այդ հիւանդութիւնը փոխանակ մեղմելու, ծանրացնում էր դրութիւնս:

— Հոդեկան պատճառներից ծագած վերնոտութեան առանձնայատկութիւնների թուին են պատկանում կամքի այնպիսի տկարութիւն եւ յամառութիւն, որպիսին սովորաբար շատ հազուագիւտ է, առում էր նա. ըմբռնումների մէջ հետեւողականութիւն, ծրագրի նրբագոյն մշակում մինչեւ նրա գործադրութիւնը, յատկանիշներն են այդ հիւանդութեան: Ամէն պարագայի մէջ, նման հիւանդները չնայելով ոչ մի խոչընդոտի, գործադրում են այն ինչ որ մտքերնին դրած են: Սրանով է բացատրւում այն հանգամանքը, որ ամբաստանեալը չխորշեց միջոցներից եւ դժուարութիւններից՝ դտնելու իր ատելի թշնամուն եւ խորհրդածելու, թէ ինչպէս կարող էր գործադրել իր ծրագի-

ARAM webaram.com

ը ամենայարմար ձևով։ Երբ իր սենեակից կատարած հակոզությունը վերջանում է, նա առնում է գնդը, դուրս վազում. նա ճշգրիտությամբ գիտում է հապուսաը, եւ հարուածը հասցնում գլխարկի եւ վերարկուի միջեւ եղած տեղին։ Սրա մէջ ես տեսնում եմ իրագործումը շատոնց նախապատրաստուած որոշումի։

Շտորմէրը չէր ժխտում, որ Հայաստանում տեղի ունեցած «քսամնելի իրագործությունները» խորապէս ազդել էին հոգեկան աշխարհիս վրայ, բայց այդ բոլորը չէին ազդել կամքիս ազատօրէն որոշելու եւ գործելու կարողությանս վրայ, որով պատասխանատու էի օրէնքի բովանդակ տրամադրությամբ։

Այլ տեսակէտ էր պաշտպանում պրոֆ. Լիպմանը։

— Սկզբից իսկ պէտք է ասեմ, որ ամբաստանեալը հապուսպիտ անկեղծությանն տէր մարդ է եւ ինքն իրեն այլ եւ այլ շինծու ձեւեր չի տալիս, ասաց նա։ Նա մինչեւ իսկ շտապանց վերապահ է, մի տեսակ համակերպում կայ իր մէջ, նա ինձ հասկացրեց, որ ինչ կ'ուզէ թող լինի, ինքը այլեւս հետաքրքրություն չունի կեանքի համար։ Այս ամէնը չէր բխում իրենից, պէտք էր շարունակ փորփորել դուրս քաշելու համար։ Բոլորովին պարզ է, որ մենք գործ չունինք այստեղ խելագարի հետ, եւ նրա արարքը տեղի չի ունեցել մտային մթագնած գրությանն մէջ։ Ինդիրը այստեղ հոգեկան ծանր ցնցումների եւ «գերարժէք գաղափարի» մէջ է։

Լիպմանը պարզեց այդ գաղափարի զարգացման ուղին զգայուն խառնուածքի համար՝ ծանր հոգեկան ապրումների հետեւանքով։

Գերարժէք գաղափարը մխում է այդ տեսակ բնաւորությունների մէջ եւ հետզհետէ նուաճում մարդը. նա խաղում է տիրող գիր, միշտ ներկայ է, միշտ հանդէս է գալիս եւ բռնազատում մարդուն իր իշխանությանն ենթարկուելու։

ARAM webaram.com

Ապա պարզեց, թէ ինչպէս եմ ենթարկուել այդ գաղափարի իշխանութեան.

— Դեռաբժէք գաղափարի հիմքն է մօր, հարազատների, ազգակիցների ապանութեան հեռանքով ծնունդ առած վրէժ լուծելու ներքին պահանջը: Մի անգամ ընկնելով այդ գաղափարի իշխանութեան տակ, հակառակ կամքին ու ցանկութեան, նա չի կարողացել ազատուել նրա հնչիչ ազդեցութիւնից:

Այդ հիմքերով Լիպմանը գտնում էր, որ նա իմ կամքի լիակատար տէրը չէի՝ ապանութեան ձեռնարկելու պահին: Նա իր զեկուցումը ամփոփեց անուանելով այդ՝ «յոյզի վերնատութիւն»:

Պրոֆեսոր Կասիրէրը, որի մօտ եղել էի դէպքից առաջ, նոր տուեալներով եկաւ հաստատելու Լիպմանի կարծիքը: Նոյն տեսակէտը պաշտպանեցին մի քանի երկու փորձագէտ բժիշկները՝ Բրունս Հակէն եւ պրոֆեսոր Էմմունտ Ֆորստերը: Վերջին երկուսը մինչեւ իսկ տրամադիր էին կարծելու, որ ապանութիւնը կատարել եմ ազատ կամքի լրիւ բացակայութեան...

Օրը լրացաւ, դատավարութեան շարունակութիւնը յետաձգուեց վաղուան: Դրսի հետ ունեցած շփումներից յետոյ արուել էր ազատութեան ձգտումս այնպէս, որ կարծես առաջին գիշերն եմ բանտում: Աշխատում էի վերյիշել, համադրել օրուան թեր ու դէմ տուեալները, հեռեւութիւններ հանել դատավարութեան հաւանական ելքի մասին, եւ ապրելու յոյսը տակաւ աւելի համակում էր ինձ: Բարոյական մի մեծ զոհացման տրիբ էր յատկապէս Լեպսիուսի զեկուցումը: Նա պարզաբանեց այն բոլորը, որ ես մոռացում էի տալ առաջին հարցաքննութեանս, մօտ երեք ամիս առաջ...

Գիշերը երազիս տեսայ մօրս: Իրար թէ անցնում եմ անծայր անապատի միջով եւ չորս կողմս անհուն տարածութեան վրայ չերտ – չերտ փռուած են ուսազակոյ

ARAM webaram.com

տեր ծովի քարացած ալիքների պէս։ Եւ գնում եմ մարդկային բոպիկ հետքերին հետամուտ, որ մերթ յայտնւում են ու մերթ չքանում։ Ցանկարծ տեսնում եմ աւազուտների մէջ ցնցոտիներում մայրս գետին երկարած, որ անթարթ նայում է ինձ։ Ես նետւում եմ յառաջ նրան վեր հանելու համար։

— Ո՛չ, զաւակս, մեռել եմ, օգուտ չունի, տուն գնա, ասում է նա յոգնատանջ. բայց տեսնո՞ւմ ես ինչ են արել ինձ. մէկ թիզ հող իսկ չկայ վրաս. գիշերները սառուցիկ ցուրտ է, մրսում եմ, մանաւանդ՝ կողերս։

— Սպասի՛ր, մա՛յր, ես քեզ մի լաւ ծածկեմ։

— Հա՛, ծածկի՛ր, զաւակս, ծածկի՛ր...

Ու ես խնամքով ծածկում եմ աւազներով նրա բոպիկ ոտքերը, գրեթէ մերկ կողերը, լանջը, երբ ուզում եմ անցնել գլխին, նա ասում է.

— Ո՛չ, զաւակս, գլուխս թող բաց մնայ, որ օդ առնեմ... հիմա լաւ է, չա՛տ ապրիս, դէ՛ տուն գնա...

* * *

Առաւօտեան վերսկսուեց դատավարութիւնը աւելի մեծ բազմութեան ներկայութեամբ։ Այսօր աւելի մարդ էր մնացել ոտքի վրայ։ Վերնայարկը գրաւել էին դատական եւ այլ պաշտօնեաներ ու ընտրեալներ։

Դոկտոր Լեմբերդը նիստը բանալով յայտարարեց դատավարութեան փաստական մասը սպառած, ու ձեւակերպեց երդուեալներին ուղղուած հետեւեալ երեք հարցումները.

1. Ցանցաւո՞ր է ամբաստանեալ Սողոմոն Թէհլիրեանը՝ 1921 Մարտ 15ին Շարլոտենբուրգում մի

ARAM webaram.com

մարդ՝ Թալէսի փաշային գիտուորեալ կերպով ապա-
նած լինելուն համար։

Պարզաբանեց, որ այդ հարցումը վերաբերում է
անկանխամտածուած սպանութեան։ Յաջորդ հարցու-
մը ձեւակերպեց այսպէս՝

2. Արդեօք ամբաստանեալը կատարել է սպանու-
թիւնը կանխամտածութեա՞մբ։

Այս հարցման պէտք էր պատասխանել այն դէպ-
քում, եթէ առաջինին հաստատական պատասխան տրուէր։

Վերջապէս, եթէ առաջին հարցման հաստատական,
իսկ երկրորդին ժխտական պատասխան տրուէր, անհրա-
ժեշտ էր ճշդել ,թէ՝

3. Կա՞ն մեղմացուցիչ պարագաներ։ Խօսքը այժմ
պատկանում էր դատախազ Գոլնիկին։

— Պարոնայք երդուեալնե՛ր, ասաց նա, ներկայ
քրէական դէպքի իրաւաբանական կողմը չէ, որ բացա-
ռիկ նշանակութիւն է տալիս եւ բացատրում այն բուռն
հետաքրքրութիւնը, որ նկատելի է ոչ միայն դատա-
սրահում, այլ եւ մեր երկրում եւ անգամ արտասահ-
մանում։ Պատճառը այլ է։ Դէպքը իր հոգեբանական
հիմքերով ընդգրկում է համաշխարհային պատերազմի
ժամանակները։ Նա չոչափում է հեռաւոր Փոքր Ասիոյ
մէջ կատարուած վայրագ, արիւնոտ իրադարձութիւն-
ները, ու մենք կարծես նորից լսում ենք անցած ընդհա-
նուր պատերազմի որոտը։ Դէպքի նշանակութեան մեւ
պատճառը զոհի անձնաւորութիւնն է։ Անուանենք
պանգուածի միջից մի ձեռք բարձրացաւ ու դեռին ատ-
պալեց մի մարդ, որ ժողովուրդների մեծ գօտեմարտի
ծանր օրերին վարում էր իր հայրենիքի հակատագիրը
եւ՝ որը, իբրեւ գերման ժողովուրդի դաշնակից, փառ-
քի ու բախտի բարձունքներին հատաւ։

ARAM webaram.com

Նա թեթեւ հպով կոկորդը մաքրեց ու քիչ առաջ թեքելով՝ շարունակեց.

— Ամենից առաջ պէտք է ճշդել հետեւեալ հարցը. դէպքը կատարուել է կանխամտածուա՞ծ, թէ ոչ չնախամտածուած: Երբ ինքս ինձ հարցնում եմ այդ մասին, բնականաբար ծնունդ է առնում մի այլ հարց. ի՞նչ պատճառներ են մղել ամբաստանեալին դէպի այդ քայլը: Տարակոյս չկայ, որ մենք գործ ունենք քաղաքական սպանութեան հետ: Ամբաստանեալի դրդապատճառը եղել է քաղաքական ատելութիւնը, քաղաքական քինախնդրութիւնը: Այստեղ դուք լսեցիք հեռաւոր վայրերում կատարուած շատ բաներ: Կասկած չկայ, որ տեղի են ունեցել սոսկալի բաներ, հայ ժողովուրդի նկատմամբ կատարուել են սարսափելի բաներ, եւ անկասկած է, որ ամբաստանեալի ընտանիքին էլ զարհուրելի բաներ են պատահել. ճակատագիրը հարուածել է նրան մինչեւ իր ուղն ու ծուծը, քանի որ իր բոլոր հարազատները մատնուել են մահուան: Եւ ահա իր մէջ ծնունդ է առել վրէժի զգացմունքը: Ապա ոչ մի տարակոյս չկայ, որ ամբաստանեալը յանձին Թալէաթ փաշայի տեսել է հեղինակը այն ճակատագրի, որ հարուածեց իրեն, իր ընտանիքին եւ իր ցեղակիցներից շատերին: Ու յանձին Թալէաթի տեսել է ոչ միայն ներքին գործոց նախարարը, որ կրում է ձեւական պատասխանատուութիւնը այն ամէնի ինչ տեղի է ունեցել իր պաշտօնավարութեան շրջանում, այլ անձնական ու բարոյական հեղինակը յիշուած ոճիրների:

— Պարոնե՛ր, գոչեց ճայնին ուժ տալով Գոլնիկը, այս դրդապատճառների ճշդումը լիուլի բաւական է թէհլիրեանի արարքը պատժա - իրաւական տեսակէտից դատելու համար: Բայց վկաների հարցաքննութիւնը տարածուեց նաեւ այն խնդրի վրայ, թէ Թալէաթ փա-

ARAM webaram.com

չան խկապէս անձնական եւ բարոյական հեղինա՞կն է եղել ոճիրների։ Իմ կարծիքով, թէեւ արարքը պատժա-իրաւական տեսակէտից դատելու համար բոլորովին միեւնոյնն է թէ նա եղել է թէ չի եղել հեղինակը, այնուամենայնիւ ես պէտք է անդրադառնամ այդ խնդիրներին, որքան նրանք նիւթ դարձան վկաների հարցաքննութեան։ Տարակոյսից դուրս է եւ վկաների ցուցմունքներով հաստատուած, որ հայերը եւ իրենց բարեկամները այն համոզման են, որ Թալէաթ փաշան է կազմակերպել հայկական սարսափները։ Սակայն, պարոններ, այդ կողմնակալ տեսակէտ է եւ դիւրին պիտի լինէր բերել այստեղ վկաների մի ամբողջ շարք, որոնք տեղի ունեցած դէպքերի մասին բոլորովին տարբեր տեսակէտ պիտի պարզէին։ Ես խօսել եմ բազմաթիւ գերմանացիների հետ, որոնք Թուրքիա էին եւ շատ մօտից ականատես դէպքերին. նրանք բոլորովին ուրիշ ըմբռնում ունին։ Նրանք յայտնեցին, թէ անհերքելի իրողութիւն է, որ Պոլսոյ կառավարութիւնն է որոշել հայերի բնաջնջումը. թերեւս սխալ հասկացուած, պետական եւ զինուորական ինքնապաշտպանութեան նկատումներն են դրդել՝ տալու տեղահանութեան հրամանը, որ ամէն պարապայի տակ իր արդիւնքով ծայրայեղօրէն ճակատագրական եղաւ...

Նախագահը ընդմիջեց այս մանուածապատ հաւատաքացումը՝ խնդրելով կանգ չառնել այն խնդիրների վրայ, որոնք չեն եղել վկաների հարցաքննութեան նիւթ։

— Ես կարող եմ օգտուել այդ իրաւունքից, որքան այդ տարբերութիւնը հանդէս եկաւ իրապէնների տեսակէտների մէջ։ Պարոն Լեպսիուսի տուած տեղեկութիւնները, որքան էլ հետաքրքրական են, բայց ինձ համար ունին այն պակասութիւնը, որ դէպքերին տա-

ARAM webaram.com

լիս են չափազանց սիստեմատիք եւ ծրագրուած բնոյթ-գժուար չէ տեսնել, որ գոկտոր Լեպսիուսը եկել է այդ եղբակացութեան ոչ թէ տեղին վրայ, անձնական փոր-ձով, դէպքերի ժամանակ, այլ աւելի ուշ ստացած տե-ղեկութիւններից: Այդ պատճառով կարծում եմ, թէ իրաւունք ունիմ աւելի ծանրակշիռ արժէք տալու պա-րոն զօրավար Լիման ֆոն Զանդերսի հիմնաւորումնե-րին. նա այն ժամանակ վարում էր բարձր պաշտօն, շատ մօտից ծանօթ էր դէպքերին եւ այստեղ որոշապէս ընդգծեց տարբերութիւնը՝ հայերի տեղահանութեան հրաման արձակող Պոլսոյ կառավարութեան ըմբռնու-մի եւ տեղահանութիւնը իրագործելու եղանակի մի-ջեւ: Պոլսոյ կառավարութիւնը տեղեկութիւններ ու-նէր, որ հայերը ծրագրում էին դաւաճանել, որ համա-ձայնական պետութիւնների հետ դաւադրութիւն էին նիւթում Թուրքերի դէմ եւ վճռել էին, ռազմական կա-ցութիւնը արտօնելու դէպքում, կոնակից յարձակուել Թուրքերի վրայ ու դլուխ հանել իրենց անկախութի-նը: Պոլսոյ կառավարութիւնը, պետական եւ զինուո-րական ինքնապաշտպանութեան մտահոգութեամբ, անհրաժեշտ է նկատել հայերի տեղահանութիւնը: Գա-լով տեղահանումի եղանակին, պէտք է նկատի ունե-նալ, պարոններ, որ Փոքր Ասիան այն երկիրը չէ, ուր տիրում են քաղաքակիրթ ժողովուրդներին յատուկ պայմաններ...

Այստեղ Գոլնիկը մի պահ մտածեց, որ անհամ ո-ըակումով պաշտպանեալի յիշատակը կարող է վիրաւո-րել ու յարեց.

— Ես ուզում եմ զգոյշ լինել արտայայտութիւնն-երիս մէջ. նկատի ունիմ այն պայմանները, որոնց մենք վարժ էինք պատերազմից առաջ: Աւանդութիւնը Փոքր Ասիոյ մէջ վայրագ է եւ արիւնարբու. պարոն իրագործը

ARAM webaram.com



Հայ որբուհիներու եւ գաղթականուհիներու խումբ մը՝ վոխադրուած Փոր Սայիտ 1918 Օգոստոսին:

ARAM webaram.com

մատնանշեց, որ այն ժամանակ յայտարարուած էր «սրբազան պատերազմ», եւ ահա, երբ այլացեղ, այլակրօն ազգաբնակութիւնը տեսաւ, թէ ինչպէս թուրքերը ամէն կողմից հայերին քշելով ժողովում են, այդ բնականաբար եղաւ ազդանշան հայերի վրայ յարձակուելու: Ու հանդէս եկան մարդկային բնաւորութեան ամենատգեղ բնազդները՝ կողոպուտ, սպանութիւն եւ այլն: Պարոն իրազեկը մատնանշեց նաեւ, որ տեղահանութեան համար գործի կոչուած ժանտարմները այլեւս նախկին ընտրանի պինուրները չէին, այլ առանց քրնեութեան ժողովուած սինլքորներ, որոնք յետոյ սեփական նախաձեռնութեամբ գործեցին յայտնի սպանութիւնները:

Գոնիկը այդ պահին նման էր այն միամիտ եւրոպացիներին, որոնք դիւրութեամբ համոզուում են հեռու, անծանօթ երկրների մէջ տեղի ունեցած դէպքերի քմահաճ եւ միտումնաւոր մեկնութեան, երբ նրանց այդ մասին հաւատացնում են, «խելքի մօտիկ» բացատրութեամբ: Յամենայն դէպս, նա թափով վրայ բերեց.

— Այս հիմքերով՝ ես պէտք է ասեմ, որ վկաների հարցաքննութիւնը իրաւունք չի տալիս ասելու, թէ «ապացուցուած է, որ Թալէաթ փաշան այն անձնաւորութիւնն է, որ անձնապէս եւ բարոյապէս պատասխանատու է կատարուած սարսափների համար»: Այս տեսակէտից ինձ չեն կարող շեղել նաեւ այն փաստաթղթերը, որոնց ընթերցման առաջարկը եկաւ այստեղ: Ես իրրեւ դատախազ դիտեմ, թէ ինչպէս, օրինակի համար, մեզ մօտ յեղափոխութեան տակնուվրայութիւնների ժամանակ, լոյս ընկան նման փաստաթղթեր, որոնք կրում էին կարեւոր անձնաւորութիւնների ստորագրութիւնները, եւ սակայն, ինչպէս յետոյ,

ARAM webaram.com

պարպուեց, կեղծուած էին։ Ինձ չի կարող, վերջապէս, թիւրիմացութեան մատնել նաեւ այն դատաւճիռը, որ հանուած է Պոլսոյ մէջ Թալէաթ փաշայի դէմ եւ որի մասին այսուեղ յիշուեց։ Ես չգիտեմ, թէ որքան այնտեղ ճշդուած է առարկայական ճշմարտութիւնը։ Կարող է այդպէս լինել, բայց յայտնի է, որ նախկին քաղաքական որեւէ փաշաձեւի տապալումից յետոյ, նորին համար նախկինի կողմնակիցները համարւում են ոճրագործներ։ Իսկ Թուրքիոյ մէջ այդ օրերին կատարուած փոփոխութիւնը աւելի քան բիրտ էր։ Կենտրոնական Եւրոպայի պետութիւնների բարեկամ Երիտասարդ Թուրքերի կառավարութիւնը հեռացուեց եւ նրա տեղ բերուեց մի ուրիշը, որ ստիպուած էր գնալու այդ պետութիւնների թշնամի՝ համաձայնական երկրների հետ։ Այս է պատճառը, որ մենք չենք կարող հասկանալ, թէ պարպուե՞ց արդեօք առարկայական ճշմարտութիւնը այդ դատավարութեան ժամանակ։

— Վերադառնամ ապանութեան, շարունակեց Գոլնիկը՝ աչքի անցընելով իր նոթագրութիւնները, եւ արդէն պարզեցի, որ ամբաստանեալը մղուել է այդ գործին այն համոզումով, որ ջարդերի բուն հեղինակը Թալէաթն է։ Պարոննե՛ր, անառարկելի անպիտի պատճառ չէ այդ, երբ նկատի առնենք ոճրագործութիւնների սահմանութիւնը։ Դա մի դրդապատճառ է, որ կարելի է մարդկայնօրէն հասկանալ եւ պիտի հասկացուի, որքան ժամանակ կան մարդիկ ընդունակ ատելու եւ սիրելու։ Ու ե՛րբ հարց է լինում, թէ ամբաստանեալը գործել է խորհրդածումով, ինքնին պարզւում է այդ։ Եթէ դուք ուշադրութեան առնէք, թէ ինչպէս ամբաստանեալը, Երզնկայի մէջ իր հայրական տան աւերակները տեսնելուց յետոյ, անցնում է բովանդակ Եւրոպայի միջով, հասնում Բերլին, ձեզ կը պարզուի, որ նա ապրուած է վրէժի մոլեգնոտ դաղափարով։ Նա կար-

ARAM webaram.com

ձեռ մագնիսական ուժով քաշում, բերում է մինչև այն տան դուռը, ուր ապրում է իր դուստրը։ Այսպիսով բոլորովին ճիշտ է այն յայտարարութիւնը, որ արել է նա իր առաջին հարցաքննութեան ժամանակ. նա ասել է՝ «ծնողներիս տան աւերակները տեսնելով, որդեկրեցի վրէժի գաղափարը, որ որոշել էի իրագործել. այն ժամանակ էլ գնեցի ատրճանակը»։ Այնուհետև մենք տեսնում ենք, թէ ինչպէս ամբաստանեալը որոշ ծրագրով եւ ամէն ինչ կշռադատելով, գիմում է իր ծրագրի իրագործման, մենք տեսնում ենք, թէ ինչպէս նա թողնում է իր նախկին բնակարանը, ինչպէս պատճառաբանում այդ առողջական նկատումներով, ինչպէս է յաջողում նոր բնակարան գտնել Թալէաթ փաշայի տան դիմաց, ինչպէս է հետեւում եւ սուզում, թէ ե՛րբ է դուրս գալիս տնից Թալէաթ փաշան, ինչպէ՛ս Մարտ 15ին ատրճանակը առնելով վազում է նրա յետեւից, ապա ինչպէ՛ս անցնում է առջեւը համոզուելու համար, թէ նա՞ է արդեօք ու նորից յետեւ անցնելով՝ տալիս է մահացու հարուածը։ Նշանը այնքան լաւ էր առնուած, որ մահը վայրկենական եղաւ...

Մարպարէի պէս ճիշտ եւ իրաւացի էր այս դէպքում Գոլնիկը։

— Պարոննե՛ր, ասաց նա, հայեացքը սեւեռելով երդուեալների վրայ, մենք տեսնում ենք, որ ամբաստանեալը գործում է պարզաբիւն ու ամէն բան ծրագրելով։ Սպանութիւնից յետոյ նա նետում է ատրճանակը ու փորձում է փախչել։ Եւ երբ նրան բռնում են եւ սկսում ծեծել, գոչում է՝ «ոչ սպանուածը, ո՛չ ես գերմանցի չենք. դուք գերմանացիներդ պատճառ չունէք յուզուելու»։ Պարոննե՛ր, բոլոր այս պարագաները նկատի առնելով՝ ամէն մարդ պիտի գայ այն եզրակացութեան, որ սպանութիւնը կատարուած է կանխամտա-

ARAM webaram.com

ծումով, պաղարիւնութեամբ եւ կշռադատութեամբ։ Այդպէս է նաեւ ամբաստանեալի խառնուածքը, նա տաքարիւն եւ դիւրաբորբոք մէկը չէ. ընդհակառակն, ինքնամփոփ, հանդարտ եւ թախծոտ մի մարդ է, այնպիսի մէկը չէ, որ անձնատուր լինի հրճուանքի եւ ուրախութեան, որ պոռթկայ ցասումով, այլ մէկը, որ որսնում է իր մտքերն ու զաղափարները։ Ես կարծում եմ, կանխամտածուած սպանութեան հիմնական տուեալները կարելի է առարկայօրէն ստուգուած նկատել։ Բայց այդ բաւական չէ ամբաստանեալին պատժելու համար։ Պէտք է քննել, թէ չկա՞ն արդեօք այնպիսի պարագաներ, որոնք անպատժելի են դարձնում արարքը։ Եւ ահա այստեղ է, որ հանդէս է գալիս գերմանական պատժագրքի 51րդ յօդուածը, որի համաձայն պատժելի գործողութիւն չկայ, եթէ նրա հեղինակը կատարել է գործը անդիտակցաբար կամ գործողութիւնը կատարելու պահին գտնուել է մտային հիւանդութիւնի խանգարման մէջ, որ անհնարին է դարձնում կամքի ազատ արտայայտութիւնը։ Այժմ հարց է ծագում, թէ ամբաստանեալի նկատմամբ գոյութիւն ունի՞ն այդպիսի պարագաներ։ Ինքնին հասկանալի է, որ եթէ փորձագէտները միեւնոյն բանը ասեն, դատարանը բնականաբար կը հետեւի նրանց տեսակէտին։ Դժբախտաբար մենք այստեղ փորձագէտների այդպիսի միահամուռ տեսակէտ չունինք, ուստի դատարանը հարկադրուած է ինքը որոշելու, թէ իր տեսակէտով 51րդ յօդուածի արամադրութիւնները ներկայ դէպքում կիրառելի՞ են, թէ չէ։ Այս դէպքում անհրաժեշտ է քննութեան առնել ամբաստանեալի անձնաւորութիւնը, ինչպէս նա ցոյց տուեց ինքն իրեն, դատավարութեան ընթացքին։ Ես կարծում եմ, որ նա այնպիսի տպաւորութիւն թողեց, որ կարելի է ասել, թէ գտնւում է մտա-

ARAM webaram.com

յին կատարեալ բնականոն բարձրութեան վրայ, իր պատասխանները հատու են, մեկին եւ միշտ տեղին։

«Իր անձնուրաբութիւնը պէտք է մեզ երեւան գայ նաեւ իր կեանքի ընթացքից, որքան այդ յայտնի է մեզ, նա ապրել է այնպէս, ինչպէս ուրիշ երիտասարդներ. այցելում է իր բարեկամներին եւ հայրենակիցներին. լեզուի եւ պարի դասեր է առնում. իր առնտրականները նկարագրում են նրան իբրեւ հանգարտ ու պարկեշտ մարդ։ Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ վերնոտութեան տպաւորութիւնների պահերից դուրս՝ նա մտաւորապէս բնականոն վիճակի մէջ է։ Այդ պատճառով ես կարծում եմ, որ պէտք է միանալ այն փորձագէտների տեսակէտին, որոնք մերժում են Ֆլրդ յօդուածի գործադրութիւնը։

Դոկտոր Գոլնիկը, իր ասածներից նախ քան վերջնական հետեւութիւն հանելը, մի պահ մտածեց, ըստ երեւոյթին նրա համար այնքան էլ դիւրին չէր մարդկային հաշտեցնել օրէնքի տրամաղրութիւնների հետ։ Նա ասաց.

— Պարոնե՛ր, մեր հիմնական օրէնքը կանխամտածուած սպանութեան դէպքում չի ճանաչում մեղմացուցիչ պարագաներ, ու ես կարող եմ հասկանալ, որ ոմանց համար խիստ պիտի թուի, եթէ ստիպուած լինեմ պահանջել, որ ամբաստանեալը նկատուի յանցաւոր կանխամտածուած սպանութեան համար։ Բայց, պարոններ, պէտք չէ միայն նկատի առնել ամբաստանեալին, այլ նաեւ զոհին. պէտք է խորհել, որ այստեղ կեանքից զրկուած է մի մարդ, որ գտնւում էր լաւագոյն առնական տարիքի մէջ, որի մահը ողբում են իր այրին եւ մանրիմները եւ որ, գոնէ իր ազգակիցների եւ դաւանակիցների մօտ, վայելում էր մեծ հայրենասէրի եւ պատուաւոր մարդու համբաւ։ Ու, վերջապէս պարոններ, այն պարագաները, որոնք այստեղ լսեն

ARAM webaram.com

չափով առաջ բերուեցին ի նպաստ ամբաստանեալի, համաձայն մեր հիմնական օրէնքի, լիովին անշուշտ հաշուի կ՚առնուին ներում շնորհող գերագոյն հասատաութեան կողմից: Ուստի, պարոնայք երդուեալներ, առաջարկում եմ ձեզ ներկայացուած հարցումներին ասել դրական պատասխան եւ ամբաստանեալը՝ կանխամտածուած ապանութիւն կատարած լինելու համար յանցաւոր հռչակել:

Աւելի լաւ պաշտպանել Թալէաթի գործը՝ հնարաւոր չէր...

ARAM webaram.com

ԺԱ. ԳԼՈՒԽ

Ո՛Չ, ՅԱՆՑԱԻՈՐ ՉԷ

Նախ քան այդ, երբեք չէի պատկերացրել այդպիսի յստակութեամբ ինձ համակած մղումը դէպի թուլէաթի սպանութիւնը: Ինձ մարաչափ անգամ չէր պրպղեցնում անձիս պաշտպանութիւնը, այլ այն՝ ինչ անդի էր ունենում դատարանում:

Պաշտպաններից առաջին խօսքն ասաց Ֆոն Գոլտոնը.

— Պարոնա՛յք երդուեալներ, պարոն դատախազը յիշեց, որ եթէ այստեղ ամբաստանեալ Թէհլիրեանին մինչեւ իսկ յանցաւոր նկատէք եւ այդպիսով հիմք տաք, որ նա մահուան դատապարտուի, այդ իսկ պարտադային չարիքը մեծ չի լինի, որովհետեւ հանրապետութեան նախագահը անտարակոյս պատիժը կա՛մ կը մեղմէ եւ կամ ներում կը շնորհէ: Ձեր վրայ ազդեցութիւն գործելու թոյլատրելի ձեւ չէ այդ: Եթէ դուք ամբաստանեալին յանցաւոր նկատէք, նա մահուան կը դատապարտուի եւ ոչ ոք մեզանից չի կարող իմանալ, թէ դերման պետութեան նախագահը ի՛նչ որոշում պիտի տայ ներումի նկատմամբ: Այստեղ պէտք է միայն իրաւունքը որոշել եւ ոչ թէ ներման ճանապարհը ցոյց տալ: Ցանձին պարոն աւագ դատախազի ես ուրախ պիտի լինէի ողջունելու մի պաշտպան: Բայց նա հանդէս եկաւ ոչ իբրեւ պաշտպանը Թէհլիրեանի, այլ Թալէաթ փաշայի, եւ այն էլ դժբախտաբար, միայն այնպիսի

ARAM webaram.com

ԴՐ. ԱՏՈԼՖ ՖՈՆ ԳՈՐՏՈՆ
Ս. ԹԷՀԼԻՐԵԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆԸ

ARAM webaram.com

իրողութիւններին հիման վրայ, որոնք զեկուցել ու պատմել են իրեն այլ եւ այլ անձեր։ Պարոնե՛ր, ես զիտակցաբար խուսափում եմ պաշտպանութեան այդ ձեւից։ Հեռագիրներին մի ամբողջ զինարան ունիմ, եւ այստեղ նստած է մի վկայ, որ պատրաստ է նրանց վաւերականութիւնը հաստատելու։ Այդ հեռագիրները այստեղ յայտարարելու առաջարկ արի եւ ինքս էլ յետ առի, որովհետեւ մեզ համար բաւական է, որ ինչպէս իր բոլոր գեղակիցները, թէ հիւրերանը համոզուած էր, թէ բոլոր սարսափների հեղինակը Թալէաթն է, եւ դուք էլ հաւատում էք դրան։ Բաւական է այն պարզ ու անվիճելի իրողութիւնը, որ 1,800,000 հայերից 1,400,000ը տեղահանուել են եւ դրանցից մէկ միլիոնը ապանուել է։ Պիտի խնդրէի, որ ամէն մարդ մտածէ, թէ հնարաւո՞ր է այդպիսի մի ապանդ առանց սիստեմատիք զեկավարութեան եւ ծրագրի, իսկապէ՞ս թուրք կառավարութիւնը անզօր էր այդ տեւական ազէտի դէմ միջոցներ ձեռք առնելու. հաւատո՞ւմ էք դուք դրան...

Ջոն Գոբտոնը, իր ձեռքերը իրար բերելով, մի պահ նայեց երդուեալներին, կարծես ապասելով իր հարցումների պատասխանին ու ձայնի մէջ ցաւի չնչով ասաց.

Մի քանի օր առաջ հակառակորդների կողմից այստեղ լոյս տեսաւ փողոցային ճաշակի վայել մի գրքոյկ՝ «Թալէաթ փաշայի ապանութեան գաղտնիքը» խորագրով։ Ենթադրւում է, որ գործի յետեւը թաղնուած է մի մեծ պետութիւն. «Երիտասարդ հայը, ասուած է այնտեղ, որ յանձն առաւ Թալէաթ փաշային ապանել, բարբարոսական մոլեգնութեան գործիք է, ինչ որ յատկանշում է իր ցեղը։ Իր յուզիչ պատմութիւնը, թէ ի՞նչպէս թուրքերը քարշ տուին տարան իր ծնողներին, բնականաբար նպատակ ունի միայն արթնացնել դատաւորների համակրանքը»։ Աւելորդ է ասել, թէ այդ

ARAM webaram.com

ապանութեան մէջ որեւէ պապանէք չկայ եւ եթէ այդ գրքոյկի հեղինակը երէկ այսուհետ էր ու լսեց տիկ. Թէրգիպաշեանի գեկոյցը, հաւանաբար հեռացաւ իր խօսքերը յետ առնելու ներքին պահանջով։ Մենք յանկութիւն ունէինք այդ ուղղութեամբ աւելի ընդարձակ ապացոյցներ բերելու. այսուհետ են երկու գերման գիտութեան քոյրեր, որ տեղահանութեան օրերին եղել են Երզնկա եւ տեսի ունեցած դէպքերի մասին գեկուցել են մեր արտաքին գործոց նախարարութեան։ Բայց եւ հրաժարուեցի նաեւ այդ վկաների հարցաքննութիւնից, որովհետեւ բաւական է այն, ինչ այսուհետ պատմեց տիկ. Թէրգիպաշեանը։ Ես միայն չունեմ այդ զարհուրելի տեսարանները այսուհետ վերյիշել։ Առեմ միայն, որ այդ սարսափների թողած զարդանդին տակն էր, երբ ուսանների առաջխաղացութեան ժամանակ ամբաստանեալը վերադարձաւ Երզնկա՝ յոյս ունենալով, որ մէկնու մէկը իր բարեկամներ գերդաստանից մնացել է ողջ։ Նա եկաւ ու տեսաւ իր հայրենի տունը կիսաւեր։ Բայց զարձեալ շատ բան կար մնացած, որ յիշեցնում էր սիրելիներին, որոնց հետ նա այդտեղ ապրել էր եւ իր մանկութիւնը անցրել։ Այս, այնքան բան կար դեռ, որ նա կարող էր վերատին ճանաչել իր երբեմնի այնքան քաղցր ու անդորր օճախը։ Ու երբ տեսաւ իր որբացած ու ամայացած տունը եւ իրեն պատկերացաւ Ջարդերի ահաւոր տեսարանները, առողջ մարդու զուտակ առողջ ամբաստանեալը ուշաթափ եղաւ ու դեռին ընկաւ։ Այնուհետեւ ի՞նչ տեսաւ նա Երզնկայում։ Քսան հազար հայերից մէկ խլամացած ընտանիք ու մի քանի անհատներ։ Ընդամէնը քսան մարդ՝ քսան հազա՞ր հայերից...

Ջոն Գորտոնը ասում էր այդ հատիկ հատիկ, չեշտուն եւ յամբընթաց խօսքերով. յանկարծ նա պոռթկաց.

ARAM webaram.com

— Պարոննե՛ր, որանք այնպիսի ապաւորութիւններ են, որոնք մարդ չի կարող մոռանալ մինչեւ մահ... Սակայն հետաքրքրական է, որ մեր պաշտպանները, համաձայն վկայութիւնների, խիստ վերապահ ու սակաւախօս էր: Եւ իսկապէս, ով որ անսահմանօրէն խոր ապրում է ունենում, նա հաճոյքով չի խօսում: Ու թէհլիրեանը դէպքերի մասին դրեթէ չի խօսում: «Ես հայրենիք չունիմ, իմ հարազատները սպաննուած են», պատասխանում է նա ուսուցչուհուն՝ դասի բերումով իրեն ուղղուած հարցումին: «Զգէ՛, Աստուածդ սիրես, հին վէրքերը չբանանք», ասում է իր բարեկամ Աբէլեանին զոկտոր Լեպսիուսի դիրքը կարդալու առթիւ: Պարոննե՛ր, դուք այստեղ չէք տեսնում այն մարդը, որ միշտ կառչած է այդ արիւնոտ դէպքերին, այլ մէկը, որ խուսափում է, աշխատում է խոյս տալ նրանցից: Բայց յանկարծ տեղի է ունենում շրջադարձ. նա պատահաբար հանդիպում է թուրքերէն խօսող մարդկանց, որոնցից «փաշա» կոչուածը Թալէաթն է: Դրժուար չէ երեւակայել իր ապրած ցնցումը: Մնացածը յայտնի է: Այս է ահա մարդը. եւ ես իմ հերթիս ուզում եմ իրաւաբանօրէն պատասխանել այն հարցման, թէ ի՛նչպէս պիտի դատել նրա արարքը: Ամենից առաջ՝ արդեօք կանխամտածումո՞վ է կատարուած այդ դէպքը: Պետութեան բարձրագոյն ատեանը իր որոշումների ութերորդ հատորի մէջ մատնանշում է մեր արդի պատժական օրինագրքի եւ նախկին պրուսականի միջեւ եղած տարբերութիւնը սրա մասին: Համաձայն նախկին իրաւունքի, 14 օր առաջ տրուած որոշման գործադրութիւնը նշանակում է կանխամտածում: Այսօր այդ օրէնքը փոխուած է. բարձրագոյն ատեանը վճռականօրէն հաստատում է, որ ոճիրի գործադրման պահն է որոշիչը: Ուրեմն կարեւորը այն չէ, թէ ե՛րբ է տրուած որոշումը, այլ այն թէ տեղի՞ է ունեցել

ARAM webaram.com

արդեօք կանխամտածում ապանութիւնը կատարելու պահին. եւ ապա՞ւ էր արդեօք Թէհլիրեանը այդ պահին կրքի, յոյզերի եւ մտապատկերների փոթորկից: Ես չեմ ուզում այդ հարցման պատասխանը տալ, որ, իմ կարծիքով, գտնւում է գործի բնութեան մէջ: Անպատասխանատու վիճակի, հոգեկան գործունէութեան հիւանդագին խանգարման մասին այստեղ մենք լսեցինք մի քանի փորձագէտների կարծիքը: Պարոն Շտորմէրը, մեր փորձառու դատաբանական բժիշկը, բայց, այնուամենայնիւ, ոչ հոգեբոյժ, եկել է այն համոզման, որ մենք այս դէպքում գործ ունինք օրգանական վերնոտութեան հետ, որ թէեւ ազդում է ապաստ կամքի ազատութեան վրայ, բայց չի չքացնում կամքի ազատութիւնը: Պարոն պրոֆեսոր Լիպմանը շատ նրբամիտ կերպով պարզեց, թէ վերնոտութիւնը այստեղ օրգանական չէ. այլ հիւանդութիւնը հանդէս է գալիս իբրեւ արդիւնք հոգեկան հզօր ապաւորութեան,— անցած դէպքերի, հայրական տան կործանման, որոնք ամբաստանեալը գործել են հիւանդ: Այսպէս, բատ Լիպմանի, Թէհլիրեանը հիւանդ է հոգեպէս, պատասխանատուութեան նուազագոյն գործութեամբ: Պրոֆեսոր Կասիրէրը հիմնականում միացաւ նրա այդ կարծիքին եւ բատ էութեան համաձայն է նրա հետ:

«Անկանաւոր մանաւանդ է հոգեբոյժ պարոն պրոֆեսոր Ֆորստերը իր խօսքի սկզբում միացաւ պրոֆեսոր Լիպմանի եւ պրոֆեսոր Կասիրէրի կարծիքին: Բայց յետոյ, հիմնուելով հոգեբանական նոր փորձերի վրայ, եկաւ այն եզրակացութեան, որ նեկրայ դէպքում խնդրի մէջ բաժին ունի մի ծանր հիւանդութիւն. «ամէն պարզապէս, այդ առթիւ ունիմ հիմնաւորուած տարակուսանք», ասաց նա: Վերազատնալով խնդրին եւ ուշգրաւի մեկնելով պրոֆ. Ֆորստերի այդ տարակուսանքից պարտք ունիմ ասելու, որ օրէնքը այդ առ-

ARAM webaram.com

թիւ չի ընդունում եւ ոչ մի տարակուսանք. ըստ օրէնքի պէտք է լիովին հաստատուած լինի, որ տուեալ անձը պատասխանատու է, ամենադոյգն տարակուսանքն անգամ այս դէպքում միանգամայն անպատասխանատու է դարձնում ենթական: Դատավճիռի պատճառաբանութեան համար բաւական չէ բացասական ճշդումը, թէ երեւան չեն եկել այնպիսի պարագաներ, որոնք կարող էին տարակուսելի դարձնել ազատ կամքը, այլ անհրաժեշտ է հաստատել հակառակ ձեւով, այսինքն՝ որ «այս մարդը պատասխանատու է»: Բարձրագոյն ատեանի մէկ որոշման մէջ տառացի ասուած է. «Ազատ կամքը գոյութիւն չունի այն դէպքում, երբ հոգեկան խանգարման հետեւանքով որոշ մտապատկերներ, կամ զգացողութիւններ եւ կամ օտար ազդեցութիւններ կամքի վրայ իշխում են այնքան ուժգնօրէն որ հիւանդի որոշումը, բնական կշռադատումների միջոցով, դառնում է անհնարին»: Ուրեմն, երբ հոգեկան ուժերի ամբողջութիւնը, ամբողջ ե՛ս-ն է որեւէ գործի որոշման ազդակը, այս դէպքում միայն կարելի է գործի պատասխանատուութիւնը վերագրել ես-ին, որպէս այդ ամբողջութեան: «Եթէ մէկի վրայ լիովին իշխող հզօրագոյն գաղափարն է, որ առաջ է բերում արարքը, իսկ բոլոր միւս ազդակները մնում են շուքի մէջ, այդ պարագային այլեւս ամբողջ ես-ը չէ, այլ նրա մի հիւանդագին մասը, որ կատարում է արարքը», ասում է օրէնքը: Մեկնելով այս տեսակէտից հիմա պէտք է հարց դնել. կարո՞ղ էք վստահօրէն պնդել, թէ ամբաստանեալը այն պահուն, երբ տեսաւ Թալէաթ փաշային, առաւ դէնքն ու դուրս նետուեց յարձակելու համար, կատարելապէս տէրն էր իր բոլոր հոգեկան ուժերին, ազատ կամքով որոշում տալու համար: Մասնագէտ — փորձագէտներից երկուսը որոշապէս ասում են, թէ

ARAM webaram.com

«ո՛չ, կարելի չէ յայտարարել, որ նա պատասխանատու էր». միւսները տարակուսանքներ ունին։

Ֆոն Գորտոնը դարձաւ երդուեալներին.

— Պարոնա՛յք, կարծում եմ այս բացատրութիւնները բաւական են, որ դուք կարողանաք ձեր բռնելիք դիրքը որոշել։ Գիտեմ, որ կարող են ասել, թէ այնուամենայնիւ ցաւալի է, որ պերմանական հողի վրայ հիւրընկալուած մէկը սպանուել է։ Մեր ժամանակներում, երբ ամէնուրեք տեղի ունին պայքարներ, երբ հայերի ու թուրքերի միջև դեռ այսօր էլ շարունակւում են կռիւներ, կատարուած դէպքի հետ անհրաժեշտ է հաշտուել։ Ամէն մարդ ունի այն զգացումը, թէ յամենայն դէպս, Թալէաթի կառավարութեան օրով էր, որ թափուեց ծով արիւն եւ առնուազն մէկ միլիոն մարդիկ՝ կին, երեխայ, ծեր, երիտասարդ՝ ոչնչացան։ Եւ եթէ Հարտենբերգ փողոցում դրա վրայ աւելացաւ մէկ կաթիլ արիւն եւս, մենք պէտք է մխիթարուինք, որ ապրում ենք ահաւոր ժամանակներում։ Ես միտք չունեմ այստեղ վերջնական վճիռ տալու մարդ - Թալէաթի մասին, բայց մի բան պէտք է որ ասեմ. անշուշտ նա էլ, իբ մի շարք ընկերների պէս, ձգտում էր ոչնչացրնել հայ ժողովուրդը՝ ստեղծելու համար զուտ թուրքական մի մեծ պետութիւն. անշուշտ դրա համար էր, որ նա գործադրեց միջոցներ, որոնք մեզ՝ եւրոպացիներիս համար անհանդուրժելի են։ Բայց երբ ասում են, թէ Ախոյ մէջ կեանքը գնահատւում է շատ փոքրիկ եւ նման տարատիները կարելի է հասկանալ, պէտք չէ մոռանալ, որ նոյն Ախոյ մէջ են բուռտայականները, որոնք վերաբերում են մասնաւոր զուրգուրանքով դէպի մարդը եւ նոյնիսկ դէպի կենդանիները։ Այնուամենայնիւ ես չեմ ուզում պատասխանատու բռնել այն մարդը, որ պարկած է հողի տակ։ Նրան է պատշաճում այն ինչ ասել են երկու հանճարեղ ֆրանսացիներ՝

ARAM webaram.com

Գիւսաու Լը Բոնը եւ Անրի Բարբիւսը համաշխարհաշինարարական ասրատների մասին. «Առանձին գործիչների յետեւը կանգնած են ոգիներ, դեւեր, որ վարում են նրանց. նրանք միայն պարզ գործիքներն են զանգուածային, ճիշդ կամ սխալ գաղափարների, ներշնչումների, որոնք դէս ու դէն են նետում մարդկանց, իբրեւ ճառաբակի խաղաքարեր. այդ գործիչները կարծում են, թէ կամեցողութիւն ունին, այնինչ իրականին մէջ, նրանք գործում են ճնշումի տակ»: Որքան էլ ահաւոր լինի ինչ որ տեղի ունեցաւ, մենք այնուամենայնիւ պէտք չէ այնքան փոքրոգի լինինք, որ այդ բոլորը փոխարինենք դժբախտ անհատների վիրդը: Բայց աւելի սոսկալի պիտի լինի, եթէ դերմանական գաղաբանը այդ ճակատագրին միայնէ անարդանքը հանդարտօրէն կշռագատուց արդարութեան՝ ընդդէմ անօրինակ փորձութիւնների ենթարկուած այս մարդուն...

* * *

Ֆոն Գաբանը կարծես ստկարկում էր: Նրան շահագրգռողը իմ անձիս փրկութիւնն էր բոլոր հնարաւոր միջոցներով: Օրէնքի ձեւական մեկնութիւնը այնուամենայնիւ այն իրաւունքը չէր, որի մասին ասաց նա իր խօսքի սկզբում:

Այլ հիմքերից էր մեկնում գոկտոր Վերթաուէրի պաշտպանողականը: Նրա ձայնը սկզբում հնչում էր մեղմ ու սահուն, ապրիչ ներքին ուժով օրօրում էր կարծես լսողներին: Բայց այդ ձայնի մէջ քիչ - քիչ զարգանում էր տիրական մի չունչ, որի խիստ իսկական իրաւունքն էր:

— Պարոնայք երդուեալներ, ասաց նա, ձեզ ուղղուած հարցաթերթի մէջ նախ պիտի գտնէք սպանութեան վերաբերեալ հարցումը: Այդ հարցման «այո՛» կամ «ո՛չ» պիտի պատասխանէք: Եւ ահա այդ է մեր

ARAM webaram.com

քննութեան խնդիրը։ Սպանութիւնը կանխամտածումով կատարուած լինելու մասին դուք ժխտական պատասխան պիտի տաք, դրա մասին ուզում եմ համարում խօսել։ Ես պիտի խօսեմ այն մասին միայն, թէ սպանութեան վերաբերմամբ տրուած հարցումին «այո՞» թէ «ոչ» պիտի պատասխանէք։ Արդէն հարցութիւնը ձեզ տալիս է յեցակէտ «ոչ»ի համար, որովհետեւ այնտեղ չէ ասուած, թէ «ամբաստանեալը սպանե՞լ է արդեօք Թալէաթ փաշային», այլ՝ «յանցաւո՞ր է ամբաստանեալը Թալէաթ փաշային սպաննելուն համար»։ Ամէն մարդ զգում է, որ ամբաստանեալը անպարտ պիտի արձակուի։ Դժբախտութիւնը նրա մէջ է, որ գուցէ խորհէք, թէ քանի որ ամբաստանեալը մարդ է սպանել, արդեօք օրէնքը չի՞ պահանջում, որ նրան պատասխանենք։ Պիտի ասեմ, որ նոյն այդ օրէնքին տեսակէտից այդ հեռեւութիւնը սխալ է։ Համաձայն մեր գերմանական օրէնքի, պէտք է անպարտ արձակէք ամբաստանեալին։ Այն՝ ինչ որ զգում է այստեղ ամէն մարդ ներկայ գէպքում, պատահական նոյնն է, ինչ որ պահանջում է օրէնքը։ Պաշտպանութիւնը բնաւ գիտութիւն չունի անարդար մի որոշումով արատաւորել համբաւը գերման իրաւունքի, որի ներկայացուցիչն էք դուք, ինչպէս եւ մենք։ Ամբողջ աշխարհը նայում է մեզ, ու ձեր որոշումը պիտի լինի այնպիսի մի որոշում, որ թերեւս հազարաւոր տարիներ յետոյ էլ արժէք ունենայ, որպէս իրաւունքի որոշում։ Մեր պատժական օրենսգիրքը ունի ընդհանուր եւ յատուկ մաս. այս վերջինի մէջ մի յօդուածում ասուած է. «Այն անձը, որ մարդ է սպանում դիտաւորեալ կերպով եւ այլն, ենթատեսում է յանցաւոր սպանութեան համար»։ Բայց ընդհանուր մասը վերաբերում է ամէն մի մասնաւոր դէպքի առանձին։ Այդ մասի մէջ 51րդ յօդուածը

ARAM webaram.com

հրահանգում է, թէ որոշ դէպքերում պատժելի գործողութիւն չկայ, եթէ նոյնիսկ կատարուած է յատուկ մասի մէջ յիշուած յանցանքներից մէկը կամ միւսը, այն է՝ գողութիւն. սպաննութիւն և այլն: Սա այն յօդուածն է, որ վերաբերում է յանցանքի հեղինակի մտաւոր և հոգեկան վիճակին: Երկու յօդուած վարը կայ մի ուրիշը, որի նիւթն է ստիպողական ինքնապաշտպանութիւնը, որի տակ հասկացւում է յարձակման դիմադրելը: Բայց նոյն յօդուածի երրորդ մասի մէջ ասուած է, որ եթէ անգամ ստիպողական ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը գոյութիւն չի ունեցել, սակայն տուեալ անձնաւորութիւնը, երկիւղի ու խուճապի մատնուելով, անցել է ստիպողական ինքնապաշտպանութեան սահմանից, դարձեալ նա ազատ է մնում պատժից: Առաջին խնդրի մասին բարձրագոյն ատեանի որոշումը այսպէս է. եթէ անպատասխանատու վիճակը որոշապէս ընդունուած է իբրև պատժի հնարաւորութիւնը ժխտող հիմ, այդ պարագային այլևս բաւական չէ դիտաւորութեան ընդհանուր ճշդումը, այլ անհրաժեշտ է պատճառաբանել, որ արարքի հեղինակը նոյն միջոցին գտնուած չի եղել 51րդ յօդուածի կանխատեսած կացութիւններից եւ ոչ մէկի մէջ: Բաւական չէ ասել, թէ գատաւորութիւնը ոչ մի հիմք չունէր ընդունելու անպատասխանատուութիւնը, պէտք է, ընդհակառակն, դրականապէս ճշդուած լինի, թէ արարքի հեղինակը գործը կատարելու պահին, գտնուած չի եղել 51րդ յօդուածի կացութիւններից ոչ մէկի մէջ: Պէտք է ուրեմն դրականապէս ճշդուի, որ խանգարիչ ազդեցութիւններ գոյութիւն չեն ունեցել: Եթէ որևէ տարակոյս կայ այդ մասին, այս դէպքում ամբաստանեալին պէտք է անպարտ արձակել: Այդ այն է, ինչ արդէն քիչ առաջ ձեզ պարզեց դոկտոր Ֆոն Գորտանը՝ ազատ կամքի խաթարման եւ ամբողջական Ես-ի

ARAM webaram.com

մասին խօսելով։ Ես կ'ուզէի մէկ բան աւելացնել. հազարաւոր տարիներից ի վեր ժողովուրդի մէջ առածի ձեւով յեղյեղւում է «մարդու գլուխը դառնում է» ասացուածքը։ Այդ նշանակում է, որ նման դէպքում ազատ գիտակցութիւնը խանգարուած է։ Այդ վիճակում մարդ անում է այն, ինչ ուրիշ որեւէ դէպքում պիտի չանէր։ Թոյլ տուէք յիշեմ բարձրագոյն ատեանի մէկ վճիռը։ Հակառաձառելու տրամադրութիւն ունեցող մի անհատ գնում է եկեղեցի։ Քահանան քարոզ խօսում է մի նիւթի մասին, որ բոլորովին հակառանեայ է այդ անհատի կարծիքին։ Նա լսում է հետաքրքիր աւելի մեծ ուշադրութեամբ։ Բորբոքւում, կատաղում է. եւ ապա այն ատիճան ինքն իրեն մոռանում, որ բարձրաձայն գոչում է, «լուէ՛, ա՛ռ ես խօսում»։ Այդ անհատին քաշում են դատարան՝ պատարագը խանգարած լինելուն համար։ Բայց նրան անպարտ են արձակում, որովհետեւ քահանայի ասածների ազդեցութեան տակ նրա գիտակցութիւնը խանգարուել էր եւ արիւնը այնպէս ուժգնօրէն խփել գլխին, որ այդ բոպէին նա այլեւս իր կամքի տէրը չէր։

Դոկտոր Վերթաուէրը կարծես բացի երգուեալներից ոչ ոքի չէր տեսնում ու իր խօսքերը կարծես ուղղուած էին նրանցից միայն մէկին։

— Արդ, այն ամէնը, ինչ այստեղ յայտնուեց ամբաստանեալի մասին ապաստութիւնը կատարելու պահին, կարելի է վերածել մի քանի կէտերի։ Առարկայօրէն եթէ ուզում էք դատել ամբաստանեալի կամքի, տրամադրութեան եւ հոգեկան վիճակի մասին իր տարբի վայրկեանին, նկատի պէտք է առնէք, որ նա պատկանում է հարաւային ազգի, որ աւելի դիւրագրգիռ է, քան պաղարիւն հիւսիսցին։ Բացի այդ՝ նկատի առէք, որ ինչպէս ասաց պարոն դատախազը, այդ երկիրը արիւնոտ աւանդութիւն ունի։ Յայտնի է, որ

ARAM webaram.com

թուրքերը ուր ասք են կոխում, արիւնոտ գրոչակը տանում են առջևից։ 1683ին նրանց մենք տեսնում ենք Վիեննայի գոների առջև. եթէ այն տեղն այսուհետև էլ գայթն, Գերմանիոյ մէջ շատ բան չէր մնայ։ Որոշ արիւնոտ աւանդութիւն կայ այդ հարաւային ազգերի մէջ, եւ ոչ միայն թուրքերի, այլ եւ հայերի։ Դրան առաջնորդն միանում է այն, որ հայերն ու թուրքերը պաշտօնապէս պատերազմի մէջ են։ Ուր հանդիպում են այդ երկու ազգերը, հանդէս են գալիս իրրեւ թշնամիներ եւ իրենց իրաւունքն են համարում զէմ առ զէմ գալ իրրեւ պատերազմողներ։ Երբ ամբաստանեալը դէպքից անմիջապէս յետոյ իրեն ծեծողներին ասաց՝ «Ես հայ եմ, նա թուրք, ձեզ չի վերաբերում», պէտք է աւելացներ՝ «բայի այդ, մենք պատերազմական ու վրէժխնդրական մատնութեամբ ենք ապրում իրար դէմ»։ Այստեղ դուք այսուհետև լսեցիք նաեւ այն, որ Թալէաթը պատապարտուած է մահուան։ Դատաւճիռները կա՛մ ընդունում են կա՛մ ժխտում։ Եթէ մենք չուզենք ճանաչել ուրիշ դատարանի վճիռը, չենք կարող պահանջել, որ ուրիշները մեր վճիռները ճանաչեն։ Թալէաթի մահավճիռը տրուած է պատերազմական առեւանի կողմից։ Ես առհասարակ բարեկամ չեմ պատերազմական եւ զինուորական դատարաններին։ Բայց ուր որ կան պատերազմական եւ զինուորական տեսակներ, այնտեղ անտարակոյս կան նաեւ պարկեշտ դատաւորներ, որոնք ճիշդ վճիռներ են տալիս։ Ոչ մի կասկած չունեմ, թէ այն բարձրատիճան եւ կրթուած դատաւորները, որոնք մեծ խնամքով քննեցին եւ դատեցին Պոլսոյ ահրատարածներին, տուին նաեւ ճիշդ եւ արդար դատավճիռ...

Դատախազը ահաւորութեամբ թօթուեց ուսերը եւ նստատեղից։

— Անթոյլատրելի է ասել, թէ վճիռը տեղի է ու-

ARAM webaram.com

նեցել անգլիական նաւային թնդանօթների ճնշման տակ։ Ես երբեք չեմ լսել, որ անգլիական զառաւորները այդ ձեւով ազդեն արդարադատութեան վրայ։ Ինդլիոյ մասին կարելի է ասել ինչ կ'ուզէք, բայց անգլիական արդարադատութիւնը օրինակ է ծառայել բոլոր ժամանակների եւ բոլոր երկրների համար։ Ճիշդ պիտի լինէր քննել այդ զառամման հիմքերը եւ այն ժամանակ պիտի տեսնէիք, որ հայկական կոտորածները, շորս ուրիշ մեղադրանքների հետ միասին, ճշդուած են եւ դրա համաձայն էլ մահուան են դատապարտուած ամբաստանեալները։ Դատապարտուածներից մէկի նկատմամբ, որ գտնուում էր Պոլսում, մահավճիռը գործադրուած է։ Ես անձնապէս դէմ եմ մահուան պատժին, ինչպէս նաեւ ազատութեան։ Սակայն Թալէաթը այդ մահավճռից յետոյ ստիպուած եղաւ փախչել եւ թաղնուել կեղծ անունով, որպէսզի վճիռը իր նկատմամբ չգործադրուի։ Այդ վճռի արդարութեան մասին ես ոչ մի տարակոյս չունեմ։ Նկատում եմ միանգամայն ապացուցուած, որ Թալէաթը յանցաւոր էր վերագրուած չարագործութիւնների մէջ։ Բայց այդ վճիռը ազդեցութիւն է ունեցել ամէն հայի վրայ. ամէն արդար ու խորհող մարդ պէտք էր մտածել՝ «այդ մարդը դատապարտուած է մահուան, ուրեմն նա՛ գործել է այդ ոճիրները, հետեւաբար արժանի է մահապատժի»։ Վերջապէս նկատի պէտք է առնել այն ամէնը, որ կապ ունի ստիպողական ինքնապաշտպանութեան հետ։ Այդ մարդիկ՝ Էնվերն ու Թալէաթը՝ ապրում էին Գերմանիայում կեղծ անունով։ Այստեղ խօսք եղաւ, թէ նրանք Գերմանիոյ «հիւրերն» էին։ Այդ ես վճռապէս պիտի մերժեմ. ես չեմ հաւատում, որ գերման կառավարութիւնը թոյլ տար, որ իրենց հայրենիքը լքած փախած նման ոճրագործները, իբրեւ «հիւր», կեղծ անուան տակ թաղնուէին այստեղ։ Թալէաթն էլ անշուշտ

ARAM webaram.com

քիչ յեռոյ պիտի գնար այսուհետև Էնվերի յետեւից՝ հայ ժողովուրդի դէմ նորից գաւեր։ Եւ եթէ մէկը, իրրեւ ապաստարան իր ժողովուրդի, նրան ապաստան է, անշուշտ առաջնորդւում է այն սարսափից, որ այդ մարդը հայ ժողովուրդի թշնամին է ու եթէ դուրս գայ Գերմանիայից, նորից պէտք է հայ կանանց ու երեխաներին կոտորի։ Լայն իմաստով՝ ամբաստանեալի արարքի մէջ կայ բռնապատուած ու տիպոսական ինքնապաշտպանութիւն...

Թւում էր, թէ շրջապատից միայն ես էի հասկանում նրան ու ցաւ էի զգում այդ առթիւ։

— Պարոնայք երդուեալներ, պիտի շուտէի դատարանի մէջ խօսք անել քաղաքականութեան մասին, եթէ պարոն դատախազը այդ ուղղութեամբ արտասանած չլինէր մի շարք բաներ ի նպաստ Թալէաթի։ Նա ասաց, որ ապաննուել է «Գերմանիոյ դաշնակիցը»։ Այդ ճիշդ չէ։ Թալէաթը եւ կոմիտէն դաշնակիցներն էին պրուսական եւ գերմանական պինուորական կառավարութեան։ Գերման ժողովուրդի դաշնակիցներ այդ մարդիկ երբեք չեն եղել։ Ճիշդ է, որ նրանք տապալեցին հին թուրք կառավարութիւնը եւ ծով արեան գնով մօտ տասը տարի իշխանութեան առէր մնացին. ճիշդ է, որ գերման նախկին կառավարութիւնը դաշնակից էր նրանց։ Բայց թէ Թալէաթն ու ընկերները դաշնակիցներն են գերման ժողովուրդին, այդ ես երբեք եւ ոչ մի պարապայի տակ չեմ կարող ընդունել։ Թալէաթը կարող էր անհատապէս չիտակ մարդ լինել, բայց նա ոգմատենչ գահլիճի մէկ անդամն էր. մէկը նրանցից, որ թէեւ պինուորականի համազգեստ չի կրում, բայց կազմարի առջեւ նստած՝ հրամաններ է յղում եւ զանազանօրէն պաշտպանում բռնութեան դրօշակը։ Մի ամբողջ ժողովուրդ տեղահանելու հրամանը ամենից հրէշային բաներն է, որ կարող է ծնունդ առնել միայն ոգ-

ARAM webaram.com

մատենչ ուղեղի մէջ։ Եթէ, ինչպէս այսուհետ ասուեց, Երիտասարդ Թուրքերի կոմիտէն համոզուած էր, որ լաւ ժանտարմները հեռացուած էին ու մնացել էին միայն սինլքոբները, այդ դէպքում իրաւունք չունէր տեղահանութեան հրաման արձակելու։ Եւ եթէ տեղահանութեան գործը այնուամենայնիւ յանձնեց նրանց, ուրեմն ինքն է պատասխանատուն հետեւանքների։ Եթէ հայերը միշտ իսկ դաշնակցած լինէին ուրիշ ժողովուրդների հետ եւ դաւաճանած, Երիտասարդ Թուրքերը այնուամենայնիւ դիտէին, որ կայրն հաղարաւոր կանայք, երեխաներ, որոնք այդ գործից ոչ մի լուր չունէին, եւ հետեւաբար տեղահանութեան հրամանը առաջին պայմանը պիտի լինէր խիստ կարգապրութիւն՝ հոգալու կանանց, երեխաներին եւ այն այրերին մասին, որոնք կապ չունէին «դաւաճան»ների հետ։ Եթէ եւ հակառակ չլինէի մահուան պատժի, ամէն պարապայի մէջ արդարացի պիտի նկատէի այդ ա՛յն անձի համար, որ «ռազմական անհրաժեշտութեան» նկատմամբ մի հրաման է տալիս, առանց իր վրայ առնելու նրա հետեւանքների պատասխանատուութիւնը անմեղների նկատմամբ։ Եւ պարզապէս բարբաջանք եմ համարում այն ամէնը, ինչ ասում է այդ «ռազմական անհրաժեշտութեան» մասին։ Եթէ այնտեղ, առանձին լեռնային գիւղերի մէջ մնաց ժողովուրդի այս կամ այն հատուածը, այդ բնաւ կապ չէր ունենալու «ռազմական-անհրաժեշտութեան» հետ։

Նա դարձաւ դէպի նախագահը, շունչը պահեց, ապա ասաց ծանրօրէն.

— Հայաստանը միշտ գրգռել է նուաճողական ձրգտումներ ունեցող ազգերի ախորժակը։ Հայկական բարձրաւանդակի ժողովուրդը միշտ աւարն է եղել այդ ազգերի։ Աւելի քան 500 տարուց ի վեր Հայաստանը բաժանուել է երեք մասի։ Հնուց ի վեր օտար ցեղեր,

ARAM webaram.com

մէկը միւսի յետեւից, մրրիկի պէս անցել են Հայաստանի վրայով։ Այն ցեղերը, որոնք ամայի դարձրին Առաջաւոր Ասիան, Հունգարիան եւ հասան մինչեւ Հոլանդա, Աստիլլայի պէս մարդիկ, որոնք դեռ մնում են մեր յիշողութեան մէջ, ամենաքստմնելի կերպով աւերել են Հայաստանը՝ ոչնչացնելով ժողովուրդին։ Այդ բազմաչարչար արհեստաւոր ու երկրագործ ժողովուրդի դէմ էր, որ յարձակուեց Երիտասարդ Թուրքերի կառավարութիւնը։ Երիտասարդ Թուրք ասելով իրապէս պէտք է հասկանալ հին Թուրքը, իսկ հին Թուրքը նոյնն է ինչ բռնի ուժի մարդը, ռազմապաշտը։ Երբ պատերազմը ծագեց, Երիտասարդ Թուրքերի կոմիտէն մտածեց, որ այժմ կարող են հայերի հաշիւը մաքրել, որովհետեւ աշխարհի մեծ պետութիւններից եւ ոչ մէկը կարող պիտի լինի այդ բանը նրանց արգիլել։ Բայց այս միակ հիմքը չէր. կար նաեւ կրօնական ատելութիւնը եւ մոլեռանդութիւն, ուզում էին կոտորել քրիստոնեաներին եւ յոյս ունէին, որ Ղուրանի սահմաններում կարելի պիտի լինի աւելի դիւրութեամբ իրագործել բռնի ուժի հին - թրքական դաղափարը։ Ու Երիտասարդ Թուրքերը առիթից օգտուեցին իրենց հեռաւոր սահմանի վրայ ապրող այդ միակ քրիստոնեայ ժողովուրդին ոչնչացնելու։ Նրանք չհամարձակուեցին այդպէս վարուել Պոլիս ապրող հայերի հետ։ Բայց հեռաւոր վայրերում, վալիներին ուղղուած հեռագիրներով, որոնց պատճէնները մեր ձեռքն են, հրահանգեցին մինչեւ վերջին մարդը բնաջնջել։ Եւ ահա մենք ունինք մեր առջեւ ոպանութիւնը մի ժողովուրդի, որի ոչնչացման պատասխանատուութիւնը ընկնում է Երիտասարդ Թուրքերի կոմիտէի եւ մասնաւորապէս նրանց ամենազդեցիկ նախարար Թալէաթի վրայ։

Վերթաուէրը այժմ խօսում էր այնպէս, որ կար-

ARAM webaram.com

Ձեռ դատարանը դատապարտում է իրեն եւ ասում է իր վերջին խօսքը.

— Պարոն երդուեալներ, 1921 Մարտ 15ի առաւօտեան ամբաստանեալի հոգու մէջ տեղի է ունենում իր ժողովուրդի հազարամեայ տանջանքների հաշուեկշիռը, որին միանում են 1915ի համատարած կոտորածները: Ակամայից յիշում եմ Վիլհելմ Տէլլի դէպքը: Գեսլերը ծաղրում է եւ անարգում ժողովուրդին, դատապարտում է նրան տգիտութեան, ստիպում է Տէլլին՝ իր հարազատ որդու գլխին դրուած խնձորը նետով զարնել: Աշխարհի երդուեալ դատաւորներից ո՞րը պիտի դատապարտէր Տէլլին, եթէ նա իր նետով գետին տապալէր կուսակալին: Կա՞յ արդեօք աւելի մարդկային բան, քան այն, ինչ այստեղ մեր աչքի առջեւ պարզուեց...

Նա մի պահ կանգ առաւ, կարծես լսելու, թէ մէկը պիտի հակաճառի՞ իրեն:

— Մէկ միլիոն ազանուածների, մի ամբողջ ժողովուրդի վրիժառուն է, որ կանգնած է այդ ժողովուրդի ազանութեան համար պատասխանատու անձի դիմաց: Նա հանդէս եկաւ ներկայացնելու արդարութեան ոգին ընդդէմ բռնի ուժի սկզբունքի: Նա եկաւ իրրեւ ներկայացուցիչը մարդկայնութեան՝ ընդդէմ հակամարդկայնութեան, ներկայացուցիչը պայծառ իրաւունքի՝ ընդդէմ խաւար անիրաւութեան: Նա հանդէս եկաւ իրրեւ բողոքը ճնշուածների՝ ընդդէմ ճնշողների հաւասարակշռութեան: Նա եկաւ յանուն մէկ միլիոն ազանուածների՝ ընդդէմ մէկի, որ, ուրիշների հետ միասին, այդ ոճիրի մեղքն ունի: Նա հանդէս եկաւ իրրեւ ներկայացուցիչը իր ծնողքի, քոյրերի, եղբայրների, վերջապէս իր եղբօր երկուքուկէս տարեկան զաւակին: Հայ ազգի հազար տարիներից ի վեր, մինչեւ ամենափոքր ճրագեան, կանգնած է նրա յետեւում: Նա կրում է դրո-

ARAM webaram.com

շակը արդարութեան, մարդկայնութեան, վրէժխնդրութեան։ Այս խոհերով էր, որ նա դուրս նետուեց մէկի դէմ, որ պղծել տուաւ իր ընտանիքի պատիւը, հրամայեց ոչնչացնել ամէնքի բարօրութիւնը եւ մի ամբողջ ժողովուրդ բնաջնջել տուաւ։ Հիմա դուք, պարոնայք երդուեալներ, որոշեցէք, թէ ի՞նչ է տեղի ունեցել նրա հոգու եւ մտքի մէջ սպանութիւնը կատարելու պահին. նկատի ունէք միայն, որ մարդկութեան աչքը ուղղուած է ձեր այդ որոշումին... Դա Արդարութեան աչքն է։

Վերքաւէրը ապառնց այն բոլոր ինքնարդարացումների իրական արժէքը, որանք չրջան էին անում նաեւ դատարանից դուրս թթթիհատակների կողմից ջարդերը բացատրելու, արդարացնելու նպատակով։ Այդ պայմաններում դատը դառնում էր ապօրինի մի գործ, դուրկ ամէն բարոյական հիմքից։

* * *

Կիլի համալսարանի իրաւագիտական բաժնի պրոֆեսոր դոկտոր Նիմայէրը փորձեց պարզել խնդրի այդ կողմը։ Նա կանգ առաւ օրէնքի տառի նկրքին իմաստի վրայ. օրէնքը միայն իր ձեւական բնոյթով անկարող է ի յայտ բերել արդարութիւնը։ Զկայ գրեթէ եւ ոչ մի քմբռնում, իրաւագիտական կանոն, օրէնք կամ յօդուած, որ մարդ չկարողանայ պաշտպանել ինչ - ինչ տրամաբանական հիմքերով։ Բայց առանց օրէնքի ոգու քմբռնման, տրամաբանութիւնը անզօր է երեւան հանելու արդարութիւնը։ Իրաւաբանական դատարանների եւ յօդուածների մէջ տրամաբանութիւնը անհրաժեշտ է, որպէս ապդակ թեքնիքի, լուսաբանութեան, նախապատրաստման, հրահանգման համար։ Սակայն արդարադատութեան իրագործման համար չի կարող վերջնական ու վճռական ապդակը լինել։ Եւ դրա մէջ է

ARAM webaram.com

երգուեալների գաղաբանի իմաստը, որ կոչուած է մէկ կողմից գնահատել զէպքի էութիւնը սեփական ազատ հայեցողութեամբ, անկախ ձեւական ապացոյցների կանոններից. միւս կողմից՝ գնահատել օրէնքի տրամաբանութիւնները:

— Իրաւագիտութեան կոչումն է հասկանալ կապակցութիւնները եւ մեռեալ յօդուածներին կենդանի իմաստ տալ, ասում էր նա. այդ համապատասխանում է կեանքի իմաստին, պետութեան, հասարակութեան, մարդկային համակեցութեան իմաստին: Օրէնքի այն յօդուածը, որի հիման վրայ դուք, պարոնայք երդուեալներ, պիտի տաք ձեր վճիռը, ասում է. «Ով որ գիտաւորեալ կերպով մարդ սպանէ, նա՝ եթէ սպանութիւնը կատարել է կանխամտածումով, պատժւում է մահուամբ»: Այսպիսով, եթէ դուք ձեզ ուղղուած հարցման պատասխանէք «այո», Սոկրատն թէ հիրեանի գլուխը կ՝ընկնի գահիճի կացնի տակ: Բայց ենթադրեցէք, թէ փոխուած պայմանների մէջ մէկը դատ է բացանում նոյնինքն պաշտօնական գահիճի դէմ, ամբաստանելով նրան կանխամտածուած սպանութեան մէջ: Զէ՞ որ «ով գիտաւորեալ կերպով մարդ սպանէ, նա՝ եթէ սպանութիւնը կատարել է կանխամտածումով, մահուամբ է պատժւում»: Այս դէպքում պարոնայք երդուեալներ, դուք նոյնպէս պէտք է ասէք «այո»: Այսպէս, Բերլինում 40 տարի առաջ իրաւագիտութեան մի ուսուցիչ այդպէս էլ պնդում էր: Բայց խնդիրը այն է, որ ներկայ դէպքում օրէնքի մէջ աչքաթող է արուած մի փոքրիկ բան. պատժական օրէնսգրքի բազմաթիւ յօդուածների մէջ վճռապէս չի ասուած, թէ պատժելիութիւնը կախում ունի ապօրինութիւնից եւ ապօրինութեան գիտակցութիւնից. աւելացրէք քիչ առաջ յիշուած օրէնքի մէջ մէկ բառ այս ձեւով. «Ով որ ապօրինի կերպով մարդ սպանէ...», այս դէպքում

ARAM webaram.com

ճիշդ կը լինի ու ներդաշնակ այն դիտակցութեան հետ, թէ պատժելիութեան համար միշտ պահանջւում է ապօրինութիւն: Սրա հետ մէկտեղ պէտք է լինի եւ ապօրինութեան դիտակցութիւն: Թէհլիրեանի մէջ այդ դիտակցութիւնը հանդէս է գալիս յարաբերաբար, ազդայնօրէն գունաւորուած. նրա ապօրինութեան դիտակցութիւնը քննարկելու ժամանակ պէտք է մեկնէք այն իրողութիւնից, որ արեւելքցիների համար, որոնց թուին են պատկանում նաեւ հայերը, թէեւ ընդունել են քրիստոնէութիւն դեռ 300 թուին, իրաւունք, կրօն, բարք միեւնոյն բաներն են: Մենք լսեցինք, թէ ինչպէս պարոն նախագահի այն հարցման՝ արդեօք ամբաստանեալը իրեն յանցաւոր նկատո՞ւմ է, մեղադրեալը պատասխանեց, «ոչ». ու ապա, երբ պարոն նախագահը նրան հարցրեց. «Ինչո՞ւ դուք ձեզ յանցաւոր չէք համարում», ամբաստանեալը պատասխանեց. «Խիղճս հանգիստ է»: Շատ հասկանալի է այդ. նրա համար բարոյական եւ իրաւական հասկացողութիւնները նոյնիմաստ են: Նա մտածե՛լ անգամ չի կարող, թէ ինչ որ բարոյապէս ճիշդ է, իրաւաբանօրէն կարող է անճիշդ լինել: «Մարդ եմ ապանել, բայց մարդասպան չեմ», ասաց նա. նա չի կարող ենթադրել, թէ ինչ որ բարոյական տեսակէտից լաւ է, կարող է իրեն մահապարտ դարձնել: Ես կատարելապէս համոզուած եմ, որ ամբաստանեալի մաքուր խիղճը ժայռի նման ամուր այն դիտակցութիւնն է, թէ ինքը գործել է իրաւունքի համաձայն, իսկակա՛ն իրաւունքի, որպիսին միայն արժէք ունի իրեն համար: Սրան գալիս է միանալու ամբաստանեալի վերաբերմունքը դէպի իր ժողովուրդը: Հայերը մի մեծ ընտանիք են: Նրանք մեծ պետութիւն էին: Թուրք պետութեան մէջ նրանք ապրեցին երկար ժամանակ որպէս համբերատար մի ժողովուրդ: 1830-ին, երբ ազատագրուեցին յոյները, 40ական թուական-

ARAM webaram.com

ներին՝ եգիպտացիները, ասելի ուշ՝ դանուբեան իշխանութիւնները, բուլգարները, ռումանացիները, սերբերը, ու լեռնցիները, պրանացիները, հայերը համբերող ու հանդարտ էին, որովհետեւ յոյս ունէին, որ իրենց համար էլ բարենորոգութիւններ պիտի լինեն, իրենց կեանքն ու գոյքը պիտի ապահովուին եւ հնարաւորութիւն պիտի առանան որոշ չափով մասնակցելու իրենց ներքին գործերի կառավարութեան։ Այդպէս էին դոնէ 1878ին Բերլինում կնքուած 61րդ յօդուածի տրամադրութիւնները։ Բայց փոփոխութիւն չեղաւ ու գնալով ասելի վատթարացաւ կացութիւնը։ 1896ին ես երկու անգամ եղայ Պոլիս եւ ինչ որ լսեցի ականատեսներից 1895 — 96 թուերի հայկական կոտորածների մասին, սոսկալի ապաւորութիւն գործեց վրաս։ Այդ տեղի ունեցան Սասունի ջարդը, Առանայի կոտորածը, վերջապէս, 1915ի տեղահանութիւնն ու ընդհանուր ջարդերը։ Եւ 1921ի Մարտ 15ին կատարուեց այն, որ բոլորս գիտենք։ Ուզենք չուզենք՝ պէտք է ընդունենք, որ այս դատավարութիւնը այնպէս չէ, ինչպէս ամէն մի ուրիշը. նա պայթեցնում է այս սրահի նեղ շրջանակները եւ ստիպում է մեզ դարձնել մեր նայուածքը հեռաւոր կապակցութեան վրայ, եւ փոշեել հասկանալ ուրիշ ժողովուրդներին, ուրիշ մարդկանց, ուրիշ պայմաններ եւ արդար լինել նրանց հանդէպ։ Մենք ստիպուած ենք տալու Երկրորդ շրջանային դատարանի եւ երդուեալների դատարանի վճիռը այնպիսի իմաստով, որ լայնօրէն լուսաբանուած լինեն իրաւունքի էութիւնը, մարդկութեան ձգտումները, գործի կապակցութիւնը։ Եթէ ուզէք այդպէս վարուել, ես չեմ կարծում, որ դուք ժամանակաւոր նկատէք Սողոմոն Թէհլիրեանին։ Դատավարութեան այս կապակցութեամբ, ի վերջոյ կ՚ուզէի, որ դուք ձեզ հարց տայիք, թէ ի՞նչ արդիւնք պիտի ունենայ դատավճիռը. արդիւնք՝ ոչ թէ քաղա-

ARAM webaram.com

քական կամ ուրիշ առումով, այլ ի՞նչ արդիւնք պիտի ունենայ զատավճիռը բարձրագոյն արդարութեան կամ այն բարիքների տեսակէտից, որոնց համար ապրում ենք՝ կեանքը, տանելի եւ արժանավայել դարձնելու ձգտումով...

Նիմայէրի խօսքից յետոյ, սկսուեց մի կատաբեալ մենամարտ դատախազի եւ պաշտպաններիս միջեւ: Դատախազին այլեւս դրդեցնում էին ոչ այնքան օրէնքի թելադրութիւնները, որքան դատի բարոյական հիմքերը, որոնց այնպիսի հարուած հասցրին բոլոր երեք պաշտպանները: Իր խօսքը այս մասով ամբողջութեամբ ուղղուած էր Վ.Երթաուէրի դէմ:

— Երկրորդ պարոն պաշտպանը, ասաց նա, կարծես ուզում է մարդկութիւնը բաժանել երկու մասի. ռազմապաշտների, որոնց սրտից դեռ խլել է արդարութեան, մարդկայնութեան ու կարեկցութեան զգացումը, եւ մնացածների, որոնք պահում են իրենց հոգու մէջ այդ բարձր յատկութիւնները: Դուք դիտէք անշուշտ մեծ բանաստեղծ Հայնրիխ Հայնէին. նա ամէն առիթով ըմբոստանում էր քրիստոնէութեան ապէկցութեան տակ առաջացած կենցաղային սկզբունքների դէմ եւ փառաբանում դասական Յունաստանի կենսուրախութիւնը: Բանաստեղծի հռչակաւոր քննադատներից մէկը նրա մասին ասում էր. «Երբ նա աւելի տարիքոտ դարձաւ, աշխարհի մէջ այլեւս ուրիշ բան չէր տեսնում բայց միայն փտիա նագովրեցիներ եւ պարարտ յոյներ»: Նոյն բանն է յիշեցնում երկրորդ պարոն պաշտպանի բաժանումը ռազմապաշտների եւ ոչ ռազմապաշտների: Բայց այդ տեսութիւնը ես թողնում եմ իրեն, իսկ մի ուրիշ տեսակէտին վճռապէս պիտի հակառակեմ. նրան հաճելի չեկաւ, որ ես որակեցի սպանելուածին որպէս գերման ժողովուրդի հաւատարիմ դաշնակիցը: Ես պէտք է կրկնեմ, որ թուրք ժողովուր-

ARAM webaram.com

դը կռուեց ուս ուսի դերման ժողովուրդի հետ եւ անպայման կարող է որակուել, որպէս այս վերջինի դաշնակիցը: Ես պատուարեր չեմ նկատում մինչեւ որոշ ատիճան ուրանալ անցեալը, ի՛նչ էլ լինի անհատի քաղաքական տեսակէտը: Ես պէտք է ամենախիստ կերպով բողոքեմ, որ պարոն պաշտպանը Թուրքիոյ այս քաղաքականութեան երկու պաշտպաններին՝ Էնվեր եւ Թալէաթ փաշաներին որակեց այստեղ վիրաւորական ձեւով, որպէս իրենց հայրենիքը լքած փոխած ոճրագործներ:

— Համաձայն պատժական օրինագրքի 190րդ յօդուածի, ասաց այդ ատենի վերքննուէրը, պատժելի գործողութեան մասին լուրը կամ տարածայնութիւնը ապացուցուած է նկատուում, երբ օրինաւորապէս դատապարտուած է այդ գործողութեան հեղինակը: Թալէաթ, Էնվեր, Ջեմալ փաշաներն ու դոկտոր Նազիմը, թրքական տոմարով 1335 Յունիսի 10ին, հանրային պատերազմական ատեանի կողմից, որ կազմուած էր ակնաւոր դատաւորներից, դատապարտուած են որպէս հեղինակ անարդ ոճիրի, այն է՝ հայերին կոտորելու և անմեղների ապաննուելուն համար: Այս դատավճիռը օրինական է: Ու սխալ է եւ դերման օրէնսդրութեան հակառակ՝ ասել, թէ ես մարդիկ վիրաւորելու յանցանք եմ գործում, որ ամենաանարդ ոճիրի համար օրինաւորապէս դատապարտուած անձերին անուանում եմ ոճրագործներ: Թէ իրենց հայրենիքը լքած փոխած այդ ոճրագործները, որոնք ապրել են այստեղ կեղծ անուններով, վայելե՞լ են արդեօք որեւէ ազատապաշտի այդ պաշտպանութիւնը՝ այդ ինձ յայտնի չէ: Ապա պարոն դատախազը ասաց, որ Թուրք ժողովուրդը, իբրեւ հաւատարիմ դինակից, կողք կողքի կանգնած է դերման ժողովուրդի հետ: Այդ անշուշտ ճիշդ է եւ ոչ ոք դրա հակառակը չի պնդել: Բայց Թուրք ժողովուր-

ARAM webaram.com

գը, պատասխանատու չէ պատերազմի համար, ինչպէս պատասխանատու չէ և՛ զերման ժողովուրդը։ Ու Թալէաթ եւ Էնվեր փաշաներն էլ պատերազմ յայտարարելու համար չէ, որ խնդրոյ առարկայ են դարձել այստեղ, այլ նրա համար, որ ձեռնարկեցին տեղահանութեան, որի հետեւանքով հայ ժողովուրդի նկատմամբ գործադրուեցին այնպիսի սոսկալի ոճիրներ, որոնց նմանը մարդկային պատմութեան մէջ չկայ։ Ես անձամբ ի վիճակի չեմ հասկանալու, թէ ինչպէ՞ս կարելի է այս խնդրի մէջ քաղաքականութիւն խառնել։ Ստորնութեան այս թաղուորութեան մէջ փոշիանում է ամէն քաղաքականութիւն, ու ես չեմ կարող հասկանալ, թէ ինչպէ՞ս կարելի է բառ անգամ արտասանել ի նպաստ տեղահանութեան հրամաններին։ Զէ՞ որ զերման ժողովուրդն էլ անիրաւութեամբ ամբաստանւում է այդ գործին նպաստած լինելու մտքով։ Միայն անվերապահ մերժումը այդ տեսակ սկզբունքների, դատապարտումը նման ոճրային հրամանների կարող է ապահովել մեզ այն յարգանքը, որի իրաւունքը մենք ունինք։ Երբ ես լսում ասացի, թէ ռազմապաշտները բռնի ուժի պաշտպաններն են, նոր բան չասացի եւ ես ապշում եմ, որ պարոն դատախազը ընդունեց այդ իրրեւ նորութիւն։ Ով որ, ինչպէս զերման ժողովուրդը, տուժել է ռազմապաշտների ստոր արարքներից, պէտք է առէ եւ աշխատի արմատախիլ անել նրանց։ Ռազմապաշտները ժողովուրդից դուրս են. նրանք հայրենիք չունեն, ունեն միայն բռնի ուժի զգացումը, որի նպաստին է ճնշել իրաւունքը։ Դատարանը պէտք է արդարօրէն դատէ, ամբաստանեալին արդարութեամբ հատուցանէ։ Մենք՝ պաշտպաններս այստեղ դիրքերն չենք մոռանում, մենք ուզում ենք միայն, որ պատժական իրաւունքը կիրառուի։ Իսկ պատժական իրաւունքը նեղկաց

ARAM webaram.com

դէպքում յանցաւորութեան հարցումի արուելիք ժըխտական պատասխանն է։

Այդպէս է, որովհետեւ այն պահին, երբ ամբաստանեալը փողոց իջաւ եւ ատրճանակը ուղղեց իր գոհի դէմ, ապառ չէր նրա կամքը, նա ինքը չէր, որ փողոց էր իջնում, իր մէջ իջնում էին ատրերքը, միլիոնաւոր ապանուածները. նա՝ կարելի է ասել առնում էր իր առջեւից իր ամբողջ ժողովուրդի դրօշակը, բոլոր խոշտանգուածների, պղծուածների, լկուած ընտանիքների դրօշակը...

Նա հայեացքով շանթահարեց դատախազի աթոռը ու դարձաւ երդուեալներին.

— Որքա՜ն յաճախ դուք ստիպուած էք եղել դատելու որեւէ ամուսին, որ դառնալով տուն տեսնում է իր կնոջ անհաւատարմութիւնը եւ ապանում նրան։ Որի՞ մոքից կ՚անցնի դատապարտել այդպիսին։ Իսկ այսո՞ւ. չէ՞ որ անպատուած են մի ամբողջ ժողովուրդի բոլոր կոյսերը... Հայնրիխ Հայնէի օրինակը, որ մէջ բերեց դատախազը, ինձ բոլորովին հապաւորեց, որովհետեւ ես աւելի քիչ բանասաեղծ եմ, քան պարոն դատախազը...

Այս խօսքերի վրայ սրահում առաջացած խլրտուքը մի պահ ընդհատեց նրան։

— Մեր կառավարութեան նկատումները, այն կառավարութեան, որ դաշն էր կռել Թալէաթ եւ Էնվերի փաշաների հետ, ինձ վրայ նոյնպէս չազդեցին, որովհետեւ այդ դաշինքը կնքելուց առաջ նրա մասին ոչ ոք չի հարցրել իմ կարծիքը, ինչպէս նաեւ գերման ժողովուրդի կարծիքը։ Միակ բանը, որ վրաս ազդում է այն է, որ դուք սխալ բան չանէք՝ կարծելով որ եթէ ամբաստանեալը մարդ է ապանել, ուրեմն յանցաւոր է։ Վերջ ի վերջոյ այն՝ ինչ ուզում է պարոն դատախազը, յանգում է հետեւեալ հարցումին. «ապանե՞լ է արդեօք

ARAM webaram.com

ամբաստանեալը»։ Այն ինչ մենք ուզում ենք, որ դուք ձեզ հարց տաք. «Ցանցաւո՞ր է ամբաստանեալը՝ սպանած լինելու համար»։ Մենք խնդրում ենք ձեզ, որ այս առթիւ բարեհաճիք հետեւելու մեզ։

Բանավէճը վերջացաւ։

Նախագահը երդուեալներին արաւ անհրաժեշտ թելադրութիւնները՝ պարզելով նրանց, թէ որ հարցման ինչպէս պէտք է մօտենան եւ ձայների ինչ մեծամասնութեամբ որոշում պիտի կայացնեն։ Վերջինները մեկուսացան խորհրդակցելու։

Այնքան շատ էին օրուան տպաւորութիւնները ու սրատապնդիչ՝ գործի շուրջ պարզուած բարոյական մթնոլորտը, որ ամէն մի պատիժ թեթեւ էր թւում ինձ։ Մօտ մի ժամ տեւեց երդուեալների խորհրդակցութիւնը, որի ընթացքում ես մոքով դեգերում էի այն բոլոր վայրերը, ուր ծանօթ, բարեկամ, մօտիկներ ունէի։ Բուն կեանքը երեւի բաղկացած է նման ժամերից...

Երդուեալները յայտնուեցին. մէկը նրանցից դողդոջուն ձայնով կարդաց՝ աչքերին շատ մօտ բռնած թուղթը.

— «Պատուով ու խղճով վկայում եմ, որպէս երդուեալների որոշումը՝ յանցաւո՞ր է ամբաստանեալ Սողոմոն Թէհլիրեանը 1921ի Մարտ 15ին Շարլոտենբուրգում մի մարդ՝ Թալէաթ փաշային սպանուած լինելուն համար։

— Ո՛չ։ Օտսօ Թայնիկէ, երդուեալների գլխաւոր»։

Ցանկարծ սրահը դղրդաց բուռն, որոտընդոստ ծափերից։ Նախագահը ստորագրեց որոշումը՝ խնդրելով նոյնը անել քարտուղարին եւ կարդալ։

— Ամբաստանեալը արձակուում է անպարտ պետական սնտուկի հաշուին, յայտարարեց նախագահը, երբ վերջինը աւարտեց ընթերցումը...

ARAM webaram.com

նոր, աւելի երկարատև ծափեր ընդհատեցին նը-
յան։

— Բանտարկութեան իրամոնը ամբաստանեալի նկատմամբ ջնջուած է...

Գերման հատարակութիւնը կարծես ուզում էր Մարտ 15ին իմ դէմ դրծած սխալը դարմանել։ Դատա-
ւորները մեկնել էին, բայց դեռ շարունակւում էին ծափերն ու ցնծութեան աղաղակները։ Վայրկեանի մէջ իմ առջև յայտնւում են հայրենակիցները, պաշտպան-
ները. նրանք ձեռք են մեկնում ինձ, շնորհաւորում։ Զեմ հասկանում, թէ ի՞նչ պիտի անեմ, մինչև որ պա-
հակս յիշեցնում է, որ պէտք է գնալ բանտ։ Կարճ տե-
ւեց ճանապարհը եւ քիչ աւելի երկար՝ արձակման ձե-
ւակերպութիւնները։ Երբ յայտնուեցի փողոցում, այն-
տեղ դեռ խմբուած էր բազմութիւնը։ Հատարակութեան խանդավառութիւնը ցոյցի բնոյթ ստացաւ։ Իրարանց-
ման մէջ մէկը առաւ ինձ իր հոգը բազուկների մէջ ու հեկեկալով սկսեց համբուրել։ Մշեցի Գարեգինն էր։ Էֆթեանը, Արէլեանը, Գալուստեանը, Զաքարեանը, ինձ հրում են դէպի մի ինքնաշարժ, որի մօտ կանգնած են ատրիկանները։ Ներս ընկնելով՝ միւս կողմից տես-
նում եմ տիկին Շթելպաումին, Դիմանին, օրիորդ Բայլինգոնին, որոնք շարժում են թաշկինակները։

Մի յայն պողոտայով աջ ու ձախ մեզ ուղեկցում են ատսից աւելի ինքնաշարժներ։ Հայրենակիցները առաջ-
նորդում են ինձ մի տեղ, ուր խմբուած են գաղութի բոլոր հայերը...

ARAM webaram.com

ԱԶԳ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՏՈՒԹ. Ե. ԼԵՓՍԻՈՒՍԻՆ

6 Յունիս 1921

Սիրելի տոքթ. Լեփսիուս,

Թերթերու մէջ կարդացի Թէհլիրեանի դատավարութեան ընթացքին ձեր վկայութեան մանրամասն զեկուցումը: Անաչառութեան եւ արդարամտութեան ազնիւ զգացումով յիշատակեցիք ու դատապարտեցիք էնվեր ու Թալէաթ փաշաներու հրամանով գործադրուած վայրագութիւնները, բացատրելու համար արարքը անոր, որ Պերլինի դատարանը հանուած էր:

Ձեր մեծ սիրտէն ուրիշ կերպ չէի սպասեր, յիշելով ձեր քաջութիւնը ու անձնուրացութիւնը, որով դուք երբեք չվարանեցաք ստանձնելու հայութեան պաշտպանութիւնը, այնպիսի շրջանի մը, երբ այդպէս ձեռնարկ մը ադեստաբեր է, մանաւանդ ձեզ համար:

Մեր հայրենակցին անպարտ արձակումը անգամ մը եւս ապացուցուց, որ դատաւորներ կան Պերլինի մէջ եւ չեմ տարակուսիր, որ ձեր միջամտութիւնը մեծապէս ծառայեց լուսաբանելու եւ շարժելու խիղճը անոնց, որոնք անմեղ հռչակեցին Թէհլիրեանը:

Իմ, Ազգ. Պատուիրակութեան եւ համայն Հայութեան կողմէ, բոլոր սրտով ձեզի կը յայտնեմ մեր խոր երախտագիտութիւնը շահագրգռութեան այս նոր փաստին համար, որ կը բերէք մեր դատին ի նպաստ:

Ընդունեցէք, սիրելի Լեփսիուս, իմ լաւագոյն ըզգացումները:

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

ARAM webaram.com

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Իր ժամանակին Թալէաթի ապանութիւնը բաւական զբաղեցրեց հայ եւ օտար մամուլը։ Թարմ ապաւորութեան տակ, թերթերի զրուցիւններնը արտայայտում են ժամանակի տրամադրութիւններ, չօշափում են յարակից խնդիրներ ու դառնում հայկական ջարդերի ու Թալէաթի շուրջ։

Գերմանական մամուլը.— Դէպքի բերումով Թալէաթի ապանութիւնը մեծ տեղ է գտել գերմանական մամուլում։ Հակառակ պաշտօնական շրջանների համակրական ելոյթներին Թալէաթի յուղարկաւորութեան ժամանակ, գերման թերթերը չեն օգտագործում ապանութիւնը հայերի դէմ։ Միայն «Deutsche Allgemeine Zeutung»ը, իր Մարտ 16ի (1921) առաւօտեան համարի մէջ յարձակւում է հայերի վրայ։ Զակերտանների մէջ առնելով «Մարտիրոսագրութիւն», «Հայկական հարց», «Տարագրութիւն» եւ այլն, յօդուածագիրը չի մոռանում այն պարզունակ ասացուածքը, թէ տասը հրեայ հաւասար է մէկ յոյնի, իսկ տասը յոյն՝ մէկ հայի։ Թերթի կարծիքով «ամէն մի եւրոպացի զբաղանք է զգում հայի հանդէպ»։ Թուրքը պարտուաւոր է ու իր խօսքի տէր, իսկ հայը՝ խաբեբայ։ «Նա իր կնոջը ամուսնացնում է Թուրքի հետ նրան ապանելու համար»։ Միամիտ ընթերցողին այս կարգի բաներ հրամցնելով, թերթը գրում է.

«Եբիտասարդ Թէհլիրեանը մօտեցաւ ծերունի մեծ վեզիրին, ուսին գցեցեց որպէս մի հին ու սիրելի բա-

ARAM webaram.com

բեկումի, բարեւեց ու խփեց։ Հարազատ հայկական ձեւ»։

Նոյն համարի մէջ կայ մի ուրիշ յօդուած, իրեն Թուրան ստորագրութեամբ, հաւանաբար արաբ.

«Մի հայ ուսանող, Թէհլիրեան անունով, ատրճանակի (Պարեկատան) զգում է իրեն այն մարդը, որ կոչուած էր Թալէաթ փաշայից լուծելու վրէժը հայկական ցաւերի, որոնց մեղքը Թալէաթի վրայ էր բարդում։

Այս նպատակով երիտասարդ պարոնը Հայաստանից, իր թերապրիչների կողմից, ուղարկուած է Գերմանիա։ Թալէաթ փաշան, որ իթթիհատ վէ թէրաքկի կուսակցութեան միւս անդամների հետ միասին աշխատում էր Թուրքիոյ ամրոցջութիւնը պաշտպանելու, մղում էր կռիւ հայկական, ինչպէս նաեւ օսմանեան պետութեան միւս ազգերի անջատողական ձգտումների դէմ։

Այդ անշուշտ բաւական չէ ապանուածին պատասխանատու համարելու այն դժբախտութեան համար, որին ենթարկուեց հայ ժողովուրդը պատերազմի ընթացքում։ Սակայն Entente-ի անիրաւ դրդումը Թալէաթի դէմ, նրան պատժելու՝ Միջին Եւրոպայի պետութիւնների հետ դաշնակցելուն համար, մոքերը արդէն պղտորել էր։ Տաք գլուխ երիտասարդներ, որոնք ակրոբատական միջոցներով գործող Դաշնակցութեան կամքէի ազդեցութեան տակ են, համարում են Թալէաթը՝ ոգին բոլոր հայկական ատրճանների։ Այս ատելութիւնը երեւան եկաւ մի այնպիսի ժամանակ, երբ ենթադրւում էր, թէ կրքերը վաղուց հանդարտել են եւ արեւէ հիմք չկայ հայ - թրքական հին վէճերը նորից մէջտեղ հանելու։ Բացի այդ՝ հայերը Թալէաթից վախենալու ամենափոքր պատճառն իսկ չունէին, որովհետեւ այն օրուանից, 1918ի աշնան, երբ Թալէաթն ու

ARAM webaram.com

Էնվերը Պոլիսը ձգեցին եւ մեծ վեզիրությունը յանձնեցին Թէվֆիկ փաշային, քաղաքական բեմից հեռացան»։

Մոշոր բուրժուազիայի բերան «Berliner Tageblat»-ը Մարտ 16ի համարում գրում է այն ամէն լաւը, ինչ կարող է ասել Թալէաթի մասին՝ զարմանալի պաղարիւնութեամբ հաշուեցնելով ոճրագործութիւնը մարդկային բարեմասնութիւնների հետ։ «Թալէաթ փաշան կոմիտէի քաղաքագէտ» խորագրով յօդուածի մէջ ասուած է։

«Մարդասպանի ձեռքով մեռաւ այն մարդը, որ գրեթէ տասը տարի անընդհատ դարձնում էր Թուրքիոյ ճակատագիրը իրը առաջնորդող միտք։ Կիսով չափ մոռացուած, իր փոխ առնուած անուան տակ պահուելով, իր կեանքի փչրուած գործը ողբալով, եւ սակայն ո՞վ գիտէ ինչ նոր ժամերի սպասելով էր ապրում նա։ Վստահ է, որ գիտէր թէ իր այնքան արագ, փայլուն եւ արկածախնդրական կեանքը նոյնքան արկածախնդրական փոխճանի պիտի յանգի։ Ցաւոնի է, որ ապանութիւնը զուտ քաղաքական բնոյթ ունի։ Ապանողի անունից յայտնի է, որ հայ է։ Կասկած չկայ, որ ժամանակից ի վեր հայ մոլեռանդներ ընկած են Թալէաթի, Էնվերի եւ Ժէոն Թիւրք միւս պետերի յետեւից Եւրոպայի եւ Ասիոյ մէջ եւ նրանց հալածում են, ինչպէս որսորդը որսին։ Արար աշխարհ գիտէ, թէ ինչո՛ւ։ Արդէն դոկտոր Լեպսիուսի հրատարակութիւններից բոլորն էլ գիտեն, որ 1915ի գարնան Ժէոն Թիւրք կառավարութիւնը փորձեց, իրեն օրինակ առնելով Ապտիւլ Համիտի նախորդ կառավարութիւնը, բռնի միջոցներով ընդմիշտ լուծել հայկական հարցը։ Թալէաթը, որ սկզբում այս ձեռնարկին համամիտ չէր, յետոյ Էնվերից, միւս գինուորականներից եւ ծայրայեղ կենտրոնականներից համոզուեց եւ այս անգամ

ARAM webaram.com

ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆ ԻՐ ԶԱՒԷՆ ԵՒ ՇԱՀԷՆ գաւակներուն հետ, 1934ին, Պելկրատ:

ARAM webaram.com

Լիբեն յատուկ կամքով բնաջնջման միջոցների դիմից։ Իր այս ոճիրը իր մահով քաւեց։

Այս կերպ դատելով՝ նա զոհ դնաց քաղաքական մահափորձի։ Բայց այս չի նշանակում, թէ իր ընդհանուր քաղաքականութեան, իր պետական գործունէութեան ու ասպարէզի հակառակորդները իրենց հաշիւը

1.— ՍՈՂՈՄՈՆ, 2.— կինը՝ ԱՆԱՀԻՏ, 3.— հարսը՝ ԱԼԻՍ, 4–5.— մանչ զաւակները՝ ԶԱՒԷՆ եւ ՇԱՀԷՆ, 1951 փետրուարին Գազապլանիֆա։

մաքրեցին։ Որոշ է թէ, իրը պայքարող եւ կրքով տարուող անձնուն մէկը, Թալէաթը շարունակ ունեցել է հակառակորդներ, ինչպէս նաեւ հիացողներ։ Բայց միմիայն գինուորական պարտութեամբ առաջացած Ժէօն Թիւրքիզմի տիրապետութեան անկումը չի նշանակում, թէ իր որդեգրած գաղափարներն էլ յոգս

ARAM webaram.com

ցնդեցին։ Ժէօն Թիւրքիոյմը շարունակում է ապրիլ եւ իր կողմը ունի ժողովուրդի մեծամասնութիւնը, որքան էլ անկումից ի վեր դաշնակիցների դրումն ասկ. Պոլսում, խամաճիկներու պէս եկող գացող բոլոր կառավարութիւնները բաղկացած են իր հակառակորդներից։ Անգարայի ազգայնականները, որոնք յաջողեցան Սեւրի դաշնագիրը պատռել, ստորուած են կոմիտէի բուն գաղափարներով։ Իրաւ է, որ այդ գաղափարները այս օրուան մարդիկ յարմարեցնում են իրենց քաղաքականութիւնը՝ փոխուած արամադրութիւնների համաձայն։ Թալէաթն էր, որ ամենից յամառ եւ ապդու կերպով առաջնորդեց Թուրքիոյ ճակատագիրը նոյն այդ գաղափարները իրականացնելու ջանքով, ո՛չ թէ իբր մեծ վեղիր, որովհետեւ այդ բարձրագոյն պատուին արժանացաւ շատ ուշ, պարերազմի ընթացքին, եւ ոչ էլ իբր ներքին գործոց նախարար, 1911ից սկսած եւ ընդհատումներով, այլ իբր նախագահ «Միութեան եւ Յառաջդիմութեան» կոմիտէի, որի մէջ էր Օսմանեան պետութեան բուն իշխանութիւնը, «Կարմիր Սուլթան»ի անկումից յետոյ։ Կառավարութիւնն ու երեսփոխանական կազմը գնալով աւելի կամ նուազ շափով կոմիտէի ձեռքում հրաւ գործիք դարձան եւ գործադրող օրգաններ։ Թալէաթը կարող էր իր մասին ասել. «Կոմիտէն ես եմ»։ Անժխտելի է, որ այս անձերի շրջանում, ուր տիրում էր արկածախնդրական ոգին եւ խառնակ պատեհապաշտութիւնը, Թալէաթն էր ամենագործաւոր անհատականութիւնը, իր նպատակին ձգտող խառնուածքը եւ անմիջելիօրէն ճանաչուած քաղաքագէտի տպաւորը»։

Անցնելով Թալէաթի գործունէութեան՝ Թերթը գրում է։

«Իր մեթոդները, անշուշտ, ամէն ժամանակ չէին կարող նման լինել արեւմտեան մեթոդներին։ Ու թե-

ARAM webaram.com

բեւս դժուար թէ կարելի լինէր միայն այս մեթոդնե-
րով Ապրիլ Համիտի ժառանգութիւնը կարգաւորել։
Իր յաջողութիւններն էլ առհմանափակ չէին։ Վերջա-
պէս յաջողութիւն պէտք է նկատել, որ նա կարողա-
ցաւ ներքին ու արտաքին այնպիսի խառնակութեան
մէջ ժէօն Թիւրք ոեժիմը պահել։ Եւ յետոյ այն բա-
բենորոգումների գործը որին ձեռնարկել էին ժէօն
Թիւրքերը, միայն երկար աշխատանքի արդիւնք կարող
էր լինել, եւ դրա համար էլ իրը նախապայման ան-
հրաժեշտ էր արտաքին խաղաղութեան մի յարմար գե-
տին։ Այնինչ տասը տարուց ի վեր, սկսելով այն օրից,
երբ Իտալիան իր ձեռքը երկարեց Տրիպոլիին, Թուր-
քիան այլեւս չկարողացաւ երբեք դերծ մնալ պատե-
րազմից։ Թուրք ժողովուրդը ահագին գործ կատարեց
եւ իրեն պարտադրուած այս վերջին պատերազմների
մէջ ծանր կորուստներ տուեց։ Կարելի է ասել, որ հա-
մաշխարհային պատերազմը, որին մասնակցելու հա-
մար Թուրքերը արդէն առաջին ամիսներէն իսկ որո-
շում էին տուած, իրենց պարտադրուած էր։ Քաղա-
քական պարզ գաղութներ բացատրում է, թէ ին-
չո՛ւ։ Թալէաթը, Էնվերը եւ բոլոր մեր պատասխանա-
տուները Ռուսիոյ հակառակորդների կողմը անցնելուց
զատ չէին կարող ուրիշ բան անել այնպիսի մի պատե-
րազմի մէջ, որի բուն իմաստն էր Ռուսիոյ կողմից
Պոլսոյ գրաւումը։ Եւ նրանք իրենց գաշնակիցների ու-
ժերը սխալ չէին պարզել, միայն թէ Գերմանիայում
միրոյ քաղաքական միտքը չէին կարողացել ըմբռնել։
1918 Մեպտեմբերին, բուլղարական ճակատի ջախջա-
խումից քիչ առաջ, Թալէաթը եկաւ Բերլին միայն
ասելու, թէ «այլեւս չենք կարող»։ Երբ ամէն ինչ կո-
րաւ, այստեղ մնաց եւ կ'երեւի թէ ամբողջ ժամանակը
անցրեց քաշուած՝ գիտելով եւ սպասելով։ Համաձայ-
նական պետութիւնների Պոլսոյ գահլիճին ուղղուած

ARAM webaram.com

պահանջը նրա յանձնումի մասին՝ գերման կառավարութիւնը մերժեց, եւ իրաւունքով: Իր ամենակատաղի թշնամիները սակայն կարողացան նրա հետքը գտնել: Բայց նրանք չկարողացան արգիլել, որ Լոնդոնի խորհրդաժողովի մէջ տարուած թրքական, ինչպէս նաեւ իր հայրենիքի համար բացուող լաւագոյն ապագայի հեռանկարը իր վերջին օրերը գեղեցկացրեն»:

Նոյն ոգով է արտայայտւում եւ «Berliner Morgen Post»ը.

«Հայ-թրքական արիւնոտ պայքարին, որ տարիներ անընդհատ տիրում է Թուրքիայում, տարօրինակ դիպուածով դոհ գնաց Գերմանիոյ մայրաքաղաքում Թուրքիոյ առաջնակարգ դէմքերից մէկը: Թալէաթ փաշան սպանուեց մի հայի ձեռքով: Դաշնակիցների հալածանքներից,—նրանք Թուրքիայից պահանջում էին յանձնել Թալէաթը, — նա յաջողութեամբ ազատուեց: Բայց հայերի վրէժխնդրութիւնը, որոնք նրան նկատում էին պատճառ պատերազմի ընթացքում հայկական կոտորածների, անշուշտ դեռին փռեց նրան: Ցանձին Թալէաթի Թուրքիան կորցրեց իր ամենից ուժեղ մարդկանցից մէկին. մէկը՝ այն հազուադիւտ անհատներից, որոնք արժանաւորապէս իրաւունք ունին քաղաքագէտի պատուաբեր անունը կրելու: Նա իր անօրինակ եռանդը, իր բոլոր ձգտումները եւ կարողութիւնը նուիրեց իր հայրենիքին այնպիսի մի ժամանակ, երբ օսմանեան կայսրութեան ապառնում էր կազմալուծում: Իր ուժեղ ուսերով յենարան եղաւ նրան: Կասկած չկայ, որ նա կը դարձնէր Թուրքիան, հակառակ Տրիպոլիի եւ բալկանեան պատերազմներին, կենսունակ, թերեւս արդիական պետութիւն, եթէ համաշխարհային պատերազմը չլինէր»:

Պահպանողական թերթերից «Berliner- Lokal An-

ARAM webaram.com

zeiger» իր Մարտ 16ի առաւօտեան համարի մէջ խօսելով Թալէաթի ապանութեան պատճառների մասին՝ անաչառօրէն գրում է.

«Թուրքիայ 1908ի ազատագրական կռիւներից ի վեր Էնվերի եւ Թալէաթի անունները դարձան ամենաժողովրդական: Էնվերը իր ձեռքն առաւ շարժման գլխաւորական գլուխը, Թալէաթը նրա ոգին ու միտքն էր: Հայերի հանդէպ վերջինի անսահմանօրէն դաժան ձեւով հանդէս գալն էր, որ շարժումը իր նպատակին հասցրեց: Թուրքիան շատ վաղուց արդէն կաղում էր իր ստորագաս պաշտօնէութեան անկարողութեան պատճառով: Ու թէեւ Թալէաթը կարող էր այդ անընդունակ պաշտօնէութիւնից չօգտուել, բայց իր հրամանները որեւէ թիւրիմացութեան տեղի չէին տալիս եւ նա գործադրեց բոլոր միջոցները իր ստորագաս պաշտօնէութիւնը հայ ազգաբնակութեան դէմ հանելու, իսկ վերջիններն էլ իրենց կողմից այնպիսի ձեւով վարուեցին հայերի հանդէպ, որ նոյնիսկ ժամանակին քրիստոնեաների դէմ սկսուած հալածանքները սուտերի տակ մնացին: Հազարաւոր հայեր քշուեցին դէպի անապատները եւ մատնուեցին սովամահութեան: Դէպի Մոսուլ եւ Բազրատ տանող ճանապարհները, ինչպէս եւ շատ ուրիշ վայրեր, ծածկուեցին հայերի դիակներով, որոնք առանց որեւէ պատճառի իրենց տուն ու տեղից քշուելով սովամահութեան ենթարկուեցին: Սրանով պէտք է բացատրել, հայերի տեսակէտից առաջնորդուելով, շատ իրաւացի տեսութիւնը դէպի Թալէաթ փաշան: Արդէն կասկածից դուրս է, որ նրա ապանութիւնը միայն քաղաքական դրդապատճառներից առաջացած մի գործ է»:

Իր անցեալին անվայել, մի անասոյդ դիրք է բռնել սոցիալ – դեմոկրատական կուսակցութեան պաշտօնաթերթ «Worwarts»ը: Ցաւալի է, որ դեռ այդ ժա-

ARAM webaram.com

մանակ դունապերծ էր եղել նախկին յեղափոխական սոցիալիստական այդ թերթը, բայց որ արդէն իսկ ուրացել էր նաեւ իր խիղճը՝ պէտք է անակնկալ համարել: Մարտ 16ի առաւօտեան համարում էրմին Բարթի ստորագրութիւնը կրող մի յօդուածում, թերթը փորձում է ոչ միայն մեղմել Թալէաթի մեղքը հայկական կոտորածների մէջ, այլ եւ ջարդերը բացատրում է որպէս «Արեւելեան ժողովուրդների նախնական մակարդակի» արդասիք:

«Ուշագրաւ ոճիրը, որ կատարուեց Երեքշաբթի օր նախկին եպարքոս Թալէաթ փաշայի դէմ եւ որ ունեցաւ արիւնոտ վերջաւորութիւն, նորից քաղաքական ուշադրութիւն հրաւիրեց Թուրքիոյ վրայ: Թալէաթ փաշան շրջուցիչ արդարութեամբ, դեռ շատ երիտասարդ տարիքի մէջ, հասաւ ամենաբարձր դիրքի թուրք պետութեան մէջ: Պետական մարդու հաղուագիւտ ընդունակութիւն ունէր: Նրա քաղաքական եւ էնվեր փաշայի դինուորական դեկավարութեամբ, Թուրքիան պատերազմի բովանդակ ընթացքում, մինչեւ դժբախտ վախճանը, ամուր կերպով կանգնեց Գերմանիոյ կողքին: Թուրք կառավարութիւնը Թալէաթ փաշային մահուան դատապարտեց: Մօտաւորապէս այդ ժամանակից ի վեր նա ապրում էր Գերմանիայում միշտ ուշադիր զգուշութեամբ: Ոճրագործը պարսկահայ է: Ոճրագործութեան պատճառները դեռ յայտնի չեն: Բայց կասկած չկայ, որ ոճիրը կապ ունի հայերի տարագրութեան հետ, որ կատարուեց պատերազմի ընթացքին, երբ Թալէաթը գործի գլուխ էր: Ինչպէս երեւում է, այս ոճիրը ազգային վրէժխնդրութեան մի գործ է: Հայկական տարտափները եւ Բելգիայի մէջ իրը թէ կատարուած առասպելական չարիքները, հեռուից հնարաւորութիւն չեն տալիս յատակ գաղափար կազմելու Արեւելքի քաղաքականապէս ծանր մթնոլորտի

ARAM webaram.com

մասին։ Շիտակ չի լինիր Թուրքիոյ մէջ կատարուած բոլոր դժբախտ դէպքերի մեղքը փնտռել միայն մէկ կողմի մէջ։ Արեւելեան ժողովուրդների զարգացման նախնական վիճակը բացատրում է դաժանութիւնը ազգային եւ կրօնական պայքարների, որոնց ընթացքին նոյնիսկ եւրոպական բարձր գաստիարակութիւն ստացած մարդիկ անկարող են լինում խեղդելու արիւնախանձ բնազդները եւ որոնց իրրեւ ապացոյց կարելի է յիշել նոյնիսկ ներկայ ապանութիւնը։ Ի հարկէ մարդ չկայ, որ հերքէ վերջին պատերազմի ընթացքում հայերի կրած տառապանքները կամ արդարացնէ այդ։ Բայց այդ տառապանքները բացատրելի են արեւելեան ազգերի փոխ-յարաբերութիւններով եւ Թուրքհայկական պայքարների պատմութիւնով։ Թալէաթ փաշան անձնապէս մեղադրւում էր հայկական սարսափների պատասխանատուութեամբ։ Բայց աւելի ճիշդ եւ արդար պէտք է լինէր նրա անձը չշփոթել մեծ եղարքութեան իր պաշտօնի հետ։ Կարելի է ճշգրիտ կարծիք կազմել՝ նկատի ունենալով, որ Թալէաթ փաշան իրրեւ Թուրք պետութեան զեկավար, պատերազմի յատուկ քաղաքական պատճառներով, ստիպուած էր ձեռք առնել քաղաքական բիրտ միջոցներ, որոնց, պէտք է խոստովանել, պատերազմի ստեղծած հոգեբանութեան շնորհիւ գաւառային վարչութիւնները հասցրին ծայրայեղ վայրագութեան։ Մեզ համար պարզ է, որ այս բոլորը հայերի մէջ ատելութիւն։ Եթէ ոճրագործութիւնը ներկայացուի իրրեւ ազգային վրէժի գործ, պէտք է ասել, որ հետեւանք է հայկական սարսափների մատակարարութեան։ Բայց այդ ոճիրը նոյնքան քիչ ներելի է, որքան պատերազմի ընթացքում Անատոլուի մէջ անհամար հայերի վրայ գործուած ոճիրը»։

«Ցորֆերց»ի այս պիպատասական դիրքը դերման

ARAM webaram.com

մամուլի մէջ առաջ բերեց բանավէճ։ Անկախ սոցիալիստների օրգան «Freiheit»ը, մէջ բերելով վերի յօդուածից կտորները, գրում է։

«Այս արտայայտութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ ձգտում՝ արդարացնելու Թալէաթը, հայկական կոտորածների հեղինակը։ Ֆորվերցի վարիչները, ինչպէս պատերազմի ընթացքում կամ դրանից առաջ Նոսկէի իշխանութեան շրջանում, հիմա էլ աշխատում են ամէն մի զազրելիութիւն ծածկել։ Նրանք «պետական անհրաժեշտութիւն» են նկատում այն ամէնը ինչ տեղի ունեցաւ Թուրքիայում։ Իսկ Թալէաթ փաշային՝ իբրեւ անհատ, գառնուկի տեղ են դնում, որովհետեւ նա միայն «քաղաքական եւ պատերազմական պայմանների մէջ» էր, որ իբրեւ եպարքոս հայերի հանդէպ կոտորածի միջոցներ կիրարկեց, եւ իր գործադիր մարմիններն էին, որ «չափազանցուած խստութեան» հասցրին այդ միջոցները։ Պարոն Բարթը շատ որոշ կերպով ասում է, թէ խաղաղ պայմանների մէջ Թալէաթ փաշան երբէք այդպիսի խիստ «միջոց»ների չէր դիմել։ Այդ մտայնութեան դէմ բուռնական է մէջ բերը պարոն Թէոդոր Վոլֆի խօսքերը Թալէաթի մասին «Բերլիներ Տագեբլատի» էջերից.

«Ուզում են, որ միայն Թալէաթի վրայ չծանրանան հայերի հանդէպ կատարած սարսափների մեղադրանքներն ու հակակրանքները, ուզում են նոյնիսկ ենթադրել, որ Թալէաթը աւելի քիչ մաս է ունեցել հայ ժողովուրդի ոչնչացման մէջ, քան աւազակապետ Էնվերն ու կոմիտէի միւս անդամները։ Գերման արտաքին գործոց նախարարութեան թոյլտուութեամբ Եոհաննէս Լեպսիուսի հրատարակած դիւանագիտական փաստաթղթերից պարզ երեւում է, որ Թալէաթը ոչ միայն Պիղատոսի դեր է կատարել, ոչ միայն խաբեր է հանգստացուցիչ խօսքերով գերման ներկայացու-

ARAM webaram.com

չին, որ հայերի հանդէպ կատարուած զազրելի ոճիր-
ների համար բոլորքել է, այլ եւ ներկայացուցչութեան
անդամ դոկտոր Մորմանտին պարզապէս յայտնել է,
թէ «ներքին թշնամին պէտք է բացարձակապէս ոչնչաց-
նել, օգտուելով համաշխարհային պատերազմից»: Նա
մի քաղաքագէտ էր, որ ուզում էր երկրի մէջ միատար-
րութիւն ապահովել, օտար կրօնների ժողովուրդների
ոչնչացումով, ինչպէս Սպանիոյ Փիլիպոս Երկրորդը: Նա կարող էր մեզմ միջոցներ գործադրել, բայց
սիրում էր ասել՝ «որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թի-
կամբ»: «Ահա այսպէս է ներկայանում քսան բուրժուա-
կան քաղաքագէտ Վոլֆի այն մարդը, որին ներողա-
միտ Ֆորվերցը գարշարում է լուսապատկով», եզրա-
կացնում է «Ֆրայհայտը»:

Նոյն թերթը իր վերաբերմունքը արտայայտում է Մարտ 16ի առաւօտեան համարում այսպէս.

«Թալէաթ փաշան մէկն էր Երիտասարդ Թուրքերի կոմիտէի առաջնորդներից, որոնք Թուրքիան պատերազմի մղեցին ու երկիրը անդունդ առաջնորդեցին: Երիտասարդ Թուրքերի կոմիտէի եւ գերման կայսերական կառավարութեան ներկայացուցիչների միջեւ շատ սերտ յարաբերութիւն էր տիրում: Եւ երբ Երիտասարդ Թուրքերի իշխանութիւնը ընկաւ, զեկավարներից շատերը փախան Գերմանիա, ուր դատն հիւրասէր ապաստանարան: Երիտասարդ Թուրքերի զեկավարները օգտագործում էին իրենց պաշտօնները, հարստանալով հսկայական կաշառքների միջոցով, գործի մատակարարման գործը կապալի տալով: Դրամների մի մասը, որ պարզապէս գողացել էին ժողովուրդի գրպանից, տեղաւորեցին արտասահմանի դրամատներում: Այս տեսակ գումարներ կան եւ գերմանական զանազան դրամատներում. գումարներ, որոնց օգնութեամբ քաղաքական ոճրագործները կարող են անհոգ կեանք վա-

ARAM webaram.com

քել՝ իրենց երկիրը դժբախտության մէջ դրսեցուց յեռոյ։ Այդ մարդկանց փառաշուք ապրուստի մասին պատմելու համար բաւական է այն փաստը, որ Թալէաթ փաշան Հարաւնրեբդեր շտրասէում ինը սենեակներից բաղկացած բնակարան ունէր։ Թալէաթ փաշայի իշխանութեան օրով էր եւ պատերազմի ժամանակ, որ հայկական անողոք ապանդանոցները կազմուեցին, որոնց գոհ դնաց մէկ միլիոն մարդ։ Այս եւ ուրիշ ոճրագործութիւնների վրիժառութեան համար էր, որ դնդակը Թալէաթ փաշային զգեցուեց։ Գերմանն կառավարութեան համար այնքան էլ պատուաբեր չէ, որ նա թրքական պատերազմական ոճրագործներին ապաստան հիւրասիրութիւն է շնորհում։ Միջազգային սոցիալիստական պրոլետարիատի ներկայացուցիչների հանդէպ նա չեղաւ երբեք այսպէս հիւրընկալ»։

Աւելի հեռաքրքրաշարժ է Ֆորվեցի դէմ ուղղուած Հերման Վենտելի յօդուածը, որ լոյս տեսաւ նոյն կուսակցութեան պատկանող գաւառական մի օրգանի՝ «Die Volkstimme»ի էջերում «Թալէաթը, հայերն ու սոցիալիզմ» խորագրով։ Յօդուածագիրը ասում է.

«Այո՛, Հարաւնրեբդեր շտրասէում ատրճանակի հարուածի բոցերում մի վայրկեանի մէջ տեսանելի եղաւ մի ամբողջ ժողովուրդի աննկարագրելի մարտիրոսագրութիւնը»։

Մանրամասն խօսելով հայկական հարցի ծագման, հայ ժողովուրդի ազատագրական ձգտումների մասին, յօդուածագիրը ծանրանում է Աբդիւլ Համիթի պանիսլամական եւ պանթուրանական ծրագիրների, ինչպէս եւ 1895 — 96 թուականների ջարդերի վրայ։ Անելով քաղուածքներ Martin Niepageի դրքոյկի տարագրութեան եւ ջարդերի նկարագրութիւններից, նա վերջացնում է յօդուածի այդ մասը Թալէաթի յայտնի խօսքե-

ARAM webaram.com

րով, «հաշիւը ներքին թշնամիներով հետ հիմնապէս մաքրելու որոշման» մասին եւ շարունակում.

«Վերջապէս, այս հրէշը գնդակի մը հարուածով մեռաւ շատ արագ կերպով, մինչդեռ հարիւր հազարաւորներ, որոնց կորուստը նրա հաշուի մէջ պարտքի կողմը պէտք է արձանագրել, դանդաղ եւ տանջալից մահուան դատապարտուեցին: Մի քանի ամիսներ առաջ, երբ Փարիզում ալբանացի յայտնի Ֆէտատ եւ դահի թիկնածու էսատ փաշան, իբրեւ «իր ժողովուրդը անբարոյականացնող», ապանուեց մի երիտասարդ տոնաւորի կողմից, Ֆրանսայի երգուեալները նրան անպարտ արձակեցին: Այն մարդը, որ երիտասարդ հային՝ այն հային, որ յիրաւի շատ աւելի հիմքեր ունէր Թալէաթի վիճակը ճշդելու՝ դառել ուղենայ, պիտի մատծի անպայման, որ Բերլինը այս քաղաքական ապանութեան վայրը չէր լինի, եթէ Թալէաթը յանձնուէր պատերազմից յետոյ կազմուած Թուրքիոյ կառավարութեան, իր սեփական ժողովուրդից դատուելու համար: Սակայն իրաւական պատժական պատասխանատուութիւնը որ կողմից էլ լինի, դէպքը ամէն ապրիլիստի համար արեւի պէս պարզ է: Բայց արի ու տե՛ս մի կուսակցութեան մեծ թերթ, որը իր դիրքով կոչուած է ուրիշներին օրինակ ծառայելու, իր ջանքերի մէջ ճգնում է հայ ժողովուրդի դահիճին չքմեղել եւ այն էլ ամէն հնարաւոր միջոցներով: Ճունչը ապառելու շատ «օրիկտիւզմով» դինուած, նամառում է, որ «չնորհիւ քաղաքակրթութիւնից եւ արեւմտեան Եւրոպայից հետու ու խառնուած մթնոլորտում պարուրուած լինելուն, հայկական ապրումներին ճշգրիտ գնահատութիւնը անհնարին է» եւ գանում է, որ «արեւելեան ժողովուրդների նախնական մակարդակը դարձնում է հասկնալի ոգոյին եւ կրօնական կրքերի խառութիւնը»:

ARAM webaram.com

«Այս արդէն շափազանցութիւն է: Տասնեակ տարի-ներ շարունակ սոցիալ-դեմոկրատիան հպարտ էր նրա-նով, որ մարդկութեան արժանիքը պահում էր բարձր, իր վահանը ամէն տեղ տալիս էր ճնշուածներին, իսկ սուրը ճնշողների դէմ պարզում: Բոքսերների կռուի ժամանակ, արևելեան Ասիայում Գերմանիոյ կատա-ղած խառուիչների դէմ ամենայն ուժգնութեամբ բողոքեցինք, առանց նկատի առնելու «դէպքերի ճըշ-գրիտ գնահատման անհնարինութիւնը, շնորհիւ քաղա-քակրթութիւնից եւ արևմտեան Եւրոպայից հսկայա-կան հեռաւորութեան խառացած մթնոլորտին»: Ամբողջ աշխարհի առաջ մենք խարազանեցինք գերման պատե-րազմական վարիչներին, երբ նրանք, հարաւարևմըտ-եան Աֆրիկայում, Հերերոներին կարահարի անապատ-ները քշեցին՝ քաղցի ու ծարաւի մահուամբ սպաննե-լու, եւ մենք այն ժամանակ չպատանք, որ նեգրերի նախնական մակարդակը «հականալի է դարձնում այս անողոք խառութիւնը»: 1900ին Փարիզի միջազգային սոցիալիստական համագումարը պարզեց, թէ ով է մե-զաւոր հայկական ջարդերի մէջ: Երկու տարի յետոյ էառուարտ Բերնշտայնը «Հայ ժողովուրդի տանջանքներն ու Եւրոպայի պարտականութիւնը» դրքով ճշդեց այդ: Արդեօք այս բոլորը միանգամից զո՞ւրս ընկան մտա-յից: Արդեօք թրքական տիրող դասը բաց քա՞ղդ սատ-ցաւ մեզնից, շորս տարի գերմանական դժբախտ պա-տերազմական քաղաքականութեան լծորդած լինելու պատճառով: Արդեօք անհասկանալի երկչոտութի՞ւն է տիրում մեր մէջ պարզ տալու այն ինչ որ տեղի պիտի չունենար եւ այսպէսով մենք մեզ վարկաբեկում ենք եւ կամ թէ վախենում դրանով դաշնակիցների ջրաղա-ցին ջուր լեցնել»:

Թերթերից ոմանք զանց են առնում Թալէաթի դե-ը, ծանրանալով գլխաւորապէս դէպքերի վրայ: «Die

ARAM webaram.com

Westdeutsche Landeszeitung»ը խօսելով Ադանայում եւ յետոյ պատերազմի ընթացքում տեղի ունեցած ջարդերի մասին գրում է.

«Իրականի մէջ ի՞նչ է նշանակում 1,400,000 տղամարդկանց, կանանց եւ երեխաների տարագրումը: Ըստ թրքական կառավարութեան ցուցմունքների եւ խօսքերի, խաղաղ եւ օրինական փոխադրում նոր բնակավայր, բայց իրականի մէջ կողոպուտ ժողովուրդի ամբողջ ինչքերի, ջարդ ժողովուրդի արական մասի, երիտասարդ կանանց եւ աղջիկների արգելափակում թրքական հարէմներում ու քրդական դիւղերում, երեխաների վաճառում գերիների շուկայում, եւ մնացածների չարաչարանք մահը հիւանդութիւնների ու սովի միջոցով...: Մօտաւոր գնահատութեամբ տարագրուածներից 800,000 մարդ սիստեմատիք ջարդերից եւ սովից մեռել են: Քաղցը եւ հիւանդութիւնները արդէն լրացրին թրքական գէնքի սկսած գործը: Եւ վստահօրէն կարելի է ասել, որ այն ինչ գործուած է այս ժողովուրդի դէմ, պատմութեան անցեալ դանդաղ դարերի մէջ իր նմանը չունի: Մարդ ուղղակի անկարող է հաւատալ, որ դեռ եւս 20րդ դարում մեր հողագնդում հնարաւոր է մի ամբողջ ժողովուրդի ոչնչացումը այսպիսի ահռելի պայմաններում: Բայց արժանահաւատ չէզոք, ամերիկեան եւ շվեցարական հիւպատոսական պաշտօնեաների վկայութիւնները որեւէ՛ կասկած չեն թողնում Հայաստանում կատարուած քստմնեցուցիչ սարսափների մասին»:

Ոմանք էլ չօշափում են պաշտօնական Գերմանիայի պատասխանատուութեան խնդիրը, անջատելով նրանից գերման ժողովուրդը: Այսպէս, օրինակ, «Vossische Zeitung» ի միջի այլոց ասում է.

«Հայկական ջարդերը մեր հակառակորդների քարոզութեան մէջ ճակատագրական դեր խաղացին, իսկ

ARAM webaram.com

Գերմանիայ կողմից, նկատելով Թուրքիայ դաշնակից լինելու հանգամանքը, հնարաւոր չեղաւ հրապարակով յայտարարել, որ այս սարսափները հանդուրժող ոչ մի գերմանացի չկայ»։

Աւելի որոշ եւ խնդրի բարոյական պատասխանատուութեան ծանրութեան հաշուառումով է գրուած այս տողերը Մաքսիմիլիան Հարդէնի յօդուածը «Die Zukunft» երկշաբաթեայի մէջ.

«Մենք թուրքերս պարտաւոր ենք ու ցանկանում ենք այս համաշխարհային պատերազմը օգտագործել մեր հաշիւը մեր ներքին թշնամիների հետ հիմնովին մաքրելու համար, առանց արտաքսման գիւանագիտութեան կողմից այս անհրաժեշտ աշխատանքի մէջ խանգարուելու»։ 1915ի ամրան այսպէս էր խօսում Թալէաթ բէյը, այն ժամանակ գեռ եւս ներքին գործոց նախարար, մեր գեղջկական անդամների մէկի հետ։ Ի՞նչ գուրս եկաւ այս անամօթ նախարարից»։

Հեղինակը հինգ ամրողջ էջերի մէջ տալիս է ամերիկեան նպաստամատոյց ընկերութեան տեղեկագրութեան մէջ լոյս տեսած մի տկանատեսի պատմութիւնը, ուր կենդանի կերպով նկարագրուած են այն սոսկալի տեսարանները ու դէպքերը, որոնց ենթարկուել է հայ ժողովուրդը իր տարագրութեան ժամանակ, տալով գրեթէ մէկ միլիոն նահատակ։ Ապա ասում է.

«Թալէաթը նախ որպէս ներքին գործոց նախարար եւ ապա իբրեւ մեծ վեզիր գլխաւոր մեղաւորն է։ Զնայելով որ նա ուրանում էր, բայց նրա մեղսակցութիւնը ապացուցուած է իր իսկ հայրենակիցների համոզմամբ։ Ռուսական թէհլիրեանը որոնեց եւ գտաւ բերեց այդ վարկաս հրէշի թագստոցը եւ օրը ցերեկով Բերլինի փողոցներում գնդակահարեց իր ծնողների եւ տղի ապանիչին։ Վրէժը իմն է, ասում է Տէրը, եւ արդիւնք

ARAM webaram.com

է իր նմանի ապանութիւնը։ Ո՞վ բարեպաշտներ, որ-
պէսք հայ քրիստոնեայի ձեռքը Աստուծոյ գէնքը չէ՞ր.
իր բարձր կամքը չէ՞ր որպէսք, որ վրիժառուի միտքը
լուսաւորեց եւ նրան Եւրոպայի ազատ խառնամիտ-
բութեան միջով անպատմ չարագործութեան հետքի
վրայ առաջնորդեց՝ աւելի խմաստուն կերպով, քան
զօրավարները արին այդ, իրենց կուրօրէն հպատակ-
ուող զօրքերի միջոցով։ Թէհլիրեանը երեւի արեւելք-
ցու տիպ ունի։ Մի լաւ հաղնուած պարոն արեան մէջ
ընկած, իսկ մի թուխ պարոն նրան գնդակահարողը։
Անշուշտ, արիւնապանգ մի խաղ է ականատեսի աչքում.
անտեղեա՛կ ամբոխ, որ չգոհանալով երիտասարդի
ձերբակալութեամբ, նրան վայրագօրէն չարչարեց։
Չարչարեց այնպիսի մէկին, որ հերոս անուանելու
արժանի է. մի տիպարս, որ շատ յաճախ տրւում է
անարժաններին։ Կ՝ուզէ թող այդ երիտասարդ կեանքը
մարի եւ կամ թէ մթութեան մէջ գանդագօրէն այրուի,
հերոսների երդերում պիտի ապրի նա մինչեւ վերջին
հայը գերեզման իջնի։ Հայրենիքի ամենանուիրական
արբանեկում կը դրուի նրա արձանը, ինչպէս ժամա-
նակին Ակրոպոլիսի սարբսում Հարմոդիոսինը եւ
Այլիսոգայթոնինը եւ Միտոսեան դպրաթնեբում կը
տեսանի նրա հոգին Տելլի հետ։ Հիպպարինիան, Հիպ-
պիասը եւ Գէսալէրը համեմատած Թալէաթ – Էնվէր –
Ջեմալի հետ թզուկներ են գազանութեան մէջ։ Գերման
ժողովուրդը նրանց հետ անբաժան շորս ամբողջ տա-
բիներ ուս ուսի եղբայրացած էր։ Վա՛յ նրան, որ կը
համարձակուէր ամենափոքր ակնարկութիւն իսկ անել
այդ սատահակների ոճրագործութեան մասին (կաշիս
վրայ փորձեցի)։ Ոչ քահանայ եւ ոչ էլ եպիսկոպոս
խզեց այդ լռութիւնը, մինչեւ մեր հին Աստուածը իր
զգուանքը երկրի վրայ թափեց։ Ինայած, որ Գերմա-
նիան այդ ժամանակից սկսած շատ թշնամանքներ կրե-

ARAM webaram.com

չու սոխպուած եղաւ, բայց եւ այնպէս չկա՞ն արդեօք յանցանքներ, որոնք դեռ եւս պէտք է քաւել, եւ պատրաստ չե՞նք այսօր մեղաւորներից պարզօրէն զատուիլ, այն մեղաւորներից, որոնք իրենց ընկերակցութեամբ զատապարտեցին մի ամբողջ ազգ անպատուաբեր կատկածներով: Պատերազմական մթոլորը պատերազմից յետոյ էլ շարունակւում է: Կեղտոտ կողոպտիչներ, որոնք եօթը տարի շարունակ Օսմանի ժառանգութիւնը չուատեցին, մահմեդականների եւ արեւելեան քրիստոնէութեան հետ վարուեցին աւելի վատ, քան ժանտախտը. եւ այդպէս աղտոտած ու յղփացած՝ անձնատուր եղան ցոփ կեանքի: Այդպիսի անձանց է, որ տալիս են «պետական անձնաւորութիւններ» ու երբեմն էլ «նշանաւոր դէլուխներ» անունը: Թալէաթ փաշայի տպաւորիչ թաղման հանդէսի մասին լրագրները գրեցին. կարծես թէ մեռած լինէր մէկը՝ մարդկային արժանապատուութիւնը աւելցնողներից: Կարծում էք, որ աշխարհը բոլորովին խլացե՞լ է: Թալէաթը՝ իբր սիւն մեր արդար դատի՞, Շէյլոկը՝ իբր քրիստոնեա՞յ...»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Աւելի ընդարձակ էջեր է նուիրել Թալէաթի ապաշնութեան դաղութահայ մամուլը, բայց այդ գրութիւնների մէջ չկան վերաբերմունքի ու գնահատութեան տարբերութիւններ, որ ինքնին հասկնալի է: Բոլոր թերթերի գրածները մէկ բան է՝ վրէժի գոհացում եւ արդարութեան յաղթանակ: Այդ գրութիւնների մէջ արծարծուած մտքերից աւելի նշանակալից են տրամադրութիւնները, որոնք հանդէս են գալիս մխիթարութեան, ինքնագոհացման ու չտեսնուած մի համազգային ցնծութեան ձեւով: Դատելով այդ տրամադրու-

ARAM webaram.com



ՏՈՔԹ. ԵՈՀԱՆՆԷՍ ԼԵՊՍԻՈՒՍ
(Մեծ հայասէրին վկայութիւնը տես էջ 365)

ARAM webaram.com

թիւններէրից կարելի է ասել, որ սհարեկումը՝ իբրեւ կառուող կողմերից թոյլի զէնքը, երբեք չի ներկայացրել այնպիսի խոշոր բարոյական արժէքներ, ինչպէս այս դէպքում: Դէպքից մինչեւ դատավարութեան վերջը, նա շարժման մէջ է դրել գաղութահայութեան բոլոր խաւերը: Թէհլիրեանը համազգային դուրգուրանքի առարկայ է ու այդ շարժման առիթը: Ցանձին նրա հանդէս է եկել մի հաւաքական անձնաւորութիւն, արտայայտելու սրտերում կուտակուած միլիոնաւոր զոհերի արդար վրէժը: Ամէն մարդ նրա կատարած գործի մէջ զգում է այն դոյդն միութիւնը, որ պատկանում է իրեն անձնապէս ապրած կսկիծներից յետոյ եւ ամէն մարդ այդ գործի մէջ տեսնում է վերապրող հայութեան յարատեւութեան իրաւունքն ու կամքը:

Եւ այդպէս ամէն տեղ, որտեղեւ Թէհլիրեանը պատկանում է հանրութեան եւ իր դատը իրենը չէ, այլ ներկայացնում է համազգային մի խնդիր:

Ամերիկայի Հ. Ց. Դաշնակցութեան օրգան «Հայրենիք»ը տալիս է դէպքին այն գնահատութիւնը, որ յատուկ է հայկական բոլոր թերթերին: Ահա Մարտ 18ի խմբագրականը՝ Նեմեսիսը խորագրին տակ:

«Վերջապէս արդարութեան ձեռքը բարձրացաւ եւ գետին գլորեց բիւրաւոր զոհերու տխրահոչակ դահիճը, օսմանեան աւազակապետութեան նախկին վեզիրը, Թալէաթ փաշան:

Գարշահոտներու սերունդին այս տխուամարակ ներկայացուցիչը, որ հեռագրական պաշտօնեայի մը դիրքէն բարձրացաւ մինչեւ վեզիրութեան աթոռը, իր դաւադրութիւններով եւ ոճրագործութիւններով վերջին տասը տարուան ընթացքին դերապանցեց Պորճիաներն ու Համիտները, եւ արեան ճապաղիքներու մէջ հատատեց իր բռնակալական տիրապետութիւնը:

Օսմանեան աւազակապետութեան արիւնոտ պատ-

ARAM webaram.com

մութեան մէջ, Թալէաթ կը մնայ իբրեւ արիւնարբու գազան մը, զուրկ՝ մարդկային բոլոր զգացումներէն եւ յատկանիշներէն, որոնք մարդը կը զատորոշեն կենդանիներէն։

Դաւերու եւ սադրանքներու ահաւոր կոյտի մը վրայ հիմնուած անոր իշխանութիւնը վերջացաւ 1918ի գինադադարին, ու ան գնաց թագստոցներու մէջ պարտկելու իր գոյութիւնը, իր արիւնոտ մարմինը, որ այսօր սատակի վերածուած է Պերլինի մեկ փողոցին մէջ։

Հայ ահաբեկիչի գնդակով պայթեցաւ այն ուղեղը, որ այնքան սադայէլական ծրագիրներ յղացաւ հայութեան դէմ, քաղաքակրթութեան եւ մարդկութեան դէմ։ Հայ ահաբեկիչին գնդակը ուղղուեցաւ անոր ուղեղին եւ ո՛չ թէ սրտին, որովհետեւ այդ ճիւաղը սիրտ չունէր, այլ միայն դիւային ուղեղ մը, ուր կը տիրապետէին քառասային մտքեր։

Եթէ Թալէաթ ապրէր այս աշխարհի վրայ, եւ իր բնական մահով երթար հոգին տակ, հայութեան խիղճին վրայ պիտի ծանրանար ահաւոր մղձաւանջ մը եւ բիւրաւոր զոհերու ոսկորները պիտի խլրտէին իրենց անծանօթ հողակոյտերուն մէջ։ Լաւ է, որ այդ անիրաւութիւնը խնայուեցաւ հայութեան եւ անոր բիւրաւոր հայ զոհերուն, որոնց վրէժը կը գոռայ եւ պիտի գոռայ դալիք դարերու ընթացքին՝ վերապրող հայութեան հոգիին մէջ։

Այս ճիւաղին սատակին առջեւ, մեր յիշողութիւններն անգամ մըն ալ եւս կ՚երթան դէպի 1915ի ահաւոր ամառը, երբ հայութիւնն ամբողջ տեղահանուեցաւ իր հայրենիքէն եւ քշուեցաւ դէպի անապատները։ Բիւրաւոր կիներու, մանուկներու եւ ծերերու շարանները անցան լեռներէ եւ անծայրածիր տարածութիւններէ եւ յետոյ վայրագօրէն խողխողուեցան անապատներուն

ARAM webaram.com

մէջ ու լեռներուն վրայ։ Այն օրերուն՝ ամբողջ Հայաստանը արիւնի ծով մը դարձաւ։ Վիթխարի հրդեհ մը շրջապատեց մեր հայրենիքը եւ մոխրացուց մեր գերդեստներն ու իտէալները։ Թրքական եւ քրտական վայրենաբարոյ խուժանը Թալէաթի եւ անոր ընկերներուն հրամանով յարձակեցաւ հայութեան վրայ, կոտորեց, թալանեց, բռնաբարեց եւ սրբապղծեց. եւ այս՝ այնպիսի առեն մը, երբ հայութեան երիտասարդ զաւակները թրքական բանակին մէջ կը գտնուէին, եւ հետեւաբար անզօր՝ պաշտպանելու իրենց տունը, պատիւը եւ տկարներու ֆիզիքական գոյութիւնը։ Թրքական աւազակապետութեան ճիւաղ ղեկավարները այդքանով չգոհանալով՝ զինաթափ ըրին հայութեան ծաղիկ երիտասարդութիւնը եւ կոտորեցին պատերազմի դաշտին վրայ եւ կամ գօրանոցներուն մէջ։

Ո՞ր ազգը այսքան անարդարութիւն եւ անիրաւութիւն տեսած է այս աշխարհի մէջ։ Ո՞ր պետութիւնը կրցած է այնքան վայրագ եւ դիւային ըլլալ համաշխարհային պատմութեան մէջ։ Մեկի դէմ գործուած անիրաւութիւնն այնքան վիթխարի եղաւ եւ այնքան ահաւոր, որ մենք կարծեցինք, թէ մարդկութեան սիրտը պիտի պայթէր. բայց, աւա՜ղ, կարճ ժամանակամիջոցի մը մէջ երեւան եկաւ որ մարդկութիւնն ալ զուրկ էր խղճմտանքէ եւ սրտէ։

Սակայն, վերապրող հայութեան ջիղերը մնացին առկուն եւ անոր հոգին բարախեց գերապոյն վրէժխնդրութեամբ։ Բիւրաւոր անմեղ զոհերու աղաչանքներն ու յալահառաչ ճիչերը եւ անոնց վերջին հոնգիւնները արձագանգեցին հայութեան մարտական սերունդի հոգիին մէջ, եւ մէկը այդ սերունդէն, վսեմ, պաշտելի եւ անհուաճ, իր համբուրելի ձեռքը բարձրացուց գետին գլորելու համար դարերու ոճրագործը, մարդ-

ARAM webaram.com

կային ցեղի անունը արտասանող ճիւաղը, որ ապաստան գտած էր «ընկերվարական» Գերմանիոյ մէջ։

Այս ժողովուրդը չի մեռնիր երբեք, որքան ատեն որ կ՚ապրին յաջորդները այն սերունդին, որ գեռին գլուխած է վերջին քառորդ դարու ընթացքին Հայութեան եւ մարդկութեան շարախինդ ոսոխները, մեր ցեղին Ցիկլիքական եւ ազգային գոյութեան լերը եւ վայրենաբարոյ թշնամիները։

Թալէաթ աւելի վատ եղաւ, քան իր նախորդը՝ Ապտիւլ Համիտ, աւելի յանդուգն եւ անսանձ, քան բոլոր թուրք ջարդարարներն ու Թալաեթիները, եւ այդ խակ պատճառաւ, հակառակ իր բոլոր խորամանկութիւններուն եւ զգուշութիւններուն, ինքզինքը դատաւ հայութեան մէկ մեծ գաւկին, անվեհեր եւ վրէժխնդիր գաւկին առջեւ, որ վայրկենաբար փչրեց կոտորածներ եւ նախճիրներ ծրագրող իր գիւային ուղեղը։

Արդարութիւնը ուշ կամ կանուխ կը յաղթանակէ։ Անոնք որ կը կարծեն, թէ կրնան խուսափիլ Նեմեսիսի հարուածներէն, այս ասթիւ թող մտածեն լրջօրէն եւ իրենք զիրենք արժանի չդարձնեն անիրաւուած ցեղի մը հրաբխային վրէժխնդրութեան»։

Պոլսոյ «Ճակատամարտի» գնահատութիւնը հետաքրքրական ու շահեկան է, որով բնորոշում է գերմանեւ թուրք գեկավար շրջանների բռնած դիրքը, ինչպէս նաեւ այդ ժամանակուայ թուրք գրաքննութեան կեցուածքը՝ այս խմբագրականին մէջ կատարած կրճատումներով ու յապաւումներով։

«Ճակատամարտ» իր Մարտ 31ի համարում գրում է, «Իր հաւատարիմ բարեկամին» խորագրին տակ.

«Քանի օր առաջ, Գերլինի մէկ փողոցին մէջ, հայ մը գնդակով գեռին ինկաւ Թուրքիոյ երէկուան ակրն ու տիրականը։

Հեռագիրներն ու թերթերը բերին սպանութեան

ARAM webaram.com

ամբողջ մանրամասնութիւնը։ Հա՛յ մըն է, որ Թալէաթ փաշան դարնելով ուզեր է իր ցեղին վրէժը լուծել, իր նահատակ ծնողքին ու բազմաթիւ պարագաներուն արեան վրէ՛ժը առնել Թուրքիոյ նախորդ Մեծ – Վեզիրէն։ Ան իր գոհին անձին մէջ կարծեր է տեսնել, ինչպէս յայտարարեր է գինքը ձերբակալողներուն, մեծագոյն չարագործը, որ իր գերդաստանը փճացուց, ու փճացուց գերդաստանները իր բիւրաւոր եղբայրներուն։

Միամիտ չենք կարծելու համար, թէ ահաւոր նախճիրները, որոնք ամբողջ ժողովուրդ մը անճիտեցին եւ Հայաստանը վերածեցին աւերակներու չարաշուք կոյտի մը՝ միակ անձի մը մտքին ծնունդն են։ Բայց կիրքէն, խելագարութենէն կուրցած, ու արեան խնջոյքներու ծարաւի մարդոց սեւ խմբակ մըն էր, որ իր արիւնոտ բնազդները իւրացուց, հրահրեց զանոնք ու կեանք տուաւ անոնց։ Զարդէ, Թալանի ծարաւը կ՚այրէր բոլորին ալ հոգին, բայց Իթթիհատը աւելի ճարպիկ եղաւ սարսափները կազմակերպելու համար... (Գրաքննութիւնը չորս տող յապաւած է)։

Թալէաթ մղիչ ուժը, հոգին եղաւ այդ կարմիր խումբին։

Ան առանձին չէր իր ծրագիրներուն ու ձեռնարկներուն մէջ։ Ամբողջ ժողովուրդ մը ծափ կը դարնէր անոր՝ հրապարակներու վրայ, կամ իր հոգիին խորքէն։ Շատե՛ր էին, որ ամէն օր անոր ականջն ի վար կը փսփսային, կամ գինքը կ՚ողեւորէին նոր նախճիրներու համար։ Բայց Թալէաթ համադրութիւնն էր բոլոր բնազդներուն, տեսակ մը խորհրդանշանը կոտորածի, աւերման, կողոպուտի պապակներուն, որոնցմով ամբողջ ժողովուրդ մը կը տոչորէր դարերէ ի վեր։

Թալէաթ ծնո՛ւնդ էր իր միջավայրին։

Ահա թէ ինչո՛ւ սուգ հագան բոլորը, երբ իր սպա-

ARAM webaram.com

նութեան բոթը տուացան։ Թալէաթի մահը, ինչո՞ւ չէ, ազգային սուգի մը երեւոյթն առաւ։ Ու մեր հարեւանները, որոնք դեռ երէկ, Դաշնակիցներու Պոլիս մուտքին օրը, հազար անէծք կը կարդային Իթթիհատի ու իր պետին եռեւէն, այսօր չկրցան իրենց կսկիծը զսպել։ Աչքէ անցուցէք բոլոր տաճիկ թերթերը, ու իրենց ողբը պիտի նշմարէք դժուար պապուած տողերու ընդմէջէն։ Բոլորը ապացին, բոլորը լացին թուրք հոճային հետ, որ մէվլուտ կարդաց մեծ նահատակին հոգիին համար, որովհետեւ ան ինկաւ կեռուրի մը գընդակով... (Գրաքննութիւնը մեկ տող յապաւած)։

Տէյլի Թէլեկրաֆի Պերլինի թղթակիցը կ'ըսէ, թէ Թալէաթի յուղարկաւորութիւնը կատարող հոճան, իր աղօթքէն ետք, ներկաներուն սա հարցումը ուղղեց.—

«Ալլահ էֆպեր։ Ձեր ներկայութեան պառկող Թալէաթ փաշան բարձր առաքինութեամբ լի մարդ մրն էր, ձեր մէջէն կա՞յ մէկը, որ հակառակը ըսէ»։

Ու բոլորը ոչ կը պոռան։

Ո՛չ պիտի բլլար, անշուշտ, պատասխանը բոլոր տաճիկներուն։ Ոչ եղաւ դժբախտաբար գերմաններուն պատասխանը։

Մեզ այնքան չեն զարմացներ սուգն ու կոծը մեր հարեւաններուն։ Բայց կարելի չէր առանց ուշադրութեան անցնիլ այն ցաւի արտայայտութիւններուն վրայէն, զոր ցոյց տուին մանաւանդ գերման պաշտօնական շրջանակները ոճրագործի մը դագաղին առջեւ։

Երէկ կ'ուրանային, թէ ապաստան են ընծայած յանցաւորի մը, որուն անունը Դաշնակիցները գետեղած էին գլուխը թուրք եղեռնագործներուն։ Բայց այսօր, մէկդի դրած ամէն դիմակ ու նկատում, գերման կառավարութիւնը ոչ միայն կը մեծարէ իր ներկայու-

ARAM webaram.com

թեամբ չարագործի մը դիակը, այլ ծաղիկներ կը թափէ անոր դագաղին վրայ.

— Պետական մեծ մարդուն եւ հաւատարիմ բարեկամին:

Գերմանիոյ այսօրուան վարիչները այլեւս պէտք չեն տեսներ կեղծելու: Անոնք բացէ ի բաց կ'ընդունին Եղբայրակցութիւնը Թուրքիոյ երէկուան զեկավարներուն, որոնք հուրով ու սուրով կառավարեցին Ալ – Օսմանի երկիրը եւ, որոնք տակ առած արդարութեան, խղճի, օրէնքի ոտքէն գլացում, որոնք տակ առած իրենց ժողովուրդին ու պետութեան իրական շահերը, անոնցէ ժողովուրդները կառորեցին, եւ չորս տարի ամբողջ աշխարհին ապարդէզ կարդացին՝ Գերմանիոյ շահերուն համար: Գերմանիա, ահա՛, չի մոռնար իր հաւատարիմ բարեկամը:

Գերմանիա, նոյնիսկ այսօրուան պաշտօնական Գերմանիան, այս կերպով կը բաժնէ Իթթիհատի բոլոր մեղքերը: Բայց ո՞վ չի գիտեր որ ան, ամբողջ չորս տարի, մեծագոյն զօրավիգը եղաւ Նուրը Օսմանիէի խելագարներուն, երբ անոնք իրենց սարսափները կը դարձնէին, հայ ժողովուրդը բնաջնջելու համար: Ո՞վ չի գիտեր, որ ան միշտ ծափով ու ծիծաղով ընդունեց Պապը – Ալիի բոլոր նենգութիւններն ու ոճիրները:

Ան կուզայ անգամ մը ալ հռչակել իր մեղսակցութիւնը:

Բայց ինչ՞ կը խորհի ինքը, գերման ժողովուրդը: Կը բաժնէ՞ ան իր պետերուն մեղսակցի համբաւը Եղեռնագործի մը դիակին: Ան պիտի հանդուրժէ՞, որ Վիլհելմը չարունակէ բնակիլ իր այսօրուան վարիչներուն հոգիին մէջ, ու ծափերը գեռ տեւեն ռեժիմի մը հասցէին, որ աշխարհը փոթորկեց եւ ուզեց ժողովուրդի մը գերեզմանը փորել:

Ո՛չ, մենք չենք կարծեր, որ գերման ժողովուրդը

ARAM webaram.com

գոհունակութեան մը զգացումը ունեցած չըլլայ իր հոգիին խորը, երբ Պերլինի փողոցներէն մէկուն մէջ տեսաւ բարբարոսութեան տխոյեանը գիտապատ ինկած։

Մենք չենք կարծեր, որ քաղաքակիրթ ժողովուրդ մը ուզէ խունկ ծխել անարդ դիակի մը վրայ, որ երէկ Եղեռնը կ'անձնաւորէր, եւ ոճրագործի մը պէս անարդէ հէք հայ երիտասարդը, որ իր ընտանիքին տասնեակ մը գոհերուն արիւնը գացեր էր պահանջել՝ Գերմանիոյ ազատ երկինքին տակ նոր վայրագութիւններու ծրագիրները երկնող նախկին Մեծ - Վեզիրին։

Ո՞ր գերման գաղաւորն է, որ պիտի կարենայ վճիռ մը արձակել այդ տղուն դէմ, որ կարծեց արդարութիւնը գործադրել՝ երբ մեծերը յամեցան։ Ո՛չ, մենք կը յուսանք, որ Գերմանիոյ մէջ դեռ գաղաւորներ կան»։

Համապգային արամադրութիւններուն մոլեգնում եւ անզուսպ արտայայտութեան տխպար օրինակն է հայ Թամկավար կուսակցութեան Պոսթընի պաշտօնաթերթ «Այդ» օրաթերթի Մարտ 19ի առաջնորդողը, «Հայուն արդար վրէժը» խորագրին տակ։

«Արիւնարբու գազանը, Հայ Ցեղին ամենավայրագ երդուեալ թշնամին, չան մը պէս գեռին փոռեցաւ գիտապատ՝ հայ կտրիճի մը գնդակէն, Պերլինի մէկ արուարձանին՝ Շարլոթենպուրկի մէջ, Հարեւանցիներուն փողոցին վրայ։

Կեցցէ՛։ Ձեռքը դալա՛ր Սողոմոն Թէհլիրեանի...

Այս եղաւ ինքնաբուխ եւ հզօր զգացումը, որ երկրաշարժի մը պէս ուժգին ու միաժամանակ ցնցեց հայ սրտերն ի սիրեալս աշխարհի, եւ հպարտ գոհունակութիւնը՝ որ անզուսպ հրճուանքով մը դուրս ժայթքեց ամէն մէ՛կ հայու ճնշուած կուրծքէն, ի լուր թուրք բարեների սատակման։

ARAM webaram.com

Կառավարական օրինաց առջև՝ Սողոմոն Թէհլիրեան կրնայ յանցաւոր նկատուիլ կամ ո՛չ, բայց չկայ մարդկային բարոյականի ու խղճի օրէնք մը, որ անպարտ չարձակէ զայն։ Անտարակո՛յս, հանրային դատաստանը — այն անգիր օրէնքը, որ արդարութեան անկաշառ ձայնն է — ո՛չ միայն պիտի չդատապարտէ հայ կարիճի մը այս արարքը, այլեւ պիտի փառաբանէ զայն իբրեւ արժանաւոր ընթացքը ո՛եւէ պատուաւոր մարդ էակի։

Մենք ապրողներս հրճուանքով կը ծափահարենք հայ արդար վրէժի այս գործադրութիւնը ոճրագործի մը վրայ, որ պարզ ամբաստանեալ մը չէ, այլ դատապարտեալ մը՝ թէ՛ իր իսկ երկրին Պատժական Դատարանէն, թէ՛ միջազգային օրէնքէն եւ թէ մարդկային բարոյականին ու խղճին առջեւ։

Բայց մեզմէ շա՛տ աւելի, հայ նահատակներու ոգիներն են — Տէր էլ Զօրի անապատի տաք աւազներուն վրայ անթաղ մնացած մեր նուիրական այդ մասունքներն են — որ կը խայտան իրենց ուրախութենէն։

Հայ տառապեալ մամիկին անէ՛ծքը, հարիւր հազարաւոր բռնաբարուած ու նահատակ հայ կանանց, տղայոց եւ աղջկանց — ամբողջ կարիճ սերունդի մը — վրէժն էր՝ յանձին հայ հարազատի մը, որ տարիներէ ի վեր կը հետապնդէր իր ատելութեան առարկան։ Եւ այժմ Տիեզերական այդ Արդարութիւնը կը գործադրուի»։

Վերակազմեալ հնչակեաններուն օրաթերթը՝ «Պահակ» իր Ապրիլ 12ի խմբագրականին մէջ գրում է, «Լոյս մը խաւարին մէջ» խորագրին տակ.

«Սողոմոն Թէհլիրեան ցոյց տուաւ պաշտելի հերոսութիւն մը, յամառ եւ աննկուն կամք, խրոխտ ոգի, անմա՛հ, Եհովայական ատելութիւն, մահը դիմագրաւող գիւցազնական քաջութիւն մը, ցոյց տուաւ այն

ARAM webaram.com

բոլոր հայկական առաքինութիւնները, որոնք, մեռած կարծուելով Հայաստանի պարտութեամբ, յանկարծ յարութիւն առին, իրենց շողշողուն այլափոխութեան մէջ երեւցան, եւ ամէն հայ իր էութեան մէջ զգաց այդ առաքինութեանց վերածնունդը, զգաց թէ ըմբռնութիւնը, կռուելու ոգին, վրէժխնդիր առելութիւնը, որ արդարութեան ոգին է, կ՚ապրէին իր մէջ, անոնք փճացած չէին, եւ այսպէս՝ իր սրտին մէջ շօշափելով կենսատու զօրութիւնը այս առաքինութեանց՝ հաւատաց, թէ պիտի ապրէր եւ վերածնէր անգամ մը ալ պարտութենէն, աւերէն եւ կործանումէն յետոյ: Եւ ահա՛ իր մէջ յաւերժօրէն անմահ եւ ապրող այս բարձրյական արժէքները զգալով, հայ ժողովուրդը մոռցաւ հայկական պարտութիւնը, ձերբազատուեցաւ իր ներքին խռովքէն, յուսահատութեան կաշկանդումներէն, ունեցաւ հաճելի ցնցում մը, իր ընդերքներուն մէջ արբշռալիր հրճուանք մը, եւ այժմ կը դիտէ ապագան անդրդուելի հաւատքով իր վերջնական յաղթանակին եւ իր յուսապայծառ վերածնութեան:

Համակ ժողովուրդ մը զահավիժած էր արցունքի հովիտը. մէկ հարուած, մէկ կորովի սիրտ, մէկ մարդ իր հոժկու ոտքերուն մէջ բռնած կառուց հայրերու անմահ հոգին, դերթ ուժը, զայն արձակեց Մոզոքին վրայ, որ կը տիրէ այդ արցունքի հովիտին եւ ահա զայն խորտակող ուժերէն ժայթքած բոցերը արեւներ եղան եւ լացող հոգիները յուսաւորեցին պարտութեան արցունքի հովիտը: Յուսահատութիւնը մեռած է այլեւս եւ Յոյսը ապաստան, Լոյսը երջանիկ ապագային կը շողարձակեն: Սոզոմոն Թէհլիրեան փրկեց ապրին պատիւը»:

ARAM webaram.com

ԱՆԳԼՕԱՄԵՐԻԿԵԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Ընդարձակ էջեր նուիրեցին Թալէաթի սպանութեան նաեւ անգլեւամերիկեան եւ ֆրանսական թերթերը։

«Նիւ Եորք Ամերիկան»ը, Ապրիլ 29ի խմբագրականով, կատարում է պատմական մի կարճ համեմատութիւն գանգուածային կոտորածների շուրջ, պարզապէս տալով հայկական ջարդերի անհերքելի ծաւալի մասին.

«Սոլոմոն Թէհլիրեան, երիտասարդ մի հայ, բանտարկուած է Բերլինում, Թալէաթ փաշան, Թուրքիոյ նախկին եղարքոսը սպանելու պատճառով։ Ամբաստանեալը յայտնում է, որ Թուրքին սպանեց ի վրէժ անթիւ հայերի եւ հօրն ու մօրը խողխողումին՝ Թալէաթի ժամանակ կատարուած։ Մի պերք որ գրուած է նոյնինքն Մէյցեալ Նահանգների գեսպանի կողմից, հաւանաբար իրրեւ վկայութիւն պիտի չընդունուի։ Սակայն, այն ամերիկացիները, որ տիեզերական պատմութեան մէջ մեծագոյն մարդասպանը ճանաչուած Թալէաթի սատակման մասին իմացան, պիտի հետաքրքրուին յիշատակներով Հէնրի Մորգընթաուի, որ իրրեւ գեսպան աշխատեց հայ ժողովուրդի մնացորդը ազատել թրքական ջարդից։ Պ. Մորգընթաու ոճիրի անհաւատութեան մասին ասում է։

«Անցեալի մեծ ջարդերն ու հալածանքները թւում են գրեթէ աննշան բաղդատմամբ հայ ցեղի 1915ին կրած տառապանքներին։ Տասներեքերորդ դարում Ալ-

ARAM webaram.com

բիջենցիների խոշխոշումը պատմութեան ամենից ապիկարուր դէպքերից մէկն է նկատւում։ Մոլեռանդութեան այս պոռթկման զոհ գնացին 60,000 մարդիկ։ Ս. Բարթողիմէոսի ջարդի մէջ ապաստանեցին 30,000 մարդ։ Սիկիլիական ջարդը, որ համարւում է ամենից գիւտիները, աչնչացրեց 8000 հոգի։ Հատորներ են գրուած Տակ Վէ Մատայի հաւատաքննութեան վրայ, սակայն այս հաւատաքննութեան զոհերն էլ 8000ը չեն անցնում։ Պատմութեան մէջ թերեւս հայկական ջարդերին նմանող մէկ դէպք կայ միայն, այդ էլ Ֆերդինանդի եւ Իզաբելլայի կողմից հրեաների տեղահանութիւնը եւ վտարումն է Սպանիայից։ Ըստ Ֆրէսկոտ պատմագրի, իրենց տներից առնուելով արմատախիլ եղան ու քշուեցին Եւրոպա եւ Աֆրիկա 160,000 մարդ։ Սակայն այս բոլոր նախկին հալածանքները երեւում են չնչին բաղդատմամբ հայերի տառապանքներին, եւ առնուազն 600,000ից մէկ միլիոն հայերի փճացման»։

«Պատերազմի ընթացքում կատարուած ջարդերի մէջ Թալէաթն է գլխաւոր դերը։ Նա բացէ ի բաց յայտարարեց գեներալ Մորգընթաուին հայ ազգը բնաջնջելու իր նպատակը»։

«Առարկելիք աւելորդ է, որպէս Թալէաթը ի պատասխան Մորգընթաուի խնդրանքներին։ Արդէն հայերի երեք չորրորդը փճացրինք։ Բիթլիսի, Վանի, Էրզրումի մէջ հայ չի մնացել։ Այս պահուս հայերի եւ թուրքերի միջեւ առելութիւնը այնքան ասատիկ է, որ անհրաժեշտ է մեր հաշիւները մաքրել նրանց հետ։ Եթէ մենք չանենք, իրենք պէտք է վրէժխնդիր լինեն»։

«Հայերի մեծ մասը խոշխոշելուց յետոյ, Թալէաթ Մորգընթաուին ասաւ, ինչպէս այս վերջինը պատմում է, «ամենազարմանալի խնդրանքը, որ երբեք լսուած է»։ Այդ խնդրանքն է.

«Խնդրում եմ, որ ամերիկեան կեանքի ապահո-

ARAM webaram.com

վարչութեան լեկերութիւններից առանձ եւ մեկ ուղարկէք իրենց մօտ ապահովագրուած հայերի լրիւ անուանացանկը: Բոլոր հայերն էլ մեռել են եւ ժառանգութեան գրամները զանձող ժառանգներ չեն մնացել: Անշուշտ այդ բոլոր գրամները պատկանում են Օսմանեան պետութեան: Հիմա նրանցից օգուտը կառավարութիւնն է: Պիտի անէ՞ք»:

«Այս առաջարկը, որի համաձայն Միացեալ Նահանգների դեսպանը պէտք է օգնէր Թուրքին իր խողխողած ժողովուրդի կեանքի ապահովագինը առնելու՝ այնքան անհանդուրժելի էր Մորգընթաուին, որ գայրոյթով մեկնեց: Թէ ինչ պիտի անէ Բերլինի դատարանը այն երիտասարդի հետ, որ իր մարտիրոսուած ժողովուրդի վրէժը լուծեց նրա դահիճից՝ չգիտենք: Սակայն դժուար պիտի չլինէր դուշակել, թէ Մորգընթաուի դրքից մէջ բերուած վկայութիւնները ինչ ազդեցութիւն պիտի գործէին մի ամերիկեան դատարանի վրայ, ասենք Օքլահոմայի մէջ»:

Նոյնանման դատողութիւններ ու գնահատութիւններ են արտայայտում անգլիական թերթերը, առանց ոչինչ աւելցնելու եղածի վրայ: Ֆրանսական մամուլում խնդրի առթիւ լոյս տեսած յօդուածներից ուշագրաւ է «Ժուռնալ տը Դէբայի» քաղաքական բաժնի խմբագրապետ Օկիւստ Կոմէնի յօդուածը, ուր բաւական ճիշդ բնորոշուած է Թալէաթի իրրեւ մարդ եւ քաղաքական գործիչ:

Օկիւստ Կոմէն «Տէբա»յի մէջ խօսելով Թալէաթ փաշայի ոպանութեան մասին, կ՚ըսէ.—

«Եթէ որեւէ ոպանութիւն չ՚արդարանար, ասիկա կը բացատրուի ինքնիրմէն: Թալէաթը մէկուկէս միլիոն հայերու բնաջնջման հրաման տուողն է: Անտարակոյս, իրրեւ հաւատող եւ մեզատկից ունեցած է իթթիհատի

ARAM webaram.com

կառավարութեան եւ կոմիտէին միւս անդամները եւ գերման դեսպանատունը։ Առանձին չէր գործեր։

Ան վարչաձեւ մը եւ մեթոտ մը կը մարմնացնէր։ Բայց, իբրեւ հաւատարիմ համիտեան բռնակալութեան, խարդախուած բարենորոգիչի, որոշած էր ջնջել հայկական խնդիրը կայսրութեան մէջէն, հայերը բնաջնջելով։ Ոչ մէկ առելութիւն կ՝ոգեւորէր զայն. ծրագիր մը կը գործադրէր։ Վայրագ եւ չէնչող խղճի կատարեալ հանդարտութեամբ հարթումի եւ կայսրութեան միութեան կը հետամտէր։ Այս մարդը որ մերթ հնչեղ ծիծաղով մը կը խնդար, ամենէն ահաւոր աւերիչներէն մէկն եղած է մարդկութեան։ Լուտենտորֆի եւ Վիլհելմի պէս կը տրամաբանէր։ Երբ Պ. Մորգենթաու կը մեղադրէր զայն հայերու ջարդերու առթիւ, չէր ժխտեր. «Կը տեսնէք թէ, կ՝ըսէր ան, մեկի համար ամենամեծ խնդիրը պատերազմը շահիլն է»։ Ան խնդիրը կը լուծէր անհետացնելով զինքը նեղող հարիւր հազարաւոր մարդիկը։ Ինչպէս Պերլինի իր տիպարները, վիթխարի ծրագիր կը հետապնդէր։

Թալէաթ ամենաուժեղ դէմքն է Իթթիհատի, որ անդունդ առաջնորդեց օսմ. կայսրութիւնը։ Պարզ ցրուիչ, յետոյ հեռագրական պաշտօնեայ, նաւերը լեցնող եւ պարպող բեռնակիրներու թիկունքը ունէր։ Կրթութենէ զուրկ՝ ուղղը լեցուած էր անկարգօրէն, բնածին տրամաբանութիւն մը ունէր եւ անդիմադրելի կամք մը։ Իր պռերեւոյթ բարեմտութիւնը եւ կարգ մը գործերու մէջ ցոյց տուած իր դիւրահաղորդութիւնը համակրանքներ վաստկցուցած էին իրեն։ Շատ մարդ խաբած էր։ Էնվերի եւ Ջեմալի հետ Խալիֆա Սուլթանը վերածեց «իրատէի մեքենա»յի։ Ահաբեկումի տակ պահեց Սուլթան Մէհմէտը։ Ծագումով Փոմաք, անհաւատ, ապստամբոգ, արհամարհող Գուրանի բա-

ARAM webaram.com

չոր պատուէրներուն հանդէպ, անձնատուր եղաւ համիսլամական եւ թուրանական քաղաքականութեան։

Նոյնպէս կաշառելի, գոնէ իր ապագային սկիզբները - քան թէ պայքարի ընկերները, ձեռնարկած էր վերանորոգել Թուրքիան, ըստ Ֆրանսական յեղափոխութեան սկզբունքներուն, որոնց մասին միայն հասուկոտոր տեղեկութիւններ ունէր։ Տանդոնի կերպարանքին տակ, Ռոպիէռի պարզութիւնը կը կեղծէր։ Լենինի ինքզինքը Նափոլէոն կը կարծէր, Ջեմալ Պաշան եւ Քեմալ մթանդամայն կը կեղծէր։ Այս եռապատութիւնը կը կատարէր վեհապետորէն, առանց ուշադրութիւն ընելու ո՛չ Սուլթանին, ոչ երեսփ. ժողովին, ոչ ժերակոյտին։ Անոնցմէ ոչ մէկը պերճախօս չէր, երբեքն ալ թոյլ կուտային որ խամաճիկները խօսէին, մինչ իրենք կը գործէին։

Թալէաթ բարեկամ նկատուած է Ֆրանսայի, կարգ մը Ֆրանսացիներու կողմէ։ Թերեւս, արդարեւ, Ֆրանսացիներու համար աւելի անձնապէս համակրանք ունէր քան գերմաններու նկատմամբ։ Սակայն, չուտ ճանչցաւ, թէ կայսրութիւնը բռնութեամբ վերանորոգելու իր գործը կրնայ միայն կատարուիլ Գերմանիոյ հովանաւորութեամբ եւ գործակցութեամբ։ Մի-այն Գերմանիան պիտի կրնար եռապետութեան եւ անոր մարդոց դիկտատորութեան պահպանումը ապահովել։ Համակրելիր բլլալով հանդերձ հանդէպ Ֆրանսացիներուն, դարս կը խարէր, Թալէաթ վարեց գերման քաղաքականութիւն։ Համաշխարհային պատերազմին ծաղման տակ, անցաւ Գերմանիոյ կողքին։ Գերմանոֆիլ գինակցութեան դաշինքը կնքուեցաւ 1914, Օգոստոս 4ին։ Այն բոլոր պետութիւններէն որոնց աջակցութեանը վրայ յոյս ունէր աւստրո - գերման միութիւնը, միայն Թուրքիան արդարացուց այդ յոյսը՝ 1914ին։

ARAM webaram.com



ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆ
Իր նորագոյն լուսանկարը

ARAM webaram.com

Մինչդեռ Համաձայնութեան ներկայացուցիչները Բարձրագոյն Դրան հետ կը բանակցէին, չէզոքութեան դաշինք կնքելու համար, փոխանակ նեղուցները գրաւել տալու, թուրք կառավարութիւնը արդէն դինակցած Գերմանիոյ հետ, Ռուսիոյ դէմ յարձակում կը պատրաստէր եւ կ'աշխատէր ամրացնել Տարտանելը։

Թալէաթ գիտէր թէ իր անկողնին մէջ պիտի չմեռնէր։ Զինադադարէն եւրոպ, Պոլսոյ մէջ մահուան դատապարտուած, թերեւս կը դարմանար մինչեւ այսօր վերջացած չըլլալուն, ճակատագիրը դայն դարկաւ Պերլինի մօտ, իր երկրորդ հայրենիքին մէջ։ Այս մարդուն համար, դարձեալ գեղեցիկ մահ մրն է»։

ԹՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Ինչպէս վերը ակնարկում է Պոլսոյ «ճակատամարտ»ը, թուրք մամուլը զանց առաւ Թալէաթի ապանութեան բուն պատճառները, ամէն կերպ քողարկեց գրոի մամուլին այդ ատիթ յուզած խնդիրները՝ գէպքին տալով սովորական «քաղաքական ոճիրի» բնոյթ։ Իրեւ նմոյշ այդ կարգի գրութիւնների յիշատակենք մէկը։ Թուրք թերթերից «Իլէրի»ն գրում է.

«Պատերազմը գլխատման վայրի՝ ապանդանոցի վերածեց աշխարհը։ Արդարեւ այս երկարատեւ իրերապանութիւնը յոգնեցրեց ու տկարացրեց մարդկութիւնը։ Ի՞նչ էլ որ լինի մարդկութիւնը ցանկանում է որ խաղաղութիւնը վերահաստատուի։ Սակայն արիւնհեղութիւնը դեռ շարունակւում է. չեն կարողանում հրաժարուել կռուից։ Տեղ տեղ ապանութիւններ ու ջարդեր են լինում։ Այդ ապանութիւններից ուշադրութիւն են դրաւում նրանք, որոնք գործւում են ապդային թելադրութիւններով։ Ուրէ ապդի քինախնդրութիւնը

ARAM webaram.com

կամ որոշ մարդկանց համոզումը եթէ երբեք անհատի մարքի մէջ խառնուայ, այդ անձը կարող է ամենից առելի ոճիրը գործել։

«Արդարեւ յաճախ պատահում են այդպիսի միջադէպեր։ Սակայն հաստատէպ է, որ նրանք տեղի ունեցած լինեն այսպիսի ընդարձակ սահմաններով մէջ։ Կարճ ժամանակում բուռական քաղաքական ոճիրներ գործուեցին։ Պէտք է հետազօտել նրանց պատճառները ու գաղտնիքը հասկնալ։ Ազգերը կանգ չեն առնում զոհողութիւնների առջեւ՝ ամէն արդելք յաղթահարելու, իրենց նպատակին հասնելու համար։ Զենք ուզում խորքանել այդ դէպքերի պատճառները։ Բայց, անշուշտ իմաստ եւ կարեւորութիւն ունին այդ իրերայաջորդ դէպքերը։ Փարիզը երկու դէպքերի թատր եղաւ։ Խստաբ փաշային սպանեց Թուատէմ Աէնին, իսկ Վէնիզելոսը վէրք ստացաւ իր մէկ հայրենակցի կողմից մահափորձի ժամանակ։ Սպանիոյ մէջ Տոթոն սպանեցին։ Բիչ յետոյ Բերլինի մէջ էլ մի հայ սպանեց Թալէաթ փաշան։ Զինուորական ի վեր, առաջին անգամը լինելով, քաղաքական ոճիր գործուեց այնտեղ։ Ինչպէս տեսնում ենք, այդերի ճակատագրի հետ առնչութիւն ունեցող եւ քաղաքական գործերի վրայ ազդող անհատականութիւններ զոհ են գնում գնդակի։ Թալէաթ փաշան էլ չազատուեց։ Մեր թուած բոլոր դէպքերում մահափորձերը կատարուած են ազգակիցների կողմից։ Մինչդեռ Թալէաթ փաշան մի հայի, եւ նոյնիսկ պարսկահայի, կողմից սպանուեց։ Ամէն բանի մէջ բացառութիւն կազմող նախկին վարչապետը այս դէպքում էլ բաժանուել է իր նմաններից։ Սուլթան, քաղաքական յեղաշրջումներին, կոմիտէի պայքարներին մասնակի անձանց փոխանակ գնդակն է կամ պարանը։ Այսպէս՝ Թալէաթ փաշան եւ Վէնիզելոսը միեւնոյն դիրքի մէջ են գտնուում։ Երկուսին էլ միեւնոյն փոխանակն էր սպա-

ARAM webaram.com

սում։ Երկուսն էլ մահափորձի ենթարկուեցին։ Միայն թէ Թալէաթ փաշան օտար քինախնդրութեան զոհ դնաց, զերծ մնալով իր ցեղակցի մէկ ցաւալի յարձակումից»։

Սակայն, որքան էլ երկդիմի ու վերապահ դոնուեց Թուրք մամուլը իր ամբողջութեան մէջ, մէկ երկու թերթեր այնուամենայնիւ քաջութիւն ունեցան արդար լինելու Թալէաթի մասին։ Այս կարգի դրութիւնների մէջ յատուկ արժէք է ներկայացնում Թուրք նշանաւոր գրագէտ ձէնատ Շէհապէտտինի յօդուածը, որ «Գիշատիչ Թռչունները» խորագրով տպագրել է նա «Փէյամ Սապահի»ի մէջ։ Ժամանակակիցների Շէհապէտտինը թերեւս միակն է, որ յաջողել է թափանցել մեծ մարդասպանի ոգու խորքերը ու գրաւորել.—

«Թալէաթ կատաղի փառամոլ մըն էր, երեսփոխանութիւնը չգոհացուց իր մեծամտութիւնը, անբաւական եղաւ նաեւ նախարարութիւնը, թերեւս մեծ - եպարքոսութիւնն ալ արհամարհեց։ Ան ամէն օր քիչ մը աւելի ձեռնհասութիւն, քիչ մը աւելի ուժ, քիչ մը աւելի տիրապետութեան իրաւունք շահելու կ'աշխատէր։ Ի դին ամէն բանի ուզեց անդուլ ընդարձակել իր ազդեցութեան սահմանները։ Ուզեց որ իր շուրջը կապ մըսի գոմարանողներու օղակ մը, ստրկացողներու շրջանակ մը, փառքի լուսապսակ մը՝ թէեւ կրկնեալ։ Թալէաթի համար դրամը երբեք նպատակ չեղաւ, ոսկին եւ արծաթը կը սիրէր, որովհետեւ անոնց փայլով կարելի էր երեւալ։ Անոր իսկական էր «երեւալը», երեւալ, միշտ երեւալ, միշտ քիչ մը աւելի բարձրանալով երեւալ։ Եւ օրին մէկը դայն մեր գլխուն վրայ տեսանք։ Այս ստորաձիններն մէկնակէտէն մինչեւ հառած դիրքը ուղղահայեաց գիծ մը միայն կայ, հակառակ ասոր դեռ չէր յոգնցած բարձրանալէ։ Քանի իր

ARAM webaram.com

ատիճանը բարձրացաւ, այնպէս կարծեց թէ հոգին, ուղեղը, սիրտը, հմտութիւնը, հայեցողութիւնը եւ հեռատեսութիւնն ալ մեծցան, բարձրացան...: Թալէաթ շատ դիւրաւ ինքնախաբէութեան անձնատուր եղաւ, մանաւանդ որ իր ականջները լեցուեցան շուրջիններուն նեբրոզականներով: Դիւրին եւ արագ յաջողութիւններով աբրեցաւ ինքնավստահութեամբ: Իր առջեւը ա՛լ չէր կրնար երեւակայել ո՛չ մէկ պատնէշ՝ որ իր յաղթանակներուն արգելք ըլլար: Կարծես իր իւրաքանչիւր փափաքը ճակատագրի վճիռ մը եւ իր իւրաքանչիւր փափաքը նախատահմանութիւն մըն էր: Իր ասպին ցոյց կուտար երկինքները եւ իր ուժերը չէր հարցուփորձեր «վեր, աւելի, աւելի վեր» ըսելով: Թէ բարձրանալ, թէ տարածուիլ կ՚ուզէր. կարելի է ըսել թէ որոշած էր Թուրանի բախտորոշը: Ճիշդ է որ քանի բարձրացաւ, երեւաց, բայց իր տեսողութեան շրջանակը չընդլայնեցաւ: Հրդեհի աշտարակին գագաթը բարձրացող կոյր մըն էր: Արեւ կարծեց այն հրդեհը՝ որ մեզ շրջապատած էր: Անկարող էր զանազանելու կենսատու եւ կիզիչ ջերմութիւնները... տառաքինութիւն էր այն ոճիրը՝ որ իրեն նպաստաւոր էր: Կը ճաշնար միայն այն օրէնքները, որ իր ցանկութիւններուն կը ծառայէին: Ճշմարտութիւնը ընդունելի էր, յորչափ բարձրանալու միջոց մըն էր՝ ճիշդ սանդուխի գատիկոններու պէս: Անարգ էին բոլոր այն նուիրականութիւնները, որ իր օգտին չէին յարմարեր: Լեզուին վրայ միշտ հանրայինն էր, որտին մէջ միայն անձին սէր կար: «Մեծ» կը ճանչնար զանոնք որոնցմէ կը վախնար, եւ վախցողներուն մէջ արժանիք կը տեսնէր: Այն արժանիքը որ անոր հետ կը մրցէր՝ հրէշ մըն էր, որուն գլուխը պէտք էր ճզմել: Թալէաթի համար ազգային եղբայրներ էին «մէրքէզը ումումի անդամները», իսկ հայրենիք էին

ARAM webaram.com

«Իթթիհատի պլիսպնեբբ» Իր թշնամիներբ՝ Իթթիհատի թշնամի, Իթթիհատի հակառակորդներն ալ ապրին թշնամիներն էին։ Կը նախընտրէր որ պետութիւնը իր ձեռքին մէջ մնայէր, քան թէ բարդաւաճէր ուրիշներու ձեռքին մէջ։ Իր փառատենչութեան յագուրդ տալու համար Տրիպոլիոյ պատերազմը բացաւ, իր փառատենչութեան յագուրդ տալու համար Պալքանեան պատերազմը բանալ տուաւ, իր փառատենչութեան յագուրդ տալու համար զէնքով զրաւեց եւ զրաւել տուաւ Պապը Ալին։ Թալէաթ «ոչինչ» մը չէր, «ոչինչ» մը յեղափոխութիւն մը չի կրնար կատարել եւ եթէ անոր «ոչինչ» բանէք արդարացում մը գտած կ՚ըլլանք իր վարչական սխալներուն։ Ան ոչինչ չէր. «գոմիթէճի» մրն էր որ կը գերազանցէր Սանտանոքին, ահարկու «գոմիթէճի» մը... շար ապաղոց մը ունէր. թակարդ լարելու, գարանակալ ըլլալու, յանկարծակիի բերելու բնդունակ, խարդախ, լարախազաց, խարեբայ ապազոց մը։ Թէ՛ իր անհատական կեանքին, թէ հանրային կեանքին մէջ Թալէաթի յենարանը, լծակը, ուժը ապականութիւնը մեւեանոյն բանն էր.— Էնիրիկ։

Շատ խոնարհ խաւէ մը բարձրացաւ ամենէն բարձրը դիրքին շնորհիւ Էնիրիկի։ Սակայն, իր բախտածաւ որքան բարձրացաւ, այնքան յայտնի եղաւ որ արմատները ապրի մէջ էին։ Թալէաթ ուր որ ալ բարձրանար, կը տեսնուէր որ ոտքին ցեխի ծանր զանգուած մը փակած է։ Անոր եղարքոսութիւնը տեսակ մը օձային արքայութիւն էր...։ Քանի բարձրացաւ, ապրուստին կարիքաւորները եղեւան։ Կուրծքը բաւականաչափ լայն չէր՝ կարենալ շնչելու համար բարձր սարերու վրայ։ Քանի բարձրացաւ այնքան զրաց իր կուրծքի սկարութիւնը եւ մտածեց թէ փրկութիւնը խաւ մը աւելի բարձրանալու մէջ է։ Ու այս մտածումով մա-

ARAM webaram.com

գրչեցաւ ու մատչեցաւ եւ երբ եղաբրուութեան հա-
սաւ, ինքն ալ զգաց իր կուրծքին տկարութիւնը։

Ա՛լ հասկցած էր թէ՝ նոյն իսկ գինք դարպասողնե-
րու աչքին «արհամարհուած արձան» մը՝ էր։ Ինքն ալ
զգացած էր որ թէ իր դիրքը եւ թէ համբաւը պատմու-
թեան առջեւ գինքը ամբաստանող վկաներ պիտի ըլլա-
յին։ Յոյսը անոր համար այլեւս շնչարգելութիւնն էր։
Ամէն մէկ յաջողութեան մէջտեղը կար իրեն սպասող
անքնութիւն որ որեւէ մղձաւանջէ աւելի տառապագին
էր։ Կեանքը իր էութիւնը կրծող որդ մը եղած էր,
այտերը խոռոչացան կանխահասօրէն եւ մազերը ալեւո-
րեցան քառասուն տարեկանէն առաջ։ Կը զգացուէր, որ
դպրոցը պիտի չուշանար անոր իսկական հատակը չա-
փելու։

Հակառակ իր պաշտօնական փայլին, Թալէաթ
ապրեցաւ դժբախտ։ Ամէն բանի արժանացաւ, առանց
որեւէ բան վայելելու։ Վերջին անգամները զայն տեսայ
պաշտօնական հացկերոյթի մը մէջ։ Կ՝ապահովցնեմ թէ
իր յօնքերը վիշտի թոյնով լեցուն էին, այնքան տխուր
էր եւ սիրտը արիւնոտ։ Կեղծ ծիծաղով մը անուաշ
զուարթութիւն մը ցոյց տալու համար այնքան կը բրբ-
նոպատէր ինքզինքը որ...։

Թալէաթ ունէր սատանայական գոռոզութիւն մը՝
որ կը ջանար պարտկուիլ խորամանկութեան մաքրմիկ
ձեւերու մէջ։ Քաղաքական պարտութեան մը հաւանա-
կանութիւնը անոր գոռոզութեան համար անհանդուր-
ժելի հեռանկար մը՝ էր։ Եւ սակայն կը զգար թէ ամէն
քայլ գինքը կը մօտեցնէր այս հաւանականութեան։ Ան
կը գիտակցէր որ այս յափշտակուած փառքի համբան
ուշ կանուխ պիտի յանգի անկման եւ քայքայման...։

Երեք օրէ ի վեր վայրկեաններ կ՝ունենամ ուր կ՝ու-
զեմ գթալ իրեն, եւ եթէ փոխանակ սովորական յանցա-

ARAM webaram.com

ւորի մը պէս փախուստի ամօթը նախընտրելու՝ քիչ մը աւելի դիմադրական ուժով մնար այն դիրքին վրայ, ուր ճակատագիրը դինքը բարձրացուցեր էր եւ վախճանական ժամուն Բոպէսպիէռի մը կորովամտութեամբ քալէր դէպի կառափնատ, օ՜հ, ահա կը զգամ որ իրեն պէտք պիտի»:

Վ Ե Ր Ջ

ARAM webaram.com

ՑԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒ

		Էջ
Դատատեանը եւ դատավճիռը		3
Կենսագրական նոթեր		6
Երկու խօսք		9
Ցառաջաբան		21
Մայրիկիս		38
Ա.—	Սերպիայից վասպուրական	43
Բ.—	Մեծ Եղեռնը	73
Գ.—	Մուրատի հետ	98
Դ.—	«Մեր հայրենիքը կորցրինք»	127
Ե.—	Պոլսում	117
Զ.—	Դէպի Ամերիկա	207
Է.—	Որսի հետքերով	235
Ը.—	Մայրի վրայ ընկաւ հրէշը	300
Թ.—	Դատավարութիւնը	334
Ժ.—	Դատախազը պահանջում է մահապատիժ	335
ԺԱ.—	Ո՛չ, յանցաւոր չէ	400
Պօղոս Նուպար փաշայի նամակը		428
Ցաւելուած		429

ARAM webaram.com

ՄԱՏԵՆԱՇԱՐ "ՅՈՒՍԱԲԵՐ,,

Ե. Դ.

ԵՂԻՇԷԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ
Թարգմ. դր. Ե. Տէր Միհնասեանի, 322 էջ . 60
ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Թարգմ. Ստ. Մալխասեանցի 600 էջ . . 150
գին 600 ե.դ. կազմուած 110
ԳԷՕԹԷ
Ընտիր երկեր, թարգմ. Ա. Աբեղեան,
Ա. հատոր, 364 էջ 100
ՊԱՅՔԱՐ, Նարդոսի, վէպ, 176 էջ 30
ՍԻԼԻՀՏԱՐԻ ՊԱՐՏԷԶՆԵՐԸ
Զապէլ Եսայեանի, 200 էջ 25
ՆԵՂՈՒՑՆԵՐԸ
Վ. Նաւասարդեանի, 480 էջ 100
ԲՈԼՇԵՒԻԶՄԸ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Վ. Նաւասարդեանի, 676 էջ 100
ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՒ ՈԳԻՆ
Վ. Նաւասարդեանի, 230 էջ 50
ԴԷՄՓԵՐ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԷՆ
Գ. Լազեանի, պատկերազարդ 400 էջ . . 80
ԳՈՐԾ ԳԱՅԼԸ ԿԱՏՂԵՐ ԷՐ
Գ. Թագուրեանի, 424 էջ 60
ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
Թարգմ. ակատդ. Ստ. Մալխասեանցի . . 80
ՍԻԱՄԱՆԹՈՑԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ
Մէկ հատորով 100

ARAM webaram.com

ARAM webaram.com